

Արտաշես Քալանթարյան

ՄԱՐԱԹՈՆ

<i>Մուտք</i>	2
<i>Մի Հին Յավ Ու Կարոտ</i>	3
<i>Էհ, Նատաշա, Նատաշա</i>	10
<i>Ճուտոների Աշխարհը</i>	14
<i>Ուրախ Ծանուցագրեր Չեն Լինում</i>	21
<i>Գնում Եմ Ազատելու</i>	25
<i>Կարմիր Հեծանիվը</i>	30
<i>Ինչպէ՞ս Կարելի Է Չհավատալ</i>	34
<i>Մազու Ձեռքը</i>	44
<i>Ի՞նչ Անեմ Ընկեր Սարյան</i>	50
<i>Մի Փորրիկ Ուրախություն</i>	55
<i>Ծանոթացեք, Մերոնք Են</i>	61
<i>Սև Ջրի Հրաշք Դեղձը</i>	70
<i>Նեղ Ուղեգործի Վրայով</i>	76
<i>Ախ Այդ Ռանջանա Զատրան</i>	81
<i>Անակնկալ Այցելուն</i>	90
<i>Ներողություն, Ցտեսություն, Ծնորհակալություն</i>	98
<i>Սկսել Եմ Ճանաչել Սարդկանց</i>	102
<i>Այդ Զարմանալի Ընտանիքը</i>	107
<i>Գուցե Մեզ Միայն Թվում Է</i>	123
<i>Խենթ Գարուն</i>	129
<i>Այսօր Մեր Հարսանիքն Է</i>	138
<i>Բախտավոր Եղեք Շրջմոլիկներ</i>	157
<i>Խորտակված Դրոշը</i>	164
<i>Պետք Է Արդարանալ</i>	171
<i>Աշխարհի Ամենամեծ Ամաչողը</i>	180
<i>Տիկնիկների Օրենքով</i>	185
<i>Հին Քաղաքի Կործանումը</i>	192
<i>Մենք Բեռնակիրներ Ենք</i>	204
<i>Չեն բողնում, չեն բողնում...</i>	220
<i>Մենք Դեռ Կհանդիպենք</i>	227
<i>Աշխարհի Ամենադժվար Երթը</i>	236

Մուտք

Սուտ է: Ժամանակը չի բուժում վերքերը:Գուցե նա իր առօրյա հազար ու մի հոգսերով, ուրախություններով ու անակնկալներով ետ հրում, հոգուդ մի խուլ անկյունն է տանում վիրավորանքդ ու վիշտդ և երբեմն մոռացության մատնում... Բայց չի բուժում, չի կարող բուժել: Բավական է թեթև մի առիթ, մի դեմք, մի անուն, մի նմանություն, անցողիկ մի հայացք, որ... Իսկ ավելի հաճախ ոչ մի առիթ էլ պետք չէ, ոչինչ պետք չէ, պարզապես անհնար է մոռանալ, անհնար է փախչել: Հիշողությունները հետապնդում են քեզ, նրանք քեզ հետ են, քո մեջ: Նոր տպավորությունները զալով քո հոգուց ինչ-որ բան դուրս չեն նետում Արքիմեդի ավազանի պես: Հոգին ավազան չէ: նա կարող է տանել ամեն ինչ, կարող է բյուրեղացնել այդ ամենն ու թաքցնել: Եվ դու այլևս նախկինը չես կարող լինել, դու քո բոլոր ունեցածի հետ արդեն ունես նաև այդ նորը, որից բաժանվել, որից հեռանալ այլևս չես կարող:

Ես ել շատ եմ փորձել մոռանալ ինչ-որ դեմքեր, ինչ-որ դեպքեր: Երբեմն ել, երբ շատ ուրախ եմ եղել, հանկարծ մտածել եմ հրաժանքով, թե արդեն մոռացել եմ, բայց հենց դրանով ել հիշել եմ և միշտ մի բութ ցավ եմ զգացել կրծքումս, ինչ-որ տեղ:

Եվ զարմանալի բան. նման պահերին, որտեղից որտեղ, ինձ միշտ թվացել է, թե Նանարը նորից, ինչպես շատ-շատ առաջ, մատով բարձրացնում է քիթս ու կամացուկ ասում.

- Դե, դե, ժպտա'...

ՄԻ ՑԻՆ ՑԱՎ ՈՒ ԿԱՐՈՒ

Այս փողոցը ես անգիր զիտեմ: Եվ այդտեղ զարմանալի ոչինչ չկա: Տասնհինգ տարուց ավելի է, ինչ այս փողոցով եմ անցնում: Այսինքն, ավելի ճիշտ, սկզբում ինձ գրկած են տարել ու բերել, հետո երբեմն իջեցրել են, որպեսզի տեսնեն, թե կարո՞ղ եմ քայլել: Եվ ես խսկապես հրաշալի քայլել եմ նախ մորս, ապա՝ քրոջ ձեռքից բռնած: Իսկ հետո երեք արդեն գտել են, որ միայնակ էլ կարող եմ քայլել, ու այլևս չեն հետեւել ինձ: Եվ ես սկսել եմ իմ ճանապարհը տնից աշխարհ և աշխարհից տուն: Աշխարհն ինձ համար այդ ժամանակ բավականին մեծ էր. նա իր մեջ դարոց ուներ և փոքրիկ կանաչ հրապարակ, մանկական խաղալիքների մի զարմանալի խանութ ուներ և պիոներների պալատ: Իսկ պիոներների պալատում «Դավիթ Կոպպերֆիլդ» էին բեմադրում և «Յասում», որոնցով մեզ սովորեցնում էին լինել խիզախ ու անվեհեր: Ես էլ շատ էի ուզում խիզախ ու անվեհեր լինել, բայց վատն այն էր, որ ներկայացումներն ուշ էին ավարտվում: Ու ես, բարձրածայն արտասանելով և մտքումս սպառնալով աներևույթ ավագակներին, ֆաշիստներին, Կոունյանցի անունը կրող ամայի ու մութ փողոցով սարսափահար տուն էի վազում:

Այս փողոցը ես անգիր զիտեմ: Հիմա հաճախ եմ փորձում գիշերները՝ Նանարից բաժանվելուց հետո, տրամվայի գծից մինչև ստադիոն փակ աչքերով զնալ: Եվ հավատացե՛ք, ընդամենը երկու-երեք անգամ եմ աչքերս բացում: Նույնիսկ անսխալ որոշում եմ, թե երբ է մայթի հատվածը վերջանում և կամ թե ում տան մոտով եմ անցնում: Հատկապես զարնանը: Ահա ջրի խշշոց է զալիս: Ուրեմն Գետառին եմ մոտենում: Իմ զլիավերեսում խուլ ու ահավոր վշշոց է լավում. աղբքեցանցի Ռաշիդենց բարդիներն են: Ազ կողմից հարձակվում է ինձ վրա ու գերի է վերցնում ծառկող ծիրաննենիների բռուրը: Այս այգում մի շատ տիտր ու սիրուն աղջիկ է ապրում. սպիտակ-սպիտակ երես ունի և... աչքերն էլ են սպիտակ: Ասես ծիրանի ծաղիկների փոշին է նստել նրանց վրա ու մնացել ընդմիշտ: Կույր է: Իսկ սա բժշկի տունն է, միայն նրա պարտեզում կան այսպիսի վարդեր՝ մուգ կարմիր ու ձյան պես սպիտակ, հրաշք վարդեր: Դե այդտեղից էլ մինչև մեր շենքը մի քանի մետր է, մնում է, որ անցնես պոլսեցի Տիգրան աղբարի փոքրիկ այգին...

Բայց հիմա ես տուն չեմ գնում, այլ տնից եմ դուրս եկել: Ու թեև երեկո է, և մայթերին հասուլենտ անցորդներ են միայն, բայց իրավունք չունեմ աչքերս փակելու: Հեծանիվով եմ գնում: Եվ ոչ թե գնում եմ, այլ պանում: Լրիվ կռացել եմ հեծանիվի վրա, քամին ուոցրել է բլուզ, որ պարաշյուտի նման բվկում է: Ուշացել եմ: Նանարը հիմա սպասում է Շրջանայինում՝ ժամացույցի տակ:

Զարմանալի աղջիկ է Նանարը: Այնքան զարմանալի, որ երբեմն կատակով ես նրան Խոնարհ եմ անվանում: Ուրիշ աղջիկներ իրենք են դիմումամբ ժամադրությունից ուշանում, իսկ ինքը չէ: Ճիշտ ժամին զալիս է, և եթե հանկարծ ուշանում եմ, միևնույն է, սպասում է և չի էլ տրտնջում. այնպես է դիմավորում, ասես ոչինչ էլ չի եղել: Դրա համար էլ ես միշտ ամեն կերպ աշխատում եմ չուշանալ ժամադրությունից. չեմ ուզում, որ նա մենակ մնա Շրջանայինում՝ ժամացույցի տակ: Այնինչ, երբ առաջին անգամ ընկերուց՝ Սարոյենց տանը հանդիպեցի նրան և իմացա, որ դերասանուիի է, չհամարձակվեցի հետը խոսել: Չզիտեմ ինչու ես միշտ երկյուղել եմ դերասաններից: Ինձ թվացել է, թե նրանք շատ խելոք, շատ մեծամիտ և շատ

Երեսառած են: Ահա թե ինչո՞ւ, եթք Սարոյի քույրը ճաշի ժամանակ ինձ առաջարկեց նրա մոտ նստել, ես, իբր զանգ տալու համար, միջանցը դուրս եկա և մոտ տասնինց րոպէ, հեռախոսի լսափողը բռնած, անընդհատ պտտեցնում էի սկավառակը: Սրտապնդվեցի միայն այն ժամանակ, եթք նրա կենացը խմելիս Սարոն ասաց, որ Նանարը թատերական ուսումնարանն է ավարտել, և արդեն մի քանի ամիս է, ինչ տիկնիկային թատրոնում է աշխատում: Ահա թե ինչ... տիկնիկային թատրոն: Իսկ ես քիչ էր մնացել փախչեի: Չե, մտածեցի, հանգիստ կարելի է խոսել, այսպես թե այնպես ես համասարանի չորրորդ կուրսի ուսանող եմ:

Սակայն դրանից հետո էլ երկար ժամանակ ոչինչ չէի կարողանում գտնել Նանարի հետ խոսելու: Չզիտեմ ինչո՞ւ, ինձ թվում էր, թե ասելիքս հիմար բան է լինելու: Ուզում էի շատ ազատ ու անկաշկանդ պահել ինձ և մի անրօնազրոս, սակայն խելոք հարց տալ: Եվ երկար մտածելուց հետո տվեցի այդ հարցը: Դա հնարավոր բոլոր հարցերից ամենաաննրբանկատն ու հիմարն էր:

- Իսկ ինչո՞ւ Սունդուկյանի անվան թատրոնում չեք աշխատում:

Մինչ նա կպատասխաներ, ես ամոռից արդեն կախել էի գլուխս: Դեմքս այրվում էր: Անիծում էի ինձ ու չզիտեմ ում կողմից հորինված այն կեղծ քաղաքավարության օրենքները, որոնք նման դեպքերում մարդուն պարտադրում են անպայման զրուցել կողքինի հետ:

Եվ հանկարծ Նանարը խոսեց: Նրա ձայնի մեջ ոչ վիրավորվածություն կար և ոչ էլ հեզնանք:

- Հանձնաժողովը գտավ, որ ես բեմական արտաքին չունեմ: -Լոեց մի փոքր: Ապա ավելացրեց կամացուկ: -Ավելի լավ. ես շատ եմ սիրում տիկնիկներ:

Ես նայեցի նրան և այն ժամանակ չէի կարող չհամաձայնել հանձնաժողովի կարծիքին: Նանարն իրոք բեմական արտաքին չուներ: Ի նշ հերոսուիկ կարող էր խաղալ նա իր այդ վտիտ կազմվածքով ու բարակ, համարյա թափանցիկ ձեռքերով:

Այո՞, այն ժամանակ... Իսկ հիմա գտնում եմ, որ չարաշար սխալվել են և՝ այդ հանձնաժողովը. և՝ ես: Նանարը հրաշալի բեմական արտաքին ունի և իսկական դերասանուհու տվյալներ: Եվ ամենին էլ պարտադիր չէ, որ բեմում բոլորը հսկա Հայկանուշներ լինեն: Նրա տիկնիկներն ավելի լավ են խաղում, քան թե մի շարք լայնաթիկունք դերասանուհիներ: Բեմական արտաքին...

Նանար...

Նանարը զարմացած մեկ հեծանիվիս է նայում, մեկ էլ իմ սպորտային զգեստին:

- Չլինի՞ մրցման ես եկել-ծիծաղում է նա:

Ես ներողություն եմ խնդրում ու բացատրում: Այդպես չէր ստացվի. եթե մեր շրջկոմի քարտուղար Մեսրոպը չիմանդանար: Ինքն էր մասնակցելու թժշկական ինստիտուտի կոմիտական կազմակերպության ժողովին, բայց, քանի որ հիվանդ էր, ինձ ուղարկեցին: Կիրակի օրով: Շատ ուշ վերջացավ. մինչև տուն հասա, արդեն ժամը ուրին էր: Որոշեցի հեծանիվով գալ:

Նանարը բռնել է հեծանիվիս դեկը ու շարունակում է ծիծաղել:

- Եվ դու՝ այսօր Երևանում դղրդացող ֆելիետոնի հեղինակը, հեծանիվո՞վ ես շրջում քաղաքում: Այ թե կիհասթափվեն ընթերցողները, եթե իմանան, որ դու ես այդ Ա. Լունյանը:

Ես էլ եմ ծիծաղում: Հետո մենք քայլում ենք դեպի Ղուկասյանի այգի. Նանարը՝ մայթի եզրով, ես՝ փողոցով:

- Նանա՛ր,-ասում եմ ես,-Ճի՛շտն ասա, իսկապէ՞ս լավ ֆելիետոն էր: Քեզ դուր եկա՞վ:

- Շատ,-ասում է նա: -Գիտե՞ս՝ ամեն տեղ այդ մասին էին խոսում: Պարզվում է, որ մեր քաղաքում բոլորն էլ ձանաչում են այդ Վեզիրյանին: Պատերազմի ժամանակ հազուստի արտոնագրեր բաժանողներից է եղել: Ահա, ուրեմն, առավոտյան տրամվայով շուկա եմ գնում, մեկ էլ լսեցի, որ իմ դիմաց նստած երկու մարդ նրա մասին են խոսում: «Ո՞վ կսպասեր, -ասում է մեկը, -այնքան հարզված, շքանշանակիր մարդ էր, ականջովս եմ լսել՝ քաղսովետի նախագահի հետ դու-ով էր խոսում»: «Իսկ ես ավելի շատ բան գիտեմ, -ասում էր մյուսը, -այդ ֆելիետոնում նույնիսկ կեսի կեսն էլ չի գրված: Միայն զարմանում եմ, թե ոնց են համարձակվել նրա մասին ֆելիետոն տպագրել, դուք գիտե՞ք, որ նա... (ազգանունը այնպիսի շշուկով տվեց, որ ես չլսեցի) մոտիկ ընկերն է: Ուրեմն հիմա կամ խոռվել են, կամ էլ... Իսկ ո՞վ է այդ Լունյանը, ինչպես երևում է, շատ մոտիկից է ձանաչել Վեզիրյանին: Առաջին անգամ եմ կարդում այդ ազգանունը: Գուցե ֆելիետոնիստ Սուրենյանն է, բայց նպատակահարմար է գտել կեղծանունով հանդես գալ: Ես ավելի շատ հակված եմ այս ենթադրությանը»: Պատկերացնո՞ւմ են Արտա՛կ, քիչ մնաց սիրտս պայթեր: Այլևս չդիմացա: «Քերի ջան, -ասացի, - զուր տեղը մի՛ հակվեք որևէ ենթադրության: Լունյանը երիտասարդ է, դեռ չի էլ ավարտել համալսարանը»... Լավ էր, որ տրամվայը կանգառում էր, թե չէ ես գուցե թռչեի ընթացքի ժամանակ: Քո պատճառով բժշկականի մոտից ոտքով եմ գնացել...

Նանարը հեծանիվի դեկի վրա բռնում է իմ ձեռքը: Նրա մատները տաք են, փոքր-ինչ խոնավ: Ես թեքվում եմ, իբր անիվն եմ ստուգում, ու թաքուն համբուրում եմ նրա ձեռքը:

- Պատկերացնում եմ, թե որքան շնորհավորողներ են եղել:

- Չի՛,-ասում եմ, -ի՞նչ շնորհավորող: Ում հանդիպում էի, ասում էի, բայց ոչ ոք չեր հավատում, թե ես եմ զրել: Երդվում էի, կի չին հավատում: Ստիպված մի քանիսի մոտ անզիր արտասանել եմ:

Նանարը ծիծաղում է: Նրա ձայնը փոքրիկ է ու լիքը: Եվ ծիծաղելիս գլուխը ոչ թե ուրիշների նման ետ է զցում, այլ կախում է ցած: Կարծես ամաչում է ծիծաղելու համար: Ու զարմանալի բան, ինձ միշտ թվում է, թե միայն ես եմ լսում նրա ծիծաղը, թե նա միայն ինձ համար է ծիծաղում: Գուցե նրանից է, որ ես էլ պակաս մեծամիտը չեմ:

Մենք գնում ենք այգի ու մեր ուղեկցի՝ հեծանիվի միալար, ցածրածայն բզզոցի տակ ուղղվում ենք դեպի մեր նստարանը: Եվ, ո՞վ սարսափ, զբաղված է: Ինչ-որ անհոգի մարդիկ, ավելի ճիշտ մի տղա ու մի աղջիկ, արդեն զրավել են երկար նստարանը և հենց մեջտեղում այնպես հանգիստ են բազմել, ասես իրենց սեփականը լինի, ասես տնից են բերել: Կողոպուտ՝ օրը

ցերեկով: Մեզ տեսան թե չէ, Հեգելից սկսեցին խոսել: Միամիտի տեղ են դնում: Գիտենք, թե դա ինչ Հեգել է:

- Արի դիտմամբ մոտենանք, ներողություն խնդրենք ու նստենք կողքներին,-չարացած ասում եմ ես:

Իհարկե, ասում եմ, բայց գնացողը չեմ: Նանարն էլ լավ գիտե, որ հենց այնպես եմ ասում, բայց բոնում է թևից:

- Չէ՝, -ասում է նա, -հիշի՞ր մեզ, երբ ուրիշներն են մոտենում: Արի՝ գնանք մի ուրիշ նստարան գտնենք:

Ուրիշ նստարան գտնենք... Հեշտ է ասելը, երբ բոլոր նստարանները կամ զբաղված են, կամ այնքան վառ են լրսավրրված, որ կարելի է թերթ սրբազնել: Եվ ո վ է հնարել այս էլեկտրականությունը: Այսինքն՝ ոչ թե էլեկտրականությունը, այլ զբոսայգիներում լապտերներ կախելը: Անպայման որևէ չարասիրտ և ծեր ամուրի: Գրագ կցամ, որ նա, իրենց տան հաշվիքը շրջանցելով, էլեկտրականություն է գողանում: Իսկ այստեղ հազար մոմանց լապտերներ է կախել...

Մտքում շարունակելով հայինյել՝ ես Նանարին դեպի Էստրադային բեմին արժանի նստարաններից մեկն եմ տանում: Սակայն չեմ համբերում և ձանապարհին ետ դառնալով նետում եմ մեր նվիրական մութ նստարանը զավթած քաղաքացիներին.

- Ողջուններս Ֆոյերբախից:

Իսկ նրանք կամացուկ հոհոում են մեր ետևից, անիծածները: Դե ի՞նչ, ստիպված ենք այլ զբաղմունք գտնել:

- Այսօր ի՞նչ ես բերել, -հարցնում եմ Նանարին:

Նա միշտ ինչ-որ գիրք ունի իր հետ փոքրիկ, կողքերը մաշված պայուսակում. երբեմն՝ Տերյան, երբեմն՝ Իսահալյան, երբեմն՝ Չարենց, արձակից Գորկի է բերում կամ Զորյան: Նայած տրամադրությանը: Ես շատ եմ սիրում, երբ նա կարդում է: Ուրիշ տեսակ է կարդում Նանարը: Երբ նա կարդում է, ես հանկարծ այնպիսի բաներ եմ գտնում հարյուր անգամ իմ ընթերցած բանաստեղծության կամ պատմվածքի մեջ, այնպիսի բաներ եմ հիշում...

- Վրթանես Փափազյան, -ասում է Նանարը:

- «Ըմբռստի մահը»-խնդրում եմ ես:

Նանարը կարդում է ցածր ու փափուկ ձայնով, իսկ ես լսում եմ անտառի հառաջը: Ես կյանքում մեծ անտառներ չեմ տեսել: Գուցե դրանից է, որ շատ խորն է տպավորվել իմ մեջ Փափազյանի անտառը: Ես պատկերացնում եմ այնպես, ինչպես նա է գրել, տեսնում եմ այդ անտառ՝ իր հսկա կաղնիներով ու բազմադարյան բունավոր ճահիճներով, որտեղ տղրուկները շատ են ու բաղեղներով կաշկանդված է ամեն ինչ, և որտեղ բոլորը գոհ են ու ոչնչի չեն ձգուում: Ու այդ ճահից ելնում, լեռներն ի վեր բարձրանում, դեպի արևն է ձգուում

հպարտ ու մենավոր ծառը: Չգիտեմ ինչու մեծ եղբորս եմ հիշում. գուցե այն պատճառով, որ նրան ես միշտ բարձրում եմ պատկերացրել ու միշտ մտածել եմ, թե նա վերևից է զալու: Օդաշու էր եղբայրս. վերջին նամակը քառասունշորս թվին ստացանք, ինչ-որ Կեդայնյա քաղաքից: Կարմիր թանաքով էր գրել: Նկարներում նա սև, առատ մազեր ունի, բայց ես չեմ կարողանում հիշել այդ մազերը: Ես նրան տեսնում եմ խուզած զլխով, ուրիշ խուզած զլուխներով տղաների էլ եմ տեսնում, որոնց հետ նա նստել էր մեր սենյակի մի անկյունում և հորս ներկայությամբ առաջին անգամ զինի էր խմում: Մայրս լաց լինելով խոհանոցից ուտելիքներ էր բերում և տախտակից սարքած մի մեծ ձամպրուկի մեջ տեղափորում էր եղբորս ու հորս բոլոր տաք շորերն ու գուլպաները: Հայրս մի անկյուն քաշված ծխում էր ու ծանր տնքում՝ պղտոր աչքերը պատուհանին հառած: Իսկ Մելիքն ու իր ընկերները երգում էին.

Քուչա, քուչա ման եկա,

Վերջը եկա քեզ գտա...

Ես կանգնել էի Մելիքի մոտ ու աշխատում էի հասկանալ, թե ինչ են խոսում նրանք: Նրանց հետ նստել էր նաև Բարկենը՝ մյուս եղբայրս. նա մռայլ էր, կարծես նախանձով էր նայում Մելիքին: Երեք տարի... երեք տարի հետո միայն ինքը կարող է այ այսպես ընկերներով հավաքվել, ծիւել ու խմել հայրիկի ներկայությամբ և ընկերների հետ երգել «Քուչա, քուչա ման եկա...»:

Իսկ ես, ես աշխարիի ամենաերջանիկ մարդն էի: Զան, Մելիքը բանակ է գնում, կարմիր աստղ է կպցնելու ճակատին, փայլուն կոճակներ է ունենալու և թուր, պառկելու է Մաքսիմ գնդացրի ետևում ու դոռ, դոռ կրակելու է սպիտակների վրա, ինչպես «Տասներեքը» կինոնկարում: Դոռ, դոռ... Շատ էի զարմանում, թե ինչո՞ւ է մայրս լաց լինում, ինչո՞ւ է տնքում հայրս. միթե՝ նրանք ուրախ չեն, որ Մելիքը կարմիր բանակ է գնում, որ սպանելու է բոլոր սպիտակներին: Զարմանալի մարդիկ են:

- Ֆիններն ի՞նչ են, ֆիններին մենք մի ամսում կլոտորենք, ես վախենում եմ, որ մինչև տեղ հասնենք, ամեն ինչ վերջացած լինի,- ափսոսում էր կարմիր այտերով մի տղա:

- Ասում են՝ նրանք դանակի մեջ են շատ ուժեղ, -պնդում էր մի ուրիշը, -ասում են՝ քսան մետրից դանակը թափ են տալիս և առը հա՛ ուղիղ աչքին...

- Պա՛հ, -հարբած հոհոռում էր կարմիր այտերով տղան, -մի տեսնեմ՝ նրանք իրենց դանակներով ինչ են անելու մեր տանկերի դեմ: Տանկ եմ ասում, է...

Բոլորը ծիծաղեցին: Դանակի մասին պատմողն էլ ծիծաղեց: Իսկ ես քրքում էի... Ճիշտ որ... տանկ ու դանակ: Մելիքն ինձ նայեց, ժպտաց: Ես անմիջապես բռնեցի նրա ուսը, շշնչացի ականջին.

- Մելի՛ք զան, ի՞նչ ես դառնալու, հը՝, լոտչի՞կ, թե պուլեմյուտչիկ:

Եղբայրս ծիծաղեց.

- Օդաշու եմ դառնալու, օդաշու, թոշելու եմ բարձր, ամպերից կլ բարձր, ախայե՛ րս, ու քեզ համար մի իսկական ինքնաթիո եմ բերելու: Կուզե՞ ս... -զրկեց ծնկին դրեց ու խառնեց մազերս: Նրանից հետո կյանքումս էլ ոչ ոք իմ մազերն այդպես չի խառնել:

*Այս, Մարգո, ջան Մարգո,
ինձ մի՛ անի խելազար...*

Կայարանից հայրս ու մայրս մի մեծ աղջկա հետ տուն եկան: Սիրուն աղջիկ էր՝ խոշոր սև աչքերով: Ալիսա էր անունը: Մինչև զիշեր մնաց մեր տանը: Մերոնք խոսում ու խոսում էին անընդհատ: Քունս շատ էր տանում, բայց ես պառկել էի ու չեմ քնում: Ուզում էի իմանալ, թե ով է այդ Ալիսան: Ու լսեցի, որ կայարանում, գնացքը շարժվելուց առաջ, Մելիքը այդ աղջկան ծանոթացրել էր մերոնց հետ, ասել է, որ ինքը սիրում է նրան ու խնդրել է, որ մայրիկն ու հայրիկն էլ սիրեն:

Մայրս ու հայրս շատ էին սիրում Ալիսային: Բարկենն էլ էր սիրում, ուղունքներ էր առնում նրա համար: Ես էլ էի սիրում Ալիսային: Եվ Ալիսան էլ մեզ էր սիրում: Հաճախ գալիս էր, նամակներ էր ցույց տալիս մորս: Մայրս շատ էր ուրախանում, բայց նրա գնալուց հետո լաց էր լինում միշտ:

- Որ նրան շուտ-շուտ գրում է, թող մեզ էլ շուտ-շուտ գրի, ելի,-ասում էր:

Երկու տարի հետո՝ իր սպասածից մի տարի շուտ, Բարկենն էլ բանակ գնաց: Գերմանիան պատերազմ էր սկսել: Եվ Ալիսան էլի շուտ-շուտ էր մեր տուն գալիս, նամակներ էր ցույց տալիս, ասում էր, որ օդաշու է դարձել Մելիքը: Ու նրա գնալուց հետո դարձյալ լաց էր լինում մայրս: Հետո Ալիսան սկսեց ուշ-ուշ զալ մեր տուն: Եվ ապա ամբողջ երեք ամիս չերևաց: Հիմա արդեն Մելիքը հաճախ էր գրում մեզ, ու ամեն անգամ նրա նամակը հեգելով, տառապանքով կարդալուց հետո մայրս լաց լինելով ասում էր հորս.

- Էն աղջկանից ա հարցնում:

Մի օր էլ՝ մի նոր նամակից հետո, հայրս դուրս եկավ տնից ու երեկոյան վերադարձավ՝ թևի տակ մի մեծ փաթեթ: Խեղացել, փոքրացել էր: Փաթեթը դրեց մորս առաջ ու տնքաց.

- Ա՛ռ:

Մելիքի նամակներն էին, որ Ալիսային էր ուղարկել: Մի քանի ծրար բացված չեմ: Վերջինը ինչ-որ Կերայնյա քաղաքից էր եկել: Կարմիր թանաքով էր գրված: Բացեցինք բոլոր չբացված եռանկյունի նամակներն ու կարդացինք հերթով՝ ամսաթվերին նայելով: Ու ամեն տեղ Մելիքը գրում էր, թե քիչ է մնացել, շուտով կհաղթեն գերմանացիներին, ու ինքը ետ կգա: Ու ամեն տեղ իննդրում էր Ալիսային շուտ-շուտ նամակ գրել, ասում էր, որ ինքը այդ նամակներով է ապրում, ասում էր, որ այդ նամակներն են բարձր պահում իրեն, ազատում թշնամու գնդակից, երբ մարտի է տանում իր կործանիչը:

Հետո այլևս նամակ չստացանք: Մի թուղթ եկավ մեր տուն: Այնտեղ գրված էր, որ ռազմական կարևոր առաջադրանք կատարելու ժամանակ՝ օդային անհավասար մարտում, հերոսաբար

ընկել է նա: Չեր կարողացել խուսափել գնդակից, ընկել էր իմ մեծ եղբայր Մելիքը: Այս Ալիսան այլս նամակ չեր գրում նրան...

Ու ես գիշերներ շարունակ անընդհատ վառվող ինքնաթիո էի տեսնում երազում: Նա ընկնում էր բարձրից՝ զիսավոր աստղի նման լուսավոր մի հետք թռղնելով երկնքում:

...բարձրության վրա, -մրմնջաց ծառը:

Եվ իտր ու իսավար զիշերվա մեջ նրա բոցը փայլում էր հեռվից մի կրակոտ աստղի նման: Ճարճատում էր նա, ծուխ-մուխ արձակում, իր մահը խնկում, մահ՝ այդքան շքեղ, այդքան բարձր, և հողը նրա շուրջը կարծես տեղ էր բաց անում՝ ընդունելու նրան, որ բարձրի ձգուեց և բարձրության վրա էլ մեռավ...

Ես բացում եմ աչքերս ու Նանարին եմ նայում: Նրա դեմքը հուզմունքից շառագունել է, փոքրիկ, բափանցիկ ձեռքերն ամուր բռնել են զիրքը, աչքերը լուսավորված են կրակով, շրթունքները թեթևակի դողում են:

Ու ես համբուրում եմ նրա դողացող շրթունքները, որոնցից զարմանալիորեն բալի թեթև, հաճելի բույր է գալիս միշտ:

- Գժվել ես,-ասում է նա,-մի տես՝ ի՞նչ լույս է:

Իսկապես, ոնց էի մոռացել այս անիծյալ միլիոն մոմանց լապտերները: Ես բռնում եմ Նանարի թևից, բարձրացնում եմ նրան, ու մենք արագ քայլում ենք կարմիր ծառուղիով: Ես նրան կամացուկ դեպի ստվերն եմ տանում: Նանարը չի զարմանում, չի հարցնում ոչինչ:

- Նանա՝ ր,-ասում եմ ես,-հանկարծ այնպես ուզեցի համբուրել քեզ:

Նանարը ժպտում է, ցած է դնում պայուսակը ու երկու ձեռքով գրկում է պարանցու: Մենք երկար համբուրվում ենք, այնքան երկար, որ գլուխս պտտվում է: Ա~խ, այդ բալի հոտը:

- Քեզ համբուրելուց հետո, Նանա՝ ր,-շունչ առնելով ասում եմ ես,-այնպիսի զգացում եմ ունենում, ասես բալ եմ գողացել: Միշտ թվում է, թե մայրս ներս կզա հիմա ու կնախատի ինձ...

- Եվ արժանի ես: Ժամը քանիսի՞ն ես տուն գնում,-քմծիծաղում է Նանարը: Մեզանից ոչ մեկը ժամացույց չունի, բայց առանց ժամացույցի էլ անսխալ կարող եմ որոշել, որ տասներկուսն անց է:

- Նանա՝ ր, արի՝ միասին հեծանիվով գնանք. դու նստիր ա՛յ այստեղ՝ առջևում, և ես քեզ անմիջապես ձեր տուն կթոցնեմ:

- Գժվել ես,-ետ է քաշվում նա: Ուրիշ տեսակ է ասում Նանարն այդ «գժվել ես» խոսքը, այնպես է ասում, որ իսկապես քիչ է մնում զժվես...

Եհ, Նատաշա, Նատաշա

Հիմա մենք երկուսով ենք մնացել՝ ես ու իմ «Խարկովը»՝ իմ հավատարիմ, իմ հոգնած, իմ ծեր հեծանիվը: Նա ինձ անադմուկ տանում է զիշերային փողոցներով՝ շրջանցելով առվափոսերն ու վիշապների նման երախները լայն բացած հեղեղատարների հորաբերանները: Ես համարյա թե չեմ դեկավարում նրան, բաց եմ թողել դեկն ու կամացուկ օրորվում եմ: Նա էլ է օրորվում թեթևակի, ինչ-որ բան է քրթմնջում, դզզում է... Որտեղ ասես չենք եղել իրար հետ: Թրիխսի ենք գնացել միասին ու Բարու: Լեռներ ու ձորեր ենք կտրել և կամուրջներ անցել, խղճահարվել ենք, երբ ստիպված ենք եղել ալանալ էշերի ու ձիերի կողքով և արժանապատվությամբ թույլ ենք տվել, որ ավտոմեքենաներն անցնեն մեզնից, ընկել ենք ձանապարհներին, արյունոտվել ու քերծվել ենք, բայց անմիջապես էլ բարձրացել ու շարունակել ենք առաջ գնալ: Իսկ երբ ինքն այլս ուժասպառ է եղել, երբ վիրավոր է եղել ու չի կարողացել տանել ինձ, ես նրան չեմ հրել ուրիշների նման, չեմ հայինել, գրկել, ուսիս եմ դրել ու ինքու եմ տարել նրան: Մենք շատ ավելի հեռուներն էլ ենք գնացել իրար հետ: Ճամփորդել ենք գնացքներով, նավերով ու ինքնաթիռներով, հասել ենք Տուլա, Մոսկվա ու Կիև, եղել ենք իմ հեծանիվի ծննդավայրում, տեսել ենք Ռիգան, Սիմֆերոպոլն ու Օդեսան և շատ մարդկանց ենք տեսել: Այդ առթիվ մեր կուրսի տղաները նույնիսկ կատակում են.

- Լավ է, որ հեծանվորդ ես, թե չէ խելքով այդքան հեռուները չեիր հասնի:

- Մենք քեզ հետ միասին դեռ շատ բան կտեսնենք, ախալք բա,-ասում եմ ես իմ հեծանիվին: Իսկ նա բզզում է կամացուկ ու քրթմնջում երբեմն: Նրա այդ քրթմնջոցը ինձ դուր չի գալիս: Ուրեմն ինչ-որ բանի կարիք ունի: Հենց այնպես ոչ ոք չի քրթմնջում: Այնինչ հարկավոր է, որ հիմա «Խարկովս» լավ զգա իրեն: Մի ամիս հետո Մոսկվա ենք գնալու՝ մարզիկների համամիութենական շքերթին մասնակցելու: Ամեն օր պարապում ենք՝ մի ժամ առավոտյան, մի ժամ երեկոյան: Լավ է դասավորված: Աշխատանքից ընդամենք տասը րոպե եմ ուշանում, այսինքն՝ այնքան, որքան հարկավոր է ստադիոնից մինչև շրջկոմի շենքը հասնելու համար: Ոչինչ, որ քաղցած եմ մնում, ոչինչ, որ հավաքի մեջ գտնվելու համար ինձ տրվող ճաշի կտրոնները չեմ կարողանում օգտագործել: Նույնիսկ լավ է: Երեք օրը մեկ Նանարին էլ հետո եմ ռեստորան տանում:

Անցյալ տարի առաջին անգամ պարզապես ուժով ներս տարա: Չեր զալիս, քիչ էր մնում լաց լինի: Ես համոզում, խնդրում, բարկանում, նույնիսկ սպառնում եմ, իսկ նա իրենն է կրկնում.

- Ամոք է,-ասում է,-տեսնողն ի՞նչ կմտածի:

Ես նրան բացատրում եմ, որ այստեղ ամոթալի ոչինչ չկա, իիմա շատերն են ռեստորան գնում, այ, որ ներս մտնենք, ինքն էլ կտեսնի, աղջիկներ շատ կան: Եվ ավելացնում եմ, որ Ռուսաստանում բոլորն էլ ռեստորան են գնում, տանը ճաշ չեն եփում: Միթե՞ ինքը կինոնկարներում չի տեսել:

- Կինոնկարներում ուրիշ է,-ասում է Նանարը: -Իբր ինքդ չզիտես, որ մեզ մոտ ռեստորան գնացող աղջիկներին խեթ-խեթ են նայում:

- Ո՞վ է խեթ նայում: Միայն հիմարներն ու չտեսները կարող են ուրիշ բան մտածել,-սրտանց բարկանում եմ և զգում, որ կարմրում եմ: Այս ռեստորան եկող աղջկներին խեթ նայողներից մեկն էլ ես եմ:

- Զի՞, Արտա՛կ, ասե՞մ ինչ անենք,-Նանարը բռնում է ձեռքս,-արի՝ գնանք ու մսով կարկանդակ ուտենք: Դու գիտես, որ ես շատ եմ սիրում, կվերցնենք, պուրակ կմտնենք ու...

- Մսով կարկանդա՞կ,-արհամարհանքով ասում եմ ես,-գոնե թոքո՞վ ասա, դա էլ մեծ պատիվ կլինի այդ կարկանդակ կոչվածի համար: Գիտե՞ս ինչ, Նանա ր, եթե երբեսէ ինքնասպանություն գործեմ, այդ կարկանդակի պատճառով կլինի: Եթե ասում են անցյալի մնացուկ, ես քո այդ կարկանդակն եմ իսկույն պատկերացնում:

Նանարը ծիծաղում է, և ինձ թվում է, թե հաղթանակի ճանապարհին եմ: Ես շատ եմ ուզում, որ նա ռեստորան գա ու դրա համար էլ առանց շունչ առնելու համոզում եմ: Ինչեր ասես չեմ հորինում, բայց տեսնելով, որ նա դեռևս անդրդվելի է, դիմում եմ նենգության, դիմում եմ մենամարտի ժամանակ արգելված ձևերի: Գայթակղեցնում եմ Նանարին, հրապուրում եմ: Ես երևակայությամբ նրան թևանցուկ տանում եմ կախարդական պալատի սրահների միջով, զգուշորեն իջեցնում մարմարյա աստիճաններով և ուղեկցում դեպի ճաշասրահ, որտեղ արմավենիների տակ՝ բոլոր սեղանների մոտ համարյա միայն աղջկներ են նատած: Հեռվից՝ բարձր տախտակամածից, Էստրադային հրաշալի երաժշտության հնյուններ են զալիս: Այստեղ Լեռնիդ Ուտյոսովն է իր ծովային ընկերների հետ հարաշելով հիշում Սև ծովը: Ապա ես սաղիստի սառնասարտությամբ նկարագրում եմ ռեստորանի ճաշատեսակները, որոնք երկրայինի ու երկնայինի բոլոր բույրերն ունեն և... Եվ այստեղ միայն, հենց «Սևան» ռեստորանի մուտքի մոտ, աստղերից պոկելով աշքերս, Նանարին եմ նայում: Խիդա հանկարծ սաստիկ տանջում է ինձ: Նանարի աշքերը փայլում են, նա հմայված ինձ է լսում: Երեսի շատ քաղցած է իմ Նանարը:

- Այս տեսնո՞ւմ ես՝ ոչ մի կին ներս չի մտնում,-թույլ ձայնով առարկելու վերջին փորձն է անում նա:

Եվ ո՞վ հրաշք: Կասկած չկա՝ ես երջանիկ աստի տակ եմ ծնվել: Ուղիղ մեր կողքից անցնում և ռեստորան են մտնում երկու ամենախսկական աղջկներ:

- Տե՞ս, տե՞ս,-բացականչում եմ ես ու համարյա հրելով՝ Նանարին ներս եմ տանում:

Իհարկե, ռեստորանում ո՛չ արմավենի կա, ո՛չ Ուտյոսով և ոչ էլ այն աղջկները, որ մեզանից առաջ ներս մտան: Երեսի խոհանոցի աշխատողներ էին: Փոխարենք մի այնպիսի ժխոր է, որ միայն կենտրոնական փոստատանն է հատուկ: Դպրոցականի պես՝ Նանարի ձեռքն ամուր բռնած՝ ես ազատ տեղ եմ որոնում և առանց շուրջու ուղղվում եմ դեպի անկյունում՝ պատուհանի տակ դրված սեղանը: Մենք նստում ենք իրար դիմաց: Նանարն այնպես է թերվել, որ ես նրա դեմքը համարյա չեմ տեսնում: Ես էլ առանձնապես փայլուն չեմ զգում ինձ: Վյանքումս աղջկա հետ առաջին անգամ եմ ռեստորան մտնում: Նոր եմ միայն նկատում, որ պիջակիս թևերի ծայրերը մաշված են, որ կոշիկներս բացարձակապես ոչ մի գույն չունեն ու մեծ համաշափությամբ կարկատած են երկու կողմից, որ ծնկիս թանաքի մի պատկառելի բիծ կա: Նոր եմ միայն նկատում, թե ինչու է Նանարը իր ձեռքը թաքցրել սեղանի տակ: Այս նրա

բրդյա ժակետի արմունկները երկրորդ անգամ են գործված, ու թեև թելը նույնն է՝ կապույտ գույնի, բայց ժակետն է, որ վաղուց երկնագույն է դարձել:

-Շոգ է այստեղ,-անփութորեն ասում եմ ես,-ե՛կ թեթևանանք, Նանա՛ր:

Նա կարծես հենց իմ խոսքին է սպասում: Շառագունած դեմքով՝ անմիջապես հանում է ժակետը: Ես ել իմ պիշակն եմ հանում, ու մենք կրկին նստում ենք իրար դեմ, նայում ենք իրար ու ժպտում ենք: Հիմա Նանարի հազին շրե մի հրաշալի ծաղկավոր շոր կա. կարծես մեկը ձյան վրա կապույտ երիցուկներ է շաղ տվել: Հանկարծ հիշում եմ, որ դեռ ոչինչ չենք ընտրել, վերցնում եմ սեղանի անկյունում ընկած ճաշացանկը և ամենայն պատշաճությամբ մեկնում եմ Նանարին: Նա ավելի է շառագունում:

- Դու՛ ընտրիր,-խնդրում է:

- Չի կարելի,-փոքր ինչ փքված ասում եմ ես,-ընդունված ձև է, որ կանայք ընտրեն:

Նանարը շփոթված բացում է ցանկը ու աչքերը սահեցնում խորյօ ու օտար անունների վրայով, որոնցից ես ել համարյա ոչինչ չեմ հասկանում: Հետո զգում եմ, որ գներին է նայում ու զգում եմ, որ որոնում է թվերից ամենափոքրը: Չեմ ուզում, որ սիրտս կծկվի: Ձեռքով մոտ եմ կանչում մատուցողուհուն:

- Նատա՛շա, սիրելի՛ ս,-ասում եմ,-մեզ համար խորովա՛ծ պատվիրեք: Իսկ մինչև պատրաստ լինելը, բերե՛ք սառը թառափ, պանիր, իհարկե Շվեյցարական, երկու շիշ մրգահյութ...-Ես մտքումս կատաղի արագությամբ հաշվում ու գումարում եմ դրանց գները և համեմատում իմ շորս օրվա կտրոնների արժեքի հետ: Չե՛, դեռ ինչ-որ բան մնում է: -Եվ հետո, խնդրում եմ, շմոռանա ք խավիարը, կարմիրը, իհարկե: Գուցե դու սե՞ վը կուզեիր, Նանա՛ր:

- Չե՛, չէ՛,-վախեցած ասում է Նանարը:

- Նատաշան ինձ գիտի, գիտի, որ ես սեղ չեմ սիրում,-ասում եմ ես՝ աշխատելով չնայել մատուցողուհուն:

Ես գիտեմ, որ հիմա Նատաշան ծիծաղում է մտքում: Այսր նա իսկապես գիտի ինձ: Գիտի, որ ես ամեն տարի մրցումներից առաջ մեկ ամիս ճաշում եմ «Սևան» ռեստորանում «Դինամո» սպորտընկերության տված կտրոններով և երբեք կանխիկ գումարով ռեստորան չեմ եկել: Նա չգիտի, թերևս, որ ես կյանքում ոչ խավիար եմ կերել և ոչ ել սառը կամ տաք թառափ ձուկ, ոչ ել շվեյցարական պանիր: Այսինքն՝ պարզապես հարկ չի եղել. ինչի՞ են պետք դրանք, երբ ես հիանալի կշտանում եմ մի բաժին կոտլետով, իսկ կտրոնի արժեքից մնացած դրամը կարող եմ օգտագործել դրսում, ուզածիս պես:

- Խմելու ի՞նչ կուզեիք:

Ես գունատվում եմ: Սա արդեն թիկունքին հասցված դանակի հարված է: Դառնացած նայում եմ Նատաշային: Լավ է, որ Նանարը չի տեսնում նրան: Նատաշայի հարթ մարմինը ցնցվում է անձայն ծիծաղից, խորշումած աչքերի մեջ չարաձձի կայծեր կան: Է՛հ, Նատաշա, Նատաշա...

- Նանա՛ր, կուզեի՞ր որևէք բան,-հուսահատի հանդգնությամբ հարցնում եմ ես:
- Չէ՛, ի՞նչ ես ասում,-անմիջապես հրաժարվում է նա:
- Նատա՛շա,-ասում եմ,-ցավոք սրտի, մրցումներից առաջ մեզ խմել չի թույլատրվում:

Նրա գնալուց հետո Նանարը նախատինքով ինձ է նայում:

- Ինչո՞ւ ես նրան Նատաշա ասում, Արտա՛կ, ախր նա տարեց կին է: Գոնե մորաքո՛ւյր անվանիր:

- Փորձել եմ,-ծիծաղում եմ ես,- ամբողջ երկու ժամ ուտելու ոչինչ չտվեց:

Մի քանի րոպէ անց Նատաշան, ծանրաբեռնված սկուտեղով, մեզ մոտ է գալիս ու սկսում է արագորեն հարդարել սեղանը: Եվ ես հանկարծ սարսափով տեսնում եմ, որ նա, պատվիրած ուտելիքներն ու մրգահյութերը տեղափորելուց հետո, սեղանին է դնում նաև մի շիշ արծաթապատ շամպայն:

- Նատա՛շա,-սրտնեղում եմ,-բայց ես խնդրեցի, որ խմիչք...

- Գիտեմ, գիտեմ,-ասում է Նատաշան,-բայց ես ի՞նչ կարող եմ անել: Սա ձեզ հյուրասիրել են, ուղարկեցին ա~յ, այն սեղանից...

Ես նայում եմ նրա ցույց տված ուղղությամբ: Բայց ոչ մի ծանոթ հայացքի չեմ հանդիպում: Տարակուսանքով կրկին Նատաշային եմ դառնում և հանկարծ նկատում եմ, որ նա, հազիվ նշանառելի, աչքով է անում ինձ: Ու հետն էլ... Հետն էլ ժպտում է դավադիր: Ես հարբում եմ, որ որևէ կաթիլ չխմած, արդեն հարբել եմ, սիրտս այնպես է լցվել, որ քիչ է մնում լաց լինեմ ուրախությունից, նրա համար, որ այսքան լավն է աշխարհը, նրա համար, որ մարդիկ առանց խոսելու էլ կարող են հասկանալ իրար, նրա համար, որ աշխարհում մի Նատաշա մորաքոյր է եղել, որի մասին ես տեղեկություն չեմ ունեցել և որին պատահաբար հայտնագործել եմ այսօր:

- Ո՞վ է ուղարկել, իմացա՞ր,-հարցնում է Նանարը:

- Իհա՛րկե,-ասում եմ ես,-անմիջապես իմացա: Նատա՛շա,-դիմում եմ բարի, տարեց մատուցողուհուն: - Նատա՛շա, մենք սա միայն մի պայմանով կխմենք, Զեզ հետ միասին:

Նատաշան ժպտում է: Նատաշան ինքն էլ երջանիկ է. նույնիսկ շիկնել են կնճիռները:

- Մեզ աշխատանքի ժամանակ չի թույլատրվում,-շշուկով ասում է նա,-բայց միևնույն է, ես զաղտագողի կխմեմ ձեզ հետ... ջահելության կենացը...

ՃՈՒՏՈՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԾ

Սանդուղքի մոտ իջնում եմ հեծանիվից, ուսիս եմ դնում իմ «Խարկով»-ը և երեք-չորս ցատկից հետո հայտնվում եմ երկրորդ հարկում: Չախ կողմում մեր դուռն է: Դեռ ձեռքս զանգի կոճակին չղրած՝ զիտեմ, թե ինչ է լինելու հաջորդ հինգ րոպեում: Նախ զանգը երկու կետ, ապա մի երկար ազդանշան է տալու, որը մորգեի ապարատի վրա նշված է որպես երկու կետ, ապա մի երկար ազդանշան, որը գիծ է: Դա նշանակում է, որ զանգը վերաբերում է ոչ թե հենց մուտքի դռան կողքի սենյակում բնակվող մեր հարևանություն, ոչ թե միջանցքի ծայրի սենյակում ապրող եղբօրս ու նրա կնոշը, այլ երրորդ սենյակում գտնվող իմ ծնողներին: Սակայն ազդանշանը ոչ մի նշանակություն չունի, որովհետև մինչև մայրս իջնի մահճակալից, մինչև դռանը մոտենա, մեր հարևանություն արդեն բացելու է փականքը և առանց իմ շնորհակալությանը սպասելու, ինչ-որ անորոշ քրթմնջոց արձակելով, ամուր շրիսակցնելու է իրենց սենյակի դուռը: Չեմ կարողանում հասկանալ, թե ինչու է նա այդպես վարկում: Չէ՞ որ կարող է չքացել, լավ զիտի, որ իր հետ միաժամանակ մայրս է և մոտենալու դռանը: Ուրեմն էլ ինչ և բացում ու հետն էլ քրթմնջում: Ի՞նչ իմանաս... Երկար ժամանակ չէ, ինչ մեր հարևանն է նա, երեխաներ ունի, ամբողջ օրը անընդհատ զանազան գործերով է զբաղված, հոգսերից մեջքը չի կարողանում շտկել... Ես զիտեմ՝ գոնե զիշերները քնո՞ւմ են, թե չէ, որովհետև անընդհատ թիվքիսկում է նրա կարի մեքենան: Ընդհանրապես լրակյաց է, հարևաններից շատերին, և երբեմն մեզ, առանց որևէ առիթի չի բարևում: Բայց բավական է, որ մեզանից որևէ մեկին մի բան պատահի, բավական է որևէ տեղ օգնության կարիք զգացվի, մեր հարևանություն այնտեղ է: Մոռանում է իր հոգսերը, գործերը, նույնիսկ երեխաներին է մոռանում, շտկում է մեջքը, դառնում բարեհամբույր ու սիրալիք, դառնում աշխույժ ու կենսուրախ, հասնում է ամեն տեղ: Հիվանդ ես՝ դեռեր է գոնում, շտապ օգնություն է կանչում, վիճում է թժիշկների հետ: Արշկադ ուզում ես ամուսնացնել՝ կամավոր շեֆ-խոհարարն է և թագավորական դերձակը: Քեզ հարկավոր է ինչ-որ տեղ գնալ, բայց ծծկեր երեխային նայող չկա, բա էլ ինքը ո՞ր օրվա համար է: Գրկում է, երգեր ասում, շշով կաթ է տալիս և բղավում է իր աղջիկների վրա, որոնք խանգարում են երեխայի քունը: Բայց ահա դու առողջացել ես, արշկանդ ամուսնացրել, արդեն որևէ տեղ գնալու հարկ չունես: Վերջ: Մեր հարևանությին կրկին մոայլ է ու հոգսերի մեջ, կրկին զիշերները անքուն թիվքիսկում է նրա կարի մեքենան, ու նա առավոտները այնպես է անցնում կողրով, ասես դու աշխարհում գոյություն չունես: Եվ ուշ զիշերին, երբ տուն եմ զալիս, բոլորից շուտ ինքն է բացում փականը, անորոշ քրթմնջով ամուր շրիսկացնում իրենց սենյակի դուռը ու չի էլ սպասում, որ ես շնորհակալություն հայտնեմ: Ինչ և ինքը բացում և ինչ և քրթմնջում: Ի՞նչ իմանաս: Ասում են նրա ամուսինը հարբեցող է եղել... Երգեր է երգել փողոցներում և միշտ զիշերներն է վերադարձել տուն:

Հիմա էլ հերթական, առանձնապես ոչ սիրալիք շրիսկոցը լսելուց և հարևանություն դռանը անարձագանք շնորհակալություն հայտնելուց հետո ոտքերիս թարերի վրա դեպի մեր սենյակն եմ ուղղվում և միջանցքում համբուրում մորս բարակ ու փափուկ այտը:

- Ընթրիքը խոհանոցում է, -շշնջում է նա:

Ես զգուշությամբ պատշզամբ եմ դուրս զալիս, հեծանիվս կախում եմ պատին ամրացված մեխից ու կրկին խոհանոց մտնելով՝ բացում եմ բոլոր կաթսաների բերանները: Ծնծղաների

մեղմ հնչյունների տակ այդ պարտադիր արարողությունը կատարելուց հետո միայն մոտենում եմ սեղանին ու սկսում ընթրել: Մայրս ներս է զալիս, շուր է դնում կեկտրական սալօջախին, նստում է իմ դիմաց և, հավերժական գուլպան գործելով, հետևում է ինձ:

- Ի՞նչո՞ւ չես քնում, մա՞մ:
- Ասում եմ ափսեները հավաքեմ ու ճաշ եփեմ հորդ համար: Խեղճը առավոտը հինգին է վեր կենալու:

Հայրս... Հիմա վաղուց կենսաթոշակի պետք է անցած լիներ, բայց շարունակում է աշխատել և այն էլ այնպիսի բարեխտական մարդու որն ինձ ապշեցնում է: Պատկերացրե՛ք մարդու, որն իր ողջ կյանքում՝ ավելի քան հիսուն տարվա աշխատանքային գործունեության ընթացքում, և ոչ մի անգամ աշխատանքից ուշացած չլինի: Եթե կարող եք պատկերացնել, ապա դա իմ հայրն է: Երբեմն նույնիսկ զայրանում եմ.

- Լավ, որ մի հինգ-տաս րոպե ուշանաս, աշխարհը կքանդվի⁹. հանգիստ կե՛ք հացդ: Ընկերութիւն կապասի, էլի:

- Գիտե՞ս՝ ընտանիք ունեցող մարդու համար ինչ է նշանակում աշխատանքի վերջի հինգ-տաս րոպեն, տղա ջան: Բարով դու էլ ունենաս՝ կիմանաս: Եվ հետո, եթե կարող եմ չուշանալ, ինչի¹⁰ ուշանամ: Աշխարհը կքանդվի... Բա ի՞նչ ես կարծում: Որ բոլորն էլ ուշանան, կքանդվի:

Եվ աշխատանքի է գնում մեկ օր զիշերը, մեկ օր՝ առավոտյան, մեկ օր՝ կեսօրից հետո: Տնից դուրս է զալիս աշխատանքն սկսվելուց ուղիղ երկու ժամ առաջ, որպեսզի աշխարհը չքանդվի, որպեսզի հանգիստ ոտքով գնա ու ժամանակին հասնի մեխանիկական գործարան, որտեղ հնոցապան է աշխատում: Միշտ հնոցապան չի եղել, իհարկե: Ստիպված է դարձել, եթե ուրիշ ելք չի եղել, եթե հաստոցի տակ աջ ձեռքի բուր մատը կտրվելուց հետո չեր կարող այլևս փականագործություն անել: Մայրս պատմում է, որ կյանքում առաջին անգամ հայրս հարբել է այդ օրը: Հիվանդանոցից դուրս է եկել, խմել ինչ-որ տեղ ու միայն ուշ երեկոյան է վերադարձել տուն: Կտրված մատը գրպանից հանել, դրել է սեղանին՝ իր առջև, պատից իջեցրել, սեղանին է դրել նաև իր հին թառը, որը էլ երբեք չեր նվազելու, հայերեն ու թուրքերեն տխուր-տխուր երգել է երգել կանաչ հանդերի ու ցուրտ աղբյուրների կարոտը սրտում ցյուղից քաղաք գնացած ջահել տղայի մասին ու լաց է եղել անմիտքար: Իսկ առավոտյան վեր է կացել սովորականի պես, կտրված մատն ինչ-որ տեղ է նետել ու մորս չլսելով, չնայելով մորս՝ աջ ձեռքը գրկած գործարան է գնացել, խնդրել, որ հնոցապան նշանակեն իրեն:

- Քիչ է մնացել, մա՞մ,-ուրախ ասում եմ ես,-մի երկու ամսից կավարտեմ համալսարանը, շատ կգրեմ ու կստիպեմ, որ հայրիկը աշխատանքից դուրս գա:

Մայրս Ժպտում է. մայրս հավատում է ինձ:

- Հա՛, Արտա՛կ ջան,-ասում է նա,-մեղք է, էլ առաջվանը չի, հոգնում է: -Հետո նայում է ինձ մի վայրկյանում արդեն թախծոտ դարձած աշքերով, ու շրթունքը դողում է: - Ասենք՝ քո թոշակի գնալու ժամանակն էլ է: Քանի տարի եղավ, որ աշխատում ես... Այ՛ իմ աշխատող բալա:

Նա բարձրացնում է ձեռքն ու երկար նայում է մատանեմատի փոքրիկ դեղնավուն օղակին: Ես ել եմ նայում նրա հայացքի ուղղությամբ, ու գուցե քունս է տանում, թե ինչ, բայց աչքերին առջև տասնյակ, հարյուրավոր դեղին օղակներ են երևում, և ականջիս մեջ հնչում է ընկեր Եսթերի ձայնը:

- Ճուտո՞, կարդալու ժամանա՞կ ես գտել, այս ծանուցազրերը հասցրո՞ւ Սարի թաղ:

... Ինչ հետաքրքիր են մայրերը. ամբողջ կյանքն են նվիրում իրենց զավակներին ու չեն ել նկատում դա, բայց երբ մի փոքրիկ, մի չնշին ուշադրության են արժանանում նույն այդ զավակներից, ուրախությունից կորցնում են իրենց ու եթե հնարավորություն ունեն, կհայտարարեն աշխարհով մեկ:

- Ճուտո՞, քանի՞ անգամ պետք է ասեմ, թանաքամանները թանա՞ք լցրու:

... Այնինչ զավակները բոլոր դեպքերում ավելի շատ տանում են տնից, քան բերում: Բայց եթե մայրերի աշքին տարածը կամ բոլորովին չի երևում, կամ ի երևում է այնպես, ինչպես հեռադիտակի մեծ խոշորացույցից դիտելիս, ապա բերածի համար նրանք շրջում են հեռադիտակը և ավելի ու ավելի են պտտեցնում մոտեցնող, խոշորացնող անիվը:

- Ճուտո՞, թոի՞ Կառւչուկի ժողոատարան ու հանձնի՞ ու այս գործերը: Չմոռանա՞ ստորագրել տալ մատյանում:

- Հիմա,-ասում եմ ես, որովհետև ճուտոն ես եմ, և քրեական հաստափոր գործերը թնիս տակ ամուր բռնած՝ քայլում եմ դեպի Կիրովի գործարանի մոտ գտնվող ժողոատարանը:

Ճիշտ է, իմ երեք հարյուր ոռութիւն աշխատավարձից բացի, տասնինք ոռութիւն էլ տրամվայի վարձ եմ ստանում, բայց ո՞վ է տրամվայի վրա հույս դնողը: Ո՞վ գիտի՝ կզա, չի զա: Երբեմն ել այնքան լիքն է լինում, որ շունչը կտրվում է, ու կարծես կուրծքը են խրվում մարդկանց գոտիների ճարմանդները: Չէ, ավելի լավ է ոտքով զնալ: Իհարկե, երբեմն այնքան ես հոգնում, որ քիչ է մնում պառկես ճանապարհին, գլուխու դնես խոնավ հողին և քնես, քնես: Բայց, ընդհանրապես, մի դժվար բան չէ: Ոտքով քայլելը նախ կոփում է մարդուն, ինչպես մեր ֆիզկուլտի դասատուն է նշում, և հետո երեք հարյուրին ավելացնում ես ևս տասնինք ոռութիւն... Տասնինք պաղպաղակ, ինչպես ասում է իմ պաշտոնակիցը՝ քաղաքի հյուսիսային և արևմտյան շրջանները սպասարկող ցրիչ Փանոսը:

Ինձ պաղպաղակ պետք չէ: Ինձ փող է պետք: Ահա թե ինչու, երբ մեր հարևանի տղան՝ Կոյյան, մի օր ինձ ասաց, որ դատախազությունում ցրիչի տեղ կա, ես, առանց մերոնց որևէ բան ասելու, դասերից հետո թաքուն դատախազություն գնացի ու դրներին կարդալով՝ զտա ընդհանուր բաժինը՝ մի ընդարձակ սենյակ, որտեղ չորս մորաքույրներ կային, չորս մեծ սեղաններ և բազմաթիվ հաստ ու բարակ մատյաններ այդ սեղաններին:

- Զեզ մոտ ցրիչի տեղ կա՞:

Չորս մորաքույրներն ել ինձ են նայում, չափում են ոտից գլուխ, դիտում են ինամքով կարկատած և մաքուր իմ շորերը, ուսիցս կախված զինվորական կանաչ, դաշտային պայուսակը, որը բանակից եղբայրս՝ Բարկենն է նվեր ուղարկել ինձ և որի մեջ դասագրքերս

ու տեսրերս եմ պահում: Սիրտս տրոփում է տազնապով: Տեսնես կընդունե՞ն, թե չէ: Այս, երանի ընդունեն, երանի դուր գամ: Չէ՝, չեն ընդունի, ուրիշ տեսակ են նայում: Ես դառնում եմ դեպի նա, որ նիհար, ձգված դեմք ունի ու շատ խիստ հայացք:

- Շատ եմ խնդրում, մե՞ծ մորաքույր, ընդունե՞ք:
- Քանի՞ տարեկան ես,-հարցնում է նա ու կարծես ջանում է մեղմել դեմքի խստությունը:
- Տասնինդղ, -արագ պատասխանում եմ ես և հավանորեն կարմրում, որովհետև նրա ձայնի մեջ հեզնանք է հնչում:
- Թէ՞ տասներեք:

Կախում եմ զլուխս ու ավելի եմ կարմրում: Հիմա՝ թ, հիմա կասեն սուտասան է ու բոլորովին չեն ընդունի:

- Ո՞ր դասարանում ես սովորում:
- Վեցերորդ:
- Քանի՞ վատ ունես: -Սա արդեն լուսամուտի տակի սեղանից են հարցնում:

Արժանապատվությունս սաստիկ վիրավորվում է:

- Նույնիսկ միջակ էլ չունեմ,-հպարտ-հպարտ պատասխանում եմ:
- Դե ասա՝՝ Ա քառակուսի պյուս Բ քառակուսի ինչի՞ է հավասար:
- Հավասար է Ա քառակուսի պյուս Բ քառակուսի,-ծիծաղում եմ ես:
- Կերա՞ր,-ցնծալով ծափ է տալիս դուն աջ կողմը նստած խարտիշահեր, սիրուն աղջիկը:
- Լուցե՞ք,-ասում է նրանց շատ խիստ հայացք ունեցողը ու հարցնում ինձ,- հայր ունե՞ս:

- Այո՞:
- Բանակո՞ւմ է:

- Չէ՛, եղբայրներս են բանակում:

- Իսկ մա՞յր:
- Մայր էլ ունեմ: Տանն է,-պատասխանում եմ ես ու զարմանում, թե ինչե՞ր է հարցնում այս մորաքույրը: Ինչպէ՞ս թե հայր ունես, մայր ունես: Ինչո՞ւ չպետք է ունենամ: Բա ո՞նց կլինի առանց հոր, առանց մոր...
- Դե ուրեմն էլ ինչո՞ւ են քեզ այստեղ ուղարկել,-հանկարծ բարկանում է նա, -ինչո՞ւ ես դպրոցից դուրս գալիս, հը՞ , քեզ եմ հարցնում:

- Ես... ես...

- Մի՛ պատասխանիր, երբ քեզ բան են ասում: Սրանց մի տեսեք, չեն ուզում սովորել: Էն օրն էլ տղաս է քիթը ցցել՝ գործարան եմ ուզում գնալ, ասում է, ականներ են պատրաստում: Ու լեզվին, լեզվին նայեք: Ես ուզում եմ, ասում է, որ իմ պատրաստած ականն էլ պայթի թշնամու դիրքում: Ինքն էլ սրա նման թիզ ու կես է: Մի էջում հինգ տառասխալ է անում: Չեր նմանների ականջները մի լավ ոլորել է պետք... - նա մոտենում է ինձ, կանգնում, անթարթ նայում է այնպես, որ ես փախչել եմ ուզում ու հանկարծ հարցնում է փոխված, թույլ ձայնով, -ինչո՞ւ չես ուզում սովորել, ի՞ր, չէ՞ որ դու հայր ունես... չէ՞ որ դու հայր ունես, -անընդհատ կրկնում է նա, - չէ՞ որ դու հայր ունես...

Ես հասկանում եմ, որ նա շատ տիտոր է, և այնպես մեղավոր եմ զգում ինձ, որ սկզբից շասացի, զուր տեղը վշտացրի նրան: Կարծում է ուզում եմ հեռանալ դպրոցից: Չէ՛, չէ՛, մորաքո կը, դուք ինձ ճիշտ շհասկացաք... Կակազելով բացատրում եմ նրան. մեր դասերն ավարտվում են ժամը մեկին, և ես կարող եմ մինչև ժամը հինգը հասցնել ամբողջ գործը: Թող հավատա մորաքույրը, այնպես կաշխատեմ, որ բոլորը գոն լինեն, վազելով կանեմ ամեն ինչ: Հո դասերս չէ՞ մ թողնելու: Չէ՛, պարզապես աշխատել եմ ուզում:

Մինչև այստեղ աշխատանքի անցնելը չգիտեի, թէ ինչ բան է ցրիչը, չգիտեի, որ աշխարհում ցրիչներ կան: Այնինչ երկու-երեք շաբաթ աշխատելուց հետո համոզվեցի, որ ոչ միայն կան, այլև շատ են, ամենուրեք են: Ես նրանց հանդիպում էի մեզ մոտ, փողոցներում, այն հիմնարկներում, ուր գրություններ ու գործեր էի տանում, և նրանց մեծ մասը ոտքով էր անցնում քաղաքի մի ծայրից մյուսը կամ երթեւեկում էր տրամվայի աստիճաններին կանգնած՝ հեռու տոմսավաճառների ահեղ հայցքից ու էլ ավելի ահեղ դատաստանից: Մենք արդեն ճանաչում էինք իրար, ողջունում էինք՝ հեռվից թափահարելով մեր ցրիչ-մատյանները, տեղեկանում էինք միմյանց առողջության և աշխատանքի մասին, տրտնջում էինք մեր պետերից և զարմանալի համերաշխությամբ հարգում մեր ենթակարգումը: Բոլորս էլ, օրինակ, ակնածանքով և նախանձով էինք վերաբերվում Մինհստրների սովետի ցրիչին, որը սովորաբար ավտոմեքենայով էր շրջագայում, իսկ մնացած դեպքերում քայլում էր զլուխը բարձր բռնած, սեփական անձի արժանապատվության մեծ զգացումով: Նրանից հետո գալիս էին Քաղսովետի գործկումի, մինհստրությունների, վարչությունների, շրջուվետների գործկումների ցրիչները: Ես ևս հպարտանալու թիչ բան չունեի, քանի որ Փանոսի հետ միասին մեր գերատեսչության գծով դեկավար դիրքերից մեկն էլ ես էի գրավում՝ հանդիսանալով հանրապետության դատախազության ցրիչը և պաշտոնական սանդուղքի վրա ինձնից ետ ունենալով քաղաքի դատախազության, շրջանային դատախազությունների, դատարանների և այլ հիմնարկների մանր-մունք ցրիչներին:

Սակայն, չնայած այս ենթակարգումներին, մի հիմնական հարցում մեր միջև ոչ մի տարբերություն չկար: Դա այն էր, որ մեզանից և ոչ մեկը անուն չուներ: Մենք բոլորս էլ ձուտուներ էինք՝ միասին վերցրած, և առանձին-առանձին կոչվում էինք ձուտոն: Մեզ ձուտոն էին անվանում բռնորդ, ինչպես ասում են, անկախ նրանց ազգությունից, գույնից, սեռից, դավանանքից ու գրաված դիրքից, մեզ ձուտոն էր անվանում նույնիսկ ինքը՝ ընկեր Վահանը՝ թերևս աշխարհի ամենահին ձուտոն, որը ցրիչ էր եղել դեռևս ցարական փոխարաքայի ժամանակ, ցրիչ էր եղել դաշնակների տիրապետության օրոք և Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո էլ շարունակել էր աշխատել որպես ցրիչ: Գնահատելով

նրա ծառայությունները և բարեխիղձ աշխատանքը ցրիչության բնագավառում, հատկապես սովետական իշխանության տարիներին՝ մի շարք փորձեր էին արվել աշխատանքում նրան առաջ քաշելու համար, բայց նա հավատարիմ էր մնացել իր կոչմանը: Ուղարկել էին լիկիայան, յոթնամյակի ավարտական էին տվել, սակայն ընկեր Վահանը դարձյալ ցած չէր դրել իր ցրիչ-մատյանը և իրեն այլ աշխատանքի տեղափոխելու վերաբերյալ ամենավերջին փորձին պատասխանել էր տասներկու էջանոց մի դիմումով՝ ուղղված հանրապետության դատախազին: Այդ դիմումի մեջ նա մասնավորապես գրել էր, որ եթե այլևս իրեն չեն վստահում, կարող են բացեիրաց ասել: Ինքը դիմում կտա ու կազատվի, շատ տեղերից են իրեն խնդրում: Ի՞նչ կարիք կա ուրիշ միջոցների դիմելու: Դրանից հետո նրան վերջնականապես հանգիստ էին թողել:

Անցել էին տարիներ, դատախազությանը նորանոր իրավունքներ և պարտականություններ էին տվել, և դրանով իսկ ավելի էր մեծացել գրագրությունների քանակը: Իսկ ընկեր Վահանը ծերացել էր: Նա այլևս չէր կարող հասցնել ամեն ինչ, այդ պատճառով էլ դատախազության աշխատողները ստիպված մի նոր ցրիչ էլ էին ընդունել՝ տասնչորս տարեկան մի տղայի, որը, հասկանալիորեն, իր պարտականությունները ավելի արագ էր կատարում, քան ընկեր Վահանը: Դա մինչև հոգու խորքը վիրավորել էր վատակավոր ցրիչին. նա հիվանդացել ու անկողին էր ընկել: Դատախազությունում բոլորն էլ շատ էին սիրում ու գնահատում նրան՝ այդ բարի ու փնթինթան ծերուկին, դրա համար էլ նրա հիվանդության օրերին մի արտակարգ քայլի դիմեցին. հատուկ գրությամբ ՍՍՀՄ դատախազությունից խնդրեցին թույլ տալ, որպեսզի Հայաստանի դատախազությունը ավագ ցրիչի հաստիք ունենա: Այնտեղ զիտեին ընկեր Վահանին: Չներժեցին:

Եվ հիմա ընկեր Վահանը, որին հանձնարարված էր միայն փոստային առարումներ կատարել ու հսկել մեզ շարքային ցրիչներիս, ինձ ու Փանոսին էր նայում իր արցունքու աշքերով ու տեսնելով, թե ինչ դատապարտելի անհոգությամբ ենք օգտագործում սոսինձը գրությունները ծրարելիս, զայրացած փնթինթում էր:

- Ա՛յ ձուտոներ, Էս-Էս-Էս-Էս ի՞նչ եք անում: Ընկե՛ր Եսթեր, ընկե՛ր Եսթեր, սրանք Էս-Էս-Էս-Էս ի՞նչ են անում: Այս դրան փող ենք տալիս, Է՛: Մի կաթիլ կաթեցրե՛ք Էս-Է-տեղ, հերիք Է...

Ու համոզված, մարզարեաբար կանխազուշակում էր, որ մեզանից երբեք կարգին ցրիչ դուրս չի գա, որովհետև մենք չենք գնահատում, չենք ապրում մեր աշխատանքով, զարմանում էր դեկավարության վրա, որ մեզ այդպիսի կարևոր, պատասխանատու գործ է վատահել և նույնիսկ տարակուսանքով հարց էր տալիս, թե Էս-Էս-Էս պետությունը ո՞նց է կարողանում դիմանալ՝ մեզ նման ցրիչներ ունենալով:

Այնինչ մենք սրտանց, ամբողջ հոգով էինք աշխատում: Դպրոցից դուրս գալուց հետո վագելով դատախազություն էի զալիս, վերցնում գործերն ու գրությունները և ձմռան բքին ու ամոռան տապին, փոշիներից խեղովանելով ու մինչև ծնկներս խրվելով Շենգավիթի դեղին, կպչուն ցեխի մեջ, քաղցից գալարվելով, հասցեատերերին էի որոնում: Շերթով արտասանում էի իմ իմացած բոլոր բանաստեղծությունները, որպեսզի շուտ հասնեմ, դպրոցում սովորած ուրախ երգեր էի երգում մտքում ու լաց էի լինում հոգնածությունից: Եվ շտապում էի դարձյալ, որպեսզի մինչև աշխատանքի ավարտը դատախազություն հասնեմ ծանուցագրերն ստանալու և երեկոյան բաժանելու համար:

- Վերցրո՞ւ, ճուտո՞՞ ջան, այսօր շատ են ծանուցազրերը, ո՞նց պիտի հասցնես,-կարեկցանքով ասում էր ընկեր Ասյան՝ աջ կողմի սեղանի մոտ նստած խարտիշահեր սիրուն աղջիկը:
- Ոչինչ, ընկե՞ր Ասյա,-առույգ պատասխանում էի ես,- դատարկ բան է, վազելով կհասցնեմ:
- Իսկ դասե՞րը:
- Դասերս ել կհասցնեմ, ընկե՞ր Ասյա:
- Չէ՛, հապա տո՞ւր ծանուցազրերը... - ընկեր Ասյան վերցնում էր թղթերը, կարդում հասցեներն ու մի քանիսը մի կողմ դնում. -սրանք մեր տան մոտ են, ես կտանեմ:
- Ընկե՞ր Ասյա...
- Բայց փոխարենք... - նա վազում էր դրան մոտ, գցում փականը ու ձեռքը բարձրացնելով՝ զբնգուն ձայնով հայտարարում,-աշխատանքն ավարտվելու և ընկեր Եսթերի բացակայության կապակցությամբ ելույթ կունենա հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի գեղարվեստական ինքնազործ խումբը: Մենակատարներ, մեծ ճուտո՞ւ ասք, Հեղինե պարողիաներ, Ասյա՝ երգ, Գեղուիի՝ պար, փոքր ճուտո՞ւ դիոլ:

Ու սկսվում էր մի ուրախություն, որը միայն տիրությունից կարող էր ծնվել: Ողջ օրը զբասեղաններին կքած, ընկեր Եսթերի խստությունից և աշխատանքի լրջությունից հոգնած ջահել քարտուղարութինները ազատություն կին տալիս իրենց: Երգում ու կատակներ կին անում ու ծիծաղում կին, ծիծաղում կին անընդհատ, ուժասպառ լինելու աստիճան, հիստերիկորեն: Ծիծաղում կին հենց այնպես, ասես պարզապես պահանջ ունեին ծիծաղելու, ասես դրանով վրեժ էին լուծում ինչ-որ մեկից: Ծիծաղում կին ի հեճուկս ուշացած գարնան, ձգձգվող պատերազմի, վարագուրված պատուհանների, անլոյս փողոցների, անցնող ջահելության... Ու անորոշ, անբացատրելի մի մեծ թախիծ, մի մեծ տիրություն կար նրանց ծիծաղի մեջ:

- Ծանուցազրերը շմոռանա՞ս, ճուտո՞՞ ջան:

Մոռանալը չի մոռանում, իհարկե, սակայն սկզբնական շրջանում չի հասկանում, թե ինչու նրանք, ում ծանուցազիր էի տանում, միշտ մոայլ էին ընդունում ինձ ու հաճախ նույնիսկ թշնամաբար: Ինչո՞ւ... Եվ դրա պատասխանը ստացա մի օր երեկոյան Զորագյուղի փողոցում:

Ուրախ Շանուցագրեր Չեն Լինում

Արդեն մութն ընկնում է, իսկ ես դեռևս չեմ կարողանում գտնել ծանուցագրի մեջ գրված հասցեն՝ «Զորագյուղի փողոց- երկրորդ նրբանցք, տուն թիվ քաններկու, Վարդան Ասլանյանին»։ Զորագյուղ կոչվող վայրում ոչ մի փողոց էլ չկա, ինչ-որ ծուռումուտ արահետներ են իջնում դեպի Զանգուն ու մեկ էլ կտրվում, կախվում ժայռի վրա կամ էլ մտնում այս կամ այն բակը։ Տները փոքրիկ են, հողածածկ ու թառած իրար վրա, ոչ մի տեղ օջախ չի վառվում, ոչ մի տեղ կրակ չկա, ոչ մի պատուհան լուսավորված չէ։ Մարդիկ էլ համարյա չկան։ Կա միայն ծանր, ճնշող լուսաթյուն այդ Զորագյուղ կոչված վայրում, և Զանգվի մոայլ վշտուն ավելի է ընդգծում այդ լուսաթյունը։ Ինչպէ՞ս գտնեմ համար քաններկու տունը։ Սիրտս ակամա լցվել է ահով, փշաքաղվել են մազեր։ Այնպիսի բաներ են պատմում այս թաղամասի մասին…

Բախում եմ հենց առաջին տան դուռը։ Երկար ժամանակ ոչ ոք չի պատասխանում։ Ես ավելի եմ վախենում և ավելի ամուր եմ բախում։ Որոշ ժամանակ անց բարկացած քրթմնօց է լսվում և խոլ հայհոյանք։

- Ո՞վ ես,-լսվում է փակ դոան ետևից։
- Քերի ջան,-ասում եմ աղաչանքով,-ինձ համար քաններկու տունն է պետք։
- Համար քաններկո՞ւսը,-վերահարցնում է մարդը,-համար քաններկու տունը ո՞րն է, աղջի,-դիմում է նա ինչ-որ մեկին, ապա նորից դառնում է ինձ,-իսկ դու ո՞ւմ ես ուզում։
- Վարդան Ասլանյանին։
- Վարդա՞ն։ Ինչի՞ համար ես ուզում։
- Ծանուցագիր եմ բերել դատախազությունից։
- Դատախազությունի՞ց,-կրկին վերահարցնում է նա ու լուս։ Ներսից ինչ-որ խեղդված շշուկներ են զալիս, հետո ձայնն ասում է։
- Այստեղ այդպիսի մարդ չկա։
- Իսկ համար քաններկու տունը որտե՞ղ է, քերի՞ ջան։
- Ես ի՞նչ իմանամ, թե որտեղ է։ Ի՞նչ է, հասցեների սեղա՞ն եմ քեզ համար։ Կորի՞, թե չէ դուրս կգամ…

Ինչո՞ւ, ինչո՞ւ ախր, ի՞նչ եմ արել ես, ինձ ասել են՝ ծանուցագի՞ր տար Զորագյուղի երկրորդ նրբանցքի համար քաններկու տուն և հանձնի՞ր Վարդան Ասլանյանին։ Ես էլ բերել եմ։ Ի՞նչ վաս բան ասացի, ինչո՞ւ վիրավորվեց նա, գուցե ինձ սիալ հասկացավ։ Դե, իհարկե, սիալ հասկացած կլինի, այլապես ինչո՞ւ պետք է հայհոյեր ինձ։ Զարմացած ու վշտացած՝ մի քանի տուն էլ եմ անցնում ու նույնը հարցնում բակում կանգնած մի կնոջ։

- Մորաքն' լյր, երկրորդ նրբանցքը ա՞յս է:
 - Սա է:
 - Համար քսաներկու տունը ո՞րն է,-ուրախացած հարցնում եմ ես:
 - Իսկ դու ո՞ւմ ես ուզում:
 - Վարդան Ասլանյանին:
 - Ի՞նչ կա որ,-հարցնում է կինը: Նրա ձայնի մեջ անհանգստություն է հնչում:
 - Դատախազությունից ծանուցագիր եմ բերել:
 - Չկա, չկա, չկա,-հանկարծ չարանում է նա,-Ասլանյան- Մասլանյան չկա այստեղ:
 - Գոնե թաղային լիազորի տունը ցո՛յց տուր ինձ, մորաքն' լյր, երկու ժամ է ման եմ զալիս,- ինդրում եմ ես,-թող ծանուցագրի ետևում գրի, որ այդպիսի մարդ չկա: Կթողնեմ կգնամ:
 - Տո՛ւր ինձ թուղթը,-հանկարծ ասում է նա ու ձեռքիցս համարյա խլում է ծանուցագիրը: Նրա ձեռքերը սև են ու ճաքճպված, բլուզի ձախ թևը դաստակից մինչև արմունկը պատռված է, ոտքերին փայտե մաշիկներ կան, ինչպես բաղնիքներում են լինում: -Դե դու գնա՝,-հրամայում է նա:
 - Կտրոնի ետևում գրե՛ք ու ի՞նձ տվեք:
 - Դե գնա՝, գնա՝,- ձայնը բարձրացնում է նա,-գնա՝ ու մեկ կլ չերևա՝ ս այստեղ:
 - Մորաքն' լյր,-ասում եմ ես,-մորաքն' լյր, տվե՛ք ինձ կտրոնը, եթե չտաք, կրարկանան, կասեն՝ տեղ չես հասցրել:
 - Վախենում ես հեռացնեն պաշտոնիցդ, հա՞,-հեզնում է նա,-քեզ շատ է դուր զալիս, հա՞, որ շրջում ես բուի նման: Գնա զո՞ր ծոտի քեզ համար, զո՞ր, անեծքի տակ մի՞ ընկնի, այ՞ տղա: Վախենում է հեռացնեն... Սրան ի՞նչ, որ մարդկանց բանտ է կանչում:
- Դա իհարկե թյուրիմացություն է:
- Ես դատախազությունից եմ, մորաքն' լյր ջան, ի՞նչ բանտ, ո՞վ ասաց բանտ, կարդացե՛ք, ախր զրված է ծանուցագրի վրա:
 - Գիտեմ ինչ է զրված: Իսկ տա՞կը, իսկ տա՞կը ինչ եք զրել. «Չներկայանալու դեպքում...»: Ի՞նչ պետք է անեք, դե ասա՝, ի՞նչ պետք է անեք, միլիցիայով կտանեք, չէ՞ , դե եկե՛ք, ինչո՞ւ եք ուշանում, դե եկե՛ք, եկե՛ք տարեք, ինձ ել տարե՛ք, իմ հինգ երեխաներին ել տարե՛ք, բոլորին ել տարե՛ք: Միննույն է, նա իր ոտքով գալ չի կարող...

Ու հանկարծ նա հեծկլտում է՝ սև ու ճաքճված ձեռքերով երեխայի նման դեմքը ծածկած, հեկեկում է երկար ու կարծես ինչ-որ երգ է ասում հետք ու երգի հետ համաշափ ահավոր վշտի ծանության տակ օրորում է զլուխը:

Չփատեմ՝ ինչ է կատարվում ինձ հետ, զլուխս անտանելի ցավում է, տնքում, ամբողջ մարմինս էլ է տնքում, բայց տնքում է այնպես, ոնց որ զլուխ լինի, մի մեծ, ծավալված, ցավոտ զլուխ: Մի տեսակ թմրության մեջ եմ ընկնում և չեմ հասկանում, թե ինչո՞ւ է հանկարծ այդ կինը զրկում ինձ, ինչո՞ւ է ուզում բարձրացնել, իո չե՞մ ընկել գետնին, այս ի՞նչ կարիներ են ընկնում դեմքիս, ե՞րբ սկսեց անձրև գալ, սպասի՛ր, սպասի՛ր, սպասի՛ր, ո՞ւր է տանում ինձ սև, ճաքճված մատներով, երեխայի պես լացող այս կինը:

- Մամա~, մամա~, -կանչում եմ ես, -մամա~...

Ու հեռվից ինչ-որ ձայներ եմ լսում: Սկզբում մի թավ, բարկացկոտ ձայն, հետո մեկ ուրիշը՝ բարակ, կերկերուն:

- Ախր սա բոլորովին երեխա է, կուրանան իմ աչքերը, ախր ես լավ չեմ տեսնում, Վարդա՞ն: Չո՞ւր տուր, աղջի՞ , ի՞նչ ես քարացել կանգնել... Դե, խմի՞ր, խմի՞ր, բալա՞ , խմի՞ր, մատա՞ն...

Ես խմում եմ ազահաբար, ու պարզվում է զլուխս, բացում եմ աչքերս և ինձ գտնում եմ մի խավար սենյակում՝ աթոռին նստած: Ուղիղ իմ դիմաց՝ երկարյա մահակալին, պառկած է մի մեծ մարդ՝ գունատ, մազակալած դեմքով ու խոշոր, բարի աչքերով: Երկար սեղանին նավթավառ է դրված, ու նրա լույսի տակ՝ չորս կողմը, փոքրիկ երեխաներ կան, մեկ, երկու, երեք... չորրորդն իր առաջ թանաք գրիչ ունի ու գրքեր:

- Հիմա ո՞նց ես, երիտասա՞րդ, -հարցնում է թավ ձայնով մարդը, -լա՞վ ես, տեսնում եմ, տեսնում եմ, որ լավ ես: Դու նրան ուշադրություն մի դարձրու, - ասում է նա ինձ՝ ցույց տալով իր կողքին ձեռքերը կրծքին խաչած վշտահար կնոջը, -կանայք այդպես են: Նրանց միշտ թվում է, թե երբ ծանուցագիր են ուղարկում որևէ տեղից, ուրեմն տանում են բանտարկելու: Այնինչ այդպես չէ, չէ՝, ճիշտ չե՞մ ասում: Հասկանում ես, զիշերային հերթափոխից տուն էի զալիս ու հենց վերը՝ եկեղեցու մոտ, հանկարծ ոտքս շրջվեց: Սաստիկ ուրել է, տե՛ս, քայլել չեմ կարողանում, -նա վերմակի տակից ցույց է տալիս ինչ-որ փալասներով փաթաթված իր ոտքը, - երեք օր է աշխատանքի չեմ զնացել, դե, այնտեղ էլ երևի կարծել են, թե հենց այնպես չեմ զնում, խուսափում եմ, հասկան ում ես: Դրա համար էլ գրել են դատախազությանը: Բժիշկ ենք կանչել, բայց մինչև հիմա չի եկել, երևի տեղը չի գտնում: Ախր ո՛չ հասցե ունենք կարգին, ո՛չ համար...

- Իսկ դատախազությունից իսկույն գտնում են, - կամացուկ ասում է կինը:

- Անպայման դրա համար կանչած կլինեն, ճիշտ չէ՝: Ուրիշ ի՞նչ կարող է լինել: Հիմա աշխատանքի զգնալը ամենածանր հանցանքն է: Բայց ես չեմ կարողանում, հասկան ում ես, չեմ կարողանում: Ցավում է ոտքը: Տո՞ւր ծանուցագիրը, -հրամայում է նա կնոջը, -թե՛ր թանաքն ու գրիչը: Ես հիմա այստեղ կզրեմ, թե ինչու չեմ կարող զալ: Ճիշտ չէ՝: Քեզ վրա էլ չեն խոսի, չէ՝ ... դո՞ւ ի ինչ մեղավոր ես... - հազը չի թողնում, որ նա ավարտի իր խոսքը, թաշկինակը բերանին է տանում ու հազում է անձայն՝ ցնցվելով ողջ մարմնով, աչքերն ամուր փակած ու հազի արանքից խեղդվելով՝ ասում է, - սը-սրա համար ինձ բանակ չտարան:

Ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ բանակ չեն տարել, բայց զգում եմ, որ նա դրանից այնպէս զոհ չէ, ինչպէս մեր դատախազներից ոմանք: Ու չգիտեմ ինչու, բայց այնպիսի խոսքեր եմ ուզում ասել նրան, որ նա չտիրի, որ նա հավատա իր խոսքերին, որ նրա ենթադրությունը ճիշտ լինի: Չէ՞ որ եթե մեկն այդքան կրկնում է՝ «Ճիշտ չէ», «այդպէս չէ»», «Ճիշտ չե՞մ ասում», ուրեմն կասկածում է, ուրեմն չի հավատում, ինչպէս ասում է իմ հայրը:

- Իհարկե,-ասում եմ ես,- ու զգում եմ, որ զզմելիորեն մեծավարի եմ խոսում հանկարծ, - ես ի՞նչ մեղավոր եմ: Ասել են՝ տա՛ր ծանուցագիրը, ես ել բերել եմ: Ես չբերեի, Փանոսը պետք է բերեր կամ... կամ ընկեր Վահանը: Մեր մյուս ցիշներն են,-բացատրում եմ ես, - իսկ դրա համար ի՞նչ պետք է ասեն, ընկել եք, կասեմ, որ ես ել տեսա: Մեր պահեստապետն ել է ընկել, աշխատանքի չի զալիս, ո՞վ է բան ասում:

- Տեսն ՞մ ես,- Վարդան Ասլանյանը հաղթականորեն կնոջն է նայում,-ասում էի, չէ՞ , ին բոլորն ել կարող են տեսնել ոտքս: Վերցրո՞ւ կտրոնը, զնա՞ , տղա՞ս: Այսինքն՝ դեռ չէ, սպասի՞ր:

Ես կանգնում եմ դրների մոտ, իսկ նա մոտ է կանչում կնոջը, ինչ-որ բան է շշնչում ականջին: Կինը նայում է նրան, իսկ նա ասում է մի քիչ բարձրաձայն. «Ոչինչ, ոչինչ»: Կինը անկամ շարժումով կռանում, մահճակալի տակից ինչ-որ բան է վերցնում ու մոտենալով՝ տալիս է ինձ: Նրա ձեռքին մի փոքրիկ, մի իսկական գետնախնձոր կա:

Ես նայում եմ այդ գետնախնձորին ու զգում եմ, որ աչքերս լցվում են:

- Չէ՛, չէ՛, չեմ ուզում: Շատ շնորհակալություն: Չէ՛, չէ՛, մեր տանը շատ կա,- ասում եմ ես ու դուրս եմ փախչում արագ, որ նորից չտեսնեմ գետնախնձորը: Նեղ արահետով դեպի վեր եմ վագում, դիպչում եմ քարերին, ընկնում եմ ջրափոսերի մեջ, տնքում եմ ու շարունակում եմ վագել՝ շնչելով լայն բացած բերանով: Քամին սովում է իմ բերանում, տարօրինակ, ծիծաղելի ձայներ է հանում, դուրս է զալիս ու սլանում ինչ- որ տեղ: Հետո երևի ետ է դառնում, որովհետև հիմա ել երեխայի նման հրում, հա հրում է իմ մեջքին, առաջ է նետում, մի պահ կանգ է առնում ու նորից է հրում դեպի մեր փողոցը՝ դեպի իմ ամրոցը՝ դեպի մեր տունը՝ Տիգրան աղբարենց փոքրիկ այգու մոտ...

ԳՆՈՒՄ ԵՄ Ազատելու

- Ճուտո՞ ջան, ինձ որևէ քա՞ն ես ուզում ասել,-հարցնում է ընկեր Ասյան:

Նա դիտմամբ դանդաղ է գրանցում նյութերը, որ ես մի քիչ հանգստանամ: Բայց դա այնքան ճարպկորեն է անում, որ ոչ ոք չի նկատում: Ես մոտենում եմ նրան ու կամացուկ հարցնում եմ.

- Ընկե՞ր Ասյա, այդ ծանուցագրերը ում տանում եմ, բոլորին էլ բանտարկո՞ւմ են:

- Չէ՞, ինչե՞ր ես ասում,-բոռունցքի մեջ ծիծառում է նա-, այդպես ո՞ւր կհասնի: Չէ՞, քչերին, քչերին: Ում որոշում են բանտարկել, սովորաբար ծանուցագիր չեն ուղարկում:

- Ուրեմն Վարդան Ասլանյանին չե՞ն բանտարկի:

- Ո՞վ է Վարդան Ասլանյանը,-զարմանում է ընկեր Ասյան:

- Ծանուցագիրը երեկ դուք գրեցիք, չե՞ք հիշում:

- Որի՞ն հիշեմ, օրական երեսուն-քառասուն ծանուցագիր եմ գրում,-ծիծառում է նա:

- Նրան հիշե՞ք, էլի, -խնդրում եմ ես, -նա ի՞նչ մեղավոր է, ոտքը շրջվել է, աշխատանքի չի կարողանում գնալ, նա հինգ երեխա ունի, բժիշկը նրանց տունը չի գտնում, նրա կինը լաց է լինում ամբողջ օրը:

Ընկեր Ասյան ուշադիր ինձ է նայում, և նրա միշտ ժպտուն աշքերում այս անգամ ես տիրություն եմ տեսնում:

- Լավ,-ասում է նա, -ես հիմա կնայեմ այդ գործը: Բայց սա վերջին անգամը պետք է լինի: Մի՞ եղիր այդպես, մի՞ հետաքրքրվիր, ճուտի կ ջան, դու դեռ շատ փոքր ես, հոգիդ մի՞ լցրու դառը բաներով: Լա՞վ: Միևնույն է, ոչինչ անել չես կարող: Դա էլ բավական է, որ աշխատում ես: Բաժանի թ քո գործերը, բաժանի թ քո ծանուցագրերը, որովհետև դա թ քո աշխատանքն է և ուրիշ ոչինչ: Եվ ուրիշ ոչինչ, -նա քնքությամբ ու թախիծով ինձ է նայում, որովհետև գիտի՝ անհնար է ապրել այնպես, ինչպես ինքն է ասում, որովհետև ինքն էլ այդպիսին չէ և որովհետև ուրիշ կերպ լինել չի կարող: Ու դժվար է որոշել՝ ավելի շատ ի՞նձ է ասում, թե՞՝ իրեն: Հետո արագ-արագ թերթում է ձեռքին բռնած բարակ գործը, չի կարդում, յուրաքանչյուր թղթին մի հայացք է զցում միայն, -չէ՞, ուրիշ ոչինչ չկա, -ասում է նա շթաքցրած ուրախությամբ, - ուրիշ ոչինչ չկա: Եթե նա կարողանա ապացուել, որ իսկապես հիվանդ է, ոչինչ չեն անի: Դե, ուրախացի՞ր, -ժպտում է ընկեր Ասյան, - հիմա ես քեզ կճանապարհեմ ու կզանգահարեմ նրանց պոլիկլինիկա, կստիպեմ, որ բժիշկ ուղարկեն: Դու էլի՞ ինչ-ոք բան ես ուզում ասել:

Չգիտեմ, թե նա որտեղից է կոահում, որ ես մտադիր եմ էլի հարց տալ: Գուցե երբ մտածում եմ, անձայն շարժվում են շրթունքներս:

- Ընկե՞ր Ասյա, - հարցնում եմ ես, - ընկե՞ր Ասյա, իմ բոլոր ծանուցագրերն էլ այդպես... այդպես տիս ուր ծանուցագրեր են լինելու:

Ընկեր Ասյան գլխով է անում միայն:

- Ուրեմն ընկեր Վահանն ամբողջ կյանքում միայն տխուր ծանուցազրե՞ր է բաժանել,-քիչ է մնում ավելացնեմ, «քուի նման», բայց ժամանակին կծում եմ լեզուս:
- Նայած թե ում համար, այդ ճուտո,-ասում է նա,- մեկի համար տխուր է լինում, իսկ մյուսների համար՝ ոչ, որովհետև հաճախ այդ մեկը չի թողնում, որ մյուսները խաղաղ ու հանգիստ ապրեն, հասկանո՞ւմ ես: Դրա համար ել այդ մեկին բանտ են տանում: Ես չգիտեմ՝ ինչպես ասեմ, որ դու ամեն ինչ լավ պատկերացնես: Բացատրելով, միևնույն է, դու այնպես չես հասկանա, ինչպես պետք է: Սպասի ր, մեծացի ր, ամեն ինչ կիմանաս, ամեն ինչ, առանց որևէ մեկի օգնության: Դա բոլորն ել հասկանում են ինչ-որ մի ժամանակ:
- Իսկ չկա՞ այնպիսի մի հիմնարկ, այնպիսի մի տեղ, որտեղ ցրիչները ուրախ ծանուցազրեր բաժանեն, միայն ուրախ, լավ ծանուցազրեր:

Ընկեր Ասյան մտածում է մի պահ:

- Չէ՞,- ասում է նա, - այդպիսի տեղ չկա: Լավի համար մարդիկ իրենք են գնում, առանց ծանուցազրի: Դու ելի՞ հարց ունես:

- Չէ՞,- ասում եմ ես, - շնորհակալություն, ընկեր Ասյա:

Այնինչ ուզում էի հարցնել, թե արդյոք կինի՞ այնպիսի մի ժամանակ, որ մարդիկ ուրախ ծանուցազրեր ստանան, կամ ավելի ճիշտ՝ ոչ մի ծանուցազրի շտանան, որ աշխարհում ծանուցազրեր չլինեն ու ցրիչներ էլ չլինեն: Հետո անմիջապես մտածեցի, թե այդ դեպքում ի՞նչ կանի ընկեր Վահանը, ու որովհետև պատասխան չգտա, լուցի:

- Ճուտո՞ւ, եկ այստեղ,-կանչում է ընկեր Եսթերը: Նա խիստ է, երբեք չի ժպտում, դրա համար ել ես շատ եմ վախենում նրանից ու աշխատում եմ աշքին չերևալ: Զիմա ել նա մռայլ է ու դժգոհ, գուցե այն պատճառով, որ ես այդքան երկար փսխում էի ընկեր Ասյայի հետ: - Ճուտո՞ւ, բոլոր գործերը թո՞ն ու այս գրությունը բա՞նտ տար: Ծրարը անձամբ բանտի պետին կհանձնես: Վերցրո՞ւ գրանցի՞, Այսա:

Ընկեր Ասյան նրա ձեռքից վերցնում է գրությունը, ծրարում ու կնքում է բոլոր անկյուններում և կենտրոնում ել զմուտսով կ կնքում: Ուրեմն շատ կարևոր ծրար է, խիստ գաղտնի:

- Զիմա գիտե՞ս՝ քեզ ինչ անհամբերությամբ են սպասում,- արագ շշնջում է ընկեր Ասյան,- սա ազատական է: Հենց որ հանձնես, բանտից ազատելու են մի կալանավորի:

- Իսկ այդ կալանավորը գիտե՞՞ր, որ իրեն ազատելու են:

- Հավանաբար: Դե շտապի՞ր:

Ես դուրս եմ զալիս մեր ընդիանուր բաժնից և առաջին անգամ սրտանց վազելու պահանջ եմ զգում: Եվ միաժամանակ ինչեր ասես մտքովս չեն անցնում: Մեկ պատկերացնում եմ, որ ինչ-որ վատ մարդիկ հարձակվում են ինձ վրա ու փորձում են խլել ծրարը: Ես ձարպկորեն

խուսափում եմ նրանցից ու սլանում, համարյա թռչում եմ փողոցով՝ զիզագաձև, որպեսզի նրանց արձակած գնդակները չդիպչեն ինձ: Մեկ էլ տագնապով մտածում եմ, թե հանկարծ ինձ իսկապես մի քան չպատճի փողոցում: Կրկին զլխապտույտ ունենամ, ինչպես երեկ, կամ տրամվայի տակ ընկնեմ, իսկ կալանավորը սպասի, անհանգստանա, անընդհատ հարցնի, թե դեռ չի եկել արդյոք դատախազության ցրիչը:

Միջանցքի ծայրում մի քանի հոգի են կանգնած: Ինձ տեսնելուն պես մոտենում են: Մի ծեր կին է՝ շալի ծայրով ծնոտը ծածկած, երկար բեղերով մի մարդ ու մի շահել աղջիկ:

- Եղբա՛յր շան, եղբա՛յր շան, մեր Սարգսի թո՞ւլքն ես տանում,-հարցնում է շահել աղջիկը:

- Ի՞նչ թուղթ,- զարմանք եմ ձևացնում ես,- ոչ մի թուղթ էլ չեմ տանում:

- Արևիդ մատադ, ընկե՛ր շան,- ձեռքս բռնում է ծեր կինը,- թե Սարգսիս թուղթն ես տանում, ասա՛, ես մերն եմ:

Ես, իհարկե, շոյված եմ զգում, որ ինձ կյանքումս առաջին անգամ «ընկեր» անվանեցին ու գուցե դա էլ հենց պատճառ է դառնում, որ չթաքցնեմ ոչինչ:

- Ես չգիտեմ ինչ թուղթ եք հարցնում,- ասում եմ,- բայց ես, մայրի՝ կ, բանտ եմ զնում, մի կալանավորի ազատելու, - ու այդ խոսքերը ես՝ մեծամիտս, այնպիսի տոնով եմ ասում, ասես թե հենց ինքս եմ ազատողը, ասես, եթե ուզենամ, կարող եմ փոխել մտադրությունս ու ետ դառնալ:

- Մեր Սարգսի՝ նն է, Սարգսի՝ նն է,-իրավագին աղաղակում են նրանք, ու ամեն մեկն աշխատում է բռնել ձեռքս,- զնանք, եղբա՛յր շան, ընկե՛ր շան, մե՛ծ ախաղեր:

Նույնիսկ «մեծ ախաղեր»:

- Գնանք,- ասում եմ ես:

Իջնում եմ աստիճաններից ու քայլում փողոցով՝ հայրտ ու երջանիկ: Իսկ նրանք շրջապատել են ինձ ու քայլում են հետս: Երկար բեղերով մարդը ամենայն հավանականությամբ, կալանավորի հայրը, ծուռ ձեռնափայտը ասֆալտին թխվիթիկացնելով, մանրիկ քայլերով վազում է իմ առջևից, իսկ մայրն ու կինը իմ կողքից են քայլում՝ անընդհատ օրինելով.

- Գնանք, արևի ապրի, երկարի կյանքդ, ուր զնաս ծաղիկ փովի ոտքերիդ տակ, վատ օր շտեսնես կյանքումդ: Աստծու ձեռքը զլխիցդ անպակաս լինի:

Չեմ կարծում, թե որեւէ մեկը ինձ նման հպարտ և ուրախ երբեւ անցած լինի Երևանով՝ ունենալով այդքան նվիրված ու հոգատար շքախումք:

Բանտի մոտ ես նրանց առաջարկում եմ սպասել ներքեւում, իսկ ինքս գրասենյակի շենքի երկրորդ հարկն եմ բարձրանում ու ծրարը հանձնում բանտի պետին, որն իմ պատկերացման մեջ կարմիր-կարմիր շորեր հազար, մոռայլադեմ մարդ էր լինելու, այնինչ միլիցիայի կապիտանի հազուստով աշխույժ ու ծիծաղկոտ մի երիտասարդ է: Նա անմիջապես

կարգադրություն է անում, ստորագրում է իմ ցրիչ-մատյանում, և ես իջնում եմ ներքի: Իմ ուղեկիցները անհամբերությամբ դարձյալ շրջապատում են ինձ:

- Ի՞նչ ասաց, եղբա՛յր ջան:

- Ի՞նչ պետք է ասեր,- բանտապետի հասցեին ուղղված թեթև արհամարհական ժպիտով ասում եմ ես,-մի քիչ հետո բաց կրօղնեն: Գնանք, սպասենք դարպասի մոտ:

Ես իիմա ազատ եմ, պետք է զնամ, բայց մի տեսակ չեմ կարողանում հեռանալ: Շատ եմ ուզում տեսնել այն մարդուն, որը կալանավոր է եղել ու իիմա ազատվելու է, շատ եմ ուզում ուրախություն տեսնել: Մենք բոլորս էլ կանգնել ու անթարթ երկաթե դարպասին ենք նայում, որի փոքրիկ դրոնակից դուրս է գալու նա: Չգիտեմ՝ որքան ժամանակ է անցնում, կանայք հոգնել են, նստում են պատի տակ՝ քարերին, իսկ երկար բեղավոր ծերունին ձեռքի ծուռ փայտով հողի վրա ինչ-որ գծեր է քաշում՝ աչքերը չհեռացնելով երկաթե դարպասից ու պատմում է ինձ իրենց սարերի մասին, որոնց նմանն աշխարհում չկա, պատմում է իր որդի Սարգսի մասին, որը մահակով կռվում էր գայլերի դեմ:

- Էղավ-չեղավ, էսպես էղավ, որ մըր գեղից մե բեմուրվաթ աչքով էր էրել քվորդ:

- Ի՞նչ քույր,-զարմացած հարցնում եմ ես՝ մտածելով, թե սրանք որտեղից պետք է ձանաչեն իմ քրոջը:

- Քվորդ կասեմ, մըր խարսիկին,- նա ծուռ ձեռնափայտը մեկնում է դեպի պատի տակ՝ քարին նստած ջահել կինը,- էս խաքար որ առավ մեր Սարգիս, բռնեց անհծեց էնոր խոր խեր: Մե տարի տվին: Հքը իմա՞լ, սաստոնցին կմեռնի, ամա իրա նամուս գետին չի զարկի:

Հետո նա հայտնում է, որ ինձ մի զառ է նվիրելու. Ճերմակ, ճակատին սև խալ ունեցող մի զառ, որ այդ զառը իիմա էլ կարող է բերել, սակայն շատ նիհար է ու փոքր, թող մնա՝ աշնանը կրերի: Ես հրաժարվում եմ, իսկ նա... Իսկ նա ու նրա հետ նաև պատի տակ՝ քարերին, նստած կանայք հրձվագին աղաղակներով նետվում են դեպի միջահասակ, նիհար, գլուխը խուզած երիտասարդը, որը դարպասից դուրս է եկել ու արեգակի լույսից կկոցած աչքերով, ծուռ ժպիտով նայում է շուրջը: Նրան գրկում են, համբուրում, խլում են իրար ձեռքից, ետ են քաշվում, նայում են արցունքից մշուշված աչքերով ու նորից են գրկում՝ հևալով ու խանգարելով իրար: Տղան ծիծաղում է, բարկանում է, փորձում է ազատվել նրանց գրկից, բայց նրան բաց չեն թողնում: Ու այդպես էլ գրկած իրար, միաժամանակ ծիծաղելով ու լաց լինելով, նրանք համարյա գլորվելով գալիս, անցնում են իմ մոտով, անցնում են առանց ինձ տեսնելու, մոռացած ինձ էլ, իրենց վիշտն էլ բանտի պատերի տակ: Նրանք գրկած տանում են իրենց ուրախությունը: Ես մի պահ կանգնում, հայացքով հետևում եմ նրանց, ապա միանգամից պոկվում եմ տեղից ու վազում դեպի ընթացող տրամվայը, ցատկում եմ, կախվում դռան բռնակից ու վերևից նայում եմ նրանց այնքան ժամանակ, մինչև որ տրամվայը թերվում է կրկեսի մոտ, զնում դեպի շուկա, և նրանք վերջնականապես ծածկվում են իմ աչքից:

Ու չգիտես ինչու ակամա հայտնագործում եմ, որ ուրախությունը, ուրեմն, ավելի ընդգծված, ավելի վառ, ավելի մեծ է լինում, թերևս, տիրությունից հետո, ինչպես որ մութից հետո ավելի պայծառ է լինում լույսը:

Ու մտածում եմ, թե ինչ ուրախություն է լինելու, եթք ավարտվի այս անփճյալ պատերազմը:

Կարմիր Հեծանիվը

Արագ-արագ բարձրանում եմ Արովյանով՝ աջ ձեռքս գրպանումս, ու թվում է, թե մի ամբողջ նվազախոսմբ ուղեկցում է ինձ: Զիլ ու հանդիսավոր հնչում են շեփորները, ծնծղաները աղաղակում են հրձագին, թմբուկը արագ ու համաշափ զարկում է սրտիս նման, ծառերից ճնճղուկների երամներ են օդ լինում, հռո...

Արագ-արագ բարձրանում եմ Արովյանով՝ աջ ձեռքս գրպանումս, և ոչ մեկը չի կարող ինձ ստիպել, որպեսզի հանեմ ձեռքս: Ոչ ոք: Նոյնիսկ ընկեր Անդրեասյանը՝ մեր հայոց լեզվի դաստուն, որն ասում է, թե չի կարելի քայլել փողոցում՝ ձեռքերը գրպաններում դրած: Այսօր ներեցե՞ք ինձ, ընկե՞ր Անդրեասյան, չեմ կարող: Եթե ձեզ հանդիպեմ, ինչպես միշտ չեմ ձգնի, որ դուք անպայման տեսնեք ինձ, մյուս մայթով ձեզնից առաջ չեմ վազի, որպեսզի հետո ետ դառնամ ձեր մայթով ու գլխարկս հանելով՝ երջանիկ շշնչամ՝ «քարև ձեզ, ընկե՞ր Անդրեասյան»: Չէ, այսօր չեմ կարող:

Գրպանիս մեջ իմ առաջին աշխատավարձն է:

Քանի անգամ եմ պատկերացրել այս օրը, քանի անգամ եմ մտովի, երևակայությամբ բարձրացել Արովյանով, աշխատավարձն ձեռքիս բոնած, անկյունում կանգնած ծերունուց գնել նրա բոլոր կարմիր աքաղաղներն ու թնդանոթները, մի ոռութիւն դրել մայթին, պատի տակ նստած կույր տղայի գլխարկի մեջ, գրախանութիւն ինքնահոս առել, որից թանաքն անընդհատ գալիս է, և ոսկե մատանի՝ մայթիկիս համար, որովհետու հայրս ասում էր, թե նա սովի տարիներին իր միակ մատանին երկու փութ ցորենի է տվել և պահել է մեզ... Բայց ես այսօր արագ-արագ եմ քայլում՝ աջ ձեռքս գրպանումս ու աշխատում եմ չնայել շուրջս, չնայել խանութներին:

Միայն մի պահ չեմ կարողանում ինձ զսպել ու կանգ եմ առնում անկյունում, մի խանութի մոտ, որտեղ առաջ, շատ առաջ, երբ պատերազմ չկար, մանկական խաղալիքներ էին վաճառում: Հիմա ոչինչ չկա այնտեղ: Մեծ փականք է դրված դրանը, ցուցափեղկերին տախտակներ են խիված: Իսկ այն ժամանակ զարմանալի խանութ էր, այնպիսի խաղալիքներ կային, որ դպրոցից մինչև տուն երկու ժամում էի հասնում: Կանգնում էի ցուցափեղկի առաջ ու մոռունում ամեն ինչ: Կանաչ գլուխներով կեռքիթ թութակներ կային, գույնզգույն գնդակներ, փոքրիկ գնացք, որի մի ծայրը կորչում էր մամուապատ թունելի խորքում, ավտոմեքենաներ, որոնց կողքերին ամրացված բանալիները խենթացնում էին ինձ, ու մի փոքրիկ, կարմիր հեծանիվ: Ես ամենից շատ այդ հեծանիվին էի նայում... Ու միշտ տեսնում էի երազում: Երբ հորս հետ անցնում էինք այդ խանութի մոտով, ես ակամա դանդաղեցնում էի քայլերս ու ձգում հորս թևը:

- Մի՛ կախվիր, -կամացուկ ասում էր հայրս՝ հայացքը թեքելով ցուցափեղկից:

Ես չէի համարձակվում նրան ասել, որ ինձ համար գնի այդ կարմիր հեծանիվը, ես գիտեի, որ նա փող չունի: Եթե ունենար, ինքը կառներ: Եթե ունենար, յուրաքանչյուր աշխատավարձին միայն տասնինս կոպեկ չէր տա, որպեսզի ես փողոցի անկյունում քաղցրավենիք վաճառող Ալիից մի հատ «կով» կոնֆետ ուզեի: Շատ կտար, չէ՞ որ նա գիտեր, թե ես ինչքան եմ սիրում

«կով» կոնֆետը: Բայց միաժամանակ, չգիտեմ թե ինչու, ուզում էի, որ հայրս իմանար, թե ես ինչպես եմ երազում ունենալ այդ փոքրիկ, կարմիր հեծանիվը: Ես նորից ձգում էի հորս թևը և խնդրում.

- Թող մի քիչ նայեմ, ելի...

Ու նայում էի: Ու անընդհատ սպասում էի, որ հայրս հարցնի, թե ինչի՞ն եմ նայում այդքան երկար: Բայց հայրս չէր հարցնում ոչինչ ու միայն ավելի կամացուկ էր ասում.

- Գնանք, բալա՛ ...

Մենք գնում էինք՝ իրար ձեռք բռնած ու կ ոչ մի բան չեինք խոսում ճանապարհին: Չգիտեմ ինչու այնպես խղճում էի հայրիկիս ու լաց էի լինում մտքումս և՝ հայրիկիս համար, և՝ ինձ համար: Իսկ հաջորդ օրը՝ դպրոցից տուն գալու ժամանակ, կրկին կանգնում էի խանութի ցուցափեղկի մոտ ու փոքրիկ, կարմիր հեծանիվին էի նայում: Եվ ինչեր ասես չէի մտածում: Արդեն կարդացել էի մի քանի գիրք և մի գիրք էլ էի կարդացել, որի վրա գրված էր «Կողետա»: Կողետան խեղճ ու փոքրիկ մի աղջիկ էր, որին անընդհատ ծեծում էր իր տիրուհին և պահում էր սեղանի տակ: Տիրուհու աղջիկներն ամեն ինչ ունեին, ամեն տեսակ խաղալիքներ, սիրունիկ տիկնիկներ, բայց չեին թողնում, որ խեղճ Կողետան էլ խաղա դրանցով: Եվ մի անգամ մի մարդ, որի անունը Ժան Վալժան էր, տեսնելով որ Կողետան տիկնիկ չունի, խանութ է գնում ու նրա համար բերում է ամենալավ տիկնիկը, այն տիկնիկը, որը ցուցափեղկում էր դրված և որին փողոցով անցնելիս անընդհատ նայել էր Կողետան:

Ես էլ փոքրիկ, կարմիր հեծանիվին էի նայում ու անդադար, անդադար սպասում էի, թե հիմա ուր որ է մեկը կմոտենա ինձ, կտեսնի, որ ես հեծանիվին եմ նայում ու կհարցնի.

- Ուզո՞ւմ ես այդ հեծանիվը:

- Հա, կասեի ես:

- Սպասի՛ բ այստեղ, չհեռանաս, ես հիմա կգամ:

Ու ներս կմտնի, կզնի փոքրիկ, կարմիր հեծանիվը, կբերի ու կտա ինձ...

Եվ ես երկար, երկար նայում էի ցուցափեղկին: Բայց ոչ չէր մոտենում ինձ: Ոչ մի Ժան Վալժան չէր անցնում մեր փողոցով, և ոչ մի Ժան Վալժան էլ չկար: Ամեն ինչ սուտ էր «Կողետա» անունով գրքում...

Հիմա նայում եմ խանութի՝ տախտակներով ծածկված ցուցափեղկին ու տիրում եմ: Ճիշտ է, եթե հեծանիվը լիներ, ես միևնույն է, չեի զնի, բայց ավելի լավ կլիներ, եթե լիներ: Գոնե կմտածեի, որ եթե ուզենամ, հենց հիմա, իմ աշխատավարձով կզնեմ: Իսկ հիմա չկա: Եթք ես փող չունեի, հեծանիվը կար... Հիմա չկա...

Վազելով բարձրանում եմ սանդուղքով: Բոլորն էլ տանն են: Հայրս իր սարքած պտտվող դանակով ծխախոտի տերևներ է կտրատում, մայրս կարմիր բանակի համար «մատնաքաշ» բաձկոններ է կարում անկյունում, քույրս օգնում է նրան:

- Սոված մեռնում եմ,- բարձրաձայն ասում եմ ես:

Կարի մեքենան էլ չի թիվկիկում: Մայրս խոհանոց է գնում ու քիչ հետո բերում, իմ առջև է դնում մի ափսե անյուղ ու անկարտոֆիլ վիվերթ, այսինքն եփած կանաչի, որը Տիգրան աղբարի հատուկ թույլտվությամբ ու բարյացակամությամբ մայրս շաբաթը մեկ անգամ քաղում է նրանց պարտեզի պատերի տակից:

- Իսկ հա՞ցն ուր է,- հարցնում եմ զայրացած:

- Մի կտոր պահել եմ, իրիկունք կուտես, Արտա՝ կ ջան,- իմ խոսելու ձևից զարմացած՝ խեղճ-խեղճ ասում է մայրս:

- Այնպե՛ս արեք, որ ցերեկն էլ լինի, երեկոյան էլ,- նետում եմ ես:

- Որտեղի՞ց, ա՛յ բալամ,- ավելի է խեղճանում մայրս,- կտրոնով այդքան են տալիս:

- Իսկ դուք շուկայից գնեցե՛ք մի քանի կիլոգրամ:

Երևի երկրաշարժը այդքան չզարմացներ հորս:

- Իսկ փո՞ղ, փո՞ղ որտեղից գտնենք:

- Ախ... փո՞ղ... - հրձվում եմ ես,- ուրեմն փող է պետք, հա, իսկ ինչո՞ւ ինձ չէիք ասում: Հետաքրքիր մարդիկ եք, ա՛յ մամա ու պապա:

Այս խոսքերի հետ ես ձեռքս ծուլորեն գրպանս եմ տանում, հանում եմ երեք հարյուր տասնհինգ ոռութիւն աշխատավարձու ու անփութորեն նետում սեղանին:

- Ահա, սա էլ ձեզ փող:

Հիմա հայրս ու մայրս ուրախ-ուրախ կվերցնեն թղթադրամներն ու...

Բայց ոչ ոք չի ժառանգում, ու այնպիսի մի լրություն է տիրում մեր տանը, որ մեզ շրջապատող բոլոր հարևանների ձայներն էլ լսվում են: Հետո հայրս մոայլված մոտենում է ինձ.

- Որտեղի՞ց ես բերել,- հարցնում է նա՝ ոչ մի լավ բան շխոստացող ձայնով:

Մի քիչ վախեցած եմ, սակայն ժամանակ փորձում եմ շարունակել խաղը:

- Փող է, էլի, հայրի՝ կ ջան...

- Որտեղի՞ց ես բերել- ցասումով կրկին հարցնում է նա:

Չէ, հիմա գուցե նույնիսկ խփի: Ես տեղիցս վեր եմ թռչում, վազում եմ մորս մոտ, պատսպարվում նրա թիկունքում ու այնտեղից հայտարարում եմ հաղթական.

- Իմն է, իմ աշխատավարձն է, հայրի՝ կ ջան, քո արև, մամայի արև, ցրիչ եմ...

Ու արագ-արագ պատմում եմ նրանց, թե ինչպես եմ աշխատանքի ընդունվել, թե որքան հեշտ աշխատանք է, թե որքան լավ մարդիկ են ընկեր Եսթերը, ընկեր Ասյան, ընկեր Հեղինեն, ընկեր Գեղուիին, ընկեր Վահանը... Բայց ինչո՞ւ մերոնք չեն ուրախանում ինձ հետ, ինչո՞ւ է ավելի մոպլվում հայրս, ինչո՞ւ է լաց լինում մայրս, միթե՞ն նրանք կարծում են, թե ես ճիշտ չեմ ասում... Եվ ես ելի ու ելի եմ պատմում, առանց շունչ առնելու, անընդհատ...

... Դեռ չեն քնել, դեռ երկար ժամանակ շշուկով խոսում են ու հառաջում են պատուհանի տակ դրված մեծ երկարյա մահճակալին: Հետո մայրս անշշուկ իջնում է, մոտենում իմ անկողնուն, թերվում է վրաս ու լուր նայում ինձ: Ես փակել եմ աչքերս, բայց զգում եմ, որ մայրս ելի լաց է լինում: Այս ինչո՞ւ, ինչո՞ւ: Ճիշտ է, ես զիտեմ: Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ...

- Քնած չե՞ս, Արտա՛կ ջան,-շշուկով հարցնում է մայրս:

- Չէ,- ասում եմ ես:

- Ինչքան ես հոգնում,-հառաջում է նա,- այս մի հալ էլ չկա վրադ, ա՛յ բալա: Դո՛ լրս արի աշխատանքից, մի կերպ ապրում ենք, ելի:

Նորից լրում ու ձեռքով մեղմիկ շոյում է ճակատս, այտերս ու ականջներիս ետևը, ինչպես փոքր ժամանակ: Ես համբուրում եմ նրա ձեռքը, փոքրիկ, փափուկ ձեռքը, որից միշտ կտորի հոտ է գալիս և որի մատանեմատին ոսկե մատանի է եղել ինչ-որ մի ժամանակ: Չէ, աշխատանքից դուրս չեմ գա, մայրի կ, հենց թեկուզ միայն քեզ համար չեմ դուրս գա: Կարծում ես մի դժվար բա՞ն է իմ աշխատանքը, ցրիչ եմ, ելի վազվզում եմ քաղաքում: Ելի կվազվզեմ, ամեն ինչ կանեմ, շատ փող կստանամ ու քեզ համար կառնեմ ամեն ինչ. փայլուն, լաքե կոշիկներ կառնեմ քեզ համար ու լավ ծաղկավոր շորեր, ոսկե մատանի կառնեմ քեզ համար ու շատ- շատ մատանիներ բոլոր մատներիդ համար, որովհետև դու աշխարհում ամենալավն ես, ամենաբարին ես, ամենասիրունն ես, մայրի կ:

ԻՆՉԱԲԵ՞Ս ԿԱՐԵԼԻ Է ԶԻԱՎԱՏԱԼ

- Դե, գնաքնի՞ր, Արտա՞կ ջան, ննջում ես:

Դեղին օղակները դադարեցնում են իրենց խաղը, արագորեն ձուլվում են իրար, ու ես նայում եմ մորս մատանեմատի առայժմ միակ, դեղին, փոքրիկ օղակին:

- Դե բարի զիշեր, մա՞մ:

Խոհանոցից դուրս եմ զալիս և զգուշությամբ, որպեսզի չարթնացնեմ հորս, բացում եմ մեր սենյակի դուռը: Հայրս հազում է անկյունում: Ծխախոտի կրակը մի պահ թույլ լուսավորում է նրա սպիտակ, կնճռապատ դեմքն ու կարճ, լայն բեղերը:

- Դո՞ւ ես, Արտա՞կ,- հարցնում է նա, թես վստահ եմ, որ հենց ինձ էր սպասում:

- Հա, բարի երեկո, կամ ավելի ճիշտ՝ բարի լույս, հայրի՞կ:

- Եթե ուզում ես գրել, լույսը վառի՝, խոհանոց մի՝ գնա, - ասում է նա:

Այ քեզ նորություն, հավատա՞մ ականջներիս, թե չէ:

- Բայց դու ախր լույսի տակ...

- Ոչինչ, ոչինչ, աշխատի՞ր:

Այլսս ոչ մի կասկած, հայրս կարդացել է իմ ֆելիխետոնը: Առաջին անգամն է, որ ոչ միայն չի զգուշացնում, որ չվառեմ լույսը, այլև նույնիսկ ինքն է առաջարկում վառել ու աշխատել սենյակի միակ լապտերի լույսի տակ: Չե, ուրեմն անպայման կարդացել է ֆելիխետոնս: Հիմա գործարանում բոլորին ցույց տված կլինի:

- Չէ, հայրի՞կ, քունս տանում է, - հուզվում եմ ես:

Երևի իսկապես նիրհել էի խոհանոցում, քունս փախել է, և ճիշտն ասած՝ չեմ ել ուզում քնել: Այս վերջին մի քանի օրում այնքան ուրախ, այնքան նշանակալի դեպքեր են կատարվել ինձ հետ, որ չեմ ուզում քնել, ուզում եմ պառկել ու վայելել իմ երջանկությունը, ուզում եմ պառկել ու երազել:

- Ա՛յ տղա, եղ ի՞նչ օրն էիր զցել եղ Վեզիրյանին, - ծիծաղում է հայրս, ու ես զգում եմ, որ նա տրամադիր է խոսելու: - Եղ ինչ որ գրել էիր, ճի՞շտ էր:

- Դե, իհարկե, ճիշտ էր:

- Թե՞ հինգ տոլկոսն էր ճիշտ: Վարպետ Մուխայելն ասում էր, որ եթե հինգ տոլկոսն էլ ճիշտ լինի, ուրեմն կարելի է տպել:

- Չե, հայրի՝ կ, դա առաջ էր: Հիմա հարյուր տուկոսով ճիշտ պետք է լինի:
- Պահ, պահ, պահ,- մթան մեջ զգում եմ, որ հայրս օրորում է գլուխը,- դրա տունը չքանդվի: Լավ, բա եղ մարդն ի՞նչ էր անում եղբան փողը: Եղբանն ուտել կլինի:

Էխ, հայրի՝ կ ջան... Որովհետև իր աշխատավարձն առանց որևէ կողմ թեքելու մենք անմիջապես ուտում ենք, նա էլ կարծում է, թե փողը միայն ուտելու համար է: Ես պատկերացնում եմ, թե հորս երեսակայության համապատասխան ինչպես է Վեզիրյանն ուտում իր գոփած տասնյակ հազարներն ու ծիծաղս գալիս է: Հայրս կարծես հասկանում է ինձ, շարունակում է զարմանք ու տարակույս արտահայտող իր ձայնով.

- Լավ, ասենք թե տուն-տեղ դրեց, ասենք թե կնկան ու երեխեքին լավ- լավ կավերկոտ հազցրեց: Ասենք թե ամեն օր տոլմա կերան ու կինո գնացին... Հետո՞ : Բա մնացա՞ծը: Այսինքն, ճիշտն ասած, իսկի չեմ էլ հավատում, թե ազահ, աշքածակ մարդը լավ ապրի,- եզրակացնում է նա,- անպայման ժլատ կլինի ու կդողա իր փողերի վրա, վերջն էլ կսատկի, եղ փողերը կմնան, մի ուրիշը կզա կուտի ու հետն էլ կծիծաղի նրա վրա. ոնց որ մեր գյուղացի Հանեսն էր պատմում: Դու մեր Հանեսի պատմածը լսե՞ լ ես: Ուրեմն մեր Հանեսը մի տարի Բաքվում...

Ես Հանեսի պատմածը չեմ լսել, բայց դեռ օրորոցում լսել եմ հորս պատմածը Հանեսի պատմության վերաբերյալ: Եվ այնուհետև այդ պատմությունը լսել եմ անընդհատ, տարիներ շարունակ: Անզիր գիտեմ այդ պատմությունը ժլատ մարդու մասին, բայց հորս չեմ կարող ասել, չեմ ուզում, որ նա հուսախարվի: Այսր նա այնպիսի ոգևորությամբ է պատմում:

- Վայ, ա յ մարդ, դեռ քնած չե՞ք,- մայրս ներս է մտնում ու նախատում է հորս: - Այսր երեխան հոգնած է, դու էլ երեք ժամից հետո աշխատանքի ես գնալու, ի՞նչ ես նստել ու պատմում հազար անզամ պատմած էղ հեքիաթը:

Հայրս մի պահ վիրավորված լրում է, ապա դառնում է ինձ.

- Արտա՛կ, բա սա ես քեզ պատմե՞լ եմ:

- Չե, հայրի՝ կ ջան, հետո՞ , հետո՞ , հարցնում եմ ես:

- Է՞ , - նեղանում է մայրս:

- Տեսա՞ր, - հաղթականորեն հազում է հայրս, - դու լսել ես, մի՛ լսի, - ասում է նա մորս, - պառկի ք:

Մայրս ծանրորեն տեղավորվում է մահճակալին ու անմիջապես էլ քնում, իսկ հայրս դեռ երկար պատմում է դավադիր շշուկով, ձայնը ցածրացրած, որպեսզի չխանգարի մորս:

- Լավ պատմություն էր, չէ՞ , Արտա՛կ:

- Շատ խելոք պատմություն էր, հայրի՝ կ:

Հայրս գոհ հազում է ու շրջվում կողքի վրա: Եվ ահա ես մենակ եմ իմ առաջին ֆելիխտոնի հետ: «Ա. Լևոնյան»: Գեղեցիկ էլ ազգանուն է, նույնիսկ կեղծանվան տեղ են դրել: «Ա. Լևոնյան»: Հնչում է, ինչպես ասաց մեր դասախոսը՝ նույն ինքը՝ թերթի խմբագիր Հովիկ Սարյանը:

Մեկ ամիս առաջ արտադրական ուսումնա շրջան էի անցկացնում խմբագրությունում: Զանազան մանր-մունք գործեր էին հանձնարարում, այդ պատճառով էլ, երբ հայտնեցին ինձ, թե խմբագիրը կանչում է ինձ, ես թերթացած շունչ քաշեցի: Ուրեմն ուզում է մի լուրջ հանձնարարություն տալ: Երբ հուզված ու տագնապով ներս մտա նրա ընդարձակ առանձնասենյակը, խմբագիրը խոսում էր կառավարական հեռախոսով, ինչ-որ բան էր բացատրում, որովհետև լարի այն ծայրում նրան չին հասկանում, բարկությունից կասկարմիր կտրած տրորվում էր լայն բազկաթոռի մեջ, վշտացած տարուբերում գլուխը: Մի երկու անգամ հեռանալու փորձ արեցի, բայց նա ձեռքի շարժումով արգելեց ինձ, համարյա հառաշելով՝ լսափողը սրտանց լծակին նետեց:

- Բաա՞, կարծում ես հե՞շտ բան է խմբագրի աշխատանքը, դժվար է, է՛, դժվար է, է՛,- սովորականի պես վերջին «Է»-երը ձգելով ասաց նա՝ աց ձեռքը սահեցնելով լայն ճաղատի վրայով ու կարծես աշխատելով ցրել մոայլ տրամադրությունը: Հետո սեղանի վրայից մի նամակ վերցրեց ու մեկնեց ինձ: - Գնա ստուգի՞ր, և եթե պետք լինի, եթե զգաս, որ ուզում ես զրել՝ զրի՞ր: Հինգ օր հետո կզեկուցես: Խոսքը շինարարական վարչության պետ Վեզիրյանի մասին է: Եվ հետո, և հետո հնարավոր է, որ նամակի հեղինակին չգտնես: Ուշադրություն մի՝ դարձրու դրան, ուրեմն վախենում են, ուրիշ ազգանուն են դնում տակը: Դե գնա:

Ես հետո երկար մտածում էի, թե նա որտեղից գիտեր, որ նամակի տակ դրված ստորագրությունը կեղծ է: Երկար ժամանակ վինտրում էի այն բանվորին, որը լուրջ մեղադրանքներ էր ներկայացրել վարչության պետի դեմ, բայց պարզվեց, որ այդպիսի անուն-ազգանունվ մարդ ոչ մի տեղամասում չի աշխատում: Մնում էր ստուգել նամակում բերված փաստերը, բայց նրանք, ում հարցնում էի այդ մասին, անվատահորեն իրար նայելով, աչքերը հեռացնելով, խուսափողական պատասխաններ էին տալիս իմ հարցերին և հեռանում էին արագորեն: Իսկ երբ ես մի երիտասարդ որմնադիրի խնդրեցի մի քանի բոպեռվ լսել ինձ, նա ցուցադրական կոպտությամբ հրաժարվեց և անհամեմատ բարձրածայն, քան կարելի էր խոսել մեկ մետր հեռու կանգնած մարդու հետ, նետեց ատամների արանքից:

- Ի՞նչ եք ուզում, է՛: Չե՞ք տեսնում, որ աշխատում եմ: Ինչի՞ եք ուզում գործից կտրել, առանց այդ էլ կտրողները քիչ չեն: Բան ունեք հարցնելու, Վեզիրյանի՞ն հարցըք: Էստեղ խազեինը նա է:

Ուրիշ ժամանակ կթողնեի կհեռանայի, բայց հիմա չի կարող: Շատ էի զայրացած: Երիտասարդ տղա է, Դավթի մարմինն ու ուժն ունի և հավանաբար նախկին կոմերիտական է, բայց կուշ է զալիս, խոսելիս չորս կողմն է նայում, «խազեին» է անվանում իր հիմնարկի պետին:

- Դե, զիտեք ինչ, դուք պարզապես վախկոտի մեկն եք, - ինձ կորցրած բղավեցի ես, - դուք միայն անանուն նամակներ կարող եք զրել: Ճիշտ որ, ինչո՞ւ եմ զարմանում, եթե պետին «խազեին» եք կոչում, ուրեմն դուք էլ ծառա եք, էլի:

Ասացի ու զղացի անմիջապես: Այս ի՞նչ եմ անում: Հիմա նա անպայման կբարկանա, ու անախորժությունն անխուսափելի կլինի: Այ թե պատմության մեջ ընկանք: Բայց զարմանալի բան, որմնադիրը ոչ միայն չզայրացավ, այլև ծիծաղեց սրտանց, որոտաձայն:

- Քանի՞ տարեկան եք,- հարցրեց նա՝ ծիծաղից խեղդվելով:

Տանել չեմ կարողանում, երբ տարիք են հարցնում: Այդ հարցի մեջ միշտ էլ ինչ-ոք վիրավորական բան կա, անկախ նրանից, թե ով է հարցնում: Իսկ եթե մանավանդ այսպիսի մեկն է ուզում իմանալ տարիքդ...

- Դա գործի հետ ոչ մի կապ չունի,- չորությամբ պատասխանեցի ես:

- Ունի,- հանկարծ միանգամից լրջացավ նա,- են կենց ունի,- պազեց, նստեց հենց այն տաշած քարին, որ քիչ առաջ ուզում էր բարձրացնել ու ներքելոց վերև նայելով, միանգամից «դու»-ի անցնելով՝ շրաքցրած դառնությամբ ասաց.- ունի: Քո տարիքին ես էլ էի այդպես խոսում: Հետո կնստես, կխելոքանաս: Եթե Վեզիրյանի նման պետ ունենաս, ձայնդ էլ կբարականա, մեջքդ էլ իրեն-իրեն կծովի, դու էլ կսկսես խոսելու ժամանակ չորս կողմդ նայել: Չե՛ մի ասա: Թե չէ ինձ նման յոթը տարի տասնապետ աշխատելուց հետո կդառնաս պատշար:

Հիմա արդեն ինձ համար ամեն ինչ պարզ էր: Մա նրանցից է, ովքեր աշխատանքում մի անգամ անհաջողության մատնվելուց հետո մաղձով են լցվում, սկսում են չարախոսել, թունավորում են իրենց էլ, շրջապատն էլ, աշխարհն էլ: Նա կարծես թե հասկացավ ինձ: Եվ ես չզարմացա: Համարյա բոլորն էլ կարողանում են կռահել իմ մտքերը: Տարօրինակ բան է, թե ինչպես է դա իրենց հաջողվում: Ինչո՞ւ ես չեմ կարողանում, իսկ նրանք կարողանում են: Մի անգամ նույնիսկ հարցրի մորս: Նա տիսուր ճպտաց ու ասաց. «Զահելությունից է, Արտա՛կ ջան, որ մեծանաս, էլ չեն հասկանա»: «Իսկ դա լա լա՞վ է, թե վատ, մա մ», - հարցրի ես: «Նայած թե ինչ մարդ է կարդում քո մտքերը, - ասաց մայրս: - Իսկ ընդհանրապես այնքան էլ լավ չէ, դժվար կլինի քեզ համար ապրելը»: Եվ որովհետև ես տիսրեցի, ավելացրեց. «Բայց դու մի մտածիր, դա կանցնի անկախ քեզանից, դա, միևնույն է, անցնում է»:

- Հիմա դու մտածում ես, թե ինչ փոքր հոգի ունեմ, չէ՞,- քմծիծաղ տվեց որմնադիրը, - չէ՞: Լավ է, որ հաստատում ես, ուրեմն դեռ խարել չես սովորել: Դրա համար էի տարիքդ հարցնում: Դե, նստի՛ր կողքիս ասեմ, նստի՛ր, նստի՛ր, մի՛ վախեցիր, էղ տետրդ դի՛ր տակդ ու նստի՛ր, ես քեզ գրելու համար չեմ ասելու: Զա, ախազե՛ր ջան, դեմ չեմ, հոգիս փոքրացել է, չեմ ասում, է, որ փոքր է, ասում եմ՝ փոքրացել է, փոքրացրել են... Եվ գլխես՝ ո՞վ: Մտքովդ էլ չի անցնի, եթե ես շասեմ: Երեխաներս, մանրապձեղներս, քաղց ցեցերս, ոնց որ իրենց մերն է ասում: Զարմացար, այնինչ զարմանալու բան չկա:

Լոեց, երկար ժամանակ ծոմոված կոշիկի ծայրով փորում էր հողը:

- Առաջ, երբ անարդարություն էի տեսնում, չի համբերում, ասում էի բացեիբաց, չին լսում՝ ծողովում էի հայտարարում, կոկորդ էի պատռում, հասնում էի իմ ուզածին:

Ինձ ի՞նչ պետք է անեին, շատ-շատ պետք է հանեին աշխատանքից: Չէ՞ է, հետո ի՞նչ: Թող հանեն, մտածում էի, չարուճը հո ձեռքից չէին առնելու, մի ամիս էլ լինի, երկու ամիս էլ լինի, չեմ աշխատի, կգնամ ամեն տեղ, կապացուցեմ, որ նրանք սիսալ են: Իսկ այ, հիմա չեմ կարող:

Երկու ամիս, երեք երեխա ունեմ, հասկանո՞ւմ ես, ախպէ՛ր ջան, չեմ կարող, նրանք էլ ինձ նման սկզբունքային չեն. հաց են ուզում...

- Եվ դուք այդ հացի համար վաճառո՞ւմ եք ձեր սկզբունքները, հա՞:

- Հա՛,- հանկարծ միանգամից կրկին շարացավ նա,- հա՛, ծախում եմ, առնո՞ւմ ես: Էժան կտամ: Զակիս զնացել է,- բղավեց նա հանկարծ,- հոգնել եմ: Ի՞նչ ես ուզում ինձանից: Նիմա շատ են թանկացել այդ բաները, ամեն մարդ չի ունենա: Ակզբունք... Իբրև թե դուք շատ ունեք: Ձեզ էլ եմ ձանաշում, զալիս, զնում են, տեսնում ենք: Տասը հատ հոդված ու ակնարկ ցույց կտամ, բոլորն իմ մասին է, բայց ոչ մի տեղ ես չկամ: Լա՛վ լսիր, է, ոչ մեկը ես չեմ, կարդում եմ, ու նայած տրամադրության՝ մեկ լացս է զալիս, մեկ՝ ծիծաղս: Էն օրն էլ մեկն եք եկել: Ժպտում է, ուսիս է խփում: «Ո՞նց են գործերը», - հարցնում է: Լավ չեն, ասում եմ, շինանյութը ժամանակին չեն թերում, պարապ ենք մնում: «Իսկ պլանները, պլանները կատարո՞ւմ եք»: Ո՞նց կատարենք, ասում եմ, երբ շինանյութ չկա: «Սակայն, այնուամենայնիվ, կատարում եք, այնպես չէ՞»- էլի հարցնում է նա ու առանց ինձ նայելու, շտապ-շտապ ինչ-որ բաներ է գրում տետրի մեջ: Ու էլ չսպասեց, որ որևէ բան ասեմ, թռավ մի ուրիշ տեղամաս: Երկու օր հետո թերթում կարդացի, որ գործով արձագանքելով մեր շրջանի առաջավոր շինարարների կոչին՝ ես լայնորեն ծավալել եմ նախամայիսյան մրցություն և հասել աշխատանքային վիթխարի հաջողությունների: Բայ: Իսկ շինանյութի մասին ոչ մի խոսք: Է, հիմա ես ի՞նչ իմանամ, որ էլ նրա նման չե՞ս անի: Չէ, ախպէ՛ր ջան, ես ասելու բան չունեմ: Այսինքն՝ ասելու բան էլ չկա, շատ ես ուզում, որևէ տեղամասի աշխատավարձի ցուցակը վերցրո՞ւ ու գնա այդ աշխատավարձ ստացող բանվորներին գտիր: Որ գտնես, կրերես ես էլ տեսնեմ... Դե հիմա հենց այնպես մի երկու հա՛ր ոց տուր պլանների մասին,- հանկարծ մի անգամից շփոթվելով ու կեղծ ժպտալով՝ արագ- արագ ասաց նա,- մեր աշխատեկը զալիս է: Ետ մի՛ նայիր:

Ես ինքս էլ շփոթվեցի հանցանքի վայրում բռնված մեկի նման ու թեև արդեն թիկունքումն լսում էի անտեսանեկի աշխատեկի ոտնաձայնը, բայց ոչ մի հարց միտքս չեր զալիս: Դրությունը դարձյալ երիտասարդ որմնատիրը փրկեց:

- Ահա, ընկեր Սոլախյանը,- ասաց նա՝ ձեռքը մեկնելով դեպի բարձրահասակ մարդը, որ սատինե կապույտ պիջակ ուներ հազին և մատիտ՝ ականջի վրա: - Ես ձեր հարցերին ի՞նչ պատասխանեմ, բոլոր տվյալները ընկեր Սոլախյանի մոտ են:

Շրջվեցի դեպի ընկեր Սոլախյան կոչվածը և արդեն վերջնականապես շփոթահար ուզում էի որևէ հարց տալ նախամայիսյան մրցության մասին, բայց, բարեբախտաբար, աշխատեկը կանխեց ինձ:

- Դուք խմբագրությունից եք, չէ՞,- հարցրեց նա, - ընկեր Վեզիրյանը խնդրում է Ձեզ...

- Իսկ նա որտեղի՞ց գիտի, որ այստեղ եմ,- տհաճությամբ զարմացա ես:

- Զգիտեմ,- պատասխանեց աշխեղկն ու որմնադրի վրա մի ակնթարթ կասկածոտ հայացը նետելուց հետո առաջ ընկավ՝ հասկացնելով, որ հետեւեմ իրեն:

- Զնայած շինարարական վիթխարի հրապարակում տիրող խառնաշփոթությանն ու աղքին, վարչության պետի առանձնասենյակը բավականին մաքուր էր ու ձաշակով կահավորված:

Ինքը՝ Վեզիրյանը, նստած էր չգիտես որտեղից այս շինարարական անկյունում հայտնված ազնվական մի հին, գործված թիկնաթոռի և թղթեր էր ստորագրում: Նրա դեմքը ինձ շատ ծանոթ թվաց: Կասկած լինել չի կարող. ես ինչ-որ տեղ տեսել եմ այս լայն, քառակուսի ծնոտն ու բարի, պայծառ աչքերը, որոնք դիմացինին կարծես ասում են. «Ես քեզ հիանալի հասկանում եմ, ես ինք ել մի քիչ այդպիսին եմ ու ներում եմ քեզ»: Հենց այդ բարի աչքերով էլ նա ժպտաց ինձ ու արագորեն բարձրանալով աթռոից՝ քայլեց դեպի իմ կողմը:

- Հարգանքներս, ընկե՛ր թղթակից: Ծանոթանանք: Լևոնյա՞ն: Շատ, շատ ուրախ եմ, սիրում եմ ձեր գործը: Ինքս էլ երբեմն խօֆքում եմ, բայց ի՞նչ կարող ես անել, բան չի ստացվում, դե իհարկե, դրա համար տաղանդ է պետք, մուսաներ... Սակայն ես ձեզ կարծեմ ուրիշ տեղից ել եմ ձանաչում: Այո, այո, իմ հիշողությունը ինձ դեռ երբեք չի դաշտածանել: Բաղամյանի մոտ: Չե՞, հիշեցի՞ք, կոմմերիտմիության քաղկումում, Ձեզ շրջկոմի բաժնի վարիչ էին նշանակում: Հիմա խմբագրություն էք տեղափոխվել, հա՞...

Այս ասում էի, որ մի տեղ տեսել եմ նրան: Հիմա վերջնականապես հիշեցի:

... Քաղկոմի քարտուղար Բաղամյանի սպասարահում իմ հերթին էի սպասում՝ ներս գնալու և ինձ շրջկոմի բաժնի վարիչ նշանակելու վերաբերյալ քաղկոմի բյուրոյի որոշման քաղվածքն ստանալու: Լայն ծնոտով ու բարի աչքերով այս մարդը ներս մտավ ու առանց հերթին նայելու անմիջապես բացեց Բաղամյանի առանձնասենյակի դուռը: Ներսից մի ուրախ բացականչություն լսվեց, որից հետո մոտ կես ժամ քարտուղարը ոչ-ոքի չեր ընդունում: Այնուհետև սկսեց ներս կանչել սպասողներին, բայց այդ մարդը դուրս չեկավ, և երբ ես առանձնասենյակ մտա, տնավարի նստած էր պատուհանի տակ՝ բազմոցին, ու ինչ-որ ամսագիր էր թերթում:

- Դե, ընկե՛ր Լևոնյան, գնացե՞ք ու աշխատե՞ք, հիշե՞ք, որ ընկեր Սարյանի միջնորդությամբ, բացառության կարգով ենք Ձեզ աշխատանքի նշանակել: Ընդհանրապես ուսանողն իրավունք չունի աշխատելու, իսկ դուք դեռևս ուսանող եք: - Մնացել են պետական քննությունները:

- Եվ դիպլոմը, - ասացի ես:

- Հա, իմիջիայլոց Սարյանը ձեզ որտեղից է ձանաչում:

- Մեր դասախոսն է, - ասացի ես:

- Դե տեսե՞ք, լավ աշխատեք, շրջկոմում աշխատելը մեծ պատիվ է, - ասաց քաղկոմի քարտուղարը ու նրա նիհարավուն, երկար դեմքը ավելի հանդիսավոր արտահայտություն ստացավ, - շանացե՞ք արդարացնել կոմմերիտմիության վստահությունը:

- Կարդարացնի, կարդարացնի, Կարո՞ն, լավ տղա է երևում:

Բազմոցին նստած մարդն էր: Նա ինձ էր նայում համակրությամբ, խրախույսով, լայն ժայխտով: Ես երախտագիտությամբ լի մի հայացք զցեցի նրան ու շնորհակալական ինչ-որ խոսքեր քրթմնջալով՝ կարմրատակած դուրս եկա քարտուղարի առանձնասենյակից: Հետո, դրսում միայն տարօրինակ գտա, թե ինչո՞ւ Կարո Բաղամյանն այդ մարդուն չասաց, որ մենք համարյա թե բարեկամներ ենք, որ մեր ծնողները համազյուղացիներ են: Եվ ինչո՞ւ էր ինձ հետ

այդքան պաշտոնական: Գուցե չի՝ հիշում ինձ: Այնինչ ես շատ լավ հիշում եմ նրան: Երբ փոքր ժամանակ Երևանից գյուղ՝ ամառանց էինք գնում, միշտ տեսնում էի նրան: Ինձնից մի քանի տարով մեծ, բարակ ու երկար տղա էր, տրեխներ հագած, ճիպոտը ձեռքին՝ քայլում էր եզների ետևից, ամուր խփում էր մեկ սրան, մեկ նրան ու բարակ ձայնով «հո, հո» էր կանչում: Լաց զալիս էր, երբ նա ողջ ուժով խփում էր եզներին, ու բարկանում էի, թէ ինչու են եզներն այդքան անմոռնչ, այդքան խոնարհ շարունակում ճանապարհը: Ինչո՞ւ չեն շրջվում ու հարու տալիս, զցում ոտքերի տակ: Թէ՝ ճիպոտից են վախենում:

Ու միանգամից տրամադրությունս ընկավ: Տանը պատմեցի հորս: Մոայլվեց:

- Բադալի տղե՞ն: Արդեն էդ տեղ է հասե՞լ: Է, թէ նա իր հոր տղեն է, դեռ շատ առաջ կգնա: Քեզ երսի չի ճանաչել, թէ չէ չէր ընդունի:

- Թերթի խմբագիրը՝ մեր դասախոսն էր զանգ տվել:

- Հա, էդ ուրիշ: Հիմա հասկանում եմ:

- Հայրի՝ կ-, ասացի, - ինչո՞ւ ես այդպես խոսում: Ես նրան ճանաչում եմ, շատ եմ լսել նրա ելույթները, զիտե՞ս ինչքան խելոք է խոսում: Համալսարանի ժողովում մի անգամ պատմում էր Ամերիկայում ապրող նեգրերի երեխաների մասին, ամբողջ դահլիճը լաց էր լինում:

- Հոր տղեն է, - քիչ լրելուց հետո կրկնեց հայրս:

- Ո՞վ, - հարցրեց մայրս, որ նոր էր սենյակ մտել:

- Մեր գյուղացի Բադալի տղեն: Արտակի պետն է, - հեզնոտ ժպիտով բացատրեց հայրս:

Մայրս էլ մոայլվեց:

- Կտրվի դրանց ցեղը, - շշնջաց նա, - դրա հերը քանի-քանի մարդու գլուխ ա կերել:

- Ինչո՞ւ, - հարցրի ես զարմացած:

- Ի՞նչ իմանամ, ա՛յ բալա, բոլորին հակա էր ասում:

Ծնողներս սրբություն են ինձ համար, բայց, անկեղծ ասած, նրանց վերաբերմունքը շատ տհած էր ինձ: Գյուղ է, էին, երսի ինչ- որ վեճեր, պատմություններ են եղել, բայց գուցե խսկապես այդ Բադալ Բադամյանը անազնիվ մարդ է: Հետո՞ւ ինչ հ՞նչ կապ ունի դրա հետ Կարո Բադամյանը, որ համալսարանը փայլուն ավարտելուց հետո արժանացել է մեծ վստահության և քաղկոմի քարտուղար է ընտրվել: Ես նորից հիշեցի նրա անկեղծ, կրակոտ ելույթները, նրա նիհար, քիչ դեղնավուն դեմքն ու բոցկտող աչքերը, երբ խոսում էր ամերիկյան իմագերի այլաստների մասին, ու զօջացի, որ հորս մոտ խոսր եմ բացել: Մեծ բան է, պաշտոնական է հետս: Իսկ ի՞նչ է, պետք է զրկեր ու համբուրե՞ր: Չէ՞ որ նա առաջին հերթին քաղկոմի քարտուղար է, ու ես էլ նրա տանը չեմ, այլ առանձնասենյակում:

- ... Ես էլ Զեզ լավ պաշտպանեցի, չէ՞ - ծիծաղեց Վեզիրյանը՝ ինձ իրականությանը վերադարձնելով, - հիմա հիշեցի ք:

Ես ներողություն խնդրեցի, որ առաջին պահ չեմ ճանաչել, կրկին շնորհակալություն հայտնեցի և ի պատասխան նրա հարցի՝ ասացի, որ դարձյալ շրջկոմում եմ աշխատում, սակայն հիմա խմբագրության հանձնարարությամբ եմ եկել: Չգիտեմ ինչու, մի տեսակ մեղավոր էի զգում ինձ Վեզիրյանի առջև: Ճանապարհին, ըստ նամակի տվյալների և այն բանվորի հետ ունեցած զրույցից հետո, ես այնպիսի շարությամբ էի լցված շինարարական վարչության պետի դեմ, որ թվում էր՝ մռայլ ու ժանտ մեկի հետ եմ հանդիպելու: Այնինչ պարզվում է, որ Վեզիրյանը այս բարեհամբույր, ժպտադեմ մարդն է, մեկը, որ կարող է օգնության ձեռք մեկնել նույնիսկ անծանոթին:

- Իսկ հիմա անցնենք գործի,- լրջացավ Վեզիրյանը, թեև նրա աչքերը շարունակում էին ջերմ շողեր արձակել: - Հարգելի ընկեր Լևոնյան, իմ երիտասարդ բարեկամ, թո՛ւյլ տվեր հարցնել, թե Ձեզ ո՞վ է իրավունք վերապահել առանց հիմնարկի պետի, տվյալ դեպքում՝ իմ թույլտվության, շրջագայել շինարարական հրապարակներում, զրուցել բանվորների հետ և մանավանդ այնպիսի հարցեր տալ, որ շոշափում են իմ հեղինակությունը:

«Ո՞նց են անմիջապես հասցրել»- ապշեցի ես:

- Զարմացաք, չէ՞,-բարեհոգաբար ծիծաղեց Վեզիրյանն ու տեղից բարձրանալով՝ աջ ձեռքը դրեց ուսիս,- այո՞-, ես ամեն ինչ իմանում եմ, ես կարող եմ ողջ օրն այս սենյակում նստել, բայց մանրամասն իմանալ, թե ինչ է կատարվում յուրաքանչյուր անկյունում: Ես կարող եմ ասել, թե ում հետ ինչ եք իսուել Դուք: Այլապես անհնար էր տարիներ շարունակ անբասիր դեկավարել այս վիթխարի հիմնարկությունը: Եվ եթե ես սրտանց չհարգեի Ձեզ, Ձեր ջահելությունը և եթե ես կլ որոշ մաս չունենայի Ձեր, այսպես ասած, կարիերայի հարցում, ապա կարող էի հանգիստ սրտով մի փոքրիկ նամակ գրել կենտկոմ՝ պատճենն ուղարկելով Ձեր հիմքագրին: Դուք անպայման կկրահեք, թե ինչ բովանդակություն կունենար այդ նամակը: Ճիշտ չէ՞: Ես կիսնդրեի խստորեն պատժել այն թղթակցին, որը խախտել է ժուռնալիստի վարվեցողության նորմաները, բանվորներին կտրել է աշխատանքից, փորձել է նրանց գրգռել դեկավարության դեմ, ստիպել սուստ վկայություններ տալ և դժգոհել աշխատավարձի բաշխման ներկա չափից, որը կառավարությունն է հաստատել: Հը՞, ընկե՛ր Լևոնյան, ի՞նչ կանեին այդ թղթակցին...

Ես զարմացել էի և ամոթից կորցրել ինձ: Այսր ճիշտ որ, եթե ազնիվ ու բարի մարդ չիներ, ինչ ել ուզենար, կաներ իմ նկատմամբ: Փաստորեն, ես հենց նրա նկարագրածի պես էի վարվել, առանց հասկանալու, իհարկե, առանց մտածելու, որ իմ գործողությունները կարող են այդպես էլ մեկնաբանվել: Այս ի՞նչ կրակի մեջ ընկա: Ի՞նչ անեմ հիմա, ել ինչպե՞ս իսուել խմբագրության հանձնարարության, այս անիծյալ նամակի մասին, որը կշռաբարի պես կախվել է ծոցագրապանիցս... Իսկ եթե չասեմ, ի՞նչ պատասխան տամ այնտեղ՝ խմբագրությունում: Չէ, անպայման պետք է ցույց տալ նամակը. հաստատ գիտեմ, որ ամեն ինչ սուստ է լինելու այնտեղ, այսպիսի մարդը չի կարող անազնիվ լինել, չի կարող ստոր լինել:

Նամակը կարդալու ժամանակ նրա դեմքը և ոչ մի վայրկյան չփոխվեց, բարի ու փոքր-ինչ թախծոտ ժպիտով նա աչքերը սահեցնում էր ծուտումուտ տառերի վրայով՝ մերթ ընդ մերթ միայն տիրությամբ օրորելով գլուխը: Եվ դրանից ավելի էր կծկվում սիրտս, հայիոյում էի ինձ ել, այս հանձնարարությունն էլ, որով ակամա վիշտ եմ պատճառում մարդկանց: Երբ վերջացրեց, տիսուր ժպտաց.

- Ահա թե ինչպիսի մարդիկ կան աշխարհում,-ասաց նա՝ նամակն ինձ մեկնելով: - Գործի համար զոհում ես քեզ, մոռանում ես քեզ էլ, բոլորանիքն էլ, օր ու գիշեր շրջում ես փոշու ու կեղտի մեջ, տներ ես կառուցում մարդկանց համար: Եվ ահա՝ ինդրեմ, ստացի՛ ր վարձդ: Ինչ՝ որ մի չար հոգի, մի ծովյ ու անբան արարած, որին հավանաբար ժամանակին վրնդել ես աշխատանքից, փորձում է արատավորել պատիվդ, ստվեր զցել անվանդ վրա, կրակել պատի ետևից ու մնալ մթության մեջ: Զեզ եմ հարցնում, ընկե՛ թ Լուսնյան, ազնիվ մարդը, պետության շահերի համար ցավող մարդը ինչո՞ւ պետք է վախենար և ուրիշի ստորագրություն դներ նամակի տակ: Եվ այն էլ մեր պայմաններում, երբ քննադատությունը և ինքնարքնադատությունը հզորագույն, առաջմիշ ուժ են: Ես սրտանց ցավում եմ, որ ձեր խմբագրությունում հաշվի են առնում նման զրաբարտագրերը, ու կիսում ում եետ որ հարկն է:

Ի պատասխան ես վերջնականապես կոտրված հայտարարեցի, որ միանգամայն համաձայն եմ նրա հետ, որ ես մեղավոր չեմ. ինձ պարզապես համձնարարել են ստուգել և ես ստիպված...

- Մի՛ արդարացեք, բարեկա՛ մս, ես Զեզ մազաշափ իսկ չեմ մեղադրում,- ասաց Վեզիրյանը,- Դուք Զեր գործն եք կատարում: Ի՞նչ կարող եք անել: Զեզ նկարագրել են, որ ես հավելագրող եմ, որ նոյն աշխատանքը կատարող մարդկանց տարբեր չափով եմ վարձատրում, որ ինձ մոտ մեռած հոգիներ կան, այսինքն կեղծ ազգանուններ, որոնց աշխատավարձ եմ դուրս գրում և յուրացնում... Դե, Դուք էլ եկել եք տեսնելու այդ բոլոր չարագործությունները կատարողին՝ հանցագործին: - Նա դառը ծիծաղեց, ապա թեքվեց ու սեղանի մահուղի տակ սեղմեց զանգի կոճակը: - Ինդրեմ, հիմա ես կպահանջեմ աշխատավարձի ցուցակները: Ստուգեցե ք...

- Ոչ մի դեպքում,- ասացի սրտանց վիրավորված,- ես ինքս էլ համոզված եմ, որ ամեն բան սուտ է գրված այստեղ: Եվ ինձ թույլ չեմ տա...

- Զալիբե՛ կ, -դիմեց նա առանձնասենյակ մտած հաշվապահին, որ աշխարհի բոլոր գլխավոր հաշվապահների պես ակնոց ուներ ու դրանց վրայից էր նայում,- բե՛ թ անցյալ ամսվա աշխատավարձի ցուցակները:

Գլխավոր հաշվապահը մի վայրկյան վարանեց, գլուխը թեքած հարցականորեն նայեց իր պետին, ապա առանց որևէ բառ արտասանելու ետ դարձավ, համարյա անմիջապես բերեց, Վեզիրյանի առջև դրեց ցուցակների մի կույտ և նրա ձեռքի շարժումի հետ դուրս եկավ:

Ինչ-որ մեկը դրսում մեխ էր խփում չոր տախտակին, և մուրճի համաշափ հարվածները կարծես իմ գլխին էին իջնում: Այդ ամբողջ ժամանակամիջոցում ես Վեզիրյանին ինդրում էի հրաժարվել իր մտադրությունից, ասում էի, որ չեմ նայի այդ ցուցակները, ասում էի, որ ինձ համար ամեն ինչ էլ պարզ է և հենց այդպես էլ կգեկուցեմ խմբագրին: Սակայն նա, շարունակելով տիսուր ու վիրավորված ժպտալ, առանց ուշադրություն դարձնելու իմ խոսքերին, մոտեցավ ինձ, ետ տարավ բաձկոնիս փեշը և բոլոր այդ ցուցակները գալարածել ոլորելով՝ գրանս դրեց:

- Տարե՛ ք, տարե՛ ք, հանգիստ ստուգեցե՛ ք դրսում,- ասաց նա,- ես Զեզ վստահում եմ, բարեկա՛ մս, տարե՛ ք, մերկացրե՛ ք ինձ՝ հանցագործիս:

Դրսում շարունակում էին մեխ խփել չոր տախտակին, և ես այլևս չկարողացա ինձ զսպել:

- Ինչո՞ւ եք ուզում վիրավորել ինձ,- համարյա բղավեցի ես և գրպանիցս թղթերի փաթեթը հանելով՝ նետեցի Վեզիրյանի սեղանին:

Միջանցքում նա հասավ ինձ, հուզված, ամուր գրկեց մեջքս, ապա թևանցուկ արած ուղեկցեց բակի միջով՝ շշնջալով ականջիս:

- Շնորհակալություն, շնորհակալություն, որ հավատում եք: Ես այս բոլորը կպատմեմ Կարոյին, պատկերացնում եմ, թե որքան զոհ կլինի:

Դարպասի մոտ մի քանի քանվոր՝ մինչև գոտկատեղերը մերկ, լվացվում էին՝ օձի պես զլուխը բարձր բռնած երկաթյա խողովակից առատորեն թափվող սառը ջրի տակ ու փնչում հաճույքից: Երբ անցնում էի նրանց կողջով, լվացվողներից մեկն ուղղեց մեջքն ու համար, արհամարհական հայացքով ինձ նայեց: Դժողո ու վախկոտ որմնադիրն էր, որին հանել էին տասնապետությունից: Ես չխուսափեցի նրա հայացքից ու ինքս էլ նրան նայեցի արհամարհանքով. դրա ն տեսեք, ինչ է՝ հանել են պաշտոնից, սևացնում է մարդկանց: Նա ինչ -որ քան ասաց լվացվողներին, որովհետև բոլորն էլ նայեցին իմ կողմն ու հոհոացին: Սակայն ես, ոչ մի ուշադրություն չդարձնելով նրանց վրա, դուրս եկա դարպասից: Այնքան թեթևացած, այնքան ուրախ էի զգում ինձ, որ համարյա վազում էի: Ինչ լավ է, որ սուտ դուրս եկավ նամակը, ինչ հրաշալի մարդ է այդ Վեզիրյանը, ինչքան մեղմ, ինչքան քաղաքավարի, գրկել, շնորհակալություն էր հայտնում ինձ միայն նրա համար, որ հավատում եմ իրեն: Ինչու չպետք է հավատայի, ինչպես ս կարելի է չհավատալ մարդուն:

Մազուտ Ձեռքը

Այնպես էի ուզում իմ ուրախությունը կիսել մեկի հետ, որ թեև Նանարին հանդիպելուն դեռևս մի ժամ կար, սակայն որոշեցի հենց հիմա նրա մոտ լինել և ուղիղ տիկնիկային թատրոն գնացի: Քիչ էր մնացել, որ ներկայացումն սկսվի: Տոմսավաճառն արդեն ուզում էր փակել լուսամուտը, բայց ես մեկնեցի թղթադրամն ու մի տոմս խնդրեցի.

- Զեր երեխայի համար կ պետք է տոմս վերցնեք,- ասաց տոմսավաճառը, - թե՞ Դուք ներս չեք գնալու:

- Ի՞նչ երեխա,-հարցրի զարմացած:

- Ուրեմն առանց երեխայի՝ եք,- փոխադարձաբար զարմացավ տոմսավաճառը:

Չե, որոշակիորեն այսօր բոլորը մտադիր են բարձրացնել տրամադրությունս: Ուրեմն ես այնքան եմ մեծացել, որ բնական կլիներ, երեւ պատիկ մի տղա կամ սպիտակ ժապավեններով մի աղջնա՞կ լիներ կողքիս: Այս քեզ ծիծաղելի բան: Որ Նանարին պատմեմ, ի՞նչ կանի: Ես ուսուցրի շրթունքս ու վերևից ներքև նայեցի բեղերիս բարակ ու երկար ծայրերին, որոնցից մեկը ստորաբար ընդհատվում էր մի տեղ և շարունակությունը միանում միայն սև մատիտի օգնությամբ: Հետո միայն, որսալով հսկիչ կնոջ քիչ վախեցած ու զարմացած հայացքը, քրքիչ զապելով, երրորդ զանգից հետո դահլիճ մտած:

Նվազախումբը պայծառ ու հանդիսավոր մի մեղեղի էր սկսել: Բեմի վարագույրը վառվում էր լույսերից ու դողում թեթևակի: Սիրտս հանկարծ ինչ- որ հին, հարազատ ու փոշոտ հուշերով լցվեց ու տրոփեց մի տեսակ թեթև, խաղաղ սպասումով: Ու ես մի տեսակ փոքրացա, փոքրացա, փոքրացա իմ աթոռին, դարձա կարձ տաքատ հազած, մազերը շեղակի ճակատին կտրած մի տղա, որը հրաշքի է սպասում, և ուզեցի ծափ տալ բոլորի հետ, որպեսզի շուտ զա այդ հրաշքը: Վարագույրը բացվեց: Մի աղջիկ երգում էր հեռվում, ու նրա ձայնը հետզհետև մոտենում էր, իսկ երբ բեմ մտավ, պարզվեց, որ ոչ թե աղջիկ է, այլ տղա, փոքրիկ մի գեղջուկ, որ, խորչինն ուսին, ծիծաղելիորեն կողքի վրա սահելով, բեմ մտավ, չոված աշբերով նայեց այս ու այն կողմ, վայր ընկավ, որպեսզի կարողանա խորչինը նետել ուսից, ու գլուխը ցնցելով՝ փակ բերանով ասաց.

-Օ-, հոգնել եմ սաստիկ, ծարավն ինձ խեղում է, իսկ ճանապարհը ձգվում է ու ձգվում: Ի՞նչ անեմ ես: Չքնե՞մ: Հա, լավ մտածեցի, այ այս ծառի տակ կքնեմ մի քիչ, իսկ հետո կշարունակեմ ճանապարհս:

Չոված աշբերով մանջուկը հորիզոնական դիրք ընդունեց բեմի պատի տախտակի վրա, հետո հանկարծ ընկավ ու անհետացավ ինչ-որ տեղ: Հաջորդ վայրկյանին մի խոշոր, մազոտ ձեռք կրկին բարձրացրեց նրան ու այս անզամ ավելի ամուր հենց տախտակին, որից ծառ կոչված ստվարաթուղթը քիչ մնաց տապալվեր: Ոնց որ մեկը եկեղեցում հայիներ: Ես ամաչեցի, նաև կարմրեցի կարծեմ ու մեծացա, մեծացա, մեծացա իմ աթոռին, դարձա երկար տաքատով ու մազերը ետ սանրած այն տղան, որը մուտքի մոտ շրթունքը բարձրացրել ու վերևից ներքև իր բեղերին էր նայում: Ինձ թվում էր, թե հիմա հանդիսականները կզայրանան, կսուլեն,

կաղմկեն: Բայց ոչ մի ծպտուն չեղավ: Ոչ ոք չնկատեց ոչինչ: Նայեցի կողքիս նստած փոքր աղջկան, բայց նա չզգաց էլ իմ շարժումը, լայն բացած փայլուն աչքերը հմայված բեմին էր հառել, ներքին պստիկ շուրջը կախվել ու դողում էր հոգմունքից:

Տղան նոր էր քնել, երբ հանկարծ սոսկալի մի մոնյուն տարածվեց բեմում, որից փոքրիկ հանդիսականները ցնցվեցին, իսկ ես ժպտացի միայն: Ներս ընկավ խոշոր, կարմիր ինչ-ոք բան, չծալվող իրանով մի քանի անգամ պտտվեց բեմում ու ահեղաձայն որոտաց.

- Մարդու հոտ եմ առնում, ու՝ ու՝, մարդու հոտ եմ առնում...

Անմիջապես կռահեցի, որ այս թավ ձայնն ու այն խոշոր, մազուտ ձեռքը միևնույն մարդուն են պատկանում:

- Երևի այն փոքրիկ գեղջուկն է զալիս, - հայտարարեց ձայնը, - իմա ես նրան կրոնեմ ու կիսում, հա՛, հա՛, հա՛ ... Ո՞ր կարող է գնալ: Այս ճանապարհով պիտի գնա արևին հասնելու, հա՛, հա՛, հա՛ ...

Իսկապես ծիծաղելի էր: Այդ խոսքերը ասելիս հրեշ կոչված կարմիր ստվարաթուղթը այս ու այն կողմ էր ընկնում՝ դիպչելով գեղջուկին, բայց նրան չէր նկատում: Սպառնում էր, որ կիսուի, այնինչ այդ նպատակի համար նախատեսված բերան չուներ:

Որպեսզի հանկարծ ծիծաղելի, կախեցի գլուխս ու ձեռքս աչքերիս տարա, բայց հենց հաջորդ վայրկյանին զգացի, որ մեկը կամացուկ քաշում է թերքս.

- Մի՛ վախեցի, քեռի՛, հրեշը Ղազարին չի ուտում, իմա ճնճուկը կարթնացնի Ղազարին: Լաց մի՛ լինի, քեռի՛, ազնիվ խոսք, ես տեսել եմ:

Ազնիվ խոսք, լաց զալիս էր: Իզուր եկա այստեղ: ՈՒրեմն էլ երբեք չեմ կարողանալու առաջվա պես, այս պստիկ աղջկա պես հմայված նայել բեմին ու հավատալ: Լաց չեմ լինելու Գառնիկ ախառոր համար, չեմ ծիծաղելու, երբ փոքրիկ եղբայրը հիմարացնի ազահ հարուստին, այլս ինձ արևոտ չպիտի թվա կյանքը, ճոխ ու շքեղ՝ պալատականների հագուստները և թագավորի թագը ոսկե: Պիտի նայեմ այդ բոլորին ու առաջին հերթին նկատեմ, որ վարագույրը մաշված է, որ երկնքից նայողը ոչ թե լուսինն է, այլ քանի մոմանոց էլեկտրալամայ, որ տղայի փոխարեն աղջիկ է խոսում, որ թագը սովորական թիթեղ է, իսկ ծառի փոխարեն կանաչ սովարաթուղթ: Թյու:

Դրսում, արդեն փողոցում քայլելիս, հանկարծ մտածեցի, թե զուցե առաջ՝ մեր ժամանակ, ուրիշ էր: Այսր որքան հիշում եմ, այն ժամանակ տիկնիկներն ավելի լավն էին, փակում ու բացում էին աչքերը, բերանով էին խոտում և հետո այնպես էին խոտում, որ հմայված լսում էի... Կողքիս նստած այն պստիկ աղջկա նման: Հա, իհարկե, մի տաս տարի հետո էլ այս պստիկ աղջիկը, հավանաբար, ինձ նման կտիրի: -Չե՛, մեր ժամանակ տիկնիկային թատրոնն ուրիշ էր, - համոզված կասի նա: Այնինչ ինքը ուրիշ կլինի, ինչպես ես եմ հիմա ուրիշ, և ինչպես բոլորն են դառնալու ուրիշ:

Փողոցի անկյունում ծխախոտ էին վաճառում, և ես ուզեցի գնել իմ հերթական հինգ հատ գլանակը, որ կարգին տղամարդ երևալու համար ծխում էի միայն Նանարի մոտ: Ըստ որում,

առաջ, երբ նոր կի ծանոթացել, միայն երկու հատ կի առնում և աշխատում կի ծուխը ներս չտանել, որովհետև սաստիկ պտտվում էր գլուխ, ու հազը խեղդում էր ինձ: Հետո արդեն կամաց-կամաց սկսեցի կուլ տալ ծուխը և գլանակների թիվը հասցրի հինգի:

Չեոքս ծոցագրպանս տարա միակ մեծ թղթադրամս հանելու նպատակով և զգացի, որ այնտեղ մի ուրիշ թուղթ էլ կա: Զարմացած հանեցի ու ավելի զարմացա. ձեռքիս շինարարական վարչության աշխատավարձի ցուցակներից մեկն էր: Երեսունհինգ անուն-ազգանուն, երեսունհինգ հասցե, երեսունհինգ թիվ, երեսունհինգ ստորագրություն: Մտածեցի, որ հարկավոր է անմիջապես վարչություն տանել, գուցե որոն՞ւմ են: Բայց Նանարը հիմա հավանաբար դուրս է եկել թատրոնից ու ինձ է սպասում: Ի՞նչ անեմ: Վաղը առավոտյան կտանեմ, վճռեցի ես, և հանկարծ տիկնիկային թատրոնի տարեց քննադատը խոսեց մեջս: Միևնույն է, տեղ չունենք զնալու, Նանարին առաջարկեմ հայրենի քաղաքն ուսումնասիրելու նշանաբանով ստուգել ցուցակում եղած հասցեներից մի քանիսը: Թեկուզ ձևի համար, միայն թե ստուգենք, միայն թե լիովին հանգիստ լինի խիդաս:

Նանարը կանգնած էր տրամվայի կանգառում, սակայն նրան տեսնողն անմիջապես կկռահեր, որ նա ոչ մի տրամվայի էլ չի սպասում: Ես թաքուն, թիկունքից մոտեցա նրան ու ականջի տակ մոնչացի:

- Ո՛ ո՛ ո, մարդու հոտ եմ առնում...

Նանարը վախեցած շրջվեց, ծիծաղեց կամացուկ, հետո էլ անմիջապես լրջացավ ու բռնեց պիշակիս կոճակը.

- Ի՞նչ, դու ներսո՞ւմ էիր:

- Ը՛հը, - ասացի ես:

- Ը՛հը, չեն ասի, կասեն՝ այո, հասկացա՞ր:

- Ը՛հը, - պատասխանեցի ես:

- Ինձ էլ լսեցի՞ր, Ա՛ րտ:

- Չե, - ասացի ես, - մոռացել էի, որ շտապ գործ ունեմ, շուտ դուրս եկա: Իսկ դու ի՞նչն էիր:

- Ճնճուկը:

- Ա՛, ուրեմն այդ դո՞ւ էիր Ղազարին արթնացնելու:

- Իսկ դու որտեղի՞ց իմացար, - զարմացավ նա:

- Պստիկ աղջիկն ասաց:

- Ի՞նչ պստիկ աղջիկ: Մեզ մոտ այդպիսի աղջիկ չկա:

- Ինչպե՞ս թե չկա, դահլիճում կողքիս նստած էր:

Նանարը նորից ծիծաղեց, բաց թողեց կոճակս, ու մենք քայլեցինք կանգնած ծառերի մոտով, կանգնած մարդկանց մոտով, կանգնած ավտոների մոտով, կանգնած շենքերի մոտով...
Ամբողջ աշխարհում մենակ մենք էինք քայլում:

- Է, հետո՝, Ղազարը հասա՞վ արևին,- հարցրի ես:
- Չէ,-ասաց Նանարը,-բայց նա հասավ այնտեղ, ուր մարդիկ ուրախ ու երջանիկ են ապրում, և իմացավ, որ արևը ազատությունն է:
- Խելքի մոտ բան ես ասում,- Ղազարի նման աչքերս չոած՝ զլուխս տմբտմբացրի ես: - Իսկ ի՞նչ կլինի, եթե այդ Ղազարի փոխարեն ինձ տանես արևի մոտ: Ուրիշ ժամանակ էլ ասում ես սիրում եմ:
- «Է՞ յ, սիրո նն պատանի, հեռացի՝ թանմիջապես, դու շրջապատված ես հրեշներով ու կախարդված առարկաներով, շուտ ճամփա՛ ընկիր ու գնա՞՝ առանց ետ նայելու, ետ չնայես՝ որքան էլ կանչեն քեզ, հրապուրեն քեզ, հմայեն քեզ, լսո՞ւմ ես, թե չէ՝ քար կդառնաս»:
- «Ազնի՞ վ ճնճղուկ, ինչո՞ւ են ուզում նրանք ինձ քար դարձնել: Այսր ես ոչ ոքի վատություն չեմ արել,-Ղազարի ձայնով ասաց Նանարը, - ես ուզում եմ արևին հասնել»:

- «Այդ դեպքում ճանապարհ ընկիր, օ, բարի՝ պատանի, ես կուղեկցեմ քեզ»:
- Արևի մոտ առայժմ կարիք չկա գնալու, Նանա՛ թ,-ասացի ես,- իսկ եթե ուզում ես անպայման ուղեկցել, ապա տա՛ թ ինձ, ինդրում եմ, Կոնդի փողոցի համար հարյուր վաթսուներեք տունը, որտեղ շինարար բանվոր Սարգիս Կյուրեղի Բաբայանն է ապրում:
- Ո՞վ է նա,- հարցրեց Նանարը
- Այս ցուցակի երեսունինգ անուններից մեկը: Գնանք, կպատմեմ:

Ինչ լավ է, որ ժամանակին ցրիչ եմ եղել: Քաղաքը այնպես զիտեմ, ինչպես մեր տունը, որտեղ ի զարմանք մորս՝ աչքերս փակ էլ գտնում եմ նրա պահած քաղցրավենիքն ու չորացրած միրգը: Զիտեմ բոլոր փողոցներն ու շատ-շատ համարներ: Եվ իմ կարծիքով վատ չի լինի, եթե բոլորն էլ մի քիչ ցրիչ լինեն: Ուրիշը երկու ժամ կծեծեր սրա ու նրա դուռը, իսկ մենք, տասնինգ րոպե էլ չանցած, արդեն համար հարյուր վաթսուներեք տան բակում էինք: Նանարը մնում է մուտքի մոտ, իսկ ես սեղմում եմ առաջին հարկի բնակարանի զանգի կոճակը և դրների մեջ հայտնված բարձրահասակ երիտասարդին հարցնում, թե որտեղ է ապրում Սարգիս Բաբայանը:

- Այստեղ էր ապրում, նե՛րս մտեք, ես նրա տղան եմ,- որոտում է երիտասարդը:
- Ինչպե՞ս թե ապրում էր, ինչ է, տեղափոխվե՞լ է:
- Հա,- երիտասարդի դեմքը մոայլվում է ու մի տեսակ կծկվում,- տեղափոխվել է հերս, երկու ամիս առաջ... մեռավ:

Սպասի՞ր, իմ՞ նթ է, ինչ է այս մարդը, թե՞ ծաղրում է ինձ: Ինչպե՞ս թե մահացել է երկու ամիս առաջ, եթք այս ամսին աշխատավարձ է ստացել շինարարական վարչությունից: Ես տարակուսած մեկ ձեռքիս ցուցակին եմ նայում, մեկ այդ երիտասարդին ու նորից լրիվ կարդում եմ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն:

- Հա, իմ հերն է, իսկ Դուք ի՞նչ գործով եք եկել:
- Ձեր հայրն աշխատել է շինարարությունում, - նրա հարցը անպատասխան եմ թողնում ես:
- Շինարարությունո՞ւմ: Հա, անցյալ տարի մի ամիս պահակ աշխատեց: Հետո դուքս եկավ: Ութ ամիս պառկած էր տանը:

Բակի ընդհանուր մուտքի մոտ ես բոնում եմ Նանարի ձեռքը և երևի դողում եմ, որովհետև նա հարցնում է վախեցած.

- Ի՞նչ պատահեց, Արտա՛կ:

Ես իսկապես դողում եմ ու փախչելու տրամադրություն եմ զգում: Փախչել, ուր կուզի լինել, փախչել, գնալ, կորչել, հերն էլ անիծած, սա՞ ինչ բան է, այսպես ո՞նց կլինի, ո՞նց կարելի է ապրել, ո՞նց կարելի է ապրել:

- Սպասի՞ր, Արտա՛կ, ախր ես չեմ կարող վագել քո ետևից:

Նանարն իմ կողքին է: Ու ես հանգստանում եմ մի քիչ: Ես նրան բացատրում եմ, թե ինչ է կատարվել: Ես նրան բացատրում եմ մի քանի անգամ, որպեսզի նա հասկանա, թեև համոզված եմ, որ նա չի հասկանա ամեն ինչ, որ նա չի տեսնի ամեն ինչ, ինչպես ես մինչև հիմա չեի տեսնում, ինչպես այն պստովիկ աղջիկը չէր տեսնում մազոտ ձեռքը: Ես նրան ասում եմ, թե իրեշավոր, աներևակայելի բան է կատարվել. պարզվել է, որ մի մարդ, բարի հայացքով, լայն ծնոտով, շատ-շատ քաղաքավարի, բարեկիրթ շարժուձերով մի մարդ փաստորեն ինքը չէ, ուրիշ է, ուրիշի ժպիտ է գողացել, ուրիշի շարժուձև է գողացել, ուրիշի աչքեր է գողացել և ժպտալով սկսել է խարել ինձ, խարել մարդկանց, խարել աշխարհին:

- Չի կարող պատահել:

Ես չփոխեմ, Նանարը ինձ հանգստացնելու համա՞ր է ասում, թե պարզապես կասկածում է: Բայց ես բոնում եմ նրա նետած շյուղից, ու որովհետև նախկին ցրիչ եմ, ու որովհետև զիտեմ, որ բոլոր կասկածելի հարցերը տնային լիազորի մոտ կարելի է պարզել, ես եմ դառնում:

Տնային լիազորը, ավելի ճիշտ, լիազորուիին, որ ակնոցը թելով ականջին կապած տարեց մի կին է, թքոտած մատով շրջում է գունաթափ մատյանի էջերն ու մատը սահեցնում տողերի և փոստանիշների վրայով:

- Ահա, - ասում է նա, - ես հո ձեզ չե՞մ խարում: Մենք ուրիշ Սարգիս Բաբայան չունենք: Ահա, - ասում է նա, - տեսե՛ք, դուքս եմ զրել:

Փողոցում մի տաք կաթիլ է ընկնում երեսիս, ու ես ակամա վերև եմ նայում: Երկինքը մութ-մութ է, միայն մի տեղ ամպէ վարագույրը քիչ բացվել, մի քանի աստղ է ցույց տալիս, որոնք լուսատտիկների պես վետվետում են, և լուսինն է քարացել, կանգնել նրանց մոտ այնքան տգեղ, այնքան անբնական, ասես տիկնիկային թատրոնի քանի հինգ մոմանոց էլեկտրալամպը լինի:

- Ուզո՞ւմ ես վագենք,- ասում է Նանարը:

Ու մենք քայլում ենք Կոնդի փողոցն ի վար: Մի էլեկտրապայան մոտ կանգնում, կռացած, անձրևից պաշտպանվելով, նայում եմ ռոճկացուցակի մյուս ազգանունները, հասցեները: Պետք է ստուգել բոլորը, ստուգել ամենայն մանրամասնությամբ, ամենայն բժախնդրությամբ: Էլ չարժե տուն գնալ: Ընկերոջ մոտ կմտնեմ ու կվերցնեմ նրա հեծանիվը, այդպես արագ կլինի: Ուրեմն այստեղ պետք է բաժանվենք:

- Դե, դու տո՞ւն գնա, Նանա՝ թ,-ասում եմ ես:

- Չե, առաջ դո՞ւն գնա, հետո՝ ես,- ասում է նա:

Դա մեր հանդիպումների ամենօրյա վերջաբանն է: Միշտ մի տաս րոպէ էլ այդ մասին ենք խոսում, թե ով պետք է առաջինը շրջվի: Բայց այսօր ես ինձ կորցնում եմ:

- Դե, հերիք է,- բղավում եմ ես,- գնա՝:

Ու առանց նրան սպասելու աջ եմ թեքվում, իջնում Լենինյանով: Իջնում եմ սկզբում արագ, քարկացած, կնճռոտված, հետո կամաց-կամաց դանդաղեցնում եմ քայլերս ու ետ եմ նայում: Նանարը չկա: Պատկերացնում եմ նրան միայնակ ու տիսուր քայլելիս անձրեի տակ, ու սիրտս ձմլվում է, կանգնում եմ մի պահ: Ինչո՞ւ կոպտեցի նրան, ի՞նչ էր արել Նանարը: Ու ատելությունս, որ մինչ այդ կորչում էր դեմքիս կնճիռներում ու քայլերիս մեջ, լցվում է սիրտս, ուռճանում, դառնում է նրանց դեմ, ովքեր խլում են մարդու հավատը և թույն են լցնում հոգին:

Ի՞ՆՉ ԱՆԵՄ, ԸՆԿԵ՛Ր Սարյան

Երկիրեղի պատուհաններով ու ծանր վարագույրներով աշխարհից անջատված այս սենյակում էլ անդորր չկա: Պատի մյուս կողմում ջրհորդանները իրենց աղմկոտ համերգն են սկսել ու այնպես են դրդում, այնպես են փրփրում, ասես որոշել են երկինքը քամել իրենց միջով, վերջացնել երկինքը:

- Հը, ի՞նչ կա, Լևոնյա՞ն:

Սարյանը առանց գլուխը բարձրացնելու տալիս է այդ հարցը: Զախ ձեռով ինչ-որ մի անորոշ շարժում է անում, որ հավանաբար նշանակում է՝ նստի՛ր, իսկ աջով շարունակում է գրել արագ-արագ, շրթունքներն ամուր սեղմած: Ես գիտեմ, որ նա հենց այդպես տվեց այդ հարցը և բոլորովին էլ պատասխանի չի սպասում: Դրա համար էլ չեմ պատասխանում, որպեսզի չխանգարեմ նրան, ու պատուհանին մոտենալով՝ վարագույրի ձեղքից փողոց եմ նայում, որտեղ տեր ու տնօրեն է անձրւը: Մարդիկ կորցրել են իրենց բնական կեցվածքը. ոչ մի ձիգ կերպարանք, ոչ մի հպարտորեն բարձրացված գլուխ, ոչ մի սիզածեմ քայլվածք: Քայլում են կծկված, գլուխներն ուսերի մեջ, ցատկելով անցնում են ջրափոսերը, ատելությամբ նայում ավտոմեքենաներին, որոնք, հսկայական միջատների պես լուսե բեղիկները շարժելով, սլանում են խոլ թշշոցով՝ ջրի հովհարած շատրվաններով շրջապատված: Ու մարդիկ խուճապահար փախչում են այդ շատրվաններից, անցնում են պատերին քսվելով, մինչև որ առաջին իսկ ջրհորդանք նրանց դեպի փողոց է հրում: Զկա ոչ մի նորածն հագուստ, ոչ մի փետրավոր զլիարկ, ոչ մի գույն, որ արև օրը կարող է գերել մարդկանց: Ամեն ինչ հավասարեցրել է անձրւը, իրար խառնել գույները, գորշացրել ու թրծել աշխարհը, բոլոր մարդկանց նմանեցրել իրար ու քրքում է իր հարյուրավոր ջրհորդաններով:

- Ի՞նչ անձրւ է:

Ես ցնցվում եմ և ուզում եմ ետ քաշվել պատուհանից, բայց նա աջ ձեռքով սեղմում է ուսս ու ինքն էլ նայում իմ կողքից:

- Փառահեղ անձրւ է, - ասում եմ ես՝ ուսիս իմ դասախոսի ձեռքի ծանրությունն ու ջերմությունն զգալով ու դրանից մի քիչ երջանկացած:

Սարյանը մտախոհ շարժում է գլուխը, կարծես հավանություն է տալիս, ապա ասում է այնպիսի մի ձայնով, որ կարծես ոչ թե ինքը, այլ իր հողագործ հայրն է խոսում:

- Միայն թե համը չհանի: Սերմերը կփսեն հողում:

Հետո, շարունակելով սեղմել ուսս, ինձ դեպի բազմոցն է տանում, նստեցնում է, ինքը մոտենում է դրանք, քարտուղարուհուն կարգադրում առաջնորդողը մեքենագրուհուն հանձնել ու ոչ ոքի չթողնել ներս: Ապա զալիս, նստում է իմ կողքին, նայում է քիչ կկոցած, կապույտ աշքերով:

- Դե՞, ի՞նչ նորություն կա, ընկե՛ր Լևոնյան, պետական քննությունները հանձնեցի՞ր,- որ դարձյալ առանց սպասելու, որ ես պատասխանեմ, որովհետև ինքը, մեր կուրսի գիտական դեկավարը լինելով, քաջ գիտե այդ բոլորը, շարունակում է,- շրջկոմում ինչպե՞ս են գործերդ, հեղափոխություն մտցնո՞ւմ ես պիոներական աշխարհում, - հետո հանգցնում է աչքերի ծիծաղը, ու ես նկատում եմ, որ նրա աչքերը բոլորովին ել կապույտ չեն, այլ պարզ, անամայ երկնքի են նման:

- Բոլոր փաստերը ճիշտ եին, ընկե՛ր Սարյան,- ասում եմ ես:
- Պատմի՞ր ամեն ինչ, ամենայն մանրամասնությամբ, աշխատի՞ր ոչ մի մանրուք աչքաթող շանել:

Հեշտ է ասելը՝ պատմի՞ր, երբ քեզ լսում է դասախոսդ և այն ել Սարյանը, որ առաջին հայացքից թվում է, թե ավելի շուտ նախադասությունները մաքուր հայերենով և քերականորեն ճիշտ արտասանելուդ է հետեւում, քան պատմածիդ բովանդակությանը: Ես աշխատում եմ մաքուր խոսել, բայց չի ստացվում, չեմ կարողանում մտքիս հետեւ, ջղայնանում եմ, մտքումս թափ եմ տալիս ձեռքս ու որոշում պարզապես խոսել: Ինչ ուզում է թող լինի: Բայց չէ, նա չի ընդհատում ինձ, չի ուղղում, միայն իմ պատմածին զուգահեռ դեմքն ավելի ու ավելի է կնճռուտվում, և աչքերը դաշնում են կապույտ-կապույտ: Ես նրան պատմում եմ շինարարական վարչությունում տեղի ունեցած ապօրինությունների մասին, նշում, որ հանցավոր կապերի մեջ մտնելով աշխաղեկների, զիսավոր հաշվապահի ու զանձապահի հետ՝ Վեզիրյանը աշխատանքի կեղծ կարգագրեր է ստորագրում, մոտ քառասուն մարդու անունով աշխատավարձ բաց թողնում ու յուրացնում այդ գումարը, որ... Բայց Սարյանը այստեղ ընդհատում է ինձ.

- Ի՞նչ մոտ, ի՞նչ մոտ, այդպիսի փաստերը «մոտ»-ով չպետք է բերել:
- Երեսունութ,-ուղղում եմ ես:
- Հետո՞:

Բացատրում եմ, որ եղել եմ բոլոր բանվորների տներում, ստուգել անձամբ, այդ երեսունութից մի մասը ինչ-որ մի ժամանակ աշխատել է շինարարությունում, հետո այս կամ այն պատճառով այլ տեղ է փոխադրվել, բայց աշխատավարձի ցուցակներում շարունակել է գոյություն ունենալ: Իսկ մի քանիսն ել պարզապես աշխաղեկների վարչության պեսի, հաշվապահի ու զանձապահի բարեկամներն են ու նրանց ընտանիքի անդամները, որոնք շինարարության հետ բացարձակապես ոչ մի կապ չունեն: Երբ նկարագրեցի, թե ուսումնասիրության ժամանակ պարզվեց, որ աշխատավարձի ցուցակներում որպես կոռունկավար հանդես է գալիս հաշվապահ Զալիբեկի յոթանասունամյա զորանչը, իսկ որպես հողափոր բանվոր՝ աշխաղեկ Սոլախյանի քրոջ յոթամյա տղան, սպասում էի, թե Սարյանը կծիծաղի, բայց նա կարմրեց զայրույթից, կիտեց հոնքերն ու սկսեց աջ ձեռքով նյարդայնացած թմբկահարել սեղանը.

- Հետո՞, հետո՞ ...

Ես թվեցի կլի մի քանի փաստ: Շինվարչությունում նյութական արժեքների, շինանյութի խիստ հաշվառում չի տարվում, տասնապետերը վերցնում են այնքան, ինչքան ուզում են, մի շարք նյութեր կլ չեն ստացվել, սակայն զգիտես որտեղից ձեռք են բերվել և օգտագործվել: Կամայականություններ շատ են թույլ տրվում, միևնույն աշխատանքի համար տարբեր մարդկանց վարձատրում են տարբեր չափով.

- Հա, մի փոքրիկ փաստ կլ կիշեցի,- ասացի ես,- շինվարչության պետք անցյալ ամսին կարգադրել է ներկարարների բրիգադիրի աշխատավարձը կտրել երեսուն տոկոսով և նրան զրկել պարզաբանումից՝ աշխատելի հետ վիճելու համար: Ըստ որում՝ իրավացի է եղել բրիգադիրը:

Սատանան դրդեց ինձ այդ չարաբասիկ փաստը «փոքրիկ» անվանելու: Սարյանը թափով բարձրացավ աթոռից ու ողջ զայրույթը, որ հավանաբար կուտակել էր նրա հոգում իմ պատմածը, ուղղեց ինձ: Ես նրան դեռ երբեք այդքան վշտացած չեմ տեսել և ավելի շատ զարմացա, քան վիրավորվեցի:

- Ուրեմն ապօրինություն կատարելը փոքրիկ փաստ է, հա՞ , ընկե՞ր Լեռնյան, ուրեմն աշխատավոր մարդուց նրա ազնիվ վաստակը խլելը, նրան տնտեսական տեռորի ենթարկելը, նրան վշտացնելը, նրա հոգում անվստահություն սերմանելը ընդամենը փոքրիկ փաստ է, հա՞ : Եվ դա ասում է իմ ուսանո՞ղը: Իսկ դու զիտե՞ս, որ դա շատ ավելի ցավալի քան է, քան թե, քան թե քո այդ շինանյութի գողությունը: Այո, այո, և դու հենց այդ մասին պետք է գրես: Թեև արդեն կասկածում եմ, թե դու կկարողանաս արդյոք գրել այնպես, ինչպես հարկն է: Այո, այո, թու վյլ տուր կասկածել... Իսկ այդ Վեզիրյանն էլ պտուղ է, ճառեր է ասում կոնֆերանսներում...

Չե, փոթորիկն անցավ...

Ես նրան համարյա չեմ լսում: Կախել եմ գլուխս ու մտածում եմ, ահա, Վեզիրյանը մեկի հոգին էլ պղտորեց, մեկի հոգին էլ լցրեց թույնով ու նրան ստիպեց ասել այնպիսի խոսքեր և ասել այնպիսի տոնով, որի համար շատ չանցած զղզալու է և իր վրա զայրացած՝ աշխատելու է դուրս գալ դրությունից: Ու դա նրան ավելի է տանջելու, քանի որ բնավորությամբ զգայուն ու բարի մարդ է: Այդ հո ես լավ զիտեմ: Արդեն չորս տարի է, ինչ մեր դասախոսն է Սարյանը, մի մարդ է, որ կարող է մանկան պես հուզվել ուրիշի վշտի համար, ուրախանալ ուսանողի գուած մի լավ վերնագրով, մի հարմար ածականով, լրագրային մի փոքրիկ ինֆորմացիայի համար: Նա խոսում է, իսկ ես կիշում եմ, թե ոքքան ընկճված ու տիսուր էր նա, երբ մեկ ամիս առաջ վերադարձել էր շրջանները կատարած գործուղումից: Ինչպես սովորաբար լինում է նման դեպքերում, խմբագրությունում այդ օրերին բոլոր շշուկների թեման խմբագրի տրամադրությունն էր: Հազար ու մի տեսակ ենթադրություններ ու կրահումներ էին արվում, մինչև որ խմբագրի տեղակալը, որ գործուղման ընթացքում խմբագրի հետ էր եղել, պատմեց եղելությունը:

Լեռանային հեռավոր մի շրջանում Սարյանը այցելում է շրջկենտրոնի միջնակարգ դպրոց: Անմիջապես իր շուրջն է հավաքում երեխաններին ու սկսում է զրուցել, կատակել նրանց հետ: Նրա հայտնի թուլություններից մեկն էլ դա է: Չթաքցրած բավականությամբ հետաքրքրվում է նրանց առաջադիմությամբ և ապա պահանջում, որ յուրաքանչյուրը առանձին-առանձին

պատմի իր այսպես կոչված կենսագրությունը. ովքեր են ծնողները, որտեղ են աշխատում, ինչ եղայրներ ու քույրեր ունեն, ինչպես են նրանց անունները, ինչ զբքեր են կարդում...

Հերթը հասնում է մի տասներկուամյա աղջկա:

- Անունդ ի՞նչ է, սիրո՞ւն աղջիկ,- հարցնում է Սարյանը:

- Հասմիկ,- ասում է աղջիկը:

- Հրաշալի անուն է, այդպիսի անուն ունեցողը լավ պետք է սովորի: Իսկ դո՞ւ ինչպես ես սովորում:

- Գերազանցիկ է,- հուշում են այս ու այն կողմից:

- Շատ-շատ ուրախ եմ, ապրե՞ս,- ուրախանում է Սարյանը, և ընդհանրապես այնքան նրբանկատ ու զգայուն այդ մարդը, իր տարերքի մեջ լինելով, հանկարծ տալիս է մի հարց ևս, որը նրա տառապանքի սկիզբն է դնում:

- Այ, այդ մեկը լավ չէ,- ասում է նա,- տեսնում եմ, որ կոշիկիդ ներբանը պոկված է և կախվել է շնիկի լեզվի պես: Խնդրում եմ իմ կողմից հայրիկիդ ասես, որ մեկ-երկու հատ մեխ խփի, հա՞ :

Ու հանկարծ աղջկա աչքերը արցունքով են լցվում, հեկեկում է նա և ձեռքերով դեմքը ծածկած փախչում դասարանից: Սարյանը գունատվում է:

- Ի՞նչ պատահեց, ինչո՞ւ հեռացավ, միթե՞ ես վիրավորեցի նրան,- շփոթված հարցնում է նա հավաքվածներին:

Ու աշակերտները իրար ընդհատելով ու լրացնելով, բացատրում են, որ Հասմիկը հայր չունի, որ նրա հայրը զոհվել է երկու շաբաթ առաջ հանքերում, երբ փորձել է փրկել փլուզումի հետևանքով հողի տակ մնացած իր ընկերոջը:

Շփոթահար, ընկճված Սարյանը խնդրում է փնտրել աղջկան, բայց նրան ոչ մի տեղ չեն գտնում: Եվ վերադառնում է հյուրանոց:

«Ամբողջ օրը նա ոչ մի տեղ դուրս չեկավ- պատմում էր խմբագրի տեղակալը,- նրա մոտ եկան ընկերները, որոնց հետ միասին սովորել էր ինստիտուտում և որոնց շատ էր սիրում, սակայն նա հայտարարեց, թե հիվանդ է և համարյա հասկացրեց, որ ուզում է մենակ մնալ: Երկար ժամանակ մոայլված քայլում էր սենյակի մի անկյունից մուտք՝ գլուխը վշտացած օրորեկով ու անձայն շարժելով շրթունքները: Ես փորձեցի միսիթարել նրան, ասացի, որ մի առանձին բան չի եղել, որ դա սոսկ թյուրիմացություն է. որտեղի՞ց կարող էր ինքն իմանալ՝ հայր ուներ այդ աղջիկը,- ու այդ ասելիս նրա աչքերը արցունքով էին լցվել:

- Այ, հենց հարցն էլ այդ է, է,- խմբագրը կանգ առավ ու աջ ձեռքի ծալված ցուցամատով սկսեց ամուր խփել պատին,- հարցն այդ է, է՞ : Եթե մի բան չգիտես, ինչո՞ւ ես հարցնում, ինչո՞ւ ես հետաքրքրվում: Պետք է, որ զգայի, է՞ , պետք է, որ ես զգայի, է՞ , ախր այնքան տիսուր աչքեր ուներ այդ աղջիկը,- ու այդ ասելիս նրա աչքերը արցունքով էին լցվել:

Հետո հանկարծ վճռեց զնալ, գտնել Հասմիկին: Զանգահարեց ինչ-որ տեղ, երևի դպրոցի դիրեկտորին, իմացալ հասցեն և ինձ էլ ստիպեց ուղեկցել իրեն: Սակայն մինչև Հասմիկենց տուն գնալը խանութ մտավ, իրեն կորցրած գնեց, ինչ որ տեսնում էր՝ շմտածելով՝ դրանք համապատասխա՞ն էին աղջկա տարիքին, թե ոչ: Մի մեծ արջուկ գնեց ու էլեկտրական գնացք, հավանաբար տասնյոթ տարեկանի մի ծաղկավոր զգեստ գնեց ու լաքե փայլուն կոշիկներ, ուժինե մի մեծ գնդակ գնեց ու գույնզգույն ժապավեններ և նույնիսկ փուչիկներ գնեց մի քանի հաս: Խնդրեց հաշվել արժեքը, փորփրեց բոլոր գրպանները, դրամը չքավականացրեց, շփոթված այս ու այն կողմ նայեց և ապա ինձ խնդրեց իրեն տալ մոտս եղած ողջ գումարը: Վարորդից էլ փող վերցրեց ու վաճառողի զարմացած, ապշահար հայացքի տակ, ասես տենրով բռնված, գնեց կոնֆետներ ու խմորելուն, ինչ-որ գեղեցիկ տուփեր ու պահածոներ... Ու նոր միայն մենք գնացինք Հասմիկենց տուն:

Թեև առավոտ շուտ Երևան էինք վերադառնալու, բայց նա մինչև ուշ գիշեր չհեռացավ Հասմիկի մոտից: Երկար զրուցում էր հետք, իր երեխաներից էր պատմում: Ու ինքն էլ քննեցրեց: Նստել, նայում էր դեմքին, հետո ես տեսա, որ թարուն ինչ- որ բան է դնում նրա բարձի տակ: Հավանաբար գնումներից մնացած դրամը: Իսկ երբ հրաժեշտ էինք տալիս, բավականաչափ չոր, որպեսզի հանկարծ սենտիմենտալ չերևան ու որպեսզի կարողանա թաքցնել անասելի հուզմունքը, Հասմիկի մորն ասաց.

- Տիկի՞ն, ես ինքնակոչ ինձ Ձեր աղջկա հորեղբայրն եմ համարում, այսինքն՝ մի մարդ, որ ինչ-որ պատասխանատվություն ունի նրա ապագայի համար: Այսքանը, ահա այսքանը...»:

- Դե, հիմա զնա՝ ու գրի՞ք, վաղը ուղիղ ժամը մեկին ֆելիետոնը սեղանիս պետք է լինի: - Խմբագիրը ձեռքը կրկին ուսիս էր դրել, և նրա աշքերը բաց երկնազույն էին: - Չաշխատես մի սիրուն խոսքի կամ սրամիս արտահայտության համար աղավաղել կամ չափազանցնել փաստերը: Թող սիրուն չլինի, թող ճիշտ լինի: Դե, զնա՝, ի՞նչ ես կանգնել, կարծում ես՝ ես ուրիշ զործ չունե՞մ...

Մի Փոքրիկ Ուրախություն

Մեծ, կարմիր շենքերի կողքին, կավե պարսպի նման տներ կան դեռ, հողե միհարկանի տներ, տիտուր, վանդակաճաղ աչքերով, փոս ընկած, կանաչ կտորներով ու լայն շոած հենակներով։ Մարդ կարող է մի քանի անգամ անցուղարձ անել այդ տների կողքով ու որևէ անցուղի չտեսնել։ Այնինչ անցուղի կա, կա մի փոքրիկ, նեղ ճանապարհ, որը մի քանի մետրի վրա մերք աջ ու մերք ձախ թեքվելով դուրս է գալիս ուղիղ այն տան առջև, որտեղ ապրում է Նանարը։ Ես, որ տարիներ շարունակ կամքի մեծ լարումով կարողացել եմ որևէ բանաստեղծություն չգրել, զինաթափ եմ եղել այդ պստիկ, կավե փողոցի առջև և մի քանի անգամ գնալ-գալուց հետո, քաղաքատնտեսության դասին, ի ամոք ինձ, գրել եմ։

Իմ նեղ, մթին, փոքրիկ փողոց

Ինչո՞ւ այդպես սիրում եմ քեզ,

Ինչո՞ւ սիրտս նետված փողոց՝

Միշտ կարոտով հիշում է քեզ...

Եվ այլ, նույն տոնով էլի երկու քայլակ, որտեղ փաստերը զզվելիորեն կեղծելով հայտարարել եմ, թե արդեն հոգնել եմ մեծ քաղաքների ժխտից, ասֆալտապատ պողոտաներից ու վառ լուսավորված ռեստորաններից և փիլիսոփայի ու պՃնամոլի իմ հոգով, քարավանի մեղմ դողանցի տակ միայնություն ու անդորր եմ որոնում այս փողոցում։

Սուտ: Ավելի ցեխոտ ու անտանելի փողոց աշխարհում չկա, և ես կյանքում երբեք երկրորդ անգամ չէի անցնի այս ճանապարհով, եթե Նանարը չլիներ։ Բայց Նանարը կա, կա իմ Նանարը։ Դրա համար կ հլու-հնազանդ կանգնել եմ իիմա անվյունում, ցեխի մեջ ու երկտարեցի աշակերտի անփութությամբ շուրթերս ուռցրած, սուլում եմ պայմանական ազդանշանը։

- Սիրուններ, միք նեղենա...

Այսօր ինչ-որ չի ստացվում։ Եվ, այն է, փորձում եմ երկրորդ անգամ ձգել «սիրուններ», երբ մեկի ծանր ոտնաձայնը լոեցնում է ինձ։ Կանգնում եմ մեջքով ու սպասում, որ անցնի։ Նորից եմ ուռցնում շրթունքներս ու նորից ոտնաձայն։ Թյու, ոնց որ Արովյանում կանգնած լինես։ Այսքան է երթևեկություն։ Բայց եթե միայն գան ու անցնեն, էլի ոչինչ, դրանով չեն բավարարվում, յուրաքանչյուրն աշխատում է մի լավ նայել դեմքիս։ Միթե՝ արտաքինս այդպես կասկածելի է, չեմ հասկանում։ Ես շրջվում եմ, իսկ անցորդները, հատկապես տարեց կանայք, մի քանի քայլ անցնում, ես են դառնում և ուշադիր դիտում ինձ։ Թեքում եմ գուլս՝ մյուս կողքից են անցնում։ Կախում եմ. կանգնում սպասում են այնքան, մինչև որ համբերությունից դուրս գամ, և ես էլ համառորեն, զայրացած իրենց նայեմ։ Իսկ կողքի դարպասի ետևում իմ ամենամեծ դժբախտությունն է ապրում՝ կարմիր վզկապով։ Շրջկոմում է տեսել, դպրոցում, թե՝ ինչ-որ հավաքություն, չգիտեմ, բայց ճանաշում է ու կարծես անզիր

գիտի իմ չվացուցակը: Հենց փողոց եմ մտնում, դարպասից դուրս է գալիս ու պիոներական պատիվ բառնելով բացականչում.

- Բարև ձեզ, ընկեր Լևոնյան:

Հետո տեղավորվում է իրենց պատշգամբում ու այնտեղից, ինչպես հետախուզական դիտակետից, կրակի տակ պահում փողոցը: Դե, ես ել ին չե մ կարող նրա աչքի առջև ուղցնել շրջունքներս ու սիրուններին խնդրել, որ չնեղանան: Պիոներ-դպրոցական բաժնի վարիչի իմ ողջ հեղինակությունը սուլոցիս նման հօդս կցնդի: Մնում է մի ելք, որին և դիմում եմ: Ես եմ դառնում մինչև փողոցի ծայրը, այնտեղից լուրջ և անփույթ քայլում եմ ներքև և սուլում եմ առանց կանգ առնելու, ասե թե սուլողը ես չեմ: Եվ... ահա, վերջապես պատուհանի սպիտակ վարագույրի վերևում հայտնվում է Նանարի դիմանկարը, իսկ քիչ անց նրա ոտնաձայնն է լսվում փայտե սանդուղքի վրա:

Մենք համարյա պատին քավելով անցնում ենք իմ երգած նեղ, մթին, փոքրիկ, անիծյալ փողոցը ու ես ասում եմ նրան.

- Նանար ջան, ներիր երեկվա համար, հա՞:

Նանարը ոչինչ չի ասում, բայց նրա պայծառ, ժպտուն աշքերը արդեն պատասխանն են:

- Ի՞նչ եղավ,- հարցնում է նա:

Ես նրան պատմում եմ ամեն ինչ ու արտասանում ֆելիետոնս, կյանքումս առաջին անգամ զրած ֆելիետոնը, որ այսօր ժամը տասնմեկին խմբագրի սեղանին դրեցի: Նանարը հրճվում է, երբ ես նկարագրում եմ, թե ինչպես խմբագիրը, կարդալուց հետո, ինձ որևէ բան ասելու փոխարեն՝ կանչեց պատասխանատու քարտուղարին, կարգադրեց նյութը տպարան ուղարկել և նախատեսել կիրակնօրյա էջի համար:

- Զան,- ծափ է տալիս Նանարը և անմիջապես հարցնում է տագնապով.

- Արտակ, իսկ դու չե՞ս վախենում:

- Ումի՞ց,-ծիծաղում եմ ես,- բոլոր փաստերը ձիշտ են:

- Չգիտեմ,-ասում է Նանարը,- վախենում եմ քեզ համար...

Ու հանկարծ որոշում եմ թևանցուկ անել Նանարին, առաջին անգամ օրը ցերեկով: Նա ձեռքը ետ է քաշում, բայց ես բռնում եմ ամուր: Կարմրում, կախում է գլուխը, շշնչում.

- Վայ, ամոք է, կտեսնեն:

- Դե, թող, դու էլ, ամոք է, ամոք է, ինչո՞ւ է ամոք,- բարկանում եմ ես,- հերիք է, ելի, տեսնում են՝ թող տեսնեն, կարծես թե...

- Խոսք չվերջացրած, կեկտրական հարված ստացողի պես, ես եմ ձեռքս փախցնում Նանարի թևի տակից ու մի քայլ ետ եմ ընկնում: Մյուս մայթից, ուղիղ մեր դիմացից գալիս է եղբայրս

Բարկենը: Չի նայում, բայց գիտեմ, որ տեսել է, քմծիծաղ է տալիս ու ձախ ձեռքը թաքուն կողքին բոունցը արած սպառնում է. այսինքն՝ «այդ են քո ժողովները, հա՞, թաքուն-թաքուն ման ես զալիս»:

- Ի՞նչ պատահեց,- վախեցած կանգ է առնում Նանարը:

Ես շփոթված գլխով ցույց եմ տալիս Բարկենին:

- Եղբայրս է,- ասում եմ:

Հիմա ել Նանարն է ցնցվում, քիչ է մնում լաց լինի:

-Տեսա՞ր,-ասում է,- ժամանակ գտար: Քաջիս նայեք: Տեսնում են, թող տեսնեն...

Նա այնքան նման է կրկնում իմ խոսքերը, որ ես քրքջում եմ: Իսկական դերասանուիի է, է՛:
Նանարը չի դիմանում, ինքն ել է ծիծաղում կամացուկ, ու ես առիթից օգտվելով այս անգամ ամենայն վճռականությամբ բռնում եմ նրա թևը:

Դե հիմա ով ուզում է թող տեսնի:

- Եկ թատրոնի տոմս վերցնենք, հը՞,- առաջարկում եմ ես,- կամ կինո գնանք: Որն ուզում ես:

- Զե, թատրո՞ն չէ, թատրո՞ն չէ,- անմիջապես հրաժարվում է Նանարը: - Կինո գնանք:

Նա այնքան արագորեն է հրաժարվում թատրոնից, որ ես ակամա բարկանում եմ: Իսկ ինչո՞ւ չի ուզում, գուցե վախենում է, որ իր ծանոթ դերասանները տեսնե՞ն մեզ: Եթե որևէ բան չկա, ինչո՞ւ է խուսափում: Ի՞նչ... Նանարը: Զե, հիմար բաներ եմ մտածում: Կամ գուցե ուրիշ պատճառ կա... Ու մեկ ել նկատում եմ, որ գարնանային այս խոնավ օրը Նանարի ոտքերին բռկոտիկներ են:

- Ոնց ուզում ես,- ասում եմ ես:

Ինչպես մինչև հիմա չեմ նկատել, որ նա բռկոտիկներ է հազնում: Հա, ասենք կրկնակոշիկների մեջ ո՞նց կարող էի տեսնել, իսկ մենք ե՞ր ենք մի այնպիսի տեղ գնացել, որտեղ հարկ լիներ հանել կրկնակոշիկները: Ես թաքուն նայում եմ նրա փոքրիկ ոտքերին, կրկնակոշիկների մուզ հետքերով երկզարդ նրա խունացած բռկոտիկներին, որոնք կարծես գարնանային ջրերի պայծառությունից ամաչելով, զգուշորեն չոր տեղեր են որոնում ասֆալտին, ու ավելի եմ սեղմում իմ Նանարի թևը:

Երբեք իրենց տան մասին չի պատմում, երբեք չի տրտնջում, թեև գիտեմ, որքան ծանր է նրա համար, թեև գիտեմ, որ իր փոքրիկ աշխատավարձով են ապրում ինքն ու մայրը: Միայն մի անգամ ասաց, որ վեց տարեկան է եղել, երբ գրկվել է հորից: Ինքը համարյա թե չի հիշում նրան, աղոտ, շատ աղոտ տեսնում է միայն նրա փոքրիկ տախտակե կրպակը փոքրիկ հրապարակում, որտեղ Շատախիցի վարսավիր Գրիգորը՝ միշտ մի քիչ հարբած ու աշխարհի բոլոր վարսավիրների պես միշտ մի քիչ շատախտակը գրկում, սափրում էր օտար մարդկանց գլուխները: Հետո, երբ ավարտում էր գործը, փոքրիկ Նանարին ուսին էր դնում ու

լայն քայլերով, թեթևակի օրորվելով, գլուխը քիչ թեքած, ինչ-որ տխուր երգ մրմնջալով քայլում էր դեպի իր կավե տունը՝ նեղլիկ փողոցի ծայրին: Օրվա վաստակը խանութ էր ուղարկում, զինի և ուտելիք թերել տալիս, բարձր ձայնով կանչում հարևաններին ու սկսում քեֆ անել՝ Նանարին ծնկին դրած: Խմում էր պղտոր զինին ու պղտորված աչքերը աղջկան հառած, հառաչում կամացուկ.

- Եխ, Նանս, տղա տի էղնեիր, երթայինք փրկեինք մեր երկիր անօրեններից: Եխ...

Հոր մահից հետո մայրը չամուսնացավ այլս, երկու տեղ հավաքարարի գործ էր անում ու պահում աղջկան:

Հիմա էլ աղջիկն է պահում մորը: Իմ այս փոքրիկ Նանարը: Ինքը չի ասել, բայց ես գիտեմ, տեխնիկում է գնացել նրա համար ախր, որ թոշակ ստանա, որ մայրը գոնե մի տեղ աշխատի միայն:

Լենինի հրապարակի մոտ ես ձեռքս ճակատիս եմ խփում:

- Տես, ո՞նց էի մոռացել, Նանար:

- Ինչը՝, - անհանգստանում է նա:

- Այսօր քրոջս ծննդյան օրն է,- ասում եմ,- առավոտյան կպավ ու կպավ, թե մի նվեր առ: Ի՞նչ անեմ:

- Իսկ փող ունե՞ս,- հարցնում է Նանարը ու ձեռքն արագորեն գրպանն է տանում: - Ես մի քիչ...

Ես բռնում եմ նրա ձեռքը:

- Հարցը փողը չէ: Այսօր աշխատավարձ եմ ստացել: - Բայց ի՞նչ գնեմ, չեմ իմանում: Լսիր, գուցե կոշիկ գնեմ, ի՞նչ՝ ասում եմ, - նա մի կարգին կոշիկ չունի:

- Հա,-ուրախանում է Նանարը,- աչքերն այնպես են փայլում, որ սիրտս ճմլվում է: - Իսկ համարը գիտե՞ս:

- Համա՞րը, որտեղի՞ց պիտի իմանամ,- շփոթվում եմ ես, - ճիշտ որ, ե, ի՞նչ անենք: - Հետո մտահոգ դեմքով նրա կոշիկներին եմ նայում: - Գիտե՞ս ինչ, Նանար, ինձ թվում է, թե նրա ոտքերը հենց քոնի չափ պետք է լինեն:

Նանարն էլ է ցած նայում, կարմրում է ու ետ քաշում բռկոտիկները:

- Իսկ եթե չլինեն...

- Չլինեն, վաղը կրերես կփոխեմ,-ասում եմ ես,- կարևորն այսօր տանելն է, ին տեղն ու տեղը չի՞ հագնելու:

Մենք հենց հրապարակի մոտի փոքրիկ խանութն ենք մտնում ու սկսում ուշադիր զննել թեք տախտակների վրա զույգ-զույգ շարված կոշիկները: Եվ հանկարծ երկուս էլ միաժամանակ

նայում ենք անկյունում դրված կապույտ, ռետինե հաստ ներբաններով կոշիկներին: Զարմանալի կոշիկներ են, կողքով անտարբեր անցնել չի լինի: Ափսոս որ գինը չի երևում: Նանարը վաճառողին խնդրում է ցույց տալ դրանք, բռնում է այնքան զգուշորեն, ասես ապակուց լինեն, նայում է հիացած, զարմացած, նույնիսկ հոտ է քաշում ու հետն էլ փակում աչքերը:

- Ի՞նչ արժեն:

Վաճառողը մի այնպիսի գին է ասում, որ ես գունատվում եմ թեթևակիորեն, իսկ Նանարը պարզապես վախեցած՝ կոշիկները վաճառասեղանին է դնում ու ետ քաշվում: Վաճառողը ձեռքը ծովորեն կոշիկներին է տանում, ժպտում է մի տեսակ հեզնանքով, հաղթական, և հենց այդ ժպիտն էլ որոշում է ամեն ինչ:

- Փորձիր, Նանար,- ասում եմ ես չարացած, գրպանիս մեջ տրորելով կես ամսվա աշխատավարձ:

- ԳԺՎԵԼ Է՝ ս,- կրկին ետ է քաշվում Նանարը:

- Իսկ քո ի՞նչ գործն է,- բարկացած շշնջում եմ ես,- իրավունք չունե՞մ քրոջս համար գնելու:

Նանարը այնպես է շփոթվում, որ երկար ժամանակ չի կարողանում հանել իր բոկոտիկները: Իսկ երբ հագնում է կապույտ, ռետինե հաստ ներբաններով այն հրաշալի կոշիկները, ես առաջին անգամ տեսնում եմ, թե որքան նուրբ, որքան գեղեցիկ են նրա փոքրիկ ոտքերը: Աշխատավարձս անփութորեն վաճառասեղանին եմ նետում, նետում եմ, ազնիվ խոսք, առանց որևէ ափսոսանքի, թեթևացած ու հպարտ հոգով: Այնքան են սազում Նանարին այդ կապույտ կոշիկները: Հետո տեսնելով, որ Նանարը կրկին թեքվել և ուզում է հանել կոշիկները, թեքվում եմ ես ել. ու կամացուկ, երջանիկ շշնջում եմ նրա ականջին.

- Շնորհավոր լինի, Նանար:

- Ի՞նչ...

Ես նրան համարյա ուժով դուրս եմ թերում խանութից ու որպեսզի այլևս որևէ առարկություն չլինի, ինքս էլ ուրախությունից խենթացած, բաց եմ թողոնում նրան, վազում եմ մի քիչ ու թղթի մեջ փաթաթած նրա հին բոկոտիկները ողջ ուժով նետում մի հին տան տափակ կտուրը: Դե թող գնան...

- Պրծա՞նք,- քրքօնս եմ ես:

- Գի՞ժ, գի՞ժ,- շշնջում է Նանարը: - Գի՞ժ...

... Ես տուն եմ գնում համարյա վազելով, բարձր-բարձր ցատկելով ու աջ ձեռքս դիպցնելով մայթերի թաց սաղարթներին, թրջվում եմ ու վազում՝ հարբած երջանկությունից, հարբած բալի հոտով: Կանգ եմ առնում միայն մեր տան դրան առջև, որպեսզի մտածեմ, թե ի՞նչ պիտի ասեմ, երբ հարցնեն աշխատավարձիս մասին: Հետո թափ եմ տալիս ձեռքս: Կճարեմ մի տեղից, կամաց-կամաց կտամ: Ասենք՝ ֆելիեսոնիս համար հոնորար էլ եմ ստանալու: Տեսնես

ինչքա՞ն փող կտան: Էխ, փող, փող, որքան ես ինձ պետք: Այնինչ մարդիկ կան, որ գլուխները տմբտմբացնելով, ծանր-ծանր ասում են. «Փողն ի՞նչ է, ջանըմ, փողը հող է» կամ էլ թե չէ. «Փողը ձեռքի կեղտ է»: Սուտ է, զարշելի, կեղծավոր սուտ: Այդպես կարող են ասել միայն նրանք, ովքեր փող շատ ունեն, ովքեր հենց այնպես, առանց աշխատելու են փողի տեր դառնում և դողում են վրան, ովքեր վախենում են, թե դու նրանցից փող կուզես, ովքեր չեն հասկանում, որ փողով կարելի է մի քիչ երշանկացնել մարդկանց ու հենց դրանով էլ երշանիկ լինել նաև:

Շանոթացեք, Մերոնք Են

Մինչև շրջկոմի շենքը մտնելը, ես քիչ հեռու կանգնած, ուշադիր շուրջս եմ նայում, ին կուսշրջկոմից որևէ մեկը չի տեսնում, որ կրկին հեծանիվով եմ աշխատանքի եկել: Այսինքն, ով ուզում է տեսնի, բացի շրջկոմի քարտուղարի օգնական Բելա Գրիգորենայից: Չգիտեմ ինչու, նա ինձ տանել չի կարողանում, հատկապես եթք հեծանիվով եմ լինում: Աչքերից կրակ է ցայտում, դողում է ողջ մարմնով.

- Դու... դու շրջկոմի աշխատո՞ղ ես, թե կրկեսի արտիստ,- հետում է նա,- գիտե՞ս, որ դրանով ստվեր ես գցում ողջ շրջկոմի վրա: Ի՞նչ կմտածեն կոմերիտականները, ի՞նչ կմտածեն պիոներները, ի՞նչ կմտածեն պիոներ ջոկատավարները: Կարո՞ղ ես ստիպել, որ նրանք հարգեն քեզ: Եր-բեք: Ինձ համար շատ դժվար է նրան պատասխանելը, որովհետև Բելա Գրիգորենան ոռուսերեն է խոսում, իսկ ես ոռուսերեն լավ չգիտեմ: Ճիշտ է, նա էլ առանձնապես չգիտի, աղավաղում է խոսքերը, օգտագործում է նաև հայերեն բառեր և շեշտերը միշտ սխալ է դնում, բայց չի ամաչում դրանից, արագ-արագ խոսում է, իսկ ես ամաչում եմ: Միայն մի անգամ համբերությունից դուրս եկա, չդիմացա այլս.

- Բելա Գրիգորենա,- ասացի,- ախր սրա մեջ ի՞նչ ամոթալի բան կա: Ամբողջ աշխարհում հեծանիվով են շրջում: Տուլայում, օրինակ, ծեր թե մանուկ հեծանիվ է քշում: Ի՞նչ կա որ...

- Կապիտալիստական երկիրը մեզ համար օրինակ չէ,- կտրեց Բելա Գրիգորենան:

Բայց այսօր քարտուղարի օգնականը չի երևում: Բացում եմ դուռը, ներս եմ տանում հեծանիվս և արագորեն ուղղվում դեպի շենքի քարապանուհու՝ մորաքույր Պաշայի, խցիկը.

- Պաշա մորաքույր...

- Կիտեմ, կիտեմ,- ծիծաղում է ծեր կինը,- տող էստեխս, Բելա Գրիգորենա չտեսնել:

Կոմերիտմիուրյան շրջկոմի մեր սենյակներում ոչ ոք չկա: Դեռևս չեն եկել: Նեռվից նայում եմ իմ գրասեղանին, որը կարծես փոքրիկ պիոներական անկյուն լինի: Վերևում քաղաքի պիոներական խորհուրդի փոխանցիկ դրոշն է փակցված, որ իմ աշխատանքի գնահատականը չէ, այլ ինձ ժառանգություն է մնացել իմ նախորդից: Իսկ դրոշի ներքևում փակցված երկու պատվոզքերն արդեն ես եմ ստացել: Պիոներ դպրոցականների գարնանային սպարտակիադայում մեր շրջանը առաջին տեղն էր գրավել և երկրորդ տեղը՝ մետաղի շարդկածք հավաքելու գործում: Սեղանի վրա Կրեմլի մակետ-թանաքամանն է՝ Թրիլիսիի պիոների պատվիրակության նվերը:

Շատ եմ սիրում իմ աշխատանքը, դա էլ ինձ իմ նախորդից է մնացել, քաղաքի հնագույն պիոներ աշխատող ընկեր Լիզայից: Հինգ տարի նրա մոտ արտահաստիքային հրահանգիչ ենել և չեմ տեսել ուրիշ մեկին, որ այդքան ջերմեռանդորեն սիրի իր աշխատանքը: Պիոներական գործում շատ բաներ ամեն տարի կրկնվում են, մասնավորապես հավաքների ձևը, սակայն ամեն անգամ ընկեր Լիզան այնպես էր հուզվում, այնպես էր ալեկոծվում,

կարծես նորելուկ էր, կարծես առաջին հավաքն էր անցկացնում: Միշտ և ամենուրեք կարմիր վզկապով էր, և վայ այն ջոկատավարին, ով առանց վզկապի ներկայանար նրան:

- Ես քեզ չեմ ճանաչում,- ասում էր նա,- ես այդպիսի ջոկատավար չունեմ:

- Դու, սիրելիս,- ասում էր մեկ ուրիշ պիոների,- եղբորդ ես նմանվել՝ Վահանին, թափթփված ես, այնինչ ավելի լավ կլիներ, եթե քրոջ՝ Շուշանին նմանվեիր:

Բոլորին ճանաչում էր: Ճանաչում էր ոչ միայն պիոներներին, այլև նրանց եղբայրներին ու քույրերին, ծնողներին և քեռիներին: Գիտեր ով որտեղ է աշխատում, ինչով կարող է օգտակար լինել պիոներական աշխատանքներին, շեֆական ինչ աջակցություն կարող է ցույց տալ դպրոցներին: Փողոցով անցնում էր հպարտ գլուխն անընդհատ շարժելով, որովհետև ամեն կողմից լավում էր.

- Բարև ձեզ, ընկեր Լիզա:

- Ընկեր Լիզա, բարև ձեզ:

Ամբողջ քաղաքը բարևում էր նրան, բոլորը նրա պիոներներն էին, կամ պիոներներն էին եղել: Վախենում էին նրանից ու հարգում անսահման: Շատ պահանջկոտ էր ու խիստ, և ինձ թվում էր, թե չափից ավելի է խիստ, թե նույնիսկ չոր է: Հետո, մի օր միայն զգացի, որ նա պարզապես դժբախտ մարդ է, դա այն օրն էր, երբ նրանից ընդունում էի գործերը:

Ինչ որ պատասխանատու մեկն ասել էր, թե նրա տարիքը վաղուց պիոներական աշխատողի տարիք չէ, և ընկեր Լիզային առաջարկել էին արհմիութենական աշխատանք: Երեկոյան շրջկոմում միայն ես և նա էինք: Ընկճած ու մոայլ բացում էր գգրոցները, ինչ-որ թղթապանակներ հանում, կարդում թերթ առ թերթ, երբեմն մոռանում էր իմ ներկայությունը, այնպես էր տարվում որևէ թղթով կամ լուսանկարով, որ ժպտում էր հանկարծ, ծիծաղում էր բարձրածայն, ձեռքը սեղանին էր խփում ու փակում աչքերը: Ի՞նչ իմանաս, ո՞ւմ էր տեսնում, ո՞ւմ էր հիշում: Ի՞նչ իմանաս: Հետո մոայլկում էր նորից ու մի նոր թղթապանակ հանում:

Մաքուր, խնամքով դասավորեց ամեն ինչ, իր անձնական գրքերը, նամակները, պատվոգրերը, լուսանկարները կապոց արեց, չորս կողմից փաթաթեց թելով ու ոտքի կանգնեց: Նորից թերթեց, նայեց զգրոցները. որևէ բան հո չի մոռացել: Ու հանկարծ տեսավ իր վզկապը՝ կարմիր վզկապը, որի երկար ծայրը սեղանին էր ընկել: Չուղովեց այլևս. հենց այդպես էլ կոացավ, դանդաղորեն քանդեց հանգույցը, վզկապը հանեց պարանոցից, աչքերին տարավ ու ավերվեց աթոռին:

Ընկեր Լիզան լաց էր լինում: Շփոթվել էի, չգիտեի ինչ անել: Հեռանա՞լ, թե՞ ինչ-որ բան ասել: Բայց ի՞նչ, ի՞նչ ասել: Մի տեսակ ինձ էի մեղավոր զգում նրա առջև: Մոտեցա, ուզեցի շոյել ուսը, նրա կարձ խուզած մազերը ցնցվում էին մանրիկ, ու այդ մազերի մեջ արդեն շատ էր սպիտակը:

- Ընկեր Լիզա:

Նա չբարձրացրեց գլուխը, բայց խոսեց, շարունակելով հեծկլտալ, խոսեց կծկուր,
տառապանքով, ասես ոչ թե շրջկոմից, այլ աշխարհից էր հեռանում:

- Ես... լաց չեմ լինում, հենց այնպես... ի՞նչ պիտի անեմ... ախր ոչ ոք չունեմ աշխարհի մեջ... ոչ
ոք: Իմ երեխաները... իմ կյանքը... իմ պիոներները...
- Նրանք միշտ ել ձեզ հետ կլինեն, ընկեր Լիզա,- ասացի ես սրտանց,- դուք ել գիտեք, չե, որ
նրանք ձեզ, որ մենք ձեզ շատ ենք սիրում: Եվ եթե թույլ տաք, որ դժվարանալու դեպքում ձեր
օգնությունը խնդրեմ... Ախր ես շատ բան չեմ հասկանում...

Ես շատ էի ուզում, որ նա դժբախտ զզա իրեն, կռահում էի, որ նա միայն իր սիրած
աշխատանքի համար չի լալիս: Եվ հետո հասկացա: Նա ծերանալուց էր վախենում: Ինչպես
հերիարի այն պատանին, որ ժամանակից դուրս ապրելուց հետո հայրենի տուն է դառնում ու
ծերանում է միանգամից: Ընկեր Լիզան էլ այդ ծերանալուց էր սարսափում, քանի որ գիտեք՝
վզկապը կորցնելու հետ իր խարուսիկ պատրանքային ջահելությունն էլ է կորցնելու
անվերադարձ, և երևակող լուսանկարի պես արագորեն տեսանելի է դառնալու իր հոգնած,
խորշումած դեմքը՝ առանց մանկական ծիծաղկուտ դնշիկների, առանց շեփորների ու
թմբուկների, առանց զվարք աղմուկի և կարմիր, մետաքս վզկապների...

- Ողջուն, ինձ զանգ չե՞ն տվել,- լսվում է մի բամբ ձայն:

Պարթևն է հարցնում, մեր կազմիրահանգչական բաժնի վարիչը, որի հետ միևնույն սենյակում
ենք նստում: Այդ անունը նրան ասես ծաղրելու համար են տվել: Նուրք, նիհար տղա է, այնքան
փիրուն, որ նույնիսկ չես հավատում, թե այդ բամբ ձայն է նրանից է դուրս զալիս: Հազնվում է
մեծ ճաշակով և չտեսնված թախնդրությամբ, որով, հասկանալիորեն իմ նախանձն է գրգռում:
Տարբատի գծերն ասես պողպատից լինեն, երբեք չեն ծովում, վերնաշապիկն այնքան ձերմակ է,
որ ուզում ես մատիտով խզրգել վրան, փողկապը բարակ հանգույցով խեղդում է կոկորդը: Նա
մեր աշխատողներից միակն է, որ գրելու ժամանակ թևնոցներ է կրում և նախքան հեռախոսով
խոսելը, թաշկինակով խնամքով սրբում է լսափողը: Շատ անկեղծ, սրտաբաց ընկեր է,
չտեսնված ունկնդիր, որևէ սրամտության վրա այնպես է քրքջում իր բամբ ձայնով, այնպես
սրտանց է ուրախանում, որ ուզում ես էի, ինչ-որ սրամիտ բան ասել, թեկուզ հնարել, միայն
թե ծիծաղի նա: Ամիսը երկու անգամ, աշխատավարձի օրերին, մենք հերթով միմյանց
ուստորան ենք հրավիրում: Երեկ հերթը իմն էր, և մենք հրաշալի մի ժամ անցկացրինք
աշխատանքից հետո: Ես նրան պատմում էի, թե ինչպես եմ ամառային արձակուրդների
ժամանակ երկու ամիս աշխատել պահածոների գործարանում որպես բեռնակիր: Իսկ երբ
ծիծաղելի մանրամասներով նկարագրեցի, որ առաջին օրը մի քանի պարկ տեղափոխելուց
հետո երեկոյան ժամադրության եմ գնացել, և Նանարը կարծել է թե հարբած եմ, Պարթևը քիչ
մնաց ուշաթափվեր:

- Օրորվո՞ւմ էիր,- հարցրեց նա խեղդվելով:
- Չե, չի կարողանում, կախվել էի խեղճի ուսերից,- պատասխանեցի ես:

Պարթևը երկար ծիծաղում էր, հետո հետաքրքրվեց.

- Ուրեմն այդքան ծա՞նը է աշխատանքը:

- Հեշտ չէ,- ասացի ես,- սակայն ծանրը ինձ համար էր, մյուսները՝ մշտական բանվորները, սովորով էին պարկերը տեղափոխում: Սովորել էին: Հետո ես ել սովորեցի: Միայն վատն այն է, որ բաժանմունքի վարչը խարում էր բանվորներին, աշխատավարձը քիչ էր նշանակում, որպեսզի տնտեսման հաշվին ինքը պարզ ասունա: Իսկ նրանք չէին հասկանում այդ: Մի քանի անգամ համոզեցի բողոքել, բայց հրաժարվեցին, վախենում էին, թե վարիչը կրշնամանա հետները: Ի վերջո ինքս դիմեցի կուսյուրոյի քարտուղարին, ու նրա միջոցով կարգավորվեց խնդիրը: Պատկերացն ում ես, եթիւ հաջորդ ամսին մեր տղերքը բոլորն էլ բարձր աշխատավարձ ստացան, ինձանից պոկ չէին գալիս, խնդրում, համոզում էին չհեռանալ բրիգադից: «Ախպոր պես,- ասում էր բրիգադիր Գասպարը,- մնա, էլի, համալսարանն ի՞նչ ես անում, որ ավարտես, էսքան ստանալու ես, որ...»:

Պարթևը ծիծաղում էր արցունքու աչքերով, ձայնը դրմբդրմբում էր ռեստորանում: Իսկապես, շատ լավ, շատ անկերծ տղա է...

- Չէ, Պարթև ջան,- ասում եմ,- ոչ ոք զանգ չի տվել:

- Զարմանալի քան է,- ուսերը թոթվում է Պարթևը, հանելով ձյունայրուր թաշկինակն ու մոտեցնելով լսափողին: - Կարի ֆաբրիկայից պետք է զանգ տային, նրանց հարցը լսելու ենք բյուրոյում:

Դժվարին է Պարթևի աշխատանքը, ավելի շուտ՝ շատ է միապաղադ, անդամավճարների ձևերն է հավաքում, բյուրոներն ու պլենումներն է նախապատրաստում, շրջկոմի բյուրոյի որոշումներն են քննության դնում կազմակերպություններում...

- Մի տարի է, ինչ աշխատում եմ, բայց կազմակերպություններ կան, որտեղ դեռևս չեմ եղել,- վշտանում է նա,- եթե ինձ հեռացնեն, իրավացի չե՞ն լինի, դե, ասա:

Աշխատում է ողջ օրը, առանց մեջքը շտկելու, աշխատում է այնպես խանդակառած, ասես ստեղծագործում է: Համոզված է, որ բարդ ու պատասխանատու գործ է հանձնարարված իրեն և ամեն կերպ ձգուում է արդարացնել դեկավարության վստահությունը: Միայն իր նկատմամբ չէ այդպես պահանջկոտ: Յուրաքանչյուր հանձնարարության մեջ նա շատ ավելի մեծ քան է տեսնում, քան կա իրականում: Սկզբում կարծում էի, թե կատակում է միայն, եթիւ չափից դուրս լրջությամբ էր մեկին հանձնարարություն տալիս, հետո հասկացա, որ՝ չէ, որ նրա խառնվածքն է այդպիսին:

Ասենք թե շրջկոմը ինչ-ոք հավաք է կազմակերպել ու հարկավոր է հրավիրատումսերը հիմնարկներին ուղարկել: Ցրիչ շունենք: Մնում է այս կամ այն գործով շրջկոմ եկած կոմերիտականներից մի քանիսին խնդրել, որպեսզի բաժաննեն հրավիրատումսերը: Մեկ ուրիշը հենց այդպես էլ կվարվի: Իսկ Պարթևը՝ չէ: Նա սկսում է անհանգստանալ, մտահոգվել, կնճռոտում է ձակառը, ուշադիր զննում շրջկոմ եկած տղաներին և, վերջապես նրանցից մեկին ընտրելով, մեր սենյակն է հրավիրում:

- Կոմերիտակա՞ն ես,- հարցնում է մի փոքր խստությամբ:

- Այո,- ասում է տղան՝ ակամա ձգվելով:

Պարթևը երկար լուս է, շարունակելով դիտել արդեն շփոթվել սկսող պատանուն ու ասում է կամացուկ, խորհրդավորությամբ:

- Մի այսպիսի կարևոր գործ կա: Եվ ես կարծում եմ, թե դու այն կարող ես կատարել: - Լուս է կրկին: - Տեսն ՞ մ ես այս ծրաբները: Սրանցից մեկը պետք է հասնի ակադեմիա, իսկ մյուսը՝ համալսարան: Ծրաբների վրա գրված են ազգանունները: Անձամբ կհանձնես նրանց, ուրիշ ոչ ոքի: Հասկանո՞ մ ես: Կարո՞ դ ես կատարել այս հանձնարարությունը: Եթե ոչ՝ անկեղծորեն ասա:

- Կարող եմ, ընկեր Պարթև, հուզված ասում է պատանին:

Պարթևը բարձրանում է տեղից, հանդիսավորությամբ մեկնում ու սեղմում է կոմերիտականի ձեռքը:

- Դե, ուրեմն, հաջողություն քեզ, ընկեր:

Եվ այդ խոսքերն այնքան ջերմությամբ է ասում, պատանու նկատմամբ այնքան հոգածությամբ, ասես նրան ոչ թե ակադեմիա, այլ առնվազն թշնամու թիկունք է ուղարկում: Իսկ տղան այնպիսի ոգևորությամբ է դուրս թռչում շրջկոմից, որ համոզված եմ, կյանքը կտա, բայց հրավիրատումներով լեցուն այդ ծրաբները տեղ կհասցնի, ու երեկոյան, սենյակում փակված, բազմակետերով կզրի իր օրագրում «երեք հինգ հազար իննը հարյուր հինգ... շրջկոմ... ծրաբներ կարենր... ակադեմիա... համալսարան... առաջադրանքը կատարված է»:

Ինձ միշտ թվում է, թե նման հանձնարարություն տալուց հետո Պարթևը շրջվելու է իմ կողմն ու քրքջալու է բամբ ձայնով, ասելու է, «Լավ էր, չէ՞»: Բայց նա չի շրջվում, այլ շարունակում է աշխատել խորասուզված ու կենտրոնացած, ինչպես հիմա: Մի պահ նրան կտրում եմ գործից:

- Պարթև,- ասում եմ ես, - Գրիբոյեդովի անվան դպրոց եմ գնում՝ պիոներական հավաքույթի, եթե պետք լինեմ որևէ մեկին, թող զանգահարեն այնտեղ:

- Երանի քեզ,- ասում է Պարթևը:

Միջանցքով անցնելիս նկատում եմ, որ մեր երկրորդ քարտուղարի կաշեպատ դուռը կիսաբաց է: Ուրեմն եկել է Մեսրոպը: Գրաց կզամ, որ հիմա դարձյալ գործարան, իր ընկերներին է զանգահարում: Դե, իհարկե:

- Կատյա, Կատյա ջան, Մեսրոպն է, դե ոչինչ, կլի: ԼԿԵՄ կոմիտե միացրու, հա՞: Ի՞նչ, չե՞ն եկել: Այսինքն ինչպես ս թե չեն եկել: Ժամը քանիսն է: Հա... բաժանմունքն ում են: Դե այնտեղ միացրու, քուր ջան:

Մեսրոպը սպասում է, և ես առիթից օգտվելով, կիսաբաց դրան արանքից բարեւում եմ նրան: Նա բարձրացնում է ձախ ձեռքը, ժպտուն աշքերով ինձ է նայում, սակայն համոզված եմ, որ այդ ժպիտը ինձ չի հասցեազրված:

- Վարպետ Սարո, Մեսրոպն է, բարև: Ո՞նց եք, է, ոնց, վարպետ Սարո: Ոչինչ, կի, ախալքը ջան: Ի՞նչ, հոսանքը բաց եք թռողնո՞ւմ: Ե՞րբ հասցրիք: Ժամը քանի՞ն է: Կզամ, ոնց չեմ զա: Տղերքին բոլորին բարևիր ու շնորհավորիր: Կզամ, ոնց չեմ զա...

Արդեն վեց ամիս կլինի, ինչ մեր շրջկոմի պլենումը Մեսրոպին ընտրել է երկրորդ քարտուղար: Նման բան հազվադեպ է պատահում, քանի որ Մեսրոպը մեր շրջանի կոմերիտական աշխատողներից չի եղել: Մինչ այդ նա այլ շրջանում գտնվող հաստոցաշխնական գործարանի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղարն էր: Բայց նրան ճանաչում են ողջ քաղաքում և սիրում են: Արհեստագործական ուսումնարանն ավարտելուց հետո աշխատանքի է անցել գործարանում որպես խառատ և ընդամենը մեկ տարվա ընթացքում դարձել քաղաքի գերարագ ձևով աշխատող լավագույն խառատներից մեկը: Հեռակա կարգով, ընդամենը երկու տարում, ավարտել է պոլիտեխնիկական ինստիտուտը և նշանակվել իր իսկ արտադրամասի պետ: Բայց չի հասցրել աշխատել գոնե մի քանի ամիս: Գործարանի կոմերիտականները նրան ընտրել են ԼԿԵՄ կոմիտեի ազատված քարտուղար: Այնտեղից կ մերոնք են խլել նրան՝ հարցը մինչև Կենտկոմ հասցնելով, խնդրելով ու պահանջելով: Չտեսնված կազմակերպիչ է և պրոպագանդիստ, շատ լավ է աշխատում: Նրանից բոլորն էլ գոհ են... Բացի իրենից: Անընդհատ ու անընդհատ իր գործարանի հոգսերով է ապրում, ամեն առավոտ, այ այսպես զանգահարում է այնտեղ ու հետաքրքրվում բոլոր նորություններով: Բոլոր ելույթները սկսում է միշտ նույն խոսքերով. «Մեր՝ այսինքն հաստոցաշխնական գործարանում, երբ այսպիսի հարց էր քննարկվում...»: Բարեխիղճ և տաղանդավոր մարդ լինելով, նա հիանալի է կատարում շրջկոմի երկրորդ քարտուղարի պարտականությունները, բայց... բայց նրա սիրտը գործարանում է: Եվ համարյա ամեն ամիս, երբ նոր դիմումը ձեռքին առաջին քարտուղար Սարգսյանի առանձնասենյակն է մտնում, ես ակամա հիշում եմ ին, հավիտենական մի հեքիար: Ուռկանն ընկած ուսկե ձկնիկի պես նա իր դիմումով խնդրում է առաջին քարտուղարին.

Թող ինձ, թող ծերուկ, թող ինձ անվտանգ...

Եվ ամեն անգամ սպասում է, թե Սարգսյանը հաշվի կառնի նրա ապրումները և հանդես կգա հեքիարի հետևյալ խոսքերով:

Գնա քեզ համար դու ծիրանի ծով

Ու այնտեղ ապրի սրտիդ ուզածով:

Բայց ծերունին, այսինքն՝ ներկա դեպքում ընկեր Սարգսյանը, նման խոսքեր չի ասում, այլ հոգնած դեմքով, ու երեխայի պես շիկնելով, Մեսրոպի ձեռքից վերցնում է դիմումը և ինքնահոսով շեղակիորեն մակագրում. «Թողնել անհետևանք, մենք ավելի լավ գիտենք, թե դուք որտեղ եք անհրաժեշտ»:

Գրում է, բայց հաստատ գիտեմ, որ եթե իրեն մնար, այդպես չէր զրի: Նրա այդ մակագրության հիմքը դարակում է գտնվում և պատկանում է քաղկոմի առաջին քարտուղարին: Կարո Բարձամյանը այդպես է պատասխանել Մեսրոպի առաջին դիմումին և Սարգսյանն էլ ամեն անգամ կրկնում է նրան՝ երեխայի պես շիկնելով, ու շփոթահար ժպիտով ասում է Մեսրոպին.

- Քաղաքական ուսուցման տարին փակվելու է շուտով, ընկեր Մեսրոպ, ամփոփենք, հետո մի բան կմտածենք:

Երկուսն էլ իրաշալիորեն հասկանում են իրար, և որովհետև ազնիվ մարդիկ են՝ ամաչում են իրարից: Երկար ժամանակ մտածում էի, թե իր գործը լավ իմացող, կոմերիտական աշխատանքի հարուստ փորձի տեր, երիտասարդության շրջանում մեծ հեղինակություն վայելող ընկեր Սարգսյանն ինչո՞ւ է մի տեսակ ընկճված, անհամարձակ, ինչո՞ւ է ամեն մի դատարկ բանի համար քաղկոմից թույլտվություն խնդրում, ցնցված ոտքի կանգնում, եթք Բադամյանը զանգահարում է նրան: Ինչի՞ց է վախենում: Անվանական թռչակառու է եղել գերազանցության դիպլոմով ավարտել է համալսարանը, խնդրել են ասպիրանտուրայում մնալ, բայց ինքը գերադասել է աշխատել առայժմ և լավ էլ աշխատում է: Ուրեմն էլ ինչո՞ւ է վախենում և ինչի՞ց: Եվ դրա գաղտնիքը Պարթևը ասաց մի օր, ուստորանում, մի քիչ հարքած ժամանակ: Ծիծաղեց իր բամբ ձայնով, ետ ընկավ աթորին ու ասաց.

- Բա... այդ էր պակաս, որ չվախենար: Ուրեմն չգիտե՞ս, որ նրա հայրը ծանր քրեական հանցագործ է:

- Ի՞նչ ես ասում,- ապշեցի ես,- մա՞րդ է սպանել:

Պարթևը քրքաց.

- Ուրեմն միայն մարդասպա՞նն է քրեական հանցագործ: Չէ, Մեր Սարգսյանի հայրը հաշվապահ է եղել, կապվել է հիմնարկի պետի և էլի մի քանի աշխատողների հետ ու պետական խոշոր գումար է յուրացրել: Բոլորին էլ բռնել են ու տասը-տասը տարի ազատազրկել:

Ինչ-որ մի բան դարձյալ չհասկացած:

- Լավ, տղա՞ն ինչ մեղք ունի, ին նա էլ այդ խմբի մեջ չի՞ եղել,- տարակուսեցի ես:

- Իսկ նա որպես կոմունիստ, որպես շրջկոմի քարտուղար ինչպե՞ս է հանդուրժել այդ: Ինչպե՞ս է նույն տան մեջ ապրել քրեական հանցագործի հետ,- բարկացավ Պարթևը: Նրա փոքրիկ մարմինը ցնցվում էր անկեղծ զայրույթից: - Որտե՞ղ է եղել նրա զգնությունը, ինչո՞ւ առաջինը ինքը չի մերկացրել իր հորը և տեղյակ պահել օրգաններին: Ի՞նչ գուցէ չգիտե՞ք, դա ոչ մի նշանակություն չունի, նա պարտավոր էր իմանալ, հետաքրքրվել: Պավլիկ Մորոզովի մասի՞ն էլ չգիտեր, Գրիշա Հակոբյանի մասի՞ն էլ չգիտեր... Նրանք ընդամենը պիոներներ էին, սակայն կյանքի գնով մերկացնում էին իրենց ծնողներին, հարազատներին...

Ակամա սարսափով մտածեցի հորս մասին: Ախր չէ՞ որ ես էլ եմ կոմունիստ, բայց ես էլ երբեք չեմ հետաքրքրվել, գուցե նա՞ էլ... Չէ, հայրս... Մի պահ աչքերիս առջև հայտնվեց նա, բարի, հոգնած դիմագծերով, տարիներ շարունակ երկարով երկարի դեմ կովելուց քարացած, կոշտուկապատ ձեռքերով, կտրված մատով, որի վերքը մինչև հիմա ճաքում ու կսկծում է ցրտից... Այդ ծանր, բարե ձեռքերը: Փոքր հասակում, բարկության պահին ծեծել էի մեր բակում ապրող, երես առած մի տղայի: Նրա մայրը գործարանում բողոքել էր հորս, ասել էր, որ բոլորն էլ ծեծում են իր որդուն, որովհետև նա որք է, որովհետև հայրն այստեղ չէ, այլ կռվում է ուսումնակատում: Եվ կյանքում առաջին անգամ հայրս խփեց ինձ, և կյանքում առաջին

անգամ ես համոզվեցի, որ երբ ամուր խփում են՝ աչքերից խսկապես որ կայծեր են թռչում: Ցավը շատ մեծ էր, դրա համար կլ նայելով նրան մշուշված աչքերով, լացիս միջից պողոթկացի.

- Ախր, հայրիկ շան, նա էլ ամեն օր քանդում է իմ սարքած տունը: Հո ես քեզ չէի ասում: Ախր, հայրիկ շան, դու էլ առանց հարցնելու խփում ես քո էդ... բանվորական ձեռքերով...

Ու հանկարծ հայրս ծիծաղեց քահ-քահ, ծիծաղեց երկար, արցունքութելով աչքերն ու ասաց ինձ մեղմացած ու մի քիչ էլ երևի զղզալով, ասաց՝ զվարթ նայելով իր կլոր, կոշտացած ձեռքերին.

- Դե, իմ ձեռքերն էլ սրանք են, տղա շան, ես որտեղի՞ց քեզ համար ինտելիգենտի ձեռքեր ճարեմ, այ բալամ...

Չէ, իմ հայրը չի կարող հանցագործ լինել, անհնարին է, իսկ եթե... իսկ եթե անի էլ ինչ-որ բան, ուրեմն պետք էր անել այդ ինչ-որ բանը:

- Երկու տարի առաջ ես քաղկոմում հրահանգիչ էի աշխատում, երբ բյուրոն քննեց Սարգսյանի հարցը: - Շարունակում էր Պարթևը: - Մի տեսնեիր ինչ օրն էին զցել: Բոլորը պահանջում էին հեռացնել նրան կուսակցությունից ու աշխատանքից: Եվ զիտե՞ս ով պաշտպանեց նրան: Բաղամյանը: «Ես կարծում եմ, - ասաց նա, - որ մենք այդքան խիստ չենք վերաբերվի Սարգսյանի նկատմամբ և նրան թույլ կտաք շարունակելու աշխատանքը, եթե նա այստեղ, հրապարակայնորեն հրաժարվի իր հորից»:

- Իսկ նա՞... - սոսկացի ես:

- Լաց եղավ, - ծիծաղեց Պարթևը: - իսկ եետո, երբ Բաղամյանը ուղակիորեն հարցրեց՝ հրաժարվո՞ւմ ես, ասա, լուր գլխով արեց ու ձեռքով դեմքը ծածկած դուրս փախավ սենյակից: Տեսնեիր, թե ոնց էին հոհոում բյուրոյում: Բա՞: Իսկ զիտե՞ս ո, թե Բաղամյանն ինչո՞ւ պաշտպանեց Սարգսյանին: Դե, ասա, ընկեր ապագա ժուռնալիստ: Չէ՞ որ ինքն էր հարցը բյուրո մտցրել:

- Այդտեղ չհասկանալու ի՞նչ կա: Գուցե խղճացել է, գուցե իսկապես մտածել է, որ չարժե այդքան խիստ լինել:

Պարթևը հեգնորեն ժպտաց.

- Զհավատաս: Որպեսզի Սարգսյանը այ այսպես միշտ վախենա նրանից: Հասկացա՞ր: Որպեսզի միշտ պարտքի տակ լինի ու վախենա, անընդհատ մտածի, որ Բարամյանը երբ էլ ուզենա, կարող է իրեն հեռացնել աշխատանքից: Ու քանի որ մեր Սարգսյանը իր բնավորությամբ իսկապես մի քիչ թույլ է... դրա համար կլ կծկվում է Բաղամյանի առջև: Հասկացա՞ր: Ու ես քեզ որպես զաղտնիք կասեմ... Մեր մեջ... Սարգսյանն ինձնից ել է վախենում: Բա՞,- Պարթևը ծիծաղեց թույլ-թույլ, հարբած: - Չե՞ս նկատել, թե ինչքան քնքուշ է խոսում հետս...

- Դե, արդեն չափն անցար, - ծիծաղեցի նաև ես, - քեզնի՞ց ինչու պետք է վախենա: Եթե մարդը բարեկիրթ է ու համեստ, ուրեմն վախկո՞ւն է:

Նա ինձ հետ էլ է այդպես խոսում: Ինչ է, ինձնի՞ց էլ է վախենում:

- Քեզնի՞ց՝ չգիտեմ, բայց ինձնից վախենում է: Եվ գիտե՞ս ինչու, մի անգամ տեսա բանտի մոտ, հորը ուտելիք էր տանում: Բաա : Այնինչ բյուրոյում հրաժարվել է նրանից: Եթե ես չհարգեի նրան ու ազնիվ մարդ չլինեի...

Թերես ես էլ շատ էի խմել, պտտվում եր գլուխս, սրտախառնուք էի զգում: Ինչե՞ր ասես չեմ լսում: Դե եկ ու իմացիր, թե ով է ճիշտը, ով է իսկական ազնիվը: Մի օր մեկն է աչքի ազնիվ թվում, մյուս օրը՝ մյուսը, մեկի պատմածով մեկ ուրիշի արարքը ազնիվ է երևում, մյուսի պատմածով՝ անազնիվ: Ի՞նչ իմանաս: Որին լսում ես, նա ազնիվ է թվում: Ինչպե՞ս կողմնորոշվես, ո՞ւմ հավատաս: Երևի բոլորն ել ազնիվ են, բայց իրաք չեն հասկանում: Հենց այդպես ել կլինի: Հենց այդպես ել կլինի:

ՍԱ ԶՐԻ ՑՐԱՉՔ ԴԵՂՃՐ

Շրջկոմի շենքից դուրս գալով, բարձրանում եմ Արովյանով: Փողոցի երկու կողմում բացված առուները իրենց տարերքի մեջ են: Գարնան անձրևներից լցվել, բարձրացել տեղ-տեղ նույնիսկ մայթերով են անցնում: Այնպես են քրքչում ասես լեռնային վտակներ լինեն, ավելի շուտ նախանձից իրենց լեռնային վտակներ են երևակայում: Բայց պարզություն չկա, վճռություն չկա այս քաղաքային գիծ առուներում: Հոսում են սև, պղտոր, փոշով ծածկված: Ինչեր ասես չեն բերում իրենց հետ. որտեղից են գտնում, բերում, չեմ հասկանում: Էլ փայտի կտորներ, էլ ձյուղեր, էլ փալասներ, էլ պատառոտված կրկնակոշիկներ, էլ կարտոֆիլներ ու հացի կտորներ...

Հացի կտորներ: Իսկ այն ժամանակ միայն սևացած վիրակապեր էին հոսում այդ առուներով և մեկ էլ, մեկ էլ մի դեղձ, մի խսկական մի հրաշալի դեղձ, որ ես տեսա: Կարմիր այսով դեղձ էր, գլորվելով, թոշկոտելով գալիս էր իմ դիմացից, ասես հրաշք լիներ սև ջրի վրա հայտնված: Ես կանգնել, քարացել էի հիացմունքից ու զարմանքից, իսկ նա հենց այդպես էլ թոշկոտելով ու զիսկոնծի տալով եկավ ու վազեց իմ կողքով Արովյանն ի վար: Հաջորդ վայրկյանին ես պոկվեցի քրոջ ձեռքից ու սալահատակով ներքև վազեցի ջրից էլ ուժեղ, դեղձից էլ արագ: Հասա ու անցա նրան, պազեցի մայթի եզրին, ձեռքս սև ջրի մեջ կախեցի ու սպասեցի: Եկավ խաբս տվեց, փախավ ձեռքիս տակից՝ կարծես ծաղրելով ինձ ու նորից ներքև ալացավ: Բայց ո՞ւ պիտի փախչեր: Վազեցի նորից, մինչև արմունկներս թքվեցի, բայց բռնեցի նրան հենց անկյունում, հանեցի ջրից: Ապշելու դեղձ էր: Նույնիսկ կծած էլ չեր: Մաքրեցի ձեռքով, հետո շորիս քսեցի ու փողոցով վեր՝ քրոջ մոտ վազեցի, որպեսզի կեսն էլ նրան տամ. Տես, ասացի, տես Եվգինե, խսկական դեղձ եմ բերել: Ուզեցի ցոյց տամ նրան, որ նա էլ ուրախանա ինձ հետ: Բայց Եվգինեն խփեց, ձեռքից ցած զցեց դեղձը ու պղտոր առուն կրկին տարավ նրան փողոցն ի վար խաղացնելով ու վեր-վեր նետելով: Ու փոխանակ ես լաց լինեի զայրույթից, ինքը քոյլու սկսեց տզզալ նախապես.

- Դու կեղտոտ դեղձը որ ուտես, հիվանդանաս, ես ի՞նչ պետք է ասեմ հայրիկին ու մայրիկին:
- Տո, հիմար, դեղձի մեջն էլ հո կեղտոտ չեր,- մղկտացի ես,- իսկ հիմա որ սոված մեռնեմ, ի՞նչ պիտի ասես հայրիկին ու մայրիկին:

Իմ հայրիկն ու մայրիկը հիմա կարծում են, թե մենք ապրում ենք առոք-փառոք՝ մեր և իրենց հացի ու մթերային քարտերով: Ու, ով գիտե, գուցե երանի են տալիս մեզ: Աշուն է, պատերազմի առաջին աշունը: Եղբայրներս ռազմաճակատում են: Բոլորը ռազմաճակատում են: Հաց չկա: Հայրս իր հերթական արձակուրդը վերցրել, գյուղ է գնացել մորս հետ, որպեսզի ծխախոտահավաքին մասնակցեն: Մի քանի աշխօր վաստակեն ու ձմեռվա պաշար բերեն մեզ համար: Եվ դրանից բացի. «Գոնե դուք մի ամիս կուշտ հաց կուտեք»- ասաց հայրս ինձ ու քրոջս, ու որովհետև Եվգինեն երկու տարով մեծ էր ինձանից, տասներկու տարեկան աղջիկ է, դրա համար էլ նրան ավագ կարգեց տանը: Եվ հիմա մենք՝ ես ու քոյլու, ձեռք-ձեռքի տված բարձրանում են Արովյանով, գնում ենք մեր մեծ քրոջ՝ Լուսիկի տուն, նրանից փոխարինաբար մի քիչ այսուր խնդրելու, մինչև որ հայրիկն ու մայրիկը գան: Ուրիշ ելք չունենք ապրելու: Մեծ դժբախտություն է պատահել մեզ, ինչպես մեր հարևանուհի մորաքոյլը Նազիկն է ասում, թող

թշնամին էլ չընկնի այդ օրը, որովհետև ես կորցրել եմ մեր ողջ ամսվա հացի, մթերային ու արդյունաբերական ապրանքների քարտերը:

Կորցրեցի, թե զողացան, մինչև հիմա էլ չեմ կարող ասել: Քարտերը հորս գործարանից պիտի ստանայի: Առավոտ շուտ գնացի գործարան: Այնտեղ ինձ ճանաչում էին, որովհետև բանվորներից շատերը մեր հարևաններն են, մի շենքում ենք ապրում: Օգնեցին, Մեր Պետրոսի տղան է՝ ասացին, անմիջապես առանց հերթի տվեցին քարտերը, մեծ-մեծ փայլուն թղթեր, որ ծալելով ծոցս դրեցի, բլուզիս տակ... Երբ դարպասից դուրս եկա, տրամվայ էր անցնում, չուզեցի ժամանակ կորցնել, վազեցի-վազեցի ու թռա սանդուղքին: Մի պահ վախեցած շոշափեցի կուրծքս, ճոճում էր, ուրեմն այնտեղ էին քարտերը: Մինչև Կնունյանցի անկյունը հասնելը շատերն իջան ու բարձրացան: Ես էլ մի քանի անգամ իջան ու բարձրացան ուրիշներին տեղ տալու համար: Իսկ երբ իջան վերջին անգամ, մեր կանգառում, ու ձեռքս կուրծքս տարա... Նախ զարմացա, որ ոչինչ ճռճռաց: Ու ինձ թվաց, թե մեծ բան չէ, որ չի ճռճռում: Հետո շունչս կտրվեց. ու ես սկսեցի տրորել կուրծքս, խելազարի պես բարձրացնել ու իջեցնել բլուզս, շոշափել ոտքերս, ձեռքերս, տարատիս գրպանները, նորից քաշեցի բլուզս ու անկախ ինձանցից, գորացի հուսահատորեն, արխոդորմ: Նկատելով, որ տրամվայն ուզում է շարժվել, այլս ոչինչ չհասկանալով, շմտածելով ոչինչ վազեցի ու ընկա տրամվայի առջև, գծերի մեջ: Ո՞նց կարող էր տրամվայն անցնել, ո՞նց կարող էր հեռանալ, ախր նա տանում էր իմ վերջին հույսը, մեր հացը, մեր կյանքը: Ուժգին ճնշոց լսվեց, ու մարդիկ շրջապատեցին ինձ, փորձում էին բարձրացնել, բայց ես ամուր կառչել էի գծին, ես այլս չէի ուզում ապրել, ես ուզում էի մեռնել:

- Շա՞ն ես, այ տղա,- գոռում էր գունատված վազոնավարը:

- Երևի ընկնավոր է,- արտասպում էր մի կին:

- Սպասեք, սպասեք, ես ճանաչում եմ սրան, ընկերոցս տղան է,-լսեցի մեր հարևան Հայրը քեռու ձայնը: - Ի՞նչ է պատահել, Արտակ ջան, ի՞նչ է պատահել, այ որդի:

Իսկ ես կարծում էի թե արդեն ասել եմ ամեն ինչ, թե բոլորը հասկացել են իմ դժբախտությունը: Բռնեցի Հայրո քեռու ոտքից ու վշտից խեղդվելով պատմեցի: Երևի ընկել են քարտերը, երևի հենց հիմա էլ վազոնում են, ոտքերի տակ, դեռ քիչ առաջ ճոճում էին ծոցին մեջ:

- Դե լավ, լավ, հիմա կստուգենք,- համոզում էր Հայրո քեռին՝ գծերի վրայից ինձ հանելով:

Իսկ երբ դուրս եկա, տրամվայն անցավ մեր կողքով, ու ամեն ինչ միանգամից ամայացավ, դատարկվեց աշխարհում Հայրո քեռին թևիցս ամուր բռնած ինձ քարշ էր տալիս Կնունյանցի փողոցով, խնդրելով ու բարկանալով: Ասում էր, որ ես արդեն տղամարդ եմ և պետք է կարողանամ դիմանալ կյանքի հարվածներին, ասում էր, որ ինքն իմ տարիքում արդեն աշխատում էր Բաքվի նավթահորերում ու ընտանիք էր պահում: Իսկ մեզ ի՞նչ է եղել, միթե՝ ինքը, հարևանները, գործարանը կթողնեն, որ վարպետ Պետրոսի երեխանները սոված մնան: Մեռա՞ծ են, ինչ է: Ինքը հենց վաղը գործարանում կկարգավորի ամեն ինչ, նոր քարտեր կտան: Բա ի՞նչ:

Ես արդեն լաց չեմ լինում, նվվում էի ձեմ համար ու խաղաղված երանությամբ լսում Հայրը քեռուն: Բայց երբ հասանք մեր շենքի մոտ ու տեսա մեր մուտքը, երբ Հայրո քեռին ինձ համոզեց վերև բարձրանալ, իսկ ինքը իրենց մուտքը մտավ, երբ մտածեցի, որ տեսնելու եմ մեր ընտանիքի ավագին՝ Եվգինե քրոջ, ու նա հարցնելու է, թե որտեղ են քարտերը, իրողության ահավորությունը նորից պաշարեց ինձ, ես անսահման մենակ էի ու թշվառ, դրա համար էլ հենվեցի Տիգրան աղբարենց կավաշեն տան պատին ու լաց եղա բարձրածայն:

Ինձ նորից շրջապատեցին, բայց այս անգամ մեր հարևանները: Խմանալով, թե ինչ է պատահել, սրտապնդում էին ու լաց էին լինում: Իսկ Նազիկ մորաքույրն ասաց. «Թող թշնամիս էլ չընկնի այդ օրը»: Լուրդ հավանաբար հասցրել էին քրոջ, որովհետև ես տեսա, թե ինչպես լաց լինելով ներքև է վազում սանդուղքով, ու ամորից, խղճահարությունից շրջեցի գլուխս: Բայց Ճիշտ են ասում երևի, որ փոքրիկ աղջիկն անգամ մայրական սիրու ունի կրծքի տակ: Իմ քույրիկը, ինձանից միայն երկու տարով մեծ իմ քույրիկը, բռնեց ձեռքս, տարավ ինձ հարևանների միջով, լաց լինելով և միաժամանակ խոսելով հպարտ, արժանապատվությամբ, անկախ, թշնամական հայացքներ գցելով շուրջը, խոսելով մեծավարի, զարմանալիորեն մորս նման, մորս ձայնով.

- Հիմար, ախապեր ջան, բա դրա համար լա՞ց կլինեն: Հո չե՞նք մեռնի: Գնանք, բա ամոր չի՞ , կանգնել ուրիշների մոտ լաց ես լինում: Բա քարտերի համար լա՞ց կլինեն: Ախապեր ջան:

Հետո տանը ես ու ինքը իրար հետ մի լավ լաց եղանք այդ քարտերի համար:

Երեկոյան հերթով եկան մեր հարևանները: Նազիկ մորաքույրը մի ափսե խաշած լորի բերեց՝ գոզնոցի տակ թաքցրած, Հասմիկ մորաքույրը երկու կարտոֆիլ, ներքեկի հարկի Հայաստան մորաքույրը մի ձու բերեց՝ ափի մեջ սեղմած, ու մի անձանոթ տատի էլ մի մեծ գդալ յուր: Անուններս էլ չզիտեր: Հարցրեց. երեխեք ջան, դուք ե՞ք հացի քարտերը կորցրել: Հա, ասացինք: Յուղը դրեց մի ափսեի մեջ, խաչեց ձեռքերը, լուր լաց եղավ մի քիչ ու զնաց: Թե ով էր այդպես էլ չիմացանք, ոչ ոք չէր ճանաչում նրան: Բոլորից վերջում հեռացավ Նազիկ մորաքույրը, բայց հեռանալուց առաջ ասաց, որ վաղը զնանք մեր մեծ քրոջ՝ Լուսիկենց տուն: Ճիշտ է, նա ձեր հարազատ քույրը չէ, ասաց Նազիկ մորաքույրը, բայց ձեր մորաքրոջ աղջիկն է, ձեր տանն է մեծացել և շատ բանով է պարտական ձեր ծնողներին: Հիմա նա, փառք աստծո, շատ լավ է ապրում: Մարդ ու կին աշխատում են: Այզի ունեն իրանց տան առջև, Նորքում, ու իսկի երեխա էլ չունեն: Այնպես որ զնացեք, ին օտար չի՞ , ջիզար է, արյուն է, որ իմանա ձեր դրույյունը՝ կօգնի:

Ճիշտ որ: Եվ ինչպե՞ս մինչև հիմա չինք մտածել: Լուսիկ քույրիկը շատ լավն է ու մեզ էլ շատ է սիրում: Ինչքան մեր տուն է զալիս, խաղում է մեզ հետ, հերիաքներ պատմում, մի անգամ էլ փոքրիկ աթոռներ բերեց մեզ համար: Դե, իհարկե, նա որ իմանա... Մենք այնքան ոգևորվեցինք վաղվա հեռանկարով, որ մեր հարևանների տված բոլոր մթերքներն, անձանոթի տատիկի բերած յուրի մեջ լցնելով՝ կերանք ու քնեցինք կուշտ, երջանիկ, անխոռվ:

Իսկ առավոտյան ես ու քույրիկիս ձեռք -ձեռքի տված բարձրանում էինք Արովյանով՝ աշնանային պղտոր առվի եզերքով, որ սևացած, իսենթացած վազում էր փողոցով, իր հետ բերելով փոշի ու վիրակապեր և մեկ էլ այն դեղձը, այն կարմրաթուշ, հրաշք դեղձը, որ

նույնիսկ կծած էլ չեր, որ ընդամենը մի վայրկյան մնաց ձեռքիս և Եվգինեի հարվածով, ցատկութելով սլացավ փողոցն ի վար:

Կեսօրին հասանք Նորք անասելի հոգնած ու քաղցած, այսինքն՝ քաղցածը դեռ այն խոսքը չէ, որովհետև կուշտն է քաղցածանում: Իսկ մենք առավոտյան ոչինչ չէինք կերել: Առաջին անգամ ամաչելով՝ կամացուկ բարձրացանք Լուսիկ քույրիկենց տան սանդուղքով, ծեծեցինք դուռը: Ոչ ոք չարձագանքեց: Քիչ սպասելուց հետո թեթևակի հրեցի դուռը, բաց էր: Ներս մտանք և առաջինը, որ տեսանք այլուրով լի մի մեծ պարկ էր հենց դրան ետևում: Կանգնել հմայված այլուրին էինք նայում: Հետո տեսանք, որ անկյունում, հանգած նավթավառի վրա գոլորշի է արձակում մի փոքրիկ կաթսա՝ ինչ-որ հեռավոր, մոռացված խենթացնող հոտով լի:

- Բա որ ասում էի՝ զնանք,- զոհ, երջանիկ ծիծաղեց Եվգինեն, ասես ես որևէ հակառակ բան էի պնդել:

Ուրիշ դեպքում կվիճեի հետը, բայց հիմա դրա ժամանակը չեր: Նայեցինք երկու սենյակն էլ՝ ոչ չկար: Մտածելով, որ Լուսիկ քույրիկը այգում կլինի, ես ու Եվգինեն բակ իջանք, բացեցինք այգու դուռը և ներս մտանք այնպիսի երկյուղածությամբ, ինչպես կախարդական այգին կմտնեն:

Աշուն էր այգում, և պատերազմ չկար: Խաղողի վագերը հարկ-հարկ փոված էին մարգերի մեջ ու դեղնավուն տերևների միջից ծիծաղում էին մարգարիտ ողկույզներով: Դեղձենիների տակ հենակներ էին դրված, իսկ նրանցից քիչ հեռու, մի ծառի տակ կանգնած էր մեր Լուսիկ քույրիկը գոգնոցը լայն բացած ու վերև էր նայում, որտեղից հատ-հատ, խուլ կտտոցով ընկնում էին սև սալորները:

Մենք, շարունակ իրար ձեռք բոնած, մի քանի քայլ էլ առաջացանք, չհամարձակվելով խանգարել Լուսիկ քույրիկին, սպասելով, որ ինքը մեզ տեսնի: Սակայն առաջինը մեզ նկատեց նրա ամուսինը՝ Ենոք քեռին, ծառի վրայից:

- Լուշիկ,- բարկացած ձայնեց նա,- դարպասի դուռը էլի՝ բաց ես թողել:

Լուսիկ քույրիկը վախեցած կծկեց գոգնոցը ու արահետին նայեց, որտեղ մենք էինք կանգնած: Նայեց մի տեսակ զարմացած, ասես չճանաչելով, հետո ժպտաց շփոթված:

- Երեխեք ջան, զնացեք դարպասի դուռը փակեք, նոր եկեք, հա՞,- ասաց նա, - բայց զգուշ, մարգերը շտրորեք:

Երբ մենք վերադարձանք, Ենոք քեռին արդեն իջել էր ծառից ու Լուսիկ քույրիկի մոտ կանգնած, ծուռ ժպիտով մեզ էր նայում:

- Է, ինչ կա, շիրելի ազգականներ,- հարցրեց նա,- պատմեք տեշնենք ի՞նչ կա, ի՞նչ չկա աշխարհում:

- Ենոք քեռի,- ասացի ես շփոթված,- Եվգինեն ուզում է ձեզ մի բան ասել:

- Սուտ է ասում,- կարմրեց Եվգինեն,- ինքն է ուզում ասել:

- Եվ, ուրեմն, երկուսով ի՞նչ եք ուզում աշել...

Շատ դժվար էր, բայց մենք ասացինք, ասացինք երկուսս էլ՝ իրար խանգարելով, միասին:

- Իշկ ինչի՞ եք հատկապեց էշտեղ եկել,- ծոր տվեց Ենոք քեռին:

- Ու դարձյալ իրար խանգարելով, միասին, ես ու Եվգինեն հայտնեցինք, որ եկել ենք մի քիչ այսուր խնդրելու: Մայրիկն ու հայրիկը որ զան, ետ կրենք: Տանը ուտելու ոչ մի բան չունենք: Դրա համար էլ...

- Երեխեք ջան, վատ ժամանակ եք եկել,- անուշ ժպտալով, տիսուր ասաց Լուսիկ քույրիկը,- Կարծում եք մենք ունե՞նք: Այ, այս սալորները հավաքում ենք, որ տանենք վաճառենք ու հաց առնենք: Մենք ել չունենք, երեխեք ջան: Ի՞նչ անեմ ձեզ համար, գոնե խաղողն էլ հասած չի, որ մի-մի ձուտ տայի ուտեիք: Այ, որ մի տաս օր հետո զաք...

- Դե, որ հաշած չի, ի՞նչ պետք է անենք, ին չե՞նք թողնի հիվանդանան,- ժպտաց նաև Ենոք քեռին:

Եվգինեն ինձանից տզզան է, աչքերը լցրել, լայն բացել է, որ չթափվեն արցունքները, ու վեր՝ ծառի ճյուղերին է նայում, ձեռքերը, ինչպես դասարանում, մեջքին դրած: Իսկ ես խեղդվում եմ: Կոկորդս այնպես է ցավում, որ շունչս կտրվում է: Այնինչ ուզում եմ զոռալ, ասել՝ բա էն ի՞նչ այսուրի պարկ է, բա էն ի՞նչ ճաշ է...

Բայց մենք դաստիարակված, քաղաքավարի երեխաներ ենք: Մենք արդեն սովորել ենք կուլ տալ վիրավորանքը: Մենք ավելի մեծ վիշտ էլ ենք տեսել երեկ ու կարող ենք լաց չլինել ուրիշների մոտ, անզամ մեր հարազատների մոտ: Մենք մի քիչ էլ հպարտ եք նաև, և մի քիչ էլ մեզ բարձր ենք զգում, որովհետև տեսնում ենք, որ ուրիշները սուտ են խոսում, որովհետև տեսնում ենք, որ ստում են ու ժպտում: Ուրեմն մենք էլ կժպտանք, մենք էլ կարող ենք ժպտալ:

Եվգինեն բաց աչքերի մեջ չորացնում է արցունքը: Ես հազում եմ, ապա կուլ եմ տալիս լաց: Մենք նորից իրար ձեռք ենք բռնում ու ասում ենք կամացուկ, ինչպես վայել է բարեկիրթ զարմիկներին:

- Կներեք, Ենոք քեռի:

- Ցտեսություն ձեզ, Լուսիկ քույրիկ:

Հետո Լուսիկ քույրիկն ինչ-որ բան է ասում, կարծես առաջարկում է հավաքել և ուտել ծառի տակ թափված սալորները, բայց մենք վազում ենք արահետով՝ առանց շրջվելու, դուրս ենք զալիս դարպասից և քայլում ենք՝ առանց իրար նայելու, իրար մի քիչ գրկած: Նորքից մինչև մեր տունը երկար-երկար է ու ոչ մի հարազատ չկա:

... Հիմա ես բարձրանում եմ Աբովյանով, Գրիբոյեդովի անվան դպրոց եմ գնում՝ ժողովի և քայլում եմ գարնան անձրևներից զժկած առվի եզերքով: Ինչեր ասես, որ չի բերում իր հետ այս առուն՝ էլ պատառոտված կրկնակոշիկներ ու ճյուղեր, էլ կարտոֆիլներ ու հացի կտորներ: Հացի կտորներ... Մարդ ժամանակ ունենա ու գնա հենց այսպես, առվի եզերքով, մինչև հասնի

նրան, ով հացի կտորներ է թափում առվի մեջ: Բոնի, խլի նրանից ողջ հացն ու թողնի, որ մի օր, միայն մի օր քաղցած մնա: Ես սադիստի հաճույքով կհետևեմ նրա տառապանքին ու խղճիս ոչ մի մկանը չի դողա: Ես հացը նրան ցույց կտամ ապակու ետևից ու կծիծաղեմ նրա անզոր ձիգերի վրա: Որովհետև ես քաղց եմ տեսել, որովհետև ես տեսել եմ, թե ինչպես զիշերները մի կտոր հաց էին երազում մարդիկ, և տեսել եմ նաև, թե ինչպես մի կտոր հացը հավերժ օտար էր դարձնում հարազատին, ու օտարին՝ եղբայր:

Նեղ Ուղեգործի Վրայով

Ժողովին շխաջողվեց մասնակցել: Հենց դպրոցի մուտքի մոտ ինձ դիմավորեց ավագ ջոկատավարը ու կարևոր առաջարրանք կատարողի հուզմունքով հայտնեց, որ անմիջապես մեկնեմ կոմմերիտմիության քաղկոմ: Չէ, Բաղամյանը չի զանգահարել, շրջկոմի քարտուղար Սարգսյանն է զանգահարել և ասել, որ Լևոնյանը դպրոց գա թե չէ, թող իսկույն վերադառնա ու ներկայանա Բաղամյանին:

Տեսնես ի՞նչ է պատահել, ինչո՞ւ է կանչել, անհանգստացած մտածում էի ես՝ համարյա դատարկ ավտոբուսի ետնաթռողին վեր-վեր ցատկելով: Առաջին անգամ է, որ այսպես, հասուլ քաղկոմի քարտուղարն ինձ իր մոտ է կանչում: Ինչպես լինում է սովորաբար, ոչ մի լավ բան չեմ մտածում: Փոխարենը որոնում եմ, պրատում, թե չե՞մ արել արդյոք այնպիսի մի քայլ, թո՞ւ վյլ չեմ տվել արդյոք մի այնպիսի արտահայտություն, որ նենգափոխած, կամ այլ տեսք տված քաղկոմ հասցրած լինեն: Չէ, կարծես թե ոչինչ չկա: Բայց իմ շփոթությունը չի անցնում: Այնպես եմ տարվել մտքերով, որ չեմ ել զգում, թե ինչպես եմ իջնում կանգառում, ինչպես եմ անցնում պուրակն ու հայտնվում փողոցի մեջտեղում՝ հուղարկավորության մի թափորի դեմ-դիմաց: Անակնկալի եկած, դոդահար ետ-ետ եմ քաշվում, հանում եմ զիշարկս ու խոնարհում զլուխս, որպեսզի չտեսնեմ ոչինչ: Նվազախումբը հավանաբար հանգստանում է, ու ես սոսկումով սպասում եմ, որ հիմա կինչի սգո բայլերգը՝ ճնշող ու հանդիսավոր:

Նույնիսկ անհարմար էլ է խոստովանել, բայց մանկուց միշտ էլ սարսափել եմ սգո թափորներից և մանավանդ նվազից, այդ միօրինակ, համաշափությամբ հուսահատեցնող ծնծղային զարկերից, որը կարծես ծաղրում է բոլորին ու ներքին ցնծությամբ հայտարարում, թե՝ միևնույն է, ուզեք-չուզեք մի օր այս այսպես զալու եմ ձեր ետևից: Երբ փոքր էի ու դպրոցից տուն դառնալիս հանկարծ ականջիս եր հասնում այդ նվազը, շրջվում էի ու վազում, վազում էի զիզզազաձեն, նեղ ու խոլ փողոցներով, վազում այնքան, մինչև որ չսեմ այդ համաշափ զարկերը, բայց նրանք դեռ երկար հալածում ենին ինձ՝ իմ մտրում: Զիմա արդեն չեմ կարող փախչել, չեմ փախչում, բայց դրանից տհաճության և վախի զգացումս չի չքանում: Չեմ կարողանում լսել այդ նվազը, չեմ կարողանում նայել դագաղներին, որոնց վրա առաջինը, ինչը երևում է, միշտ սև, փայլուն կարծես միևնույն կոշիկներն են, որ ասես հերթով հազցնում են հանգույցալների ոտքերին: Ինչո՞ւ են անպայման նոր կոշիկներ հազցնում, ինչո՞ւ ամեն ինչ ծաղիկներով ծածկելով հանդերձ, թույլ են տալիս, որ կոշիկները մի տեսակ օտարացած, առանձին, իրենց սառը, անկենդան փայլով բոլորին երևան: Ինչի՞ համար: Ինչո՞ւ մարդուն իր կոշիկներով չեն տանում:

Չգիտեմ ինչու, ինձ թվում է, թե այդ կոշիկները սեղմում են:

- Աղա մարդ էր, - ոչ մեկին չդիմելով, ասում է կողքիս կանգնած պրոֆեսորի կլոր մորուրով մի ծերունի, «Քննութիւն» ռեստորանի բարապանը, - ամեն անգամ դուրս զալիս մի երեքնոց էր տալիս ինձ:

Նրա ձայնի մեջ ափսոսանք կա, ու ես հանկարծ մտածում եմ, թե գուցե նա իր կորած երեքնոցներն է սգում: Զզվելի է: Ես պարզապես կորցնում եմ ինձ նման պահերին, ամեն հիմարություն մտածելու ընդունակ եմ դառնում:

- Տես, դեւ-տես,- գլուխն օրորում է պրոֆեսորի մորուքով ծերունին, դարձյալ ոչ ոքի շիմելով,- նրանք կլեղայրներն են, բարեկամները: Ամբողջ կյանքը կերան մի տան համար, դատարաններն էին քարշ տալիս, տրորում ոտքի տակ, իսկ հիմա բարձրացրել, ձեռքերի վրա են տանում: Մարդուն կյանքում պետք է ձեռքերի վրա տանել, կյանքում, հիմա ի՞նչ,- նրա ձայնի մեջ այս անգամ այնպիսի ակնհայտ ցավ կա, որ ես ես եմ վերցնում մտքերս ու հանկարծ անասելի պահանջ եմ զգում խոսել նրա հետ, հենց այնպես, ինչ-որ բան ասել, գուցե միան նրա համար, որ չնայեմ այն կողմ, չլսեմ նվազը:

- Իսկ ինձ նման անծանոթ մեկը, տեսնելով ծաղկեպսակներն ու ավտոմեքենաները, այսքան մարդկանց ու վշտահար դեմքերը, կմտածեր, թե ինչ հանգիստ ու երջանիկ է ապրել այս մարդը,- դառնալով ծերունուն ասում եմ ես:

- Եթե մարդը մեռել է այդ դեռ չի նշանակում, թե ապրել է,- հանկարծ պատասխանում է նա:

Վահ, ազնիվ խոսք հրաշալի ասաց, գուցե ինքն էլ չհասկացավ, թե ինչ ասաց:

- Լավ ճանաչում էիք, հա՞,- հարցնում եմ ես:

Ծերունին ինձ է նայում փոքրիկ, ժպտուն աչքերով:

- Ես ինձ նոր եմ սկսում ճանաչել, տղաս,- ասում եմ,- իսկ նրան պարզապես գիտեի:

Հանկարծ ծիծաղս զալիս է, խենթուկ ծերունի է, իսկապես, ոնց որ ծպտված պրոֆեսոր լինի: Այսպիսի խոսքեր որ զրում կարդաս, կասես որ հեղինակը զոռ է տալիս երևակայությանը, այնինչ այս մարդը հրես կանգնել է կողքիս ու հանգիստ, հանդարտ խոսում է:

- Իսկ որտեղի՞ց էր նրան այդքան փող, որ ամեն օր ձեզ երեք ոռութիւն էր տալիս, - հարցնում եմ թաքուն քմծիծաղով:

- Ես չասացի՝ ամեն օր, ես ասացի՝ ամեն անգամ: Իսկ եթե սրտանց կամենաս միշտ էլ ուրիշի համար ինչ-որ բան կզունվի: - Լոեց ու հետո: - Էհ,- հառաչեց ծերունին,- ի վերջո բոլորիս ճանապարհն էլ սա է:

Ահա, բռնվեցիր, ուրեմն քո այդ խոսքերն էլ մահվան նկատմամբ վախտ թաքցնելու համար են, ուրեմն դու էլ ես զրուցում, որպեսզի չնայես այն կողմը, չէ՞: Ես չկարողացա ինձ զապել ու ոչ առանց զվարթ չարախնդության, հարցրեցի նրան այդ մասին:

- Կյանքն եմ ափսոսում,- պատասխանեց նա անմիջապես հանդարտ:

- Ուրեմն այնուամենայնիվ, վախենո՞ւմ եք:

- Կվախենան նրանից, ինչից կարելի է խուսափել: Իսկ մահն անխուսափելի է, տղաս:

Բռնցքամարտի մեջ այդ դրությունը անվանում են զրոգ, երբ հարվածից հետո՝ երերում են, ես մի քիչ երերացի ու մտածեցի: Հետո ծիծաղեցի անկեղծ, երախտապարտ ու իրեն տանջող հարցի պատասխանն ստացած մարդու բավարարվածությամբ, սրտանց ասացի նրան.

- Շնորհակալություն, հայրիկ:

Նա չզարմացավ էլ, ժպտաց, իսկ ես փողոցը կտրելով քաղկոմի շենքը մտա ու սկսեցի քարձրանալ աստիճաններով, թռչելով երկու-երկու, մտածելով այս զարմանալի աշխարհի մասին, որտեղ որոշ բարապաններ հանգիստ կարող են պրոֆեսոր աշխատել, իսկ որոշ պրոֆեսորներ՝ բարապան:

Լավ տրամադրությամբ ներս մտա Կարո Բաղամյանի ընդունարանը, և երբ քարտուղարուիին անսովոր ժպիտով խնդրեց ուղղակի առանց զեկույցի ներս մտնել, այդտեղ հանկարծ զգացի, որ ինձ ոչ թե քաղկոմի առաջին քարտուղարը, այլ Վեգիրյանի ընկերն է կանչել: Եվ ինչպես սմիջն հիմա չէի կրահել: Կասկած չկա, Վեգիրյանը պատմել է Բաղամյանին ամեն ինչ, և հիմա նա ինչ-որ ձևով ինձ խնդրելու է չզրել ֆելիետոնը: Չիմանալով, որ տպարանում է արդեն:

- Մոտ արի, Արտակ,- գլուխը դրան ձայնի հետ բարձրացնելով, գործնական սիրալիրությամբ ասաց Բաղամյանը: - Ես հիմա կվերջացնեմ: Ու նեղ ուղեգորդի, ասես մազե կամրջի վրայով՝ դրսից մինչև նրա գրասեղանը քայլելիս, ես շինորված մտածում էի, թե ի՞նչ կարող եմ պատասխանել, եթե հանկարծ Բաղամյանը խնդրի հրաժարվել ֆելիետոնից: Եթե ասեմ, որ դա սկզբունքային հարց է, թե կուսակցականի իմ խիղճը չի կարող թույլ տալ, որ հանցագործն անպատիժ մնա, արտասանություն կթվա: Թեև մեզ մոտ շատերը հենց այդպես էլ խոսում են: Մնացած բոլոր պատասխաններս ի վնաս ինձ կլինեն: Բայց, այնուամենայնիվ, մի թե նա կարող է ինձ այդպիսի բան առաջարկել: Ինչ-որ չեմ հավատում:

- Է, ո՞նց ես, ընկեր Լևոնյան,- դիմացը դրված թուղթը մի կողմ հրելով ու արմունկներով տնավարի կործնելով սեղանին, ժպտաց Բաղամյանը: - Քեզ համար գլուխդ կախ աշխատում ես, մի օր չես ասում գնամ տեսնեմ Կարոն ինչ է անում: Բարեկամություն չես անում, այ տղա,- ջերմությամբ հանդիմանեց նա: - Օտար հո չե՞նք, մի զյուղացի ենք, է, իսկ որ մի քիչ փորփրենք, ազգական դուրս կզանք, ինչպես ասում են՝ երկու գծով էլ: Երեկ իրիկուն մայրիկիս հարցրեցի: Դու զիտէ՞ ս, որ մորդ կողմից քո պապը իմ հոր քեռին է գալիս: Այնպես որ փաստորեն դու իմ փոքրիկ դային ես:

Կարոն ծիծաղեց, իսկ ես հուզվեցի մինչև հոգուս խորքը՝ նրա այդ մի հատիկ, օտար «դայի» բառի համար: Այդ բառից այնպիսի բան ասես: Այդ ո՞ր օրվանից եմ քեզ համար ընկեր Բաղամյան դարձել: Ուրիշների մոտ դեռ ոչինչ, բայց, երբ մենակ ենք, ես քեզ համար միայն Կարո եմ, հասկացա՞ր: Կնեղանամ անկեղծորեն: Եվ մի մտածիր, թե երբեմ կխանգարես ինձ: Ընդհակառակը, եկ, գնա, տուն արի: Մենք շատ պիտի մոտ լինենք իրար, հասկանո՞ւմ ես: Ես պիտի իմանամ, որ այսինչ շրջանում իմ ընկերը, իմ մարդն է աշխատում: Ես պիտի հենվեմ քեզ վրա: Բա էլ բարեկամությունը ո թօրվա համար է: Իսկ դու էլ պետք է իմանաս, որ միշտ, որտեղ էլ լինեմ,

- Ե,- ձեռքը թափ տվեց Կարոն,- գործին որ նայենք, վերջ չունի: Ընկեր Բաղամյան... Ու մեկ էլ չլսեմ, որ այդպիսի բան ասես: Այդ ո՞ր օրվանից եմ քեզ համար ընկեր Բաղամյան դարձել: Ուրիշների մոտ դեռ ոչինչ, բայց, երբ մենակ ենք, ես քեզ համար միայն Կարո եմ, հասկացա՞ր: Կնեղանամ անկեղծորեն: Եվ մի մտածիր, թե երբեմ կխանգարես ինձ: Ընդհակառակը, եկ, գնա, տուն արի: Մենք շատ պիտի մոտ լինենք իրար, հասկանո՞ւմ ես: Ես պիտի իմանամ, որ այսինչ շրջանում իմ ընկերը, իմ մարդն է աշխատում: Ես պիտի հենվեմ քեզ վրա: Բա էլ բարեկամությունը ո թօրվա համար է: Իսկ դու էլ պետք է իմանաս, որ միշտ, որտեղ էլ լինեմ,

այստեղ թե... - Կարոն բազմանշանակ մատը վեր բարձրացրեց,- այնտեղ, ես միշտ կանգնած եմ քեզ համար, քո թիկունքին:

Ես շիկնած, շփոթված շնորհակալության ինչ-որ խոսքեր մրմնացի:

- Շնորհակալության հարց չկա,- անսաց Կարոն,- դա մեր երկուսիս, ընդհանուր գործի համար է: Ըսկերությունը շատ բան է վճռում մեր կյանքում, Արտակ: Մենք պետք է միշտ միասին լինենք, աշխատենք չկորցնել իրար:

Ու նորից հանկարծ մտածեցի, թե հիմա ուր-որ է Կարոն Վեզիրյանի մասին կխոսի: Նույնիսկ շրջվեցի դեպի բազմոցը: Ինձ թվաց, թե ինչպես այն ժամանակ, Վեզիրյանը հիմա էլ նստած է բազմոցին ու բարի, քաջալերող աչքերով ինձ է նայում: Բայց Բադամյանը չխոսեց այդ մասին: Երևի էլի ես եմ վատը:

- Այն է ասեմ,- ավելացրեց նա,- որ ես հետևում եմ քո աշխատանքին և գոհ եմ: Քեզանից իսկական կոմերիտական աշխատող դուրս կգա: Եվ նույնիսկ մի քանի նկատառումներ ունեմ: Թերևս հնարավոր լինի մեկ-երկու ամսից հետո քեզ տեղափոխել մեզ մոտ, քաղկոմ: Կարձ ասած՝ աշխատավարձ համարյա կլրկնապատկվի: Լավ, լավ, գիտեմ, որ առանձնապես փայլուն չեք ապրում: Համալսարանում դեռ նշանակումներ չե՞ն կատարել:

- Չէ,-ասացի ես լի, հուզված, երախտապարտ սրտով,- բայց որոշել են, բոլորիս էլ շրջաններն են ուղարկելու:

- Թույլ չեմ տա, չմտածես,- նշանակողներին հասցեազրված հեզնանքով ժպտաց Կարոն,- կպահանջեմ, որ թողնեն քաղկոմի տրամադրության տակ: Տանը, ծնողներիդ մոտ միայն դու ես մնացել, չէ՞: Չէ, չեմ թողնի: Կաշխատես, իսկ գրել ամեն տեղից էլ կարող ես:

Էհ, որքան կարոտ եմ այսպիսի անկեղծ սրտացավ, մտերիմ խոսքի: Ինձ հետ շատ քիչ են այսպես խոսել: Ասես մի հին, լավ երգ եմ լսում, ուրախությունից լացս զալիս է: Աշխատավարձ կլրկնապատկվի: Գիտեք ք թե դա ինչ է նշանակում, գիտեք ք, որ դա նշանակում է, թե հայրս վերջապես կարող է դուրս գալ աշխատանքից ու նարդի խաղալ բակում, արևի տակ, գործարանի զլիավոր ինժեների հոր հետ, որ մայրս ստիպված չի լինի մի քանի կոպեկի համար գիշերները անքուն թխվթխվկացնել, հա թխվթխվկացնել իր կարի մեքենան՝ սրա ու նրա համար շոր կարելով, որ ես կարող եմ բարձրացնել զլուխս ու Նանարին ասել, դե, գիտե՞ս ինչ, էլ հերիք է, եկ գնանք մեր տուն, Նանար: Ահա թե դա ինչ է նշանակում: Դե թող հիմա էլ հայրս ասի՞ ով՞, Կարո՞ն, հոր տղեն է: Ում տղան ուզում է թող լինի, բայց այսօր հենց այդ Կարոն երջանիկներից երջանիկը դարձրեց ինձ: Ու ես երախտապարտ կմնամ նրան, ամեն ինչ կանեմ նրա համար:

- Հետո, մեր տղա, ոնց որ միտքդ փոխվել է, հա՞,- խորամանկորեն աչքով է անում Կարոն,- քեզ շատ եմ տեսնում մի սիրուն աղջկա հետ: Երևում է շուտով թռնելու ենք հարսանիքում:

Դեմքս այրվում է: Որտե՞ղ է տեսել, բա ո՞նց է, որ մենք երբեք չենք տեսել նրան:

- Ո՞վ է, ի՞նչ աղջիկ է մեր ապագա հարսը:

- Նանար է անունը,- տիկնիկային թատրոնում է աշխատում,- շշնջում եմ ես:

Կարոն բարձրանում է տեղից, ու ես կլ եմ բարձրանում: Մեկնում է ձեռքը, իսկ ես ուզում եմ մի լավ, մի ջերմ բան ասել նրան, թող իմանա, որ ես լավությունը չեմ մոռանա երբեք, որ, որ ես գուցե ամեն ինչ լինեմ, բացի երախտամոռից: Բայց ոչինչ չեմ կարողանում ասել, միայն զիսով եմ անում ու ամուր սեղմում եմ նրա ձեռքը:

- Շնորհակալություն, ընկեր Բաղամյան, ես... ես...

- Ի՞նչ,- կտրում է ինձ Կարոն:

- Շնորհակալություն, շատ շնորհակալություն, Կարո շան...

- Այ, հիմա հասկացա,- սպառնալից ժպտում է Կարոն ու ուղեկցում է ինձ մազե կամուրջի նման նեղ ուղեգորդի վրայով՝ իր գրասեղանից մինչև կաշեպատ դուռը:

- Դե, ընկերությունը չմոռանաս,- ասում է նա:

Ախ Այդ Ռանջանա Զատրան

Ամբողջ քաղաքը գժվել է: Ուր գնում ես, միայն այդ են խոսում, որ փողոցով անցնում ես, պատերից ռեկլամները հանում են հոգին: Շունչ քաշել չի լինում, բոլոր զրույցների թեման նույնն է.

- Գնո՞ւմ ես:

- Իհարկե:

- Տոմս գտա՞ր:

- Անշուշտ:

- Ո՞նց գտար: Ավելին չունե՞ս:

- Հա՞յ-հույ...:

- Ինձ խոսք են տվել, եթե չբերեն, կմեռնեմ:

- Գոնք անցաթուղթ, հասկանո՞ւմ ես, գոնք անցաթուղթ... Ոտքի վրա կմնամ:

Ես մեր ուսանողության արվեստասեր հատվածին դեռևս այսպես հուզված և, թող ներսի ասել՝ թիթիզացած չեմ տեսել: Խոսում, վիճում են եռանդով, վերջին կոպեկներով ծաղիկներ են գնում բեմ նետելու համար, փախչում են դասերից ու օրերով հերթ կանգնում օպերայի բակում: Իրենց բոլոր ու նշանավոր դիրք ունեցող բարեկամների հեռախոսների համարները ձեռքին խոնվում են ավտոմատ հեռախոսների մոտ ու խնդրում են, աղաչում են, պահանջում են՝ տոմս, գոնք մի տոմս:

Երեան է եկել հնդիկ պարուիի Ռանջանա Զատրան:

Ազնիվ խոսք, եթե Ռաբինդրանատ Տագորն էլ զար, ավելի մեծ հետաքրքրություն չեր առաջացնի, ավելի ջերմ ընդունելության չեր արժանանա: Եվ, իմ կարծիքով, զաղտնիքը պարզ է: Նախ՝ Հնդկաստանը մեզ համար դեռևս անհայտ է, որտեղ իշխանության գլուխ են կանգնած մահարաշաներն ու բուդդաները: Ու շատ տարօրինակ է, թե ինչպես մի մարդ, այն էլ մի կին, կարողացել է դուրս պրծնել ջունգլիներից, հասնել Մուսկվա ու այնտեղից էլ ինքնաթիռով թռչել Երեան: Պատկերացնում եք, հնդկուիի և ինքնաթիռ: Եվ հետո, եթե Հնդկաստանը կիսավայրենի երկիր է և ձյան երես չի տեսել, այնտեղ հավանաբար կամ ամբողջովին մերկ են շրջում: Ուրեմն, հնարավոր է, որ իր երկրի հարազատ դուստրը, այն էլ պարուիին... Դա ինքնին գյուտ է, որովհետո մեր պարուիիները, փառք աստծո, ոչ թե մեկ այլ մի քանի հագուստ են հագնում իրար վրա և նույնիսկ երբեմն էլ լաշակով են պարում: Եվ ամենահիմնականը՝ զարուն է: Կարելի է համերգի գնալ թեթև, ծաղկավոր, օդային հագուստներով:

Գարուն է: Արևը լվացված, սիրուն այնպես է ժպտում, ասես արդեն ավարտել է համալսարանը և «Վառում-թողնում է»- ինչպես բնույթագրում է մեր կուրսի բանաստեղծ

Վարդպես Աշտարակեցին: Հողից, ծառերից, շենքերի տանիքներից, առուներից այնպիսի մի գոլորշի է բարձրանում, տաք ու սպիտակ այնպիսի մի մշուշ, այնպիսի մի խնկարկում, որ քիչ է մնում խենթանաս: Եվ ամեն ինչ մի տեսակ խաղում, շողում, լողում է այդ մշուշի մեջ: Ասես բնությունը՝ ամենակարող տերն ինքը, Երևանը մի բուրքառ դարձրած՝ փառաբանում է իրեն: Ամբողջ քաղաքը դաղձի ու ծաղկած ծառերի հոտով է լցվել, մանուշակներն իրենց հաստատուն տեղն են գրավել փողոցների անկյուններում, փոքրիկ տղաների թաց, շրջված զիսարկների մեջ. շենքերի պատուհաններին գունավոր քանդակների պես արձանացել են տանտիրուիհներն ու աջ ձեռքի ռիթմիկ շարժումով մաքրում համաքրում են պատուհանների ապակիները

Գարուն է:

Հանկարծ միանգամից զզվելի ու անհեթեթ են դարձել վերարկուներն ու կրկնակոշիկները, զիսարկներն ու վզնոցները: Եվ եթե ամեն մի տան մեջ մի տանտիրուիի չինի, տղամարդիկ, անկասկած, առանց հաջորդ ձմռան մասին մտածելով, կայրեն այդ բոլորը, կփոխեն մի քանի ձվով ու ընկույզով կամ կնետեն ցախանց՝ իրենց հեղինակությունը կորցրած խղճուկ ու մրոտ վառարանների կողքը: Բայց տանտիրուիները աշալուրօ են: Խեթ-խեթ նայելով բակերում հայտնված «հին շոր, հին կոշիկ» կանչողներին, նրանք եռանդրուն շարժումով, երկար փայտերով խփում են լվացքի պարաններից կախված ձմեռային հագուստներին ու գորշ թղթերի միջից հանում նավթալինի բյուրեղները: Գարնանային իրենց հուզումը, ուրախությունն արտահայտելու համար, նրանք բարձրաձայն, պատշգամբից-պատշգամբ և բակից-բակ, գրուցում են իրար հետ, և հեռվից դիտելիս, հատկապես լվացքի պարանների մոտ, նմանվում այն թռչուններին, որ սիրում են սովորաբար նստել հեռագրալարերին ու ստեղծել թռչնային ձայնանիշային տողեր: Բայց երբ մոտ ես զալիս, անմիջապես զգում ես, որ նրանց ապրումները խորապես մարդկային են:

- Մի-րուշ,- երաժշտական «սոլ» և «մի» ձայնանիշերի բարձր հնչեղությամբ ձայնում է մի պատշգամբի տիրուիին, - մեր Անահիտը կյանքներս կերավ, հորը օր ու արև չի տալիս, թե ինչ է, ինչ է, այդ չինացի երգչուհու համերգի տում բեր:

- Ոչ թե չինացի, այլ հնդիկ,- հարևանուհու նկատմամբ իր առավելությունն ընդգծելով, համապատասխան ձայնանիշերով ուղղում է Միրուշը, - և ոչ թե երգչուհի, այլ պարուիի, տիկին Վարդուշ:

- Ինչ որ է: Հա, վերջը հազիկ-հազ երեկ երեկոյան ամուսնուս ընկերը բերեց: Մի տեսնեիր Անահիտս ոնց էր ուրախացել, ոնց էր պարում... Այսօր երեկոյան գնալու ենք:

«Հա, հենց դու և քո խրտվիլակն էլ իսկական համերգի բան եք»- մտքում ուզում էր չարանալ Միրուշը, որովհետև իր ամուսինը նման ընկեր չունի և Կարինեն էլ իրեն աշքերը կարմրած դաշնամուր է նվազում: Բայց չի կարողանում չարանալ, ուժ չունի: Գարուն է: Ու նա ձեռքերը բռունցքներ դարձրած խփում է համաքրում է նույնանուն, փքված կոնֆետներ հիշեցնող իր ձյունաթյուր բարձերին:

- Մի՞րուշ,- իր երջանկության մեջ հարևանուհու ներքին վիշտը չնկատելով կամ հենց նկատելով՝ կրկին ձայնում է Վարդուշը,- տեսնես ո՞վ է այդ Զանջան Մանջան, որ բոլորն եղան խելքները կորցրել են:

- Ոչ թե Զանջան Մանջան, այլ Ռանջանա Զատրան, տիկին Վարդուշ...- բղավում է Միրուշը, բայց դառնությամբ մտածելով, որ միշտ այսպես է կյանքում, որ միշտ ունենում է նա, ով արժանի չէ դրան, ով չի կարող գնահատել: Որ ահա, տոմար հասել է նրան, ում համար Նյուտոնի բինումը, Կոշոյանի նկարը ու հնդկական շեֆթի պարը հավասարապես անհասկանալի են և չտեսնված նման են իրար:

Ռանջանա Զատրան...

Ու չգիտեմ ինչպես եղավ, որ նման հիվանդությունների դեմ պատվաստված Նանարն էլ սկսեց տառապել: Դա այնքան անսովոր բան էր, որ ես լրջորեն անհանգստացա: Ընդհանրապես մենք այնպիսի սովորություն ունենք, որ երբեք չենք գնում այնտեղ, ուր բոլորը հիացմունքից շառագրւնած, ճիշ-աղաղակով շտապում են: Երբեք չենք կարդում այն գիրքը, որ բոլորին էլ դուր է գալիս: Դա ոչ թե հենց այնպես, կամակերությամբ, այլ փորձով, համոզվելով: Բոլորին դուր եկած բանք սովորաբար լավագույնը չի լինում: Չեմ ուզում ասել, թե ինչու, բայց այդպես է: Եվ ահա աննախընթաց մի դեպք, արտակարգ մի երևոյթ, հանդիպեցինք թե չէ, Նանարը բոնեց ձեռքս ու ասաց.

- Գնանք այդ հնդկուհու համերգին, հա՞՛, Արտակ:

- Ինչո՞ւ այդպես հանկարծակի, - զարմացա ես:

- Խնդրում եմ:

Ե, որ բանք հասավ խնդրելուն, ես զինաթափված եմ: Նանարն այնքան հազվադեպ է սրտանց որևէ բան ուզում, որ ես միշտ էլ ուրախանում եմ նման դեպքերում: Ո՞վ գիտե, մտածեցի, երևի նրանք էլ մի հարևանուհի ունեն Վարդուշ անունով կամ գուցե թատրոնում աղջիկներով գրա՞գ են եկել:

- Գնանք, եթե ուզում ես, Նանար, - ասացի, - բայց համերգին ընդամենք մեկուկես ժամ է մնացել, տոմս որտեղի՞ց կգտնենք:

- Որ դու ուզենաս, կգտնես, - կամացուկ ասաց Նանարը՝ հավատով, համոզված նայելով ինձ:

Երևի հենց նման պայմաններում են կատարվում հերոսություններն ու մեծ խենթությունները: Մի պահ թվաց, թե տոմս գտնելն ինձ համար դատարկ բան է: Բայց երբ օպերայի հրապարակը մտանք, երբ տեսա արվեստի ուխտավորների բազմությունը՝ խոնսած սֆինքսի պես մեծախորհուրդ ու լուր դրամարկղի փոքրիկ ու փակ պատուհանի առջև, լավատեսությունը լրեց ինձ: Պատուհանին մի սպիտակ թուղթ էր փակցված և վրան հայերեն գրված էր՝ «տոմս չկա»: Բայց ոչ ոք հայերեն չէր հասկանում: Բոլորը կանգնել ու հուզված, ընկձակած, սպասումով դրամարկղին էին նայում, բոլորին հավանաբար, թվում էր, թե իրենք պարզապես չեն իմանում դրամարկղի պատուհանը բացելու «սիմ-սիմ»-ը: Ես էլ մի պահ խառնվեցի նրանց ու ակամա սկսեցի պատուհանին նայել և անմիջապես կոահեցի, թե ինչու

Են այդ պատուհանը փոքրիկ սարքում: Իհարկե: Որպեսզի տոմսավաճառը չտեսնի մարդկանց: Որովհետև, եթե նա ինքն էլ մարդ է և հոգի ունի, ապա չի կարող առանց խղճահարության ու արցունքի դիտել արվեստասեր հասարակության տառապանքները:

Եվ հանկարծ, ասես հրամանով, բազմությունը շրջվեց ու նայեց այզի մտած առաջին գույզին: Նրանք բարձրածայն չին ծիծաղում և ոչ էլ զլուխներից վեր թափահարում տոմսերը, բայց բոլորն էլ զգացին, որ այդ գույզը տոմս ունի: Քայլում էին այնպես անփույթ, այնպես հանդարտ: Տղան ընթանում էր զլուխը բարձր բռնած, ուղիղ իր առջև նայելով: Աղջիկը ձախ ձեռով թևանցուկ էր արել նրան, զլուխը քիչ թեքել տղայի ուսը և ասես սահում էր, ասես ձախրում էր եթերի մեջ: Երբեմն, երբեմ նա զլուխը շրջում էր դեպի աջ, աչքերը կկոցելով, անմեղ ժպիտով դիտում տարաբախս արվեստամոլներին, ապա թեքվում ու ինչ-որ խոսքեր էր շնչում տղայի ականջին, որն ինքնազնի, մանրիկ ժպտում էր իր ծիծեռնակաթն բեղերով: Եվ բազմության ապշահար, ատելություն արտահայտող հայացքի տակ նրանք ներս մտան օպերայի մեծ դրոնից: Հետո ուրիշ գույզեր եկան, ասես բոլորն էլ նույն վարժարանն էին անցել: Նույն շարժումներով, նույն ժպիտներով նրանք ևս ծածկվեցին մեծ դրան ետևում: Մարդիկ այլս իրենց դեմքերին չկարողացան պահպանել արհամարհանքի և ատելության արտահայտությունները: Մի խումբ դասալիքներ խղճալի կարեկցանք արտահայտող ժպիտներով մոտեցան տոմսավոր երջանիկներին ու սկսեցին մուրալ.

- Ավելորդ տոմս չունե՞ք:
- Շատ եմ խնդրում, եթե իսկապես ունեք...
- Բա ձեր ձեռքի էն մյուս թուղթն ի՞նչ է:
- Կպարտավորեցնեք ինձ: Խնդրում եմ: Մենք երբեմնի ծանոթներ ենք:

Հետո, հենց մուրացկանների օրինակով, սկսեցին մի քիչ լկտիանալ: Բոնում էին ձեռներից, մեծ թղթադրամներ ցույց տալիս, տոմսերը խլելու անհաջող փորձեր էին անում: Մի պատանի ստեպ-ստեպ ձեռքի ժամացույցին նայելով, կանգնել էր էլեկտրայան տակ ու մոլոր հայացքով այգու դրանն էր նայում: Շրջապատեցին: Շփոթված տղան գրպանից հանեց երկու տոմս, ցույց տվեց ու նորից սկսեց այգու դրանը նայել: Ձեռք չքաշեցին

- Դժվար թե զա, զուր կորցնելու ես տոմսը:
- Գուցե մայրիկը չլ՝ թողել:
- Արի ինձ լսի, քո տոմսերը տուր մեզ: Քեզ հաստատ բան եմ ասում:

Տղայի դրությունը նախանձելի չէր: Ոչ մի համակիր դեմք նա չէր տեսնում իր շուրջը: Եվ այրպես էլ կար: Նրա շրջապատողներից ոչ մեկն այդ պահին չէր ուզում, որ տղային սպասեցնող աղջիկը բարեհաջող տեղ հասներ: Քար սրտեր էին խոնվել նրա շուրջը, և քարերից մեկն էլ իմ սրտում էր: Ես փորձեցի ավելորդ տոմս գտնելու բոլոր միջոցները, որ երևի գոյություն են ունեցել աշխարհի վրա, բայց ապարդյուն: Վերջին հույսս այդ պատանին էր, ավելի շուտ՝ նրա դժբախտությունը: Ես սարսափելի բաներ չի մտածում, բայց ամբողջ սրտով ուզում էի, որ աղջիկը չգար: «Գուցե մայրիկը չի թողել» հուսահատական

բացականչությունը իմ շուրջերից դուրս թռավ: Բայց, ինչպես իրավագիորեն տարեց մարդիկ են ասում, երբեք քո հաջողությունն ուրիշի անհաջողության վրա չպիտի կառուցես: Տղան պոկվեց մեր օղակից ու հպարտ, երջանիկ աչքերով նետվեց դեպի այգու դուռը, որտեղից հենց նոր ներս էր մտել ու դանդաղ, վստահ քայլերով առաջ էր շարժվում մի պստովիկ, ծամավոր սատանա:

Համերգի սկսվելուն մնացել էր տաս րոպե, և Նանարը խղճաց ինձ:

- Դե լավ, Արտակ ջան,- ասաց նա՝ մի տեսակ թախծոտ ժպիտով,- չի ստացվում, ի՞նչ կարող ենք անել: Գնանք:

Բայց ես չի կարողանում շարժվել տեղիցս: Այնքան հոգնել էի այդ վազվոտուքից ու անիմաստ բացականչություններից, որ գլուխս դժմում էր: Անզորության զգացումից սարսափելի բան չկա:

- Քերի, այն մարդը քեզ է կանչում,- թևից բռնեց փոքրիկ մի տղա:

Նայեցի նրա ցույց տված կողմը ու հանկարծ զարմանքով նկատեցի, որ հենց այն կլեկտրապայան մոտ, որտեղ քիչ առաջ օրհասական մարտեր էին մղվում պատանու տոմսերի համար, այժմ կանգնած էր եղբայրս Բարկենը, և նրա կինը՝ Սեղան: Չգիտեմ զարմանքս էր շատ, շփոթությունս, թե ուրախությունս, բայց ես Նանարին թռղած անմիջապես նրանց մոտ վազեցի: Եվ երբ հասա, նոր միայն զգացի, որ Նանարին մենակ եմ թռղել: Ետ նայեցի:

- Լավ, լավ,- ժպտաց Բարկենը,- չի փախչի, թող մի քիչ սպասի:

- Ընդ,- նեղացավ Սեղան,- այ դու միշտ այդպես կոպիտ, կոպիտ, կոպիտ...

Բարկենը նորից ծիծառեց բարեհոգաբար, ու նայելով նրա ամուր ու ձիգ մարմնին, ծիծառելու ժամանակ աչքերի մոտ հայտնված մանրիկ կնճիռներին ու ծխախտուր բռնած բարակ, ջղային շրբունքներին, սիրտս ինչպես միշտ, երբ նրա մոտ եմ լինում, ուրավ հուզմունքից, ու ես նորից մտածեցի, թե ինչքան, ինչքան եմ սիրում եղբորս: Չգիտեմ ինչու, բայց ինձ թվում է, թե այդտեղ ավելի շատ բան կա, բան սովորական եղբայրության զգացումը: Գուցե պատճառն այն է, որ Բարկենը ամբողջ ութք տարով մեծ է ինձնից: Չգիտեմ: Գուցե նրանից է, որ Բարկենն է առաջինը ինձ սովորեցրել, թե որն է «ա»-ն, որն է «բ»-ն, որ ինքն է ինձ դպրոց տարել Գետառի եզերքով, որ ես ավելի շատ ժամանակ եմ ունեցել նրան կարոտելու ու սիրելու, երբ մի քանի տարի պատերազմում էր: Կամ գուցե բանակում զոհված մեծ եղբոր՝ Մելիքի նկատմամբ տածած սերս էլ է գումարվել: Չգիտեմ: Բայց նրան մոտ լինելը ինձ համար գեղազույն հաճույք է եղել դեռևս այն ժամանակներից, երբ ես նոր սկսում էի զարմանալ, թե ինչու ու երկինքը երկնքում: Վաղ զարնանը նա արդեն փողոցին նայող մեր բետոնե պատշգամբում էր քնում, ու ես ամբողջ օրը խնդրում էի, որ թռղնի իր մոտ քնեմ: Կատարում էի նրա բոլոր քմահաճույքները (իսկ դրանց թիվը բավականաշափ շատ էր), շողոքրթում էի անհարկի, հայելու պես փայլեցնում էի նրա կոշիկները, անընդհատ հայտնվում էի աչքերի առջև ու թեև ոչինչ չէի ասում, բայց իմ ողջ էռությամբ խնդրում, աղաչում էի թռոյլ տալ, որ ես ել գիշերը պատշգամբում, իր կողքին լինեմ: Եվ, վերջապես հուսահատ ծիծառով նա արտասանում էր ինձ երանության մեջ զցող երեք բառը.

- Լավ, կոտորեցիր, արի...

Ու ես սահում էի նրա ծոցը, կծկվում կողքին: Ցուրտ էր: Ամուր փաթաթվում էինք վերմակով, դուրս թռղնելով միայն գլուխներս ու նայում էինք երկնքին: Եվ զարմանալի բաներ էր պատմում ինձ Բարկենը, այնքան զարմանալի ու հիասքանչ, որ ես շունչս պահած, լայն բացած աչքերս, բարձրանում, բարձրանում էի, շրջում էի երկնքում, սև թավիշի վրա ու բարկտիկ էի խաղում աստղերով: Նա ինձ ցույց էր տալիս աստղերը, ամեն մեկին մի անունով կոչում, և ես միշտ զարմանում էի, թե ո՞նց չի կորցնում, ո՞նց է ամեն անզամ հիշում դրանց տեղը: Նոյնիսկ ասում էր, թե մինչև այս կամ այն աստղը այսքան-այսքան կիլոմետր է:

- Բա ո՞վ է շափել դրանք, Բարկեն շան,- հարցնում էի ես:

- Մարդիկ,- ասում էր նա:

- Բա ո՞նց են բարձրացել ու շափել:

- Չեն բարձրացել,- ծիծաղում էր Բարկենը: - Այստեղից են շափում, հեռադիտակով:

- Բա այդքան լար ունե՞ն,- որ շափում են,- հարցնում էի ես, հիշելով, թե ոնց էր հայրս պղնձել լարով շափում մեր պատշգամբի երկարությունը:

- Ե,- բարկանում էր Բարկենը,-ախր ինձ ասա, ինչո՞ւ եմ քեզ այդպիսի բաներ պատմում, Է...

Ու որովհետև ես խեղճացած լրում էի և պատրաստվում լաց լինել, մեղմանում էր.

- Լավ, ուզո՞ւմ ես ասեմ, թե ոնց է ստացվում այն քարածուխը, որ օրինակ վառում էինք ձմեռը:

- Հա,- աչքերս սրբում էի ես:

Ու պատմում էր Բարկենը: Մինչև հիմա էլ չեմ կարողանում ձշտել, թե այն մի քանի բանը, որ ես հաստատ գիտեմ կյանքում, դպրոցո՞ւմ եմ սովորել, թե՝ Բարկենից: Երբ բանակ էր գնում ու գնացքը շարժվեց, երբ մենք լաց լինելով վագում էինք վագոնի ետևից, Բարկենը հանկարծ կախվեց պատուհանից ու գոռաց, աշխատելով, որ իր ձայնը լսելի լինի բոլոր գոռացողների ու փողային նվազախմբի տխուր քայլերգի միջից.

- Արտակ...

- Ի՞նչ,- գոռացի ես, շարունակելով վագել բոլորի հետ, ընկնել բարձրանալ, վեր-վեր թռչել, որպեսզի երևամ բոլորի միջից,- ի՞նչ, Բարկեն շան...

- Շատ կարդա... անպայման... գրի:

Հետո վերադարձի ճանապարհին, մերոնք անընդհատ հետաքրքրվում էին, թե ինչ էր ասում Բարկենը: Բայց ես չեմ հայտնում ու միայն խորհրդավոր, բազմիմաստ ժպտում էի: Չէ՞ որ Բարկենը առանձին, ինձ հետ էր խոսել:

Գիշեր-ցերեկ, հաճախ դասերս թողած, գրքեր էի որոնում, յուրաքանչյուր նամակում մանրամասն զեկուցում Բարկենին, թե ինչ եմ կարդացել: Եվ այդ պատճառով էլ դրանք ավելի շատ գրքացուցակներ էին հիշեցնում, քան նամակներ՝ ուղղված պատերազմում կովող եղբօք: Հրաշալի նվազում էր, շախմատ էր խաղում, էլեկտրական այնպիսի սարքեր էր պատրաստում, որ մեր տան այցելուները շտապում էին արագորեն հեռանալ: Որտեղ նստում էին, մի լրւյա վառվում էր ու զնզում էր զանգը: Պապինի կաթսայի զյուտը ստուգելու նպատակով՝ պայթեցրել էր մեր բոլոր պղնձե կաթսաները՝ ամեն անզամ ինքը հրաշքով փրկվելով: Զավերժական ճոճանակ պատրաստելու համար քանդել էր մեր սենյակի միակ ժամացույցը և այն դատապարտել հավերժական դադարի: Որոշակի քայլեր էր անում ռադիոն լուցնելու ուղղությամբ, բայց պատերազմն սկսվեց:

- Անպայման ինժեներ կդառնա, - նախքան այդ, նրա ավերածությունները տեսնելով, գուշակում էին մարդիկ:
- Սողոմոն Սերյանյանի բանը բուրդ է, - լսելով նրա նվազը, ենթադրում էին ուրիշները:
- Կտեսնեք, նա իր ուրույն դպրոցը կրունենա, - ասում էին երրորդները՝ կանգնելով նրա կտավների առջև, որտեղ ժամանակակից նորարարների ոճով, հակառակ հորս եռանդուն բողոքների, կիլոգրամանոց ներկեր կային, որ անմիջականորեն խփում էին մեր ընտանեկան բյուջեին:

Բայց եղբայրս բանակից վերադառնալուց հետո, միլիցիայի աշխատող դարձավ: Ու ես բոլորովին զգարմացա, որովհետև նա ամեն ինչ կարող էր դառնալ: Զորացրվելու երրորդ թե չորրորդ օրն արդեն աշխատում էր, ու ես նույնիսկ մտքումս մի քիչ խղճում էի հանցազրծներին, որ բանից անտեղյակ հանգիստ շրջում էին քաղաքում, չիմանալով, որ Բարկենը միլիցիայի աշխատող է դարձել: Երբեք իր աշխատանքի մասին չեր պատմում ու գուցե հենց դրանից, իմ աչքին ավելի նշանակալից, ավելի խորհրդավոր էր թվում նրա գործունեությունը: Բայց փոխարենը նա հիմա ավելի ու ավելի հաճախ էր զրուցում ինձ հետ, ասում էր՝ «ախսպէր ջան», որից ես երջանկանում էի, իր հետ տանում էր զրոսանքի, ծանոթացնում ընկերներին և եթե մի բան էր գնում իր համար, անպայման աշխատում էր ինչ-որ բան էլ ինձ համար գնել: Եվ խոսում էր հետո, որպես հավասարը հավասարի: Գուցե մեր տարիքում տարիների տարբերությունն արդեն առանձնապես մե՞ծ չէր: Իսկ եթե ասեմ, որ նրա ամուսնանալուց հետո մենք ավելի ենք մտերմացել, սխալված չեմ լինի: Եվ այստեղ արդեն Սեղային եմ պարտական: Քոյլոս ամուսնացել ու գնացել է, և Սեղան քույրություն է անում ինձ: Եվ մեր ընտանիքում միակն է, որ գիտե իմ բոլոր գաղտնիքները: Շատ բան, որ մեռնեմ եղբօք չեմ ասի, բայց Սեղային պատմում եմ, այսինքն՝ Նանարի մասին: Եվ եթե վերջերս իր ողջ ուշադրության հետ միասին, Բարկենը նաև թաքուն կամ առանձին, միջանցքում բռնեցնելով, զոռով որևէ թղթադրամ է խցկում գրպանս, հաստատ գիտեմ, որ Սեղայի կազմակերպած գործն է:

- Բարկեն ջան,- զրպանիցս դրամը հանելով կրկին նրա գրպանն եմ զցում ես, - փողը իմ ինչի՞ն է պետք: Թոշակ էլ եմ ստանում, աշխատավարձ էլ, չէ՞:
- Եվ այդ բոլորը մայրիկին ես հանձնում, - կտրում է Բարկենը, դրամը նորից իմ գրպանը նետելով:

- Է, դու էլ ես տալիս:
- Ոչ բոլորը,- ասում է Բարկենը,- հիմա ես իմ առանձին ընտանիքն էլ ունեմ:
- Դե, ուրեմն քեզ ավելի շատ է պետք:
- Շատ մի խոսի,-քարկանում է նա,- դրսում երևի թաքուն լաց ես լինում, իսկ այստեղ հպարտություն-հպարտություն ես խաղում:
- Բայց, ախր ինձ ոչ մի փող էլ պետք չի,- համառում եմ ես և թղթադրամները իր ելման կետն եմ ուղարկում:
- Ես քեզանից լավ գիտեմ՝ պետք է, պետք չէ,- իրար քաշքելուց ծանր շնչելով, շշուկով գոռում է Բարկենը: - Ես այդ բոլորն արդեն անցել եմ: - Թղթադրամը նորից գրպանս է խոթում ու ինձ հրելով դուրս է հանում տնից՝ վերջում վզակոթիս թեթևակի հասցնելով:

Իսկ դրսում, ուղղելով այս ու այն կողմ թեքված հագուստու ու գրպանիս մեջ բավականությամբ շղափելով թղթադրամը, ես հուզված ու երջանիկ մտածում եմ, որ Նանարին կարող եմ որևէ տեղ հրավիրել, այզիներում միլիոն մոմանոց լապտերների տակ ցրտից կծկված Գորկի ու Փափազյան կարդալու փոխարեն: Այստեղ արդեն նրանց հերն էլ անիծած:

- ... Ուզում եք համերգ գնալ, հա՞,- քմծիծաղով հարցնում է Բարկենը:

Ես կարմրած միայն զլխով եմ անում:

- Եվ, իհարկե տոմս չունեք:

Տոմս բարի վրա ես մեքենայաբար բարձրացնում եմ զլուխս, գուցե իսկապես ավելորդ տոմսե ր ունեն:

- Դե, դու էլ, ի՞նչ ես միլիցիոների պես քննում,- բարկանում է Սեղան,-տուր տոմսերը:

- Տիկին,- ասում է Բարկենը,- ձեր ձայնի մեջ կարծես որոշ արհամարհանք կա իշխանության մարմինների հասցեին:

- Է,- ասում է Սեղան,- շուտ արա, խեղճ աղջիկը սպասում է:

- Ոչինչ, մենք նրան շատ ենք սպասել, թող մի քիչ էլ ինքը մեզ սպասի,- շարունակում է ժպտալ Բարկենն ու հետն ի ձեռքը գրպանը տանելով, այնտեղից երկու տոմս է հանում ու մեկնում ինձ: - Խնդրեմ, երիտասարդ:

- Բա դո՞ւք,- ուրախությունից գժված հարցնում եմ ես:

- Մենք մի ավելի լավ տեղ ունենք գնալու,- ասում է Բարկենը:

Չէ, այդ արդեն չեղավ:

- Ոչ մի դեպքում,- տոմսերը նրան մեկնելով, աղմուկով հրաժարվում եմ ես,- դուք ինձ ինչի՝
տեղ եք դրել:

- Փոքր եղբոր,- ասում է Բարկենը:

- Վերցրու, Արտակ շան, գնացեք,- ասում է Սեղան,- դրանով կուրախացնեք մեզ: Ու, հավատա
մենք առանձնապես ցանկություն ել չունեինք գնալու: Դե, վերցրու:

Ես մի քանի վայրկյան մնում եմ անվճռականության մեջ, նայում եմ նրանց, հետո՝ ետ,
հեռվում միայնակ կանգնած Նանարին, նորից նրանց, տեսնում եմ եղբորս ու հարսիս
ժպտուն, իրենց արարքից երջանկացած դեմքերը և, ել չիմանալով ինչ անել, բղավում եմ.

- Ես ձեր ցավը տանեմ:

Տոմսերը ձեռքիս դեպի Նանարն եմ վազում և... Քիչ հետո, անտում բազմության նախանձ և
ատելություն արտաշնչող հայացքների ներքո, մի երջանիկ գույզ էլ է մոտենում օպերայի
մուտքին՝ կրկնելով նախորդ գույզերի նույնատիպ շարժումները:

- Տղան քայլում էր զլուխը բարձր բռնած, ուղիղ իր առջև նայելով: Աղջիկը ձախ ձեռով
թևանցուկ էր արել նրան, զլուխը քիչ թեքել դեպի տղայի ուսը ու ասես սահում էր, ասես
ձախրում էր եթերում: Երբեմն-երբեմն նա զլուխը շրջում էր դեպի աջ, աչքերը կկոցելով,
անմեղ ժպիտով դիտում տարաբախտ արվեստաերներին, ապա թերվում և ինչ-որ բան էր
շշնջում տղայի ականջին, որն ինքնազնի ու մանրիկ ժպտում էր իր ծիծեռնակաթն բեխերով:

Այդ երջանիկ գույզը, ինչպես հավանաբար կռահեցիք, մենք էինք՝ ես և Նանարը,
մուրացիկների բանակը լրած ու երջանիկների շարքին միացած, մենք փոխվրեժ էինք լուծում
մեր տառապանքների համար:

Ախ այդ Ռանջարա Զատրան:

ԱՆԱԿԱՆԿԱՐ Այցելուն

Ժամը տասն անց էր, երբ տուն դարձա: Հարկ չեղավ հարևանութուս անհանգստացնել և շնորհակալություն հայտնել նրա բարկացած կռնակին: Դուռը քաց էր: Դեռևս միջանցքում, մեր սենյակից խոսակցության բարձր ձայներ լսեցի և համոզված կարող էի ասել, որ հյուր ունենք: Դա դժվար չէր կռահել: Հայրս իր տարերքի մեջ էր: Նա երկար էր ապրել աշխարհում, և նրա հետ շատ զավեշտական, զվարճալի դեպքեր էին պատահել: Եվ ինքը սիրում էր պատմել դրանք, հատկապես անձանոթներին: Պատմում էր, ու որովհետև դեպքերն շատ ծիծաղաշարժ էին, առաջինն ինքն էր ծիծաղում սրտանց, քահ-քահ: Դեռ տուն չմտած, ես արդեն պատկերացրի մեր սեղանը: Հայրս նստած է իր մշտական տեղում, պատուհանի տակ: Նրանից ձախ, բազմոցին տեղավորված է կամ տեղավորված են հյուրերը, իսկ աջ կողմում մայրս է նստած, ինչպես ասում են՝ աթոռի ծայրին, որովհետև ստիպված պիտի լինի շուտ-շուտ վեր կենալ՝ այս կամ այն մոռացված ուտելիքը բերելու: Սեղանին, ուտելիքից բացի, անպայման հոնի օղի կլինի լիտրանց շշի մեջ, եգիպտացորենի կողրով փակ, որ առանց ընդմիջման մեծ բարեխղճությամբ հորս ուղարկում են զյուղում ապրող հինգ քույրերն ու հինգ հարյուր բարեկամները: Հայրս պարտադիր բոլորին ստիպում է խմել մի բաժակ, որն ինքը արդեն խմել է, այդ պարզ երևում է նրա տրամադրությունից, հայտարարում է, որ ինքը երբեք մի բաժակից ավելի չի խմում (այստեղ արժանանում է մորս նախատական հայացքին) և մյուսներին առաջարկում է խմել որքան սրտները կուզի (այսինքն՝ որքան կա շշի մեջ, և մայրս հավանության արտահայտությամբ ժպտում է):

Հետաքրքիր մարդ է հայրս: Թե մի օր հյուր չունենա, հատկապես նախքան ձաշը, կորցնում է իրեն, շրջում է ջղային և ամեն մի դատարկ առիթով բռնկվում է, հայտարարում, որ այս վերջերս չգիտես ինչու ախորժակ չունի և հանդիմանանքով ասում է մորս. «ծիծաղի, ծիծաղի թյունու աղջիկ, մի օր կլ վեր չեմ կենա, լաց կլինես, բայց կլ ձեռքդ չեմ ընկնի»:

Երբ դեռ շատ փոքր էի և մենք Կնունյանցի փողոցի սկզբում, տպարանի դիմացի շենքում էինք ապրում, հորս գործն ավելի հեշտ էր: Այն օրը, երբ պատահաբար հյուր չէր ունենում, ձաշից առաջ իջնում էր, շրջում զյուղացու տան մոտ և երբ հանկարծ որևէ հարազատ բարբառ էր լսում, իսկույն մոտենում էր, բռնում անձանոթի ձեռքը, ասում էր իր ով լինելը, խնդրելով կամ բռնի՝ մեր տուն բերում: Բանվոր հայրս նրանցից էր առնում իր զյուղի կարոտը, որ ինչպես մոխրի տակից, ծխում, ծխում էր նրա ողջ կյանքի ընթացքում: Նստում էին երկար, զրույց անում. այդ ժամանակ ավելի շատ, իհարկե, խոսում էր հայրս, և ինչպես լինում է սովորաբար, պարզում էին, որ ընդհանուր ծանոթներ ու բարեկամներ ունեն, բաղաքացիական կոհվներում համարյա կողը-կողը են եղել ու շատ են լսել միմյանց մասին: Դա առիթ էր տալիս դարձալ խոսելու, ծխելու, ու ընթրելու և վերջանում էր նրանով, որ հայրս իր նորահայտ բարեկամին առաջարկում էր զիշերել իրենց տանը. «Փառք աստծո, տեղներս նեղ է, բայց սրտներս լեն»:

Նրա սրտի «լեն» լինելուն քաջ ծանոթ մեր զյուղացիները, հավանաբար հորս ուրախացնելու նպատակով, քաղաք զալու դեպքում այլևս որևէ հյուրանց չէին զնում, այլ ուղիղ մեր տուն էին գալիս, որը կատակով համարում էին Ղազախի զյուղացու տուն և մնում՝ ինչքան ուզում էին: Քնում էին որտեղ հնարավոր է և որտեղ հնարավոր չէ, մահճակալներին, սեղանի վրա, սեղանի տակ, հատակին, իրար դեմ դիմաց դրված երկու աթոռի վրա և նույնիսկ լուսամուտի

գոգին: Սակայն տարեց-տարի հյուր գտնելու խնդիրը ավելի ու ավելի էր բարդանում: Շատերն էին զյուղից քաղաք տեղափոխվում մշտական բնակության և օջախ ստեղծում՝ իրենց մերձավոր բարեկամների համար: Այնպես որ մեր տանն առաջվա նման ամեն օր հյուր չէր լինում, և շատ հաճախ էր փակվում հայրիկիս ախորժակը: Բայց այսօր ինչպես երևում է, ամեն ինչ բարեհաջող է:

Ես խոհանոցում երկար ու ջանասիրաբար լվանում եմ ձեռքերս, մի սովորություն, որ դարձյալ հորից է մնացել, ու ականջ եմ դնում նրա խանդավառ պատմությանը:

- Ել ի՞նչ երկարացնեմ... Անուշիս թաքուն աչքով արի ու ասացի, թե ինչ բերել եմ, ձորում ա, առավոտը կզնաք կգտնեք: Հիմի առավոտը մի տեսնեիր, թե էս երեխնեքը ոնց են ամեն մեկը մի կտոր ձմերուկ ձեռքին կոծմոծում: Ծիծաղ բան էր:

Հայրս կրկին ծիծաղում է սրտանց, ու ես ուրախանում եմ նրա համար: Ինչ-որ մեկն էլ է ծիծաղում նրա հետ, բայց չեմ կարողանում որոշել, թե ով կլինի: Երեխ մեր զյուղացիներից մեկն ու մեկն է: Ես բացում եմ դուռը և զարմանքից քիչ է մնում ճշամ.

... Հորս կողքին նստել ու նրա հետ ծիծաղում է Վեզիրյանը: Ինձ տեսնելով, նա արագորեն ոտքի կանգնեց, ժպտաց շփոթված, մեղավոր, բայց և միաժամանակ արժանապատվությամբ

- Իսկ մենք նստել, գրուցում ենք ձեր հարգարժան հայրիկի հետ, ընկեր Լևոնյան: Իսկապես հրաշալի ծնողներ ունեք:

- Այդ մեկը ես գիտեմ,- աշխատելով տիրապետել ինձ, ասացի ես,- միայն չեմ հասկանում, թե դու ոք ինչ գործ ունեք իմ հարգարժան ծնողների հետ:

Նկատեցի, որ հայրս սաստիկ զարմացավ, ապա գունատվեց:

- Արտա՞կ,- ասաց նա, որտե՞ղ ես սովորել այդպես խոսել քո տուն եկած հյուրի հետ:

- Շինարարական վարչությունում,- հեզնեցի ես:

- Ոչինչ, ոչինչ, հայրիկ, գլուխը տիրությամբ, համակերպված շարժեց Վեզիրյանը,- ընկեր Լևոնյանը իրավունք ունի, այո, այո, իրավունք ունի: Ես հիմա նրա ձեռքում եմ, և նա կարող է ասել՝ ինչ ուզում է: Այո՝, այո՝, հայրիկ:

Հայրս ավելի ու ավելի աճող զարմանքով մեկ Վեզիրյանին էր դիտում, նրա հաղթ, տիրական մարմինը, որ հիմա վշտով թեքվել էր սեղանին, նրա շքեր հագուստն ու փայլուն կոշիկները, ու մեկ էլ ինձ: Հետո երեխ կոահեց ինչ-որ բան, խոսեց ծանր-ծանր, հուզված:

- Ես բանվոր մարդ եմ,- ասաց նա,- և իմ գործը չէ, թե ձեզանից որը ում ձեռքում է և թե ինչ է նշանակում դա, բայց մի բան գիտեմ, որ իմ տան մեջ նման խոսակցություն թույլ չեմ տա: Բան ունեք ասելու, նստեք խոսեք մարդավարի: Թե մենք խանգարում ենք, դուրս կզնանք:

Այո, հայրս իրավացի էր: Ես իրավունք չունեի ինձ այդպես պահելու: Նա մեր հյուրն էր: Նստեցի սեղանի մոտ, նրա դիմաց, առաջարկեցի նստել ու նայում էի նրա խոնարհված գլխին,

արդեն նոսրացող, ձերմակող մազերին: Ի՞նչ խոսեմ, ի՞նչ ասեմ, ի՞նչ կարող եմ ասել ես այս մարդուն: Այս մարդուն, որ ոչ մի սրբություն չունի, որ խարում է բոլորին ու ինձ էլ է խարել, ու եկել հիմա ծնողներիս էլ է խարել, նատել հորս պատմածների վրա ծիծաղել է կեղծ, տհաճությամբ, բայց ժայռով հոնի օդի է խմել, անընդհատ և անընդհատ մտածելով, թե ինձ դարձյալ ինչպես է խարելու: Ի՞նչ անեմ ես սրան:

Լոռությունը ձգվում էր ծանր ու երկար: Մայրս չդիմացավ, հառաչեց կամացուկ և զնաց խոհանոց: Հայրս լուռ, անթարթ մեզ էր նայում: Եվ Վեզիրյանը բարձրացրեց զլուխը:

- Գրելո՞ւ եք,- հարցրեց նա համարյա շշուկով:

- Արդեն գրել եմ,- պատասխանեցի ես, չուզենալով թաքցնել ոչինչ:

Լուց երկար ու երբ խոսեց նորից, զգացի, որ ձայնը դողում է: Միթե՞ խաղում է դարձյալ: - Իսկ եթե տպագրվի, գիտե՞ք, թե ինչ կլինի ինձ հետ:

- Կիեռացնեն աշխատանքից: Դրանում չեմ կասկածում, - ասացի ես:

Զեռքը թափ տվեց, իբր հարցն այդ չեմ:

- Կրանտարկեն,- հառաչեց նա,- կրանտարկեն ու վերջ:

- Եվ դուք, իմանալով այդ, շարունակում էիք խարդախություն անել, չէ՞ շարունակում էիք խարել մարդկանց ու պետությանը՝ որտեղ որ հնարավոր է, չէ՞,- զայրութը նորից բարձրանում ու խեղդում էր ինձ: Ի՞նչ է կատարվել ինձ հետ, ոչինչ չեմ հասկանում: Չեմ կարողանում հանգիստ խոսել:

- Գիտե՞ք ինչ,- ասաց Վեզիրյանը,- ես չեմ ուզում ինչ-որ արդարացնող հանգամանքներ թվել, միայն հավատացեք, որ սկզբում ես անմեղ եմ եղել: Ինձ թյուրիմացության մեջ են զցել ստորագրել եմ թղթերի տակ առանց կարդալու: Եվ հենց դրանով էլ ընկել եմ: Հետո արդեն վախեցել եմ բոնվելուց ու շարունակել եմ ընկել: Հավատացեք, ընկեր Լևոնյան:

- Դուք այդ արդեն ասել եք,- կտրեցի ես,- մեծ հաճույքով հավատում եմ, բայց դրանից դրությունը չի փոխվում: Երբսէ հաշվել եք, թե որքան գումար եք հափշտակել:

Ես երկու երեխա ունեմ, ընկեր Լևոնյան, երկու երեխա, որոնք փոքր չեն: Ամեն մեկն իր պահանջներն ունի, իր շրջապատը: Եվ ես էլ նրանց հայրն եմ ու պարտավոր եմ պահել նրանց: Իսկ գիտե՞ք, թե որքան է իմ աշխատավարձը: Այսպես թե այնպես վարչության պետ եմ: Մեծ դիրք ունեմ ու փայլուն շրջապատ, իսկ գիտե՞ք թե որքան է իմ աշխատավարձը: Եթե մի տաս ընկերոջ ուզածիս պես հյուրասիրեմ, տուն տանելու փող չեմ ունենա: Այնինչ ես հարյուր ընկեր ունեմ, ուզում եմ լավ հազնվել, ուզում եմ, որ իմ կինը, իմ երեխաներն ել լավ հազնվեն, ոչ ոքից ետ շմնան, ուզում եմ, որ լավ ապրենք, չեմ ասում փառահեղ, ասում եմ լավ, մարդավարի: Քանի՞ անգամ պիտի աշխարհ զանք:

Հիմար բան է, որ հայիոյել չի կարելի: Ես առանձնապես մեծ սեր չունեմ հայիոյելու, բայց այստեղ կարող էլ ցույց տալ, որ մի քանի ամիս աշխատել եմ պահածոների գործարանում:

Դողում էր ձեռքս, երբ մեկնեցի, բաժակը լցրեցի օդիով ու խմեցի, զգալով, թե ինչպես է դառնությունը տարածվում երակներիս միջով:

- Գուցե ինձ համար էլ մի փոքր լցնեիք,- խոսքը կիսատ թողեց Վեզիրյանը,- հրաշալի օդի է:

Ամեն ինչ հրաշալի է սրա համար, քիչ առաջ էլ ծնողներիս էր հրաշալի համարում նույն ոգևորությամբ: Լցրեցի նրա բաժակը, խմեց, փակելով աչքերն ու կնճռոտելով ձակատը: Թթվի ափսեն մոտեցրի նրան, տարութերեց գլուխը, նայեց ինձ մի տեսակ խղճահարությամբ ու հանկարծ ասաց.

- Հիմա, սա, օրինակ, կյա՞նք է, որ դուք ապրում եք: Զեր հարգարժան հայրը հիսուն տարվա բանվոր է, արտադրության մարդ, այսպես ասած: Դուք շրջկոմի աշխատող եք, ժուռնալիստ... Սա կյա՞նք է,- կրկնեց նա՝ հայացքը մեր իսկապես աղքատիկ սեղանին շրջելով, ապա բարձրացրեց գլուխն ու դիտելով մեր միակ սենյակի մերկ պատերն ու երկաթյա մահճակալները:

Հայրս հազար: Հիմա խոսելու է: Եվ իսկապես խոսեց՝ վիրավորված ինքնասիրությամբ.

- Դուք հանկարծակի եկաք, ընկեր Վեզիրյան, ճաշին լիներ, մենք միշտ էլ մի լավ բան կգտնեիք ձեզ հյուրասիրելու:

Վեզիրյանը ակնհայտ շփոթվեց:

- Շատ, շատ ներողություն, ես այդ չեմ ուզում ասել, հայրիկ,- շտապեց նա,- ես ընդհանրապես եմ խոսում: Ես կարծում եմ, որ դուք ավելի լավ կյանքի եք արժանի, միայն այդքանը: Այ, ձեր որդին իդեալականորեն է նայում կյանքին: Նրա համար այդ բոլորը նշանակություն չունի, նա չի աշխատել, որպեսզի իմանա, թե որքան դժվար է, երբ ստանում ես երկար սպասված աշխատավարձդ ու զգիտես ի՞նչ անել...

- Այ, այդտեղ արդեն սխալվում եք,- ասացի ես, զգալով, որ օդին արդեն սիրտս է հասել ու հիմա նա տրոփում է ուժգին, եռանդով,- սխալվում եք, ընկեր Վեզիրյան: Դուք հնարավորություն չեք տվել, որ ես չաշխատեմ:

- Ե՞ս,- ապշեց Վեզիրյանը:

- Դուք,- հևացի ես,- ձեր պատճառով ես տասներկու տարեկանից աշխատում եմ: Հասկացա՞ք: Արդեն տասը տարվա աշխատանքային ստաժ ունեմ ձեր պատճառով, զիտեի՞ք:

- Բայց... բայց ես ի՞նչ կապ ունեմ, դուք երևի շփոթում եք, ընկեր Լևոնյան:

- Զեմ շփոթում, ընդհակառակը, հիմա եմ տարբերում ու հասկանում: Զեր նման մեկն էլ հորս պետք, խազեինը եղած կլինի,- հիշեցի հաղթանդամ որմնադրի խոսքը,- այս ձեր ասած հրաշալի մարդն էլ է աշխատել զիշեր-ցերեկ ու չի կարողացել հասցնել ամեն ինչ, ստիպված ես էլ եմ աշխատել, որովհետև դուք, ձեզ նման մեկը, իվել է նրա աշխատավարձը, որպեսզի կարողանա հյուրասիրել իր հարյուր ընկերներին, լավ հազցնել իր երեխաներին ու կնոջը:

Որքան բարի եք դարձել, խղճահարությամբ եք նայում մեզ ու մեր ունեցվածքին: Հորս նման քանի՞ բանվոր ունեք, ի՞ր, ընկեր Վեզիրյան, այդ ինչո՞ւ ընդհանուր առմամբ նրանց մասին է չեք խոսում, ինչո՞ւ եք կարծում, որ նրանք ել ավելի լավ կյանքի արժանի չեն: Գուցե նրանք ձեզ նման երեխաներ չունե՞ն: Վարպետ Սերգոն հինգ երեխա ունի, բայց դուք հանգիստ խղճով կտրել եք նրա աշխատավարձի երեսուն տոկոսը, որովհետև համարձակվել է վիճել ձեր կապալառու Սոլախյանի հետ: Դուք... դուք ստոր մարդ եք, ընկեր Վեզիրյան...

Հայրս հազար՝ նախազգուշացնելով, որ ես չափն անց եմ կացնում, անհանգիստ շրջվեց տեղում:

- Արտակ.

- Ոչինչ, ոչինչ, հայրի՝ կ, - կրկին համակերպված, մոայլ ասաց Վեզիրյանը: - ընկեր Լևոնյանը երիտասարդ է, ես ներում եմ նրա տաքարյունությունը, նրա տարիքում գուցե ես ի եմ այդպես խոսել: Տեղն է ինձ: Լավ, ես չեմ արդարանում, դուք ճշմարիտ եք, արդարանալու ոչինչ չունեմ: Միաված, կորած մարդ եմ ես: Բայց դուք կարո՞ղ եք մեծահոգի լինել: Ասացեք, ընկեր Լևոնյան, միթե՞ դուք չեք կարող մեծահոգի լինել: Ես ներողություն եմ խնդրում ձեզանից, բոլորից, աշխարհից: Երդվում եմ, վաղն ներ դիմում կտամ, ինքս կհեռանամ աշխատանքից, բանվորություն կանեմ, միայն թե մի գրեք, մի խայտառակեր ինձ՝ իմ երեխաների, բարեկամների, ընկերների մոտ: Նրանք կարծում են, թե ես ազնիվ մարդ եմ, խնդրում եմ ձեզ, մի արեք այնպես, որ բոլորն ի երես թեքեն ինձանից, որ հարազատ երեխաներս լքեն ինձ: Ես դեռ այնքան ընկած չեմ, որ կարողանամ ապրել դրանից հետո: Հավատացեք:

Նա բարձրացավ սեղանից, աթոռը մի կողմ տարավ և ուզեց մոտենալ ինձ: Գինովությունս ասես սրբեցին ջնջոցով: Ավելի շուտ թվաց, թե դահլիճում նստած եմ, իսկ Վեզիրյանը խաղում է իմ առջև, թեմում: Բայց երբ տեղից բարձրացավ նաև հայրս, ու նայելով նրան, տեսա, թե ինչպես է դողում նրա ծնոտը և աչքերն արցունքով լցված են, շփոթվեցի սաստիկ: Խսկապես, հանկարծ ինքնասպանություն զգործի՝ այս մարդը: Քանի- քանի դեպքեր եմ կարդացել գրքերում:

- Դե, - ասաց հայրս, հուզմունքից կակազելով, դիմելով Վեզիրյանին, - դե դուք... վահ, ի՞նչ մարդ եք, ի՞ն հարբած չեք, այ մարդ: Նստեք, նստեք: Ասում է սպանեմ ինձ:

- Եվ կանեմ, հայրիկ, - կրկին աթոռին ընկավ Վեզիրյանը՝ գլուխը ձեռքերով բռնելով, - որովհետև... որովհետև, եթե տպագրվի այդ նյութը, իմ ապրելն այլևս չարժե...

- Արտակ, - ասաց հայրս: Նրա ծնոտը շարունակում էր դողալ մանրիկ ու նա ոչինչ չեր կարողանում անել դրա դեմ: - Արտակ, ինձ խոսք չի հասնում, համա մարդուն չի կարելի էս օրը զցել: Լավ չի: Թե ձեռքիցդ գալիս է, մի արա եղ բանը, տղա ջան, մի արա:

- Լավ, բայց ես ի՞նչ կարող եմ անել, - հուսահատ պոռթկացի ես, ավելի շուտ հորս հուզմունքից ազդվելով ու ապշահար դիտելով այն մարդուն, որ մոռացած իր ինքնասիրությունն ու արժանապատվությունը, նման տեսարաններ է սարքում ուրիշի տան մեջ: Զարմանալիորեն ես արդեն ատելություն չունեի նրա նկատմամբ: Ավելի շուտ խղճահարություն, կարիճին տրորելու անհրաժեշտության հետ ծնվող նողկանքի ու խղճահարության զգացում էի տածում դեպի նա: - Ի՞նչ կարող եմ անել ես: Նյութն արդեն տպարանում է:

- Զի կարող պատահել, այդքան շո՞ւտ,-տնքաց Վեզիրյանը: - Հիմա էլ տանջո՞ւմ եք ինձ, ընկեր Լսոնյան:

- Տանջելու ի՞նչ կա,- ակամա կրկին բարկացա ես,- ինձ մոտ ուղարկեցին: Ֆելիետոնը երեկվանից տպարանում է:

- Ուրեմն գուցե վաղը տպվի⁷, - իրեն կորցրած, տեղից ընդոստ վեր թռավ նա, ու աչքերը շողացին մի տեսակ:

- Չե,- ասացի ես,- ֆելիետոնը կտպագրվի երկու օր հետո, կիրակնօրյա համարում: Արդեն նախատեսված է:

Նա նորից գլուխը ձեռքերի մեջ առավ: Քիչ այն կողմ կարեկցանքից գունատված, անկարող տանելու մարդու նվաստացումը, ծանր շնչում էր հայրս, ու ես չեմ կարող չափելացնել.

- Դե, հիմա տեսնո՞ւմ եք, որ ուշ է, որ ես ոչինչ անել չեմ կարող:

- Եթե ուզենաք՝ կանեք,- գլուխը կախ ասաց Վեզիրյանը:

- Արտակ,- կամացուկ խնդրեց հայրս:

- Ի՞նչ, ի՞նչ,- բղավեցի ես: Ինձ այնպես էր զզվեցրել այս ամբողջ տեսարանը, որ ես պատրաստ էի ամեն ինչ անելու, միայն թե ազատվեմ դրանից, չտեսնեմ այդ մարդուն, չտեսնեմ հորս խեղճացած դեմքը: - Ի՞նչ, ի՞նչ, ասեք, ի՞նչ անեմ, ի՞նչ կարող եմ անել: Ես այլևս ոչինչ չեմ հասկանում: Ինչ ուզում եք կանեմ, միայն թե, միայն թե...

- Ասեմ, ասեմ, ընկեր Լսոնյան,- գլուխը բարձրացրեց Վեզիրյանը: Եվ հանկարծ ես նկատեցի մի բան, որ առաջ երբեք չեմ նկատի և փաստորեն նրան էի պարտական իմ զզաստանալու համար: Նա հիմա նման էր իր դերը հաջող կատարած ու արդյունքից գոհ դերասանի: Դեմքից անհետացել էր լարվածությունը, աչքերը փայլում էին, այնքան հավատացած էր իր հաղթանակին: - Ասեմ, ընկեր Լսոնյան, դուք կարող եք խմբագրին հայտնել, թե ֆելիետոնի այս-այս փաստերը անհրաժեշտ է նորից ստուգել, թե ինչ-որ տեղ այնպես չեք գրել, ինչպես պետք է... Եվ նյութը ձեզ կվերադարձնեն մշակելու: Մինչ այդ, իմ ընկերներից մեկը տեղ կհասնի, ու մենք արդեն մի բան կմտածենք: Խնդրում եմ, խոստացեք, որ կանեք:

- Բայց ի՞նչ կտա դա ձեզ,- աչքերս խոնարհեցի ես: - Ենթադրենք մի քանի օր ձգձգվեց, ի՞նչ տարբերություն:

- Դա ինձ լիովին բավական է,- ասաց Վեզիրյանը,- ես ձեզ երախտապարտ կմնամ ամբողջ կյանքում: Դուք կիմանաք, թե ինչ բան է իսկական ընկերությունը: Հարգելի բարեկամ,- ավելացրեց նա արդեն առաջվա ինքնավատահությամբ ու այնքան գործնականորեն, որ քիչ մնաց ծիծաղեի,- մեր կյանքում ընկերությունը շատ բան է որոշում: Եվ չպետք է արհամարիել այն: Եթե ուզում ես արագ բարձրանալ լեռը, միայնակ չես կարող, ընկերներ են պետք: Ընկերներ, որ պատրաստ են ամեն ինչ անել թեզ համար: Այսօրվա ձեր մեծ լավությամբ, Ճիշտ է, կկորցնեք մի քանի ոութիւն,- նա ծիծաղեց հեզնանքով,- հոնորար, ինչպես անվանում են ձեզ

մոտ, բայց փոխարենը ես ոչ միայն ձեզ տասնապատիկը կհասուցեմ, այլև դուք կունենաք ինձ նման, Կարո Բաղամյանի նման ընկերներ:

- Գիտե՞ք ինչ,- ասացի ես,- եկեք այստեղ մի շարաշահեք ընկեր Բաղամյանի անունը:
- Ո՞ւմ, Կարոյի՞,- Վեզիրյանը լիովին վերգտել էր իրեն,- սիրելի ընկեր, ես Կարոյին կարող եմ ասել մեռիք, և նա չի էլ հարցնի, թե ինչի համար: Եվ ես էլ նրա համար: Ես նրան կարող եմ ստիպել, որ ձեզ առաջ քաշի, և մի ամիս էլ չի անցնի, որ դուք քաղկոմում կլինեք: Մի՞ թե այսօր առավոտյան չկոահեցիք այդ, երբ զրուցում էիք նրա հետ:

Քաղկոմի քարտուղարի հետ մեր այսօրվա անձնական, ջերմ խոսակցության հիշատակումը Վեզիրյանի կողմից այնքան անսպասելի էր ինձ համար, որ դեմքս սկսեց վառվել: Ճիշտ է, դեռ առավոտյան ես անընդհատ կասկածում էի, թե Բաղամյանը Վեզիրյանի համար է ինձ կանչել, նրա խնդրանքով է խոսում ու սիրաշահում ինձ, բայց երբ նա ոչ մի բար չասաց թերթի հանձնարարության մասին և անգամ չտվեց Վեզիրյանի անունը, կասկածներս անհետացան: Իսկ հիմա, բանից պարզվում է, որ այդ բոլորը խաղ է եղել, փորբիկ մի կատակերգություն, որտեղ, չիմանալով այդ մասին ես տարել եմ բոլոր կատակերգություններում անհրաժեշտ միամիտ հիմարի դերը:

Տեր աստված, ի՞նչ կարելի է անել: Այսպես հո ստիպված պիտի լինես կասկածել ամեն ինչի ու ամեն մարդու: Ի՞նչ իմանաս՝ որն է ճիշտ: Հիմա ես ի՞նչ իմանամ, այս Վեզիրյանը ճի՞շտ է ասում, թե սա էլ իր հերթին է խարում նորից: Գուցե Բաղամյանը մեղավոր չէ, գուցե և մեղավոր է, գուցե բոլորը մեղավոր են, գուցե և մեղավոր չեն: Ուրեղի ՞ յիմանամ: Ուրեմն, եթե սրանից հետո մեկն ինձ բան ասի, ես պիտի անպայման կասկածեմ, թե ինչո՞ւ ասաց, ի՞նչ նպատակներ է հետապնդում, ինչու երեկ չասաց, այլ այսօր է ասում, իրականում ինչ պիտի ասեր, որ չասաց, եթե անեմ նրա ասածը՝ ինչ կլինի, եթե չանեմ՝ ինչ կլինի, ուրիշ ո՞ւ ու օգտակար կլինի իմ արածը և ո՞ւ կլջնամանա ինձ հետ: Այսպես հո խելազարվել կարելի է: Ուրեմն, չհավատա՞ս ոչ ոքի, եղք բոդի չի չհավատաս, հո բոդի էլ, Նանարի՞ն էլ: Չե, ավելի լավ է, առայժմ միայն քեզ չհավատամ, ընկեր Վեզիրյան, դու ինձ սովորեցրիր այս բոլորը, և ես քեզ անկեղծորեն երախտապարտ եմ դրա համար:

Եվ, ինչպես սովորաբար լինում է ինձ հետ հոգեկան ուժեղ լարումից հետո, ես միանգամայն հանգստացա, դատարկվեց ինչ-որ տեղ, և ես ասացի Վեզիրյանին ամենայն քաղաքավարությամբ, առանց ձայնս բարձրացնելու:

- Դե, իսկ հիմա գնացեք, ընկեր Վեզիրյան:

- Հա,- ասաց Վեզիրյանը,- իսկապես, շատ անհանգստացրի ձեզ, շատ ներողություն եմ ինդրում, հայրիկ, իմ պատճառով դուք էլ հուզվեցիք այդքան: - Նա կրկին նույն մարդն էր, որին ես առաջին օրը տեսել էի քաղկոմում ու շինվարչությունում. աչքերը շողում էին բարությամբ և լայն ծնոտը հաստատում էր նրա յուրաքանչյուր խոսքը: - Բայց, ոչինչ, պարտքի տակ մնացողը չեմ: - Բարձրացավ տեղից, նայեց այս ու այն կողմ, հետո ուղղվեց դեպի մորս կարի մերենան, որի վրա խոշոր մի կապոց կար՝ կապուտ ժապավենով փաթաթված. ես չէի նկատել: - Իսկ սա,- ասաց,- ինդրում եմ ընդունել բարեկամաբար, առանց ետին մտքի: Սա դեռ դատարկ բան է... - Շրջվեց դեպի ինձ, և որովհետև ես դեռ շարունակում էի անշարժ,

հանգիստ նայել նրան, հարցրեց,- իսկ նյութի համար, ուրեմն պայմանավորվեցինք, չէ՞, ընկեր Լոռնյան, բարեկամս...

Ես նայեցի հորս ու այս երեկոյի ընթացքում առաջին անգամ նկատեցի, որ նա ինձ հետ է: Լայն ճակատը կնճռոտած, մոայլված կանգնել էր պատի մոտ ու ինձ էր նայում, կարծես թե պատվիրել էր ինչ-որ բան ու սպասում էր, որ տեսնի, թե ես ինչպես եմ կատարելու իր ասածը: Եվ ես չուշացրի:

- Հայրս ասել է, որ միշտ պետք է հարգել հյուրին,- ասացի ես,- դրա համար կլ հանգիստ, անաղմուկ, վերցրեք ձեր կանխավճարն ու հեռացե՛ք: Դե, զնացեք, արա՞գ, ընկեր Վեզիրյան, բարեկամս...

Ի պատիվ իրեն, Վեզիրյանը այս անգամ առանց խաղալու, գունատվեց, ուզեց ինչ-որ բան ասել, չկարողացավ: Բոնեց աթոռի թիկնակը, մի քանի անգամ խաղացրեց աղամախնձորն ու վերջապես ասաց հեալով, բացահայտ ատելությամբ.

- Լա՞վ: Ես ամեն ինչ արեցի: Վե՛րօ: Ուզում էի խաղաղ վերջացնել: Չստացվեց: Ոչինչ: Ինքդ քեզ մեղադրի: Կիիշես այս օրն ու լաց կլինես: Իմ ազգանունը Վեզիրյան է: Իսկ երբ նյութի տպված տեսնես, նոր կպարծենաս, նոր կիսունք ինչպես պետքն է: Դու ինձ դեռ շատ կզգաս քո կողքին, ընկեր Լոռնյան: Էհ, ես իմ ասածն ասացի: Ցե՛: Ցտեսություն, հայրիկ, դուք կլ վկա, թող ձեր տղան չնեղանա ինձանից:

- Դու, դու,- ասաց հայրս կակազելով,- փիս մարդ ես, փիս:
- Դա դեռ հետո, հետո կիմանաք,- նետեց Վեզիրյանը արդեն միջանցքից:

Նրա զնալուց հետո մեզանից և ոչ մեկը երկար ժամանակ չէր խոսում: Խոհանոցից ներս եկավ մայրս, ուզեց ինչ-որ բան հարցնել, բայց, նայելով մեզ, լոեց շփոթված ու նստեց աթոռի ծայրին:

- Հիմա տեսա՞ր, հայրիկ, իսկ դու կյանքդ էիր պատմում, լաց էիր լինում նրա համար,- վերջապես չարախնդությամբ ասացի ես:

- Իսկ դու լսեցի՞ր, թե ինչ ասաց Բադալի տղու մասին,- պատասխանեց նա:
- Հա,-ասացի ես:

Հայրս հառաչեց:

- Զգիտեմ, չգիտեմ, բայց դժվար պիտի լինի քո գործը, տղա շան:

ՆԵՐՈՂՈՎՐՅՈՒՆ, ՑԱՆԿԵՏՈՎՐՅՈՒՆ, ՇՆՈՐԻՀԱԿԱԼՈՎՐՅՈՒՆ

Ալո՛, ալո՛, Խմբագրությունի՞ց է: Ո՞վ է լսում: Ընկեր Սարյանին եմ խնդրում: Ի՞նչ: Շատ լավ, կսպասեմ:

Համարյա ամբողջ զիշեր չկարողացա քնել: Տառապում էի ու անընդհատ շրջվում անկողնուս մեջ: Տառապանքս ավելի էր մեծանում նրանով, որ զգում էի՝ հայրս էլ չի քնել: Երկու անգամ վեր կացավ ու խոհանոց գնաց: Այնտեղից մերթ ընդ մերթ լսվում էր նրա հազր: Երևի ծխում էր ու շրջում: Արագ-արագ դրոնից մինչև պատը, պատից մինչև դուռը, ծանր, սիրտ մաշող մի ձանապարհորդություն պատի ու դրան արանքում, որտեղից սակայն ելք չկա: Մեկը մեկից տանջող մտքեր, մեղվի գազազած պարսի պես, բզզում հա բզզում են ուղեղիս մեջ, ցատկուում, խառնվում իրար: Որոշակի չեմ էլ կարող ասել, թե ինչ եմ մտածում, պարզապես մտածում եմ: ուղեղս մտածում է ինքն իրեն, չի հանգստանում, չի ուզում կանգ առնել, որպեսզի ես քնեմ: Մի անգամ էլ է ինձ հետ այդպիսի բան պատահել: Ե՞րբ: Չեմ կարողանում մտարերել: Բայց եղել է: Մի բան, որից ուզում ես փախչել ու չեմ կարողանում: Զա, հիշեցի, զյուղում, փոքր ժամանակ, երբ հովիկ քերիս ինձ իր հետ դաշտ էր տանում ու երբ կեսօրին ոչխարը մակաղում էր գերեզմանատան ծուռ խաչքարերի արանքում, ես պառկում էի քիչ հեռու, կանաչին, արևի տակ, զյանքի աշքերիս էի շրջում ու աշխատում քնել: Արևը տաք, տաք, դուրեկան, ծովանում ես շրջվել ու թուլանում ես մի տեսակ: Գյանքի հյուսվածքի մանրիկ ծակոտիների միջից նայում էի արևին: Հիմա ոչ թե մեկ, այլ հազարավոր արևներ էին երևում, ամեն մի անցքի միջից մի արև, այն էլ ոչ սովորական, այլ գույնզգույն, մանրիկ ու մեծ: Հետո երևի կկոցում էի աշքերս, որովհետև արևները սկսում էին պտտվել ու պտտվել, հետապնդել իրար, խառնվել ու խոշորանալ և մեկ էլ մանրանում էին ու ցրվում, պտտվում էին այնպիսի տեղերում, որտեղ իմ աշքերը չեին կարող տեսնել, բայց ես զգում էի, որ պտտվում են քունքերիս մոտ, զյանքի վերևում, ծոճրակիս շուրջը: Գյուխս դժո՞ւմ էր, աշքերս ցավում էին՝ կոպերիս անկյուններում նրանց որոնելուց, ու ես փակում էի կոպերս, որպեսզի ոչինչ չտեսնեմ: Զուր, ոչ մի տարբերություն, արևները շարունակում էին պտտվել, խառնվել իրար, կորցնում էին իրենց գույները, խամրում ու գորշանում, բայց շարունակում էին պտտվել անդադար, կատարորեն: Եվ ոչինչ անել չես կարող, կուզես կողքի շրջվիր, կուզես պառկի բերանքսիվայր, բացիր կամ փակիր կոպերդ: Ապարդյուն: Քո իսկ ստեղծած արևների գերին ես:

- Դուք սպասո՞ւմ եք,-տեղեկանում է քարտուղարուիին:
- Այո՛, այո՛:
- Մի բոպե ևս, խնդրում եմ, ընկեր Սարյանը խոսում է կառավարականով: Հիմա կվերցնի:
- Շնորհակալություն:

Մտքերն ինձ տանջում էին խամրած ու գորշ մոլորակների պես, և ես անզոր էի փախչելու նրանցից: Հազար ու մի պատառիկներ էի հիշում այստեղից ու այնտեղից, արտասանված տարբեր մարդկանց կողմից, տարբեր ժամանակներում, բայց դրանց արանքում, ուժգին հոսող շիթի պես, համարյա բառ առ բառ վերիշում էի Վեզիրյանի խոսքերը, որ ասաց երեկոյան, և

իմ պատասխանները: Եվ որպես իմ պատասխաններ, այնպիսի խոսքեր էի հիշում, որ իրականում չեի ասել: Մտքիս մեջ ամեն ինչ լավ էր ստացվում, բայց որովհետև գիտեի, որ այդպես չի եղել, տառապում էի: Չեի ուզում խոստովանել, բայց վախեցած էի: Ես վախենում էի Վեզիրյանից: Նա ասաց. «Դու դեռ ինձ շատ կզաքա քո կողքին, ընկեր Լևոնյան»: Այդպիսի մարդը, դեմքին մեկ բովեռում հարյուր տեսակ արտահայտություն տվող մարդը, կարող է ամեն ինչի ընդունակ լինել: Եվ գուցե տապալի ֆելիխետոնը: «Բայց երբ նյութի տպված տեսնես, նոր կպարծենաս»: Ուրեմն վստահ է իր ուժերին: Դե, իհարկե, ինչ-որ մեկի է սպասում: Ո՞վ է այդ մեկը, Սարյանից էլ մեծ հո չի՝ կարող լինել: այսինքն՝ ո՞վ գիտե: Բայց ի վերջո, պետք է կարողանա՞ն հերքել փաստերը, թե՝ ոչ: Հոգործերը չե՞ս կարող անհետացնել: Պատճենները ինձ մոտ են: Ուրեմն ինչո՞ւ եմ վախենում: Ինչ՞ո՞ց: Բոլոր ուաքերում պետք է խոսել ընկեր Սարյանի հետ, գուցե ժամանակ ունենա, ընդունի ինձ, կամ գուցե ինքը բան ունի ասելու, չի՞ որ վաղը տպագրվելու է: Ինչ լավ կլինի, եթե շուտ խոսեմ, բանի Պարթեր կամ որևէ մեկը չի եկել:

- Ալո, խոսեք:
- Ընկեր Սարյան, բարե՛ ձեզ: Ընկեր Սարյան, Արտակն է անհանգստացնում, Լևոնյանը:
- Հա՛, ի՞նչ կա, Լևոնյան:
- Ուզում էի մի քանի բովեռվ ձեզ մոտ գալ: Եթե ժամանակ ունեք:
- Ժամանակ չունեմ, ժամանակ չունեմ, ի՞նչ կա, հեռախոսով ասեք:
- Ֆելիխետոնի կապակցությամբ ուզում էի...
 - Դե, ի՞նչ է, ֆելիխետոն, ֆելիխետոն... - զգում եմ, որ վրդովված է խմբագիրը, անբարենպաստ ժամանակ եմ զանգահարել: - Հետաքրքիր մարդ եք, ընկեր Լևոնյան, դեռ մի բան չգրած՝ տարածել եք քաղաքով մեկ, առաջին անգամ շլհներ՝ շատ խիստ կխոսեի ձեզ հետ: Այո, այո, ժուռնալիստական էթիկայի հարց կա: Պետք է իմանալ, պետք է իմանալ...
 - Ընկեր Սարյան, ի՞նչ եք ասում, ազնիվ խոսք, ես ոչ ոքի չեմ ասել:
 - Ինչպե՞ս թե չեք ասել, ուրեմն որտեղի՞ց գիտեն, արդեն տասը տեղից զանգ են տվել, գիշերն էլ չեն թողնում քննեք: Եվ վերջապես ձեզ ո՞վ է թույլ տվել կոպտել, սպառնալ մարդկանց, պարծենալ, թե ֆելիխետոն կգրեմ, կտեսնեք ձեզ ինչ կանեմ: Չեի սպասում ձեզանից, չեի սպասում, ինչպես երևում է, ես էլ եմ շտապել:
 - Վա՛յ, ընկեր Սարյան...
 - Ի՞նչ ընկեր Սարյան, Սարյանը ձեզ ե՞րբ է ասել, թե խիստ գրեք, թե ես հին հաշիվներ ունեմ այդ... այդ Վեզիրյանի հետ, ի բարեբախտություն ինձ, որի երեսն էլ չեմ տեսել:
 - Բայց... բայց այդ բոլորը սուտ են, ազնիվ խոսք եմ ասում, դրանք, դրանք...

- Չգիտեմ, չգիտեմ, մարդիկ գրել են, լսողներ են եղել, տասը մարդ է ստորագրել, կենտկոսի բաժնի վարիչն է զանգ տալիս, չի կարելի այդպես, բոլորին իրար եք խառնել, այ ընկեր Լևոնյան:

- Ես բարձրանում եմ տեղիցս, ձայնս դողում է.
 - Ես ոչ ոքի չեմ սպառնացել, հավատացեք, իլ, ինչո՞ւ պիտի պարծենայի, երեխա հո չե՞մ, ընկեր Սարյան, միթե՞ ես ձեր անունից սուտ-սուտ բաներ կասեի, ինչի՞ համար... Նրանք ուզում են ձեզ թյուրիմացության մեջ գցել, որպեսզի...
 - Ինձ թյուրիմացության մեջ գցելն այնքան էլ հեշտ չէ, թող ականջներին օ՛ անեն: Եվ դու էլ իմացիր... - (փառք աստծո, անցավ «դու» - ով է խոսում արդեն, թեթևացած շունչ քաշեցի ես), - չկարծես թե նրանց ասածները ես հալած յուղի տեղ եմ ընդունում: Եթե կուզես իմանալ, ես նույնիսկ մի քիչ ավելին գիտեմ, այո՛, այո՛, ես նույնիսկ մի քիչ ավելին էի սպասում, բայց ոչ հիմա: Մի՛ առարկիր, դա արդեն քո մեղքն է, ավել-պակաս բաներ ես ասել...
 - Ընկե՛ր Սարյան, ախր ես ոչ մի...
 - Ասել ես, ասել ես, նույնիսկ ասել ես, որ կիրակի օրն է տպվելու: Ա՛յ տղա, ա՛յ հոգիս, մի՛ բարկացրու ինձ, ինձանից ու քեզանից բացի ո՞վ գիտեր, որ կիրակի օրն եք նախատեսել:
- Ընդ, տես թե ինչից ինչ է դուրս գալիս:
- Դա ճիշտ է, բայց ես չգիտեի ինչ անել: Երբ մեր տուն եկավ...
 - Ո՞վ էր ձեր տուն եկել:
 - Վեզիրյանը:
 - Ohn՛, դա արդեն հետաքրքիր է:
 - Այո, ընկեր Սարյան, երեկոյան մեր տուն էր եկել: Մի կապոց էլ բերել էր հետք, - (կարմրեցի, գուցե ոչ մի միտք չուներ ասելու այդ), - խնդրում, աղերսում էր շտպագրել, ասում էր ինքնասպանություն կզործեմ: Հայրս էլ լաց էր լինում: - (Այսպես էլ հիմարությո՞ւն, սրա՞նք ինչու եմ ասում):
 - Հա՞յրդ ինչու էր լաց լինում: Ճանաչո՞ւմ էր, ինչ է:
 - Զէ, խղճում էր: ես ասացի, որ ոչինչ անել չեմ կարող, չգիտեի ինչ անել, ասացի, որ տպարանում է:
 - Հը՛մ, հը՛մ, և հետո..
 - Հետո սկսեց սպառնալ, ասաց, որ միևնույն է, ֆելիետոնը լույս աշխարհ չի գա, ինչ -որ ընկերոջ մասին էր խոսում, որին սպասում է, ասում էր ձեր խմբագիրն ինքն իր ձեռքով կպատոի ֆելիետոնը: Կստիպեն: (Դե գնա, ընկեր Վեզիրյան, որ այդպես է, քո հերն էլ անիծած):

- Այդպես էլ ասա՞ց:
- Այո, մի քիչ էլ հարբած էր...
- Իսկ զուցե այդ բոլորն ավելացնե՞նք ֆելիետոնի տակ, ի՞ր՝ «Երբ նյութը արդեն շարված էր» վերնագրով, առանձին: Մտածելու բան է: Լավ, թող մնա, տեսնենք:
- Ընկեր Սարյան, ուրեմն, վաղը...
- Տեսնենք, տեսնենք, եթե պաշտոնական որևէ բան չգա... Ասենք քեզ ասելով վտանգավոր է արդեն, բերանդ չես կարողանում փակ պահել...
- Ընկեր Սարյան...
- Լա՛վ, լա՛վ, կեցվածք մի ընդունիք: Տեսնենք... Հա՛, ընդհանրապես ինչպէ՞ս ես ստորագրում նյութի տակ:
- Ա. Լունյան:
- Եթե շատ ես վախենում, կարող ենք կեղծանունով տպագրել:
- Չե, ընկեր Սարյան, չեմ վախենում:
- Լավ, թող լինի Ա. Լունյան: Վատ չէ: Նույնիսկ հնչում է...
- Շատ շնորհակալություն, ընկեր Սարյան, ներողություն, ցտեսություն:
- Երկար ես խոսում, ընկեր Լունյան, ցե՛:

Լավողը ցած դնելուց հետո, երկար ժամանակ ակամա շարունակում էի ոտքի վրա մնալ և առանց զգալու, անընդհատ կրկնում էի «շնորհակալություն, ներողություն, ցտեսություն», «ներողություն, ցտեսություն, շնորհակալություն» և երսի դեռ շատ շարունակեի, եթե անաղմուկ ներս մտած Սարգսյանը չծիծաղեր:

- Արտակ, այդ ի՞նչ ես արտասանում:
- Ցտեսություն, ներողություն, շնորհակալություն,- ասացի ես:
- Եվ ո՞ւմ իին ուղղված այդ խոսքերը:
- Չեզ, ընկեր Սարգսյան, եթե թույլ տաք զնալու համալսարան և հանձնելու իմ վերջին պետական քննությունը:

Սկսել Եմ ճանաչել Մարդկանց

Մենք շատ էինք քննություններ հանձնել այս իին համալսարանում: Բայց սա նման չէր ոչ մեկին: Ու թեև ոչ ոք չկտրվեց, բայց սա ամենատխուր քննությունն էր: Իրար չէինք Էլ հարցնում, թե ինչ ստացար, ո՞չ մեկը դուրս չէր գալիս ստուգարքային գրքույկը ձեռքին, ո՞չ մի բացականչություն չէր լսվում: Ժուրնալիստական բաժնի հինգերորդ կուրսը դեռ երբեք այսքան կարգապահ չէր եղել:

Այս վերջին տարում մեր կուրսն այնքան համերաշխ չէր, ինչպես առաջ: Արդեն ոչ թե միասին, այլ փոքրիկ խմբերով էինք գնում կինոն կամ համերգ: Ով քննություն տվեց, մյուսներին չէր սպասում առաջվա պես, այլ դուրս էր թռչում Համալսարանից: Մուտքի մոտ օտար տղաներ էին սպասում մեր աղջիկներին ու օտար աղջիկներ՝ մեր տղաներին: Աղջիկները, մեր աղջիկները, հինգ տարի շարունակ աշխարհից կտրված, Չերնիշևսկու գեղագիտական հայացքներին քաջածանոթ, քաղաքատնտեսության առաջին մասն անզիր արած, քաղաքացիական կոյփների շրջանի ճակատային թերթերն ընթերցած, Ստենդալի ու Ֆլոբերի հերոսներին սկզբունքային դիրքերից մերկացնող, քննությունների ժամանակ երկար միջանցքներում ջուր խմող թռչունների պես գլուխները մեկ ներքո՝ տեսրին հառելով ու մեկ էլ վեր՝ առ երկինք ինչ-որ խոսքեր մրմնջալով երթեւկող մեր աղջիկները հանկարծ ողջ պարզությամբ նկատել էին, որ ավարտում են համալսարանը և առնվազն քսաներկու տարեկան են: Քսաներկու տարեկան... Հարկավոր է ինչ-որ բան անել: Ու նրանք սկսել էին ավելի լավ հագնվել, ավելի ճաշակով հարդարել մազերը, շրթներկ էին քսում ու հմայիչ, ուշացած ժպիտներ սփոռում իրենց շուրջը:

Բայց այսօր ուրիշ էր բոլորովին: Ով քննություն էր տալիս, դուրս էր գալիս ու կանգնում պատի տակ լուս, սպասումով: Ասես մեծացել էինք միանգամից: Պետական քննություն ընդունող հանձնաժողովն է դուրս եկավ: Դասախոսներն անցան մեր կողքով՝ հոգնած ու մտքերով տարված: Մենք լարվեցինք մի տեսակ, սպասում էին, որ նրանք կիսուն, մի բան կասեն, կիավաքեն մեզ, գուցե և գրկենք իրար, գուցե և լաց լինենք մի քիչ: Չե, անցան մեր կողքով, Սարյանի պես կարձ «ցե» ասելով և մտան այն սենյակը, որի վրա գրված էր «պրոֆեսորական»: Անխիղճ մարդիկ են, նրանց այնպես է թվում, թե վաղն էլի հանդիպելու ենք, «ցե» են ասում: Չեն մտածում, որ վերջ, էլ չենք գալու, մի քանի օրից ստանալու ենք դիպլոմներն ու չվելու, բաժանվելու ենք, ոչ միայն իրենցից, ոչ միայն համալսարանից, այլև իրարից: Ու մեկ էլ, ով գիտե, երբ տեսնենք իրար, փոքր է Հայաստանը, բայց շրջանները հեռու են՝ իրենց թաշկինականման թերթերով, օտար, անծանոթ մարդկանցով ու տեղական հոգսերով:

- Վրե՛ժ,- ասաց մեր կուրսի ամենահամեստ աղջիկը՝ Լուիզան:
- Վրե՛ժ,- աշխուժացած ձայնեցինք մենք և արագ ծրագիր կազմելով, ամբողջ խմբով ուղղվեցինք դեպի «պրոֆեսորական» կոչված սենյակը, խոնվեցինք դուռն մոտ: Վարդգես Աշտարակեցին բացեց դուրս ու ամենախոնարի, թռչակ խնդրող ձայնով հարցրեց.
- Կարելի՞ է:

- Ո՞՛Հ- բամբ ձայնով հայտարարեց մեր դեկանը, որը մեզ շատ էր սիրում, վախենում էր երես տալուց ու երես էր տալիս: - Ո՞՛Հ, չի կարելի, դեկանատի նիստ է:

- Դա մեզ չի հետաքրքրում:

- Այսպես էլ կա՞րգ կլինի:

- Բյուրոկրատությունն էլ չափ ու սահման պիտի ունենա:

- Բողոքում ենք, կդիմենք ուր հարկն է: Սուտ, ոգևորված աղմկեցինք մենք:

Դեկանը զարմացած բարձրացավ տեղից, խոժոռեց ճակատը: Դասախոսները ևս ոտքի կանգնեցին: Անլուր բան է, այս ի՞նչ է պատահել, որ ուսանողները կորցրել են իրենց, քիչ առաջ խոնարհ ու լուր կանգնել էին պատի տակ:

- Ի՞նչ է նշանակում այս բոլորը, - որոտաց դեկանը:

Հրեցինք և Վարդգեսը մի քայլ առաջ գնաց:

- Հարգելի ընկեր դեկան, հարգելի պրոֆեսորներ և դոցենտներ, - զրնգուն, պիոներական ձայնով ազդարարեց Վարդգեսը, - ես ժուռնալիստական բաժնի նախկին հինգերորդ կուրսի նախկին ուսանողների անունից լիազորված եմ հայտնելու ձեզ, որ... - այստեղ մեր մունետիկը, ինչպես հարկն է կանգ առավ, որպեսզի ուժեղացնի լարումը... - որ խորին շնորհակալություն ենք հայտնում ձեզ այն ամենի համար, ինչ դուք արել եք, որպեսզի մենք հնարավորությունների սահմաններում զարգացած մարդիկ դառնանք: Եվ ներեք մեզ, եթե երբևէ վշտացրել ենք ձեզ: Հաջողություն ձեզ, ձեր մեծ ու ծանր աշխատանքում, թող ավելի լավ ուսանողներ գան, քան մենք էինք: Դուք էլ մեզ հաջողություն ցանկացեք, որովհետև ողջ կուրսով գնում ենք ռազմաճակատ:

- Շնորհակալություն, - երեսնաձայն որոտացինք մենք:

Ու շիկնեցին, ու ծիծառական մեր դասախոսները: «Պրոֆեսորականը» ու դեկանատի նիստը մոռացած, նրանք շրջապատեցին մեզ, միացան մեզ, և մենք աղմկեցինք, ինչպես ժողովի ընդմիջմանը, միջանցքում: Բոլորն այնպես լավն էին, այնպես բարի ու այնպես հուզված, «ցե» ասող դասախոսները կակագելով էին խոսում, իսկ մեր աղջկները նայում էին նրանց սիրահարված աչքերով ու լաց էին լինում:

- Դե, իսկ հիմա «ցե», - ասացինք մենք:

Դուրս եկանք համալսարանից, շարվեցինք իրար ետևից կարճահասակ ցայտադրյուրի մոտ ու հերթով խմեցինք համալսարանական սառը ջուրը, նույն հերթականությամբ սեղմեցինք զարմացած պահակի ձեռքը, որն ամենադաժանն էր համալսարանի պատասխանատու աշխատողների մեջ, և փողոցն անցնելով մտանք Ղուկասյանի այգին: Ընտրեցինք ներքեւի խուլ ծառուղին, խախտելով կարգը, ծանր նստարանները մոտ բերեցինք: Զգաստ լուսանկարիչն իսկույն հասկացավ, թե ինչ է կատարվում մեզ հետ, առանց հարցնելու, ողբուժի նմանվող

հնադարյան ապարատն ուսած եկավ ու կանգնեց մեր դիմաց: Ամրացրեց ոտիկները, բարձրացրեց ձեռքը և ուզում էր սովորականի նման ասել, որ... բայց ես կանխեցի:

- Հենց ասել ես՝ ժպտացեք, կսպանեմ,-ասացի ես,- նկարի այնպես, ինչպես կանք:

Ու որովհետև բոլորը ծիծառեցին, ես այդ նկարում ամենալուրջն եմ և պատահական մարդու տպավորություն եմ թողնում:

- Եկեք մի ուրախ երգ երգենք,- ասաց մեր կուրսի երկրորդ ամենաուրախ աղջիկը՝ Լիդան (առաջինը ժամկետից շուտ ամուսնացել էր և «նանիկ ասեմ տիկնիկիս» էր երգում Նալբանդյան փողոցի ներքնահարկերից մեկում): Լիդան իր զմրուխտյա, արցունքու աչքերը հառեց երկինք ու սկսեց.

- Ծառի կանաչ տերևը, կանաչ ծառի տերևը, տերևը...

Ուրիշ ժամանակ մենք կարող էինք միայն այս խոսքերն անընդհատ կրկնելով՝ երկու ժամ երգել ու պարել, դասերն ու աշխարհը մոռացած: Բայց հիմա միայն մի քանի հոգի, առանց իրար նայելու, անհամերաշխ ձայնակցեցին Լիդային, ու որովհետև երգը շատ տխուր էր ստացվում, թողեցին անմիջապես, լոեցին:

- Երեխաներ,- ասաց Վարդգեսը,- ես մի ավելի լուրջ առաջարկություն ունեմ: Մրանից հարմար ժամանակ մեկ էլ դժվար թե լինի: Դուք չեք ք նկատում, որ այս վերջին տարում առաջին անգամ է Արտակ Լևոնյանը մասնակցում մեր հավաքույթին: Եվ որովհետև մենք շատ անգամ ենք որոշել քննել նրա հարցը՝ դասախոսություններից սիստեմատիկաբար բացակայելու, մեր միջոցառումներին շմասնակցելու համար և միշտ էլ չենք կարողացել քննել, որովհետև ընկերը ժողովներին ևս չի եկել: Դրա համար էլ եկեք հիմա քննենք նրա հարցը: Միևնույն է, նա էլ ձեռքներս չի ընկնի:

- Ճիշտ է,- բղավեցին ժողովներին սովոր իմ ընկերները:

Ես փախչելու մի կեդծ շարժում կատարեցի՝ «օգնեցեք» գոռալով, Բայց Հայկը բռնեց ինձ ու քարշ տալով բերեց նատացրեց երկու անբաժան հաստիկ ընկերուիիների միջև, որոնք մեր կուրսի պատմության մեջ հայտնի են Ճզը և Բզը անուններով:

- Դուք իրավունք չունեք քննելու իմ հարցը: Ես շրջկումի անդամ եմ, անձեռնամիւելի անձնավորություն,- բողոքեցի ես:

- Մենք բոլորս էլ շրջկումի անդամներ ենք,- անխռով ձայնով հայտարարեց մեր կուրսի ավագը՝ Շավարշը, որը մեզանից ավագ էր նաև բարիս բուն իմաստով. Մարտունիում մասնակցել էր Հայրենական մեծ պատերազմին և առաջին կուրսում մեծ խորհրդավորությամբ, որպես զաղտնիք, բոլոր աղջիկներին առանձին-առանձին հայտնում էր, թե զրբերում այնքան հոլովվող հերոս պարտիզան Շ- ն հենց ինքն է՝ Շավարշը:

Նա մի գիրք վերցրեց ձեռքը՝ որպես դասամատյան, և էջերը շրջելով, խուլ ձայնով ասաց.

- Արտակ Լևոնյան: Խոսենք փաստերով: Առաջին կիսամյակում բաց է թողել քանչորս ժամ, որից անհարգելի՝ քաններեքը:
 - Իսկ այդ ի՞նչ հարգելի մի ժամ է,- կոպերը ծանրորեն բացեց Վիլենը, որը աներևակայելի, տաղանդավոր ծովյլ էր և նույնիսկ կոպերը բացելը հավելյալ աշխատանք էր համարում:
 - Դա այն մի ժամն է, երբ ընկեր Լևոնյանին ազատեցինք դասից, որպեսզի ներկայանա դեկանին և պատասխան տա իր բացակայությունների համար,-զեկուցեց ավագը: - Երկրորդ կիսամյակում բաց է թողել տասնչորս ժամ:
 - Ակնհայտ առաջադիմություն կա,- բարեխոսեց Զավադը, որը դեռևս չորրորդ կուրսում իրենց շրջանի դեկավարներից հրավեր էր ստացել աշխատելու որպես շրջանային թերթի խմբագիր և դրանից հետո դասախոսության տետրում, յուրաքանչյուր տողի տակ գծում էր ու փակագծի մեջ գրում (ընդգծումն իմն է՝ Զ. Ս.):
 - Մի փոքրիկ բացատրություն,-կտրեց ավագը: - Երկրորդ կիսամյակում ընդամենը երկու ամիս եք դաս ունեցել:
 - Այստեղ խորը թյուրիմացություն կա,- վրդովված վեր ցատկեցի ես, մինչև ձգն ու Բզնել էին ձեռքերս: - Այս ի՞նչ է ստացվում, թանկագին ընկերներ, շրջկոմում ինձ քննադատում են, թե փախչում եմ աշխատանքից և դասի եմ զալիս, իսկ դուք կել բողոքում եք, թե դասերից եմ փախչում: Հանձնաժողով ընտրեք ու իրար հետ պարզեցեք այս կնճռոտ խնդիրը: Ուրեմն որտե՞ղ եմ լինում: Պե՞տք է, որ ինչ-որ տեղում եղած լինեմ, թե՝ չե:
 - Տիկնիկային թատրոնում,- առանց աշքերը թարթելու մատնեց Հայկուշը:
 - Թողանթանանա,- բացականչեց Ռոբերտը: Նա այնքան արագ էր խոսում, որ քչերն էին հասկանում նրան, իսկ դասախոսներն արագ որևէ թվանշան էին դնում ու ազատում քննությունից, որպեսզի ստիպված չլինեն ամեն անզամ կրկնել տալու նոր նախադատությունը: - Անթանանաթող:
 - Թարգմանիչ եմ պահանջում,- առարկեցի ես, - պարտավոր չեմ պատասխանելու այն հարցին, որը չեմ հասկանում:
 - Հարգելի ընկեր Ռոբերտն ասաց. «թող անթանանա», որը նրա մայրենի լեզվով՝ խրդերենով նշանակում է «թող արդարանա», - թարգմանեց Վարդգեսը:
- Ռոբերտը հավանությամբ գլուխ տվեց:
- Եվ այստեղ իմ բարձրագույն կրթություն ունեցող ընկերներն անամոքաբար իրենց պահեցին ճիշտ այնպես, ինչպես իլֆակտորովյան ազրավատան անզրագետ քնակիչները մեծ երազող Վասիլուսա Լոխանկինի նակատմամբ: Նրանք փաստորեն սկսեցին ծաղրել իմ զգացմունքները:
- Արդարանալու բան չկա, ես միաժամանակ աշխատում եմ, այդ պատճառով էլ...

- Մենք բոլորս կլաշխատում ենք,-ընդմիջեցին նրանք,- հասարակական աշխատողներ ենք:
- Բայց ես նաև սիրած աղջիկ ունեմ:
- Մենք բոլորս կլաշխատ աղջիկներ ունենք,- ձչացին նույնիսկ մեր աղջիկները:
- Իսկ արյան պակասությու՞նը, դրա՞ն ինչ կասեք, չէ՞ որ ես արյան պակասություն ունեմ:
- Մենք բոլորս կլաշխատ պակասություն ունենք,- բղավեցին նրանք: Ըստ որում ամենից բարձր գոչում էին հաստիկ, կարմրաթուշ ընկերուիհիները ձգը-ն ու բգը-ն:
- Հետո, ես նկատում եմ, որ վերջերս բորի հարուցիչներ են հայտնվել ինձ վրա, -քիչ մտածելուց հետո ասացի ես:
- Մենք բոլորս կլաշխատ հարուցիչներ ունենք,- ուրախ հայտարարեցին նրանք: - Այդ դեպքում, ես առաջարկում եմ այրել մեզ, - ասացի ես: Չէ՞ որ մենք հերոսական սերունդ ենք, մեր հայրերը անձնազնության փայլուն օրինակներ են տվել:
- Դա դեմագոգիա է, - ասաց պարտիզան Շ.-ն, - դատարանը թող կայացնի իր վճիռը:

Եվ դատարանը որոշեց. կուրսի յուրաքանչյուր ուսանող աջ ձեռքի երկու մատով պետք է խփեր իմ բաց դաստակին: Իսկ երբ մահապատիժին ի կատար էր ածվում, ես՝ շփելով ուռած դաստակս, այնուամենայնիվ գոհունակությամբ մտածեցի, որ սկսել եմ ճանաչել մարոկանց: Նախքան ինձ մոտենալը, ես արդեն զիտեի, թե այս կամ այն ընկերն ու ընկերուիհին ուժե՞ղ կխփի, թե՞ թույլ, պարզապես կշոյի, թե՞ կաշխատի ցավ պատճառել: Եվ միայն մի անգամ սխալվեցի: Մեր կուրսի ավագը, քանաքեռյան քաջ պարտիզան Շ.-ն, որին ես տանել չէի կարողանում և զիտեի, որ նա էլ կիսում է իմ զզացմունքները, մոտենալով, սառն աչքերով նայելով ինձ, միայն թոթվեց ձեռքս, երբ ես ուժգին հարվածի էի սպասում: Զարմացա, բայց հետո կոսիեցի, որ նա իր հարվածը պարզապես ավելի հարմար առիթի փոխադրեց, մի ավելի լուրջ առիթի:

Այդ Զարմանալի Ընտանիքը

Շրջանայինում, ժամացույցի տակ աչքերով ակամա Նանարին փնտրեցի, թեև հաստատ գիտեի, որ նա տանը պետք է լինի: Եվ Նանարի փոխարեն տեսա Մանուկին:

- Մեռա քեզ ման զալով հարձակվեց նա, - որտե՞ղ ես, ի: Շրջկոմում ասացին համալսարանում է: Համալսարանում ասացին՝ եկավ գնաց: Տիկնիկային թատրոնում ասացին՝ մինչև հիմա չի եկել: Տանն ասացին՝ տանը ե՞րբ է լինում: Խմբագրությունում ասացին...
- Սպասիր, դու ինչ է հետախուզո՞ւմ ես կազմակերպել: Ի՞նչ է պատահել:
- Ես կորած եմ,- ասաց Մանուկը՝ մեծ զլուխը տիրությամբ օրորելով,- ողբերգություն եմ ապրում: Ահավոր բան է,
- Չինի՞ն նորից վիճել ես Նվարդի հետ, սովոր նրա խուճապահար բնավորությանն ու վերամբարձ բացականչություններին, գործնականորեն հարցրի ես: Հաշտեցնե՞մ:
- Չե, ինչ ես ասում: Սոսկալի բան է: Չգիտեմ ի՞նչ անեմ, ուր գնամ...

Ես արդեն անհանգստացա:

- Դե ասա, տեսնեմ, ի՞նչ է եղել: Գուցե Նվարդը ուրիշի...

Մանուկը միանգամից լրջացավ ու բռնեց ձեռքս:

- Ի՞նչ, դու որևէ բա՞ն գիտես:

Հիմա էլ երկար ժամանակ համոզում էի, որ ոչինչ չգիտեմ, որ այդպես ենթադրեցի՝ նրա հուսահատությունը տեսնելով: Վերջապես հանգստացավ:

- Չե,- ասաց նա, - Նվարդն ինձ է սիրում, ի՞նչ ես խոսում, հիմա երևի նստած լաց է լինում տանը: Նրա հայրը, այդ տաճկաստանցին ինձ չի սիրում: Պատկերացնո՞ւմ ես, գնացել էի Նվարդին կանչելու, մեկ էլ ինքը դուրս եկավ ու առանց որևէ նախարանի հայտարարեց, որ ես այլս իրավունք չունեմ Նվարդին հանդիպելու, քանի դեռ ինքը պատիվ չի ունեցել իր տանը ընդունելու իմ ծնողներին:

- Ե, դու էլ հորդ տար,- ծիծառեցի ես:

- Գի՞ծ ես, տո,- զարմացավ Մանուկը: - Կարծես թե հորս չես ճանաչում: Հայրս... եթե նա իմանա, որ ես անկուսակցականի աղջկա հետ եմ ուզում ամուսնանալ, կիկվանդանա:

- Հիմա, ի՞նչ է, ուզում ես Նվարդի հորը համոզենք, որ կուսակցության մե՞ջ ընդունվի:

Մանուկն անհույս թափ տվեց ձեռքք: Իսկ ես նրա հորը հիշեցի: Ախր ես իսկապես լավ էի ճանաչում նրան: Դեռևս դատախազությունից:

Դատախազ էր քրեական դատական բաժնում, և գրքերում նկարագրված դատախազների նման մույլ մարդ էր: Երկու տարվա ընթացքում ես ոչ մի անգամ շտեսա նրա ժայիտը: Քայլում էր ծանր, մեծ գլուխը խոնարհած, սև, խիստ հոնքերի տակից զննելով շրջապատը: Իմ կարծիքով նրան ոչ ոք չէր սիրում, բայց բոլորն էլ վախենում էին: Ես էլ էի վախենում: Շատ խիստ ձայն ուներ: Մի անգամ ընկեր Եսթերի կարգադրությամբ մի գրություն տարա նրա առանձնասենյակը, դրեցի սեղանին և ետ դարձա:

- Սպասիր,- որոտաց նա:

Գրում էր: Սպասեցի: Նա դեռ երկար շարունակում էր գրել: Վախենում էի ասել, որ ուրիշ գործեր էլ ունեմ: Կանգնել էի դրան մոտ, ոտքերս ցավում էին: Իսկ նա գրում էր, պատասխանում էր հեռախոսի զանգերին ու գրիչը թեթև սահեցնում թղթերի վրայով: Ես իրավունք չունեի ուշանալու, ընկեր Եսթերը կբարկանար: Ստիպված մրմնջացի, որ գործեր ունեմ տանելու:

Նա զարմանքից բարձրացրեց հոնքերը ու առանց գրչի ընթացքը դանդաղեցնելու ասաց.

- Դու ցրիչ ես և դրա համար աշխատավարձ ես ստանում: Սպասիր:

Իհարկե, նա իրավացի էր: Ես դրա համար աշխատավարձ էի ստանում: Նրա ձայնի մեջ ևս վիրավորական ոչինչ չկար: Բայց ես կարծես հասկացա, թե ինչու նրան չեն սիրում: Չեին սիրում, թեև նա դատախազության ամենահմուտ աշխատողն էր, թեև նրա անկաշառ բնավորությունը հայտնի էր բոլորին: Նրան մեծարում էին խորհրդակցություններում, նրա նկարը երբեք չէր իշխում պատվո տախտակից, բայց երբ հիմնարկի աշխատողները վճռում էին կիրակի օրը զվարճանալ Հրազդանի ձորում, ապա նա անպայման գործուղված էր լինում հեռավոր որևէ շրջան: Շատ տարօրինակ մարդ էր:

Նրա տղան՝ Սանուկը, երբեմն-երբեմն դատախազություն էր գալիս: Հասակակիցներ էինք: Նա էլ էր վեցերորդում սովորում: Շատ էր նման հորը, նրա պես խոշոր գլուխ ուներ ու թավ հոնքեր, բայց աչքերը մեծ ու թախծոտ էին: Նստում էր ինձ մոտ ու հետևում, թե ինչպես եմ գործերը գրանցում իմ ցրիչ-մատյանում, վախենալով ու զարմացած շոշափում էր գործերին կցված իրեղեն ապացույցները՝ զանազան դանակներ, կացիններ, արյունոտ հագուստներ:

Եվ մի օր լսեցի, որ հայրը միջանցքում խրասում է որդուն:

- ... Իհարկե, դու ազատ ես ընկերների հարցում ընտրություն կատարելու, սակայն ինքո մտածիր՝ ի՞նչ է տալիս քեզ մտերմությունը, այդ ցրիչի հետ: Գուցե նա բոլորովին էլ վատ տղա չէ, սակայն...

- Բա ես ի՞նչ անեմ, է՝, -լացակումեց Սանուկը:

Շարունակությունը չլսեցի: Ես գործեր ունեի դատարանները տանելու, և նրանց մոտով վազելով դուրս եկա շենքից՝ վիրավորանքից խեղդվելով ու երազելով աշխարհի ամենամեծ վրեժները: Իսկ երբ կախվել էի տրամվայի վագոնի բռնակից, ժպտացի հաղթական, որովհետև գտել էի վրեժս: Դատախազ էի դառնալու: Ոչ սովորական, այլ հանրապետության

դատախազը: Կանչելու էի Մանուկի հորը, գրելու էի, իսկ նա կանգնելու էր կես ժամ: Ու եթե փորձեր տրտնջալ, ասելու էի հեղնանքով.

Քո պարտականությունն է կատարել իմ կարգադրությունը, ժպտա և շուր լցրու թանաքամաններիս մեջ:

Իմ երևակայությունը դրանից այն կողմ չէր անցնում և չիրականացավ: Ես այդպես էլ երբեք չտեսա նրա ժպիտը: Իսկ Մանուկն ասաց, որ ինքն էլ չի տեսել: Դա հաջորդ օրն էր: Մանուկն ասաց, որ իր հայրը չի ժպտում, որովհետև հեղափոխության համար զյուղում իր ձեռքով գնդակահարել է հորեղբորն ու մոտիկ ընկերոջը: Նրանք հայրենիքի թշնամիներ են եղել: Այդ զիշեր հայրը քաղաք է եկել ու էլ երբեք տուն չի գնացել իրենց գյուղը: Եվ գյուղից էլ ոչ ոք իրենց տուն չի եկել և չի գալիս: Մանուկն ասաց, որ իր եղբայրը լսել է, թե ինչպես մեռնելուց առաջ մայրը լաց լինելով ասել է հորը.

- Ամիր առանց ինձ ո՞նց ես ապրելու, այ մարդ: Ինձնից բացի քեզ ոչ ոք չի խղճացել ու սիրել, ին մարդկանց մեղքը մենակ ո՞նց ես տանելու, այ մարդ:

Իսկ հայրը բարկացել ու բղավել է, թե ինքն իր պարտքն է կատարել և եթե հարկ լինի, դարձյալ կկատարի, առանց խղճի որևէ խայթ զգալու. «կարգադրել են, կատարել եմ»:

Մանուկն ինձ ասում էր այդ բոլորը. որովհետև ես չէի ուզում խոսել նրա հետ և առաջարկում էի լսել հորն ու միայն դատախազների տղաների հետ ընկերություն անել: Իսկ ես բանվորի տղա եմ ու ցրիչ: Ի՞նչ գործ ունի ինձ հետ: Իսկ հետո, երբ մենք մոտիկ ընկերներ էինք ու միասին սովորում էինք համալսարանում, երբ առանց մարսելու, խառնիխուռն բավականին գրքեր էինք կարդացել և կարողանում էինք խոսել սահուն, վերամբարձ ու մեծավարի, երբ էռությունը չըմբռնելով ողջ-ողջ գլուխներ անզիր արտասանում էինք «մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» և «Կապիտալ» գրքերից ու ժամերով կարող էինք բացականչել նշանավոր մարդկանց նշանավոր խոսքերը, մի օր խոսք բացվեց ու ես ասացի Մանուկին.

- Չնեղանաս, բայց զիտե՞ս ում նման է հայրդ:

- Ում:

- Ոստիկան Ժավերին:

Մանուկը չնեղացավ, բայց երկար մտածում էր: Հետո նրա աչքերն ավելի տխուր դարձան.

- Երսի: Սակայն երբեք իր ժան Վալժանին չհանդիպեց: Նա էլ այդպես է կառուցված: Ի՞նչ անեմ: Զամոզված է, որ բոլորն անխստիր սխալ են քայլում և նայում է իր ոտքերին: Ի՞նչ կարող եմ անել: Հայրս է: Ես քեզ որպես իրավաբան կասեմ՝ նրա համար զուտ քրեական գործ չկա: Նրա կարծիքով քրեական հանցագործները հիմնականում նախկին քաղաքական հանցագործներն են, որ ելք չունենալով՝ պայքարի նոր ձևեր են ընդունում: Դե զնա՛: Ավելին ասեմ՝ նրան միշտ թվում է, թե մեր օրգանները շատ մեղմ են մոտենում հանցագործություններին, «նազուտուց» են անում հանցագործների հետ, և երբ հարբում է՝ ափսոսանքով է հիշում այն տարիները, երբ մեղադրյալին կարելի էր քննել ատրճանակը սեղանին դրած և եռյակի որոշումը տեղն ու տեղը ի կատար ածել մոտակա ձորակում:

- Շատ դաժան ես, ասացի ես Մանուկին:

- Է,-քարկացավ նա,- քեզ ի՞նչ կա, իսկ ես ցավում եմ, որ իրավաբանականն եմ ավարտելու: Հասկանո՞ւմ եմ եմ: Ինձ թվում է, ես չափից ավելի մեղմ եմ լինելու, որպեսզի ինձ չասեն՝ հոր տղան է: դաժան ն: Իսկ դու գիտե՞՞ս, թե ինչ է արել պատերազմի ժամանակ: Սովից մեռնող երեխաների համար մի դույլ կարտոֆիլ գողացող գյուղացուն ութ տարով Սիրիո է ուղարկել: Գործերը ես եմ նայել:

- Դե օրենքն է այդպես եղել, ին ինքը նրա անձնական թշնամի՞ն չեր:

- Չէ, նա մյուս ծայրահեղությունն է: Իսկ դու կարծում ես անձնական թշնամիներ չե՞ն եղել, կարծում ես հեղափոխության համար պայքարի անվան տակ քչե՞ն են անձնական հաշիվներ մաքրել: Այս չի կարելի հոկտեմբերիկների նման աշխարհը միայն կարմիրների ու սպիտակների բաժանել: Եվ կարմիրները, և սպիտակները, բոլոր գույներն ու երանգներն ունեցել են իրենց մեջ: Պարզապես հեղափոխության ժամանակ նրբերանգները չեն երևացել, ժամանակ չի եղել դրանք նկատելու: Բայց ահա, երբ խաղաղվել է ամեն ինչ՝ գույները պարզվել են: Եվ պարզվել է, որ իմ հայրն ու նրա նմանները մոխրագույն են եղել կարմիրի մեջ: Չէ, անձնական թշնամի չի եղել: Ընդհակառակը, ամեն տեղ նա հանդես է եկել օրենքի անունից, խորապես համոզված, որ դա անում է հեղափոխությունը պաշտպանելու համար: Միշտ պահանջել է տվյալ հանցանքի համար նախատեսված պատժի առավելագույնը և անաշառ մարդու համբավ է վաստակել:

- Ուրեմն անաշառ չէ... .

- Չէ, ասաց Մանուկը, -դա անաշառություն չէ: Դա սադիզմ է: Շատ երկրներում մսազործ դառնալ ցանկացողներին հոգեբուժական քննության են ենթարկում: Պարզ պատճառով: Ումանք չեն կարողանում տանել արյան գույնը: Արյունը գազագեցնում է նրանց, հանում հավասարակշռությունից, և նրանք այդ վայրկյանին ամեն ինչի ընդունակ են: Կամ հենց մեզ մոտ, պահակային ծառայության ընդունվողներին ևս քննում են, որովհետև մարդիկ կան, որոնց գենքը հանգիստ չի տալիս, կրակելու սոսկալի պահանջ են զգում: Հասկացա՞ր: Այ իմ հայրն էլ այդպիսին է: Բնավորության այդ նույն գծերով նա կարող էր հրաշալի հաշվապահ դառնալ կամ նախանձելի ճարտարապետ, բայց իրավունք չուներ իրավաբան լինելու:

- Ուրեմն նրան աշխատանքի նշանակողներից ոչ մեկը դա չի՞ հասկացել:

- Հասկացել են, ո՞նց չեն հասկացել, բայց այդ ինչ-որ մեկին հենց նման մարդիկ են պետք եղել: Հատուկ մարդիկ: Հիմա քեզ ամենամեծ գաղտնիքն ասեմ. նա մի ատրճանակ ունի, նվեր է, վրան փոքրիկ, ոսկե տախտակ կա, գրված է.«Հատուկ ծառայությունների համար»: Այդ մակագրությունն ինձ սպանում է, Արտակ: Իսկ նա հապարտանում է դրանով: Ինչպե՞ս կարելի է ատրճանակ նվիրել ու ստանալ խաղաղ պայմաններում: Ես դա երբեք չեմ հասկացել ու չեմ հասկանա:

- Դու հորդ չես սիրում, -ասացի ես: Գուցե նա իրավացի էր, բայց ինձ համար շատ տհաճ էր, որ Մանուկն այդպիսի տոնով էր խոսում հոր մասին: - Դու հորդ չես սիրում, դրա համար էլ խառնում ես ամեն ինչ:

Մանուկը տնքաց:

- Որ չսիրեի՝ չէի տանջվի: Բայց ախր ո՞նց չես հասկանում, որ դրանք բոլորովին տարբեր բաներ են: Գիտե՞ս ինչ է ասել Մոնտեսյոյոն, «Հարկավոր է ճշմարտացի լինել ամեն ինչում, եթի խոսքը հայրենիքին է վերաբերում: Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մեռնել իր հայրենիքի համար, բայց ոչ մեկին չի կարելի պարտադրել, որպեսզի նա ստի հանուն հայրենիքի»: Հորդ չե՞ս սիրում... Ինքդ գիտես, որ նա չի ամուսնացել մորս մահից հետո և ամեն ինչ է եղել մեզ համար՝ հայր էլ, մայր էլ, դայակ էլ... գիշեր-ցերեկ չի քնել, նույնիսկ լվացք է արել ու ձաշ է եփել... Եթե պետք լինի, ես կյանքս կտամ նրա համար: Ի՞նչ ես խոսում: Բայց դա բոլորովին ուրիշ բան է: Ես նրան կարող եմ հասկանայ, բայց ընդունել չեմ կարող: Թե չէ, ինչո՞ւ պետք է հանրակացարանում ապրեի, իր ։ Ինչո՞ւ պետք է քեզ հետ միասին հինգերորդ կուրսի ուսանող լինելով, շաքարավազի պարկեր կրեի պահածոների գործարանում: Ես ի նձ եմ մաքրում: Ի՞նձ: Առուտ է, թե որդիները պատասխանատվություն չեն կրում իրենց ծնողների համար: Ուրիշ հարց է, որ նրանց պատասխանատվության չպիտի կանչել, բայց նրանք առանց այդ էլ կրում են իրենց ծնողների մեղքերը: Դա խարանի նման բան է:

Մանուկն ամբողջովին կորցնում էր իրեն, երբ խոսում էր հոր մասին, և ես հասկանում ու խղճում էի նրան: Ես էլ նրա հորը չէի սիրում, բայց չէի ուզում, որ նա այդ պատճառով դառնանա աշխարհից, տառապի այդքան: Եվ աշխատում էի միմիթարել և դարձյալ խոսում էի մեծավարի ու վերամբարձ: Այդպես էինք սովորել, այդպես էինք մենք խոսում մենք այն անցած ժամանակներում: Մանուկ ջան, ասում էի ես, նախ դու ես ասում, որ նրանք անհատներ են եղել, և հետո, ինչո՞ւ պետք է հայրերի հանցանքը ստվե՞ր գցի քեզ վրա: Մենք ի՞նչ մեղավոր ենք: Դժվար տարիներ են եղել, աշխարհ է շրջվել, գահեր են ընկել, սկզբունքներ են կործանվել և հեղափոխություն է եղել: Ոչ թե կիսատ-պատ բռնկումներ, այլ մեծ հեղափոխություն, վերջնական, անշրջելի, անդարձ: Եվ դա մեզանից առաջ է եղել: Մենք չենք տեսել, չենք եղել այդ ժամանակ: Ո վ զգիտի, որ հեղափոխությունը մեծ զոհեր էր պահանջում, և եղել են այդ զոհերը: Կյանքը ցույց է տվել, որ միանգամայն անհրաժեշտ ու ճիշտ է եղել հեղափոխությունը, բայց միայն ժամանակը կարող է որոշել, թե զոհերի ո՞ր մասն է արդարացի և հեղափոխության համար եղել: Միայն և միայն ժամանակը: Մի ծանրացրու ամեն ինչ, մի՛ տանջիր քեզ, Մանուկ ջան, հորդ նմաններն իսկապես անհատներ են եղել:

- Թեկուզ,- զոռաց Մանուկը, -թեկուզ մի հոգի: Բայց ես ի՞նչ անեմ, որ այդ մի հոգին իմ հայրն է:

... Չէ, ես լավ էի ճանաչում նրա հորը: Այդ մասին խոսել չարժեր: Բայց ի՞նչ կարելի է անել: Ի՞նչ:

Եվ ելքը դարձյալ Մանուկն առաջարկեց:

- Խնդրում եմ, եկ Նանարին վերցնենք, մի քանի շիշ էլ զինի առնենք ու գնանք նրանց տուն: Հը, Արտակ: Կասեմ իմ ամուսնացած ընկերն է: Շորերդ շատ հին չեն, ինքդ էլ լուրջ մարդու խարուսիկ արտաքին ունես: Գնանք, Արտակ ջան: Փրկի ք:

- Շոյված եմ բարի խոսքերիդ համար, բայց Նանարը չի զա, - ծիծաղեցի ես:

- Կիսաբենք, հանգիստ մնա, մեծ գործերը զոհեր են պահանջում: Կասենք ծանր հիվանդ է Նվարդը: Ախ, այդ տաճկաստանցին:

...Իսկ «տաճկաստանցին» մի բարի ու աշխույժ ծերուկ էր: Նույնիսկ սկզբում կարծեցի, թե Նվարդի պապն է: Մազերը Ճերմակ էին ու նոսր, մանրիկ-մանրիկ կնճիռները ծայրեծայր ակոսում էին դեմքն ու խտանում երկնազույն, խոնավ աչքերի մոտ: Ընդունեց շատ լուրջ, ասես իսկապես հարսնախոսների էր դիմավորում: Մեզ տեղավորեց սեղանի շուրջը, իսկ ինքը ծալապատիկ նստեց թախտին, տերողորմյան ձեռքն առավ ու... մի այնպիսի հարցաքննություն սկսեց, որ Մանուկի ուղղափառ հայրն անգամ ա խ կքաշեր: Չանցալ մի քանի ժամ նա արդեն անզիր գիտեր մեր կենսագրությունները և նույնիսկ այնպիսի մանրամասներ, որ չգիտեինք, թե ինչո՞ւ ենք ասում:

Հստ նախնական պայմանավորվածության, գրույցը նրա հետ ես պիտի վարեի, բայց նա արագորեն մեկուսացրեց ինձ ու Մանուկին իր ձեռքը հավաքեց: Եվ Մանուկը, իրավաբանականի հինգերորդ կուրսի ուսանող, վերամբարձ ու պերճախոս մեր Մանուկը հիմա թորովախոս մանկան նման մերթ ընդ մերթ նույն նախադասությունն էր միայն կարողանում նետել:

- Սակայն իրավաբանորեն...
- Իրավաբանորենը մի կողմ, եկեք մարդկայնորեն դատենք,-կտրում էր Պետրոս հայրիկը:

Միակ միսիթարությունն այն էր, որ Նանարն ու Նվարդը ներկա չէին մեր մարմնապատժին: Այզու բաց պատուհանից երբեմն-երբեմն լսվում էր նրանց ծիծաղը: Իսկ երբ նրանք ներս մտան, խաղաղություն էր արդեն սեղանի շուրջը: Մենք հանձնվել էինք, և ավելի հաճելի գերություն դժվար էր պատկերացնել: Դուան ճորոցը լսելով՝ ես ու Մանուկը նույնիսկ սրտնեղեցինք, որովհետև Պետրոս հայրիկը խոսում էր: Գինին նրա աչքերը ավելի էր խոնավացրել, ձայնը հնչում էր իբրև խորհրդավոր շշուկ ու նա խոսքերն արտասանում էր դանդաղ, մեկիկ-մեկիկ, ձեռքին բռնած տերողորմյայի հատիկների պես:

Պետրոս հայրիկն իր ողիսականն էր պատմում:

Դա մի տիսուր և ահավոր հեքիաթ էր և հեքիաթ չէր միաժամանակ, որովհետև հեքիաթները պարտավոր են երջանիկ ավարտվել:

Դա ողիսական էլ չէր նույնիսկ, որովհետև երկար դեգերումներից ու զրկանքներից հետո, Ողիսսին հաջողվում է զրկել իր սիրելի, հավատարիմ կնոջն ու որդուն: Իսկ Պետրոս հայրիկի կնոջն ու որդուն թուրք ասկյարները թրատել էին հենց նրա աչքի առջև, ուրիշ, շատ-շատ ուրիշ կանանց և զավակների հետ: Ողիսական... այդ թափառումները՝ արկածային թեթև զբոսանքներ են եղել Պետրոս հայրիկի տառապանքների համեմատ: Պետրոս հայրիկը այս երկրի վրա է տեսել դժողքը: Բախտի երես տված այն հույն զորականի համար աստվածները կորիվներ էին մղում երկնքում ու հարթում, մաքրում էին նրա ձանապարհը, այնինչ Պետրոս հայրիկի միակ աստվածը, Հայի միակ աստվածը երես էր թեքել նրանից, իսկ հետո պարզվել է, որ չկա, որ սուստ է եղել նույնիսկ այդ միակ աստվածը, երբ նրա կարիքն ամենից շատ էր զգացվում: Ոչ, դա ամենսին էլ ողիսական չէր, որովհետև Ողիսսին իր տունն էր դառնում, իսկ Պետրոս հայրիկի համար պետական սահմանասյուններով հավետ փակված էր արդեն հայրենի Մուշ տանող բոլոր ձանապարհները:

- Հայրիկ,-կամացուկ ասաց Նվարդը:

-Հաջան՝ անմիջապես պատասխանեց Պետրոս հայրիկը, ուղղվեց թախտին, նիհար ու ձիգ և աղջկան նայեց կապույտ աշքերի անսահման քնքշությամբ ու անսահման թախիծով, - մի վախենա գառ ջան, չեմ լա:

Ես նրան զինի լցրեցի, հետո լցրեցի Մանուկին ու ինձ, և երբ խմում էի, մտածեցի, որ երևի այսպես, ինչ-որ տեղ կյանքի մի միլիոնավոր բովեներից հենց միայն ինչ-որ մեկում են մարդիկ հարբեցող դառնում: Ես զինին խմեցի ազահարար ու կարոտով և նորից խմեցի՝ ամաչելով դրա համար:

- Տղայիս անունը Վարդ էր, իինզ տարեկան էր ձագուկս, -հանկարծ առանց որևէ կապի ասաց Պետրոս հայրիկը: Նրա ձայնը դոդաց ու նա երկար սպասեց, մինչև որ անցնի կոկորդի ցավը, բայց որովհետև ցավը չէր անցնում, նա մատներով ամուր, ջղաձգորեն սեղմեց կոկորդը:

Նա կմեռներ վշտից, եթե վրեժը չպահեր նրան: Վրեժը նրան, ուսից վիրավոր դուրս բերեց ընկած դիակների ու գարնանային տաք, խոնավ հողի տակից, որ շտապով իրենց զոհերի վրա էին լցրել հողին անձանոթ, հողին թշնամի թուրք ասկյարները: Ու երբ փախչում էր մութի միջով, զարհուրած մտածեց, թե խելազարվել է: Նա խուլ տնքոցներ ու հառաջանքներ էր լսում, որ զալիս էին մերձակա բլուրներից, ու նրան թվում էր, թե իր նման կենդանի թաղվածների հերից տատանվում, ալեկոնձվում են մի զիշերվա մեջ հարյուր-հարյուր մարդու գերեզման դարձած, մի զիշերվա մեջ կանգնած սև բլուրները:

Նա փախչում էր լեռները, հայի այդ միակ, հավատարիմ ապաստանը աշխարհի մեջ, փախչում էր սողալով, վիրավոր ձեռքը որպես բողոք երկինք մեկնած, արյունով գծելով իր ճանապարհը: Հետո թվաց, թե ընկնում է, երկար, անսահմանորեն երկար, բայց և թեթև, առանց ցավի, փետուրի պես և ձյունի նման:

Արթնացավ միանգամից, ձեռքի սոսկալի ցավից, քնի մեջ կնոջն էր մեկնել ձեռքերը, ուզեցել էր զրկել Վարդիկին, իսկ կինը չէր տվել Վարդիկին ու ասել էր մոայլ, ատելությամբ.

- Թողիր մզի ու փախար, հա՞՝, անպատիվ...

Մի սև ոչխարենի թեքվեց նրա վրա, ու Պետրոս հայրիկը զգաց, որ մեկը կամացուկ ինչ-որ բան է ասում, լսեց, որ մեկը քրդերեն ասում է.

-Հանգիստ մնա, հայ, բա ախալեր չե՞նք, քեզ մեծ տղաս բերեց սարից: Հանգիստ մնա, այ հայ, մի վախենա:

Պետրոս հայրիկը տնքաց ու բացեց աշքերը: Վրանում չորացած անթառամի և ուրցի հոտ կար, բաց երդիկից կապտին էր տալիս ցածրիկ երկինքը: Ուրեմն դեռ չի լուսացել: Բայց ախր ինքն ամբողջ զիշեր փախչում էր: Նա հառաջանքներ լսեց, որ վրանի մոտից էին զալիս, ու անմիջապես զգար, որ հայեր են հառաջողները: Ու մեկ էր զի ձայն լսեց, կամացուկ, սրտակեղեք: Ինչ-որ մերիկ հին-հին եղանակով, բայց նոր խոսքերով օրոր էր ասում որդուն.

*Ինչ անիծեմ թուրք ասկրրին,
որ սպանեց ջոջ ապոյին
Զրմ հուս թողուց վլր օրոցին*

Զարթիր, լառ՝ մեռնիմքրդի...

Պետրոս հայրիկը ուզեց շրջվել, չկարողացավ ու հենց այդպէս էլ լաց եղավ անմիխթար, զգալով, թէ ինչպէս են արցունքները մոլորվում դեմքի մազերի մեջ, լաց եղավ՝ անիծելով աստծուն ու աշխարհը, անիծելով հային ու նրա անհերեթ, անհասկանալի, անաստված ճակատագիրը, հայույթը երդիկից ընկնող երկնի կապույտին, որ հիմա չգիտես ինչո՞ւ, ո՞ւմ համար սկսել էր բացվել:

Իսկ մերիկը երգում էր ցածր, կրծքային ձայնով- լալի՞ս էր, թէ երգում էր, ո՞վ գիտե:

*Չուր ե՞րք մնջմ էլու դռներ,
Իրթամ ժողվիմ զրմ իւեղճ զառներ
Սարքիմ զրմ տուն փլուկ սներ,
Զարթիր լառ, մեռնիմքրդի...*

- Հերիք է, քուր ջան, եղածն եղած է, աստված է՝ լ բեթարից ազատի,- երգը կտրեց, աղաչեց մի բամբ ձայն,-հերիք է: Տո՞ւ իր իձ էդ անմեղ հրեշտակին:

- Չեմ տա,-ինաց մերիկը,-ոչ մեկին չեմ տա, հիմի կզարթնի գառնուկս: Մու՞ս: Հիմի ես կերգեմ, կզարթնի մեր տան սունը, մեր տան տղամարդը, մենակ ինքն է մնացել, ախր: Վեր կաց, լառ, չե ս լսե.

*Սուլթան գուզե ջնջի մզի
Զարթիր լառ, մեռնիմքրդի...*

Հեկեկոցներ լսվեցին, ու Պետրոս հայրիկը որպէսզի չխեղդվի, բարձրացավ տեղից: Կողքին շարժվեց նաև քուրդը...

- Ի՞նչ ես ուզում, այ շայ,-ասաց:

- Ո՞վ է,-հարցրեց Պետրոս հայրիկը՝ ականջը երգին:

- Զուլու՞մ է, լա՞ն,-ասաց քուրդը,-հայ քույրիկ է, էի: Երեխեն մեռել է, չի հավատա, կվանչե, կերգե, չի թողնե որ թաղեն, զրկե, օրոցք կսե: Աստված ինելքն առել է: Ես էդ աստծու աստված...

- Հայրիկ,-կամացուկ խնդրեց Նվարդը:

- Հա՞ջան,-անմիջապէս արձագանքեց Պետրոս հայրիկն ու կարծես նոր էր տեսնում, մեզ նայեց տխուր, պղտոր աչքերով, զարմացած, հետո հանկարծ դարձավ Մանուկին... - Քանի՞ տարեկան ես, տղաս:

- Քսաներկու, Պետրոս հայրիկ,-շփոթվելով կակազեց Մանուկը:

- Հա,- ասաց ծերունին,- ձեր Պետրոս հայրիկն էլ այդ օրը քսաներկու տարեկան էր:

Հավ էր, որ հարցն ինձ չտվեց: Եթե ես խոսեի, լաց կլինեի Նանարի պէս, որը ձեռքերով ծածկել էր աչքերը: Բայց ես ավելի շատ ցնցված էի իմ անզիտությունից: Մի թե Մանուկն էլ չի իմացել: Մի թե ոչ ոք չի իմացել: Իսկ մենք դպրոց ենք ավարտել ու համալսարան և այն է՝ հայկական համալսարան: Մենք սովորել ենք հազար ու մի քան ու հազար ու մի քան է կարդացել ենք: Ես անզիր գիտեմ իին հույների ու հոռմեացիների պատմությունը և տարիների ճշությամբ կարող եմ ասել, թե մեր թվարկությունից առաջ ո՞ր դարի ո՞ր կեսում է տեղի ունեցել այս կամ այն անիջյալ պատերազմը: Ես կարող եմ ամսաթվերով նշել աշխարհի բոլոր կարևոր իրադարձությունները վաղ միջնադարից սկսած մինչև մեծ հեղափոխության առաջնորդների հրապարակային երույթներն ու փախուստները արսորավայրերից: Ես գերազանց կպատասխանեմ այն բոլոր հարցերին, թե ինչ ենք ունեցել հեղափոխությունից առաջ և ինչեր ենք ձեռք բերել մեծ հնգամյակների տարիներին, և էլի շատ հարցերի կարող եմ պատասխանել: Բայց չեմ իմացել, պարզապես չեմ իմացել, պարզապես չեմ լսել, որ իմ ծննդից ընդամենը երեք հնգամյակ առաջ, իմ ծննդավայր Երևանից մի քանի կիլոմետր հեռու դարձյալ Հայաստան է եղել և այդ Հայաստանում մի քանի օրվա ընթացքում բնաշնչվել է մի ողջ ժողովուրդ՝ ջահել, մանուկ ու ծեր, որ թուրքական կառավարության հրամանով կոտորվել, պարզապես կոտորվել են երկու միլիոն անմեռ, անզեն հայեր այսինքն՝ մոտավորապես այնքան, որքան ըստ վիճակագրական տվյալների ապրում են այսօրվա Հայաստանում:

Այսպես հո խենթանալ կարելի է: Բա ինչո՞ւ այդ մասին չկա մեր դասագրքերում, ինչո՞ւ մեր դասախոսներից ոչ մեկը մեզ չի պատմել այդ մասին: Հետո հո բոլոր հայերն անզեն չե՞ն եղել, կովել են, օրեր, շաբաթներ շարունակ, դիմագրավել են թշնամուն այս մեր Պետրոս հայրիկի նման, աշխարհազորներ են կազմել, գեներալներ ու հերոսներ են ունեցել: Ինչո՞ւ նրանց նկարները չկան մեր դասագրքերում: Պետրոս հայրիկն ասում է, թե ինչ-որ մի Անդրանիկ զորավար հայերի վրեժինդիր աստվածն էր դարձել՝ աստծո պէս հզոր էր ու արդար: Թուրք փաշաները նրա անունը լսելիս սարսափահար փախչում էին՝ իրենց թնդանոթներն ու կանանց թողած: Իսկ Անդրանիկ փաշան այդ կանանց ու երեխաներին հաց էր տալիս, պաշտպանում իր գազազած, վրեժից խելազար իր զինվորներից:

- Ես նրա հոգուն մեռնեմ: - Պետրոս հայրիկի աչքերը լուսավորված են հին-հին օրերի կրակով, նիհար մարմինն ավելի է ձգվել պարսկական թախտի վրա, ու նա հիմա նման է զորավարի, որ շքերթի է դուրս բերել իր մարտական հուշերի պատառության կարմիր դրոշները:

- Ի՞նչ մարդ էր: Այսպես տեսել եմ ու չեմ կշտացել: Ուր տաներ՝ կզնայինք հետևեն անմոռնչ, քանի որ հայրենիքից զատ եւ քան չուներ ու հայրենիքի համար կտաներ: Սպիտակ ձի կնստեր, սուրբ Սարգսի նման, ես նրա ձիու հոգուն մեռնեմ:

Դուրը կրկին բացվեց ու ներս մտավ Նվարդի տատը՝ զլուխը սև թաշկինակով կապած, որի տակից սև ցելի մեջ մնացած ձյան նման, փայլում էր մազերի արծաթը: Նա այնպիսի տարիք ուներ, երբ անհնար է տարիքը որոշելը: Ժամանակն այնպես էր ավերել նրա դեմքը, որ թվում էր, նա երբեք ջահել չի եղել, այլ հենց այդպես էլ ծնվել է բարակ ու չորուկ կնձիռներով, հարվածից ճաքճքված ապակու նման: Այդպիսիները երկար են ապրում ու երբեք չեն հիվանդանում, այդպիսիները պառկում են միայն մեկ անգամ, որպեսզի չքարձրանան այլս: Նա ձախ ձեռքին երկարէ մի ձող ուներ որպես ձեռնափայտ, իսկ աջով դեպի սեղանն էր բերում զաթայով լեցուն թասը:

Նվարդը վեր թռավ տեղից ու տատի ձեռքից վերցրեց ափսեն, իսկ Պետրոս հայրիկը բացականչեց խանդավառ.

- Անուշ, անուշ մերիկ: Հոգուն վրա հասար: Եկ նստիր մոտս, եկ, մերիկ: Ես մեր ջահելներին Անդրանիկի պատմությունը կանեի: Երգիր նրանց համար Անդրանիկի երգը, մերիկ ջան:

Չգիտեմ ինչու, համոզված էի, որ կիրաժարվի կամ կստիպի, որ երկար խնդրենք: Չէ: Նստեց որդու մոտ, թախտի ծայրին, ձեռնափայտը սեղանին հենեց, հազար կամացուկ, ափի մեջ, աչքերը վեր հառեց ու սկսեց երգել: Արդեն ձայն չուներ մամիկը, ձայնն էլ էր փշրված ու խզված, ու երգը հեռվից էր գալիս, տարիների խորքից, անցած, մշուշոտ ճանապարհներով:

*Ինչպէս արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք, գետին, տենչավառ,
Սուրբ անունդ պիտի հիշվի դարեղար,
Հսկա լերինք քեզ ապաստան, Անդրանիկ:*

Պետրոս հայրիկը զդիմացավ, տրորվեց, նայեց, ժպտաց, շրթունքները անձայն շարժելով կրկնեց երգի խոսքերը, հետո ձայնը բարձրացրեց, ազատ արձակեց երգը ու գնաց իր մերիկի հետ այն հին ու հուշոտ ճանապարհներով:

*Հայաստանի սոխակները քեզ համար
Թող դայլայլեն զիշեր-ցերեկ անդադար,
անհաղթ մնաս դու, քաջության բիրահար,
Հայրենիքի անմահ հերոս, Անդրանիկ:*

Ավելի սրտառուչ երգ ես կյանքումս չեմ լսել, և մեզանից ոչ-ոք չծափահարեց, որովհետև շատ սրտառուչ էր այդ երգը: Բայց զարմանալին երգի խոսքերը չեին և ոչ էլ եղանակը: Երգիներն էին: Իրար թեթևակի գրկած ու աչքերը հառած երկինք, նրանք կամացուկ օրորվում էին երգի հետ, որը նրանցից դուրս, այն կողմ էր, ու կանգնել, դողում էր օդում, հեռու - հեռուներից եկող օրիներգության նման: զարմանալին այս փայլն էր, որ արցունքի հետ շողում էր ժամանակի ձեռքով հասակակից դարձած, ծերունիներ դարձած մոր ու որդու սրտում աչքերի մեջ: Երսի այդ երգը, ինչպէս խոսքերն են հուշում, ստեղծվել է որպէս ուրախ և հայթական երգ, որպէս փառաբանություն հերոսի ու հերոսության: Բայց ջահել երգող չի եղել, խզված ձայնով, որբացած ծերունիներն են երգել միայն այդ երգը ու դրանից են ուրախ խոսքերը տիսուր եղանակ հազել, դրանից են հնչում անօրինակ թախիծով ու թախծոտ, առկայծող հպարտությամբ:

Չէ, այս երգը լսողները իրավունք չունեն ծափահարելու:

Երկար ժամանակ լրել էինք՝ ամեն մեկս մեր մտքերի, հուշերի, հարցերի հետ և այդ լոությունն անզամ չէր ճնշում, չէր ձանձրացնում, ընդհակառակը, ներհուն էր մեզ համակած տրամադրությանը, որը սովորաբար առաջանում է հարազատ տան մեջ, հարազատ մարդկանց ու շրջապատող ծանոթ, սովոր առարկաների միջավայրում:

- Արտակ,- կամացուկ ասաց Մանուկը,- հավատա, ձեր տնից բացի, երբեք որևէ տեղ այսպէս լավ չեմ զգացել ինձ:

- Իսկ տաճկաստանցի՝ նույնացի ես նենզորեն,-տաճկաստանցու հա՞րցը ոնց լուծենք:

- Դե,- ասաց Մանուկը,-ձեռք շտաս:

Նվարդը զաթա մատուցեց և սուրճ՝ փոքրիկ, խայտանկար ճենապակյա բաժակների մեջ, ու ես մտածեցի, որ փորձություն է սկսվում: Կյանքում սուրճ չի խմել, և համոզված էի, որ Նանարն ու Մանուկն էլ չեն խմել: Հիմա ի՞նչ պետք է անենք: Գոնե մեծ բաժակներ լինեին, այս փոքրիկ մատուցները բռնել էլ չի լինի: Կօարդվեն, խայտառակ կլինենք: Թվում էր ամենադժվարը Նանարի դրությունը պետք է լինի, բայց նա շատ հանգիստ հայտարարեց, որ ինքը սուրճ չի սիրում և մի կողմ քաշվեց: Նրանից հետո նման հայտարարությամբ հանդես գալը անհարմար կլիներ: Խեղացած նայեցի Մանուկին: Նա էլ ինձ էր նայում՝ օգնություն հայցող աշքերով: Ես միայն աննկատելի թոթվեցի ուսերս, մատներիս ծայրով բռնեցի մատուց-բաժակը ու մի շնչով դատարկեցի: այսինքն՝ դատարկելու բան էլ չկար: Դառնահամ հեղուկը բերանս լցվեց ու սկսեց այնպես այրել, որ քիչ էր մնում բարձրաձայն աղաղակեի, իսկ ինձ անմիջապես հետևած Մանուկի աշքերը ամենաանկեղծ արցունքով էին լցվել: Տանտերերը կամ չնկատեցին, կամ ցույց տվեցին, թե չեն նկատել, իսկ Նանարը... Նանարը անձայն ծիծաղում էր, անկարող զսպել իրեն, ուսերը մանրիկ ցնցվում էին չքե ծաղկավոր շրջազգեստի տակ:

Սեղանին ձիթապտուղ էլ կար, որը անսովոր բան էր երևանցու համար: Անցած օրը, կյանքում առաջին անգամ, ռեստորանում կերել էի մի հատ, տեսնելով, թե դիմաց նստած մարդը ինչպիսի երանությամբ է ծամում փայլուն, սև, անծանոթ գնդիկները: Առաջինը, իհարկե, վերջինը եղավ, որովհետև ավելի դառնադի բան անհնար է պատկերացնել:

Իսկ հիմա ձիթապտուղներին նայեցի հիացմունքով, ու այրված շուրթերով խնդրեցի Նանարին.

- Քեզ ավելի մոտ են, երկու հատ զեյթուն տուր, այն այն սև գնդիկներ:

Նանարը կատարեց իմ խնդրանքը ու նկատելով, թե ինչ ակնածանքով եմ վերցնում դրանք, հարցրեց.

- Մրանք ի՞նչ են, Արտ:

- Մի՞ թե երբեք չես կերել: Աննման բաներ են, բայց շատ քաղցր են: Գուցե չուտես:

- Ինչո՞ւ, ես քաղցր սիրում եմ,-զարմացավ Նանարն ու կարծես համոզելու համար, որ ինքը քաղցր շատ է սիրում, միանգամից երկու պտուղ վերցրեց:

Ես քրքիջս զսպելով նայում էի նրան ու տեսա, թե ինչպես նրա դեմքը սկզբում խորին տարակույս և ապա տանջանք արտահայտեց: Ես սպասում էի, որ նա հիմա դրւու կնետի իրեն, բայց կատարվեց զարմանալի բան. Նանարը դանդաղ ծամելով, հենց կորիզներով կուլ տվեց դառն ու աղի պտուղները: Ու նայելով նրա լարված, բայց արդեն անվրդով դեմքին, ես

խղճի խայթ զգալով մտածեցի, որ այնուամենայնիվ շատ ուժեղ բնավորություն ունի իմ փոքրիկ Նանարը: Եվ մտածեցի, թե ո՞վ զիտէ կյանքում որքան դառնություններ ու վիրավորանքներ է կուլ տվել նա, անհայր մեծացած այս փիսրուն աղջիկը, աշխատելով պահպանել այնքան դժվարությամբ պահպանվող արժանապատվությունն ու հպարտությունը՝ օտար ու մանր մարդկանց քրքիջներից:

- Այլևս սուրճ չէի[՝]ք ուզի,-հարցրեց Նվարդը:
- Ոչ, ոչ,-վախեցած ամբողջ սրտով հրաժարվեցինք մենք:
- Դե գոնք զեյթուն վերցրեք:

Ես ու Նանարը եռանդագին տարութերեցինք զլուխներս: Այլևս հերիք է:

- Ոչ,-ասաց Մանուկը,-ամեն ինչի համար շատ շնորհակալություն:
- Չե, այդպես բաց չեմ թողնի, գոնք զաթան պետք է փորձեք, մամիկիս թխածն է:
- Իսկ դու ինչի[՝] կհարցնես, զառ ջան, ափսեների մեջ դիր, անուշս, հյուրին չեն հարցնե,-ասաց տատը:

Պետրոս հայրիկը ծիծաղեց, ուղղվեց թախտին:

- Փրկություն չկա, պիտի ուտենք,-ասաց նա,-եթե մերիկս էլ միացավ Նվարդին, փրկություն չկա: Նվարդս իր մամիկին է քաշել իսկ և իսկը:

Նվարդի անունը լսելով Մանուկի աչքերը շողացին, նա մեկ աղջկան նայեց, որ ծիծաղում էր շիկնած, մեկ էլ նրա փոքրիկ, չորուկ տատին, որ արդեն ի կատար էր ածում դատավճիռը զաթաները ափսեները դնելով, և հանկարծ ասաց.

- Իմիջիայլոց, Նվարդը դեմքով էլ նման է տատին: Սոսկալի նման է, ճիշտ չե՞մ ասում:
- Նրանք իսկապես նման էին, նույն նուրբ, ուղիղ դիմագծերը, խոշոր աչքերի ձգված անկյունները և առանձնապես հայացքները՝ պարզ, անկեղծ, արինքնող: Միայն թե տատի աչքերը անհամեմատ ավելի մուգ էին: Ժամանակին շատ գեղեցիկ է եղել հավանաբար այս փոքրիկ, խնդրմագող մամիկը:

- Իսկապէ[՝] նման են,-չգիտես ինչու աշխուժացավ Պետրոս հայրիկն ու մեր միահամուռ հաստատող կարծիքը լսելով, ավելացրեց,-իսկ ի[՝]նձ: Ո՞վ է ավելի շատ ինձ նման՝ Նվա՝ բղը, թե մերիկս:

Կարծիքները բաժանվեցին: Մանուկն ու Նանարը գտնում էին, որ երկուսն էլ առանձին-առանձին նման են Պետրոս հայրիկին, իսկ ինձ թվում էր, թե դա ավելի շուտ ներքին նմանություն է: Պարզապես զարմանալի էր, թե որքան իրար նման էին ծիծաղում նրանք, խոսում ու շարժվում: Այդպես միայն ամենահամերաշխ ընտանիքներում է լինում: Մեր տանն էլ այդպես է:

- Ուրեմն, ասում եք, որ նման ենք,-թախտին ուղղվեց Պետրոս հայրիկը: Նրա աշքերում մանկական չարաձախություն հայտնվեց: - Շատ ճիշտ է: Իմ կարծիքն էլ նույն է: Բայց եթե ասեմ, որ մենք օտարներ ենք, ի՞նչ կասեք:

- Ինչպե՞ս թե օտար,-ապշեցինք, հետո ծիծադեցինք մենք:

- Օտարի պես օտար: Արյունակցական թե ազգակցական ոչ մի կապ չունենք,-ծիծադեց նաև Պետրոս հայրիկը: - Պարզապես հայեր ենք մի տան մեջ հավաքված: Ապրում ենք:

Տարօրինակն այն է, որ Նվարդն ու ծեր կինք չէին առարկում նրան, այլ մեղմիկ տիսրորեն ժպտում էին, և շատ նման էր նրանց այդ ժպիտները:

- Գինի լցրեք,- ասաց Պետրոս հայրիկը: Հետո միայն Մանուկին նայեց: - Առանց այն էլ ես պատմելու էի քեզ, տղաս: Ես ուզում եմ, որ դու անպայման իմանաս մեր այս պատմությունը:

Նա խմեց զինին զլուխը ետ թեքած, մտախոհ ու դանդաղ, իսկ հետո երկար, կկոցած աչքերով, բախտագուշակի պես դիտում էր դատարկված գավաթը...

#

Փողոցը երկար-երկար էր ու ամայի: Ոչ մի ձայն չէր խախտում զիշերվա լոռությունը: Միայն մոտիկ, մեզնից քիչ ձախ խուլ զվում էին տրամվայի երկաթե գծերը: Երևի գնացքներ էին շարժվում այդ ժամին, ինչ-որ տեղ: Մենք քայլում էինք երկար, աղոտ լուսավորված փողոցով, ու մեր ոտքերի անհամաշափ դոփյունն ավելի էր խորացնում անհոյս լոռությունը: Եթե հանկարծ ոլորանի ետևից աղմուկով դուրս թռչեր տրամվայի գնացքը, ու զար անցներ մեր կողքով՝ իր վառ, իր շողշողուն լոյսերով ու լուսավոր պատուհաններով, անցներ հեալով, զիլ զնզոցով ու պայծառ դրդոցով, երևի չիններ այն ինչ եղավ, երևի մենք գոնե ուրիշ բանի մասին խոսեինք: Բայց գնացքներ չկային փողոցում ու աղմուկ էլ չկար, ոչ մի շունչ չկար այդ երկար ու աղոտ փողոցում, ասես միանգամից լոել, անշարժացել, քարացել էր քաղաքը, ու քարե փողոցի քարե մայթերով էր շարժվում մեր փոքրիկ, մեր տիսրած քարավանը:

Ու հանկարծ ուղիղ իմ դիմաց, մի քանի քայլի վրա պահածոյի թիթեղյա տուփ տեսա ես... կլեկտրապայան փոշոտ լապտերի փոքրիկ լոյսի տակ շողում էր նա սպիտակ, լուսնային փայլով ու անհնարին էր տուփին շնայելը: Եվ որովհետև հարրած էի ես ու օրորվում էի մի քիչ, ու որովհետև աչքերիս առջև հուրիքում էր պահածոյի թիթեղյա դատարկ այդ տուփը, ապա մտքումս որոշեցի մի գծով ուղիղ մոտենալ նրան, ուղիղ առանց շեղվելու: Բայց չհասցրեցի: Մանուկը հանկարծ պոկվեց տեղից և խոր մի հառաչով, ոտքով ուժգին հարվածեց տուփին: Ասես կրակեցին փողոցում: Տուփը շողալով թռավ բարձր, մի պահ կորավ մուրի մեջ, ապա վայր ընկավ զիսաստղի նման ու սկսեց զլորվել թեք ասֆալտի վրայով՝ անսաելի աղմուկով ու սուլոցով:

- Ի՞նչ ես անում,-ճշաց Նանարը:

- Սուս,-ասացի ես՝ նրա թեսք բռնելով:

Մի պահ երեքս կլ կանգ առանք ու լսում կինք, թե ինչպես է աղմուկը զլորվում լոռվայան միջով. հետզհետե հեռանալով ու նվազելով: Հետո տուփը հավանորեն շեղվեց ձանապարհից, թերվեց ու զնաց միայն մի կողքի վրա, որովհետև աղմուկը դարձավ հազիվ լսելի մի բզեց ու մարեց հեռվում, մթության մեջ, ինչ-որ տեղ: Ու միանգամից կրկին անհուսորեն ամայացավ այդ երկար-երկար- երկար փողոցը: Ուրիշ ժամանակ, մի տաս տարի առաջ, եթե մեզ հանդիպեր այդ տուփը, մենք կանգ չէինք առնի ու չինք թողնի, որ անհետանա մթության մեջ, կվազեիք, կիսիեինք, կվազեինք ու նորից կիսիեինք, կվազեինք ու դարձյալ կիսիեինք մինչև այդ երկար-երկար փողոցի վերջն ու ավելի հեռու: Բայց մեզնից ոչ մեկը չշարժվեց տեղից:

- Գնա՝նք,-ասաց Նանարը:

Եվ կատարվեց այն, ինչին սպասում էի և ինչից ուզում էի խուսափել աղմուկի մեջ: Երբ կրկին առաջ շարժվեցինք, Մանուկը ետ մնաց, ու մենք մեր թիկունքում հեծկլտոց լսեցինք: Նա կանգնած էր մեջքով դեպի մեզ, կեկտրասյանը թերված, զլուխը հենել էր ձեռքերին ու հեկեկում էր երեխայի նման՝ ցնցելով ուսերը:

- Վա՝յ, լաց է լինում,- զարմացավ Նանարը:

- Գիտեմ,-ասացի ես:

- Հարբա՞ծ է:

- Հա՝,-ասացի ես:

- Ես հարբածներից վախենում եմ,-ասաց Նանարը,-բայց Մանուկից չեմ վախենում:

Նա թողեց ինձ ու զնաց դեպի Մանուկը, որ շարունակում էր հեկեկալ կեկտրասյան տակ, մոտեցավ, բոնեց ուսը:

- Ի՞նչ պատահեց, Մանուկ,-հարցրեց նա քնքշանքով,-քեզ ո՞վ բան ասաց:

Մանուկը ետ տանելով ազատեց ուսը.

- Թո՞յ, թող ինձ, թող:

- Եկ զնանք, Մանուկ,-նորից կամացուկ խնդրեց Նանարը:

- Դուք զնացեք,-տնքաց մանուկը հեծկլտոցի միջից,- զնացեք դուք, զնացեք քնեք, չեմ սատկի, կգամ: Դե զնացեք, ի՞նչ եք ուզում ինձանից,-հևաց Մանուկը:

- Նրան ձեռք մի տա,-ասացի Նանարին

- Այսր լաց է լինում,-բացականչեց նա:

- Ոչինչ,-ասացի ես,-ոչի՞նչ, թող լաց լինի: Թող լաց լինի,-ասացի ես,-կիանզստանա:

Մանուկը պոկվեց սյունից, օրորվեց ու շարունակելով ձեռքերով տրորել աչքերը, ինձ մոտեցավ: Նա դեռ լաց էր լինում և կանգ առավ քիչ հեռու՝ թեքված ու թուլացած:

Կիանզստանամ, հա՞,-ասաց նա խոպոտ ձայնով,-կիանզստանա՞մ... ինձ հանգիստ չկա: Չկա: Ես դատապարտված եմ, ես կորած մարդ եմ այս աշխարհում:

- Դե վերջ տուր,-բղավեցի ես,-ի՞նչ ես աղջկա նման ձայնդ գլուխող զցել: Ամեն ինչից քեզ համար ողբերգություն ես սարքում: Ի՞նչ է պատահել, դե ասա՞ , ի՞նչ է պատահել:

Ես գիտեի, թե նա ինչ է ասելու և գիտեի նաև, որ անկախ իմ հարցից՝ ասելու է: Ես պարզապես չեմ ուզում, որ նա լաց լինի, ես տանել չեմ կարողանում, երբ լաց է լինում տղամարդը, որովհետև այդ ժամանակ իմ լացն էլ է գալիս: Իսկ ես չեմ ուզում լաց լինել, հերիք է: Ավելի լավ է թող խոսի:

- Ի՞նչ նշանակություն ունի լացը,-ասաց Մանուկը: - Զետո՞ ինչ: Եթե սրտիս մեջ լաց եմ լինում, ի՞նչ նշանակություն ունի՝ տեսնո՞ւմ եք, թե ոչ: Ես ի՞նձ համար եմ լաց լինում: Ուրիշին ի՞նչ...

- Այսր ոչ մի պատճառ չկա, Մանո՞ւկ,-ասաց Նանարը:

- Չե, Նանար ջան, դու չգիտես,-ասաց Մանուկը,- ես քեզ կասեմ հիմա: Տեսար, չէ՞ Նվարդենց տունը: Տեսա թ: Փաստորեն իրար օտար մարդիկ են բոլորը, չէ՞ : Հարյուր տարի էլ, որ ձանաչեիր ու իրենք չասեին, մտքով կանցնե թ, թե նրանք օտար են: Չեր անցնի: Այնինչ Նվարդի հայրը միայն և միայն այդ մայրիկի տնվորն է եղել, իսկ Նվարդին էլ բերել են մանկատնից: Լսեցի՞ թ, թե ինչ ասաց Պետրոս հայրիկը. «Պարզապես հայեր ենք մի տան մեջ հավաքված, ապրում ենք»: Ապրում են: Այդքան հարազատ, սիրում են իրար, ժպտում են իրար, հասկանում ու երգում են իրար հետ: Այնքան են սիրում, որ իրար նման են դարձել: Այսր չեք հասկանա, թե դա ի՞նչ բախտավորություն է:

- Ինչո՞ւ, մենք էլ ենք հասկանում, Մանուկ,-ասաց Նանարը:

- Չե, Նանար ջան, մի ասա: - Նա կանգնած էր արդեն ուղիղ, բայց հարբածությունից, թե վշտից օրորվում էր տեղում: - Մի՞ ասա: Դուք չեք կարող հասկանալ: Դա կիասկանա միայն նա, ով դժբախտ է: Դա ե՞ս եմ հասկանում: Գիտեմ, Նանար ջան,-հանկարծ մեղմ ասաց Մանուկը,- գիտեմ, որ հայր չունես, գիտեմ քույրիկ ջան, բայց ի՞նչ է քեզ մնացել հորիցդ, դե ասա ինձ: Եթք մեկը հորդ մասին է հարցնում, ի՞նչ ես հիշում դու: Դու հիշում ես, որ նա բարի-բարի մարդ էր, որ տուն էր գնում քեզ իր ուսերին դրած, որ քեֆեր էր անում պատշգամբում բոլոր հարեանների հետ, որ երգում ու հառաչում էր իր կորած երկրի համար: Այ, դու լաց ես լինում: Իսկ ես նախանձում եմ քեզ: Ես քո լացին էլ եմ նախանձում, որովհետև դու քո սիրելի հորը հիշեցիր, լավը, բարին ու քնքուշը հիշեցիր: Իսկ ես հիշելու ոչ մի բան չունեմ, ոչինչ: - Զետո ավելացրեց բոլորովին կամացուկ, շշուկով: - Անցած շաբաթ դասընկերոջս մայրն էր մահացել: Եթք բոլորը հեռացան գերեզմանատնից, ընկերու չգնաց նրանց հետ, ընկավ հողաթմբին ու լաց էր լինում, քնքուշ բառեր էր ասում մորն ու լաց էր լինում, ասում էր, թե ինչպէ՞ս է ապրելու այսուհետև, առանց նրա: Ես էլ լաց եղա, քիչ էր մնում խենթանայի: Բռնեցի, կոպիտ, ուժով բարձրացրի հողից: «Ի՞նչ իրավունքով ես լաց լինում, -գոռում էի ես, թափահարելով նրան, - ի՞նչ իրավունքով: Դու մայր ես ունեցել, նա քեզ պահել է, գրկել է, սիրել է, համբուրել է, ուրախացել է քեզնով, պաշտպանել է քեզ, ընկել ես՝ լաց է եղել, կապել է վերքդ, բղավել է քեզ

խփողների վրա, և եթե չար ես եղել՝ ինքն է ծեծել: Իսկ մայրս ինձ ոչ միայն չի սիրել, այլև չի ծեծել, հասկանո՞ւմ ես, ինձ ոչ չի ծեծել հարազատի պես: Ես չեմ տեսել մորս, ես միայն գրքերից և ուրիշների օրինակով գիտեմ, թե ինչ բան է մայրը: Իմ խեղճ մայրը ինձ երբեք չի գրկել, երբեք»:

Նա ասես տենդի մեջ լիներ՝ խոսում էր արագ, շտապելով ու խեղդվելով շտապելուց, ասես վախենում էր չհասցնի ասել այն ամենը, ինչ փոթորկում էր հոգին, ինչը հանգիստ չէր տալիս ու դժբախտ էր դարձնում նրան:

- Պետրոս հայրիկն օտարներ էր համարում իրենց: Նա օտարներ չի տեսել, նա մեր տանը չ' ի եղել, Նա չ' ի տեսել իմ հորը, այլապես կիմանար, թե ինչ ասել է օտարություն: Ես հարազատ հայր ունեմ, և բոլորն էլ ասում են, որ զարմանալիորեն նման եմ նրան: Ես եղբայրներ ունեմ, ու մենք բոլորս էլ իրար հետ կինք ապրում մի տան մեջ: Եվ մեզնից ոչ մեկը մյուսին չէր հասկանում, ավելի օտար մարդիկ ես աշխարհում չեմ տեսել: Ես փախանքանցից, հանրակացարան մտա, որ գոնե բարեկամներ ունենամ: Ինչո՞ւ, ինչո՞ւ պետք է ես հանրակացարանում ապրեմ, ինչո՞ւ պետք է ամաչեմ հայտնել, որ տուն ունեմ Երևանում, ինչո՞ւ պետք է ընկերներիս ստիպեմ փոխել մայթը, երբ դիմացից ինձ շատ նման մի մարդ է զայիս, երբ դիմացից իմ հայրն է զայիս, որին սիրում եմ ու չեմ հասկանում, որին ուզում եմ տեսնել միայն հեռվից, որի հետ խոսել չեմ ցանկանում, որովհետև յուրաքանչյուր գրուցից հետո ավելի օտար եմ զգում ինձ և ուզում եմ մեռնել:

Նա առանց այդ կ թույլ էր, հոգնած էր ու հարբած: Դառն ու տխուր խոստովանանքը ավելի թուլացրեց նրան: Նա ուզեց ելի ինչ-որ բան ասել, բայց չկարողացավ ու առաջ շարժվեց թույլ-թույլ, զլուխը խոնարհած- երերալով ու սայթաքելով, ձեռքերով դեմքը ծածկած:

Մի պահ ես ու Նանարը հայացքով հետևում էինք նրան, նայում էինք ցավով ու կարեկցանքով, բայց միաժամանակ երևի անորոշ, անզութ, անբացատրելի մի ուրախությամբ ներքնապես զգալով մեր երջանկությունը և ամաչելով այդ երջանկությունից:

- Խեղճ տղա,-հառաչեց Նանարը: -Գնանք, Արտ ջան, թող նա մենակ չմնա:

- Գնանք,-ասացի ես:

Քիչ հետո մենք հասանք Մանուկին ու դանդաղ քայլեցինք նրա կողքով այդ երկար-երկար երկար փողոցն ի վար, մեր տխրությունն ու տրտունջը թողնելով այդ փողոցին, և մեզ հետ տանելով նրա գիշերային կապույտ լուսությունը: Իսկ մեր մոտով, մեր ամեն քայլի հետ շողալով ձգվում էին տրամվայի երկարեւ գծերը և բվիս էին խուլ, հոգնած ու մեղմաբար: Ո՞վ գիտե, երևի քաղաքում, ինչ-որ տեղ լուսավոր գնացքներ էին պլանում այդ ժամին:

Գուցե Մեզ Միայն Թվում Ե

Արդեն մի շաբաթ է, ինչ լույս է տեսել ֆելիկետոնը: Այնքան մեծ իրադարձություններ են կատարվել այս մի շաբաթում, որ ես երջանկությունից կորցրել եմ գլուխս ու մեծամտացել եմ մի քիչ: Ի նշ հաճելի բան է եղել փառքը: Մտքովս չեր անցնում, թե իմ հարազատների ու ծանոթների մեջ այդքան թերթ կարդացող կա: Այնինչ պարզեցի, որ համարյա բոլորն էլ կարդացել են ֆելիկետոնը և նրանցից շատերը անհամեմատ ավելի բարի, ավելի անկեղծ ու ավելի զգայուն են դարձել իմ նկատմամբ: Առաջինը, իհարկե հայրս էր. նա ինձ այսուհետև թույլատրեց գիշերները ոչ թե խոհանոցում, այլ տանն աշխատել, իսկ ինքը քնելիս անտրտունց շրջվում էր պատի կողմը, որպեսզի լույսը չխանգարի: Բայց դե հայրս... հասկանալի է: Իսկ Բելա Գրիգորինան...

Երկուշաբթի օրն առավոտյան աշխատանքի գնացի սովորականի պես՝ հեծանիվով ու տասնինգ րոպե ուշացումով, որովհետև մոտենում էր համամիութենական շքերթի մեկնելու օրը և պարապմունքներից բացակայել չեր կարելի: Վախսորած շուրջս նայելուց հետո նոր էի բացել շենքի բարապանուիի մորաքույր Պաշայի խցիկի դուռը՝ հեծանիվս թաքցնելու համար, երբ դեմ-դիմաց հանդիպեցի Բելա Գրիգորինային: Անակնկալից ընկրկեցի ու սարսափով սպասում էի նրա ոռուս-հայկական նախատինքներին, սակայն կատարվեց մի ապշեցուցիչ բան. Բելա Գրիգորինան ներողամտորեն ժպտում էր:

- Բարեն, Արտակ,-մեղմորեն ասաց շրջկոմի քարտուղարի ահեղ օգնականը,-դիր, հեծանիվդ դիր այդտեղ: Պաշա,-դարձավ նա բարապանուիուն,-մի առարկիր, երբ Արտակը հեծանիվը թեզ մոտ է բերում, ուրիշ հարմար տեղ չկա, իսկ նա մրցումների է գնալու:

- Իհարկե, իհարկե,-զարմացած մրմնջաց Պաշա մորաքույրը:

- Շատ շնորհակալություն, Բելա Գրիգորինա,-երախտագիտությամբ ասացի ես:

- Չարժե,-ժպտաց Բելա Գրիգորինան, դու ինձ ձիշտ հասկացիր: Երբ ես քեզ բարեկամաբար նախատում էի՝ հեծանիվով աշխատանքի զալու առթիվ, ապա միայն և միայն քո հեղինակության մասին էի հոգում: Բայց եթե ելք չկա, պետք է հաշտվել: Ոչինչ անել չես կարող:

Նա ձեռքը մեղմորեն դրեց ուսիս, և ես կրկին շնորհապատ.

- Շատ շնորհակալություն, Բելա Գրիգորինա:

- Չարժե, չարժե,-ժպտաց օգնականը: Իսկ երբ դուն մոտ էի հասել, ձայնեց հանկարծ, - Հա, Արտակ, ուզում էի հարցնել ու մոռացա՝ երեկվա թերթում տպագրված ֆելիկետոնի հեղինակն իսկապես ս դու ես:

- Ես եմ, Բելա Գրիգորինա,-հպարտությամբ շիկնեցի ես:

- Լավն էր, շատ լավն էր,-ուրախացավ նա,-չի կարծում, թե դու այդքան համարձակն ես...

Իսկ միջանցքում ինձ մի նոր անակնկալ էր սպասում: Կիսաբաց դրնից լսեցի, թե ինչպես էր շրջկոմի երկրորդ քարտուղար Մեսրոպը հեռախոսով խոսում իմ մասին:

- Այս դրա հեղինակը մեզ մոտ է աշխատում, վարպետ Մուկուչ: Չե, ջանմ, ջահել տղա է: Իհարկե: Չմտածես, թույլ չենք տա, ո՞վ կարող է մամուլի դեմ... Փաստերը հարյուր տոկոսով ճիշտ են, ինձ պատմել էր: Վարպետ Մուկուչ, վարպետ Մուկուչ,-ինձ տեսնելով ձայնը բարձրացրեց Մեսրոպը,-ինքն էլ հենց կողքիս է, եկավ, ուզո՞ւմ ես տամ հետը խոսի: Վերցրու,-լսափողն ինձ մեկնեց Մեսրոպը,-մեր գործարկոմի նախազահն է:

- Ի՞նչ խոսեմ,-ձեռքս ետ քաշեցի ես:

- Խոսի՞ր, խոսի՞ր վարպետ Մուկուչն է:

Հեռախոսալարի մյուս ծայրում գործարկոմի նախազահ վարպետ Մուկուչը, դարաբաղցու ընդգծված առողանությամբ, զարմանալիորեն հուզված գտնում էր, որ ժամանակն է Վեզիրյանների հերն անիծել, որովհետև նրանք ոչ խիղճ ունեն, ոչ էլ պատիվ և արատավորում են հայ մարդու անունը: Նա տեղեկացնում էր նաև, որ կեսօրին գործարկոմի նիստում քննարկելու են ֆելիետոնը և իրենց բանվորական կարծիքն ուղարկելու են խմբագրություն, միաժամանակ խորհուրդ էր տալիս զգույշ մնալ, որովհետև այդպիսի մարդիկ ամեն ինչի ընդունակ են: Ինքը լավ զիտի դա, հին մարդ է ու շատ բան է տեսել: Բայց հետո մտածելով, թե գուցե ես շատ վախենամ, վարպետ Մուկուչը հարկ համարեց վերջում հուսադրել ինձ.

- Դինդ կաց, քեզ մատաղ...

Համարյա ողջ օրը չկարողացա աշխատել: Անընդհատ զնզում էր հեռախոսը, և Պարթեն ամեն անզամ բամբ ձայնով լսափողը մեկնում էր ինձ.

- Ընկեր Փելիետոնիստ, ձեզ են ուզում:

- Ընկեր Լևոնյանի՝ն, խնդրեմ, հաճույքով:

Նա էլ շատ էր ուրախացել: Իսկ ես զարմացած էի նաև: Ովքեր ասես, որ զանգ չին տալիս ու շնորհավորում: Զանգեցին նույնիսկ այնպիսիները, որոնց տարիներ շարունակ չեի հանդիպել ու կորցրել էի տեսադաշտից, այնպիսիները, որոնք սովորաբար ինձ չին բարեւում. հինգերորդ դասարանի իմ աշխարհագրության ուսուցիչը, պահածոների գործարանի (որտեղ բեռնակիր էի եղել) կուսրյուրոյի երկրորդ քարտուղարը, մեր մի հին ազգականը, որը երկար բացատրում էր, թե ես իր ինչն եմ, և որի անունն առաջին անզամ էի լսում, Դատախազության իմ պահապան հրեշտակը՝ Ասյան, որի ձեռքից ավագ ցրիչ ընկեր Վահանը անընդհատ ուզում էր խլել լսափողը և խլելուց հետո ասաց.

- Ճուտո, ճուտո... ըլը...Ճուտո...

- Մինչև աշխատանքի վերջը երկու զանգ էլ եղավ, որոնք սակայն նման չին մյուս զանգերին: Զրուցակիցներս երկար ու մանրամասն հետաքրքրվում էին, թե իսկապես՝ ն՞ու եմ և ապա շնչակտուր սպառնալիքներ էին տալիս: Բայց իմ տրամադրությունը չափից դուրս բարձր էր, որպեսզի ուշադրություն դարձնեի նրանց սպառնալիքներին: Նրանց ձայնը ինձ չէր հասնում,

փոխարենը նրանք ինձ հիշեցրին երիտասարդ, վախկու որմնադրին, որի հետ զրուցում էի շինարարական հրապարակում: Ես նույնիսկ պատկերացրեցի, թե ֆելիետոնը կարդալու պահին ինչպիսին կլինի նրա դեմքը, և ծիծաղեցի բարձրածայն ու հաղթական: Ոչինչ, ոչ չ մի բան չէր կարող խանգարել իմ ուրախությունը, հաղթողի իմ հապարտությունը: Այսր քիչ բան չէ, ես՝ դեռևս ուսանող, հանդես եմ զալիս հանրապետության կենտրոնական թերթում այն ել ֆելիետոնով, և այն ել ճանաչված ու ազդեցիկ մի մարդու դեմ, ընդդեմ կեղծիքի ու խարեւության: Եվ իմ օգնությամբ մերկացվում է հանցագործը, հաղթանակում է ճշմարտությունը: Ինձ շնորհավորեց նույնիսկ երգիծաբան Սուրենյանը՝ իմ ուսուցիչն ու ամենասիրելի ֆելիետոնիստը, թեև սպասած խանդավառությունը չկար նրա խոսքերում:

- Վատ ֆելիետոն չէր, ապրե՛ս,- ասաց, երբ փողոցում մոտեցա ու բարեկցի նրան:

Ես շնորհակալության ինչ-որ խոսքեր թոթովեցի:

- Բայց ափսոս որ ֆելիետոն էր,- ասաց նա:

Սպասում էր հարցի, բայց ես չհամարձակվեցի որևէ հարց տալ, և նա շարունակեց:

- Շատ պիտի տառապես: Մի օր պիտի ափսոսաս, որ ֆելիետոն ես գրել: Բայց հիմա այլևս ետ դառնալ չես կարող: Պետք է գրես: Դե-ուրեմն, գրի որքան կարող ես: Դու էլ քո խաչը տար:

Տիուր ու մի քիչ ել դառնացած մարդ է հազարավոր մարդկանց քահ-քահ ծիծաղեցնող Սուրենյանը: Ես այդքանն էլ պետք է սպասեի նրանից: Բայց, ձիշտն ասած, այդ պահին ակամա չարության ինչ-որ կայծ ունեցա նշանավոր երգիծաբանի դեմ: «Ծերացել ու հոգնել է,- մտածում էի ես, գուցե և վախենում է գրել, դրա համար էլ առանձնապես չի ուրախանում, թերևս նույնիսկ նախանձում է, երբ ուրիշները գրում են: Իսկ իմ կարծիքով ֆելիետոնից լավ բան աշխարհում չկա»:

Բայց անմիջապես էլ ուզում եմ խոստովանել, որ իմ ողջ հաղթական տրամադրության մեջ, պայծառ օրերի այս շարանում, ինչ-որ աննշան, փոքրիկ մի տիածություն երբեմն-երբեմն զգացնել էր տալիս իրեն, գաղտագործ սողոսկում կուրծքս ու սրտիս ստիպում բարախել խուլ, անհանգստությամբ և անորոշ տագնապով: Եվ ես չի կարողանում վանել այդ տագնապը: աշխատում էի չնկատել, ուշադրություն չնվիրել, ավելի բարձր էի ծիծաղում, ավելի երկար էի մնում մարդկանց հետ, որոնք գովում էին ինձ և առանձնապես իմ համարձակությունը, ավելի ուշ էի տուն դառնում Նանարի հետ ունեցած ժամադրություններից: Բայց հո չի կարող ընդհանրապես տուն չվերադառնալ ու չպառկել քնելու: Հո՝ չի կարող մի քիչ չմտածել քնելուց առաջ: Ես մտածելուց էի վախենում: Առաջին անգամ կյանքում վախենում էի իմ իսկ սեփական մտքերի հետ մենակ մնալուց, որովհետև հենց այդ պահին էր ակամա կծկում սիրտս ու տրոփում տիած, անհանգիստ: Քաղկոմի բարտուղար Կարո Բաղամյանն էր կանգնում իմ աշքերի առջև և Վեզիրյանը՝ նրա կողքին, բազմոցին: Ես շուռումուռ էի զայիս անկողնում, անսովոր տագնապն ինձնից վանելու, սրտիս դիրքը փոխելու համար:

Ես վախենում էի Կարո Բաղամյանից:

Եվ երբ երկու թե երեք օր առաջ մուսկովյան ինչ-որ խորհրդակցությունից վերադարձած մեր շրջկոմի առաջին բարտուղար Սարգսյանն իր առանձնասենյակը կանչեց ինձ, զգիտեմ ինչու

որոշեցի նրա հետ կիսել իմ տագնապները: Ավելի ճիշտ, ինքը տրամադրեց, որովհետև շատ սիրալիք ու երկար խոսում էր ֆելիետոնի մասին, կտրոներ էր արտասանում և ծիծաղում էր սրտանց՝ արցունքութելով աշքերը, ձեռքը սեղանին էր խփում բավականությունից և, ի վերջո, հայտարարեց, թե ինձանից իսկական ֆելիետոնիստ դրւու կզա:

- Շնորհը ունես, շնորհք, Արտա՝ կ,-ասում էր նա,- քո տեղը, իհարկե թերթն է, բայց մտքովդ չանցկացնես, թե ես շրջկոմից կթողնեմ քեզ: Ինք գիտես, որ մենք քո աշխատանքից գոհ ենք, նույնիսկ նորից ներկայացրել ենք համամիութենական պատվորի: Բայց ինք էլ պիտի խոստովանես, որ ես միշտ էլ լավ եմ եղել քո նկատմամբ: Ֆելիետոնով ոգևորվելով, հանկարծ չմտածես անմիջապես փախչել մեզանից: Ծնողներիդ մոտ ո՞վ պետք է մնա: Եվ հետո, հավատա, մեզ մոտ աշխատելով, բավականին փորձ ձեռք կրերես, լավ կհասկանաս կուսակցական շինարարության խնդիրները: Իսկ այդ գիտելիքները թերթում քեզ շատ պետք կզան: Ազնիվ խոսք: Եվ, ի վերջո այստեղից գրիր, գրելու այնքան բան ունենք: Ձեռքդ սրտիդ դիր ու ասա՝ ճիշտ չե՞մ:

- Ճիշտ եք, ընկե՛ր Սարգսյան,-խոստովանեցի ես:

- Դե, ուրեմն, էլ ի՞նչ ես ուզում: Տեսնո՞ւմ ես, որ ամեն ինչ լավ է դասավորվում, լավ է, լավ,- ժամանակագույնը: - Իսկ մրցումները ե՞րբ են սկսվում:

- Տասնինգօր է մնացել:

- Այդ էլ թույլ կտանք: Կզնաս կշրջես, կթարմանաս, կզաս, ու կսկսենք միասին աշխատել: Ծանր շրջան է լինելու. պետք է բակային ճամբարներ կազմակերպել:

Ես նրան տեղեկացրի, որ բավականին աշխատանք կատարել ենք այդ ուղղությամբ: Իսկ երբ ներկայացրեցի նաև առաջին ամսվա միջոցառումների ծրագիրը, Սարգսյանը նույնիսկ զարմացավ.- Սա՞ երբ ես հասցրել: Չե, քեզ իսկապես չի կարել բաց թողնել: - Նա ուսումնասիրեց ծրագիրը և հանկարծ սկսեց ծիծաղել: - Գիտե՞ սի ինչու ծիծաղեցի, մի պահ մոռացա, թե ինչ եմ կարդում ու զարմացա, որ քո գրածը սրամիտ չէ: - Նա կրկին ծիծաղեց: - Այս շատ սուր էիր գրել, անաստված սուր, կարդում ես ու չզիտես ծիծաղե՞լ, թե զայրանալ:

Այստեղ էր, որ չկարողացա ոչինչ թաքցնել:

- Ես էլ հենց դրանից եմ վախենում, ընկեր Սարգսյան, չզիտեմ՝ ընկեր Բաղամյանը կծիծաղի՞, թե կզայրանա:

- Ի՞նչ Բաղամյան:

- Քաղկոմի քարտուղարը:

- Քաղկոմի քարտուղար՝ թը... Իսկ ընկեր Բաղամյանն ի՞նչ կապ ունի քո ֆելիետոնի հետ:

- Վեզիրյանը նրա ընկերն է,-ասացի ես:

Սարգսյանը նստած էր պատուհանի դիմաց, ու ես տեսա, թե ինչպես վայրկենապես գունատվեց նրա դեմքը, հանգավ ժպիտը և աշքերը մի տեսակ տամկացան: Նա հենց այնպես նայեց՝ ասես շփոթությունը բարցնել ուզենալով, ապա նորից աննպատակ բացեց գրասեղանի մեջտեղի զգրոցը, կրացավ, ես հրեց, իսկ երբ սկսեց խոսել, ձայնն արդեն առաջվանը չէր:

- Ո՞վ ասաց քեզ:
- Գիտե՞մ:
- Իսկ ինքը զիտե՞՞, որ դու զիտես:
- Այո:
- Եվ չփորձե՞՞ց արգելել, որ չզրես ֆելիետոննը:
- Բացեիբաց՝ ոչ, բայց ընդհանուր վերաբերմունքից, ինչ-որ ակնարկներից զգում էի:
- Անձամբ խոսե՞լ է քեզ հետ:
- Իհարկե, չե՞ք հիշում, դուք էիք ասել, որ Գրիբոյեդովի դպրոցից ուղիղ քաղկոմ գնամ:
- Հա՞,-ասաց Սարգսյանը,-կարծես նման բան հիշում եմ:

Նա բարձրացավ տեղից, մոտեցավ պատուհանին, որի ետևում արև էր ու զարուն, ու երկար դուրս էր նայում, ինձ նույնիսկ թվաց, թե նա մոռացել է իմ գոյությունը: Դրա համար էլ բարձրացա աթոռից և դեպի դուրս ուղղվեցի խոռված հոգով:

- Իսկ ինչի՞ց զգացիր, թե նա չի ուզում, որ գրվի ֆելիետոննը,-հանկարծ իմ կողմը շրջվեց Սարգսյանը:
- Ասաց, որ ուզում է ինձ քաղկոմի բաժնի վարիչ նշանակել: Հետո Վեզիրյանը հայտնեց, թե դա իր համար է անում: Նա որտեղի՞ց կարող էր իմանալ, թե ինչ է որոշել քաղկոմի քարտուղարը:

Սարգսյանը ինձ էր նայում շատ տարօրինակ ու զարմացած հայացքով: Ասես առաջին անգամ էր տեսնում: Նրա աշքերի մեջ, սակայն, միայն զարմանք չկար: Ավելի շուտ ես նրանց մեջ հետաքրքրություն և ազնիվ խոսք, ինչ-որ նախանձ թե չարախնդություն կարդացի: Գուցե ինձ թվաց միայն: Եվ, ի վերջո, գուցե մեզ թվում է միայն, թե մենք կարող ենք կարդալ ուրիշի աշքերը: Գուցե մենք տեսնում ենք միայն այն, ինչ ուզում, կամ սպասում ենք տեսնել ուրիշների աշքերում: Զգիտեմ, բայց այս անգամ վստահ կարող էի ասել, որ Սարգսյանի հայացքի մեջ շատ տարօրինակ մի արտահայտություն կար, երբ հարցրեց:

- Եվ դու, այնուամենայնիվ որոշեցիր գրե՞լ:
- Իսկ ի՞նչ կարող էի անել,-ուսերս թոթվեցի ես:

Շարունակելով ինձ նայել նույն այդ տարօրինակ հայացքով Սարգսյանը կրկին իր արռողին նստեց, նորից բացեց զգրոցը, բայց չփակեց անմիջապես, այլ այնտեղից ինչ-որ թղթապանակ հանեց, դրեց սեղանին ու ձեռքն առավ գրիչը:

- Դե՛, աշխատե՞նք,-ասաց նա, -այնքան գործ կա, որ մարդ չգիտի ո՛րն սկսել, ո՛րը թողնել:
Այդպես չէ:

Ես չպատասխանեցի, որովհետև պատասխանի հարկ չկար: Որովհետև հարցեր կան, որ պատասխան չեն պահանջում: Հարցեր են իրենց համար և այլ հարցերից ու պատասխաններից խուսափելու համար: Ահա թե ինչու կամացուկ ծածկեցի շրջկոմի քարտուղարի կաշեպատ դուռը

ԽԵՆՔ ԳԱՐՈՒՆ

Գի՞ծ, զի՞ծ գարուն, մի օրվա մեջ տասը տեսակ եղանակ է անում: Քիչ առաջ անձրև էր, և ես գոհ մտածում էի, թե շրջկոմից դուրս կգամ և անձրևանցու հազած: Իսկ հիմա ոչ մի կարիլ չկա: Երկինքն այնքան մաքուր է ու կապույտ, որ թվում է, ոչ միայն քիչ առաջ այլ ընդհանրապես ստեղծման օրից ոչ մի ամայ չի եղել: Դե, ինչ, կրկին ստիպված եմ քայլել արևի տակ՝ անձրևանցու աննպատակ ձախ թևիս նետած: Իսկապես որ իրավունք ունեն ծիծաղելու, մեր կուրսեցիները: Ճակատազրի ինչ-որ մանրիկ քմահաճույքով ինձ ոչ մի անզամ չի հաջողվում իր նպատակին ծառայեցնել անձրևանցու, այսինքն՝ հազնել անձրևի տակ: Գուցե նրանից է, որ անցյալ տարի, երբ Տուլայում գնում էի, արև օր էր: Չզիտե մ, այս անձրևանցոն ինձ սնոտիապաշտության կհասցնի: Հազնում եմ թե չէ, ամպերը ցրվում են

- Արտակն անձրևանց է հագել,-կարելի է հանել անձրևանցները,-քրքջում են մեր աղջիկները:
- Եթե զյուրատնտեսության մինիստրությունում իմանան քո տեղը, բաց չեն թողնի, բերքահավաքի օրերին բարձր աշխատավարձով կպտտեցնեն դաշտերում,-հումորի գծով զարգանում են մեր տղաները
- Արտակի անձրևանցն ու անձրևը հակադարձ համեմատական գործոններ են,-ծիծաղում են մեր աղջիկների մաթեմատիկոս փեսացուները:
- Այստեղ ավելի խիստ, քան որևէ տեղ՝ ընդգծվում են կապիտալիստական աշխարհի սուր հակասությունները,-սրամտում են մեր տղաների տնտեսագետ հարսանացուները:

Բայց ինձանից առանձնապես ձեռք չի քաշում Վարդգեսը:

- Էղ ինչի՝ ես անձրևանցդ միայն արև օրերին հազնում,-ամեն անզամ ուրիշների մոտ հարցնում է նա:
- Որովհետև անձրև օրերին եղբայրս է հազնում,-տիսուր-տիսուր ասում էի ես:Ու նրանք հոհուում են՝ կուտակելով ուսանողի համար անհրաժեշտ կալորիաներ, որովհետև ինչ-որ կուշտ մի գիտնական ասել է, թե առողջ ծիծաղն իր մեջ պարունակում է նույնքան կալորիա, որքան հավի երկու ձուն...

Նանարը սպասում էր շրջկոմի շենքի դիմացի մայթին: Հազին մի վառ կարմիր շրջազգեստ կա, որ շատ է սազում նրան: Այսինքն, ի՞նչը Նանարին չի սազում: Նա դեռ հեռվից ժպտում է, և սիրտս ուղղում է երջանկությունից, որովհետև Նանարն այդպես միայն ինձ է ժպտում, որովհետև Նանարն սպասում է ինձ:

- Վախենում եմ, Արտ,-ասում է Նանարը:
- Ինչի՝ ես վախենում,-ծիծաղում եմ ես,-Եվգինեն կծան չէ:

- Գիծ,-փոքրիկ բոռնցրով թեխս է խփում Նանարը,- քրոջդ մասին ո՞նց ես այդպես խոսում:
- Դու շուտով կլսես, թե նա՝ իմ մասին ինչպես է խոսում,-ասում եմ ես:

Ես Նանարին մեր տուն եմ տանում և դրա համար դիմել եմ մի ամենասովորական խարեւության, ասել եմ՝ թե հայրս ու մայրս զյուղ են գնացել և տանը միայն Եվգինեն է: Նանարին ասել եմ, թե Եվգինեն շատ է ուզում մոտիկից ծանոթանալ նրա հետ, և սրանից հարմար ժամանակ դժվար է գտնելը: Այլ ելք չունեմ: Շատ անգամ եմ փորձել որևէ առիթով մեր տուն տանել նրան, ծանոթացնել ծնողներիս, բայց հենց խոսում եմ այդ մասին, Նանարը շիկնում ու դրդում է և որտեղ էլ գտնվի ուզում է փախչել ինձանից: Իսկ ծնողներիս համար դա պատճառաբանություն չէ, ճիշտ է, նրանց դուր է զալիս «Էղ աղջկա» համեստությունը, բայց ամեն օր առաջարկում են, որ տուն հրավիրեմ նրան:

Իսկ երեկ ոչ միայն առաջարկեցին, այլև պահանջեցին: Եվ մեղավորը ես էի: Երեկ տուն բերեցի առաջին հոնորարս՝ ֆելիետոնի արժեքը: Գիտեի, որ մեծ գումար է լինելու, բայց այն թիվը, որի դիմաց ստորագրեցի ցուցակում, մտքով չեր կարող անցնել: Երբ իջնում էի խմբագրության աստիճաններով, ինձ թվում էր, թե մի քիչ դողում են այդ աստիճանները, թվում էր, թե սանդուղքով իջնում եմ ոչ թե ես, այլ աշխարհի մեծահարուստ ու երջանիկ մարդկանցից մեկը: Եվ ես ինձ պահեցի այնպես, ինչպես վայել է մեծահարուստին ձեռք բարձրացնելով կանգնեցրի առաջին իսկ ավտոմեքենան մտքումս գոչեցի «կորչի աղքատությունը» և անփույթ նետեցի վարորդին:

- Կնունյանցի փողո՞ց:

Հայրս պատշգամբում ինչ-որ երկար էր խարտում՝ փայտե բազրիքին ամրացրած փոքրիկ դազգահի վրա: Հնում էր, դեմքը կարմրել էր լարումից, և նայելով նրա ձերմակած մազերին, որոնց արանքներում աշխարհի ամենաազնիվ քրտինքի կաթիլներն էին մոլորվել-մնացել, ես կրկին ուրախությամբ մտածեցի, որ հիմա արդեն հայրս կարող է թողնել աշխատանքը: Կզրեմ, կապրենք, էլի:

- Մայրիկն ասաց, որ այսօր բավականին լավ ես աշխատել, ահա՝ օրավարձու, - ասացի հորս:

Նա շարունակելով խարտել, ուսի վրայով թեքեց գլուխը, ժպտաց հոգնած, հետո ձեռքին թղթադրամներին նայեց.

- Էղ ի՞նչ փող է:

- Հոնորարս է, հայրիկ, կարող ես շնորհավորել:

- Էղ ասա՞ծ ինչ է:

- Ֆելիետոնի փողն է, էլի, ֆելիետոնի համար տվեցին:

Հայրս թողեց խարտոցը, աշ ձեռքի ափով դազգահի վրայից սրբեց-թափեց խարտվածքը, որը ցրիվ եկավ մրջնանցի պես, ցուցամատով ձակատից քամեց քրտինքը, կաթեցրեց գետնին, ուղղեց մեջքն ու ծիծաղեց.

- Ուրեմն, ճի՞շտ, գրելու համար կլ են փող տալի՞ս:
- Բա ի՞նչ, կարծում ես միայն խարտելո՞ւ համար,-հեզնեցի ես ու նրան մեկնեցի թղթադրամները:

Նա զարմացած ու, հավանաբար նախատինքով տարութերեց գլուխը, ձեռքից վերցրեց թղթադրամները, նստեց ոտքերի տակ ընկած կոճդին ու սկսեց հաշվել աջ ձեռքի ցուցամատով և միջնամատով, որը կտրված բութ մատին էր փոխարինում: Հետո նրա ձեռքերն անշարժացան, նա բարձրացրեց գլուխը, նա նայեց անսահման տարակուսանք արտահայտող հայացքով և կամացուկ հարցրեց:

- Ուրեմն ես բոլորը են գրածիդ համա՞ր է...
- Հա, հայրիկ շան:
- Մի գիշերում գրեցիր, չէ, են որ չընեցիր:
- Ընդ:

Հայրս հառաջեց, բարձրացավ տեղից փողը զգուշորեն դրեց կոճդին ու ասաց դեռ զարմացած ու տխուր.

- Դու գիտե՞ս, որ սա իմ մի ամսվա աշխատավարձն է:

Նա նորից խարտոցը ձեռքն առավ ու սկսեց ետ ու առաջ գնալ փոքրիկ դազգահի վրայով, խարտեց, խարտեց հենալով ու կարմրելով, խարտեց թափով՝ զգիտես ում վրա և ինչի համար նեղացած, դազգահի վրայից սրբեց-թափեց խարտվածքը, ու սև մանրիկ մրջունները դարձյալ վազեցին պատշզամբի բազրիքի ու տախտակների վրայով: Հետո կրկին ուղղեց մեջքը, տնքաց, հազար, կոշտացած մատներով ծխախտ փաթաթեց՝ թղթի եզրը շրթունքին թրջելով, ծխեց խորը ու երբ քթից ու բերանից առատ դուրս էր հանում ծուխը, ինձ թվաց, թե հետն ել հառաջում է:

- Դե, դու կլ գրի, կլի, այ բալա,-ասաց նա,- տեսնում ես՝ ինչ օրի ենք, գրի, կլի:

Ես ուզեցի նրան բացատրել, թե գրելն այդքան էլ հեշտ չէ, թե... բայց անմիջապես կլ հրաժարվեցի այդ մտքից: Միննույն է, չի հավատա: Միննույն է, ոչ ոք դրան չի հավատում: Ավելի լավ, թող մտածի, թե ես միշտ էլ կարող եմ գրել, ու ինքը թողնի աշխատանքը: Շատ է հոգնել հայրս:

Ես թղթադրամները մորս տվեցի, և նա, ինչպես սպասում էի, ավելի գործնական գտնվեց: Առանց երկար խորհրդածելու և մեկնաբանությունների, ուրախությունից շողացող դեմքով շալը գլխին զցեց ու խանութ գնաց: Իսկ երբ վերադարձավ՝ զանազան փաթեթներով ու տուփերով լի զամբյուղով, և մենք աղմուկով սեղան նստեցինք, ծայր առավ հենց այն խոսակցությունը, որն ինձ ստիպեց դիմել խարեւթյան և Նանարին հրապուրել մեր տուն:

- Այ, որդի,-ասաց մայրս,-քանի տանը փող կա, են աղջկան բեր տեսնենք: Մի լավ սեղան կզգեմ, դու բեր, Արտակ շան:

- Ի՞նչ աղջիկ, է՛, չքմեղացա ես:
- Դե լավ, լավ,-զլուխն օրորեց մայրս,-ամբողջ աշխարհը տեսել է, մենակ մենք ենք մնացել:
- Չի գալիս մա՞մ շան,-սրտանց ասացի ես,-չի գալիս, ի՞նչ անեմ: Ասում է՝ ամաչում եմ:
- Լավ է անում, ինքը եղած պիտի ասի, բայց դու ել պիտի բերես:
- Ախր որ չի գալիս, ի՞նչ անեմ:
- Որ դու ուզենաս՝ կրերես,-ասաց մայրս:

Դե ես ի՞նչ անեմ, որ մայրերին թվում է, թե իրենց զավակներն աշխարհի ամենակարող մարդիկ են: Ես այլ ելք չունեի: Կներես, Նան ար:

...Նանարը քայլում էր իմ կողքով՝ մտքերի մեջ խորասուզված և երևի վիճում էր մտքում, որովհետև ձախ ձեռքը երբեմն-երբեմն ցնցվում է: - Հը՛, ի՞նչ կա, Նանա ր:

Նանարն ինձ է նայում զարմացած, հետո երևի կարծում է, թե բարձրաձայն է մտածել, որովհետև ասում է շտապով.

- Իսկ եթե տան ուրիշ մարդ էլ լինի՞:
- Ո՞վ պետք է լինի, դա բացառված է,-առանց աչք թարթելու, հերքում եմ ես:
- Իսկ եթե որսէ մեկը նե՞րս զա...
- Ո՞նց կգա,-ծիծաղում եմ ես,-դուռը կփակենք:
- Իսկ ձեր հարևանուիին:
- Վաղու՛ց խոռվ ենք:

Նանարը կողքից ինձ է նայում, ուզում է հավաստիանալ՝ ճի՞շտ եմ ասում, թե ոչ, բայց իմ դեմքն այնպիսի անվրդով արտահայտություն ունի, որ նա հանգստանում ու շունչ է քաշում թերևացած: Մենք քայլում ենք իմ մանկության փողոցով, ու ես Նանարին ցույց եմ տալիս, Նանարին եմ նվիրում իմ ողջ հարստությունները: Մենք կանգնում ենք Գետարի հին կամրջին, նայում ենք ներքև, հեռու սարերի ձյունից խենթացած պղտոր ջրերին, որ չգիտես որտեղից վիթխարի ժայռաբեկորներ են պոկել ու բերել և հիմա փրփրոտ գալիս, թռչում են այդ ժայռաբեկորների վրայով: Ես նրան Ռաշիդենց բարդիներն եմ ցույց տալիս, որ հպարտ խշշում են վերևում, ամպերի մեջ ու ասում եմ, որ քամին այդ բարդիների տերևների դողից է ծնվում: Ես Նանարին տանում եմ ճյուղատարած ծիրանենիների տակով, ցատկում, խակ ծիրան եմ պոկում նրա համար, բայց չեմ ասում, մի շատ սիրուն աղջիկ է ապրում, որ նա սպիտակ, սպիտակ երես ունի և... աչքերն ել են սպիտակ: Ասես ծիրանի ծաղիկների փոշին է

իշել նրանց վրա ու մնացել ընդմիշտ: Չեմ ուզում ասել, որ կույր է այդ սիրուն աղջիկը, չեմ ուզում, որ Նանարը տիրի: Ես Նանարին տալիս եմ թժշկի պարտեզը, որտեղ հիմա աշխարհի ամենաչքնաղ վարդերն են բացվել, մուգ կարմիր ու ձյան պես սպիտակ, և պոլսեցի Տիգրան առքարի փոքրիկ կրծքիթն եմ նվիրում, որի տափակ, հողածածկ կտուրից իմ մանկության աղավնիներն եմ թոցրել մի ժամանակ, դարե՛ր, դարե՛ր առաջ...

Ցերեկ է, և ինչպես միշտ՝ բաց է մեր տան դուռը: Ես Նանարին կամացուկ տանում եմ կիսախավար միշանցքով, զգալով, թե ինչպես է լարվում նրա մարմինը, հետո միանգամից բացում եմ աջ կողմի դուռը, մեր սենյակի դուռը: Բացում եմ և Նանարի հետ ինքս էլ եմ ցնցվում: Աեղանի շուրջը, հորս ու մորս կողքին նստել ու հին-իին հուշեր են պատմում ցյուղից հյուր եկած իմ Վարսենիկ հորաքույրն ու Նոյեմզար մորաքույրը. հատակին նրանց բերած բաց խորչիններն են՝ զաթայով ու բաղարջով, սերկանիլով ու բրդե՛սպիտակ գուլպաներով լի: Իսկ մեր ետևում Եվգինեն է կանգնել արդեն, որ խոհանոցից է դուրս եկել, թաքուն խփում է իմ կողքին ու ասում ամենայն քաղաքավարությամբ.

- Համեցեք, համեցեք, ներս մտեք:

Նահանջի ճանապարհը փակված է: Ես մի քայլ եմ անում դեպի սենյակ՝ Նանարի թևը ամուր քռնած, և հաջորդ վայրկյանին ամեն ինչ խառնվում է իրար: Նանարին ինչ-որ մեկը խլում է ինձնից, իսկ հորաքույրս ու մորաքույրս ամուր, աղմկալից ու երկար համբուրում են ինձ, ընդմիջումներին «դարդ տանեմ» «ցավի տանեմ» բացականչելով: Նրանց շորերից սերկանիկի, չորացած խոտի ու նոր կթած կաթի հոտ է զալիս, իմ մանկության աշխարհի կարոտներով ու հուշերով լի, ու ինձ թվում է, որ եթե զլուխս բարձրացնեմ, կդառնամ բոբիկ ու արեից այրված մի տղա, մի կտոր հաց կթոցնեմ թարեքից, մի կտոր պանիր կթոցնեմ պուլիկից, հավերին խուճապի մատնելով դուրս կփախչեմ տնից ու կվագեմ բարձր արտերի մեջ բացված փոքրիկ արահետով, դեղին ու փափուկ ճանապարհով, կվագեմ հաղթական ճիշեր արձակելով, կալեր կզնամ, որտեղ ինձ են սպասում ընկերներս, որտեղ զարմանալի կապույտ ստվերներ կան դեղերի տակ ու օրորոցներ ու թաց կուլաներ այդ ստվերների մեջ, որտեղ ուսկի փոշի կա օդում և զլիներին թաշկինակ կապած հորեղբայրներ, որտեղ ցորենը՝ որպես զոհաբերություն աստծուն թիերով երկինք են նետում և որտեղ ձիերը թաց լնդերքը կրծելով ու բողոքով ցնցելով հապատ զլուխները, պյուտվում ու պյուտվում են գետնամած դեղերի վրայով՝ իրենց քարքարոտ խաչ-կամերը տանելով և կամերի վրա տանելով նաև մեզ՝ հպարտությունից վառվող աչքերով:

Եվ մեկ էլ լսեցի, որ հորաքույրս ասում է.

- Ձե՛կ մատադ, բալքի էս սիրուն աղջիկը Արտակիս նշանածն ա:

Ես չգիտեմ ով «հա» ասաց, անձամբ ես ոչ մի ձայն չհանեցի, բայց անմիջապես էլ տեսա, որ Նանարը սկզբում հորաքրոջս, ապա մորաքրոջս զրկի մեջ է: Հետո մայրս համբուրեց Նանարի ճակատը, ծպտաց, անձայն ինչ-որ խոսքեր ասաց ու հանկարծ լաց եղավ՝ զրկելով Նանարին, բայց թերևս ինչ-որ բնազդով զգալով, որ իր լացը կարող է սխալ մեկնաբանվել, մայրս կրկին սկսեց ծպտալ, ու մայրական անսպաս արցունքները շարունակեցին հոսել նրա արդեն ծպտացող, մաշված այտերի վրայով: Իսկ երբ Նանարը անսպասելիորեն թեքվելով բռնեց ու համբուրեց մորս դողացող ձեռքը, ես տեսա, որ նա էլ է լաց լինում և սիրտս թեթևացավ մի

տեսակ, որովհետև գիտեմ, եթե կանայք լաց են լինում իրար հետ, դա նշանակում է, որ հասկանում են իրար, սիրում են իրար ու մի քիչ էլ երևի խղճում են:

Հայրս երևի զգաց, որ արդեն ժամանակն է դառնալու դրության տերը, բարձրածայն կարգադրություններ արեց սեղանը զցելու, գրավեց սեղանի զլիսի իր տեղը, զինի լցրեց բոլորին, երիտասարդացած ու ժպտադեմ՝ բարձրացրեց բաժակն ու ասաց միանգամից հուզված, զսպելով շրթունքի դողը.

- Փառքդ շա՛տ, տեր աստված:

- Հա, իմ ախափեր,-արձագանքեց խսկույն հորաքույրս:

- Ամեն, փեսա ջան,-բացականչեց մորաքույրս:

Իսկ մայրս հորս կողմը մեկնեց իր բաժակը:

- Կենացդ լինի, ա հայ:

- Դե քո աստվածն իմ ախափերն ա,-խեթեց հորաքույրս:

- Հա՛,-ասաց իմ հեթանոս մայրը,-ամեն մարդ իր աստվածը պետք է ունենա:

Հետո մենք բաժակները չխկացրինք իրար, որովհետև այդպես է կարգը, և սեղանի վերևում բաժակների մեջ երկար օրորվում էր զինին:

Հասկանալի է, որ ամբողջ ձաշի ընթացքում իմ թաքուն ուշադրությունը Նանարի կողմն էր, ես վախենում էի որ նա միայնակ զգա իրեն անծանոթ մարդկանց շրջապատում, ձնշված ու անզատ զգա իրեն, բայց շատ շուտ, ինչպես յուրաքանչյուր հանդիպման, զարմանքով մի նոր Նանար հայտնագործեցի: Նա իրեն պահում էր հանգիստ ու մեծ արժանապատվությամբ, ձանապարհին արտահայտած երկյուղի հետքն անզամ չկար նրա դեմքին, առանց ջանքի, բնականորեն մերվել էր մերոնց, և դրաց եկողը դժվար թե օտար մարդ հայտնաբերեր մեր սեղանի շուրջը: Եվ կրկին հիացմունքով մտածեցի, որ դժվար թե որևէ բան կյանքում կարողանա ցնցել ու զարմացնել իմ Նանարին, որ նրա հոգին, էությունը, բնավորությունը և անզամ այս փոքրիկ ու փխրուն մարմինը սովոր ու պատրաստ են տանելու ձակատագրի բերած բոլոր անակնկալները և վայրիվերումները, ինչպիսին էլ որ լինեն դրանք:

Հիմա Եվգինեն դավադիր շշուկով ինչ-որ բան է պատմում Նանարին, ու Նանարը մեղմիկ ծիծաղում է: Տեսնես ի՞նչ է պատմում՝ անպայման իմ մասին կլինի, ինչ-որ ձախորդ ու ծիծաղելի մի դեպք, որ ինձ հետ է կատարվել: Դե լավ, հյուրերը կցրվեն, կտեսնես: Բայց չեմ դիմանում մինչև հյուրերը ցրվեն, ձեռքս մեկնում եմ Նանարի թիկունքով ու խփում եմ քրոջս մեջքին: Ճշում է:

- Ի՞նչ պատահեց,-հարցնում է հայրս:

- Արտակը խփեց,-տեղնուտեղը բողոքում է Եվգինեն:

- Արտա՞կ,-զարմանում է հայրս:

- Թողի իմ մասին Նանարին վատ բաներ չպատմի, ես էլ չխփեմ,-ասում եմ ես:

Բոլորը ծիծաղում են, բայց ամենից լավ ծիծաղում է հայրս: Զարմանալի լավ է ծիծաղում հայրս՝ ուժեղ՝ քահ-քահ, ծիծաղում է ու հետն էլ ասում.

- Ըհը՝, դե արի ու ըսենց երեխին պսակի:

Այս, հայրիկ, հայրիկ, դա ի՞նչ ասելու բան էր: Բոլորի հայացքները անմիջապես բնեռվում են ինձ ու Նանարին, որի դեմքը հիմա ամենսին էլ չի տարբերվում իր կաս-կարմիր հագուստից: Եվ քավության նոխազը դառնում է Նանարը: Մերոնք հավանաբար մտածում են, թե մինչև այդ անհրաժեշտ հոգածություն և ուշադրություն չեն դարձրել նրան, այդ պատճառով էլ հարկ են համարում հարցերի տարափ տեղալ:

- Որտեղացի՞ ես, քե մատաղ,-հարցնում է հորաքույրս:

- Երևանից,-մրմնջում է Նանարը:

- Իսկ ծնողնե՞րդ որտեղացի են:

- Վանեցի:

- Վա՛յ, բացականչում է մորաքույրս,- գաղթական են:

- Մեր զյուղի Եփրեսանց Հեղուշի մարդի նմա՞ն,-հարցնում է հորաքույրս:

- Հա,-ասում է մորաքույրս: - Աղջիկ օան, ուրեմն դուք էլ եք ասում «հոս կերթանք, հոն կերթանք...»

- Չէ՛,-ծիծաղում է Նանարը,-դա ուրիշ լեզու է:

- Ո՞նց ա ուրիշ լեզու,-զարմանում է մորաքույրս,-յանի գաղթականի լեզուն էդ չի-ի՞:

Նկատելով որ այդ գրույցը շատ հեռու կտանի, հայրս կրկին իր ձեռքն է վերցնում իշխանությունը, լրեցնում է հորաքույր-մորաքույրներիս և արտակարգ իմացությամբ նրանց պատմում է կոտորածների, եղեռնի, թշնամուն ավար մնացած հայաշեն քաղաքների ու զյուղերի, ճանապարհներին մեռնող գաղթի քարավանների մասին:

- Դու էդ բոլորը որտեղի՞ց գիտես, հայրի կ'օան:

- Ես էլ էի կովում Ղարսում,-ասում է հայրս:

- Բա ինչո՞ւ մինչև հիմա մեզ ոչ մի բան չես պատմել:

- Կոհիվները հեքիաթ չեն:

- Նանարի հայրն էլ է կովել,-ասում եմ ես,- նա Շատախի կամուրջի հերոս պաշտպաններից մեկն է եղել:

- Բոլոր Վանեցիք կլ հերոս են,-ասում է հայրս,-և նրանք չեն մեղավոր, որ հիմա գրված են աշխարհում: Իսկ հիմա ի՞նչ է անում հերդ, աղջի՞կ շան,-դառնում է Նանարին:

Ու որովհետև Նանարը խոնարհում է զլուխը, ես շտապում եմ բացատրել, որ հայր չունի Նանարը, որ նա մեռել է, երբ Նանարը վեց տարեկան էր միայն: Մայրս, մորաքույրս ու հորաքույրս վշտահար օրորում են զլուխները, իրենց կարեկցանքը մի կերպ արտահայտելու համար Նանարին ստիպում են փորձել այս կամ այն ուտելիքը, ձմեռվա խնձորը կամ ընկույզը, իսկ իմ լալկան Նոյեմզար մորաքույրը, արցունքն աչքերին, բռան մեջ սեղմած մի զույգ սպիտակ բրոյա գուլպա է բերում, Նանարի ձեռքն է դնում ու խնդրում մորը տանել:

- Մեծ կնիկ ա, կհազնի, ոտքերը մրսիլ չեն, վե՛ր կալ, դարդ տանեմ, կասես Անոր աքիրն ա տվել:

Ես նայում եմ Նանարին, ու վախենալով, որ նա էլ լաց կլինի, աչքով եմ անում, թե ժամանակն է վեր կենալու: Նանարը բարձրանում է հապճեպ ձեռքին ակամա սեղմած բրդե զուլպաները, հետո արագորեն դրանք իմ գրպանն է մտցնում ու զլուխ է տալիս բոլորին, զլուխ է տալիս նազանքով, իսկ և իսկ թագուհու նման, և անձայն, շտապով, լարված դեպի դուռն է գնում:

Մերոնք բոլորը ոտքի են կանգնում, իսկ հայրս հազում ու ասում է բարձրաձայն.

- Սրանից հետո դու, մեր աղջիկն ես, աղջիկ շան, մեր դուռը բաց է քեզ համար:

Մուտքի դուանը ես Նանարին մի պահ մենակ եմ թողնում, ասում եմ, որ կզամ հիմա և ինձ սենյակ եմ գցում.

- Հը, ո՞նց էր,-հարցնում եմ պարծենկոտ աշխուժությամբ, վստահ պատասխանին:

- Ես զարմանում եմ, թե էդ լավ աղջիկը ոնց է քեզ նման շաշին հավանել,-ասում է հայրս, ու բոլորի միահամուռ քրքիջի տակ, երջանկացած է ինձ դուրս եմ նեսում մեր տնից:

Նանարը կանգնած է Տիգրան աղբարենց հողաշեն պատի տակ և նրա աչքերը կարմրած են: Ես ամուր բռնում եմ նրա թևը, և մենք դանդաղ առաջ ենք շարժվում իմ մանկության կանաչ փողոցով: Բայց ես չեմ կարողանում դանդաղ քայլել, հոգիս ուրախությամբ ու խենթություններով լի է, ես հիմա ամեն ինչի ընդունակ եմ, դրա համար էլ բաց եմ թողնում Նանարի թևը, կանգնում եմ դիմացն ու հարցնում մարտահրավերով:

- Հը, ի՞նչ կասես մերոնց մասին, Նանար:

Նանարը ժպտում է թախծոտ, խոնավ աչքերով և առաջին անգամ կյանքումս, հանկարծ ինքն է թևանցուկ անում ինձ: Ես զարմանքից բացում եմ բերանս, իսկ նա մյուս ազատ ձեռքի փոքրիկ ափը դնում է շրթունքներիս, և ես շտապով համբուրում եմ նրա այդ փոքրիկ ափը:

- Զարմանալի ծնողներ ունես,-մտածկոտ ասում է նա, հրաշալի ծնողներ ունես դու...

Իհարկե, ես առանց նրա էլ զիտեի այդ, իհարկե, ես զիտեի նաև որ իմ հայրն ու մայրը դուր կզան Նանարին. բայց ես ազահ եմ ախր, ես ուզում էի, որ նա սիրի նրանց, սիրի ինչպես ես

կամ ինչպես ինձ, ես շատ էի ուզում, որ Նանարն ասի այդ խոսքերը: Ինչեր են հիմա կատարվում իմ հոգում, ո՞վ կարող է իմանալ: Ահա այդպես դանդաղ ու հանգիստ քայլում եմ՝ Նանարին թևանցուկ, իսկ սիրտս թողել է ինձ ու վազում է ուրախությունից, թռչում է բարձր-բարձր, այգիների ու պարտեզների վրայով և ավելի բարձր՝ Ռաշիդենց բարդիներից է վեր: Բայց ես շարունակում եմ քայլել դանդաղ ու հանգիստ, փոխարենը միայն քիթս եմ վեր ցցում ու ասում եմ սանձարձակ անփութությամբ.

- Հա, ի դեպ, ես շատ եմ սիրում լավ ծնողներ: Ունենալուց հետո, մարդ պետք է լավ ծնողներ ունենա...

Նանարը շի դիմանում ու ծիծաղում է, ծիծաղում է ինչպես միշտ՝ ցածրաձայն, միայն ինձ համար: Եվ ես այլս չեմ դիմանում: Արագորեն շուրջս նայելով ու ոչ ոքի չտեսնելով, մի ակնթարթում թեքում եմ զլուխս ու համրուրում Նանարի կիսարաց ուսը: Նանարը ճշում է կամացուկ, բաց է թողնում ձեռքս, փութկոտ շորս կողմն է նայում, բայց երևի ինքն էլ չի տեսնում ոչ ոքի, որովհետև ծիծաղում է նորից ու փոքրիկ բոունցքով խփում, հա խփում է պարզած ափիս.

- ԳԺՎԵ՛ լ ես, գԺՎԵ՛ լ... շշնջում է նա:

Այս դուք չգիտեք թե ինչպես է Նանարն ասում այդ խոսքերը, այնպես է ասում, որ իսկապես քիչ է մնում գԺՎԵմ:

Այսօր Մեր Հարսանիքն է

Այսօր Նանարը դառնալու է Նանար Լեռնյան:

Դա վճռվեց երեկ: Ինչպես միշտ՝ կարգադրում էր հայրս և հենց նա էլ աշխատանքի բաժանում կատարեց: Եղբայրս ու Սեղան երեկոյան պետք է այցելեին Նանարի մորը՝ համաձայնություն ստանալու, ես և Նանարը առավոտյան պետք է Զազու գնայինք՝ մեր ամուսնությունը օրինականացնելու համար, իսկ հայրս պատրաստվում էր մի փոքրիկ խնջույք կազմակերպել, որտեղ կլինեին միայն ամենամոտ մարդիկ: Այդքանը: Մենք հարսանիք չենք կարող անել:

Ամենամո՞ւ մարդիկ... լավ է ասված, բայց արի ու տես, որ ամենամոտիկ մարդիկ այնքան էլ քիչ չեն և գոնե մի սենյակում նրանց հնարավոր չէ միաժամանակ տեղավորել: Բազմաթիվ առաջարկություններ եղան, բազմաթիվ նախագծեր քննարկվեցին և կազմվեցին բազմաթիվ ցուցակներ՝ ազգականների առջև դրված ամենատարբեր նշաններով, որոնցից յուրաքանչյուրը առանձնահատուկ նշանակություն ուներ: Ի վերջո որոշվեց մեկ մեծի փոխարեն կազմակերպել երեք փոքրիկ խնջույք՝ ըստ դասակարգումների Առաջին օրը երեկոյան պետք է հավաքվեին պայմանավորվող կողմերի ամենամոտիկ հարազատները, երկրորդ օրը՝ շրջկոմի և տիկնիկային թատրոնի մեր աշխատանքային ընկերները, իսկ երրորդ օրը նրանք, ովքեր չեն մտնում առաջին երկու խմբերի մեջ, բայց հաստատուն տեղ ունեին «մոտ մարդկանց» ցուցակում: Այսօր ես չեմ կարող հեծանվային պարապմունքի գնալ, և չգնացի: Եկել եմ աշխատանքի, բայց աշխատելու ոչ մի տրամադրություն չունեմ: Ով գոնե մի անգամ ամուսնացել եմ, կիասկանա ինձ: Անընդհատ սենյակից-սենյակ եմ գնում, բացում ու փակում եմ զգրոցները, դուրս եմ գալիս փողոց ու կանգնում մեր շենքի մոտ, նայում եմ անցնող մարդկանց ու աշխատում կրահել, թե նրանցից ո՞րն է ամուսնացած, որը՝ ոչ, և որովհետև ոչինչ չի ստացվում, կրկին ներս եմ մտնում ու դիտում պատի ժամացույցի սլաքների դանադարգույն ընթացքը: Ժամը մեկին գալու է Նանարը: Հիմա ժամը տասնմեկն է, և ես դեռ ոչինչ չեմ արել: Հաշվառման բաժնի վարիչից ու Պարթևից բացի ոչ ոք չկա:

Սարգայանին ու Մեսրոպին առավոտյան ժամը իննին կանչել են քաղկում և հայտնի չեն, թե երբ կվերադառնան: Այնինչ Սարգայանը ինձ շատ է պետք, առանց նրա ոչինչ անել չեմ կարող: Պետք է խնդրեմ, որպեսզի նա թույլ տա նախօրք ստանալ աշխատավարձս, և ապա հրավիրեմ վաղը կայանալիք խնջույքին, հարսանիքիս «երկրորդ սեանսին» ինչպես քրքշալով որակեց Պարթևը:

Պարթևը շատ է զբաղված, կազմակերպություններ է գանգահարում, պահանջելով անդամավճարների մուծված լինելը հաստատող ինչ-որ համար երրորդ ձև: Ես նրան արդեն հրավիրել եմ, նա սրտանց ուրախացել է, որ փաստորեն աշխատակիցներով քեֆ ենք անելու և հեռախոսային խոսակցությունների արանքում հասցնում է հարցեր տալ:

- Տիկնիկային թատրոնից սիրուն աղջիկներ լինելո՞ւ են...
- Լավ ձայնապնակներ ունե՞ս, Պարթևը, պարե՛ք...
- Կուսշրջկոմից ոչ ոքի չե՞ս կանչել: Իսկ խմբագրությունի՞ց...

- Ուզո՞ւմ ես հետո լուսանկարչական ապարատ վերցնեմ...

Ես պատասխանում եմ ցրված ու կցկուր, որովհետև ողջ ուշադրությունս դռան կողմն է: Սարգսյանը դեռ չկա, ի՞նչ անեմ: Չկարողանալով տեղում նստած մնալ, կրկին ընդունարան եմ ելնում ու արդեն քանիերորդ անգամ խանգարում մեր քարտուղար-մեքենագրուհու աշխատանքը:

- Ոիմա ջան, կարո՞՞ղ է պատահել, որ չգա:
- Ոնց կարող է չգալ, ժամը մեկին բյուրո ունենք, բոլորին կանչել եմ,-առանց թղթից գլուխը բարձրացնելու, հոգնած ասում է Ոիման:
- Ուրեմն ինչո՞ւ է այսքան ուշանում: Ոիման չի պատասխանում:
- Սարգսյանին ու Մեսրոպին իրար հե՞տ կանչեցին:
- Հա, ասում է Ոիման,-դեռ երեկ աշխատանքի վերջում զանգահարեցին, որ մեր շրջկումի բյուրոն ողջ կազմով այսօր առավոտյան քաղկոմում լինի:
- Չասացի՞ն՝ ինչու:
- Չեն ասում:

Ես չեմ կարողանում համբերել: Մեսրոպի առանձնասենյակն եմ գնում ու զանգահարում քաղկոմ: Եվ ինչպե՞ս մինչև հիմա չէի մտածել: Քարտուղարուին ինձ գիտի և կասի, թե որտեղ է Սարգսյանը: Ահա, հենց այդպես էլ կա: Սարգսյանը նոր դուրս է եկել քաղկոմից: Ես դարձյալ փողոց եմ ելնում ու անշարժանում մուտքի մոտ, նախապես կրկին նայելով պատի ժամացույցին: Տասներկուսն անց է հինգ րոպե: Ուղիղ հիտունինց րոպե անց Նանարը, Մանուկն ու Նվարդը կզան: Կհասցնե՞մ մինչ այդ ստանալ աշխատավարձ: Իսկ հետո մենք շրջսովետի գործկոմ կզնանք, պատերին նայելով կգտնենք «Զազս» ցուցանակը, ներս կմտնենք մի սենյակ, որն անպայման շատ լուսավոր կլինի և որտեղ ծաղիկներ կլինեն պատուհանների գոգերին, և գեղեցիկ ու մերմ դիմագծերով տարեց մի կին կիարցնի ինձ.

«Արտակ Լևոնյան, համաձա՞յն եք ամուսնանալ Նանար Շատախյանի հետ, պատրա՞ստ ես տանելու բախտի ամեն մի հարված և հավատարիմ մնալու այս աղջկան»:

«Այո, - կասեմ ես:

Ասենք՝ չէ, հիմա երևի այդպես չեն հարցնում: Այնուամենայնիվ, հարկավոր է մեկն ու մեկից իմանալ, թե սովորաբար ինչ հարցեր են տալիս: Հանկարծ անհարմար դրության մեջ ընկնենք: Իսկ հետո տարեց կինը կդառնա Նանարին, որն անպայման շիկնած կլինի իր կարմիր հագուստի մեջ:

«Նանար Շատախյան,-կիարցնի,- համաձա՞յն ես...»:

Բայց ավտոմեքենայի արգելակների աղմուկը չի թողնում, որ կինն ավարտի իր հարցաթերթիկը: Բաց դրոնից դուրս է զալիս Սարգսյանը: Եվ ոչ մենակ: Նրա հետ են նաև

Մեսրոպն ու բյուրոյի մյուս անդամները՝ համալսարանի, պոլիտեխնիկական ինստիտուտի, բժշկական ինստիտուտի և պետական անվտանգության մինիստրության կոմերիտական կազմակերպության քարտուղարները, իմ ընկերները: Քանի տարի միասին հասարակական աշխատանք ենք կատարել շրջկոմում, երահանգիչներ ու պրոպագանդիստներ ենք եղել:

«Նրանց էլ կասեմ,-տեղն ու տեղը որոշեցի ես՝ խղճի խայթ զգալով, որ ցուցակից դուրս եմ թռել բյուրոյի անդամներին: -Թող գան, մի կերպ կտեղավորվենք, կիմանան ու կնեղանան անպայման»: Բայց հիմա, նրանց ներկայությամբ ինչպես ս փող ուզեմ Սարգսյանից:

Ես բարեսում եմ նրանց և փողոցային երթևեկությունը կարգավորող միլիցիոների շարժումով՝ ձեռքս ուղղում եմ դեպի մուտքի դուրը: Բայց նրանք անտրամադիր են կարծես ու շփորչած մի տեսակ: Գալիս անցնում են իմ կողքով՝ գլուխները կախ ու փախցնելով հայացքները: Երևի քաղկոմում նեղել են: Շա տ են ընկածված: Ոչինչ վաղը բոլորիս տրամադրությունն էլ բարձր կլինի: Հոնի օդին կկատարի իր պարտականությունները: Բայց, այնուամենայնիվ, ինչպես ս հիմա առանձին խոսեմ Սարգսյանի հետ: Մի մատանի եմ տեսել խանությում՝ փոքրիկ, կապույտ ակով, առանց աշխատավարձի չեմ կարող գնել այդ մատանին: Իսկ առանց մատանու ի նշ ամուսնություն: Ես նրանց ետևից շրջկոմի շենքն եմ մտնում, սպասում եմ մինչև Սարգսյանը բացի իր առանձնասենյակի դուռը ու ներս թողնի բյուրոյի անդամներին, ապա դիմում եմ նրան.

- Ընկեր Սարգսյան, մի բան եմ ուզում խնդրել ձեզ...

Սարգսյանը շրջվում ու ինձ է նայում շատ տարօրինակ, ասես ոչինչ չտեսնող աշքերով.

- Ի՞նչ..

- Ընկեր Սարգսյան, շատ եմ խնդրում թույլ տալ նախօրոք ստանալ աշխատավարձս, որովհետև...

- Հետո՞՝, հետո՞՝, մի կողմ նայելով ասում է Սարգսյանը, -հիմա դրա ժամանակը չէ: ՈՒիմա, բյուրո հրավիրվածներին տեղյակ պահել ես:

- Այո, ասում է ՈՒիման:

- Լավ:

Սարգսյանը գլխով է անում ու մտնում առանձնասենյակ՝ իր ետևից ծածկելով կաշեպատ դուռը: Այ թեզ բան: Նույնիսկ վիրավորվել կարելի է: Չսպասեց էլ, որ ավարտեմ խոսքս: Ինչ վիճակի մեջ պետք է զցած լինեն, որ քաղաքավարի ու զգայուն այդ մարդը կորցնի իրեն: Եվ, վերջապես, ի նշ կարող է պատահած լինել: Մեր շրջանը ամենաառաջավոր շրջաններից մեկն է, եթե ոչ ամենաառաջավորը: Որպես լավագույն շրջկոմ՝ միշտ մեզ մատնացույց են անում: Ասենք, ամեն ինչ էլ կարող է պատահած լինել և ամեն ինչի համար, որպես կանոն, շրջկոմի քարտուղարն է մեղավոր: Նախորդ քարտուղարին ինչո՞ւ հանեցին աշխատանքից, որովհետև զյուղատնտեսական ինստիտուտի ուսանողներից մեկը ինքնասպանություն էր գործել, չուզենալով այլևս ապրել՝ սիրած աղջկա անհավատարմությունը տեսնելուց հետո: Շրջկոմի քարտուղարը տասներկու պատվոգիր ուներ՝ կոմերիտականների շրջանում կատարած

կազմակերպչական ու գաղափարական հիանալի աշխատանքի համար, բայց քաղկոմի բյուրոյի որոշման մեջ գրված էր, որ նա հեռացվում է աշխատանքից երիտասարդության շրջանում հեղինակություն չվայելելու, շրջանի կոմերիտական կազմակերպություններում անհրաժեշտ քաղաքացիարակչական աշխատանք չկատարելու համար: Նույնիսկ անեկդոտ էր տարածվել, թե ընտրվելուց հետո Սարգսյանը բոլոր կազմակերպություններում երկու ամիս շարունակ զեկուցումներ է կարդացել «ինքնասպանը վախկոտ է և թուլամորթ» թեմայով, որտեղ կոմերիտականներին թախանձագին խնդրել է հաշվետու ընտրական ժամանակաշրջանում ինքնասպանություն չգործել:

Բայց այս զավեշտական պատմությունը հիշելուց հետո անգամ տրամադրությունս չի բարձրանում, որովհետև քիչ առաջ դանդաղ շարժվող պլաքները հիմա ասես վազում են: Տասներկուսն անց է քառասունհինգ րոպե: Քիչ առաջ ընդամենը տասներկուսն անց կես էր: Հիմա մերոնք կզան: Ի՞նչ անեմ: Անհամբերությունից ու նեղատությունից ետ ու առաջ եմ քայլում փոքրիկ ընդունարանում և նույնիսկ կողքի սենյակից լսվող Պարթևի բամբ ձայնը ջղայնացնում է ինձ: Մի քանի անգամ մտովի մոտենում եմ դրանք, բացում, բայց դա միայն պատուհանի մոտ եմ պատկերացնում, երբ իսկապես մոտենում եմ դրանք, արիությունը լքում է ինձ: Բայց այսպես չի կարելի, ինչ-որ բան պետք է անել: Եվ ես վճռականորեն կաշվե դրանն եմ մոտենում, ձեռք մեկնում եմ բռնակին, բայց չեմ բացում, որովհետև մեկը հանկարծ ասում է իմ թիկունքից՝

- Բացի՞ք, բացի՞ք:

Զայնը շատ է ծանոթ, ու ես շրջվում եմ: Իմ առջև կանգնած է քաղկոմի քարտուղար Կարո Բադամյանը:

- Բարև ձեզ, ընկե՞ք Բադամյան, -թոթվում եմ ես՝ շփոթված ու մի քիչ էլ, այնուամենայնիվ, մեղավոր զգալով նրա հանդեպ:

- Բարև, Արտա՛կ, -ասում է Բադամյանն ու իմ կողքով շրջկոմի քարտուղարի առանձնասենյակն է մտնում:

Բարևեց, ուրեմն հիշաշար չէ, մտածում եմ ուրախությամբ: Իսկ ես վախենում էի նրանից: Ե՞րբ պետք է վերջապես ճանաչեմ մարդկանց: Հետաքրքիր է՝ ինչո՞ւ է եկել: Ասենք զարմանալու բան չկա, Բադամյանը հաճախ է մեր բյուրոներին մասնակցում: Բայց հիմա դրությունն ավելի բարդացավ, նրա մոտ ինչպե՞ս խոսեմ Սարգսյանի հետ:

Ժամացույցը խուլ խփում է մեկ անգամ, և ես ակամա դրանն եմ նայում: Միջանցքի խորքում, իրար կողքի կանգնած են Նանարը, Մանուկն ու Նվարդը, ծիծաղում են ու ձեռքով անում ինձ: Բոլորն էլ հագնված են տոնականորեն և հանդիսավոր ու մի տեսակ օտարացած են: Ես արագորեն դուրս եմ զալիս այցելուներով հետզհետեւ լցվող ընդունարանից, մոտենում մերոնց:

- Չկարողացա Սարգսյանի հետ խոսել,-ինչ-որ բան ասելու համար, ասում եմ ես:

- Իսկ Սարգսյանի հետ ինչո՞ւ պետք է խոսեիր,-հարցնում է Մանուկը, - շրջկոմի բյուրո՞ն է ամուսնության թույլտվություն տալիս:

- Է՛, Մանուկ,-ծիծաղում եմ ես:
 - Մի տեսակ անհանգիստ ես երևում, Ա՛րտ, ին որևէ բան չի՝ պատահել,-հարցնում է Նանարը:
 - Չէ՛, Նանար ջան,-ասում եմ ես,-ի՞նչ պետք է պատահի: Չէ՛, Նանար ջան, Սարգսյանին ուզում էի խնդրել, որ վաղը երեկոյան մեր տուն գա:
- Ընդունարանում զիլ հնչում է զանգը: Ուրեմն Սարգսյանը կանչում է քարտուղարութուն: Մի ակնթարթում ես հասնում եմ Ռիմային:

- Ռիմա՝ ա ջան, խնդրում եմ, ընկեր Սարգսյանին ասա, որ մի բողեով ուզում եմ խոսել հետը: Հետո ուշ կլինի:

Լա՛վ: - Ռիման ծածկվում է կաշեպատ դռան ետևում, բայց անմիջապես էլ դուրս է զալիս:

- Ընկե՛ր Լեռնյան,-ասում է նա ինձ,-ընկեր Սարգսյանն ասաց, որ ոչ մի տեղ չգնաք, հիմա ձեզ ներս է կանչելու:

- Բայց շուտով բյուրոն կսկսվի:

- Արդեն սկսվել է,-ասում է Ռիման:

Ես ինձ կրկին միջանցք եմ նետում:

- Ահա,-ասում եմ Մանուկին, չհասցրի Սարգսյանին հայտնել, որ ամուսնանում եմ, իսկ նա էլ կարծում է պարապ եմ, կարգադրում է սպասել:

- Բյուրոյում ին գործ չունե՞ս,-հարցնում է Մանուկը:

- Չէ, այսօր դպրոցական հարց չկա: Ե՛ս խնդրեցի, որ ինձ ընդունի:

Դա՝ ինչ ձևականություն է,-զարմանում է Մանուկը,-մտիր ասա՝ ու դուրս արի:

- Պատկերացրու, որ ճիշտ ես ասում,-ժպտում եմ ես,-զլուխս մի թեթև կորցրել եմ: Սպասեք, հիմա կզամ:

Իսկապես, մտածում եմ ես, մոտենալով դռանը, ին առաջին անգամը չէ: Բյուրոյի ժամանակ միշտ էլ ներս ու դուրս ենք արել, երբ անհրաժեշտ է եղել: Էլ ո՞ր օրվա աշխատողներն ենք: Սակայն սկզբում Ռիմային եմ մոտենում.

- Չկանչե՞ց:

- Չէ,-ասում է Ռիման:

Այլևս առանց հապաղելու, վայրկենական մի մղումով բացում եմ դուռը ու ներս մտնում: Եվ որովհետև ձայները լոռում են, մի քիչ անհարմար զգալով՝ մոտենում եմ Սարգսյանին, ներողություն եմ խնդրում բոլորից, ու թեքվում նրա ականջին.

- Ընկեր Սարգսյան,-արագորեն շշնչում եմ ես,- չհասցրեցի ձեզ ասել: Այսօր ամուսնանում եմ: Մի քիչ փող էր պետք, դրա համար էի ձեզ սպասում, բայց հիմա արդեն ուշ է: Խնդրում եմ վաղը անպայման մեր տանը լինեք, քեզ կանենք մի թեթև: Իմ կողմից տղաներին էլ ասեք: Կներեք, որ խանգարեցի ձեզ: Ես գնացի :

- Ո՞ւր,- հարցնում է Սարգսյանը մի տեսակ խոպոտ ձայնով:

- Զազս, Էլ ո՞ւր,-ծիծաղում եմ ես,- Նանարը միջանցքում սպասում է:

Սարգսյանի դեմքին զարմանքից ու շփոթմունքից այնպիսի մի հիմարավուն արտահայտություն է նկատվում, որ ես հազիվ եմ զսպում քրքից: Երևի մտքով չէր անցնում, որ այսքան անսպասելի կամուսնանամ:

- Ի՞նչ է պատահել,-հարցնում է նրա կողքին նստած Բաղամյանը:

- Ընկեր Սարգսյանը կասի ձեզ,- ամաչելով ժպտում եմ քաղկումի քարտուղարին,- կներեք, ցուեսու լրյուն:

- Սպասեք,-հանկարծ խստորեն ասում է Բաղամյանը և զլուխը թեքում է Սարգսյանի կողմը:

Սարգսյանն սկսում է շշնչալ նրա ականջին ու միաժամանակ սաստիկ կարմրում է: Բաղամյանը լսում է նրան հեզնանքով ու երբեմն-երբեմն սեղմում է շրթունքները, որից նրա այտերը ծիծաղելիորեն ուղղում են: Եվ հանկարծ ես զգում եմ, որ նրա դեմքի հեզնական արտահայտությունը անհանգստացնում է ինձ: Կրծքիս տակ, ինչ-որ տեղ, մի բութ ցավ է սկսվում, անտանելի ու անհասկանալի մի ցավ, որից սիրտս սկսում է բարախել արագ, արագ, ուժգին ու տագնապով: Մի անգամ էլ է այդպիսի բան պատահել ինձ, բայց ե՞ք, ի՞նչ առիթով: Հա՛, շա՛տ, շա տ առաջ էր, երբ կորցրել էի հացի քարտերը, և շոշափում էի գրպաններս ու կուրծքս, հետո ընկա տրամվայի գծերին, ուզում էի մեռնել...

- Նստե՞ք,-լսում եմ Բաղամյանի ձայնը, բայց նրա ասածի իմաստը չի հասնում ինձ: Հանկարծ այնպես եմ ուզում դուրս գալ այդ սենյակից, մաքուր օգում լինել: Շունչս կտրվում է: Զգում եմ, որ հիմա ինչ-որ մի շատ վատ բան է կատարվելու, ահավոր, անուղղելի մի բան:

- Նստե՞ք, ասում եմ,-բարկացած ձայնը բարձրացնում է Բաղամյանը:

Ես դեռևս խարում եմ ինքս ինձ: Մտքումս, մշուշի մեջ ասում եմ, որ ոչինչ էլ չկա, որ երևի հիմա ինչ-որ բան են ուզում հարցնել, որից հետո դուրս կգամ և կարող եմ զնալ: Դրա համար էլ հարցնում եմ խղճալի ժայիտով և ամորով մտածում եմ, որ հիմա բոլորը տեսնում են իմ խղճալի ժայիտը:

- Չեմ կարող, ինձ սպասում են դրսում... Զազս ենք գնալու:

- Նստեք, ընկեր Լևոնյան,- այս անգամ բղավում է քաղկումի քարտուղարը,-սա շրջկումի բյուրո է, և մենք տուն-տուն չենք խաղում: Նստե՞ք, ասում եմ,- ու նա ցույց է տալիս այն աթոռը, որին սովորաբար այցելուներն են նստում, երբ քննվում է նրանց հարցը:

- Ա՞յս, մեղադրյալի՝ աթոռին, -զիտես որտեղից հայտնված կատակով, շփոթությունս ծածկելու համար, հարցնում եմ ես:

- Դե լավ, նստիր էի, -ասում է բյուրոյի անդամներից մեկը, կարծեմ բժշկականի քարտուղար Սուրենը, և ես վերջապես ետ-ետ գնալով նստում եմ աթոռին:

Այդ նոր ձայնը մի փոքր սթափեցնում է ինձ, ու ես նայում եմ երկար սեղանի շուրջը նստած իմ ընկերներին և զարմանալի մի փոքրիկ հույսով սպասում, որ նրանցից մեկն ու մեկը հիմա կծիծաղի, որ հետո կծիծաղեն նաև մյուսները ու քրջոցով կատեն, թե կատակել են: Բայց ոչ ոք չի ծիծաղում, ոչ ոք չի բարձրացնում գլուխը, իսոր լրության մեջ անհետանում է նաև հույսի իմ փոքրիկ շողը, ու ես ցավագնորեն լսում եմ, թե ինչպես է աղմուկով տրոփում սիրտս:

Լռությունը կրկին Բաղամյանն է խօսում.

- Ընկե՛ր Սարգսյան, ինչո՞ւ եք ձգձգում, դեկավարե՛ք բյուրոն:

Սարգսյանը ցնցվում է, ուղղվում աթոռին, նորից սաստիկ կարմրում է, հազում՝ սպիտակ թաշկինակով ծածկելով բերանը:

- Ընկերնե՛ր, ուրեմն, ինչպես ձեզ հայտնի է, օրակարգում դրված է մեր շրջկոմի դպրոցական բաժնի վարիչ Արտակ Լևոնյանի՝ կոմերիտական աշխատողին անվայել վարքագծի հարցը: Օրակարգի վերաբերյալ առարկություն չկա:

Ոչ ոք չի պատասխանում: Բյուրոյի անդամները հազիվ նշմարելի օրորում են գլուխները:

- Չկա, -թերևացած նշում է Սարգսյանը: - Ուրեմն, սկսե՛նք: Ինչպես ձեզ հայտնի է, վերջին ժամանակներս շրջկոմի դպրոցական բաժնը աններեւիորեն թուլացրել է աշխատանքները, թեև, թվում է, հակառակը պետք է լիներ, քանի որ սկսվել են տարեվերջի քննությունները: Դա հանգեցրել է այն բանին, որ առանձին դպրոցներում կոմերիտական կազմակերպություններն ու պիոներական դրուժինաները փաստորեն ձախողել են քննությունների նախապատրաստությանը նվիրած իրենց կազմած ծրագրերը: Անհրաժեշտ օժանդակություն շտանալով շրջկոմի համապատասխան բաժնից, նրանք աշխատանքները բարձիթողի են արել, որի հետևանքով հենց առաջին իսկ քննություններին անբավարար գնահատականներ ստացողների թիվը, անցյալ տարվա համեմատ, ոչ թե պակասել, այլ ավելացել է:

Ես արդեն լիովին սթափվել եմ ու ակամա ուշադրությամբ լսում եմ, թե ինչ է ասում շրջկոմի քարտուղարը: Նրա ելույթն ինձ հետաքրքրում է, որովհետև այսպես թե այնպես մեր բաժնին է վերաբերում: Ես միայն չեմ հասկանում, թե ինչո՞ւ է Սարգսյանն ասում այդ ամենը, ինչո՞ւ կոնկրետ թվեր չի բերում, նրան պարզապես ճիշտ տեղեկություններ չեն տվել, բայց չէ որ կարող էր հարցնել ինձ: Հետո հանկարծ հիշում եմ, որ մի քանի օր առաջ նա հենց նույն այս սենյակում հայտարարում էր, թե գոհ է մեր բաժնի աշխատանքից: Ի՞նչ է պատահել հիմա: Եվ, ի վերջո, եթե դպրոցական հարց է քննվում, ինչո՞ւ բյուրո չեն հրավիրել դպրոցների դիրեկտորներին, ավագ ջոկատավարներին, կոմերիտական կազմակերպության քարտուղարներին, ժողովրածնի տեսուչներին, մեր բաժնի արտահաստիքային հրահանգիչներին: Բայց իմ մտքերը խանգարում են, որպեսզի հասկանամ Սարգսյանին, որա համար էլ լարում եմ ուշադրությունս:

Շրջկոմի քարտուղարը այլս չի կակագում, ինչպես ելույթի սկզբում էր, նա խոսում էր սահուն, ազատ ու ասես իմիշիայլոց: Կարմրությունն անցել էր դեմքից ու տեղի տվել թեթև գունատության:

- Կուսակցությունը, առաջնորդը մեզ սովորեցրել են անհաշտ լինել թերությունների նկատմամբ,-շարունակում է Սարգսյանը,-միշտ հիշելով, որ քննադատությունն ու ինքնարքնադատությունը մեր կյանքի հզոր առաջմոլիք ուժերն են: Այնտեղ, որտեղ բացակայում են առողջ, ճշմարիտ քննադատությունն ու ինքնարքնադատությունը, առաջանում են լճացում ու ձահճացում և սողանցքներ են բացվում բուրժուական գաղափարափոսության առաջ: Այս տեսանկյունից առանձնապես աններելի եմ համարում իմ բարյացակամ վերաբերմունքը Լևոնյանի նկատմամբ և, ինքնարքնադատաբար, ձեռքս կրծքին դրած պետք է ասեմ, որ մեղավորը եւ եմ: Մենք ուսանողին չպետք է աշխատանքի ընդունեինք...

Նրա ողջ ելույթի ընթացքում Բադամյանը շրթունքները սեղմած անընդհատ զիշով է անում. մատիտով ինչ-որ նշումներ կատարելով առջևը դրած սպիտակ թղթի վրա, բայց շրջկոմի քարտուղարի վերջին խոսքերը նրան ստիպում են ցած նետել մատիտը:

- Լևոնյանը թյուրիմացության մեջ է զցել շրջկոմի բյուրոյին,-նետում է նա:

Ես բոլորովին չեմ հասկանում, թե ինչ թյուրիմացության մասին է խոսքը: Երևի դա չի հասկանում նաև Սարգսյանը, որովհետև կանգ է առնում, սպասում, որ Բադամյանը ավարտի իր միտքը, բայց քաղկոմի քարտուղարը շարունակում է գրել ձերմակ թղթի վրա:

- Ճի՞շտ է,-կմկմում է Սարգսյանը և, հավանաբար, չիմանալով ինչպես շարունակել, կրկին կանգ է առնում: - Ճի՞շտ է...

- Հետո՞ , Հետո՞ , -զլուխը բարձրացնում է Բադամյանը:

Եվ այլս այլս չեմ կարողանում զսպել ինձ:

- Ի՞նչ հետո,-բղավում եմ ես, - ինչո՞վ եմ թյուրիմացության մեջ զցել:

- Լոեք,-ձեռքը սեղանին է խփում Բադամյանը,- ո՞վ է ձեզ թույլ տվել խոսելու:

- Ինչպե՞ս թե լոեք, ում եմ ես...

- Լոե՞ք ասում եմ,-Բադամյանը բարձրանում է տեղից, ինձ է նայում չքաքցրած ատելությամբ և ֆշտում է ատամների արանքից,-ձեզ պահել իմացեք բյուրոյում, ընկեր Լևոնյան, թե չէ մենք ձեզ հետ այլ լեզվով կխոսենք: Հասկաց ք:

- Բայց ես իրավունք չունե՞մ...

- Ո՞չ,-ձեռքը կրկին սեղանին է խփում Բադամյանը և ասում է հեզնանքով՝ այս անգամ դիմելով բյուրոյի անդամներին,-իսկ դուք ասում էիք՝ ներե՞նք, տեսնո՞ւմ եք ինչ անպատկառ է իրեն պահում շրջկոմի բյուրոյում: Եթե մեր հարգելի բաժնի վարիչը այդպես է պահում իրեն

մեզ մոտ, պատկերացնո՞ւմ եք, թե ինչպիսին կլինի նրա վարքագիծը դրսում, կազմակերպություններում: Եվ այսպիսի մեկից պիտի սովորեն ուրիշները: Ահա մեր կադրերը,-դառնացած ավելացնում է նա՝ նախատինքով նայելով Սարգսյանին: - Իսկ ձեզ ի՞նչ է պատահել, ընկեր Սարգսյան, քաղկոմում բրյացնում էիք...

- Հիմա կասեմ, Կարո՛ Բադալիչ,-նորից կարմրում է Սարգսյանը,-հենց հիմա կասեմ... Բայց դե դեռ բոլորը չեն, ընկերնե՛ք, Լևոնյանը օգտվելով մեր մարդկային վերաբերմունքից, այնքան է անցկացրել չափն ու սահմանը, որ կոպիտ կերպով խախտելով աշխատանքային կարգապահությունը, ամեն օր տասնիդզ-քան րոպե ուշ է աշխատանքի գալիս...

- Ինչպէ՞ս թե,- ապշում է Բադամյանը,- և դա փա՞ստ է:

Սարգսյանը մի պահ զարմացած նայում է Բադամյանին, բայց անմիջապես էլ վերգտնում է իրեն:

- Փաստ է, Կարո Բադալիչ, ջոկատավարները գալիս սպասում, սպասում են, իսկ նա չկա, ու մեկ էլ հայտնվում է հեծանիվով...

- Սպասե՛ք, սպասե՛ք, ընկեր Սարգսյան, ես կարծես թե լավ չհասկացա,-աթոռը ոտքով ետ տանելով, տեղից բարձրանում է քաղկոմի քարտուղարը,-ուրեմն, բանից դուրս է գալիս, որ բոլորի համար մի կարգապահություն կա, իսկ Լևոնյանի համար մի : Այդպէ՞ս հասկանանք: Եվ դա ասում է շրջկոմի քարտուղարը... Իսկ աշխատավարձը լրիվ է ստանում, չէ ...

- Լրիվ է ստանում, Կարո Բադալի՛չ:

- Շա տ լավ է, հիանալի՛ է, ոչինչ ասել չես կարող: Ուտնահարում է աշխատանքային կարգապահությունը և այն էլ որտեղ... կոմերիտմիության շրջկոմում: Իսկ մեր կուսակցության ու կառավարության դեկավարները համոզված են, թե բաց թողնված գումարներն իրենց նպատակին են ծառայում: Գիտե՞ք թե դա ինչ է նշանակում, գիտե՞ք, որ դուք խարել եք կուսակցությանը: Գիտե՞ք թե դրա համար ինչ էին անում Հայրենական պատերազմի ժամանակ: Դատում էին, ընկե՛ր Լևոնյան: Տասնինգ րոպե և Տասնինգ րոպեի համար մեկ տարի բանտարկություն էր նախատեսված: Եվ այն էլ ամեն օր: Եկեք հաշվենք, այո՛, այո՛, այդ դեպքում եկեք հաշվենք, թե քանի՞ աշխատանքային օր են կազմում Լևոնյանի բացակայությունները: Ի՞նչ կստացվի: Եթե կուսակցությունը մեծահոգի է և հիմա ուշացման համար կալանք չի պահանջում, ուրեմն մենք պետք է չարաշահե՞նք նրա վստահությունը: Պատասխանեք, ընկե՛ր Լևոնյան, ձեզ ո՞վ է իրավունք տվել խարելու պետությանը:

Սա ի՞նչ մղձավանջ է:

- Ընկե՛ր Սարգսյան, ախր դուք եք թույլ տվել, ախր մի քանի օր առաջ դուք ասացիք...

- Չե, չէ, Արտա՛կ,-հանկարծ խեղճանում է Սարգսյանը,- ես մի շաբաթով էի թույլ տվել:

- Ինչպէ՞ս թե մի շաբաթով, ես ձեզ ասացի, որ պարապմունքները մեկ ամիս են տևելու:

- Չէ՛, չէ՛,-Սարգսյանը Բադամյանին է նայում ու թափահարում գլուխը:

- Ընկեր Սարգսյան, ախր խիդճը լավ բան է, ես...

- Լոե՞ք, նորից բղավում է քաղկոմի քարտուղարը, - և դեռ խիճի մասին է խոսում: Դուք ձեր խիդճը վաղուց եք կորցրել, ընկեր Լևոնյան: Անպատասխանատու, անազնիվ և հարթեցող մարդը իրավունք չունի խիճի մասին խոսելու:

- Հարթեցո՞՞ղ:

- Այո՞՛, հարթեցող: Մենք կուսակցականներ ենք և պարտավոր ենք իրերն իրենց անուններով կոչել: Կամ գուցե ես սխալվո՞ւմ եմ, ընկեր Սարգսյան, գուցե ես Ճի շու չեմ հասկացել ձեզ և ինքս ել ուրիշի եմ տեսել զիշերը ռեստորանի մուտքի մոտ, հարբած վիճակում:

- Չե՞՛, Կարո Բաղալիչ, լրիվ հարթեցող չեմ ասի, բայց խմում եմ, ես ել մի քանի անգամ տեսել եմ ռեստորանի մոտ, հիշո՞ւ մեր, որ ձեզ ասացի...

Չգիտեմ ինչպես, բայց հանկարծ զգում եմ, որ ոտքի եմ կանգնել և առաջ եմ պարզել ձեռքերս:

- Ի՞նչ եք ասում, - շշնջում եմ ես, որովհետև չեմ կարողանում խոսել: Այնպիսի մի թուլություն է պատում ինձ, որ վախենում եմ լաց լինել, հազում եմ ու ձեռողով շփում ձակատս: - Ի՞նչ եք ասում... Ես՝ հարթեցող: Ես ինչպես սկարող եմ հարթեցող լինել: Ինձ որտեղի՞ց դրամ, որ խմեմ: Եթե փող ունենայի հարթելու համար, ել ինչո՞ւ պետք է աշխատեի, են շու է աշխատելն ու սովորելը: - Եվ հանկարծ զգում եմ, որ իսկապես հարբածի նման եմ խոսում՝ թույլ-թույլ, ձգելով խոսքերը, խոպոտած:

- Ես ձեզ ասում էի, որ նա չի ընդունի, չէ՞՞,-բյուրոյի անդամներին է դառնում Բաղամյանը: - Նա կարող է պնդել, թե մենք շփորել ենք իրեն, թե ուրիշին ենք տեսնում հաճախ ռեստորանից դուրս գալիս:

- Ես ամեն օր ռեստորանում եմ ճաշում, -կամացուկ ասում եմ ես, հոգնած առարկելուց, - ճաշում եմ «Դինամո» սպորտընկերության կտրոններով: Զա՞՛, հետո ես ախր չեմ կարող խմել ախր, -աշխուժանում եմ մի քիչ, -մրցումների եմ նախապատրաստվում:

- Տեսա՞՞ք, -հաղթական շուրջն է նայում Բաղամյանը, -տեսա՞՞ք, որ չընդունեց: Լևոնյանի համար ինքնարձնադատություն բառը գոյություն չունի: Ասում էի, չէ՞: Նա ոչինչ չի ընդունի: Նա կարող է ասել նույնիսկ, որ բանվորներին կոչ չի արել պայքարելու սովետական կարգերի դեմ:

- Ի՞նչ, -ակամա ճշում եմ ես:

- Դե վե՞րջ տվեք դերասանությանը, բղավում է քաղկոմի քարտուղարը՝ ցատկելով տեղից, - հիմա դուք ձեր կուսակցական տոմսով պատասխան կտաք: - Կանչի՞ թ Պարթևին, - շրջվում է նա Սարգսյանի կողմը:

Շրջկոմի քարտուղարը գրասեղանի մահուլի տակ սեղմում է կոճակը, և հանկարծահաս լրության մեջ լսվում է, թե ինչպես է ընդունարանում երկու անգամ հնչում զանգը: Ես ամեն ինչ մոռացած ետ եմ նայում, որովհետև հանկարծ հիշում եմ, որ միջանցքում ինձ է սպասում

Նանարը: Նանարը, Մանուկը, Նվարդը... իսկ ես նստել եմ այստեղ ու խոսում եմ սրանց հետ ու ինչ հիմարություններ ասես լսում եմ: Վա՞հ, ժամը երկուսն անց կես է, է՛, հիմա երևի կփակվի Զազը: Ի՞նչ անեմ: Ակամա բարձրանում ես տեղից ու նորից ետ եմ նստում:

Դուքը բացվում եք, և ներս է մտնում Պարթենը: Ինձ թվում է՝ դուքը բացվելու պահին տեսա Նանարի դեմքը, շատ մոայլ էր ու տխոր: Դե, իհարկե, բարկացել է վրաս: Բայց ես ի՞նչ անեմ: Ի՞նչ կարող եմ անել:

- Նստեք, Լեռնյա՞ն,-լսում եմ Սարգսյանի ձայնը և թուլացած իջնում եմ աթոռին:
 - Ընկե՛ր Պարթեն,-ասում է Բաղամյանը,-բառ առ բառ կրկնեք այն, ինչ պատմեցիք քաղկոմում:
- Պարթե՞ն: Ինչպե՞ս թե: Ուրեմն Պարթե՞ն է այդպիսի բան ասել: Անհնարին բան է, լսեմ ել, չեմ հավատա: Պարթենը և այդպիսի սուրությո՞ւն...
- Դե, ինչ ասեմ,-լսում եմ նրա ծանոթ, սիրելի բամբ ձայնը,-ինչ որ կար քաղկոմում ասացի:
 - Հիմա մեզ պետք է,- որ նորից կրկնեք,-խստությամբ կարգադրում է Բաղամյանը:

Ես ուզում եմ Պարթենին նայել, բայց զգիտես ինչու չեմ կարողանում, ամաչում եմ, թե ի՞նչ: Զարմանալի հիմար մի միտք է տանջում ինձ, գուցե, մտածում եմ Պարթենին ինչ-որ մեկը ստիպել է գրպարտել ինձ և նա անհարմար վիճակի մեջ է, եթե նայեմ նրան՝ կշփոթվի, կշիկնի, կկորցնի իրեն և դա շատ վատ կլինի, շա տ վատ:

Բայց Պարթենի ձայնը անբնականորեն հանգիստ է ու վստահ:

- Ուրեմն, մի անգամ Արտակի, ներողություն, ընկեր Լեռնյանի հետ նախաձաշում էինք ռեստորանում, մի քիչ խմեցինք ու խոսում էինք, մեկ էլ Լեռնյանն սկսեց պատմել, թե ինչպես է բեռնակիր եղել պահածոների գործարանում: Ասաց, որ խայտառակություն էր, պետերը խաբում էին բանվորներին, գողանում նրանց աշխատավարձ, դրա համար էլ ինքը բեռնակիրներին...

- Ո՞վ՝ ինքը,-կտրեց Բաղամյանը:
 - Լեռնյա՞նը,-նրա կողմը դարձավ Պարթենը:
 - Շարունակի՞ր:
- ... Դրա համար էլ ինքը բեռնակիրներին համոզում էր ապստամբել, ընդվկել դիրեկցիայի դեմ, ասում էր՝ պայքարեք, որովհետև դուք ոչինչ չունեք կորցնելու այդ պայքարում, բացի ձեր շղթաներից, բայց ձեռք կրերեք ամբողջ աշխարհը...
- Մանիքեստի խոսքե՞րն են,-զլուխն օրորում է համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Դավիթը:

- Այո, բայց այս դեպքում՝ ուղղված սովետական բանվորներին,-ասում է պետական անվտանգության մինիստրության ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Բենիկը, ու ավելացնում ուսւերեն,- վոտ էտո ուժե նե աժիդալ...

- Հիմա համոզվեցի՞ք,-սեղանին է թեքվում Բադամյանը:

- Դա...էտո ուժե դրուգոյ վոպրոս,-մտածելու ասում է Բենիկը:

Բադամյանը բարձրանում է տեղից ու առաջին անգամ բյուրոյի ընթացքում ժպտում է:

- Ըսկե՛ք Լևոնյան,-հարցնում է նա բացահայտ չարախնդությամբ,- գուցե սա՞ է լ չընդունեք: Դուք սովոր եք. չընդունեցիք, որ ձախողում եք աշխատանքները, չընդունեցիք, որ խախտում եք կարգապահությունը, չընդունեցիք, որ հարբեցողությամբ եք զբաղվում: Հիմա գուցե սրանի՞ց է կրածարվեք: Չենք զարմանա...

Բայց ես նրան համարյա չեմ լսում, ես նայում եմ Պարթևին, նրա հանգիստ, արժանապատվությամբ լի դեմքին, իր գործը բարեխղճորեն կատարած մարդու դեմքին, որ հիմա սպասում է, թե երբ իրեն ազատ կարձակեն, որպեսզի գնա իր սենյակը ու խաղաղ շարունակի իր աշխատանքը՝ կազմակերպություններից պահանջի անդամավճարների մուծված լինելը հաստատող ինչ-որ համար երրորդ ձևը: Ես նայում եմ նրա դեմքին և զգում եմ, թե ինչպես է թույնը կաթիլ-կաթիլ թափվում սրտիս մեջ, ես նույնիսկ լսում եմ, թե ինչպես են կաթկրում թույնի այդ կաթիլները: Ես նայում եմ նրան ու փառք եմ տալիս ձակատագրին, որ նա ինձանից հեռու է կանգնած: Եթե մոտ լիներ, չեմ դիմանա, կիսվեի նրա այդ անվրդով մոռութին, իսկ հետո ինչ լինելու էր թող լիներ, հե՞րն էլ անիծած: Բայց ես չեմ անի այդ, չեմ անի, որովհետև դու հենց դրան ես սպասում, ընկե՛ք Բադամյան, մտքովդ թող չանցնի, չեմ անի: Եվ ճիշտ էիր դու, երբ միշտ կրկնում էիր զգիտեմ ում խոսքերը, թե բյուրոն դաստիարակության դպրոց է: Հիմա ես սովորում եմ այդ դպրոցում և ավարտական դասարանում եմ թերեւս:

- Արտա՛կ, դու իսկապե՞ս ասել ես այդ խոսքերը:

Զայնի մեջ կարեկցանք կա և ես անմիջապես դառնում եմ դեպի նա, ով հարց ուղղեց ինձ, դառնում եմ մեր երկրորդ քարտուղար Մեսրոպը:

- Մեսրոպ ջան,-ասում եմ,-ուրեմն դու է՞լ ես հավատում, թե ես այդպիսի բան կասեմ: Ինչի՞ համար: Ճիշտ է, բանվորների աշխատավարձ անարդար կտրում էին, ես էլ բողոքեցի կուսակցական բյուրոյին, վերադարձին մարդկանց դրամը: Այդքան բան: Ես դա պատմել եմ Պար... ընկեր Պարթևին: Հստ որում կատակով, ծիծաղով եմ պատմել և ինքն էլ քրքում էր: -Ես մի կաթիլ թույն խառնեցի իմ խոսքին: Պարթևի լցրած թույնից ընդամենը մի կաթիլ: - Այդ դեպքում հարցրեք նրան, թե ինչո՞ւ էր սրտանց ծիծաղում, չէ՞ որ ըստ նրա՝ ես հակասովետական հայտարարություն եմ արել:

- Ես ծիծաղում էի, որպեսզի դուք ազատ զգաք ձեզ, լրիվ բացվեք ինձ մոտ,-աչքերիս նայելով,- ասաց Պարթևը: -Իսկ մյուս օրն առավոտյան ուղիղ քաղկոմ գնացի և ամեն ինչ պատմեցի ընկեր Բադամյանին: Ես չեմ կարող լոել:

- Իսկ ինչո՞ւ էիք ձեզանից խոսքեր ու մտքեր ավելացնում, ինչո՞ւ էիք քաղվածքներ հնարում,- հևացի ես:

- Ես ասել եմ այն, ինչ լսել եմ,-ասաց Պարթևը,- ընկե՛ր Բաղամյան, կարո՞ղ եմ գնալ:

Երևի աշխարհում չկա ավելի սարսափելի բան, քան այն, եթե նայում են աչքերիդ ու ստում են: Ինձ համար գոնե այդպես է: Նման դեպքերում ես դառնում եմ խեղճ ու անօգնական, կարկամում եմ ու անկարող եմ խոսել, անկարող եմ առարկել, անկարող եմ պաշտպանել ինձ, նման դեպքերում ես թուլանում, հոգնում ու իիվանդանում եմ, և ամեն ինչ ինձ թվում է դատարկ, արհեստական, նողկալի: Ես ինչ-որ մի պահ լոել եի, նույնիսկ փակել աչքերս, հետո ասացի միայն Մեսրոպին:

- Այսր կարելի է անմիջապես ստուգել դա, չէ՛, տղերքը մինչև հիմա էլ գործարանում են: Ես այդպիսի բան չեմ ասել, հավատա, Մեսրոպ ջան:

- Ես հավատում եմ Արտակին,-հանկարծ պոռթկում է Մեսրոպը, դուք բոլորդ էլ ճանաչում եք նրան, նա մեր ընկերն է, ես նրան լավ գիտեմ, նա չի կարող այդպիսին լինել: Ինչո՞ւ չպետք է հավատանք նրան:

- Դե, գիտե՞ք ինչ, ընկե՛ր Մեսրոպ,-տեղից բարձրանում է Բաղամյանը, ձեր ձախությունը բոլորին է հայտնի: Խոսեք միայն ձեր անունից:

- Արդեն խոսեցի:

- Ուրեմն, լոեք:

- Կլոեմ:

- Եվ դեռ երկա՛ր կլոեք, եթե իմանաք շարունակությունը,-հեգնանքով ձայնը երկարացնում է Բաղամյանը: -: -Շա տ կլոեք, եթե ձեզ մի փաստաթուղթ ցույց տամ և դուք էլ ձեր հերթին պատասխան կտաք՝ Լսոնյանին պաշտպանության տակ առնելու համար: Չե՛րու եք խաղում, ընկե՛ր Մեսրոպ, բայց ձեզ չի հաջողվի ջուր պղտորել և թյուրիմացության մեջ զցել շրջկումի թյուրոյին:

- Այդ դեռ հարց է, թե ով է թյուրիմացության մեջ զցում:

- Հարց է, հա՞՞, դե ուրեմն ծանոթացեք այս փաստաթղթին, հարգելի՝ ընկեր Մեսրոպ:

Բաղամյանը դանդաղ շարժումներով բացում է իր առջև դրված կաշվե թղթապանակը, միջից ինչ-որ թղթեր է հանում: Նա նայում է թղթերին ակնհայտ բավականությամբ ու ասում է գործնականորեն, նույնիսկ փոխելով ձայնը.

- Ընկերներ, ճիշտն ասած, այս հարցում ես էլ բավականին մեղավոր եմ: Ինձ ժամանակին տեղյակ էին պահել համալսարանում և դրսում Լսոնյանի կատարած մի քանի, մեղմ ասած, հանցավոր արարքների մասին, բայց ես մատների արանքով եմ նայել դրանց, մտածելով, թե նա երիտասարդ է, կզաք իր մեղքերը, կուղղվի: Եվ չարաշար սխալվել եմ: Հիմա արդեն

տրամաբանորեն համադրելով փաստերը, ես գալիս եմ այն եզրակացության, որ նրա վերոհիշյալ գործողությունները համալսարանում ոչ թե միամտության կամ քաղաքական անկայունության հետևանք են եղել, այլ մտածված, ծրագրված երկար շղթայի օղակներ: Գուցե սրանի՞ց էլ փորձեք հրաժարվել, ընկե՛ր Լեռնյան,- հարցնում է նա՝ զիսից վեր թափահարելով թղթերից մեկը: -Գուցե մեզ ստիպեք գրողին և ս կանչել:

- Ուրեմն անոնիմկա չէ՝, -տեղեկանում է Բենիկը:

«Պարտիզան Շ-ն է, -զարմանալիորեն խաղաղ, առանց չարության մտածում եմ ես ու հիշում վերջին քննությունը, հավաքը Կուկայանի անվան այգում, կատակ-մարմնապատիժը: Այն ժամանակ ուժեղ հարվածելու փոխարեն, Շավարշ Միքայելյանը միայն շոյեց դաստակս, ու ես եզրակացրի, որ նա իր հարվածը մի ավելի կարևոր, ավելի լուրջ առիթի հետաձգեց: Ահա և արիթը:»

- Ես կարող եմ ասել, թե ով է գրել, -ասում եմ ես: -գրել է մեր կուրսի ավագ Շավարշ Միքայելյանը, քսան թվականի ծնված, Ղափանցի, կուսակցական երեսուն ութ թվականից... մասնագիտությամբ ստոր է...»

- Վե՛րջ տվեք, -զայրույթից գունատվում է Բաղամյանը, -ընկե՛ր Սարգսյան, այս ինչպե՞ս եք անցկացնում բյուրոն:

Սարգսյանը ցնցվում է նորից ու ասում է խիստ ձայնով - Ընկե՛ր Լեռնյան, չափն անցկացնում եք, ձեզ պահել իմացեք բյուրոյում:

- Իսկ ի՞նչ է գրված այդ թղթում, եթե գաղտնիք չէ, -հեգնանքով հարցնում է Մեսրոպը:

- Կասե՛մ, կասե՛մ, -նեղ շուրթերով ժպտում է Բաղամյանը, -կասե՛մ միայն մեկը: Դա էլ լիովին բավական է, ընկե՛ր Մեսրոպ: Իմացած եղիր, որ քո այդ պաշտպանյալը արդեն երկրորդ տարին է, ինչ մտերմություն է անում, իսկ այսօր ուզում է ամուսնանալ ժողովրդի թշնամու աղջկա հետ:

Սիրտս քիչ է մնում կանգ առնի: Այս հարվածին արդեն ես չեմ դիմանա: Զգում եմ, թե ինչպես է արյունը հեռանում իմ դեմքից, ու ինձ թվում է, թե ճշում եմ.

- Ի՞նչ եք ասում, ի՞նչ ժողովրդի թշնամի...»

- Ի՞նչ ժողովրդի թշնամի: Միամի՛տ է ձևանում: Չի իմանում, որ իր այդ ընտրած աղջկա հայրը քաղաքական հանցագործ է հայտարարված և Սիրիր է քշվել դեռևս Հազար ինն հարյուր երեսուն յոթ թվականին, Չարենցի արգելված գրքերը տարածելու և պրոպագանդելու, ազգայնական գործունեության համար:

- Սո՛ւս է, շշնջում եմ ես, -անհնարին է, սուտ է, ես զիտեմ, նա մեռել է, նա անզրագետ մարդ է եղել: Նրանից ի՞նչ պրոպագանդիստ: Նա վարսավիր է եղել կանաչ հրապարակում... ի՞նչ թշնամի:

- Նու տի էսո քրոս,- ասում է պետական անվտանգության մինիստրության ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Բենիկը,- ես ինք եմ իմ ձեռքով գործը նայել, դուրակա նե վայայ.

- Իսկ դա ի՞նչ նշանակություն ունի,- հանկարծ քացականչում է Մեսրոպը,- աղջիկն ի՞նչ պատասխանատու է հոր համար, առավել ևս Լևոնյանը:

- Տեսնո՞ւմ եմ, Սարգսյան,- շրջկոմի քարտուղարին է դիմում Բաղամյանը,- ահա թե ո՞վ է քո երկրորդ քարտուղարը: Մենք, ինչպես երևում է, նրա հետ առանձին պետք է խոսենք:

- Ես էլ եմ կարծում, որ խոսակցությունն անհրաժեշտ է,- քմծիծաղ է տալիս Մեսրոպը,- որովհետև ձեր այս խաղից լավ հոտ չի գալիս:

Եվ հանկարծ Սարգսյանն է ձայնը բարձրացնում.

- Դե, դե, ընկե՛ր Մեսրոպ, զապեք ձեզ, ինչպե՞ս եք խոսում քաղկոմի քարտուղարի հետ, սրա՞ն տեսեք, ուրիշ ժամանակ կարգապահության մասին է ձառում: Չէի սպասի, ամենեին չէի սպասի:

Իսկ ես Մեսրոպին եմ նայում նվիրված, սիրահարված աչքերով: Ես գիտեի, որ նա ազնիվ ու համարձակ մարդ է, բայց այսքանը ե՛ս էլ չէի սպասում, չէի կարծում, թե նա ինձ համար կվտանգի իրեն, կթշնամանա շրջկոմի առաջին քարտուղարի և քաղկոմի քարտուղարի հետ: Հիմա ե՛ս եմ ուզում ինչ-որ կերպ պաշտպանել նրան, Բաղամյանի ու Սարգսյանի ուշադրությունը շեղել նրանից: «Ցավդ տանեմ, ախալեք ջան», ասում եմ մտքումս ու երդվում եմ մինչև կյանքիս վերջը նվիրված ու հավատարիմ լինել նրան: Բայց հիմա ի՞նչ ասեմ: Եվ հանկարծ ինձ թվում է, թե փայլուն միտք հղաց:

- Ընկեր Բաղամյան,- ասում եմ ես,- իսկ այդ ո՞նց է, որ հանցագործի որդին կարող է շրջկոմի քարտուղար լինել, իսկ ես նույնիսկ իրավունք չունեմ ամուսնանալու հանցագործի աղջկա հետ:

Միանգամից լրություն է տիրում և լրության մեջ հնչում է համալսարանի քարտուղար Դավիթի զարմացած ձայնը.

- Իսկ ո՞վ է հանցագործի որդին

- Ընկեր Սարգսյանը,- նետում եմ ես, միաժամանակ զգալով, որ հոգուս մեջ մի շատ կարևոր, շատ սուրբ տեղ դատարկվում է, բայց ես այլևս կանգ առնել չեմ կարող,- ընկեր Սարգսյանը,- կրկնում եմ ես Նրա հայրը հենց հիմա ել կալանավորված է: Ինձ նույն այդ Պարթևն է ասել:

- Սարգսյանի դեմքը վառվում է, և ես վերջնականապես կորցնում եմ ինձ: Այս ի՞նչ եմ անում: Այս ի՞նչ եմ անում: Ուրեմն ել ինչո՞ւ եմ զարմանում նրանց վրա, ուրեմն մենք բոլորն ել նույնն ենք և ընդունակ ամեն մի ստորոտյան: Ի՞նչ տարբերություն իմ և Պարթևի միջև, որին ես հիմա ճանաչում և ատում եմ: Բայց ես ի՞նչ անեմ, ախր իրենք ուզում են սպանել ինձ, ես ի՞նչ անեմ: Ու վերջին հույսով Մեսրոպին եմ նայում, նրանից ակնկալելով իմ ներումը: Բայց նա ինձ է նայում անսրոդ արհամարհանքով ու կնճռոտված:

- Դա զգվելի դեմագոգիա է, Սարգսյանի հայրը ոչ թե քաղաքական, այլ քրեական հանցագործ է: Պետք է տարբերել կարողանալ,-բղավում է Բաղամյանը:

Բայց ես նրան չեմ լսում, ես լսում եմ, թե ինչպես է Մեսրոպը միայն շրթունքներով, հիասթափված ու ցավով ասում.

- Հենց միայն դրա համար, դու ամեն պատժի արժանի ես:

Եվ ինձ համար ամեն ինչ կորցնում է իր նշանակությունը: Ես ոչ ցավ եմ զգում այլսև և ոչ ել վիրավորանք: Ես նույնիսկ չեմ կարողանում և նույնիսկ չեմ ուզում լսել: Ինձ կարծես հարցեր են տալիս, բայց ես չեմ մտածում պատասխանել այդ հարցերին: Ինչ ուզում են թող ասեն, ինչ ուզում են թող անեն, միայն թե հանգիստ թողնեն ինձ: Եվ վերջապես ի՞նչ են ուզում նրանք ինձնից: Իսկ նրանք խոսում են, խոսում են հերթով ու իրար ընդհատելով, և բոլոր խոսդները Բաղամյանին են նայում, ինչպես երգիչները խմբավարին: Ու հանկարծ ինձ թվում է, թե Բաղամյանը նույն այն բարակ ու երկար տղան է, որին տեսնում էի գյուղում, փոքր ժամանակ: Մորեաներ հազար ձիպոտը ձեռքին քայլում էր եզների ետևից, ամուր խփում էր մեկ սրան, մեկ նրան ու բարակ ձայնով «հո - հո » էր կանչում: Ու ես միշտ զարմանում էի, թե ինչու էին եզները անմոռունչ տանում անարդար հարվածները, ինչո՞ւ չեն շրջփում ու հարու տալիս: թե՞ ձիպոտից են վախենում: Եվ լաց գալիս էր այդ խեղճ, այդ խոնարի եզների համար... Հիմա արդեն նորից Բաղամյանն է խոսում ու բյուրոյի անդամները կամացուկ, համաձայնողական օրորում են իրենց գլուխները: Ի՞նչ է ասում, ճի՞՛շո, ի՞նչ է ասում: Ես աշխատում եմ լարել ուշադրությունս, և զիստում վխտացող բազմաթիվ աղմուկների միջից լսել Բաղամյանի ձայնը:

- Միանգամայն պարզ է, որ այսքանից հետո անհանդուրժելի է Լևոնյանի աշխատանքը, որպես շրջկոմի դպրոցական բաժնի վարիչ: Շրջկոմը ահազին ջանքեր պետք է գործադրի դպրոցական կազմակերպություններում կորցրած հեղինակությունը վերականգնելու համար: Ընկեր Սարգսյան, կարդացեք որոշման նախագիծը:

- «Աշխատանքները ձախողելու, աշխատանքային կարգապահությունը ոտնահարելու, կուսակցականին և շրջկոմի աշխատողին անվայել վարքագծի համար, որն արտահայտվել է մի շարք գործողություններում և ելույթներում, շրջկոմի բյուրոն որոշում է. ա) Արտակ Լևոնյանին հեռացնել աշխատանքից. բ) հարց հարուցել կուսակցության շրջկոմի բյուրոյի առջև՝ Լևոնյանին կուսակցությունից հեռացնելու մասին. գ) ֆիզկուլտուրայի և սպորտի պետական կոմիտեին առաջարկել Լևոնյանի թեկնածությունը հանել համամիութենական շքերթի մասնակիցների կազմից. դ) սույն որոշումը ուղարկել բոլոր շրջկոմներին և համալսարանի ռեկտորին՝ ի գիտություն:

- Քվեարկիր,-ասաց Բաղամյանը շտապելով:

Եվս մի վայրկյան և ամեն ինչ ուշ կլինի: Ուրեմն սրանք իսկապես ուզում են սպանել ինձ: Ասում են երեսուն յոթ թվականին այդպես է եղել, երկու երեք հոգով որոշել են ու սպանել են տեղուն ու տեղը: Մանուկի հայրն էլ է սպանել: Կամ ինչո՞ւ Մանուկի հայրը, սպանողներ միշտ էլ կզտնվեն. Մանուկի հայրը, Կարո Բաղամյանի հայրը, Բենիկի հայրը... Դրա համար էր Մանուկը լաց լինում: Հիմա սրանք ինձ միայն հեռացնելու իրավունք ունեն և հեռացնում են:

Եթե կարողանային սպանել՝ կսպանեին: Ու մի վայրկյանում ես հասկացա շատ ու շատ բարդ, անհասկանալի, առեղծվածային բաներ, որ առաջ երբեք չեի հասկանա: Ուրեմն հասկանալու համար մարդիկ բոլորն էլ պետք է անցնեն այդ մի վայրկյանը՝ իրենց հավատի ու լավատեսության փլատակների վրայով:

- Քվեարկիր, ո՞ւմ ես սպասում,-կրկնեց Բաղամյանը ջղայնացած:
- Գուցե սկզբից Լևոնյանի՝ լսենք,-հանկարծ հարցրեց Մեսրոպը: - Նա իրավունք ունի խոսելու:
- Իսկ իմ կարծիքով ոչ մի միտք չունի, առանց այդ էլ ամեն ինչ պարզ է,-կտրեց Բաղամյանը
- Ի՞նչ նոր բան կարող է ասել:
- Սպասեք,-ասացի ես, արդեն քանիերորդ անգամ հուսահատ բարձրանալով տեղից,-սպասե՛ք, ինչպե՞ս թե ամեն ինչ պարզ է: Ի՞նչն է պարզ, Ընկե՛ք Բաղամյան: Այստեղ գրում եք, թե ես ձախողել եմ աշխատանքները: դուք հավատո՞ւմ եք դրան: Եթե ձախողել եմ, ինչո՞ւ է Կենտկումն ինձ պատվոզիր տվել լավագույն աշխատանքի համար, ինչո՞ւ էիք ընդամենը մի քանի օր առաջ քաղկոմում հայտարարում, թե շատ գոհ եք ինձանից և նույնիսկ խոստանում էիք շուտով քաղկոմի քաժնի վարիչ նշանակել:
- Դե, հիմա դուք ամեն ինչ էլ կարող եք ասել, ո՞վ ձեզ կհավատա:
- Ուրեմն ես Ճիշտ չե՞մ ասում, այդպիսի գրույց չի եղել,-հարցրեցի ես դոդալով զայրույթից ու նայելով ուղիղ Բաղամյանի աչքերին
- Իհարկե, չի եղել: Սա էլ շանտաժի նոր ձև է,-ուսերը թոթվեց Բաղամյանը:
- Այս, չի եղել, հա, ինձ կորցրեցի ես,-հիմա ձեզ լավ հասկացա: Ամբողջ բյուրոյի ընթացքում այդ միտքը տանջում էր ինձ, բայց ես չեի ուզում հավատալ, չեի ուզում համոզվել, որ դուք՝ մեր քաղաքի բոլոր կոմերիտականների դեկավարը, դուք, որ հրաշալի ճառեր եք ասում ու լաց եք լինում նեզր երեխանների համար...
- Դե, վե՛րօ տվեք ձեր այդ կերծ հիստերիկային,-գոռաց Բաղամյանը:
- Չե՛, չէ՛,-ասացի եմ,-ես դեռ կերծ չեմ: Գուցե ես էլ կերծ դառնամ, բայց դեռ չեմ, ես չեմ կարող ձեզ պես նայել մարդկանց աչքերին ու ստել:
- Բայց նա զառանցում է, ընկերնե՛ք, քվեարկեք, վերջացնենք: Սարգայան, քվեարկիր, ասում եմ...
- Չե՛, չէ՛, տղերք, խնդրում եմ, մի՛ քվեարկեք, հետո դուք շատ կզիտեք, ընկեր Բաղամյանը Վեզիրյանի մոտիկ ընկերն է, իմ ֆելիխտոնի հերոսի, նա վրեժ է լուծում: Վեզիրյանն ասաց դեռ ինձ շատ կզգաս քո կողքին, ասաց՝ ինձ համար էր Կարոն կանչել քեզ: Եթե ֆելիխտոնը չտպես, քաղկոմի քաժնի վարիչ կդառնաս, ասում էր: Հիմա դուք վրեժինդիր եք լինում ձեզ չլսելու համար, ընկեր Վեզիրյան, ներողություն, ընկե՛ք Բաղամյան, ես ձեր դեմ

ոչինչ չունեմ, ի՞նչ ուզում եք արեք, բայց առաջ, առաջ, ամբողջ կյանքում ինչո՞ւ եք խարել ինձ, խարել մեզ, չէ՞ որ մենք հավատում էինք ձեզ, ես... ես իմ հորը չեմ հավատացել, որը ձեր հորը ճանաշում էր, ես ձե՛ զ եմ հավատացել: Ինչո՞ւ եք խարում, խորտակում իմ հավատը...

Երևի սոսկալի բան է խոստովանելը, բայց ես չդիմացա այլսա, ես շատ էի ուզում պահել ինձ, ես բոռնցրով սեղմում էի կուրծքս, որպեսզի խեղիեմ արցունքներս, ես լայն բացել էի աչքերս, որ արցունքներս չթափվեն, բայց նրանք հոսում էին այտերիս վրայով, հոսում էին առատորեն ու անդադար: Ես զգում էի, որ դա վատ բան է, որ պետք չէ նվաստանալ, որ մարդիկ շատ ավելի ծանր պայմանների մեջ են եղել, բայց արցունք չեն թափել վիրավորողների առջև, ես ատում էի ինձ ու իմ քուլությունը, բայց ոչինչ անել չէի կարող, ես հերոս չէի, սովորական մարդ էի, կամ գուցե իմ արցունքները դեռ մանկո՞ւ ց գիտեին իրենց ճանապարհը:

- Վե՛ թջ տուր, Արտակ, ին երեխա չես,-լսեցի Մեսրոպի հուզված, խոռված ձայնը:

Երեխա... Միթե՞ միայն երեխաներն են լալիս: Չէ՛, չէ՛, Մեսրոպ, լաց լինելը, ճիշտ է երեխայությունից է գալիս, բայց գուցե ամենամեծ բանն է, որ մնում է ողջ կյանքում, այն ամենալավն ու կարևորը, որ մնում է մանկությունից: Չէ՛, չէ՛, Մեսրոպ, լաց լինելը երեխայի բան չէ, ընդհակառակը, միայն տարեց մարդիկ գիտեն, թե որքան արտասովոր, որքան կարևոր բան է լաց լինելը, դրա համար էլ քիչ են լաց լինում, մեկ-մեկ, ինչպես ես հիմա: Սա երեխայի լաց չէ, Մեսրոպ, ընդհակառակը, ես լաց եմ լինում նրա համար, որ մի կարգին մանկություն չեմ տեսել և որ այսօր, հենց այստեղ անվերադարձ կորավ նաև իմ պատանեկությունը:

Ես չեմ լսում, թե ինչ է ասում Բաղամյանը, բայց ընդհատում եմ նրան ու ասում եմ աշխարհում ծնված առաջին ատելությամբ, թունավորված ու խեղվելով ատելությունից.

- Դուք անազնիվ ու ստոր մարդ եք, ստոր՝, ստո՞ր, ստո՞ր...

Սպասում եմ, որ Բաղամյանը ճշա, աղմկի, կորցնի իրեն, բայց նա միայն ժպտում է թափահարում է զլուխը՝ մինչև ես վերջացնում եմ, ու ասում է խստորեն, դառնալով շրջկոմի քարտուղարին:

- Այս բոլոր վիրավորանքները արձանագրեք: Իսկ հիմա քվեարկեք վերջապես, ձեզ ի՞նչ է պատահել, թե՝ այլս չեք կարողանում վարել բյուրոն, ընկե՛ր Սարգսյան:

- Հիմա՝, հիմա՝, -մրմնջում է Սարգսյանը, ձեռքն է վերցնում որոշման նախագիծը, նայում է պատուհանից դուրս ու ասում է խզված, մրսածի ձայնով, -ովքեր համաձայն են այս նախագծին, խնդրում եմ ձեռք բարձրացնել: Դեմ չկա:

Ես նայում եմ բյուրոյի անդամներին, բայց նրանցից ոչ ոք ինձ չի նայում: Բոլորը զլուխները կախ շրջվել են դեպի Սարգսյանը: Շրջկոմի քարտուղարը նկատում է, որ ոչ մեկը ձեռք չի բարձրացրել և սաստիկ կարմրելով փոխում է հարցը:

- Ովքեր համաձայն են, թող ձեռք բարձրացնեն:

Բաղամյանը աջ ձեռքի բոունցքով ոխթմիկ հարվածում է սեղանին, և առաջինը հանձնվում է Բենիկը: Առանց զլուխը բարձրացնելու, նա հենց ուսի մոտ վեր է պարզում աջ ձեռքի ափը: Դավիթը աչքի տակով նայում է Բենիկին ու ինքն էլ է զգուշորեն պարզում աջ ձեռքը: Նրան անմիջապես հետևում է Սուրենը:

- Դեմ չկա՝,-թեթևացած շնչում է Սարգսյանը:
 - Դուք չքվեարկեցիք,-կոպտորեն նկատում է Բաղամյանը:
 - Ախ, հա՝,-շփոթվում է Սարգսյանը,-ես էլ եմ համաձայն: - Նա ձախ ձեռքով բռնում է նախազիծը ու բարձրացնում է աջը: - Դեմ չկա՝,-կրկին հարցնում է նա այս անգամ բարձրաձայն:
 - Ես դե՛մ եմ:
 - Չեինք կասկածում,-շրթունքները սեղմում է Բաղամյանը
 - Այո՛, դեմ եմ և իմ կարծիքը կներկայացնեմ զրավոր,- հայտարարում է Մեսրոպը:
 - Գրե՛ք, գրե՛ք,- արհամարհանքով զլխով է անում քաղկոմի քարտուղարը,- մենք ձեր այդ զրածն արդեն քաղկոմում կքննենք: -Ապա դառնում է ինձ: - Իսկ դուք ազատ եք այլևս, ընկե՛ր Լսոնյան:
- Ես նայում եմ նրան, ուզում եմ ինչ-որ բան ասել, այրող, թունոտ մի բան, բայց զգում եմ, որ հոգիս դատարկվել է ամբողջովին և ասելու այլևս ոչինչ չունեմ, ոչինչ: Բայց ինչ-որ մի բան այնուամենայնիվ պետք է ասել, և ես ասում եմ հեզնանքով.
- Շնորհակալությո՞ւթյուն ազատության համար:
- Հետո դեպի դուռն եմ ուղղվում՝ տառապանքով մտածելով, թե ի՞նչ պետք է լինի ինձ հետ դռնից այն կողմ, ինչպե՞ս պետք է ապրեմ այսուհետև անհասկանալի, ահավոր ու տարօրինակ այս նոր աշխարհում:

Բախտավոր Եղեք Շրջմոլիկներ

Այնինչ դրսում ոչինչ չի փոխվել: Ես դա ավելի շուտ զգում եմ, քան տեսնում: Ինձ թվում էր, թե արդեն մութ է լինելու, բայց զարմանալիորեն արև է: Ընդունարանը ողողված է պայծառ, շլացուցիչ լույսով, և ես չես կարողանում տարբերել դեմքերը: Ես զգում եմ միայն, որ ոչի՞նչ ոչինչ չի փոխվել աշխարհում. Ռիման մեքենագրում է շտապ, սրտնեղած, Պարթևը կողքի սենյակում իր բամբ ձայնով խոսում է ինչ-որ մեկի հետ, ճաղատ մի մարդ, որ լրագիր էր կարդում անկյունում, երբ ես ներս եմ մտնում, դեռ շարունակում է կարդալ իր լրագիրը, մեկ ուրիշը, որ արագ-արագ սենյակի մի անկյունից մյուսն էր գնում, հիմա կանգ է առել ու հարցնում է ինձ.

- Այժմ ես կարո՞՞ղ եմ մտնել:

- Ես ի՞նչ գիտեմ,-շփոթվում եմ եմ:

Եվ հանկարծ Մանուկը գրկում է ինձ, Նվարդը բռնում է թես, իսկ Նանարը ուռած, կարմրած աչքերով նայում է ինձ ու ասում կամացուկ.

- Գնանք, Ա՛րտ, ինչո՞ւ ես կանգնել այստեղ:

Իսկապես, ինչո՞ւ եմ կանգնել: Այստեղ արդեն ամեն ինչ օտար է ինձ, սա արդեն իմ աշխատանքի տեղը չէ, այլ պարզապես շրջկոմ է: Քաղաքում այսպիսի չորս շրջկոմ կա: Բայց չէ, մարդիկ երևի այնքան էլ հեշտ չեն բաժանվում իրենց ծանոթ ու հարազատ դարձած առարկաներից ու իրերից: Ես դեռ երևի երկար կիհշեմ հազար ու մի բան և հազար ու մի բան էլ ինձ երկար կիհշեցնեն իմ աշխատանքը Սպանդարյանի շրջկոմում: Ահա, նույնիսկ այս պիոներները, բոլոր պիոներները, կարմիր վզկապները շեփորներն ու թմբուկները, ձեռագիր, ծաղկավոր հրավիրատոմները... Բայց իսկապես, շլինի՞ թե այս փոքրիկները ինձ են սպասում: Ես ուզում եմ անցնել նրանց կողքով, բայց պիոներներից մեկը՝ երկար հյուսերով մի աղջիկ, մոտենում է ինձ ու արագ պատվի է բռնում.

- Ընկեր Լևոնյան, երրորդ դրուժինայի հինգերորդ ջոկատի պիոներները ձեզ հրավիրում են հանդիսավոր տողանի:

- Ազատ,- ասում եմ ես:

Պիոներներն իջեցնում են ձեռքերը, իսկ աղջիկը ինձ է մեկնում փոքրիկ, կարմիր թանաքով, խոշոր ծաղկավոր տառերով ջանասիրությամբ գրված մի հրավիրատոմս: Ահա, եթե կարող ես մոռացիր: Հիմա ես ի՞նչ պատասխանեմ նրանց: Ասեմ, որ ինձ հեռացը լ են աշխատանքից: Բայց նրանք դա չեն հասկանա և վերջապես դա նրանց համար ոչ մի նշանակություն չունի: Հրաժարվե լ, ո չ, հրաժարվել ամենսին չի կարելի: Ուրեմն խոստանա լ: Բայց մի թե ես իրավունք ունեմ կամ ծայրահեղ դեպքում՝ տրամադրություն որևէ հանդիսավոր տողանի մասնակցելու:

- Թույլ կտաք գնալ,-զիլ ձայնով հարցնում է աղջիկը:

- Գնացեք,-թեթևացած շնչում եմ ես, որովհետև խոսք տալու հարկ չեղավ:

Երեխաներին չի՝ կարելի խաբել:

- Դու իսկի այ էսքան շմտածես,-ասում է ինձ Մանուկը,- դա քննադատության ամենազուեհիկ ձնշում էր: Միայն կույրը չի տեսնի: Դա ֆելիետոնի շարունակությունն է: Մենք իրավաբանորեն դրանց հերք կանխծենք:

- Զգվելիները,-խռոված ասում է Նվարդը,- ցա՛ծ, ցա՛ծ մարդիկ:

Նանարը լուր է: Նա միայն ամուր բռնել է ձեռքս, ամուր, ինչպես երբեք, ու ինձ տանում է դեպի դուռը: Փողոցում ես խոր շունչ եմ քաշում և երբ արտաշնչում եմ, քիչ է մնում հեկեկամ: Զգում եմ, որ մեղք եմ, բայց չեմ ուզում որ ինձ խղճան: Մարդկանց խղճահարությունը ինձ միշտ սպանում է: Վիրավորանքը մի կերպ կարող եմ տանել, բայց կարեկցանքի սովոր չեմ, կարեկցանքից թուլանում է սիրտս:

- Գնանք, Ա՛րտ,-ասում է Նանարը:

Բայց ես չեմ կարողանում շարժվել, չեմ կարողանում հաշտվել այն մտքին, թե նրանք այնտեղ են, մնալու են, իսկ ես իրավունք չունեմ մնալու, իսկ ես պետք է գնամ՝ չգիտեմ ուր:

- Սպասեք,-ասում եմ:

Ես ուզում եմ նայել ու տեսնել, թե ինչպես են նրանք դուրս գալիս այս շենքից: Ես ուզում եմ նրանց դեմքը տեսնել, ու տեսնել թե նրանք դեպի ուր են գնում: Այս նրանք ո՞նց կարող են այս ամենից հետո տուն գնալ: Ի՞նչ պիտի ասեն տանը: Մեկն ու մեկը հո նրանցից մեկին կհարցնի՝, թե ինչ հարց էին քննում բյուրոյում: Ի՞նչ պիտի ասեն: Բաղամյանը, Սարգսյանը, Բենիկը ամուսնացած են, հիմա որ տուն մտնեն, կարո՞ղ են ամեն անզամվա պես իրենց կանանց հանգիստ ասել՝ «հոգնած եմ, հինգ ժամ բյուրոյում եի, քաղցած մեռնում եմ, ուտելու ի՞նչ կա»: Եվ հետո ինչպե՞ս պիտի ուտեն այդ հացը:

Ես այդ բոլորը ասում եմ հետապառ, կցկտուր և անկապ, ասես տենդի մեջ, այնպիսի մի թուլություն է իջել վրաս, որ քիչ է մնում վայր ընկնեմ:

- Դու իսկի այ, այսքան շմտածես,-բարկանում է Մանուկը,-նրանց դեռ այնքան ես տեսնելու: Մեր ճանապարհները հարյուր անգամ խաչաձևվելու են: Հո իզ՞ո՞ւ չէ, որ երկրագունդը կլոր է, ախապե՞ր ջան:

Մանուկի խոսքերի մասին երկար ու լուր մտածում եմ մինչև փողոցի անկյունը, իսկ փողոցի անկյունում, «Մուկվա» կինոթատրոնի մոտ, կանգ եմ առնում:

- Մանո՞ւկ ջան, ել չեմ ասում, վաղը երեկոյան Նվարդի հետ մեր տանն եք:

- Ուրեմն, այնուամենայնիվ, այսօր ամուսնան՝ ում եք: Իսկ ինչո՞ւ հարսնացուի կարծիքը չես հարցնում, գուցե իրադրությունները փոխե՞լ են նրա վճիռը:

- Մեր վճիռը բեկման ենթակա չէ,-իմ ցրիչությունն եմ հիշում ես: -Հը՞ , Նանար:

Իսկ Նանա՝ րը... Նանարը ոչինչ չի ասում ու միայն ժպտում է տխուր աշքերով, նա երջանիկ է, որ ես կարողանում եմ կատակել: Ի՞նչ բախտավորություն է, որ միշտ ինձ հետ է Նանարը:

- Դե, իսկ հիմա ցտեսություն,-ասում եմ Մանուկին:
- Ինչո՞ւ,-զարմանում է նա:
- Ուզում եմ մենակ մնալ:
- Երկուսո՞վ:
- Հա, Մանուկ շան:
- Դա մենակության բարձրագույն ձևն է,-ծիծաղում է Մանուկը:

Ես հիմա այնպես եմ հասկանում Մանուկին, ասես ե՞ս եմ Մանուկը:

Նա Նանարի պես զարմացել և ուրախացել է, որ այսքան շուտ մոռացել եմ բյուրոն, վախենում է, որ իիշեմ, դրա համար չի հեռանում մեզանից՝ կատակում է, ծիծաղում է անընդհատ, ու չի հասկանում, որ ես հենց իր համար եմ այսպես անհոգ ձևանում, որ ես զվարք եմ ձևանում, որպեսզի ինքն ու Նվարդն էլ չտիրեն մեզ հետ, որովհետև զիտեմ, տխուր ենք լինելու այսօր, մեր հարսանիքի օրը, Նանարն ու ես:

- Հա՛, երեկ զիտե՞ս ում հանդիպեցի,-ուսիս խփում է Մանուկը,-պահածոների գործարանի մեր բրիգադիր Գասպարին: Գրկել էր, բաց չեր թողնում, շատ բարեսում էր քեզ: Ու զիտե՞ս ինչ ասաց: Ասում է՝ շուտով մրգի սեզոնն սկսվելու է, Արտակի հետ եկեք, եկի՝ կընդունեմ իմ բրիգադը: Ճիշտ է, ասում է, մի քիչ զլուխ պահող եք, բայց լավ տղերք եք, եկեք ք: Ասում է՝ ուրիշ մարդ չեմ ուզում վերցնել. ե՞ս կլինեմ, Մարկոսը ու մեկ էլ դուք: Լավ գործ կանենք: Հը՞, թիսի զա:

Մանուկը ծիծաղում է այնքան բարձրաձայն, անկեղծ ու սրտաշարժ, որ ես չեմ կարողանում ծիծաղել հանուն նրա:

- ... Այ Գասպար շան, ասում եմ, ախր ո՞նց զանք պարկեր կրենք: Արտակն արդեն ժուռնալիստ է, ես էլ իրավաբան, տեսնողն ի՞նչ կասի: Եվ զիտե՞ս ինչ ասաց, չէ, հլա դու լսի, թե ինչ ասաց, ասում է՝ ձեր խաթրու երրորդ հերթի կաշխատենք, զիշերք, ո՞վ պիտի տեսնի: Եկեք, տղերք շան, ձեզ համար եմ ասում, ես տարի շատ լավ միրգ կա:

Մանուկը նորից խփում է իմ ուսին ու ծիծաղում է արցունքուտ աշքերով:

- Դե դու էլ եկ զնանք մի երկու ամիս աշխատենք,-ասում եմ ես Մանուկին:
- Իհա՝ րկե,-ոզնորությամբ երկարացնում է Մանուկը,- քեզ համար ի՞նչ կա, դու ազատ ես, քեզ աշխատանքից հա...
- Մանուկ,-նրան ընդհատում է Նվարդը:

Մանուկը կանգ է առնում շանթահարվածի պես, ապշած նայում է ինձ, Նանարին ու Նվարդին, ձեռքերը շարժում է շփորթահար, չիմանալով ինչպես ելք գտնել դրությունից, հետո ասում է շատ տխուր, անցած ծիծաղից արցունքուտ աչքերով:

- Արտա՛կ, դու նկատե՞լ ես, որ ես էշ եմ:

- Է՛, հիմա՛ր,-ծիծաղում եմ ես:

- Չէ, որ հիմար եմ, դա հաստատ է, բայց դու չե՞ս նկատել, որ էշ էլ եմ միաժամանակ: - Նա մեր ծիծաղի տակ տխրորեն օրորում է զլուխը ու ձեռքը մեկնում է Նվարդին: - Գնանք, գնանք, Նվա՛րդ ջան, քանի դեռ ողջ աշխարհը չի նկատել դա:

Ես ու Նանարը աչքերով հետևում ենք, մինչև նրանց ստվերները խառնվում են բոլորի ստվերներին, ու դանդաղ սկսում ենք բարձրանալ Արովյանով:

- Լավ տղա է Մանուկը,-ասում եմ ես:

- Այո,-ասում է Նանարը:

Ու մենք նորից լրում ենք:

- Ո՞ւր ենք գնում,-հարցնում է Նանարը:

- Գնանք Ղուկասյանի այզի, վերջին անգամ նստենք մեր նստարանին: Հը՞՝ Նանար: Այս ամուսնանալուց հետո անխղճություն կլինի այդ նստարանը զբաղեցնելը: Քանի՛ սան էին նախանձով մեզ նայում: Հիշո՞ւմ ես: Հիմա մենք մեր անկյունը կունենանք, մեր տունը և պարտավոր ենք մեր բարի նստարանը զիջել ուրիշներին, այսպես ասած զալիք սերունդ-գույզերին: Ճի՞շտ չեմ ասում:

Նանարը ոչինչ չի պատասխանում, այլ միայն սեղմվում է ինձ, ու մենք քայլում ենք Արովյան փողոցն ի վեր, հին-հին արահետներով: Անցնում ենք տրամվայի գիծը, թեքվում ձախ ու էլի ձախ և հայտնվում ենք մեր ստվերոտ անկյունում: Բարդիների կատարները աստղոտվել են արևի հրաժեշտից ու հողից տաք խոնավություն է բարձրանում: Նստարանին ուսանողական հաստ տետրի մի թուղթ կա, վրան գրված է անհասցե.«Եկա, սպասեցի, սպասեցի, չեկար»: Այսինքն ինչո՞ւ անհասցե, տերն անպայման կգտներ այն:

Ցերեկով երբեք չէինք նստել այս նստարանին: Հիմա նստել ու նորից լրում ենք: Իսկ ուղեղս բզոյում է գազազած պարսի նման: Ես դեռ բյուրոյում եմ և երեսի երկար, շատ երկար մնամ այնտեղ: Ես ձայներ եմ լսում ու աղմուկ, հարցեր եմ լսում, որ չեն տրվել և պատասխաններ եմ տալիս, որ չեմ հասցրել տամ: Ես միայն մի բան գիտեմ, որ ինձ լավ չեմ պահել այնտեղ և գիտեմ նաև, որ անբավականության զգացումը ինձ այլևս երբեք չի թողնի: Որքան էլ տարիներ անցնեն, ես այլևս լիովին երջանիկ չեմ կարող լինել, որովհետև հենց որ մտածեմ, թե երջանիկ եմ, անմիջապես հայտնվելու եմ բյուրոյում, վիճելու եմ, կովելու եմ և նվաստացած խնդրելու եմ իմ ընկերներին, որ չըվեարկեն, որ հավատան, որ չհեռացնեն ինձ:

- Նանար,-հանկարծ ասում եմ ես,-քեզ մի բան եմ խնդրելու: Ես դեռ կարգին չեմ փորձել, բայց իմ կարծիքով մեղմ բնավորություն ունեմ: Վախենում եմ մոռանամ ինձ հասցված վիրավորանքը, վախենում եմ թուլանամ, եթե այսօրվա բյուրոյի մարդիկ մի օր ներողություն խնդրեն կամ ժպտան ինձ: Դու հիշիր նրանց անունները՝ և միշտ հիշեցրու ինձ, որովհետև ես չեմ ուզում ներել նրանց, որովհետև բաներ կան, որ ներել չի կարելի:

- Լա՛վ,-անմիջապես համաձայնում է Նանարը:

- Դու տեսար, չէ՞ թե նրանք ինչ արեցին ինձ հետ:

- Դու քեզ լավ պահեցիր, Արտակ:

Եթե այդ ասողը Նանարը չլիներ, կկարծեի ծաղրում են:

- Լսո՞ւմ էիր ամեն ինչ,-հարցրեցի կասկածուտ:

- Ոչ,-ասաց Նանարը,-կաշեպատ դուռը խանգարում էր: Բայց ես լսում էի թե ինչպես էին բդավում նրանք: Նրանք կորցրել էին իրենց ու բդավում էին ամբողջ ժամանակ: Ուրեմն դու քեզ լավ էիր պահում:

Ես նայում եմ Նանարին: Նրա աչքերում մինչև այժմ ինձ անծանոթ ու արտասովոր փայլ կա: Այդպիսին են լինում մայրերի աչքերը, եթե վիրավորում են նրանց զավակներին: Հայսնագործողի զարմանքով ես Նանարին եմ նայում ու մտածում, որ նրանից ոչինչ չի կարելի պահել:

- Չէ՛, Նանար,-ասում եմ ես,-ես ինձ չեմ ների հենց միայն այն, որ խնդրում էի նրանց, լաց էի լինում: Ճիշտ է, ուրիշ բանի համար էի լաց լինում, բայց դա ի՞նչ նշանակություն ունի: Նրանք տեսնում էին իմ արցունքները: Ես դա ինձ երբեք չեմ ների:

- Թող,-բարկանում է Նանարը: -Դու ամեն ինչ արել ես: Դու ամեն ինչ փորձել ես, որ նրանք մարդ մնան: Դու նոյնիսկ լաց ես եղել, որ նրանք ցնցվեն ու հիշեն, որ մարդ են: Մի՛ տանջվիր, դու նրանց չպետք է ներես: Ես քեզ կիշեցնեմ: Ախր դու զգիտես...

Նանարը գունատ է ու փորրիկ ձեռքով սեղմում է թևս: Ես զարմանում եմ, որ այդքան ուժ ունի Նանարը: Բայց ավելի եմ զարմանում, տեսնելով նրա այդ ուրիշ տեսակ, այդ մայրական, հովանավորող, պաշտպանող զայրույթը: Դա ինձ համար շատ անսպասելի է ու տարօրինակ:

- Ախր դու անմեղ ես: Չպիտի հաշտվես: Դու պիտի հաղթես նրանց: Նրանք ի՞նչ են որ..., - հպարտ ինձ նայելով ու նրանց ուղղված արհամարհանքով շնչում է Նանարը:

- Իսկ դու որտեղի՞ց հնարեցիր, թե հաշտվելու եմ,-բարկացա ես:

- Կասեմ, մի՛ նեղանա: Դու նրանց մոտից ո՛չ թե զայրացած, այլ թուլացած դուրս եկար:

- Դե վե՛ր զ տուր,-ջղայնացած զոռում եմ ես, սրտնեղած- որ նա այդքան ճիշտ է,-ուրեմն ե՞ս չեմ հասկանում: Դու դեռ կտեսնե ս:

Ինչո՞ւ եմ գոռում, Ինչո՞ւ: Ես աշխատում եմ խաղաղվել, հասկանալ ու հասկացնել նրան: Հասկացնել, որ, այո՞ւ, ես ափսոսում եմ, որ այդպես ստացվեց: Ես չի ուզում, որ կոհիվ լինի, որովհետև տանել չեմ կարողանում կրիվները: Հետո՞ւ ինչ, գիտեմ, որ կհաղթեմ, բայց ախք ինչո՞ւ, ինչո՞ւ պետք է կովեմ և ինչո՞ւ պետք է հաղթեմ: Այս նրանք անմաքուր, անազնիվ կոհիվ են սկսել իմ դեմ, և ես կամա թե ակամա ինքս էլ պետք է ապականվեմ: Որովհետև կովող կողմերից մեկն եմ: Իսկ ոչ մեկը ոչ մի կովից դեռ մաքուր դուրս չի եկել: Ոչ մի հաղթող:

- Դու պիտի հաղթես, Նանարի շրջունքները դողում են, ու ես վախենում եմ, որ հիմա լաց կիմնի:
- Դե կհաղթե՞մ, նրանց հերն էլ անիծած,-ծիծաղում եմ ես,-ելք չունեմ, պիտի հաղթեմ, Նանար ջան:

Ես նստում եմ նրա կողքին ու մի տեսակ թեթևացած գրկում եմ նրան: Նանարը ետ չի հրում, չէ՛, ընդհակառակը, գլուխը խոնարհում է իմ կրծքին ու ես զգում եմ, որ ձեռքերիս վրայով դանդաղ գլորվում են նրա տաք արցունքները: Ուզում եմ մի քան ասել, մեղմ, սփոփիչ մի քան, և հանկարծ մտածում եմ, որ նա միայն ինձ համար չի ցավում, չէ՛: Որ նա, ով գիտե, թերևս հիշեց իր...

- Նանա՛ր,- հարցնում եմ ես,- ո՞վ է եղել քո հայրը:

Նանարը արագ, շեշտակի նայում է ինձ ու շփորչում է անասելի:

- Վարսավիր,-կմկմում է նա,-ես... ասել եմ քեզ:

-Այդ գիտեմ: Իսկ որտե՞ղ է հիմա: Որևէ լուր ունե՞ք:

Նանարը ցնցված, գունատված ինձ է նայում իր չքնար, վախեցած աչքերով: Հետո կարծես հասկանում է ամեն ինչ:

-Նրա՞նք ասացին:

Ես գլխով եմ անում:

- Ուրեմն, կենդանի՞ է,-ձռում է նա:

- Չգիտեմ, Նանար ջան: Միայն ասացին, որ Սիրիք են տարել:

Բոլոր լույսերը մարում են Նանարի աչքերում: Խոնարհում է գլուխը:

- Տարել են, երբ վեց տարեկան եմ եղել: Չգիտեմ ինչի համար,-շշնջում է նա: - Ու էլ չեմ տեսել: Չեմ լսել: Պատերազմից հետո միայն մի աղքատ եկավ մեր տուն: Ասաց, որ գերի է եղել և աքսորել են Սիրիք, ասաց, որ այնտեղ տեսել է հայրիկին: Հանքում է աշխատում, ասաց որ շատ է ուզում նամակ գրել, բայց չեն թողնում: Հետո հաց ինդրեց: Մայրս տվեց այն ողջ ուտելիքը, ինչ կար մեր տանը, ու նա գնաց Եվ էլ ոչ մի լուր մինչև հիմա, ո՞վ գիտե, գուցե հացի համար էր ասել:

- Ի՞նչ իմանաս,-ասացի ես,- զուցե և հացի համար չի ասել: Այնպիսի բաներ են լինում աշխարհում: Ի՞նչ իմանաս:

- Չգիտեմ,-հառաջում է Նանարը:
- Բա ինչո՞ւ այդ բոլորը ինձ չեր ասում,-Նանա՛ք:
- Վախենում էի... Վախենում էի, որ ինձ չսիրես:
- Հիմա՛ք,-ծիծաղեցի ես,-անհարազատի աղջիկ:

Հետո մենք երկար ժամանակ քրքջում էինք, և ես ձեռքով սրբում էի Նանարի արցունքները:

Իսկ երբ այգին մուգ-մուգ ստվերներով լցվեց, և շշուկներ ու զապված ծիծաղներ հնչեցին աներևույթ նստարաններից, ես բարձրացա տեղից, թափ տվեցի շորերս ու ոտքերիս փոշին:

- Գնանք, Նանա՛ք:
- Ո՞ւր,-ակամա հարցրեց Նանարը:
- Տուն, ո՞ւր,-ծիծաղեցի ես,-ստվորել ես թափառական կյանքին: Գնանք, հիմա մեր տունը մարդկանցով լցվել է, հիմա մեր փնթվնթան հարևանութին եռանդուն թագավորում է խոհանոցում, հիմա քո վանեցի մայրն ու իմ շամշադինեցի մայրը ամենազարմանալի ու անհասկանալի մի զրոյց են սկսել, հիմա հայրս նոր ունկնդիրներ գտած ոգևորությամբ պատմում է իր ջահել օրերը, հիմա Բաբկենը պատշզամբում վառում է մանղալը, ու հայիոյում է ինձ, հիմա Սեղան ռետինե խողովակով զինի է քաշում փայտե տակարից ու ամեն նոր լցվող շշի հետ հարբում ու ծիծաղում է: Եկ գնանք, Նանա՛ք: Եվ ո՛չ մի տիրություն, ո՛չ մի խոսք, ո՛չ մի բյուրո և ո՛չ մի վրեժ: Անշար լինենք այսօր, Նանա ք:

Ես բռնում եմ նրա թեր, ու մենք վազում ենք դեպի ելքի դուռը: Բայց ճանապարհին հանկարծ կանգ եմ առնում: - Մի բռպե,- ասում եմ,- մի բան մոռացա զրել նստարանին ընկած թղթին:

Իսկ երբ վերադառնում եմ հետապա, Նանարը ժպտալով հարցնում է.

- Ի՞նչ զրեցիր, Ա՛րս:
- Մեր կտակը զրեցի: «Մնաք բարով, մենք տուն ենք զնում, վերջապես ամուսնացանք: Նստարանը թողնում ենք ձեզ: Բարո՛վ վայելեք: Բախտավոր եղեք, շրջմոլիկներ»:

Խորտակված Դրոշ

Առավոտյան խառը զգացումով արթնացա: Երազումս հանպատրաստից ինչ-որ երկար ու տխուր մի բանաստեղծություն էի արտասանում, որն իբր ես էի զրել: Արտասանում էի ու հետն էլ զարմանում, թե ինչպես եմ կարողանում այդքան երածշտական ու լավ հանգեր գտնել: Զայնս հնչում էր բարձր, և ես լսում էի նրա խուլ ու խորհրդավոր արձագանքը: Ես կանգնած էի բեմում, լույսերով ողողված, իսկ դահլիճում մթություն էր: Ովքե՞ր են այնտեղ, մտածում էի տարակուսանքով, և ես ի՞նչ եմ արտասանում: Բառեր էի լսում, բայց չի կարողանում հասկանալ դրանց իմաստը, թեև վստահ էի, որ տխուր ու գեղեցիկ բառեր էին դրանք: Հետ դահլիճը թեթևակի լուսավորվեց, և ես զարմանքով նկատեցի, որ այնտեղ բոլորը ծանոթ մարդիկ են: Ահա հայրս, մայրս, Նանարը Մանուկը, Նվարդը, Պետրոս հայրիկը, մշեցի մամիկը, Բելա Գրիգորևնան, հետո մորուքով մի մարդ: Շատ ծանոթ է դեմքը, բայց ո՞վ է: Զա, «Ինտուրիստ»-ի փիլիսոփա-բարապանն է: Ահա և մեր բրիգադիր Գասպարը, Մարկոսը, Ազատը: Տես է, մեր կուրսեցիներն էլ են հավաքվել: Իսկ նրանք ովքե՞ր են, անկյունում, մթության մեջ: Սպասի ր, նրա՞նք ինչ գործ ունեն այստեղ: Մտքովս չէր անցնի: Բադամյանն է: Սարգայանը, Պարթևը, բյուրոյի անդամները: Միայն Մեսրոպը չկա: Ախ, հա՞ , Մեսրոպն ինձ ասել էր, որ չի կարող գալ, գործարանում ինչ-որ նոր բաժանմունք են բացելու: Ես ցածրացնում եմ ձայնս, շշուկի եմ հասցնում և լսում եմ, թե ինչպես է այդ շշուկը որոտում դահլիճում: Բառերը հոսում հա հոսում էին իմ շուրթերից, թախծու տ, հառաջանքի նման բառեր: Ես դարձյալ չեմ կարողանում ըստրնել, թե ինչեր եմ ասում, բայց հանկարծ նկատում եմ, որ դահլիճում նստածները լաց են լինում՝ Հայրս, մայրս, Բարկենը: Իսկ հետաքրքիր է, ինչպե՞ս են ընդունում ՆՐԱՆՔ: Ես թաքուն նայում եմ ՆՐԱՆՑ կողմը և զարմանքով տեսնում, որ ՆՐԱՆՔ էլ են լաց լինում՝ Բարամյանը, Սարգայանը, Պարթևը, մյուսները: Նրանք գունատ են և արցունքները գլորվում են նրանց մազակալած դեմքերով: Ուրեմն համենայնդեպս, նրանք էլ մարդ են, -թեթևացած մտածում եմ ես, -այնուամենայնիվ մա րդ են: Ես ավելի ողբերգական շեշտեր եմ դնում իմ արտասանության մեջ ու արդեն մի փոքր չարախնդությամբ ավելացնում մտրումս. «Հիմա զդում էք, չէ՞ , որ ստորաբար քննեցիր հարց, կարծում էքր կկորչեմ, կանհետանամ: Հիմա տեսնում եք, չէ՞ , թե ով եմ ես: Ես արտասանում եմ, և դուք լաց եք լինում, դուք մարդ եք դառնում: Առաջ ես էի լաց լինում, հիմա դուք եք լաց լինում»: Բայց այս ի՞նչ է, Նանարը կարծես ինչ-որ բան է ուզում ասել ինձ, աչքով է անում թաքուն: Առաջին անգամ է, որ նա աչքով է անում: Իբր, հոգեկան խոռվիք պահին, ես կուանում եմ բեմի վրա և շարունակելով արտասանել՝ լսում եմ, թե ինչպես է Նանարը շշուկով զգուշացնում ինձ. «Չհավատա ս նրանց: Արտակ, չհավատաս»: Ես բարձրացնում եմ գլուխս և ինքս էլ աչքով անում Նանարին, իբր՝ հասկացա թեզ, Նանա՞ թ: Նանարը զոհ ժպում է և կրկին ասում շշուկով. «Դե, ես գնացի թատրոն»: Ինչո՞ւ, ինչո՞ւ, ուզում եմ հարցնել ես բանաստեղծությամբ, որպեսզի հանդիսականները չկոահեն, բայց հենց նույն պահին մութի միջից հնչում է մեր կուրսի ավագ Շավարշ Միքայելյանի ձայնը.

- Ինչպե՞ս եք թույլ տալիս, որ բեմից հնչեն ժողովրդի թշնամու գործերը:

«Գործերը, գործերը, գործերը», -արձագանքում են դահլիճի պատերը, և ես քմիջաղով մտածում եմ, որ այդ բթամիտին թվում է, թե ես Զարենց եմ արտասանում: Ես նայում եմ դահլիճին ու տեսնում, որ այս անգամ բոլորը հեկեկում են, հեկեկում են բարձրածայն ու

սրտամորմոք, և ինչ որ անորոշ ահավորություն ու սպասում կա նրանց աղեկտուր ու սրտամաշ ողբի մեջ...

Բացում եմ աչքերս ու շնչում թեթևացած: Այ քեզ երազ: Բայց ի՞նչ է արտասանում, այնուամենայնիվ, ախր շատ լավ էր ստացվում: Այ քեզ երազ: Մի ոստյունով ցած եմ իջնում, ետ եմ տանում մեր մահճակալը սենյակից անջատող սպիտակ վարագույրը ու հայտնվում սեղանին նախաճաշ տեղավորող մորս առջև:

- Վախեցա,-ասում է մայրս,-ոնց որ երեխա լինես:

- Իսկ դու ինչո՞ւ էիր լաց լինում:

- Ե՞րբ,-հարցնում է մայրս, ու ես տիսուր մտածում եմ, որ մայրս չառարկեց, չասաց, որ լաց չի եղել, այլ միայն հարցնում է.«Ե՞րբ»:

- Երազիս մեջ-, ասում եմ ես:

- Դա լավ է,-ասում է մայրս,-երազի լացն ուրախություն է:

- Ուրեմն այսօր ահազին մարդ պետք է ուրախանա: Իսկ Նանարն ո՞ւ է:

Գնաց աշխատանքի:

- Ըհը՝: Իսկ դու ասում էիր ամուսնացի՝ թ, հա ամուսնացիք: Օգուտդ ինչ, այ մեր, երսի նրա համար էլ էիր նախաճաշ պատրաստել:

- Մենակ թեյ խմեց,-ժպտում է մայրս: - Հետո ես թուղթը գրեց, որ քեզ տամ:

Երազի մի մասը կատարվեց տեղնուտեղը: Նանարը դահլիճից շշուկով ասած հենց նույն խոսքերն եր գրել փոքրիկ թղթի վրա. «Դե, ես գնացի թատրոն, փորձ ունեմ: Հիշիր երեկվա մեր գրույցը: Խնդրում եմ ամուր լինես: Սպասում եմ քեզ և լավ լուրերի: Նանար»:

Լա վ լուրերի... Ես որտեղի՝ գքեզ համար լավ լուրեր բերեմ, այ Նանար: Ես միայն մի հույս ունեմ, մի հատիկ հույս, և իմ այդ հույսը խմբագիրն է: Ինչպե՞ս կընդունի նա ինձ, պաշտպան կկանգնի՝ արյուք: Ի՞նչ իմանամ: Առաջ այլ էր: Հիմա ես ոչ մի բանի հաստատ պատասխանել չեմ կարող: Երեկ ուրիշ էր, Նանար:

Արագորեն հագնվելով, հացի խանութ եմ մտնում և կոպեկանոցը կամացուկ գլորում եմ պատից կախված հեռախոսի անցքից: Հիմա կլսվի քարտուղարուհու ձայնը և... Շատ եմ զանգել հեռախոսով, բայց ոչ մի անգամ սիրտս այսպես չի տրոփել, այսպես չի եղել երբեք:

- Հաա՝ ...

Խմբագրի ձայն է: Քիչ է մնում անակնկալից անջատեմ հեռախոսը: Չեմ կարողանում խոսել:

- Հաա՝,-մի քիչ բարձրացնում է ձայնը:

- Ընկեր Սարյան, Արտակն է, Լսոնյանք...

- Ի՞նչ կա, ի՞նչ կա, Լսոնյան...

Անխիղճը շատ չոր է խոսում, ախր:

- Ուզում էի ձեզ մոտ գալ:

- Դե, ուրեմն արի՛, եթե ուզում ես: Ասենք արի՛, արի՛, բաներ ունեմք քեզ ասելու: Լավ բաներ են...

Տե՛ր աստված, միթե՞ աշխարհում լավ բաներ ել կան:

- Շնորհակալություն, ընկեր Սարյան, հենց հիմա կզամ:

- Հիմա չէ, հիմա չէ, մեկ-երկու ժամից հետո Արտ:

- Շատ լավ, շնորհակալություն, ընկեր Սարյան:

- Հաա՛ ...

Հեռախոսի այն ծայրում չխկոց է լսվում, և ես կամացուկ իր տեղն եմ դնում լծակը: Տեսնես ի՞նչ լավ բաների մասին է խոսքը: Ի՞նչ կարող է լինել: Մի բան պարզ է, որ նա դեռ չզիտի աշխատանքից ինձ հեռացնելու մասին: Այդ իմանալուց հետո լավ բաները լավ ել կմնա՞ն արդյոք: Ի՞նչ իմանամ:

Կրկին վեր բարձրանալով, պատշաճամբի պատի մեխից ցած եմ իջեցնում հեծանիվս, մեքենաբար յուղում եմ առանցքակալներն ու մաքրում փոշին, փորձում եմ ձաղերի ամրությունը ու նոր միայն հիշում, որ հեծանիվն ինձ այլս պետք չի: Չէ՞ որ ինձ զրկեցին նաև սպարտակիադային մասնակցելու իրավունքից: Մի պահ պատկերացնում եմ մարզադաշտը, իրար խառնված մարզիչներին, իմ հեծանվորդ ընկերներին, որ հիմա երեխ՝ հազնում են իրենց վառ կարմիր բաճկոնները, ու սիրու նորից կծկվում է ցավից: Ինչո՞ւ, ինչո՞ւ ախր:

Ենթադրենք՝ ես իսկապես տապալել եմ աշխատանքները և ինձ ճիշտ են հեռացրել շրջկումից: Բայց դա ի՞նչ կապ ունի սպորտի հետ, ի՞նչ կապ ունի սպարտակիադայի հետ: Ուրեմն, եթե ես չես կարող շրջկումում բաժնի վարիչ լինել, հեծանիվ է՞լ իրավունք չունես վարելու: Չէ, այստեղ շատ կոպիտ սխալ կա և սպարտակիադայի մեր դեկավարներն անպայման թույլ չեն տա մեկուսացնել ինձ: Նրանք հո ինձ լավ են ճանաչում: Չորս տարի է, ինչ հանրապետության հակաքական թիմի անդամ եմ, հանրապետության ուսանողների չեմպիոնը, ինձ են վստահել տանելու մեր պատվիրակության առաջին դրոշը, ընդամենը մի բանի օր է մնացել, որ մեկնենք Մոսկվա, ինչպես կարող են այսպիսի մի ժամանակ վերցնել ու հենց այնպես ինձ դեն նետել շքերթից: Ի՞նչ պիտի պատճառաբանեն: Չէ՛, անհնար է դա:

Նստելատեղից բռնած, հեծանիվը զգուշորեն իջեցնում եմ սանդուղքով, Տիգրան աղբարի հողաշեն տան մոտ ցատկում եմ վրան ու սլանում դեպի մարզադաշտ: Գարնանային տաք քամին խփում է դեմքիս, և ես ինձ դժբախտ չեմ զգում այլս: Իմ կողքով արագ-արագ քայլում են մեր տղաները, անցնում են հեծանվորները, գոռում են բարձրածայլը.

- Ուշանում ենք, շտապիր, Արտա՛կ:
- Այսօր լրիվ համազգեստով ենք փորձելու, գիտես, չէ՝,
- Հենց նոր բերեցին կոստյումները:

Մուտքի մոտ իջնում ենք հեծանիվներից ու նստատեղերից բռնած, արագ հրելով, քայլում ենք դեպի մեր հանդերձարանը՝ հեծանիվների համերաշխ, մեղմ բզզոցի տակ: Մեր մարզից Ռուբեն Ավշարովը, ինչպես միշտ հուզված ու խառնված իրար, հեռվից սպառնագին մատ է թափ տալիս մեզ վրա:

- Շուտ, շուտ, դուք հեծանվորդներ չեք, այլ պարուիիներ: Տեր աստված, և ես սրանց հետ պետք է Մոսկվա գնամ: Չե՞մ գնա, վաղն իսկ կպահանջեմ, որ ինձ ազատեն ձեզնից: Երբե՞ք: Դե, ի՞նչ եք կանգնել ու չոել աշքներդ, հազնեք, արագ, հինգ րոպե ձեզ ժամանակ, ով ուշացավ, թող չքվի աչքից: Այ քեզ դժբախտություն:

Նրա հայիոյանքները մեզ համար ոնց որ ծանոթ ու հարազատ երաժշտություն լինեն: Այդ փնթփնթան ծերուկը մեր կուռքն ու աստվածն է: Նիհար, ջլուտ ու բարձրահասակ, նա քայլում է թեքված ու ձեռքերը լայն-լայն նետելով, և մենք պատրաստ ենք քայլել նրա ետևից մինչև աշխարհի ծայրը: Երեխայի նման անկեղծ է, հոր նման հոգատար և կյանքը կտա քեզ համար, եթե միայն դու սիրես հեծանիվը, եթե ընդունես, որ հեծանիվից լավ բան չկա աշխարհում և վերևից նայես սպորտի մնացած բոլոր ձեւերին: Իսկ եթե հանկարծ քեզ հաջողվի բարելավել որևէ ռեկորդ, ապա նոր միայն կզգաս, թե ինչպես կարող է ոգևորվել Ռուբեն Ավշարովը:

- Արծի՛ վ, արծի՛ վ,-գոռզոռում է նա՝ քեզ հեծանիվից գրկած իջեցնելով,-դու գիտե՞ս թե ինչ արեցիր: Չգիտե՞ս: Իսկ ես գիտեմ: Մենք քեզ հետ քո մրցակիցներին հավի ճտերի նման կուտենք, հավատա Ռուբեն Ավշարովին: Ո՞վ: Այո՞ մուշկինք: Այսմուշկինք տասը մետք քեզանից ետ կմնա: Ինչ ես ասում, դե, հազիր, հազիր, կմրսե՞ս, -նա իր բրդե բաձկոնք զցում է քո ուսերին, -հազի՞ր, ասում եմ, շուն-շան որդի, արծիվ-արծվի ճուտ:

Իսկ եթե վազքուղուց իջել ես ցածր արդյունքով, նոր կզգաս, թե ինչպես կարող է տիսուր գոռզոռալ Ռուբեն Ավշարովը:

- Այդ ո՞նց իիր գնում, շուն-շան որդի, ոնց որ ծովացուլը մանկական սայլակի մեջ: Գնա, գնա ըմբիշ դարձիր, ի՞նչ գործ ունես հեծանիվի հետ: Ոնց որ ալրի պարկը ավանակի վրա: Ֆուտբոլիստ... Գոնք հեծանիվից ամաչիր, տես ի՞նչ հեծանիվ է, մուրագ է, թեթև, ձկուն, ժամացույցի պես է աշխատում: Շախմատիստ: Է՞ հ, թե մեր ժամանակ այսպիսի հեծանիվ լիներ, հեծանիվ հո չեր, շոգեքարշ էինք քշում, շուն-շան որդի թենիսիստներ...

Նրանից ոչ ոք չի նեղանում, ինչպես հորից չի կարելի նեղանալ: Նա՝ է բոլորին հեծանվորդ դարձել, նա է ամենուրեք պաշտպանում հեծանվորդի շահերը, առաջին օգնության հասնում, եթե ընկել ես, ոգևորում իր հմայիչ հայիոյանքներով, եթե հուսահատ ուզում ես դուրս գալ մրցությունից: Հետո բոլորը գիտեն, թե ինչ հեծանվորդ է եղել նա իր ժամանակին: Հյուսիսային Կովկասի ու Անդրկովկասի շեմպինն, մի շարք ռեկորդների հեղինակ: Անդրկովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովն ինքն է իր ազնվազարմ ձեռքով նրա կրծքին փակցրել երկաթե ինչ-որ խաչ: Դա մի հին, խունացած նկարից է երևում: Ռուբեն Ավշարովը կանգնած է մի

ձեռքով բոնած իրոք շոգեքարշի պէս անձոռնի ու ծանր հեծանիվը, իսկ մյուսով թափահարում է փոխարքայի ձերմակ ձեռքը:

Իրար իրելով՝ հանդերձարան ենք նետվում ու ստանում մեր նոր, շքեղ հազուստները՝ բրյա վառ կարմիր բաճկոններն ու մուգ-կապույտ տարատները, փոքրիկ, ձերմակ գլխարկներն ու սև, հեծանվային կոշիկները: Իսկ էլի մի քանի բոպէ անց, երբ հեծանիվներին ամրացված մետաքս բարձր դրոշները թերթակի դողդողում էին քամուց, մարզադաշտ ենք մտնում.

- Շար-վի՛ բ...

Ես ամենից շատ սիրում եմ հանդիսավոր արարողություններին նախորդող իրարանցումն ու խուճապը: Դրանք շատ ավելի անկեղծ ու հուզիչ են լինում, քան բուն հանդիսավոր արարողությունները, երբ ամեն ինչ ծրագրված ու հաշված է վայրկյանների ձշությամբ, և դու փաստորեն մեքենայաբար ես կատարում քո պարտականությունները: Իսկ հիմա ամեն ինչ խառնվել է իրար, իրահանգիշները բղավելով այս ու այն կողմ են վազում, դեպի իրենց շարքերն են պլանում ուշացած մարզիկները, մի տեղից մյուս տեղն են գորվում մարմնամարզական սարքերը, նվազախմբի անդամները մի վերջին անգամ փորձում են իրենց գործիքները՝ խառնաշփոթ ու աններդաշնակ ձայներ արձակելով: Եվ ամեն ինչ շողում ու փայլում է, աղմկում ու հուկրում է պայծառ, շլացուցիչ գույներով:

- Շար-վի՛ բ...

Հետզհետեւ մարում է աղմուկը, վերջին աղաղակները հալվում են օդում և զարմանալի մի լրություն է իշնում մարզադաշտին: Մեր գլխավերնում թեթև քամուց մեղմորեն ծածանվում են մետաքս դրոշները:

- Զգաաա՝ ստ:

Մեր ձգված շարքերի առջևով վազելով անցնում է շքերթի հրամանատարը, մոտենում է չգիտես որտեղից հայտնված գեր, սպիտակ կոստյումով մի մարդու և գոռում է ողջ ձայնով, ասես դիմացինը խուլ լինի:

- Ֆիզկուլտ կոմիտեի ընկեր նախազահ, համամիութենական սպորտային շքերթի հայ մասնակիցները պատրաստ են գլխավոր փորձին: Թույլ տվեք սկսել:

Բայց ֆիզկուլտ կոմիտեի նախազահը կարծես իրոք չի լսում նրան, որովհետև ձեռքով մոտ է կանչում և ինչ-որ քան ասում համարյա ականջին թեքված: Շքերթի հրամանատարը ետ՝ մեզ է նայում, ու թեև մենք երկու հարյուր իխուն հոգի ենք, բայց տագնապով, տհաճ ցավում է միայն իմ սիրտը: Նրանք հազար ու մի քան կարող էին խոսել, քի՞ ժքան ուներ ասելու ֆիզկուլտ կոմիտեի նախազահը շքերթի հրամանատարին, բայց ես կարող էի երդվել, որ նրանք միայն ու միայն իմ մասին են խոսում: Իսկ երբ շքերթի հրամանատարը կտրուկ շրջվեց և քայլեց դեպի մեզ, ես արդեն լրիվ համոզված էի դրանում և ճակատագրից միայն մի քան էի խնդրում, որ նա բարձրածայն չափ իր ասելիքը: Բայց շքերթի հրամանատարը շատ պարտաճանաչ ու նախանձախնդիր աշխատող էր երևի, որովհետև դեռ տեղ չհասած ձեռքի բարձրախոսը շուրթերին տարավ ու ազդարաբեց մարզադաշտով մեկ:

- Հեծանվորդ Արտակ Լևոնյան, շրջկոմի բյուրոյի որոշմամբ...
- Լա՛վ, լա՛վ,- բղավեցի ես՝ հեծանիվս իր դրոշով դուրս բերելով շարքից ու շտապելով դեպի նա:

Ես պատրաստ էի անմիջապես թողնել մարզադաշտը, շքերթը, Երևանը, աշխարհը, միայն թե նա չհայտարարեր բարձրաձայն, միայն թե ընկերներս չիմանային իմ դժբախտությունը: Ես ամաչում էի նրանցից: Ես չէի կարող երկու հարյուր հիսուն հոգու բացատրել իրողությունը: Երկու հարյուր հիսուն հոգուց քանի ար կհավատային ինձ: Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ...

- Լա՛վ, լա՛վ գնում եմ,- բղավեցի ես խելագարի պես առաջ նետվելով, աշխատելով շեղել նրա ուշադրությունը, խանգարել նրան: Բայց նա շատ պարտաճանաչ ու նախանձախնդիր աշխատող էր երևի...

- Շրջկոմի բյուրոյի որոշմամբ դուք հեռացված եք շքերթից: Հանձնեք ձեր հագուստներն ու հեծանիվը: Ընկե՛ք Ավշարով, ստացեք գույքը: Եվ ճաշի մնացած կտրոնները,- բղավեց նա հանկարծ:

Ես կանգ առա նրանից ընդամենը երկու քայլ հեռու՝ անկարող շարժվել, ստորացած ու խորտակված: Ես կարող էի այդ րոպեին սպանել նրան, եթե ձեռքիս որևէ զենք լիներ: Բայց ես զենք չունեի: Իմ ձեռքին միայն հեծանիվ կար, որի վերևում բարձր-բարձր փողփողում էր մետաքսե դրոշը, և ես ողջ ուժով հեծանիվս նետեցի դեպի նա: Հեծանիվս գնաց ուղիղ, հետո շրջվեց միանգամից, ու մետաքսե դրոշն ընկավ շքերթի հրամանատարի վրա:

- Ա՛ռ, ա՛ռ,- շնչացի ես ատելությունից խելագարված:

Շքերթի հրամանատարը մի պահ ցնցված ու ապշած ինձ էր նայում՝ չհասկանալով կատարվածը, անմեղ մարդու տարակուսանքով, և պայթեց միայն այն ժամանակ, երբ տեսավ ընկած դրոշը:

- Դրոշը,- ճշաց նա, -անմիջապես վերցրո՛ւ դրոշը: Գե՛րբ, գե՛րբ տեսնո՞ւմ ես: Ինչպե՞ս ես գերբը գցում: Գիտե՞ս, թե դրա համար քեզ ինչ կանեն: Վերցրու և դրոշն, ասում եմ:

Եվ հանկարծ ես տեսա Ռուբեն Ավշարովին: Նա կանգնել էր շքերթի հրամանատարի մոտ՝ բարձրահասակ ու կուցած և արագ-արագ թափահարում էր երկար ձեռքերը:

- Ինչո՞ւ ես կովում, սպասի՛ր,- հևում էր նա, - ես կվերցնեմ: Ընկած փալասը տեսնում եք, մարդուն չե՞ք տեսնում: Դու ինձ վրա մատ մի՛ թափ տուր, ես Ավշարովն եմ և մատներ շատ եմ տեսել: Գլուխների քիչ եմ հանդիպում: Ա՛ռ քո դրոշը: Խսկ հեծանիվը ինչո՞ւ եք վերցնում, զիտե՞ք, թե նա ինչ հեծանվորդ է: Հեծանիվը ե՞ս եմ տվել: Ես՝ Ռուբեն Ավշարովս: Խսկ եթե ձեզ հեծանվորդներ պետք չեն, մենք բոլորս ել կզնանք: Զա՛, զա՛... - նա ձեռքը թափահարեց բարկացած, և բոլոր հեծանվորդները անմիջապես դրոշներով շրջապատեցին մեզ:

- Զյա՛ ձ Ռուբեն, ձյա՛ ձ Ռուբեն,- խնդրեցի ես, պետք չէ, ես կզնամ:

- Զայնդ կտրիր, շուն շան որդի,-իմ կողմը շրջվեց զայրացած ծերուկը,- դու ի՞նչ իրավունքով ես հեծանիվը գետնին զցում, իը ...

Եվ ինչպես միշտ, նրա զոռգոռոցը միանգամից հանգստացրեց ինձ: Ես կանաչի վրայից բարձրացրի հեծանիվը և քայլեցի դեպի ելքի դուռը, առանց դրոշի, խոնարհված գլխով, դատարկված հոգով, զարմացած, որ այսքանից հետո դեռ կարող եմ ապրել ու քայլել և լսել, թե ինչպես են բղավում այնտեղ շքերթի հրամանատարն ու մեր մարզիչը, հին-հին օրերի շեմպիոն, Վորոնցով-Դաշկովի ճերմակ թաթը մի ժամանակ բռնած ծեր հեծանվորդ Ռուբեն Ավշարով:

Հանդերձարանում շտապելով, քաշքելով հանեցի ու դեն նետեցի վառ կարմիր բաճկոնս ու կարձ մուգ կապույտ տարատս, փոքրիկ, սպիտակ գլխարկս ու հեծանվային սև կոշիկներս: Հազար իմ հին շորերը, հեծանիվս զգուշությամբ պատին հենեցի, փայլուն դեկի վրայից թևող սրբեցի փոշու բարակ շերտն ու դուրս եկա մարզադաշտից դանդաղ, հոգնած քայլերով, հրաժեշտ տալով էլի՝ ինչ-որ թանկագին բաների՝ իմ փախչող, հեռացող ջահելությունից:

ՊԵՏՈՔ Ե ԱՐԴԱՐԱՆԱԼ

Զարմանալի բան է կյանքը: ընդամենը մի օր առաջ ես քայլում էի այս փողոցով հաղթողի պես ու տիրոջ ինքնավստահությամբ, բարևում էի դիմացից եկող ծանոթներիս, մյուս մայթով անցնողներին ձեռքով էի անում հեռվից, կանգնում, զրուցում էի հետները և ուրախ շարունակում էի ճամփաս՝ մտքումս երգելով ու հիացած նայելով շուրջ: Ամեն ինչ ինձ համար հետաքրքիր էր, զարմանալի ու սիրելի: Ինձ հանդիպած բոլոր մարդիկ ուրախ ու երջանիկ մարդիկ էին, իմ հարազատները: Իմն էին պարտեզներն ու բարդիները, կավեցանկապատերն ու նոր բարձրացող շենքերը, ապշեցուցիչ կապույտ երկնքում ձախրող աղավնիները, անշարժ, դողացող արտույտներն ու սրաթոփիչ ծիծեռնակները:

Ընդամենը մի օր է անցել, և ես երկշոտ ու ամաչկոտ քայլերով եմ անցնում այս փողոցով, այս փողոցից վտարվածի պես: Անցնում եմ արագ-արագ, գլխահակ ու աշխատում եմ չնայել անցորդներին: Ինձ թվում է, նրանք բոլորն ել զիտեն ինչ է պատահել և հիմա խուսափում են ինձնից: Այն տղան, օրինակ, միշտ հեռվից բարևում էր ինձ՝ ժպտալով ու թափահարելով ձեռքը, իսկ այսօր չնայեց էլ իմ կողմը: Այսօր ինձ ոչ ոք չի բարևում: Ո վ զիտե, գուցե նրանց հետ էլ ինչ-ոք բան է պատահել:

- Բարեն, Արտա՛կ:

Մեր տան կողքի կաթի գործարնում է աշխատում, համարյա ամեն օր հանդիպում ենք:

- Բարեն,-ասում ես, արագացնելով քայլերս:

- Ո՞նց ես,-հարցնում է նա: Նա ամեն օր տալիս է նույն հարցը, բայց հիմա այդ հարցը բոլորովին ուրիշ տեսակ է հնչում:

- Ոչի՞նչ,-ժպտով ասում եմ ես:

- Հո որևէ բան չի՞ պատահել, մի տեսակ ես երևում:

- Չե, ի՞նչ պիտի պատահի,-աշխատում եմ ծիծաղել և զգում եմ, որ շատ զզվելի, շատ կեղծ է ստացվում ծիծաղս:

- Դե, լավ է,-ասում է նա մտահոգ,-ցտեսություն:

- Ցտեսություն:

Հավանաբար որևէ բան լսել էր, բայց ուզում էր ինձնից իմանալ, թե չէ՝ ինչո՞ւ պետք տար այդ հարցը: Կամ գուցե դեմքս շատ է տրտում: Չէ, միշտ էլ այսպես ես: Պարզապես շորերս են հին, շորերս, մի կարգին շոր չունեմ, դրանից էլ տրամադրությունս ընկած է: Նրանք էլ երևի շորերիս են նայում ու արդեն ես ուրիշ տեսակ եմ թվում նրանց աշքին: Ի՞նչ շորեր են սրանք՝ գունաթափ, հասարակ, կոճակներն մոտ մաշված, իսկ կոշիկներիս մասին ավելորդ է

նույնիսկ ասելը... Դեռ լավ է, որ ամառ է զալիս, ամռանը հեշտ է, մի վերնաշապիկ ես հազնում ու վերօ:

Եվ հանկարծ մի ինչ-որ զայրույթ է իշխում վրաս: Դե, ի՞նչ անեմ: Շոր չունեմ, հետո՞ ինչ: Ինչո՞ւ պիտի ամաչեմ, իո չե՞մ գողանալու: Ինչ ունեմ՝ սա է: Ունեմ՝ չե՞մ հազնում: Սա ինչ-որ շատ ծանոթ արտահայտություն է թվում: Որտե՞ղ եմ կարդացել: Չե՞, գրքում չեր: Իրական դեպք է եղել: Մեր գյուղում է եղել իրական այդ դեպքը, թե մի ուրիշ գյուղում՝ չգիտեմ, բայց իրական է այդ դեպքը: Մեկն ուզեցել է շատ վիրավորել, շատ նվաստացնել մյուսին և մի օր շատերի մոտ գողողոալով, նետել է նրա երեսին.

- Յանի դու էն մարդը չե՞ս, որ քո հերք սովից մեռա՞վ...

Հավաքվածները լրում են, որովհետև դա շատ ծանր վիրավորանք էր: Երկար լրում է նաև վիրավորանք ստացող գյուղացին: Նա ուզում է առարկել, ուզում է արդարանալ, ուզում է պաշտպանել իր հոր պատիվը: Բայց ի՞նչ ասի, չե՞ որ դա ճշմարտություն է, չե՞ որ հայրն իսկապես քաղցից է մեռել ծանր, սովոր տարիներին: Ու գյուղացին ասում է խեղճ-խեղճ, խորտակված, բայց խորտակվողի անորսալի արժանապատվությամբ.

- Յանի կար, կերավ ո՞չ...

Ուրեմն՝ չկա՞ր: Չուներ:

Ես էլ չունեմ և ունեցողների հերն էլ անիծած: Դրա համար մարդ չպետք է ամաչի: Ես էլ եմ աշխատում, (աշխատում էի,-ակամա հառաչեցի ես), հայրս էլ է աշխատում, Բաբկենն էլ է աշխատում, Սեղան էլ է աշխատում, Նանարն էլ է աշխատում, և եթե այդքանից հետո չենք կարողանում քիչ թե շատ կարգին ապրել, ուրեմն՝ ի՞նչ անենք, ուրեմն, գրնե մենք չենք մեղավոր: Ուրեմն՝ չկա՞: Երկիրն աղքատ է, պատերազմից նոր ենք դուրս եկել ախր: «Յանի կար, կերավ ո՞չ»: Կարծես թե անեկդոտ է, լավ արտասանելու դեպքում կարելի է նույնիսկ ծիծաղել: Բայց չգիտես ինչու, մարդու լացն է զալիս:

Խմբագրության շենքի աստիճանների վրա հանդիպում եմ լուսանկարիչ Զավենին: Հայրենադարձ է, եռանդուն, արագաշարժ, միշտ խնամքով ու ճաշակով հազնված: Անընդհատ վազում է՝ ապարատը կողքից կախ:

Եվ ամեն ինչ անում է վազքի ժամանակ՝ խոսում է, հարցեր տալիս, պատասխանում: Երբ կանգնեցնում ես, տեղում այնպես է շարժվում ու օրորվում, ասես շարունակում է վազել: Ինձ թվում է, թե նա քնած ժամանակ էլ է վազում:

- Գնում եմ պահածոների գործարան, չե՞ս զալիս,- հարցնում է նա վազելով:

- Չե՞,- ասում եմ ես:

- Ափսո՞ս, կնկարեի,- գլուխը ետ դարձնելով, վազում է նա:

- Չե՞ս իրատվել,-ծիծաղում եմ ես:

- Չէ՝, ծիծառում է նա արդեն դռան մոտից:

Այսր այդ դրությունն իսկապես շատ ծիծառելի էր: Հարյուր կիլոգրամ շաքարավազի մի պարկ ուսիս, պահեստից մրգի բաժանմունք էի զալիս, երբ առջևս հայտնվեցին մեր բաժանմունքի պետ, իրեա Ֆրիդմանն ու այս վազող լուսանկարիչը: Ինձ տեսնելուն պես Ֆրիդմանն ասաց լուսանկարչին.

- Ահա՝, կարող ես հենց սրան էլ նկարել. կուսակցական բեռնակիր է, առաջադրանքները կատարում է երկու հարյուր տոկոսով:

- Օ՛, շատ լավ է,-բացականչեց լուսանկարիչը և սկսեց այս ու այն կողմ վազվել՝ համար դիրք ընտրելու համար:

Պարկի տակ թուլացան ոտքերս: Ես արդեն պատկերացրի իմ լուսանկարը թերթում, մոտավորապես հետևյալ մակագրությամբ. «Պահածոների գործարանում շատ առաջավոր բանվորներ կան: Ահա նրանցից մեկը բեռնակիր Արտակ Լուսյանը, որը հունվարյան պլենումի որոշումների լույսի տակ իր պլանները կատարում է երկու հարյուր հիսուն տոկոսով»: Կամ նման մի բան: Ես պատկերացրի նաև, թե ինչպիսի զարմանախառն հրճվանքով թերթը ձեռքից ձեռք կիլեն համալսարանի ժուռնալիստիկայի բաժնի հինգերորդ կուրսի իմ ընկերներն ու ընկերուհիները, մեր բարեկամներն ու ծանոթները, դրա համար էլ առանց որևէ այլնայլության շրջվեցի և պարկը արագ-արագ ետ, դեպի պահեստը տարա:

- Սպասի՞ր իմ ետևից կանչեց Ֆրիդմանը, - ո՞ւր ես գնում:

Իսկ լուսանկարիչը վազքով իմ առջևում հայտնվեց:

- Մի վայրկյան, միայն մի վայրկյան,-ասաց նա՝ բարձրացնելով ապարատը:

Իսկապես, նրան մի վայրկյան էր պետք լուսանկարելու համար, իսկ ես չեմ կարող այդ մի վայրկյանում նրան հասկացնել, որ լուսանկարվելու ոչ մի մտադրություն չունեմ, որ ես ուսանող եմ, որ դա թաքցրել եմ Ֆրիդմանից, որովհետև նա սկզբունքորեն ուսանող-բեռնակիրներ չի ընդունում: Ես չեմ հասցնի այդքանն ասել նրան, դրա համար էլ պարզապես սպառնալից շշնչացի.

- Ապարատդ կորցրու, թե չէ տեղն ու տեղը կշարդեմ:

- Օ՛, ինչո՞ւ, չե՞ք ուզում՝ այդպես էլ ասացեք, իսնդրեմ, մենք ստիպելով չենք նկարում,- շփորչած այս ու այն կողմ վազեց լուսանկարիչը ու մեր հայերեն սիրալիր զրույցից ոչինչ չհասկացած Ֆրիդմանի տարակուսած հայացքի տակ ալացավ ուրիշ բաժանմունք:

- Ի՞նչ պատահեց, -հարցրեց Ֆրիդմանը:

- Ոչինչ չհասկացա,-պարկի տակ ուսերս թոթվեցի ես,- ասում է՝ քո դեմքը ֆոտոգենիկ չէ:

- Դա՝, տեխնիկա,-մելամաղանու ձգեց Ֆրիդմանը, չհավատալով ինձ, բայց և չիմանալով, թե ինչ կարելի է ասել:

Իսկ այս դեպքից ուղիղ մեկ ամիս անց, երբ ուսումնական փորձաշրջան էի անցկացնում հանրապետական թերթի խմբագրությունում և մեզ ծանոթացնում էին բաժինների աշխատանքին, նույն նկարիչը շուրջս վագելով երկար ուսումնաժողում էր ինձ, և վերջապես, չղիմանպով, հարցրեց.

- Մենք, կարծես, հանդիպել ենք մի տեղ:

- Ապարատդ կշարդեմ,-սպառնալից շշնջացի ես՝ միաժամանակ աշքով անելով:

Լուսանկարիչ Զավենը երկար ժամանակ քրքջում էր՝ ետ ու առաջ վագելով ու հազիվ էր արտասանում ծիծաղի միջից.

- -Ես ել... ասեմ... ինչո՞ւ չի ուզում... լուսանկարվել...

Խմբագրի ընդունարանում պատասխանատու քարտուղարն ու նրա տեղակալը շփոթված դիտում են թերթի նոր համարի գծագիրը: Հավանաբար խմբագրի սենյակից են դուրս եկել:

Ես քարտուղարուիհուն խնդրում եմ տեղեկացնել Սարյանին, որ եկել եմ: Գուցե անժամանակ եմ եկել: Գուցե հետո՞ զամ: Քարտուղարուիին ներս է մտնում և անմիջապես ել դուրս է զալիս՝ կիսաբաց թողնելով դուռը...

- Մտե՛ք:

Խմբագիրը նստած է մեծ գրասեղանի ետևում, ձեռքերը սեղանին դրած, ու նյութ է կարդում: Դեմքը խաղաղ է, անկնճիռ: Կարդալու հետ միաժամանակ աջ ձեռքի մատներով կամացուկ խփում է սեղանին, որ նշան է, թե տրամադրությունը լավ է և երգում է մտքում: Ես նույնիսկ կարող եմ ասել, թե նա ինչ է երգում և նույնը կարող են ասել նրա բոլոր ուսանողները: Մի օր զրոյցի ժամանակ խմբագիրը խոստովանել է, որ շատ է սիրում և ուրախ պահերին երգում է «Սարերի հովին մեռնեմ»-ը: Ես, իհարկե, ուրախանում եմ, որ խմբագրի տրամադրությունը բարձր է, բայց միաժամանակ անհանգիստ մտածում եմ, որ ակամա զցելու եմ նրա այդ տրամադրությունը:

Խմբագիրը բարձրացնում է գլուխը, ժպտում է ինձ ու մեկնում աջը:

- Մո՛տ արի, մո՛տ արի,-ասում է նա, -բարե, նստի՛ր: Ֆելիքտոնդ մեծ աղմուկ է հանել, ա՛յ տղա: Լավ էիր գրել: Հանձնաժողով են կազմել, քննում են: Միլիցիան էլ է զբաղվում: Բայց շատ ամուր ընկույզ է երևում այդ Վեզիրյանը: Պաշտպաններ շատ ունի, զանգ են տալիս, հոգի են հանում: Բայց դա ոչ մի նշանակություն չունի: Հարյուրավոր նամակներ ենք ստանում, շնորհավորում են, շնորհակալություն են հայտնում: Ժողովուրդը զոհ է և դա՛ է ամենակարևորը: Ժողովրդի շահերը՝ առաջին հերթին: Այնպես որ՝ ես ել քեզ եմ շնորհավորում, տղա ս:

- Շնորհակալություն, ընկե՛ր Սարյան:

- Շնորհակալության բան չկա: Լավին լավ կասեն, վատին՝ վատ:

Նա ելնում է տեղից և ձեռքերը մեջքին դրած, գլուխը բարձր, սկսում է քայլել սենյակում: Վարվեցողության ինչ-որ կանոններ հիշելով, ես էլ եմ փորձում ելնել տեղից, բայց նա կանգ է առնում ինձ մոտ ու ձախ ձեռքի փափլիկ մատներով սեղմում է ուստ: Հետո նայելով պատուհանից այն կորմ, սկսում է խոսել մեղմ, մտերմիկ, և ես կրկին տխուր մտածում եմ, որ քիչ հետո ակամա զցելու եմ նրա տրամադրությունը:

- Մեր մասնագիտությունը աշխարհի ամենաազնիվ մասնագիտություններից մեկն է: Լրազրո՞ն: Եվ, հավատացնում եմ, լրազրող չեն դառնում, ծնվում են: Խոսք, իհարկե, իսկական լրազրողների մասին է: Այս ես ձեզ դասախոսում էի, չէ՞: Դատարկ բան է: Ով պետք է դառնար, կրառնա, ով չէ, կուգես տասը տարի սովորեցրու: Այս, մի առարկիր (թեն ես չէի ել փորձում առարկել): Դա, իհարկե, չի նշանակում, թե սովորել պետք չէ: Ընդհակառակը, լրազրողն ամեն ինչ պետք է իմանա, ամեն ինչ... Ծաղրածուի նման,- հանկարծ ասաց խմբագիրն ու նկատելով, որ ես անսպասելիությունից ցնցվեցի, ծիծառեց: - Մի զարմանա: Այդպես է: Կրկեսում չեն նկատել: Ձեռնածուն կատարում է իր բարդ վարժությունները ու հեռանում, իսկ նրա ետևից ներս է մտնում ծաղրածուն և իր շատ պարզ շարժումներով կրկնում նրան: Նա կարողանում է միաժամանակ քայլել լարի վրայով՝ լարախաղացի պես, ճարպիկ ցատկողների նման պտտվել օդում, ընդօրինակել աճպարարին և նույնիսկ հասկանալ գազանների լեզուն: Այս, հենց այս իմաստով էլ մենք նման եք: Լրազրողը պետք է ամեն ինչ իմանա...»

- Հեռախոսը զնգում է կամացուկ, ու խմբագիրը անմիջապես հայտնվում է փոքրիկ սեղանիկի մոտ:

- Լսում եմ: Այս: Բարև ձեզ: Ոչի՞նչ: դա: Լսում եմ: Դա: - Նրա դեմքը կնճռոտվում է ու սկսում կարմրել: - Դա, դա: Բայց դուք որտեղի՞ց... Դա: Ձեզ պարզապես... - Երկար լրում է, ականջից հեռու պահած լսափողը, որի միջից հիմա բարձր տզզոց է լսվում, թվում է թե ճանձ է մոլորվել այնտեղ ու ելք է փնտրում լսափողի ներ, փոքրիկ անցքից: Ճանձը միայն մի ակնթարթ լրում է, և խմբագիրը շտապում է խոսել:

- Հիմա բացատրեմ... - Եվ որովհետև ճանձը նորից սկսում է բզզալ, Սարյանն այս անգամ բարձրացնում է ձայնը... - Լսեք, հարգելի ընկեր, հեռախոսը երկու զիջ ունի, մեկով խոսում են, մյուսով՝ լսում: Եթե դա ձեզ դուր չի գալիս. ուսդիոյնվ ելույթ ունեցեք: Ցտեսություն:

Թեև նա դեռ բարկացած է, բայց ժպտում է միաժամանակ՝ մանկացած դեմքով: Երևի զոհ է իր պատասխանից: Ու ասում է, տարութերելով գլուխը.

- Երևի շափն անցկացրի, գազանների լեզուն այնքան էլ հեշտ չէ հասկանալ: - Հետո նորից է մանկացած ժպտում: - Զարմանալի բան է, -ավելացնում է նա, -այսօր ոչինչ չի ազդում իմ տրամադրությանը: Ոչինչ: Եվ զիտե՞ս ինչու: Մի լավ հոդված եմ ուղարկել տպարան: Կարդացի թե չէ, բարձրացավ տրամադրությունն: Ոչ մի բառ չփոխեցի, կետ անգամ չեմ դրել: Այնպես ու ուրախացա, ասես ես եմ զրել: Շատ լավ հոդված է: Թեև երկու անգամ կարդացի, բայց վաղը, տպագրվելուց հետո, նորից եմ կարդալու: Տպագրվածն ուրիշ է: Լավն ավելի լավ է դառնում: Բայց, ընկեր Լևոնյան, -ըստ սովորության երկարացրեց խմբագիրը, - այդպես պետք է զրել: Իսկ հիմա անցնենք գործի: Ժամանակ չունեմ: Համալսարանն ավարտեցիր, չէ՞:

- Այո՛, ընկեր Սարյան:

- Դե, ուրեմն, շրջկոմում վերջացրու գործերդ, որովհետև որոշել ենք քեզ մեր խմբագրությունում պահել:

Նա կրկին բարձրանում է տեղից ու ինձ է նայում՝ թերևս զարմանքի ու շնորհակալությունների սպասելով, որ անպայման կլինեին ընդամենք մեկ օր առաջ: Մե՛կ օր: Բայց ես լուս եմ ու չեմ նայում նրան, և խմբագիրը մտածում է, թե չհասկացա կամ ուրախությունից կորցրել եմ ինձ:

- Առանց ավելորդ նրբավարության կասեմ, որ դա մեծ պատիվ է քեզ համար: Շա՛տ մեծ պատիվ: Ես ինքս մի քանի խմբագրություններում եմ եղել մինչև այստեղ հասնելս: Այո, այո՛: Սև աշխատանք եմ կատարել: Հանրապետական կուսակցական թերթում աշխատելը ամենամեծ պատիվն է լրագրողի համար: Դա ականջիղ օր արա, ընկե՛ր Լևոնյան: Դու արդեն կուսակցության խոսքը պետք է հասցնես ժողովրդին: Այո՛: Եվ հետո, և հետո, սա ել իմացիր, որ ուրիշ ոչ մի տեղ մարդ այնքան ճանաչում չի գտնում, որքան թերթում: Տպարանակի հա ոց է: Այնպես, որ արագորեն շրջկոմում հանձնիր գործերդ: Եթե ձգձգեն, տեղյակ պահիր ինձ: Այսինքն, կուզե՞՞ս զանգահարեմ...

Արդեն չխոսել չեմ կարող:

- Կարիք չկա, ընկեր Սարյան, ես արդեն ազատված եմ շրջկոմից:

- Իսկապե՞ս: Դե ուրեմն ոչ մի արգելք չկա: - նա նայում է ինձ ու հավանաբար ինչ-որ բան է տեսնում, որովհետև հանկարծ թեքվում է սեղանին,-սպասիր, այսինքն, ինչպե՞ս ո թե ազատված ես:

- Ինձ հեռացրին աշխատանքից:

- Հեռացրի՞ն, ինչո՞ւ:

Եվ հանկարծ ինձ այնքան ավելորդ է թվում այս ամենը: Զգում եմ, որ խոսել չեմ կարող: Ինչպե՞ս բացատրեմ: Այնտեղ բյուրոն մի քանի ժամ տևեց, և ես այդպես ել մինչև վերջ չհասկացա, թե ինչու ինձ հեռացրին աշխատանքից: Հիմա ես ինչպես մի քանի խոսքով ասեմ: Իսկ եթե միանգամից հայտնեմ, թե ֆելիետոնի համար եր, գուցե և չհավատա: Ի՞նչ ասեմ:

- Ինչո՞ւ հեռացրին, ա՛յ տղա:

- Չգիտեմ,-ասում եմ ես:

- Այսինքն՝ ինչպե՞ս չգիտես: Ի՞նչ ասացին:

- Ասացին, որ ես հարբեցող եմ, ձախողել եմ աշխատանքները, հակասովետական ելույթներ եմ ունեցել, խախտել եմ կարգապահությունը... - ասում եմ ես արագ, բարձրաձայն, զգալով, որ նորից սեղմվում է անիծյալ կոկորդս:

Կարծում էի չի հավատա, կմտածի, թե հիմարաբար կատակում եմ, կծիծաղի նույնիսկ, բայց խմբագիրն անմիջապես հավատաց: Կնճիռներ կուտակվեցին աշքերի մոտ, աթոռը ետ քաշեց՝ թիկունքից բռնած, և նստեց իմ առջև՝ շփոթված ու մտահոգ:

- Այդպես էլ ձևակերպեցի՞ն:
 - Այո՞:
 - Եվ փաստեր ունեի՞ն: Ապացուցեցի՞ն:
 - Չէ՛, ինձ էին ստիպում ապացուցել, որ նապաստակ չեմ:
 - Մի՛ կատակիր,-բարկացավ նա,-սա ավելի լուրջ բան է, քան քեզ թվում է:
 - Չե՛մ կատակում,-ասացի ես: Միթե՞ ես կարող էի կատակել: Պարզապես չգիտեի ինչ անել: - Չե՛մ կատակում,-ասացի ես,- Բաղամյանը շատ էր ուզում ինձ հեռացնել և հեռացրեց:
 - Իսկ Բաղամյանն ի՞նչ ուներ քեզ հետ:
 - Վեզիրյանի ընկերն է:
 - Ի՞նչ-զարմացավ խմբագիրը: - Որտեղի՞ց գիտես: - հետո լսեց ինձ կիսախուփ աշքերով, փափոխ մատներով անձայն թմբկահարելով սեղանը: -Դա ... տհաճ պատմություն է: Իսկ Վեզիրյանի մասին ոչ մի խոսք չեղա՞վ:
 - Ես ասացի, բայց ոչ ոք ուշադրություն չդարձրեց:
 - Դաա՞ ... Հիմար չեն: Բայց այնտեղ իո մենակ Բաղամյանը չէ՞ր: Բյուրոյի անդամները ի՞նչ էին ասում:
- Ես քմծիծաղ տվեցի ու թոթվեցի ուսերս:
- Մեկը միայն պաշտպանեց, և շուտով նրա հարցն էլ են քննելու:
 - Դաա՞ ... Ասենք, շրջկոմի բյուրոյի անդամն ի՞նչ պետք է ասի, եթի քաղկոմի առաջին քարտուղարն է խոսում: Դա ... տհաճ պատմություն է: Շատ տհաճ: Եվ հարցն այն է, որ չես կարող ֆելիկետոնի հետ կապել: Ապացուցել չես կարող: Խորամանկ է մտածված: -Երկար կարմրացնելու աստիճան շփում էր ճակատը: -Հիմա ի՞նչ ես որոշել անել: Կուսշրջկոմի բյուրոյում կարո՞ն է արդարանալ:
 - Չգիտեմ, ընկեր Սարյան:
 - Դե դու էլ ի՞նչ ես՝ չգիտեմ, հա չգիտեմ: Իսկ ո՞վ պետք է իմանա, -բարկացավ խմբագիրը, - քո փոխարեն կյանքում ոչ ոք ոշինչ չի անելու, ո՞չ հիմա և ո՞չ էլ հետո: Այդ մեկը հաստատ իմացիր: Գուցե և սա հակառակ է ինչ-ոք սկզբունքների, բայց այդպես է: Դու անպայման պարտավոր ես արդարանալ նաև այն պատճառով, որ անմեղ ես և, ապա մաքուր կենսագրության հարց կա: Այդ հեռացումը ամբողջ կյանքում կիետապնդի քեզ: Այո՞, այո՞, թեև

արդարանալու դեպքում անգամ հետապնդելու է: Կյանքիդ ամեն մի սանդուղքի վրա միշտ էլ կգտնվի մեկը, որը հարկ կհամարի քրքրել փաստաթղթերդ ու այդ հեռացումը մեջտեղ կրերի: Եվ մինչև կրննեն, կգտնեն նաև քեզ արդարացնող թղթերը, ամեն ինչ ուշ կլինի: Այդպես է: Ի վերջո կասեն՝ ուրեմն մի բան եղել է, որ քննել են, հեռացրել են: Ուրեմն մի բան եղել է, այդ «մի բանը» միշտ կմնա քո կյանքում:

- Բայց ես ի՞նչ անեմ: Ի՞նչ կարող եմ անել: Ես, իհարկե ուզում եմ, բայց ինձ ո՞վ կլսի: Քաղկոմ պետք է գնամ, բայց հենց նույն քաղկոմի քարտուղարն է ինձ հեռացնողը, Կենտկոմ կարելի է դիմել, բայց քաղկոմի նույն այդ քարտուղարը Կենտկոմի բյուրոյի անդամ է: Նրա՞ն կլսեն, թե ինձ, Նրա՞ն կհավատան, թե ինձ:

- Շա՞տ ես խոսում: Աշխա՞ր է կործանվում: Եթե դու ճիշտ ես, ապա միշտ էլ քեզ պաշտպանող կգտնվի, գուցե ուշ, բայց կգտնվի: Իսկ եթե ճիշտ չես...

- Ընկե՞ր Սարյան, միթե՞ դուք էլ եք կասկածում: Եթե այո՞ւ, ապա ես ոչ մի տեղ էլ չեմ գնա: Թող ինչ ուզում է լինի, որովհետև, որովհետև ես միայն ուզում եմ, որ դո՞ւք ինձ հավատաք, միայն դո՞ւք...

- Դե հենց դրա համար էլ պետք է արդարանաս: Ա՞յ տղա, այ հոգիս, հենց միայն մի բան մտածիր, ես հո չե՞մ կարող աշխատանքից հեռացված մարդուն մեր խմբագրություն ընդունել: Ի՞նչ կասեն, խմբագրության աշխատողը պետք է ամենամաքուր, ամենաանբիծ կենսագրությունն ունենա:

- Իսկ ես ե՞րբ եմ խնդրել, որ ինձ աշխատանքի ընդունեք:

- Դե՞ն, դե՞ն, կեցվածք մի ընդունիր: Ես եմ ուզում: Ե՞ս: Նստիր, նստիր, ասում եմ: Այո, այո, ե՞ս եմ ուզում, բայց ինձ հարկավոր է, որ քո վերաբերյալ որեւէ խոսակցություն չլինի: այ թզ է: Սրա՞ն տեսեք, պոզա է ընդունում իր դասախոսի մոտ... Իհարկե, ես հենց հիմա զանգ կտամ ձեր կուսշրջկոմի քարտուղարին... սակայն...

- Պետք չե՞,- ասացի ես սրտանց:

- Իսկ ես քեզ չեմ հարցնում, սրա՞ն տեսեք...- խմբագիրը սեղանի վրա բացեց փոքրիկ, կարմիր գրքովկը և երեք համար հավաքեց կարմիր հեռախոսի սկավառակով: - Ալո՞, բարև ձեզ, Սարյանն է խմբագրությունից: Ոչի՞նչ, շնորհակալություն: Բարին բարի է, եթե ուզենաք: Ձեզ մոտ, կոմսումոլի շրջկոմում մի տղա է աշխատում՝ Արտակ Լեռնյան: Այո՞ւ, այո՞ւ, նա է: Հիմա նրան նեղում են՝ ինչ-որ կոմսումություն են անում: Այո՞ւ, և ես, ճիշտն ասած, այլ բան եմ կասկածում: Հետո կասեմ: Դրա համար էլ ձեզ հատկապես խնդրում եմ լսել Լեռնյանին և անձամբ գրադարձել: Ամենայն անաշառությամբ: Շնորհակալություն:

Նա ցած դրեց լսափողը, ու թեն ինձ թվում էր, թե հիմա կժպտա, բայց չժպտաց, այլ ասաց խիստ, մուգ կապույտ աշքերով.

- Բայց եթե նրանք ճիշտ լինեն, աշքիս չերեսաս: Գնա՞ :

Երբ դուրս էի զալիս, երկու մարդ մտան խմբագրի մոտ, և ես լսեցի, որ խմբագիրն ասում էր նրանց.

- Զարմանալի բան է: Այսօր ոչինչ չի զցում իմ տրամադրությունը: Եվ զիտե՞ք ինչո՞ւ: Մի լավ նյութ եմ ուղարկել տպարան...

Աշխարհի Ամենամեծ Ամաչողը

Առաջին հարկում հանկարծ կանգ առա ու վերև նայեցի: Այս ե՞րբ իջա: Երեք հարկ անցել էի առանց զգալու, որ քայլում եմ: Ոչինչ չել ու չել նկատել ոչ որի: Կանգ առա նաև փողոցի անկյունում ու կրկին ետ նայեցի, որովհետև այդ անցած ճանապարհն էլ չել զգացել: Ոտքերս շարժվում էին ակամա և արագ, ես չել կարողանում իշխել նրանց, ու շարունակում էի քայլել ինքս ել զգիտեմ թե ուր: Ժպտում էի մտքումս, խոսում խմբագրի հետ, սպառնում էի Բադամյանին: Ես արդեն հույս ունեի: Հո՛ լս: Զարմանքով էի իիշում երեկվա իմ ողբը և առավոտվա հուսահատությունը: Ի՞նչ է պատահել: Երբեք չպետք է հուսալքվել, երբեք, միշտ էլ որևէ տեղից լույս կգա: Ահա, թվում է ոչինչ չի փոխվել, ես նույն հեռացվածն եմ, ինչ երեկ էի և երկու ժամ առաջ, բայց իիմա անցել է ամեն ինչ, ես ինձ թեթև եմ զգում և շորերս էլ կարծես թե ոչինչ: Ուրեմն ամեն ինչի աղբյուրը մեր մեջ է: Դրսից կարող են քար նետել ու պղտորել այդ աղբյուրը, բայց ակը, միևնույն է, կվճիտանա, կպարզվի, կմաքրվի, եթե ձեռք չտան այլս և եթե խոստանան միայն, որ ուրիշներին թույլ չեն տա անելու այդ: Աղբյուրը միշտ էլ պատրաստ է պարզվելու: Ուրեմն, քար մի նետեք, ի՞նչ կլինի, քար մի նետեք, այ մարդիկ:

«Սևան» հյուրանոցի պատի տակ մի խումբ մարդիկ են հավաքված: Սկզբում ինձ թվում եք՝ ճանապարհորդներ են, ապրելու տեղ են որոնում: Բայց, չէ՝, նրանց մեջուեղում երևում է մեր քաղաքի նշանավոր խենթերից մեկի գլուխը: Նա բարձրահասակ է, նիհար, խոիվ մազեր ունի ու զարմանալի պարզ աշքեր, և երբ բարձրացնում է աշքերը, շատ է նմանվում Հիսուսին:

Պառավ կանայք նրան տեսնելիս խաչակնքում են ու շուպում են ինչ-որ փալասների միջից փող հանել ու դնել նրա ոտքերի տակ, գետնին: Նա մուրացկան չէ, չի պարզում ձեռքը և ոչ էլ շրջված գլխարկ է դնում ոտքերի տակ, և գուցե հենց այդ պատճառով նրան բոլորից շատ են փող տալիս: Նայում է մարդկանց պարզ, վճիռ աշքերով ու ոչինչ չի խոսում, ո չ մի բառ, բայց երբ փող են տալիս, ձեռքերով ծածկում է դեմքն ու մրմնջում է կամացուկ.

- Ամաչում եմ, ամաչում եմ: Ախր շատ եմ ամաչում:

Նա հանդարտ, մեղմ, խաղաղ բնավորություն ունի, և մարդիկ, հատկապես հարբածները, սիրում են նրա հետ խոսել, որովհետև նա մեր քաղաքում միակն է, որ ոչ մի հարցի չի պատասխանում, չի առարկում ու չի վիճում երբեք: Իսկ շատերը կան, որ ուզում են ինչ-որ բան ասել և ուզում են որ այդ ինչ-որ մի բանը լսի ուրիշը, լսի ու չպատճախանի: Կարողանա լսել: Այդ արտասովոր մարդը կարծես թե ստեղծված լինի ուրիշներին լսելու համար: Հաճախ եմ տեսել, թե ինչպես որևէ մեկը կանգնած նրա դիմաց օրորվելով ասում է.

- Բա, ախաղեր ջան, էսպես պատահեց: Իսկ իիմա ինձ ասում են՝ զնա՛: Ո՞նց զնամ, դե ասա, ո՞նց զնամ: Չես խոսում, չէ՞: Բա՛, էղպես է, ախաղեր ջան: Դժվար է: Ես զիտեմ, դու ինձ լավ ես հասկանում:...

Իսկ խենթը նայում է խաղաղ, պայծառ ու տխուր աշքերով ու ոչինչ չի ասում: Բայց ինձ թվում է, թե նրա հետ խոսելուց հետո մարդիկ մի տեսակ թեթևացած ու խաղաղ են հեռանում՝ եկեղեցուց ելնող խոստովանողի նման: Նրանք հեռանում են, իսկ խենթը արձանացած՝

անցնողներին է նայում տիսուր հասկացող աչքերով և ոչինչ չի խոսում, մինչև մեկը փող է նետում նրա ոտքերի տակ: Այդ ժամանակ նա անմիջապես ծածկում է դեմքն ու մրմնջում է կամացուկ:

- Ամաշում եմ, ամաշում եմ: Այս շատ եմ ամաշում:

Նրան չճանաչող մարդկանցից ոմանք, լսելով նրա խոստովանությունը, կանգ են առնում ու տարութերում գլուխները:

- Ամաշում ես, զնա աշխատիր, ինչո՞ւ ես մուրացկանություն անում: Գետինն էլ չես մտնում, զցում ես մեր քաղաքի պատիվը: Եվ ի՞նչ է անում միլիցիան, ինչո՞ւ սրանց չեն հավաքում, եղբայր...

Բայց որովհետև խենթը նրանց է նայում, չեն դիմանում նրա անմեղ, աստվածային հայացքին ու հեռանում են շտապով:

Ասում են, թե ամեն քաղաք իր խենթն ունի: Ինձ թվում է, թե այդ տեսակետից մենք բոլոր քաղաքներին անցել ենք: Մեր խենթերի թիվը մեծ է, և նրանցից յուրաքանչյուրը նշանավոր է յուրովի: Իհարկե, նրանց թագն ու պսակը Կարաբալան է, Հեմինգուեյի դեմքով ծաղիկների այդ խենթ սիրահարը, ծաղիկների բանաստեղծն ու երգիչը, որ ամեն առավոտ հայտնվում է այս մեծ քաղաքում՝ գարունով լեցուն թաց զամբյուրը թևին, ու դանդաղ քայլում է փողոցներով տնից-տուն և սրճարանից-սրճարան՝ առանց վարձի ու ակնկալության բաժանելով իր ծաղիկները: Մի բաժակ բան տաս՝ կիսմի, չես տա՝

- Ա՛ռ, ա՛ռ ծաղիկը, բան չեմ ուզում, անո՞ւշ ջան,- կասի նա

Ոչ ոք չզիտի նրա իսկական անունը, չզիտի, թե նա որտեղից է ծաղիկներ բերում և կամ հենց ինքը երբ է գրավել այս հին քաղաքը: Ասում են, թե նա եկել է այստեղ առաջին ծաղիկների հետ և վերջին ծաղիկների հետ էլ կգնա, որովհետև առանց Կարաբալայի էլ ի՞նչ ծաղիկ ու զարուն:

- Հե՛յ, հե՛յ, երգ եմ բերել, ե՛րգ:

Դալուկեն է: Նա պատերազմի հետ հայտնվեց մեր քաղաքում: Պատերազմի օրերին կոշտացան երգերը, դարձան քայլերգեր: Վարդի և սիրո ժամանակը չեր, այդ լավ էին հասկանում թիկունքում մնացած դեկավարները: Բայց դե խենթ էր Դալուկեն: Խենթի դեմ ի՞նչ անեին: Ու որովհետև խենթացած էին նաև ջահել աղջիկները, դրա համար էլ շրջապատում էին Դալուկենն, հաց էին տալիս ու խնդրում էին երգել: Քայլերգ չէ, չէ՝, սիրո ու վարդի երգեր

Ու կանգնում էր Դալուկեն բակի մեջտեղում, խփում էր իր քրքրված զինվորական շինելին, խփում էր իր քրքրված «մատնաքաշ» շալվարին, տրեխները թափով գետնին էր զարկում ու երգում էր իր ծիծառկոտ դեմքով, շողացնելով աչքերը.

*Դարիք դուշ եմ, վարդի փուշ եմ
Դալուկե, դալուկե, դալուկե ջան*

- Է՞ դ չէ, է՞ դ չէ, խնձո՞րը,-աղաղակում էին աղջիկները:

Ու Դալուկեն հոհոում էր երջանիկ, աչքով էր անում նրանց:

*Խնձոր զցեմ ֆռփոս,
Դալուկ, դալուկ, դալուկ շան
Թուշդ կծեմ, մումոս...*

Ու քրջում, ու լալիս էին աղջիկները և իրենց բաժին սև հացի կտորներն էին նետում նրա մաշկած, քրքրված, հողոտ մաղախի մեջ:

Չգիտես ինչ հանկարծահաս ցանկությամբ մոտենում եմ Քրիստոսին նման, աշխարհից ամաչող խենթին, մոտենում և ուրիշների հետ նրան եմ նայում: Նա էլ մեզ է նայում: Եվ ոչ չի խոսում: Զարմանալի՝ աչքեր ունի խոշոր, երկնազույն, թաց ու թախծոտ աչքեր և այդ աչքերի մեջ այնպիսի՝ կարեկցական, հասկացող բան կա, այնպիսի՝ մի խորունկ մաքրություն... Ասում են, Չինգիզ խանը, թե Լենկթեմուրը մի եղնիկ է ունեցել, արյունոտ կոխվներից ու կոտորածներից հետո, եթե գազանացած տուն է դարձել, մոտ է կանչել եղնիկին ու երկար նայել նրա աչքերի մեջ, որ չգծվի, նայել, նայել ու մաքրվել է: Ինձ թվում է, թե այս խենթի աչքերն այն եղնիկի աչքերին են նման: Միայն չեմ հասկանում, թե նա ինչից է ամաչում, թե ի՞նչ է պատահել նրան՝ անմտության սահմանագծից այն կողմ, և ինչո՞ւ է նա այս աշխարհ բերել միայն այդ խոսքերը.

- Ամաչում եմ, ամաչում եմ: Այս շատ եմ ամաչում:

Տարիներ առաջ հոգեբուժական հիվանդանոցում ես մի մարդու տեսա, որ քայլում էր սենյակի մի ծայրից մյուսը, շրջվում, կանգ էր առնում, նայում էր խիստ ու շշնջում.

- Սրիկա:

Քայլում էր մինչև մյուս ծայրը, կանգ էր առնում և կրկին շշնջում էր խիստ.

- Սրիկա՛:

Եվ այդպես՝ ամբողջ օրը, մինչև կապում էին մահճակալին, որ քնի:

- Ո՞վ է նա,-հարցրի ծանոթ բուժքրոջը...

- Գնդապետ է եղել,-ասաց նա:

Ու ես հասկացա: Ես պատկերացրի, թե նա ինչից կարող էր խելազարվել: Իսկ այս խենթին չեմ հասկանում: Այսինքն, ո՞վ գիտե, գուցե սա հենց այն մարդն է եղել, որին գնդապետը իր յուրաքանչյուր շրջադարձին անվանել է «սրիկա»: Անվանել և դրանից խելազարվել է: Ես ի՞նչ գիտեմ: Իսկ այս մարդն էլ խելազարվել է, որ իրեն սրիկա են անվանել: Ի՞նչ իմանաս: Ասում են. ամեն մարդ յուրովի է խելազարվում:

Կողքից, ինձ թեթևակի հրելով, առաջ է գալիս նիհարավուն մի ծերունի, մոտենում է խենթին ու նրա գրպանն է դնում մի ճմրթված թղթադրամ:

- Ամաշում եմ, ամաշում եմ...-դեմքը ձեռքերով ծածկում է Քրիստոսի նման մարդը:
- Մի՛ ամաշիր,-հանկարծ բղավում է ծերունին, ես է քաշվում, նայում է ու նորից բղավում է՝ թատերականորեն շարժելով ձեռքերը: - Մի՛ ամաշիր, աշխարհում դու երևի միակ մարդն ես, որն իրավունք չունի ամաշելու: Այլս ամոք չկա: Վերջ: Ամոթը որպես դասակարգ վերացել է:

Հիմա կլուծվի հանգույցը, ծերունին երևի ճանաչում է այս մարդուն: Ես ու ինձ հետ միասին մի քանի հոգի միաժամանակ հարցնում ենք նրան.

- Ո՞վ է նա: Ինչի՞ց է խելազարվել: Ի՞նչ մարդ է եղել:

Ծերուկը մեզ է նայում զարմացած ու չգիտես ինչու կարմրում է:

- Ես ի՞նչ իմանամ, ով է,-կրկին բղավում է նա,- մարդ է, ելի՛, բայց մարդ է, որն ամաշում է: Ինձ համար միևնույն է, թե ինչից է ամաշում: Կարևորն այն է, որ նա ամաշում է, իսկ ես չեմ ամաշում, դու չես ամաշում, նա չի ամաշում, ոչ ոք չի ամաշում, ոչ ոք:

Նա հեռանում է՝ բղավելով ու քրթմնջալով, իսկ շուրջս չարացած աղմկում են:

- Մի զիժ էլ երևի դա է:
- Չի՛, ջանրմ, հարբած էր բիձուկը: Տեսնես առավոտ շուտ որտեղ է կոնծել:

Գուցե և հարբած էր: Հավանաբար հարբած էր, որովհետև անկյունում կանգ առավ ու օրորվեց, բայց նրա զնալուց հետո լուրջունն ավելի խորացավ, հանկարծ մի տեսակ դժվար դարձավ խենթ-ամաշողի երկնագորյան, անմեղ աշքերին նայելը: Մարդիկ ցրվեցին շտապով, իսկ նա շարունակեց կանգնած մնալ, երկար հասակով ձուլված պատին, զլուխը բարձր ու թեքած աջ, թաց աշքերը երկինք հառած: Ես հանկարծ խնկի սուր ծխահոտ զգացի, և ինձ թվաց, թե փոքրիկ-փոքրիկ եմ, ու տասու ինձ տարել է Խորանավանք: Մոմ է վառել, ծնկել է սև, խոնավ քարին, զլուխը բարձրացրած աղոթում է շերմեռանդորեն, հետն էլ ցավեցնելու չափ ամուր բռնել է ձեռքս ու ստիպում է, որ ես էլ ծնկի գամ:

- Չոքի, չոքի, բալա ջան,- ասում է նա:
- Ախր ո՞նց չոքեմ, է՛, լացակումած ասում եմ ես,- ախր ես հոկտեմբերիկ եմ:
- Չոքի, ասում եմ, ես քո հոկտեմբերիկ բոյը թաղեմ,-անիծում է տատս: - Տե՛ր աստված, ես մի մատ երեխին էլ են անաստված դարձրել: - Ու որովհետև համառում եմ, սկսում է համոզել քաղցրորեն,-չոքի՛, քե մատադ, որ տուն զնանք՝ մամպաս կտամ, խնձոր կտամ, չոքի՛, դարդ տանեմ, ցավդ տանեմ: Դե լա՛վ, լա՛վ, գոնե էս մոմը քո ձեռքով վարի:

Ու ես խնձորից, մոնապանսեյից զայթակդված, որ Շամշադինի շրջանի Չորաթան գյուղն էր հասել «մամպաս» անունով, դավաճանում եմ հոկտեմբերիկյան կազմակերպությանը և մեղրի

հոտ արձակող մոմը վառելով՝ կպցնում սև, փայլուն, փափուկ քարին: Ու իմ մոմի լույսը մի շող էլ է ավելացնում պատից կախված, գունատ, տխուր, երերուն սրբապատկերներին...

Ես ձեռքս գրպանս եմ տանում ու շոշափում երկու հատ ոռորդիանոցները: Ուզում եմ երկուսն էլ այս տարօրինակ ամաչողին տալ, բայց հիշում եմ, որ քաղցած եմ, շատ եմ քաղցած: Ավելի լավ է մեկը նրան տամ, իսկ մյուսը ինձ պահեմ: Այդպես արդար կլինի: Ես թղթաղրամը նրա գրպանն եմ մտցնում ու հեռանում եմ արագորեն, որպեսզի չլսեմ, թե նա ինչպես է կրկնում իր այն աշխարհից բերած միակ, անհասկանալի զարհուրելի հիշողությունը:

Տիկնիկների Օրեւոքվ

Տիկնիկային թատրոնի հսկիչ կինը տում չհարցրեց ինձնից:

- Շնորհավո՞ր լինի,-ասաց հանկարծ նա հուզված ինձ ներս թողնելով,-Նանարիս նման աղջիկը բախտավորություն կրերի ձեր տունը:

- Շնորհակալություն, ասացի ես:

- Մենք նրան շատ ենք սիրում,-ասաց հսկիչ կինը՝ բրդե շալն ուղղելով: - Ես նրան իմ աղջկա պես սիրում եմ:

- Լավ է, որ աղջկա պես:

- Ինչո՞ւ,-ապշեց նա:

- Շա տ խանդոտ եմ,-գլուխս օրորեցի ես:

Նա ծիծաղեց սկզբում կամացուկ, հետո բարձրաձայն, բաց թողնելով շալը, հմայվածի պես ինձ եր նայում ու շարունակում էր ծիծաղել սրտանց՝ տեսնելով դեմքիս լրջությունը: Երևի խենթի տեղ դրեց: Երևի ես հիմա ինչ-որ չափով նման եմ այն խեղճ, ամաչկոտ Քրիստոսին:

- Դահլիճ մտիր,-արցունքն աչքերին ասաց հսկիչ կինը,-հենց կողքին աթռո կա:

-Գուցե այստե՞ղ սպասեմ:

Նրա ծիծաղը գալիս էր: Նա ուզում էր ազատվել ինձանից, որպեսզի մի լավ ծիծաղի: Ես գիտեի, ինձնից հետո նա փողոց է դուրս գալու, քրջալու է բարձրաձայն և հարցնողներին ոչինչ չի կարողանալու բացատրել, ծիծաղելու է՝ ձեռքերն անօգնական թափահարելով:

- Մտի՞ր, մտի՞ր,- փոթկաց նա,-հենց դրան կողքին աթռո կա: - Նա նորից փոթկաց՝ շալի ծայրով բերանը ծածկելով ու վախենալով, թե ես կվիրավորվեմ, ծիծաղից խեղդվելով ասաց,- ախր շա տ մազալու տղա ես:

- Խնդրում եմ այդ մասին Նանարին ոչինչ չասեք,- մատս շուրթերիս տանելով շշնչացի ես: - Նա չգիտի, որ ես մազալու եմ: Թող դա մեջ գաղտնիք մնա, հա՞:

Հսկիչ կինը թափահարեց ձեռքերն ու իրեն փողոց նետեց, իսկ ես կամացուկ բացեցի դահլիճի դուռը, շոշափելով գտա աթռոն ու նստեցի:

Բեմը վառվում էր լույսերից, փոքրիկ վարագույրները փողփողում էին բոցի լեզուների նման, ձգվում վեր: Նվազը հնչում էր հանդիսավոր ու ցնծագին: Երևի շուտով վերջանալու էր ներկայացումը: Ներկայացումները, որ թատրոնում էլ լինեն դրանք, հանդիսավոր ու ցնծագին են ավարտվում, ըստ որում՝ վառվում են բոլոր լուսարձակները, լապտերներն ու լապտերիկները: Ու ամեն ինչ շողում է, փայլում ու հուրիրում: Այդպես է, մարդը սիրում է, եթք

ամեն ինչ լավ է վերջանում, երբ բարին հաղթում է չարին, երբ վառ են բոլոր լուսերը: Այդ ժամանակ հեշտ է լինում մուրի միջով տուն գնալը: Սա այն դեպքն է, երբ բոլորի շահերն ել համընկնում են: Նրանք, ովքեր ուզում են, որ հանդիսականը լավատես լինի, որ վառ հավատ ունենա ապագայի նկատմամբ և կարողանա տանել առօրյա անհեթեթություններն ու հոգսերը, հասնում են իրենց նպատակին: Իսկ հանդիսատեսն էլ իր հերթին դեմ չէ, որ իրեն մի քիչ խարեն: Ոչի՞նչ, միայն թե միշտ հաղթանակի ճշմարտությունը, բարձր հնչի արդարության փողը, միայն թե այստեղ՝ բեմի վրա, կինոներում, գրքերի մեջ ամեն ինչ պայծառ ու խաղաղ ավարտվի:

Երկու տարի առաջ ես մի փոքրիկ ու զգայացունց պատմվածք էի գրել: Պատմվածքի վերջում մեռնում էր հերոսի մայրը: Կարդացի մորս, լաց եղավ: Նա լաց էր լինում, իսկ ես հրձվում էի, ուրեմն՝ լավ եմ գրել, եթե լաց է լինում: Սպասում էի գնահատականին, իսկ մայրս դեռ լաց էր լինում, հետո ասաց արցունքի միջից.

- Տղա ջան, լավն ա, համա մեղք ա էդ կնիկը:
- Դե ի՞նչ անեմ, ա՛ մեր,-հպարտ-հպարտ ժպտացի ես:
- Առանց էն էլ ամբողջ կյանքում տանջվել, չարչարվել ա, ինչի ես սպանում, ա՛ բալա:

Ես ներողամիտ քմծիծաղ տվեցի:

- Ինչ՝, որ դու ուզես, չե՞ս կարող էնպես անես, որ չմեռնի,-հավատով հարցրեց մայրս:
- Ինչո՞ւ չեմ կարող:
- Դե, եղպես արա, էլի՞:
- Ախր է՞ն չի լինի, այ մամ, սա պատմվածք է: Որ նա չմեռնի, դու էլ լաց չես լինի:
- Իսկ դու ինչի՞ ես ուզում, որ ես լաց լինեմ,-տիսուր հարցրեց մայրս,-քի՞չ եմ լաց լինում... էնա աշխարհս տեղով մեկ լաց ա, էլի:

Ի՞նչ ասեի, հո նրան չպետք է բացատրեի թեմայի, այուժեի, զաղափարի էռթյունը, որոնցից ե՛ս էլ առանձնապես բան չի հասկանում: Դրա համար էլ փորձեցի խուսանավել.

- Ա՛ մամ, դու էլ ինչո՞ւ ես սրտիդ այդքան մոտ ընդունում: Սուտ է, չէ՞: Ես եմ գրել, ես էլ քեզ ասում եմ, որ սուտ եմ գրել, հենց այնպես: Մեկ չի՞, մեռնում է, թե չի մեռնում:
- Չե,-ասաց մայրս,-որ սուտ լիներ, չիր թողնի, որ մեռնի: Տիսուր սուտ չի լինում:

... Իսկ փոքրիկ բեմի վրա մեծ իրադարձություններ էին կատարվում: Հայոց բարի ու ծեր թագավորը ձեռքը ճակատին, հուզված այս ու այն կողմ էր նետվում՝ ճանապարհների վրա որոնելով իր Արի որդուն, որը կռվի էր գնացել թշնամիների դեմ: Իսկ երբ թագավորը սուզվեց ինչ-որ տեղ, ձախ կողմում, աջից հայտնվեց հեծյալ սուրհանդակը: Նա թագավորին էր փնտրում, բայց բավականին խելոք էր՝ երկար չորոնելու համար: Նա պարզապես մոտեցավ

բեմեզրին թեքվեց ձիուց ու միանգամից դիմեց դահլիճում նստած փոքրիկ հանդիսականներին.

- Երեխաներ, ես սուրհանդակն եմ Արի իշխանի, եկել եմ հայտնելու թագավորին, որ նրա որդին, մեր խիզախն ու քաջ Արի իշխանը, հաղթանակած տուն է վերադառնում: Չգիտե՞ք, թե որտեղ է թագավորը: Ո՞ր կողմը գնաց:

- Այն կողմը, այն կողմը,-աղաղակեց դահլիճը:

- Ո՞ր կողմը,-գլուխը թափահարեց սուրհանդակը:

- Զախ, ձախ,-համերաշխ որոտացին փոքրիկները:

- Այս, -մարմնով հակառակ կողմը ցույց տվեց սուրհանդակը:

- Ո՞չ, ո՞չ,-աղմկեցին երեխաները: - Դա աջն է:

- Հայ, ուրեմն ձախն այս է,-մարմնով մյուս կողմը դարձավ նա,- շնորհակալություն, իմ փոքրիկ բարեկամներ: Դե, ես անզրագետ մարդ եմ, դպրոց չեմ գնացել, աջն ու ձախը չգիտեմ:

Գեղարվեստական դաստիարակության հետ միասին մի փոքր էլ քաղաքական մարմնամարզություն պարապելուց հետո սուրհանդակը ի վերջո գտավ թագավորին, և երբ նրան հայտնում էր որորու հաղթանակը, իր ստվարաթղթե այրուձիռվ տեղ հասավ նաև Արի իշխանը: Զիլ հնչեցին շեփորները, որոտացին թմբուկները, հետո բոլորն էլ մեկ աջ, մեկ ձախ թեքվելով, գլուխներն ուժգին թափահարելով, խոպոտ ձայներով երգեցին մի երգ, որը փառաբանում էր արդարության հաղթանակը և ցուեսություն էր հայտնում փոքրիկ հանդիսականներին:

Վարագույրն իջավ ծալ-ծալ, ու սրահը թաղվեց կիսախավարի մեջ: Դահլիճն աղմկեց, ալեկոծվեց, թնդացին ծափերը, ձռնչացին աթոռները, երեխաները ձայն տվեցին իրենց մայրիկներին, գտան իրար ու բարձրածայն խոսելով, տպավորություններ փոխանակելով, հուզված ու շառագրունած դեմքերով եկան ու անցան իմ մոտով, դրնից դուրս տարան աղմուկն ու ուրախությունը: Միանգամից ամայացավ դահլիճը, դարձավ սառն ու անհրապույր: Եվ անիմաստ: Երևի ոչ մի բան այնքան անիմաստ ու դատարկ չէ, որքան թափուր դահլիճը: Թերևս մեկ էլ ռադիոընդունիչը առանց մարտկոցների: Զե, այս իմաստով թե նայենք անիմաստ բաներով լցված է աշխարհը: Ինչեցե, այս միտքն ինձ դուր եկավ, ես գրպանից հանեցի ծոցատերս ու սկսեցի գրել:

- Արտակ, -հանկարծ լսեցի Նանարի ձայնը:

- Այստեղ եմ, -ասացի ես՝ դուռը կիսաբաց անելով ու թաքցնելով ծոցատերս:

Բայց դուք ետևում ոչ-ոք չկար: Գլուխս դուրս հանեցի, սակայն Նանարը միջանցքում էլ չկար: Տարակուսած շուրջու էի նայում, երբ կրկին լսեցի նրա ձայնը:

- Արտակ, ես այստեղ եմ:

- Որտե՞ղ,- բարձրաձայն հարցրեցի ես,-շարունակելով աչքերով փնտրել նրան: - Որտե՞ղ ես, Նանա Ր:

- Միթե՞ դու ինձ չես տեսնում,-կամացուկ ծիծառեց Նանարը:

Ես նայեցի այն կողմը, որտեղից հնչում էր ծիծառը: Փոքրիկ մի շող լուսավորել էր բեմի վարագույրը, ծայրերից մեկը բարձրացել էր թեթևակի, և անկյունից ինձ էր նայում հուղունքն աչքերով մոխրագույն մի կատու: Կատուն մի թաթով լվանում էր դունչը, իսկ մյուսով ձեռքով էր անում ինձ:

- Եկ ինձ մոտ, Արտա՛կ, մյառ՝ ։

- Խելա՛ռ,-ծիծառեցի ես: - Ա՛յ քեզ խելառ աղջիկ: Այս ի՞նչ օք է, ամեն տեղ խենթերի եմ հանդիպում,-ծիծառեցի ես: Այսր իսկապես շատ ծիծառելի էր այդ ամենը. կիսախավար դահլիճը, լուսի շողը, կիսաբաց վարագույրը, կատուն որ լվանում էր դունչը, Նանարի ծիծառը...

- Եկ ինձ մոտ, Արտա՛կ:

- Լավ, գամ, ի՞նչ անեմ,-ծիծառեցի ես, ակամա մոտենալով վարագույրին, չիմանալով ուր նայել կատվի՞ն, որ հիմա նազով տարութերում էր պոչը, թէ սրճագույն թավշին, որի ետևում, իմ կարծիքով պետք է Նանարը լիներ:

- Սարյանի մոտ գնացի՞ր:

- Ընդ՛, ասացի ես՝ ապարդյուն որոնելով այն տեղը, որին աչքերս հառած կարողանայի խոսել Նանարի հետ: Շա տ դժվար է խոսել մեկի հետ, որին չես տեսնում:

- Ընդ՛ չեն ասի, կասեն՝ այն՝ դունչը ծիծառելիորեն մեկնեց կատուն, -հասկացա՞ր:

- Ընդ՛, ասացի ես:

- Ի՞նչ ասաց:

- Դե, վերջ տուր, -բարկացա ես, -ստիպված դիմելով կատվին, -դուրս արի, կարգին խոսենք:

- Չեմ կարող, - խեղճացավ, զլուխը թեքեց կատուն, - հիմա՝ ասա էլի, Արտակ ջա՛ն, խնդրում եմ:

- Ի՞նչ ասեմ, -զինաթափվեցի ես, -խոստացավ օգնել, զանգահարեց կուսշրջկումի քարտուղարին, նա չգիտեր, շատ զարմացավ, ասաց, որ անձամբ կզբաղվի: Դե դո՛ւրս արի:

- Իսկ դու շրջկումի քարտուղարի մոտ չե՞ս գնալու, - երկար բեղերը հարցականորեն բարձրացրեց կատուն:

- Չե՛, հավանաբար ինքը կկանչի:

- Հիմա տեսնո՞ւմ ես, որ ամեն ինչ լավ է լինելու: Իսկ դու քիթդ կախել էիր: Վա՛յ, վա՛յ, վա՛յ, ի՞նչ անեմ, ո՞նց ապրեմ, վո՞ւյ, վո՞ւյ, վո՞ւյ...

Այդ ասելիս կատուն դոդում էր, օրորվում էր բեմի վրա, թաթերով խփում էր զլիսին ու շողացնում էր աչքերը: Անհնարին էր ծծիծաղելը:

- Իսկ ի՞նչ է, պետք է ուրախանայի՞:

- Չէ՛, բայց չպետք է նաև խեղանայիր: Պետք է քայլեիր ինձ նման, ա՞յ այսպես, քիթդ բարձր պահած ու այսպէ ս թեթև արհամարհանքով ֆշացնելով վերեկից նայեիր զանազան բյուրոյականներին և զարգացած գեղջուկ քարտուղարիկներին:

- Այդտեղից հե՛շտ է խոսելը,-վիրավորված ասացի ես,-հատկապես երբ լսողները երեխաներ են:

- Դե ոչինչ, ոչինչ, մի՛ տիսրիր,-ասաց կատուն տարութերելով սանրած հոնքերը: - Դե, դե ժպտա , ամեն ինչ լավ կլինի, փոքրի կու: Ժպտա, այ այդպես: Շուտով դու կհաղթես, ու մենք պար կգանք միասին, հա՞ : Նրանք չթողեցին, որ մենք մեր հարսանիքին պարենք, բայց մենք կպարենք, չէ՞ : Դու գիտե՞ս, թե ես ինչպես եմ պարում:

Նանարն ինձ հետ երբեք այսքան ազատ չեր խոսել: Դա, և տարօրինակ էր, ե՛վ միաժամանակ ծծիծաղելի: Նա ուղղակի խաղում էր, օգտվելով այն հանգամանքից, որ ես նրան չեմ տեսնում: Իսկ ես ի՞նչ կարող էի ասել փայլուն աչքերով, մոխրագույն այդ կատվիկին, որ հիմա ցատկուում էր բեմեզրին, փափկիկ թաթիկները առաջ պարզած:

- Դու երես առած ես,-ասացի նրան,-դու պարզապես երես առած կատու ես, Դո՛ւս արի, ասում եմ:

- Իսկ դու ինձ սիրո՞ւմ ես,-հարցրեց կատուն և, ազնիվ խոսք, փայլուն հուլունքների մեջ ես սպասում տեսա:

- Դու ինձ կլինթացնես,-թույլ-թույլ բարկացա ես:

- Չէ, ասա՛, սիրո՞ւմ ես,-ձեռքերը մեկնեց կատուն:

- Չէ՛,-ասացի ես:

- Իսկ ես քեզ սիրում եմ,-ասաց Նանարը,-իսկ ես քեզ սիրում եմ,-ասաց Նանարը,-իսկ ես քեզ սիրում եմ...

- Նանա՛ր ջան,-ծծիծաղելով, երջանկացած, խոնարհ ասացի ես,-խնդրում եմ...

- Մի րոպէ՛, կատուն սուզվեց վարագույրի ետևը, և ինձ թվաց, թե ուղիղ իմ դիմաց, պատից այն կողմ, ինչ-որ դուռ բացվեց, ու ոտնաձայներ լսվեցին: Վերջապես, Նանարը դուրս եկավ երևի: Բայց չէ , ահա դարձալ երերաց վարագույրը, և անկյունում հայտնվեց կատվիկի հիմարավուն դունչը: - Դու ինձ ինչ որ բա՞ն էիր ուզում ասել, Արտակ,-թաթը ականջին դրած հարցրեց կատուն:

- Լսի՞ր,- հուսահատված ձայնս բարձրացրի ես,-հերիք չէ՝ տուն-տուն խաղանք:
- Այդ ո՞վ է սպառնում Նանարին,-հանկարծ հնչեց մի բամբ ձայն, և ես անակնկալի եկած դարձրի գլուխս: Վարագույրի մյուս կողմից ինձ էր նայում զայլը: Խոսելիս նրա ծնոտները շարժվում էին և երևում էր կարմիր երախը: -Ես քեզ կիսժու մ:
- Պետք չէ, ընկե՛ր Պավլոս,-ծիծաղեցի ես, ճանաչելով իին դերասանի դեռ մանկուց ծանոթ բասր,-ավելի լավ է Նանարին խժուեք: Մենք օրենքով ամուսնացած ենք, բայց նա հրաժարվում է տուն զալ: Չէ՝ որ դուք սովորաբար դաստիարակչական նպատակներով եք խժում:
- Իսկ Նանարը մեզ համար էր ձգձում,- կատվիկի մոտ հայտնվեց աղվեսը:
- Իմ ընկերուիի Մարոն է,-ծանոթացրեց կատուն, ու աղվեսը նազանքով խոնարհեց գլուխը:
- Ես ինձ վերջնականապես կորցրի:

- Գիտե՞ք ինչ, երիտասարդություն, աեր հարսանիքը երբեք կը օրինական չի համարվի, մինչև որ շամուսնանաք մեր տիկնիկային օրենքով,-ասաց զայլը,-քաղաքացի Արտակ Լևոնյան, բոնեք խնդրեմ ձեր հարսնացու կատվիկի թաթը: Մենք պետք է օրինենք ձեզ:

Կատվիկը առաջ էր թեքվել ու մեկնել էր աջը, ես ծիծաղելով ետ քաշվեցի:

- Բոնե՛ք, բոնե՛ք,-երախը բացեց զայլը:
- Դե լավ, եի, ընկե՛ր Պավլոս,-անկեղծորեն շփոթվեցի ես:
- Ո՛չ, ոչ՛, մեր տիկնիկային կարգով,-ասաց զայլը:
- Շտապիր, եղբա՛յր,- հորանչեց աղվեսը,- ի՞նչ ձանձրալի փեսացու ես:

Ես չգիտեի ինչ անել: Նրանք սրտանց էին ուզում, և ես վախենում էի հրաժարվելով վշտացնել նրանց: Գուցե նրանց մոտ իսկապէ՞ս այդպես է ընդունված: Եվ, ի վերջո, ի՞նչ կա դրա մեջ: Հետո, այդ ամենից բացի, ես էլ կարծես թե փոքրացել էի մի տեսակ, և ինձ բոլորովին էլ արհեստական չէին թվում այլս իմ մանկության պայծառ հերիաթների անբաժան վկաները: Ես նայում էի նրանց փայլուն աչքերին ու պարզապես շփոթված էի:

- Դե՛, շտապեցրեց զայլը:
- Ես բոնեցի կատվիկի փոքրիկ, թավշյա թաթը, որը մի պահ դողաց իմ ափի մեջ: Հետո կատվիկը մյուս թաթով շոյեց մատներս ու գլուխը կամացուկ դրեց ձեռքիս վրա:
- Ուռա՛,-որոտաց զայլը,-շնորհավոր լինի:
- Շնորհակալ եմ, ընկե՛ր Պավլոս,-ասացի ես:
- Երկար կյանք ու երջանկություն,-ձչաց աղվեսը:

- Շնորհակալությո՞ւն, շնորհակալությո՞ւն,-կրկնեցի ես շփոթված, չիմանալով ուրիշ ինչ ասել:

- Իսկ հիմա գուցե մեզ ձեր տուն հրավիրեք,-ասաց գայլը,-ես իսկապես գայլի նման քաղցած եմ:

- Իհա՛րկե, իհա՛րկե, ընկեր Պավլոս,-ասացի ես,-դե, դուրս եկեք ախր:

Աղվեսն ու գայլը անհետացան վարագույրի ետևում:

Ես թերևսացած շունչ քաշեցի և ուզեցի ազատել ձեռքս, որ դեռևս կատվի թաթերի մեջ էր, բայց Նանարը չեր թողնում: Ծիծաղելով սկսեցի ձգել կատվի թաթից, և հանկարծ տիկնիկը ուղղակի ձեռքիս մեջ մնաց: Միայն մի ակնթարթ բացվեց վարագույրը, և ես տեսա Նանարին: Հաջորդ վայրկյանին ես բարձրացրի ծանր թավիշը և կրկին տեսա նրան: Նա միայնակ կանգնած էր փոքրիկ սրահի կենտրոնում ու ինձ էր նայում փայլվլող, ծիծաղկոտ աչքերով:

- Իսկ մյուսներն ո՞ւ են,-հարցի ես ապշած:

Նա աչքերով ցույց տվեց աթոռին ընկած գայլի և աղվեսի անշունչ տիկնիկները:

- Ուրեմն բոլորը դո՞ւ էիր:

- Ըհը՝,-ասաց Նանարը:

Ես երկար նայում էի նրան, չիմանալով ինչ ասել, ձեռքիս մեջ սեղմելով փոքրիկ կատվի դեռ տաք, մոխրագույն մորթին:

- Ներիր ինձ, Ա՛րտ,-հանկարծ միանգամից տիսրած ասաց Նանարը,-սիրտս վկայում է, որ չեմ խաղալու այլս: Իսկ ես ուզում էի, որ դու տեսնես, թե ինչպես կարող եմ խաղալ:

- Ինչո՞ւ, որտեղի՞ց հնարեցիր:

- Չգիտե՛մ,-ասաց Նանարը:

Հին Քաղաքի Կործանումը

Քանդում են մեր հին քաղաքը: Օրվա տարբեր ժամերին մեկ այստեղ, մեկ այնտեղ փոշու վիթխարի սյուներ են բարձրանում երկինք, և ասում են առաջին անգամ ինքնաթիռով մեր քաղաքը եկող մարդիկ սարսափահար խուճապով փոքրիկ պատուհանների մոտ խոնված ոմբակոծիչներ են որոնում երևանյան երկնքում:

Քանդում են մեր հին քաղաքը: Թեև պատերազմը վաղուց է ավարտվել, բայց մարդիկ մինչև օրս չեն կարողանում ուղղել թիկունքները, շարունակում են պատերազմել հիմա քաղցի ու աղքատության դեմ, և այն ամենի դեմ, ինչ պատերազմի հետևանքներ անուն են կրում: Եվ ահա հացի խնդրի լուծման կորագծին զուգընթաց մեծ փոփոխություններ են կատարվում, հրամայական պահանջ է դառնում թեթև արդյունաբերության ձեռնարկությունների կառուցումը: Մարդիկ այլևս չեն կարողանում տանել գորշ ու կոպիտ գործվածքները, նրանց պետք են բարձրորակ, ծաղկավոր, թեթև ու պայծառ հազուստներ, նուրբ, նորածն բարձրակրունկ կոշիկներ և անգամ լայնեզր գլխարկներ: Ինչո՞ւ չէ: Նրանց պետք են ձյունաթույր, օսլայած վերնաշապիկներ: Պարզապես ապշել կարելի է, թե պատերազմի ժամանակ նրանք ինչպես և էին մոռացել այդ ամենը: Դրանցից հետո տրամաբանորեն ասպարեզ է լինում հոգեստը սննդի հարցը: Ուրախ երգեր են ստեղծվում, խրախուսվում են նույնիսկ քնքուշ, սիրային բանաստեղծությունները: Ճիշտ է, ոչ այնքան, որ նեղ անձնական լինեն և հետևապես՝ անբովանդակ, բայց սիրային բանաստեղծություններ, ուրեմն, կարելի է գրել: Արհմիութենական կազմակերպությունները վերակառուցում են իրենց ծրագրերը: Բոլոր հիմնարկություններին, ձեռնարկություններին և դպրոցներին կից ստեղծվում են եվրոպական պարերի խմբակներ: Անցյալում տանգոն, վալս ու ֆոլկստրոտ որպես բուրժուական ազդեցության արդյունք, մերժելն ու պարողներին հալածելը նրբանկատորեն չհիշեցնելու նպատակով, այդ պարերը այժմ ոչ թե եվրոպական այլ ժամանակակից պարեր են կոչվում: Պարի խմբակներին չմասնակցողներն այժմ համարվում են հետամնացներ և նրանց հետ երկար գրուցում են տեղկոմի նիստերում: Եվ ճիշտ են անում: Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է իմանալ այդ պարերը, որպեսզի նրա հետ տեղի չունենա այն, ինչ պատահել է պետական մի նշանավոր գործիք հետ: Լոնդոնում թե Փարիզում կազմակերպված ընդունելության ժամանակ, օտարերկրյա դիվանագաատներից մեկի կինը մեր պետական նշանավոր գործիքն պարի է հրավիրում: Եվ սկսվում է միջազգային խոշոր մի սկանդալ: Պարզվում է, որ պետական նշանավոր այդ գործիքը եվրոպական ոչ մի պար չգիտե: Նոյնիսկ տանգո կամ պա-դե-սպան: Միջադեպը մի կերպ հարթվում է, բայց պետական նշանավոր գործիքը, որն ի դեպ ոչ միայն նշանավոր է լինում, այլև խելոք ու հեռատես, լուրջ հետևողություններ է անում վերոհիշյալ դիպվածից: Հայրենիք վերադառնալով, նա եվրոպական պարի դասատուներ է հրավիրում այն բարձր հիմնարկությունում, որի դեկավարն էր ինքը, ու իր տեղակալներին, բաժնի ու բաժանմունքի վարիչներին համոզում է կանանց հետ երեկոները հավաքվել նիստերի սյունազարդ դահլիճում: Եվ ամեն օր երկու ժամ ակամա, ըստ գրաված դիրքի, իրար ետևից, իրենց կանանց թերից բռնած, պարի ուսուցչի քաջալերիշ բացականչությունների և համաշափ ծափերի ներքո պտտվում ու վարզում են պետական այրերն ու տիկնայք: Ու քանի որ պետերի օրինակը օրենք է, ապա թիշ ժամանակ անց պարերի խմբակներ են բացվում նաև մինհատրություններում ու վարչություններում, զինվորական ու քաղաքացիական հիմնարկներում, տարածվում ընդգրկում են

միութենական բոլոր հանրապետությունների ու մարզերի քաղաքներն ու գյուղերը՝ առանց բացառության:

Անցիր մեր քաղաքի որևէ խոշոր շենքի մոտով և կլսես, թե ինչպես է պարի անտեսանելի դասատուն ոգևորված հրահանգում իր անտեսանելի սաներին.

- Սկսում ենք, հիշեցե՛ք ձախ ոտքով, պա՛, մեկ, երկու, երեք...

Ի՞նչ համարձակ կին է եղել, այնուամենայնիվ մեր նշանավոր գործին պարի հրավիրողը...

Ինչևէ, վերակառուցումը շարունակվում է: Իրենց օրինական պահանջներն են ներկայացնում ճարտարապետներն ու քաղաքաշինարարները: Նրանք գտնում են, որ չի կարելի հաշտվել այն երևույթի հետ, եթե քաղաքի կենտրոնում, նորակառույց, բարձրահասակ, վարդագույն շենքերի կողքին ծվարել ու քաղաքի տեսքը փշացնում են դեռևս պարսից խանի օրերից մնացած կավածեփ, խղճուկ տները: Ճիշտ է, Երևանը ավելի քան երկու հազար յոթ հարյուր տարեկան է, բայց այդ չի նշանակում, թե պետք է պահպանել քսան դար առաջ շաղախված ցեխը: Հայաստանի մայրաքաղաքը պետք է կառուցվի ժամանակակից բարձր քաղաքաշինարարության օրենքներով:

Եվ ահա քանդում են մեր հին քաղաքը:

Կատաղած ցույի նման ծառու լինելով, մեքենան դողում, ցնցվում է ներքին ուժից, ապա միանգամից պոկվելով տեղից, դդրդալով գալիս, խփում է կավե հաստ ու փիսրուն պատին: Իսկ պատը վաղուց պատրաստ է փլվելու և առիթի է սպասում, չի առարկում, չի դիմադրում, անձայն տապալվում է ցած, ու փոշին է միայն երկար ժամանակ ստվերում շրջապատը: Յուրաքանչյուր քանդվող տուն իր հանդիսականներն ունի և նրանց մեջ դժվար չէ ճանաչել նախկին տանտերերին: Նրանց դեմքերին իրար են հաջորդում ուրախությունն ու տիսրությունը: Իհարկե, նոր տուն են ստանալու, բայց դե դժվար է հեռանալ այնտեղից, որտեղ մանկությունն ու թերևս երջանկությունն է անցել: Նրանցից ոմանք ավելի շուտ շփոթված են, վազվզում են այս ու այն կողմ և պարզապես չգիտեն ինչ անել: Տան ճակատային պատը փլվել է և երևում են սենյակները՝ երեքական պատերով, որոնց վրա դեռ մնում են խունացած գույններն ու նախշերը, թղթե պատառութված պաստառները, պոկված ընտանեկան մեծադիր նկարներն ու ճոճանակավոր ժամացույցների ձերմակ ստվերները: Թվում է, թե թատերական դեկորներ ես դիտում, իսկ եթե անցնում է այդ թվալը, մի տեսակ ճնշված ու անհարմար ես զգում քեզ, ասես թաքուն հայացք ես նետել ուրիշի տան ներսը: Մորթե քրքրված գդակ դրած մի ծերունի հավաքվածների խմբից, մյուսն է անցնում, նրանց ուշադրությունը հրավիրում կիսարանդ սենյակներից մեկի վրա ու հայտնում, որպես խիստ կաղտնիք.

- Այն պատը տեսնում եք, չէ՞ , չէ, դա՛ չէ, մյուսը, հա՛, հա՛ - ա՛յն, որի վրա բրոնզե արմավենիներ կան: Ուղիղ հիսուն հինգ տարի այդ պատի տակ եմ քնել: Բա ... Գլխիս վերև մեծ որդուս նկարն էր: Տեղը տեսնո՞ւմ եք, ա՛յ, նա...

Նա սպասում էր, որ իրեն հարցեր տան, բայց ոչ ոք հարց չի տալիս, ու մորթե քրքրված գդակով ծերունին մի ուրիշ խմբի է մոտենում:

- Այն պատը տեսնում եք, չէ՞ ...-հարցնում է նա:

Սակայն այստեղ նրան չեն լսում, որովհետև շատ ավելի հետաքրքիր զրույց են սկսել:

- Հենց որ բոլղողերը շրջ՝ իսկ խփեց պատին, մեկ էլ՝ ծլընգ, մի պղնձե սափոր զնզգնզալով գլորվեց ցած,- հափշտակված պատմում է տրակտորիստի յուղոտ պիջակով մի տղա: - Բուլղողերավարը գոռաց. «Նե տրոգատ, Էտո մայո»: Բայց նրան ո՞վ կլսեր, տղերքը գոռգոռալով ընկան սափորի վրա:

Բերանը մի տեսակ ձյութով փակ էր, հիմա դանակով չը՝ իսկ հա չը՝ իսկ՝ չկարողացան բացել: Վերջը մեկը կացինը բարձրացրեց ու թրա՛իսկ, որ խփեց... սափորի տակը մի կողմ թռավ: Նայեցինք, տեսնենք ի՞նչ...

- Ի՞նչ,-պոռթկացին լսողները:

- Նիկոլայի թուղթ փող:

Հավաքվածները հուսախարված հոհոացին, իսկ մորթե գդակով ծերունին, օգտվելով խառնաշփոթությունից բղավեց.

- Այն պատը տեսնո՞ւմ եք...

Նա զլուխը թեքել էր իր տան կողմը և հենց այդպես էլ լրեց-մնաց կիսաբաց բերանով: Մեքենան խենթացած հարձակվեց նրա տան վրա, ճռչոց լսվեց, ու փոշին բռնեց շրջապատը: Ծերունուն մինչ այդ ոչ ոք չէր լսում, իսկ հիմա մեկը հարցրեց.

- Ո՞ր պատը քեռի՞:

Ծերունին չպատասխանեց: Նա շարունակում էր նայել այնտեղ, ուր քիչ առաջ իր տունն էր: Եվ արձագանքեց միայն այն ժամանակ, երբ կրկնվեց հարցը:

- ՀՇ, բան չէիր ասում

- Ո՞նց թե բան չէիր ասում,-չգիտես ինչու զայրացավ մարդը:

Իսկ ծերունին ուզում էր ասել:

Նա ուզում էր ասել, որ այնտեղ հենց նոր մի պատ կար, որ պատի վրա անցյալ տարի ներկարարը բրոնզե արմավենիներ էր նկարել, որ այդ պատի տակ հիսուն հինգ տարի քնել է ինքը: Բայց շասաց. պատը չկար այլսև, չկային նաև բրոնզե արմավենիներն ու որդին: Ոչի՞նչ չկար: Այդ բոլորը չեղած շատ այլ բաների հետ գումարվեցին ու դարձան մի տուն, որը նույնպես չկար: Ուրեմն ի՞նչ ասեր ինքը:

- ԱՇ այնտեղ,-կոտրված, խեղճացած ասաց ծերունին,-քիչ առաջ մի տուն կար: Դա իմ տունն էր:

- Հա՛,-ասաց մարդը:

- Արտակ,-դարձավ ինձ Մանուկը,- դու իմ և այդ բուլղողերի մեջ նմանություն գտնո՞ւմ ես:

- Լսիր, ի՞նչ է պատահել,-ծիծառեցի ես,-վերջերս քեզ ամեն ինչի հետ համեմատում ես:
- Զգիտեմ դու ոնց, բայց ես գտնում եմ,-շարունակեց Մանուկը,- և այդ վլող պատերն էլ արտառոց ձևով հիշեցնում են Վեզիրյանին ու Կարո Բաղամյանին: Քո կարծիքով այս հինգ օրը ինչո՞վ էի զբաղված:
- Կովում էիր Նվարդի հետ:
- Այդ՝ ընդմիջումներին: Իսկ հիմնականո՞ւմ... Քննություն էի հանձնում: Դու զիտե՞՞ս, որ աշխատանքի եմ անցել դատախազությունում՝ որպես քննիչ: Ահա, ուրեմն, իմացիր նաև, որ իմ հիմնական աշխատանքից բացի, զբաղվում եմ մասնավոր պրակտիկայով և առանց կեղծ համեստության պետք է ասեմ, որ հանձարեղ քննիչ եմ:
- Չեմ կասկածում,- ասացի ես:
- Խնդրում եմ, առանց հեզնանքի,-ասաց Մանուկը փաստերով եմ խոսելու: Ասում էիր՝ Վեզիրյանը քանի՞ երեխա ունի: Զգիտե՞ս ս: Իսկ ընդհանրապես ունի՞: Չունի, սիրելիս, ոչ մի երեխա էլ չունի: Փոխարենը երկու ավտոմեքենա ունի, մեկը կնոջ, մյուսը զոքանչի անունով: Կին վարորդների հրաշալի սերունդ: Ունի երկու առանձնատուն, մեկը իր մյուսը՝ կնոջ անունով: Առաջինում ինքը, կինը, զոքանչն ու տնային ծառայողն են մի կերպ տեղավորվում: Իսկ երկրորդում ո՞վ է ապրում: Զգիտե՞ս: Չեմ սպասում: Երկրորդ առանձնատունը զբաղեցնում է մեր ընդհանուր բարեկամ Կարո Բաղամյանը: Շա՞խ:
- Իսկ ի՞նչ կա դրա մեջ,-ոչինչ չհասկացա ես:
- Ապացույց, որ նրանք մտերիմներ են:
- Նա կարող է ասել, որ վարձով է ապրում:
- Չի կարող: Այդ առանձնատունը նրան նվիրել է Վեզիրյանի կինը: Մա՞տ:
- Նվիրե՞լ է: Հենց այնպե՞ս:
- Հենց այնպես ոչ ոքի ոչինչ չի նվիրում: Այն էլ առանձնատուն: Կոմս Մոնտե Քրիստոյի ժամանակները անցել են, թեև նա էլ հենց այնպես շրայլողներից չէր: Հիմա նվիրատվությունը կատարվում է հետևյալ կերպ. կամ պայմանավորվող երկու կողմին էլ շահավետ է նվիրատվություն խաղալ, որպեսզի հետազյում ստիպված չլինեն բացատրություն տալ, թե որտեղից են ձեռք բերել կամ ինչ են արել առևտրի միջոց հանդիսացած վիթխարի գումարը, կամ էլ նվիրատվությունը կատարվում է ի պատասխան մատուցված խոշոր ծառայությունների, որպես կաշառք՝ անշարժ գույքով, որը համապատասխանում է Հայկական հանրապետության քրեական օրենսգրքի հարյուր տասնչորսերորդ հոդվածի երկրորդ մասին:
- Ուրեմն, քո կարծիքով...

- Ես միայն շարադրում եմ փաստերը: Լրացուցիչ կարող եմ ասել, որ Վեզիրյանն առաջին անգամը չէ, որ մերկացվում է: Նախավերջին անգամ նրա խարդախությունների մասին ահազանգվել է նվիրատվության արարողությունից երեք ամիս կամ ավելի ճիշտ՝ սրանից ուղիղ չորս տարի առաջ: Սակայն ստուգող հանձնաժողովը գտել է, որ առանձնապես ոչինչ չի եղել, որ ահազանգում բերված փաստերը միտումնավոր ուռճացած և աղավաղված են: Հանձնաժողովը արձանագրել է, որ Վեզիրյանին կարելի է թողնել իր աշխատանքում և բավարարվել բանավոր նկատողությամբ: Եվ մի նրբին մանրամասն, հանձնաժողովը դեկավարել է Կարո Բադամյանը:

- Չի՝ կարող պատահել: Նա այդքան միամիտ չէ:

- Վեզիրյանն էլ միամիտ չէ: Դրա համար էլ առանձնատունը ձևակերպել է կնոջ անունով, որի հետ ինքը օրենքով ամուսնացած չէ, և այդ կինն էլ իր հերթին տունը նվիրել է Կարո Բադամյանի կնոջը: Դե գնա գտիր:

- Իսկ դու ո՞նց գտար:

Մանուկի շուրբերին մի այնպիսի քմծիծաղ հայտնվեց, որին կնախանձեր ինքը՝ Շերլոք Հոլմսը: Իսկ ես ցնծում էի: Վրե՛ժ, վրե՛ժ, վրե՛ժ: Ո՞ւմ մտքով կանցներ, թե կհաջողվի այսքան շուտ: Մի թե հնարավոր է: Վրե՛ժ... իմ անքուն, մղավանջային գիշերների համար, իմ խելացնոր մենախոտությունների, հեռացող հավատի, ցալագնորեն սեղմվող սրտի համար: Այս օրեր շարունակ ես չեմ քնել, չի եղել թեկուզ մի պահ, որ ինքս ինձ հետ մնամ, մտածեմ ուրիշ հազար ու մի բանի մասին, ինչպես այլ մարդիկ են մտածում: Ամեն անգամ աշքերիս առաջ Սարգսյանի առանձնասենյակն է եղել, և Բադամյանը, Վեզիրյանը, Պարթևը, Բենիկը: Ամեն վայրկյան ես կովել եմ, վիճել եմ, համոզել եմ, խնդրել եմ, ծիծաղել եմ, լաց եմ եղել, ճշացել եմ, բողոքել եմ և այդ բոլորը մտքումս, ուղեղիս մեջ: «Դու դեռ ինձ շատ կզգաս քո կողքին», -ասաց այն ժամանակ Վեզիրյանը: Իսկ հիմա մենակ նա՝ չէ, նրանք են, նրանք բոլորը իմ կողքին են, և անհնար է նրանցից փախչելը, ազատվելը: Ես քայել եմ փողոցով, հետո ակամա կանգ եմ առել ու վիճել եմ նրանց հետ, տրամվայ եմ նստել ու վիճել եմ նրանց հետ, բարևել եմ ծանոթներիս ու վիճել եմ նրանց հետ, հաց եմ կերել ու վիճել, անկողին եմ մտել ու վիճել նրանց հետ... Վրե՛ժ, վրե՛ժ, վրե՛ժ: «Ճաշդ կեր, առջում է», -հառաչում էր մայրս, իսկ ես նայում էի նրան ու Բադամյանին ասում. «Դու ստոր ես, ստո՞ր, ստո՞ր»: «Ուզում եմ արձակուրդ վերցնել», -ասում էր հայրս, իսկ ես խնդրում էի խեղդվելով, «Մեսրոպ ջան, զոնե դու և ինձ հավատա»: «Այն պատը տեսն ու եք», -հարցում է քրքրված, մորթե գրակով ծերունին, իսկ ես լաց էի լինում ու պարզում ձեռքերս. «Չե, չէ, տղե քք, խնդրում եմ, մի քվեարկեք...», «Ամաչում եմ, այսր շատ եմ ամաչում», -մրմնջում էր Քրիստոսի դեմքով մուրացիկը, իսկ ես նայում էի նրան ու ասում էի. «Ես էլ եմ ամաչում»: Կուզե՞ս ես էլ կանգնեմ քո կողքին, որովհետև ես էլ եմ ամաչում: Դու երջանիկ ես, դու խենթ ես, դու կարողանում ես ասել, իսկ ես ամաչում եմ ասել, թե որքա՞ն եմ ամաչում... Վրե՛ժ, վրե՛ժ մեր տիսուր հարսանիքի, հորս զապված հառաջանքների, Նանարի կեղծ ծիծաղի և թաքուն անկեղծ արցունքների համար...»

Մենք բավականին հեռացել էինք այնտեղից, որտեղ փոշու սյուներ էին բարձրանում և քանդում էին մեր հին քաղաքը: «Դանակ-մկրա տ սրեմ, դանակ մկրա տ». մեջիոյի աշտարակից մուեզին ձգող մոլլայի ձայնով կանչում էր մի մարդ: Գետնի տակ, կլոր անցրի

մեջ իրար հայիում էին հեռախոսային ցանցի բանվորները: Ես կողքից գրկեցի Մանուկին ու ամուր սեղմեցի: Չգիտեի ինչ անել:

- Ի՞նչ պատահեց, տո՞,-ծիծաղեց Մանուկը:

Նա գիտեր, թե ինչ է պատահել: Նրա աչքերը փայլում էին երշանկությունից: Նա իսկապես նման էր քննությունը հաջող հանձնած մարդու: Իսկ ես նայում էի նրան ու մտածում, թե, այնուամենայնիվ, որքան լավ բան է կյանքը: Ու մտածում էի, որ աշխարհում ոչ մի բան ինքնանպատակ չէ երեխ: Եթե իմ դեմ կազմակերպված այդ դավադրությունը չիներ, ով՝ գիտե, երբսէ առիթ կունենայի համոզվելու, թե ինչպիսի ընկեր է ինձ համար Մանուկը: Ասում են՝ ընկերներին կարելի է ճանաչել կյանքի վճռական բովեներին: Այդպես էլ կա: Ես ճանաչեցի Նանարին, Նվարդին, Մանուկին, Մեսրոպին, հետո շատերին ճանաչեցի, նույնիսկ առանց հետները խոսելու: Դեռ հեռվից նկատելով ինձ, իմ ընկերը մյուս մայթն էր անցնում, ու ես տխուր ճանաչում էի նրան: Հանդիպում էինք անակնկալ, հարցնում էր՝ հայացքը փախցնելով. «Ո՞նց ես», ու չլսելով, թե ինչ եմ ասում՝ «դե՛ կներե՛ ս, շտապում եմ»- ասում էր նա, ու ես մեկին էլ էի ճանաչում: Հիմա նորից կվերադառնան նրանք, բոլորն էլ իմ մայթով կանցնեն, կզա՞ն...

- Բայց սա հաղթանակ է, Մանո՞ւկ:

- Իհարկե: Նրանք այդ հարվածին չեն դիմանա:

- Եվ այդ բոլորը ինձ համար...

- Ոչ միայն քեզ համար,-ասաց Մանուկը: -Դա մե՛ զ համար էր: Մենք չպետք է թողնենք, որ մեզ հետ վարվեն այնպես, ինչպես ուզում են: Մենք արդեն մեծ ենք: Եվ հետո, ազնիվ խոսք, սա իմ քննությունն էր: Ուզեցի տեսնել, թե ինչի եմ ընդունակ:

- Ո՞վ գիտե, թե ինչքան ես չարչարվել:

- Ինչ ճիշտ է, ճիշտ: Լավ աշխատեցի: Բայց ի՞նչ զոքանչ ունի, գիտե՞ս: Եթե այդ Վեզիրյանը քիչ թե շատ կարգին մարդ լիներ, նրան բրոնզե հուշարձան պետք է կանգնեցներ: Պարտիզանը քեզ օրինակ՝ «Չգիտե մ, չե՛ մ լսել, չե՛ մ ասի»: Տնային կառավարչութին փառք էր իրա մոտ, բայց կի համարյա թե սեր խոստացա, մինչև որ տեղեկանքն ստորագրեց:

- Որեմն, տեղեկանք է՞լ ես վերցրել:

- Զարմանում եմ, թե ինչու ես անընդհատ մոռանում, որ քննիչի հետ գործ ունես:

Ես ծխախոտ վառեցի և, ինչպես միշտ, առաջին գլանակից թեթևակի պտտվեց գլուխս: Ահա՝ և հաղթանակը: Ափսոս որ կիրակի է, և ես չեմ կարող այդ տեղեկանքը գրնե հեռվից ցույց տալ Կարո Բարբայանին: Ցույց տալ ու նայել նրա աչքերին, ցույց տալ ու ծիծաղել, ցույց տալ ու նրա ձայնով բղավել՝ «Ընդունո՞ւմ եք, թե՝ ոչ»: Հետաքրքիր է թե ինչպես կպահի իրեն: Իհարկե սկզբում կգունատվի, հետո կսկսի քծնել ու ժամանակակից պատճենների վերաբերյա ազգականներ ենք, կասի դու իմ փոքրիկ դային ես ու կիսնդրի ներել, մոռանալ: Ներե՛ լ, մոռանա լ... Բայց միթե՝ դա երբսէ կարելի է մոռանալ: Չէ՛, երանի թե չխեղճանա, երանի թե բղավի, ահաբեկի, հերքի, ասի, որ դա զրաբարտություն է: Այդ ժամանակ ես գիտեմ, թե ինչ

կանեմ: Իսկ եթե խեղճանա, հավանաբար ես էլ կխեղճանամ: Բայց ես չե՞մ ուզում նրան ներել: Չե՞:

- Երբ փոքր էի,-ասացի ես Մանուկին,- մի անգամ վիրավորել էի եղբորս, ու նա ուզում էր ինձ ծեծել: Ես թաքնվել էի մորս թիկունքում, կպել էի փեշից, իսկ նա հարձակվում էր անընդհատ: «Թո դ, թո դ,-ասում էր նա մորս,- պետք է սպանեմ դրան»: Եվ հանկարծ մայրս զայրացած ու հոգնած ինձ դուրս բերեց իր թիկունքից ու հրեց դեպի Բարկենը, «Դե սպանի՝,-ասաց ,սպանի՝, քո գլուխն էլ հողեմ, նրա նն էլ»: Իմ հույսն ու ապավենը մայրս էր, նա էլ լրեց ինձ: Հուսահատ ու համակերպված, մատաղացու գառան նման, կանգնել եմ Բարկենի առջև ու սպասում եմ, որ նա ծեծի ինձ: Իսկ նա չի ծեծում, կանգնել ինձ է նայում շփոթված: «Դե սպանի- է՝,-ասում է մայրս,-քա ինչի՝ չես սպանում»: «Ախր ո՞նց սպանեմ,-լացակումեց Բարկենը,-չի՝ փախչում, է՝, որ սպանեմ: Դե ասա թող փախչի ...»: Առաջ մայրս ծիծաղեց՝ մի տեսակ հպարտ ու երջանիկ, հետո Բարկենը ծիծաղեց, հետո էլ ես ծիծաղեցի: Իսկ հետո մենք բոլորս էլ իրար գրկել ու ծիծաղում էինք:

- Այսի՞նքն,-ժպտաց Մանուկը:

- Եթե նա զղօա, այդ տեղեկանքը մեզ պետք չի զա այլևս,-ասացի ես: -Գուցե արյունի հարց է, ես ի՞նչ իմանամ:

- Զարմանալի մարդ ես,-նեղացած ասաց Մանուկը: - Քեզ ստորաբար, անմարդկայնորեն ուզում են ոչնչացնել, իսկ դու Քրիստոս ես խաղում: Եվ հետո, մարդ պետք է սկզբունք ունենա: Նրանց ի՞նչն ես ուզում ներել, մեկը հանցագործ է, իսկ մյուսը՝ հանցագործին հովանավորող, որն առաջին իսկ առիթով անմեղ մարդուն դուրս է շարտում կյանքից: Այստեղ հո միայն քո հարցը չէ: Այդ մարդկանց պետք է պատժել՝ հանուն բոլորի շահերի: Դրանք վնասակար մարդիկ են, և եթե իմ կամքը լիներ, ես քրեական գործ կհարուցեի նրանց նկատմամբ:

- Բայց արդեն Վեզիրյանի նկատմամբ գործ կա, չե՞:

- Կա՝,- բայց ինքը ազատ շրջում է քաղաքում, քեֆեր է անում, աշխատում է լինել այնտեղ ուր մարդիկ շատ կան: Օրինակ Շինաստանի ու մեր բասկետբոլիստների մրցությանը, որպեսզի ցույց տա, թե ոչինչ էլ չկա, թե ինքը անմեղ է և շուտով հերքում կինդի թերթում: Իսկ դու ասում ես՝ ներե՞նք...

- Իսկ մրցության մասին դու որտեղի՞ց զիտես:

Մանուկը ծուռ-ծուռ նայեց ինձ:

- Երբ ես մի գործով զբաղվում եմ, հիմնավորաբես եմ զբաղվում: Ես քեզ համար մի անակնկալ էլ ունեմ, թեն դու, ինչպես երևում է, չարժես դրան: Տե՛ս...

Նա զրպանից հանեց ու ինձ մեկնեց փոքրիկ մի լուսանկար: Մի պատկեր էր մարզադաշտից, նկարված մրցության ժամանակ: Ծայրեծայր՝ ծափահարող մարդիկ էին: Եվ հանկարծ բազմաթիվ գլուխների միջից ես նկատեցի երկուսին: Նստած էին կողք-կողքի, մեկը թեքվել էր դեպի մյուսը ու ծիծաղելով ինչ-որ բան էր ասում նրան:

- Ոչի՞նչ չեմ հասկանում,-ասացի ես սրտնեղած,-անհնարին է, որ Սարգսյանը մոտ լինի Վեզիրյանին: Այնուամենայնիվ, նա այդպիսի մարդ չէ: Ինձ կասեր, եթե մոտ լիներ:

- Իսկ ես ե՞րբ ասացի, թե նրանք մոտ են: Ես միայն փաստեր եմ հավաքում:

- Լա՞վ, նկա՞՞րն ինչպես գտար:

- Դա արդեն դատարկ բան է, ախալե՞րս: Հարց՝ առաջին կուրսեցուն: Եթե մի փոքր ուշադիր լինեիր, նկարի անկյունում կտեսնեիր նաև իմ չքնաղ գլուխը: Տեսա՞ր: Ապրե՞ս: Նկատեցի, որ մեկը լուսանկարում է մեզ: Խաղից անմիջապես հետո մոտեցա, իմացա որ «Ավանգարդ» թերթի լուսանկարիչն է, ասացի, որ նա պատահաբար ինձ էլ է նկարել, և խնդրեցի այդ պատկերից ինն օրինակ:

- Իսկ ինչո՞ւ հատկապես ինը:

- Իսկ մի՞ թե կուսշրջկոմի բյուրոյի անդամները ինը հոգի չեն:

Ես մի պահ լուր ու զարմացած նայում էի Մանուկին: Ինձ թվում էր, թե ես լիովին հասկանում եմ նրան, ու մեկ էլ՝ թե բոլորովին չեմ հասկանում: Իհարկե, նա ուրախ էր, որ կարողացել է փաստորեն փրկել ընկերոջը: Օրեր շարունակ մտածել է, ծրագրեր է կազմել, այս ու այն կողմ է զնացել, փաստաթղթեր է ստուգել, խոսել է հազար մարդու հետ, իմանալով, որ օգնում է ինձ և հաստատ համոզված լինելով, որ ես պարզապես զոհ եմ: Իհարկե նրան ոգևորել է և այն, որ առաջին անգամ անձամբ զբաղվելու է իր մասնագիտությամբ, և եթե ի վերջո հաջողության է հասել, ավելի է ոգևորվել: Ես գիտեի, որ նա ազնիվ ու համարձակ մարդ է, նա ամբողջ կյանքում ապացուցել էր դա: Ինձ միայն մի բան էր շփոթեցնում. նրա խոր վճռականությունը և այդ վճռականության մեջ չորությունը, միջոցների հարցում խտրություն չդնելը, և այդ վճռականության մեջ նրա թեթև, կատակախառն խոսելաձեր՝ համենայնդեպս մարդկանց և նրանց սպասող անախորժությունների ու հարվածների նկատմամբ: Մի՞ թե իսկապես այդ ամենը մասնագիտությամբ է պայմանավորված: Չեմ հասկանում:

Մենք անցնում եինք գարեջրի կրպակի մոտով, ու ես հանկարծ զգացի, որ կոկորդս չորացել է:

- Մի-մի գարեջուր չխմե՞նք, Մանուկ:

- Խմենք,-համաձայնեց նա:

Մենք երկու գավաթ գարեջուր վերցրեցինք ու անցանք կրպակի ետևի կողմը: Այնտեղ դատարկ արկրներ կային, իսկ գետնին թափված էին տառեխի փշեր ու երշիկի չորացած թաղանթի կնճռոտված կտորներ: Մի կումով համարյա դատարկեցի գավաթի կեսը և ներքսից վեր նայեցի Մանուկին:

- Խնդրում եմ նախքան հայիոյելդ և ապերախտ անվանելը, մի քիչ մտածես,-ասացի ես,- բա դու չե՞ս վախենում, որ ակամա հորդ ձանապարհով ես գնալու:

Նա կարծես թե սպասում էր իմ հարցին, որովհետև քմիթաղ տվեց ու պատասխանեց անմիջապես:

- Վախենում եմ, այդ պատճառով կ երբեք նրա ձանապարհով չեմ գնա
- Դե, ուրեմն, տո՞ւր ինձ այդ տեղեկանքն ու նկարները,-խնդրեցի ես: -Ես քեզանից շատ շնորհակալ եմ, Ման և լի ջան: Գուցե մեզ չի սազում իրար հետ սենտիմենտալ խոսելը, ի վերջո մենք բեռնակիրների բրիգադիր Գասպարի սաներն ենք, բայց համոզված եղիր, ու ես կ կանեփ ու կանեմ քեզ համար այն, ինչ դու արեցիր ինձ համար: Եվ այդքանը հերիք է: Տուր ինձ այդ տեղեկանքը:

Ես նրան ուզում էի բացատրել մի բան, որ ինքս կարծես թե ներքնապես զգում ու հասկանում էի, բայց բառերով չի կարողանում արտահայտել: Դրա համար խոսում էի երկար, ու անտանելի ճռոում էր ստացվում ամեն ինչ: Ես նրան ասում էի, որ եթե նախքան բուրոն ինձ հայտնի լիներ այդ փաստը, ես անպայման կիրապարակեի այն: Բայց իմաստ ուրիշ բան է ստացվում: Ստացվում է այնպես, որ ես չեմ կարողանում արդարանալ բյուրոյում ինձ տրված մեղադրանքներից, դրա համար ել բիծ եմ որոնում Բաղամյանի կամ մյուսների կենսագրության մեջ, փորփրում եմ նրանց արխիվը: Այսինքն՝ վարվում եմ այնպես, ինչպես նրանք վարվեցին իմ նկատմամբ: Այսինքն՝ մենք բոլորս կ նույնն ենք: Այնինչ ես չեմ ուզում նույնը լինել: Չե մ կարող: Շա տ- շա տ այդ տեղեկանքը ես ցույց կտամ իրեն՝ Բաղամյանին, ու երևի մի քանի խոսք կասեմ: Գուցե և շասեմ ել ոչինչ: Այդքանը: Իսկ նկարը պատահականություն է միայն:

- Առանց այդ թղթի չի լինի, -բարկացավ Մանուկը, - ի՞նչ ես սար ու ձոր ընկնում: Կամ դու պետք է պապուցես, որ քեզ հեռացրել են ֆելիետոնի համար, կամ ել փողոց դուրս չգաս, որովհետև մարդ մի քիչ ել ամոթ պետք է ունենա:

Ու Մանուկն իրավացի էր, ես վաղուց համոզված էի հոգուս խորքում: Այլ ելք չկար: Բայց ի՞նչ անես, որ այդ փաստաթղթի հայտնվելուն պես, սրտիս ողջ չարությունը անհետացել էր: Ասես արդեն բոլորը զիտեին, թե ինչպես է եղել պատմությունը, և դա ինձ բավարարում էր լիովի:

- Դե լավ,-ասացի ես,-թող առայժմ մնա: Միայն խոսք տուր, որ ոչ ոքի ցույց չես տա, հը՝, Մանուկ: Ես մի բան որոշեցի:

- Ի՞նչ:

- Վաղը չէ մյուս օրը քեզ կասեմ, ազնի՛վ խոսք:

Մանուկը ծիծաղեց, բարձրացավ արկդից, մոտեցավ կրպակի կիսաբաց դռանն ու կամացուկ ասաց.

- Երկու բաժակ սպիտակ,-հետո ձեռքի ափի մեջ օղու բաժակները բռնած ետ եկավ ու մեկը մեկնեց ինձ:

- Խմենք, ես ել իմ զաղտնիքը ասեմ:

Խմեցինք, վրայից ել գարեջուր, և Մանուկը ասաց.

- Գիտե՞ս ի՞նչ, Արտակ, ախր եսք վաղուց գիտեմ, անզիր գիտեմ: Առավոտը որ քեզ կանչեցի և ուզում էի ասել տեղեկանքի մասին, հաստատ գիտեի, որ գրկելու ես ինձ, ասելու ես՝ ախպեր ջան, ասելու ես՝ դու փրկեցիր ինձ և եսք երբեք չեմ մոռանա: Հավատա՛, հաստատ գիտեի: Լսիր, եկ մի-մի բաժակ կլ խմենք, ի՞ր:

- Խմե՞նք,-ասացի ես:

Ու մենք դարձյալ խմեցինք մի-մի բաժակ օղի:

- Հետո՞,-հիշեցրի ես:

- Հետո, ախպորս ասեմ, ախր եսք լավ գիտեմ, չէ՞: Եսք գծով գերազանցիկ եմ: Հաստատ գիտեի, որ մեկ-երկու ժամից հետո նորից ինձ գրկելու ես, թե եկ ձեռք քաշենք տեղեկանքից, թե եկ վատություն չանենք մարդկանց: Ճիշտ չե՞մ ասում, այդպես ել չեղա՞վ:

- Լավ, հետո՞:

- Հետո այն, որ քեզ հետ միասին ի՞նձ ել լավ ճանաչելով և, հաստատ համոզված լինելով, որ վերջիվերջոն դու ինձ քո խղճով հաղթելու ես, և որպեսզի ես հետո չզրջամ, այդ անիծյալ փաստաթուղթը մի գեղեցիկ նամակի հետ երեկ ուղարկեցի քո խմբագիր Սարյանին և պատճենն ել կուսշրջկոմի քարտուղարին:

- Ի՞նչ:

- Վե՞րջ: Ես հարբած եմ և այլս ոչինչ չեմ հասկանում: Գուցե մի-մի բաժակ կլ խմենք ու հավերժ բաժանվենք, ի՞ր: Դե, առ մասներս բացիր:

- Իսկ քեզ ո՞վ է խնդրել, որ խառնվես իմ գործերին, -բղավեցի ես, -ինչո՞ւ ես առանց ինձ...

- Լա՞վ, լա՞վ, ել չեմ խառնվի, -մեծ զլուխը տիրությամբ թափահարեց Մանուկը, -բայց թույլ կտա՞ս գոնե հեռվից հաճույքով դիտել, թե ինչպես են քեզ ուտում...

- Դե թող ուտեն, նրանց հե՞րն ել անիծած, -անշար ու հոգնած ասացի ես: Օղին սկսել էր տեսնել իր գործը, հաճելիորեն տաքացել էր կուրծքս, ու մեղուները վայրենացել էին զլիիս մեջ: -Ավելի լավ է քեզ ուտեն, քան դո՞ւ ուտես ուրիշներին: Սա կարծեմ ուրիշի խոսքեր են, բայց դու այնպես ընդունիր, իբր ես եմ հայտնագործել: Այսինքն՝ գուցե ենց ես ել գտել եմ, ի՞նչ իմանաս: Ի վերջո, մինչև չզգաս, որ քեզ ուզում են ուտել, նման գյուտեր չես անի:

- Ախպոր պես, ուտելու մասին ել մի՞ խոսի, քաղցած մեռնում եմ, -ասաց Մանուկը, ու ես զգացի, որ նա ել է հարբած: Վեր կացավ, ընդգծված ուղիղ քայլերով կրպակին մոտեցավ ու ետ եկավ՝ ձեռքին բռնած դարձյալ երկու բաժակ օղի ու մի քանի կարկանդակ: -Կարկանդակ-դրարկ, -ծիծաղեց նա: -Զարմանքից քար է կտրել, որ իրեն ուտող չկա: Հավանաբար երկու տարեկան կլինի: Իսկական սառը զենք է, սուր կողմով որ խփես՝ փրկություն չկա: Է իս կարկանդակ, կարկանդակ, այնինչ երկու տարի առաջ ինչպես ս էինք քեզ սիրում, ինչպես էինք տենչում քեզ: Կարոտում էինք, երգեր էինք հյուսում: Այն ժամանակ դու կոչվում էիր պերաշկի: Օ՛, պերաշկի, պերաշկի, դու ես լույսը մեր աշքի...

- Մանո՞ւկ, նամակդ անստորագի՞ր ուղարկեցիր, -հարցի ես:

Մանուկը ժպտաց, օրորեց զլուխը:

- Ինչքա՞ն ես ուզում, որ ստոր լինեմ... Չէ՛, ընկեր Լեռնյան, ինքս գրեցի, ստորագրեցի ինչպես հարկն է, նշեցի աշխատանքիս վայրը, հասցես, հեռախոսիս համարը, շատ էի ուզում բնակարանիս հեռախոսի համարն էլ գրել, բայց առաջմ ոչ բնակարան ունեմ, ոչ էլ հեռախոս: Հենց որ ունենամ, լրացուցիչ կուտարկեմ: Պրծա՞նք: Ասենք չէ՛, դեռ չպրծանք: - Նա գրպանից հանեց ու իմ առջև արկդին նետեց մարզադաշտի նկարների կույտը:

Ես ձեռքս առա նկարներից մեկը, ու սիրտս նորից դառնությամբ լցվեց: Ո՞նց թունավորեցին կյանքս, ինչի՞ մասին ենք խոսում, ինչո՞վ ենք զբաղված: Հիմա Բաղամյանն ինչ ասես չէր տա, որ տեսներ մեզ այստեղ, գարեջրի կրպակի ետևում, դատարկ արկդների վրա հարբած նստած, զաղտնի վաճառվող օդու բաժակները ձեռքներիս, էժանագին տառեխի ու երշիկի մնացորդների ֆոնի վրա: Նա, իհարկե անմիջապես լրսանկարել կտար մեզ, և երկու օր հետո կուսշրջկոմի բյուրոյում հաղթանականորեն կթափահարեր այդ նկարները: Կնկարեր, անպայման կնկարեր, և այն էլ ոչ թե ինն, այլ ինը հարյուր օրինակ, կնկարեր, ինչպես Մանուկն է նկարել տվել այդ խեղճ Սարգսյանին՝ Վեզիրյանի հարեանությամբ: Նրանք՝ մեզ, մենք՝ նրանց, նրանք՝ մեզ, մենք՝ նրանց: Եվ ահա մենք իրար նման ենք: Մենք նույնն ենք: Կողրից նայողը չի իմանա, թե ով է սկսել, ով է մեղավորը: Նա կասի՝ դեռ լավ, վերջ տվեք, ամոր է: Նա կասի՝ ի՞նչ եղել է, եղել է, մոռացե՞ք: Նա կասի՝ դու էլ ես մեղավոր, նա էլ է մեղավոր, լու ք: Ահա թե ինչու չեմ ուզում կովել ու հաղթել: Իսկ Նանարը չի հասկանում, ասում է. «դու պիտի հաղթես»: Իսկ Մանուկն օգնում է, որ հաղթեմ: Ո՞նց թունավորեցին կյանքս:

Ես պատառ-պատառ արեցի լրսանկարներն ու նետեցի ոտքերիս տակ: Մանուկը ծիծաղեց թույլ-թույլ, հարբած, ու ասաց կակազելով.

- Ես էլ... տեսա, որ չարժե, դր-դրա համար չուղարկեցի: Ես էլ ախր դեռ ա-ազնիվ մարդ եմ: Արի խմենք մեր ազնվության կենացը, քանի ու-ուշ չէ:

Աչքերիս առջև ամեն ինչ շաղվում, օրորվում էր: Ես նայում էի ոտքերիս տակ, նկարներին, ու հիմա ինձ թվում էր, թե դրանք շատ են, շատ, անհաշիվ են, ու ամեն մի նկարից Վեզիրյանը ծափ է տալիս ու ծիծաղում է, և ամեն մի նկարից Վեզիրյանը թեքվել ու ինչ-որ բան է ասում Սարգսյանին: Ի՞նչ: Երեսի ուրախացել է, որ նրա պես ազնիվ մարդուն էլ է իր նման դարձել: Երեսի ասում է, թե Բաղամյանին կասի, որ նա նրան առաջ տանի, դարձնի քաղկոմի քարտուղար: Ի՞նչ էլ սրտանց է ծիծաղում: Ծիծաղիր, ծիծաղի ը, ծիծաղեր, ծիծաղեր... նկարները պտտվում էին անընդհատ՝ ձայնակավառակին փակցված պիտակի նման, ու ես այլս որոշակի ոչ մի դեմք չեմ տեսնում, այլ մի սև ստվեր, որ գալիս ու անցնում էր: Եվ միայն մի ծիծաղ էր լսվում՝ անտանելիորեն երկար ու վայրենի:

- Չխմե՞նք, -հարցրեց Մանուկը:

- Ինչո՞ւ չխմենք, -ասացի ես, -ողջ լինես, Մանո՞ւկ:

- Մարդ մնանք, -ասաց Մանուկը:

Մենք խմեցինք երկար ու դանդաղ, զգիտես ինչու իրար աշքերի մեջ նայելով: Հետո ես զգացի, որ նա ինչ-որ բան է մրմնջում: Լարեցի ուշադրությունս, բայց ոչինչ չհասկացա:

- Այդ ի՞նչ ես ասում, Մանո՞ւկ:

- Արտասանում եմ,-ասաց Մանուկը: Ու բղավեց հանկարծ խռպոտած ու խոնավ ձայնով.- «Մենք բոլորս, բոլորս մանուկներ ենք ոքք»: -Հետո լոեց ու խոնարհեց զլուխը:

- Էլի՞ ասա:

Մանուկը բարձրացրեց զլուխը, ու նրա խոշոր, խամրած աշքերում, արդեն արցունք կար: Ես սպասում էի, որ նա դարձյալ կրղավի, բայց նա խոնարհվեց կրկին ու ասաց դոդացող, կերկերուն շշուկով.

- «Մենք բոլորս, բոլորս մանուկներ ենք խեղճ...»:

ՄԵՆՔ ԲԵՌՆԱԿԻՐՆԵՐ ԵՆք

Դեռ հեռվից նկատեցի, որ մուտքի մոտ Թաթոս-պետն է կանգնած: Նրա հազին նույն զինվորական կանաչ վերնաշապիկն էր և հեծելակի լայն տաքատը՝ երկարաձիւ կոշիկների մեջ, իսկ դեմքին հավերժ քարացած մի արտահայտություն՝ «Խմ ձեռքից չեք պրծնի»: Նրան զրեթե ոչ ոք չեք սիրում, և պատճառն այն չեր, որ նա խուզարկում էր մարդկանց: Չե՞:

Գործարանից դուրս եկողներին բոլոր պահակներն էլ ստուգում էին, սակայն նրա որոնող շարժումների մեջ ինչ-որ շատ վիրավորական բան կար: Եթե նրա մատները շոշափում էին իմ անձրևանոցի կամ պիջակի գրպանները, ինձ թվում էր, թե մեկ մարմնիս վրայով անձրևառդեր են սողում: Նրան անընդհատ բացատրում էին, թե կարիք չկա մարդկանց շոշափելու, թե սա պահածոների գործարան է, ու եթե մեկն ուզենա այստեղից որևէ բան դուրս տանել, ապա դա կամ մրգի, կամ բանջարեղենի պահածո պետք է լինի և ոչ թե, ասենք՝ աղամանդ: Բայց նա շարունակում էր շոշափել մարդկանց, և հաստատում էր այն շշուկը, թե պատերազմի տարիներին վերակացու է եղել ռազմագերիների սիբիրյան ինչ-որ ձամբարում:

Նա էլ ինձ էր նկատել և սպասում էր բարևի, սակայն ես հարցրի չոր-չոր.

- Պահակը դո՞ւք եք:

Թաթոս-պետը տարակուսանքով ու վիրավորված ինձ նայեց, բայց որովհետև իմ անվրդով դեմքը նրան ոչինչ չեր ասում, նետեց ատամների արանքից:

- Ես պահակապետն եմ:

- Դե դա միևնույն է,-անբարտավանորեն ասացի ես,-ինձ հարկավոր է մի քանի բան ստուգել ձեզ մոտ: Ես խմբագրությունից եմ:

Նա երկար դիտում էր թղթակցի իմ փաստաթուղթը՝ աշքերից բավականին հեռու պահելով այն, անձայն շարժելով շրթունքները, հետո բարձրացրեց գլուխն ու ինձ նայեց:

- Ի՞նչ է, կասկածելի որևէ բա՞ն կա, -հեզնանքով հարցրեցի ես:

- Չե՞, չէ՞,-անմիջապես պատասխանեց նա, շտապ վերադարձնելով տեղեկանքը:

Տատանվում էր: Պարզ զգացվում էր, որ անասելի ցանկություն ունի հարց տալու, բայց չի համարձակվում: Վերջապես հաղթեց հետաքրքրությունը:

- Ասում եմ՝ ձեր դեմքը շատ է ծանոթ:

Ես վեր ձգեցի ուսերս:

- Չեմ կարծում, թե ձեզ որևէ տեղ տեսած լինես:

- Ասում եմ՝ մեր գործարանում՝ ըստ...- Երևի ուզում էր ասել «քեռնակիր», բայց սիրտ չարեց,- չե՞ք աշխատել:

- Իսկ ինչո՞ւ պիտի աշխատեի:

- Չէ՛, դե հարցնում եմ, էլի՛,-կրկին նեղացած ասաց նա,- կներեք: Գրասենյակը աջ թևի վրա է:

Ես դանդաղ բացեցի պահակատան դուռը, հաստատ իմանալով, որ նա նորից է դիմելու, ծոճրակիս զգալով Թաթոս-պետի ապշած հայացքը և հազիվ ինձ զսպելով, որպեսզի չքրցամ...

- Ընկե՛ր ջան, ընկե՛ր ջան,-հնչեց նրա ձայնը:

Ես շրջվեցի ու անբավականությամբ կնձռոտեցի ձակատս:

- Ասում եմ՝ դուք հո եղբայր չունե՞ք:

- Ունե՞մ,-բարկացած պատասխանեցի ես: - Միլիցիայի վարչության պետն է, ի՞նչ կա:

- Չէ՛, չէ՛, բան չկա,- գլուխն օրորելով, բարակ ձայնով ասաց նա,-կներեք: Ասում եմ, կներեք:

Ես ինձ գործարանի բակը նետեցի ու ծիծաղեցի սրտանց: Դե զնա, ութոտնո՞ւկ, սա էլ քեզ՝ քո բոլոր շոշափուկների ու շոշափումների համար: Ու անմիջապես մոռացա Թաթոս-պետին: Գործարանի բակը նույնն էր, ինչ մեկ տարի առաջ, երևի միայն «Պատվո տախտակ»-ի վրայի նկարները փոխված լինեին: Հեռվում, բարձրադիր ծածկի տակ, լուսոյի քարերի նման շարված են ջեմի ու պովիոլոյի ուրած տակառները, նրանց դատարկ եղբայրները քիչ այն կողմ «քարաբաղնիս» են ընդունում և իրար ետևից գլորվում դեպի մրգի բաժանմունքը: Զախ կողմում՝ բանջարեղենի բաժանմունքի կիսաբաց դարպասից, առասորեն գոլորշի է ելնում՝ հետո բերելով ու գործարանի վրա տարածելով այն յուրահասուկ հոտը, որը նկարագրելն անհնարին է, բայց որը մոռանալ չես կարող, եթե երբեւ աշխատել ես պահածոների գործարանում: Ես հենց հոտն զգացի առավոտյան, եթե արյունաբերության բաժնի վարիչն ասաց, որ խմբագրի հանձնարարությամբ պետք է պահածոների գործարան գնամ՝ մի փոքրիկ հարց ստուգելու: Ահա և իմ գործարանը:

Ո՞նց անցավ մի տարին...

#

Այո, ուղիղ մեկ տարի առաջ էր: Ամառային արձակուրդի օրերն էին:

Մանուկը մի քանի օր չէր երևում: Հետո հանկարծ հայտնվեց աղմուկով, ինձ հավիշտակեց տնից, ասաց, որ զարմանալի բաներ է պատմելու, որ ինքը ցնցված է, ապշած, ասաց, որ ինքը կյանքում մինչև հիմա ոչինչ չի տեսել ու չի հասկացել ոչինչ: Նրա աչքերը փայլում էին հրձվանքից, իմ հարցերին ի պատասխան միայն թափահարում էր գլուխը ու կրկին սկսում իր անհիմաստ բացականչությունները: Այլևս չհամբերեցի.

- Ի՞նչ է պատահել, ախր:

- Ո՞նց թե, մինչև հիմա ասում եմ, չէ՞ս հասկանում,-ծիծաղեց Մանուկը,-աշխատում եմ պահածոների գործարանում:

- Իրավախորհրդատո՞ւ:

- Բեռնակի՞ր:

Նա այդ անմիջապես ասաց ու հիմա կողքից ինձ էր նայում այնպիսի ծիծաղկուտ աչքերով, ասես սպասում էր, որ ես ցնծագին աղաղակներով նրա գիրկն ընկնեմ:

-Գժվե՞լ ես, տո...-կանգ առա ես:

Իսկ առավոտյան Մանուկի հետ քայլում էինք դեպի պահածոների գործարան, և նա վերջին խորհուրդներն էր տալիս ինձ:

- Կարևորն այն է, որ չհուզվես: Քեզ անկախ պահիր: Եթե հարցնեն՝ սանք ունե՞ս, ասա՝ չէ: Ուզում են ծուղակը զցել: Սանք ունեցողներին տանել չեն կարող: Ասում են՝ պիծոն է: Հատկապես աշխատիր Գասպարին դուք գալ: Գիտե՞ս ինչ տղա է, հարյուր կիլոգրամանց երկու պարկ ուսին երգելով գնում է: Հա՛, քիչ էր մնում մոռանայի, հետները խոսելու ժամանակ կուրծքը ուտցրու: - Այդ ասելիս Մանուկը ուտցրեց իր նեղ կուրծքը: Դա շատ ծիծաղելի էր, բայց ես չծիծաղեցի: Ես իսկապես հուզված էի:

Իսկ Գասպարն իրոք այնպիսին էր, ինչպես նկարագրել էր Մանուկը: Նա մի բարձրահասակ երիտասարդ էր երկար, մկանուտ ձեռքերով, լեռնական սասունցու թուխ, քամհար դեմքով ու խիստ, քնքշություն չտեսած աչքերով: Նրան նայելով Դավիթ կարելի էր նկարել, կամ ավելի ճիշտ՝ Փոքր Մհեր, որովհետև այնպես զգույշ ու թերև էր քայլում, ասես վախենում էր հողը շղմանա: Բայց Մանուկը ըստ երևությին չափն անցել էր մի հարցում. նրա պիշտակի արտաքին, փոքրիկ գրպանից երևում էր սանրի պոչը: Ասենք, ով գիտե, զուցե պրովոկացիայի համար էր դրել:

- Մա՞,-որոտաց Գասպարը, աչքերով ինձ ցույց տալով, և համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հինգերորդ կուրսի ուսանող Մանուկ Շիրինյանը խոնարի ժամանով գլխով արեց:

- Դո՞ւ ինչ ես,-հարցրեց ինձ:

Ես չհասկացա, թե ինչ իմաստով տրվեց հարցը և անօգնական նայեցի Մանուկին:

- Մասնագիտությունն է հարցնում,- քարզմանեց նա,- ասա՝, ասա՝ :

- Ժուռնալիստ,-ասացի ես:

Նա նայեց ինձ այնպիսի մի հայացքով, որն ասում էր՝ դե արի էս ժուռնալիստներով ու իրավաբաններով բեռների փոխադրման պլան կատարի: հետո ավելի ուշադիր նայեց, ինչպես երևի Հայեափի շուկայում գերավաճառներն էին նայում սևամորթ ստրուկներին, ու հավանաբար դժգոհ շմաց, որովհետև շրջվեց ու գնաց շաքարավագի պահեստի կողմը: Մանուկը քաջալերիչ աչքով արեց ինձ, ու մենք հետևեցինք բրիգադիր Գասպարին:

Շաքարավագի երկար ու ընդարձակ պահեստում երկու բեռնակիր անշտապ ինչ-որ պարկեր էին տեղավորում երկաթե սայլակի վրա, և ըստ Մանուկի նկարագրության, ես անմիջապես

Ճանաչեցի Մարկոսին ու Ազատին: Մարկոսը կարծ ու ամուր մարդ էր՝ մասնագետ քեռնակրի դուրս ընկած կրնակով: Ազատը նրա մոտ երեխա էր երևում: Մինչ Գասպարն ու Մանուկը հագուստներն էին փոխում, ծանոթացանք: Երկուսն էլ հանեցին թաղիքէ ձեռնոցները: Իսկ էլի մի քանի բռպե անց իմ նոր ծանոթները մի պարկ էին օրորում, որպեսզի զցեն մեջքիս:

Քննությունն սկսվում էր: Շաբարավազով լեցուն սայլակը պահեստից երկաթէ գծերի վրայով բերել կանգնեցրել էին բաժանմունքի առջև: Գծերն այդտեղից բաժանմունք էին մտնում, այսինչ հարկավոր էր պարկերը տանել աշ՝ դեպի շաքարավազի արտադրամասը: Եվ դա պետք է արվեր մեջքով Ուղիղ մեր ոտքերի տակով, գոլորշու մշուշներ բարձրացնելով, տաք ջրի գետ էր անցնում, որը հետազայում մենք անվանեցինք Գոլֆստրիմ: Ես սկզբում պետք է անցնեի այդ գետի վրա թեքությամբ զցված երկու տախտակների վրայով, կտրեի մինչև շենքն ընկած չոր ճանապարհ, մտնեի շենք, բարձրանայի երկաթէ սանդուղի աստիճաններով, անեի ևս մի քանի քայլ և պարկը նետեի մեծ կաթսայի մոտ, որի մեջ եռում էր եփվող շաքարավազը:

- Դե՝, -զոչեց Գասպարը:

Մարկոսն ու Ազատը չուշացրին:

- Մեկ-երկու, ա՛ռ,-ձայնեցին նրանք ու ճոճվող պարկը նետեցին ծոծրակիս:

Պարկի մեջ հարյուր կիլո շաքարավազ կար, պահեստային խոնավությունից քարացել, կոշտերի էր վերածվել: Այդ կոշտերից մեկը ամուր հարվածեց ողնաշարիս, և ես մի ակնթարթ կորցրեցի գիտակցությունս:

- Խորը շնչիր, խորը շնչիր,-հեռովից, ինչ-որ տեղից ինձ հասավ Մանուկի կարեկից ձայնը:

Ես խորը շունչ քաշեցի և կարողացա նկատել երկար գերանատախտակները, որ ընկած էին տաք առվի վրա: Ուրեմն հարկավոր է անցնել դրանց վրայով: Մատներիս մեջ ամուր բռնած պարկի անկյունածայրերը, ես մտքով մի քանի անգամ անցա այդ ճամփան, մինչև որ կատարեցի առաջին քայլը: Տեսող կանգ առա: Դողում էին ոտքերս, ծնկներս ամեն վայրկյան պատրաստ էին ծալվելու, վիզո ցավում էր անսաելի, ծնոտս սեղմում էր կուրծքս, աշքերիս առջև սև շրջանակներ էին հայտնվում ու կորչում, նորից հայտնվում ու պտտվում էին մոլեզին: Ես նորից խորը շունչ քաշեցի ու ասացի հառաչի միջից.

-Պարկը մեջքիս զցեք, վիզո...

- Տա՛ր, տա՛ր,- լսեցի բրիգադիր Գասպարի ձայնը,-վզով պետք է տանես:

Ես ամաչեցի: Ի՞նչ է պատահել վերջապես: Եթե պետք է՝ տանել, ուրեմն պետք է տանել: Հո միայն ե ս չեմ: Բոլորն էլ երեկի այսպես են տարել իրենց առաջին թերը: Դե զնացեք, ոտքե՛ր, զնացեք, ելք չկա: Ես երկու քայլ էլ արեցի ու հայտնվեցի տախտակներից մեկի վրա, հետո, աշխատելով չկորցնել հավասարակշռություն՝ աջ ոտքս մյուս տախտակին դրեցի ու նորից կանգ առա: Տախտակները դողում ու օրորվում էին: Չե, դրանք անցնել չի լինի: Կշրջվեմ, գետը կընկնեմ ու շաքարը կհալվի, ջուր կդառնա: Գոնե պարկը մեջքիս լիներ, թե չէ անհնարին է շնչելը: Ասացին հարյուր կիլո է, չէ՛, չի կարող պատահել, այստեղ շատ կլինի: Շա՛տ- շատ: Գոնե չօրորվեին տախտակները: Չէ՛, ընկնել չի կարելի: Մարդիկ շատ ավելի ծանր բաներ են

տարել: Հայրս ողջ կյանքում մեր ընտանիքի հոգսի պարկը հենց այսպես ուսերին է տարել, ո՞նց էր ասում Գասպարը, հա՛, վզո՞վ, վզո՞վ: Չէ՛, միայն թե ըլնկնեմ: Ինչ ուզում է լինի, միայն թե ըլնկնեմ, միայն թե տեղ հասցնեմ այս քաղցր դառնությունը: Կամաց-կամաց, մի՛ շտապիր, սպասիր, թող անցնի դողը, հիմա ձախով փոքրիկ-փոքրիկ քայլ, իսկ հիմա աջը: Իսկ այժմ շնչիր, շնչիր: Խե՞ դժ Մանուկ, հիմա ինչքա՞ն է տառապում ինձ համար: Ահա մի քայլ էլ, հիմա աջով: Տե՞ ը աստված, որտեղի ց են գտել այս երկար տախտակները: Վերջ չունեն, դեռ ինչքան կա անցնելու: Դե ոչինչ, կանցնես, ախատ ը ջան, միայն թե մի շտապիր: Կամաց-կամաց:

Պարկի միջից ի՞նչ ջուր կարող է թափվել: Ախ, հա՛, քրտինքս է: Դե, ոչինչ, թող թափվի: Երևի այսպես թափվել է, որ հետո մարդիկ ասել են՝ հալալ քրտիքով է ապրում: Իհա թկե, բայց ծանր, շատ ծանր քան է այդ հալալ քրտինքը: Դե լավ, հանգստացիր, հիմա նորից ձախը: Դու պետք է տեղ հասնես, շնչիր ու գնա, խորը շնչիր: Ենթադրիր, որ եթե տեղ հասնես, հաղթելու ես, կատարվելու են քո բոլոր երազանքները: Հա՛: Ուրեմն պետք է գնաս: Ես զղայնացա, միանգամից մի քանի քայլ արեցի, անցա տախտակն ու ճոճվելով, լայն-լայն դնելով ուրերս՝ շենք մտա: Հիմա պետք է ձախ թերվել, բայց չեմ կարողանում, պարկը ինձ ուղիղ առաջ է հրում: Քանի քայլ կորցրեցի: Տեսնես երբեմ կազատվե՞ մ այս բերից: Մնաց սանդուղքը:

Աստիճանները թաց են ու լպրծուն: Շաքարավազ է թափվել նրանց վրա ու խառնվել ջրին: Ո՞նց անցնեմ, որ չայթաքեմ: Ի՞նչ անեմ: Բայց նախ հարկավոր է բարձրանալ: Ես լարեցի բոլոր ուժերս, աջ ոտքս դրեցի առաջին աստիճանին և հենվեցի վրան: Մեկ էլ: Չէ՛, բարձրացա: Միայն թե ցնցումի հետ պարկը ետ սահեց ուսերիցս ու հիմա ինչ-որ տեղ մեջքիս վրա է: Զարդվում են ձեռքերս, մատներս արդեն չեմ զզում, իսկ պարկը ձզում հա՛ ձզում է ցած: Դեռ երեք աստիճան էլ կա: Շատ է: շա տ-շատ է: Գոնե չսահեր պարկը, հիմա ես ո՞նց պահեմ ու բարձրանամ միաժամանակ Ես մտքումս հարյուր անզամ աջ ոտքս դնում եմ երկրորդ աստիճանին, բայց շարունակում եմ կանգնած մնալ: Շարժվել չեմ կարող, կանգնել չեմ կարող, ընկնել չեմ կարող, իսկ պարկը ահավոր ծանրությամբ քաշում է ինձ: Միայն թե չպոկվի ձեռքիցս: Ընդամենը երեք աստիճան է մնացել ախր: Տե՞ ը աստված... Հայրս հիմա կծիծաղեր.

«Հենց որ տեղներդ նեղն է լինում, Տեր աստծուն եք հիշում»: Լա՞վ, պետք չէ ցրվել, հարկավոր է կենտրոնանալ: Հիմա ես կրարձրացնեմ աջ ոտքս ու կդնեմ երկարէ սանդուղքի երկրորդ աստիճանի եզրին: Հետո կմտածենք: Առայժմ միայն այդքանը: Դե սկսի՞ր: Ես բարձրացրի աջ ոտքս, հետո լրիվ թերվեցի, հասա գետնին, կողքի վրա հենվեցի երկարէ բազրիքին և հևալով ու տնքալով կանգնեցի երկրորդ աստիճանի վրա: Ահա՛, հիմա պետք է ուղղվել: Եվ անմիջապես էլ զզացի, թե պարկի ձախ անկյունածոպը դուրս թռավ քարացած մատներիս միջից: Պարկը միանգամից շրջվեց մեջքիս վրա ու կընկներ, եթե ես ամբողջովին չկոանայի և ազատ ձեռքով չկառչեի երկարյա բազրիքին:

- Գնամ օգնեմ,-լսեցի Մանուկի տագնապած ձիչը:

- Չէ՛, որոտաց Գասպարը,-ինքը պիտի տանի:

Բայց ես նրանց չի հասկանում: Ինձ համար ոչինչ գրյություն չուներ՝ երկարյա սանդուղքից բացի, որ դեռ բարձրանալու էի: Երկու աստիճան: Դե, հիմա հո չպիտի ընկնես,-ասացի ինքս ինձ,-ընդամենը երկու աստիճան է մնում և դու պիտի բարձրանաս: Դե, ձգի՞ր: Ես ամուր ձգեցի բազրիքին կառչաց ձեռքս ու համարյա ծնկներիս վրա հայտնվեցի երրորդ աստիճանին: Ահա՛, հիմա մնում է մի աստիճան և վերջ: Ինձ համար ամեն ինչ շնչավորվել էր պարկը, ձեռքերս, ոտքերս, երկարյա սանդուղքը, և ասես մենք բոլորս մի ընդհանուր կռվի էինք մասնակցում: Ես արդեն ե՞ ս չի: Ես կողքից էի նայում ինձ ու ասում էի աղերսանքով. հիմա

միայն մի աստիճան է մնում, միայն մեկը: Թափահարիր քեզ: Հովազին քայլին չե՞ս խայտառակվելու: Բոլորը քեզ են նայում: Դե շարժվիր ախատե՛ ըան: Լավ, ուզո՞ւմ ես մի քիչ էլ հանգստացիր: Խելոք մտածեցիր, որ հենվեցիր բազրիքին: Բայց այլսս հերիք է, չը՞, իը՞:

Սուտ են ասում, թե վերջին քայլն ամենից դժվարն է, ամենադժվարը վերջին քայլին հասնելն է: Հիմա վստահ էի, որ կհաղթեմ: Ես նորից բարձրացրի աջ ոտքս, խոնարհվեցի գետնին և ուզում էի ձախուսութեան բերել, երբ հանկարծ պարկը ուսիս վրայով, աշխարհի բոլոր ծանրությունների հետ, եկավ, անցավ ու աղմուկով հարվածեց գետնին՝ կաթսայի մոտ: Հաջորդ վայրկյանին թվաց, թե պարկը կրկին ինձ է գալիս: Ես սարսափահար փակեցի աչքերս ու զիսով զարնվեցի պարկի կոշտ քարանին՝ հասկանալով միանգամից, որ վայր եմ ընկել: հետո բարձրացա հաղթանակած ու թեթև, առա՞նց բերի, առա՞նց ծանրության: Ու նոր հասկացա, թե որքա՞ն լավ բան է աշխարհում առանց բերի ապրելը:

Եվ հանկարծ անմիջապես էլ սարսափով նկատեցի, որ պատռվել է պարկը ու սպիտակ շաքարավազը դանդաղ հոսում է ցեխոտ հատակին՝ բժշկական ժամացույցից սահող ավազի նման: Ահա և վերջ, մտածեցի ես, հիմա ինձ կիեռացնի և դեռ կպարտադրի վճարել շաքարավազի արժեքը: Դա շատ ամոթ էր, բայց ես հոգուս խորքում ինչ-որ տեղ ուրախ էի, որ այդպես եղավ: Չի՝ ընդունի, ես էլ դուրս կզամ այդ գործարանից ու... կեցցե՛ ազատությունը: Հիմա ուր որ է Գասպարը զայրացած կզորա: Եվ զորաց... բայց ոչ թե իմ, այլ Մանուկի վրա:

- Ի՞նչ ես կանգնել, պարկը վերև զցիր, իսկ դուք նորը տվեք նրան,-ասաց նա Մարկոսին ու Ազատին:

- Ի՞նչ,-հարցրեցի ես,-ուրեմն չե՞ք հեռացնում:

- Ե՞րբ ընդունեցինք, որ հեռացնենք,-հանկարծ ծիծաղեց Գասպարը: -Դե՛...

- Մեկ, երկու, ա՛ռ...

Երբ ես կատաղի վարզով երկրորդ պարկը ի վերջո տեղ հասցրեցի ու թեթևացած հառաջելով տղաներին մոտեցա, Գասպարն ասաց.

- Այսօրվանից աշխատում ես: Վաղը մի հին շոր հազիր: Սանր ունե՞ս, -հանկարծ հարցրեց նա:

- Չէ՛,-անմիջապես պատասխանեցի ես,-սանրն ի՞նչ եմ անուս:

Գասպարը նայեց Մանուկին ու նա, Մարկոսը, Ազատը սկսեցին հոհոալ: Մանուկը կարմրեց սաստիկ, հասկանալով, որ իր հետ խաղ են խաղացել, ու ինքն էլ ծիծաղեց:

- Լա՛վ,-ասաց Գասպարը,- Մարկո՞ս, Ազա՞տ, դուք դատարկեք սայլը, իսկ մենք զնանք պահեստ:

Ճանապարհին բոլորս լուր էինք: միայն պահեստի մոտ ես հարցրեցի Գասպարին.- Իսկ շաքարավազի համար ի՞նչ պիտի անեմ:

Գասպարը թափ տվեց ձեռքը:

- Օգուտն էլ, վնասն կլրիգադինն է...

Նանարն սպասում էր ինձ իրենց նեղ փողոցում: Մենք պետք է կինո գնայինք, բայց ես չեի կարողանում շարժվել տեղից: Ամրոջ մարմինս ցավում էր ու տնքում վիրավոր: Սկզբում կարծեց, թե հարբած եմ, հետո իմացավ, հառաչեց, արտասվեց անձայն, գլուխը հենեց ուսիս, և որովհետև ես ծիծաղելով տնքացի՝ անկարող պահել նույնիսկ նրա գլուխը, թևանցուկ արեց ինձ և ուղեկցեց տուն: Եվ առաջին անգամ կյանքումս ես թողեցի, որ նա միայնակ վերադառնա: Տանը ասացի, որ հիվանդ եմ և անկողին մտա: Այդպիսի ֆիզիկական ցավ երբեւ չեի զգացել, ուզեցի ջուր խմել և չկարողացաց բարձրացնել բաժակը: Թեքվեցի, խմեցի բաժակից ու ծիծաղեցի իմ անզորության վրա: Քունս չէր տանում: Սովորականի պես որոշեցի գիրք կարդալ: Սկզբում գիրքը բռնել էի ձեռքով, բայց մի քանի րոպե անց մատներս թուլացան: Ես գիրքը ծնկներիս հենեցի ու տարածեցի ձեռքերս՝ զգալով, թե ինչպես է ճշում, աղաղակում յուրաքանչյուր մկանը: Զեռքերիս ափերն այրվում էին: Ես դրանք մեծ ճիգով ետ տարա ու դրեցի զով բարձի տակ: Եվ հանկարծ... և հանկարծ մատներս շոշափեցին բարձի անկյունածովերը: Սիրտս տրոփեց տագնապով ու ցավով, ինձ թվաց, թե հիմա ուր-որ է Մարկոսն ու Ազատը կգոչեն.

- Մեկ-երկու, ա՞ռ:

Եվ շաքարավազի պարկը նորից կիշնի իմ տանջահար ուսերին:

Հետո ես երկար ժամանակ ժպտում էի ինձ ու ինձ, չկարողանալով շարժվել, չկարողանալով քնել հոգնածությունից, բայց և զարմանալի մի երանությամբ մեկնված փափուկ անկողնին, վայելելով աշխատած ու վաստակած մարդու հանգիստը, կյանքումս առաջին անգամ հասկանալով բանվոր հորս և նրանց, ովքեր «վզով» են տանում իրենց ու աշխարհի բեռը:

#

Կեսօր է: Նստել ենք եռահարկ դասավորված մեծ տակառների շարքերի արանքում, տախտակե արկղներին: Մանուկը գնացել, խանութից բերել է հաց, պանիր ու մի շիշ օղի: Ազատը բանջարեղենի բաժանմունքից ծանոթության կարգով երկու տուփ բաղրիջանի խավիար է դուրս հանել, Մարկոսը մեջտեղ է դրել տնական խաշած կարտոֆիլը: Ուսում ենք ծանրորեն, արժանապատվությամբ ու լրու: Շուտով մի ամիս կլինի, ինչ միասին ենք, և ինչ որ կա այստեղ, մեր ձեռքի գործն է: Զեռվից լոտոյի քարեր թվացող այս խոշոր տակառները մենք ենք մեկիկ-մեկիկ գլորել, բարձրացրել ու նետել, կազմել եռահարկ շինություններ, մենք ենք տեղափոխել, դասավորել ու վագոնները դրել մուրաբաների և մրգահյութերի հազարավոր արկղներ, և այդ բոլորի շաքարավազը մեր ուսերին ենք տարել պահեստից մինչև արտադրամաս: Հիմա մենք նստել ենք տակառների արանքում, երբեմն-երբեմն զարմացած նայում ենք մեր իսկ կատարածին և ուտում անշտապ: Դեռ շատ ժամանակ կա մինչև շշակի ձայնը:

- Ծիծաղ բան էր,-հանկարծ փոթկում է Ազատը: - Էքսկուրսիայի եկածներին տեսա՞ք: Հիմա դես-դեն նայելով գնում են բաժանմունքի միջով, կանգնում են կաթսաների մոտ, իսկ մեր էս Ֆրիդմանն էլ նրանց ուսերեն պատմում է: Մեկ էլ տեսնեմ մի կնիկ կամաց-կամաց ետ է մսում: Տեսնես ինչի՞ է ետ մնում, մտածեցի: Մեկ էլ կամաց-կամաց տակառների կողմը գնաց:

Մի տակառ կար, լավ չեր կապած, կողքից ջեմը դուրս էր տվել: Տղե՛ք, մեկ էլ տեսա էս կնիկը դես-դեն նայեց ու մատը մտցրեց ջեմի մեջ: Մտցրեց, մատը բերանը տարավ ու աչքերը փակեց: Մի տեսնեիք ի՞նչ երես ուներ: Ծիծաղ բան էր: Ո՞ր չծիծաղեցի... կարմրեց, վազելով փախավ:

Մանուկը արհամարհանքով նայում է Ազատին, ուզում է ինչ-որ բան ասել, բայց Գասպարը կանխում է.

- Հիմար: Ծիծաղ դ բան էր: Ուրիշը լաց կլիներ: Գիտես հիմա քչե՞րը կան, որ քաղցրի կարու են: Դատա րկ: Ծիծաղը քո բարեն էր Ընկեր Անգինյանին:

Ազատը շիկնում, փոքրանում է, իսկ Մանուկը ծիծաղում է բավարարված վրիժառությամբ: Ես էլ եմ ծիծաղում, անհնար է այդ պատմությունը հիշելն ու ծիծաղելը:

Օրեր առաջ, աշխատանքի վերջում Ազատն ինձ մոտեցավ ու խնդրեց, որ իմ անձրևանոցը մեկ օրով տամ իրեն: Ես անմիջապես տվեցի, չհարցնելով, թե ինչու, բայց նա հասկացրեց, որ ժամադրության է գնալու և վախենում է հանկարծ անձրև գա: Այնինչ անձրևանոցը բոլորովին ուրիշ նպատակի պիտի ծառայեր: Սպասելով մինչև հեռանանք, Ազատը փորձում է բաժանմութից թոցոած մի տուփ մուրաբան տեղավորել լայն անձրևանոցիս գրպանում, բայց գրպանը նեղ էր, և ստիպված Ազատը ձեռքը գրպանն է տանում ու հենց գրպանով ներսից բռնում մուրաբայի տուփը: Ուշացած բանվորների հետ գրուցելով, նա պահակատուն է մտնում՝ իմանալով, որ հերթապահը շոշափող թաթոս-պետը չէ, կեղծ ժպիտով տագնապը թաքցրած՝ անցնում է պահակատան միջով ու փողոց դուրս գալիս: Փողոցում նա շունչ է քաշում թեթևացած: Վե՛րջ, չբռնվեց: Բայց ի՞նչ իմանաս, թե որտեղ է թաքնված օրիասը: Որտեղից-որտեղ նրա առաջ հայտնվում է գործարկումի նախազահ Անգինյանը: Ամենայն հավանականությամբ, նա ինչ-որ խորհրդակցությունից էր վերադառնում, որտեղ խոսվել էր բանվորների նկատմամբ դեկալարության ուշադիր և զգայուն վերաբերմունքի մասին, որովհետև ընկեր Անգինյանը ժպտալով Ազատին է մոտենում, բարեկ համար մեկնում է ձեռքը ու հարցնում.

- Ինչպե՞ս եք, մեր երիտասարդ և առաջավոր բանվոր:

Նման ուշադրությունից շոյված Ազատը, մոռանալով ամեն ինչ, ձեռքը հանում է գրպանից, և նույն ակնթարթին նրանց ոսքերի մոտ աղմուկով պայթում է մուրաբայի ապակե տուփը: Ու մինչ գործարկումի նախազահ վախեցած ու շփոթահար, իր ներկված կոշիկներին ու գուլպաներին է նայում, երիտասարդ ու առաջավոր բանվորը լայն-լայն քայլերով փախչում է փողոցով՝ գործարան շվերադառնալու հաստատ մտադրությամբ: Բայց վերադարձրինք: Գասպարը խոսք տվեց ընկեր Անգինյանին, և մուրաբայի գողը հանձնվեց մեր դատին: Դատախազը Մանուկն էր: Ծանր դատ էր դա: Ընդմիջմանը ուստում էինք ու խոսում: Նույնիսկ Մարկոսը խոսեց, իսկ նա խոսում էր միայն այն ժամանակ, եթե երազում է, և երազում է միայն այն ժամանակ, եթե բնակարանի մասին է երազում:

- Տղե՛ք, ասում եմ, մարդ տո՞ւն ունենա, իրա տունը: Ուզենա պառկի, ուզենա՝ լոտո խաղա: Տունն իրենն ըլնի, էլի: Ուզենա լաց ըլնի, ուզենա ծիծաղի: Ըսենց, էլի: Իրա տունը:

Նա նայում է մի կողմ, ինչ-որ տեղ, և աչքերը տխուր ու պղտոր են: Տնիկեսա է Մարկոսը: Քսան տարի առաջ Բայազետից է եկել: Տուն չի ունեցել, տեղ չի ունեցել, շոր չի ունեցել, կոշիկ չի

ունեցել: Ոչինչ չի ունեցել: մեկի տանը բանվորություն է արել ու քնել է մարագում: Տանտիրոց ամուսնացած-այրի աղջիկը ծիծաղելով նայել է Մարկոսին: Տեսել է փայտ է կտրում, նայել ու ծիծաղել է: Տեսել է ջուր է բերում, նայել ու ծիծաղել է: իսկ երբ Մարկոսը իրիկունը մարագ է մտել ու կծկվել անկյունում, չոր խոտին, խղճացել է տանտիրոց ամուսնացած-այրի աղջիկը: Մի տաշտ ջուր է տաքացրել, մառան է տարել ու ասել է Մարկոսին.

- Լողացիր, այս տղա:

Հետո, երբ լողացել է Մարկոսը, աղջիկը կիսարաց դռնից շորեր է տվել նրան, իր մեռած ամուսնու շորերը, ու ասել է.

- Հազիր, այս տղա:

Իսկ երբ հազնվել է Մարկոսը, աղջիկը մարագն է մտել ու նստել նրա մոտ, չոր խոտին: Մթան մեջ փայլեցրել է աչքերն ու ծիծաղել է: Խառնել է Մարկոսի թաց մազերն ու ծիծաղել է: Խաղացել է Մարկոսի հոգու հետ ու ծիծաղել է: Ու հարցրել է ծիծաղի միջից՝ տաք, դողացող ձայնով.

- Ինձ կառնե՞ս, այս տղա:

- Ինչի՞ չեմ առնի,-ամաչելով ասել է Մարկոսը:

Զահել է եղել Մարկոսը: Չի իմացել, ուրիշի շոր է հագել, ուրիշի կին է առել, ուրիշի տուն է մտել: Եվ աշխարհը նրա համար դարձել է ուրիշ: Եվ բոլորը, ամեն ինչը, հատիկ-հատիկ գումարվել է, եկել խառնվել, մեծացել-մեծացել է, դարձել է մի մեծ ուրիշ: Եվ ահա այդ հազար ու մի ուրիշների միջով մինչև օրս կը քայլում է բեռնակիր Մարկոսը, փնտրելով իրենը, այն, որ ուրիշ չլինի, ուրիշինը չլինի, իրենը լինի: Մարկոսին թվացել է, թե մնացած հազար ուրիշից կազատվի ինքը, եթե գոնե այդ մեկը ուրիշ չլինի: Տո ւնը:

- Շուտ էստեղից գնացած կլինեի, բայց լավ փող են տալիս: Քան տարի աշխատել եմ, ու փառք աստծո, մի քիչ փող եմ ես զցել: Մի քանի տարի ել որ աշխատեմ, մի տուն եմ առնելու: Տղեք, մի փոքր տուն: Ու զիտե՞ք, ինչ եմ անելու: Մի լավ անզիական կողպեք եմ առնելու փակեմ: Բանալին առնելու եմ, մի քիչ զնամ, հետո ետ զամ ու դուռը բացեմ: Մտնելու եմ ներս, պինդ հազար, ոտքերս թփթփացնեմ գետնին, ելի դուրս զամ ու դուռը փակեմ: Ու ըտենց ամբողջ օրը: Քո տունը ուրիշ բան է, տղեք քը: Մնացածը սաղ հետ: Աշխարհում ամեն մարդ իր տունը պիստի ունենա:

Ու քայլում է ամեն օր ծանր պարկը մեջքին, կուզը դուրս զցած, քայլում է Մարկոսը դեպի իր տունը: Ու ինձ այնպես է թվում, թե նա շատ անզամ չի էլ իմանում, թե ինչ է տանում, թե նրա համար միևնույն է, որովհետև մեկընդմիշտ գիտի, որ քար է տանում իր տան համար և զնում է զոնելու իրեն:

Մի անզամ երկար տատանվելուց և Մանուկի հետ խորհրդակցելուց հետո, Գասպարին մի կողմ տարա, ասացի. ի՞նչ կլինի, եթե արտաժամյա աշխատենք ու այս ամսվա մեր աշխատավարձի կեսը տանք Մարկոսին: Թող վերջապես առնի իր տունը, ի՞նչ կլինի:

Գասպարը շոյեց վիզը, ինձ նայեց մի տեսակ զարմացած ու մեղմ աչքերով, հետո թափահարեց գլուխը.

- Չի՝ լինի: Որ իր ընտանիքը ուրիշ է, մենք ուրիշ չե՞նք: - Հետո մտածեց, որ ես չեմ հասկանա ու ավելացրեց: - Մարկոսն ուզում է ի՞ր տունն ունենա, ի՞ր, հասկացա՞ր, ուսանող:

Ուրիշ տեսակ է ասում Գասպարն այդ «ուսանող» բառը: Նրա ձայնի մեջ ե՛վ տիբություն կա, ե՛վ հիացմունք, ե՛վ ակնածանք, ե՛վ հեգնություն, ե՛վ կի հազար ու մի բան: Եվ որպեսզի ազատվի այդ բոլորից, Գասպարը հաճախ ավելացնում է՝ «հասկացա՞ր», ու մի քիչ երջանկանում է դրանից: Երկրորդ դասարանի կրթություն ունի Գասպարը: Իսկ հետո ոչխար է պահել սարերում, կռվել է գայլերի հետ և նույնիսկ զլուխը մեխած մահակով լուսան է սպանել մի օր: Բայց մինչև սպանելը, լուսանը թիկունքից հարձակվել է նրա վրա, և երբ լվացվում է Գասպարը, թվում է, թե վայրի կատուն հենց նոր է իշել նրա թիկունքից: Պատերազմ է գնացել, դեռ ոչ մի գերմանացի չտեսած, Մողոնկի մոտ հեռահար մի արկից վիրավորվել է ծանր ու հայինելով վերադարձել գյուղ: Եկել տեսել է չկա մայրը, ուզեցել է սար գնալ, ասել են ոչխար էլ չկա, քշել են մսամթերման: Եվ իր ոչխարների հետքով քաղաք է եկել Գասպարը, դարձել բեռնակիր: Երկրորդ դասարանի կրթություն ունի, բայց երբ իմում է, շատ է սիրում արտասանություն լսել և խնդրում է Մանուկին:

- Դե, դե, ուսանո՞ղ:

Իսկ Մանուկը երկու բան գիտի մինչև վերջ. մեկը Ցիցերոնի պերճախոս ճառն է Հռոմի քաղաքացիներին ուղղված, մյուսը՝ Համետի «Լինե՛ թե չլինել» մենախոսությունը: Եվ աշխատանքից հետո, տակառների արանքում Գասպարը, Մարկոսը, Ազատը և ես կիսախուփ աչքերով լսում ենք հեռավոր աշխարհների ու մարդկանց ձայնը: Գասպարը լսում է անշարժ, խիստ դեմքով ու կիսաբաց բերանով, տանջալից աշխատելով հասկանալ, թե ինչ է թաքնված այդքան սիրուն ու շքեղ բառերի ետևում: Նա զմայված հետևում է Մանուկի դեմքի յուրաքանչյուր մկանի խաղին, ու վայ նրան, ով արտասանության ժամանակ որևէ բառ փոխանակի կամ շարժվի աղմուկով: Երբ Մանուկը ոգևորված ձեռքը մեկնում է պահեստի կողմը, Գասպարն էլ է շրջվում ու սևուուն նայում այդ ուղղությամբ, և անմիջապես էլ երկինք է հառում աչքերը, երբ Մանուկը հարկ է համարում դիմել երկնքին: Այդ ասմունքի համար Գասպարը բացահայտորեն հովանավորում է Մանուկին, շարժելով մեր նախանձը: Նրան միշտ թեթև տեղամաս է ուղարկում, չի թողնում, որ արտաժամա աշխատի, ինքն է տանում այն բեռները, որ Մանուկը պիտի տաներ, և խնդրում է...

- Էսօր էլ, հա՛, ուսանող... էն մեկը, որ ասում է. «Ո՛վ քաղաքացիներ ազատ հռոմի»:

Լսում է Մանուկին ու խմում, լսում է ու խմում, հետո կնճռոտում է ճակատը, ուզում է մի բան էլ ինքը ասի, մտածում, մտածում, գնում է հեռու, հասնում սարերի մուժի մեջ կորած իրենց գյուղի հողու դպրոցի երկրորդ դասարան, նատում է գետնին, խսիրին, անձայն շարժում է շրթունքները ու միշտ միայն մի տող է հիշում, միայն մի տող, ու գոռում է իր իմացած այդ միակ տողը.

- Դպրոցի ճամփան դժվար է, երկար, շատերի համար...

Հետո երկար ժամանակ մնում է արձանացած, ուղիղ ու խստադեմ՝ հնդիկ ծերուկ առաջնորդի նման: Իսկ եթք շակի հետ բարձրանում է տեղից, իրար է խառնվում բեռնակիրների մեր խումբը: Նա բարձրագոյ աղաղակներով մեզ ստիպում է արագ աշխատել, վազել բեռան տակ: Եթք գործ չի լինում այլս, իսկուն նորն է հնարում, ու ինքն է մեզ հետ, մեզանից առաջ, մի պարկի փոխարեն երկու պարկ ուսին, վազում է պահեստից-պահեստ, վազում է ինչ-որ խելազար մոլուցի մեջ, զգիտես ում և ինչի վրա զայրացած, անցած տափաստանների անեզր աշերի դեմ վանդակածաղերին զարկվող ընձայութի նման, վազում է մինչև անուժություն ու հլք:

Ամառվա վերջին պարզվեց, որ բեռնակիրների մեր խումբը շատ առաջ է անցել մյուս հերթափոխների բեռնակիրներից և զրավել փոխանցիկ դրոշը: Տեղի ունեցավ նույնիսկ մի փոքրիկ արարողություն: Գործարկումի նախազահ ընկեր Անգինյանը եռանկյունի կարմիր դրոշը ձախ ձեռքով մեկնեց Գասպարին, աջով սեղմեց նրա ձեռքը և հայտարարեց:

- Ապրե՞ն մեր առաջավոր բեռնակիրները:

Սակայն այդ ասելիս, նա կասկածելիորեն գետին էր նայում և իրարից բավականին հեռու էր դրել ոտքերը:

- Անամ՞թ,-Ազատի կողքին թաքուն խփելով շշնջաց Մանուկը,-կորցրել ես մարդու հավատը: Խեղճը ամեն մի բարեկից հետո պայթյունի է սպասում:

Ազատը փոթկաց, զրավելով ընկեր Անգինյանի ուշադրությունը: Գործարկումի նախազահը ամոթախածորեն ժպտաց և ցուցամատով սպառնաց Ազատին: Դրանով էլ արարողությունն ավարտվեց:

Իսկ երկու օր անց սկսվեց մի նոր արարողություն: Չնայած արտադրական առաջադրանքի գերակատարմանը, աշխատավարձը մնաց նույնը: Դա կասկածելի էր: Կուսբյուրոյի քարտուղարի թույլտվությամբ, ես Եվ Մանուկը ստուգեցինք մեր աշխատանքային կարգագրերը և ընկեր Ֆրիդմանին ստիպեցինք բեռնակիրներին վճարել չզիտես ինչու չվճարված արտաժամանակի համար: Ընկեր Ֆրիդմանը կարմրեց, հայինեց հաշվառներին, ներողություն խնդրեց և վճարեց, իսկ հետո ժպտալով ասաց բրիգադիրին:

- Գասպա՞ր, պրոստի, աշխիքա:

- Տի, տավարիշ Ֆրեդման, սվո՞լոչ,- զարմանալի մաքուր ոռւսերենով ասաց Գասպարը, ցույց տալով, որ զուր չէ ժամանից հասել Մոզդոկ:

Հետո նա իր ծանր ձեռքով թփթփացնում էր Մանուկի ու իմ ուսին և հարցնում գործոռալով.

- Այ տղա, ո՞նց իմացաք, է՛ ուսանող, ուսանող...

#

Երեկոյան մեր լրացուցիչ աշխատավարձի, կամ ինչպես Մարկոսը որակեց՝ կորած փողի հաշվին, հավաքվեցինք «Զանգեզուր» ռեստորանում: Մարկոսը սրտաշարժվել էր, ասաց, որ

Եթե միշտ այսպիսի բարձր աշխատավարձ ստանան, գուցե թե մի երկու տարի հետո ունենա իր տունը, իսկ հետո բոլորին համար անակնկալ երգեց մի պարզունակ ու տիտր երգ՝ Սևանա լիճ գնացած ու էլ ետ չեկած ձկնորսի մասին։ Մանուկն էլ էր բացվել։ Նա բավականին զիտականորեն և մեծ փիլիստիքաներից քաղվածքներ բերելով շարադրում էր իր տեսակետները երջանկության և կյանքում մարդու տեղի մասին։ Նրան սկզբում ոչ ոք չէր առարկում, բայց երբ ցանկանալով կոնկրետացնել, որպես օրինակ ասաց, թե Գասպարը կարող է միանգամայն երջանիկ լինել իր աշխատանքում, Գասպարը բարկացած թափահարեց գլուխը, իսկ Մարկոսն ասաց, որ մարդ միայն իր տանը կարող է երջանիկ լինել։ Մանուկն արդեն Հեղելին էր հասել, բայց հանկարծ սրափակած նայեց մեզ, մոռացավ զերմանացի զիտնականին, տիրեց ու լրեց։ Այդ լրության մեջ ես բաժակ բարձրացրի և խմեցի Գասպարի, Մարկոսի ու Ազատի կենացը, առանձնապես Գասպարի կենացը, և ասացի, որ եթե երբեք ես ու Մանուկը խմենք համալսարանի մեր սիրելի դասախոսների կենացը, նրանց հետ Գասպարի կենացն էլ ենք խմելու, որովհետև շատ բան սովորեցինք նրանից։

- Ճի՞շտ,-պայծառացավ հանկարծ Գասպարը։

- Հա՞,-ասացի ես,- Ճիշտ եմ ասում, Գասպար։

Ու ասացի, որ երկու ամսվա ընթացքում մենք ախալեր դարձանք, և որտեղ էլ հանդիպենք, որպես ախալեր ենք իրար հանդիպելու։ Հետո խնդրեցի խմել Մանուկի ու իմ կենացը, որովհետև վաղվանից համալսարանում սկսում են դասերը, ու չենք կարող այլև աշխատանքի զալ։ Թե մենք որքան ենք սովորել, որքան ենք սիրում, որքան չենք ուզում բաժանվել, թող վկա լինի այն, որ մինչև վերջին օրը աշխատանքի եկանք։

- Վա՞հ,-վշտացավ Մարկոսը։

- Ճիշտ է, վաղը սեպտեմբերի մեկն է,-ասաց Ազատը,-անցյալ տարի վաղը ես դպրոց գնացի։

Իսկ Գասպարը շրջվեց դեպի Մանուկը։

- Հանաքո՞վ, ուսանող։

- Չէ՞,-ասաց Մանուկը ու ոտքի կանգնեց,- Գասպա՞ր ջան, Մարկո՞ս ջան, Ազա՞տ ջան... ու նստեց գլուխը ձեռքերի մեջ առավ։

Շատ խմեցինք, մատուցողներն օրորում էին գլուխները, բուֆետապանը դուրս էր եկել իր տեղից. կանգնել, հիացած մեզ էր նայում, իսկ հաճախորդները վաղուց ցրվել էին։ Խմում էինք ու լռում, միայն Գասպարն էր մեկ-մեկ ծլթացնում վշտացած։

- Ուսանո՞ղ, ուսանո՞ղ...։

Հետո Մանուկն առաջարկեց մի վերջին անգամ զրկել իրար։ Մենք վեր կացանք, խոնարհեցինք սեղանին, գլուխներս մոտեցրինք ու թներով ամուր բռնեցինք իրար։ Ու այրագես երկար կանգնած էինք, ու չենք ամաչում իրարից։ Իսկ երբ նստեցինք, Գասպարն արդեն հարբած էր։

- Տղե՛րք,-ասաց նա,-հիմա գնում եք չէ՞։ Գնացեք։ Գնացեք սովորեք։ Դու էլ գնա, արա՛,-դիմեց նա Ազատին,-գնա, գնա սովորիք, մա րդ դառ, աշքիս չերևաս։ Հասկացա՞ր։ Բոլորդ էլ գնացեք։ Երեխեքիս մեկ-մեկ կմորթեմ, կսատկացնեմ, թող սովորեն, նրանք էլ պետք է մարդ դառնան։ Թող նրանք էլ ձեզ հետ... Թող բոլորն էլ... Իսկ մենք կմնանք,- նա ձեռքք դրեց Մարկոսի ուսին,- մենք տեղ չունենք գնալու, չէ՞ , ախաղեք։ Մենք հա՛ պիտի տանենք մեր բեռը, իսկ դուք գնացեք, գնացեք, են ո՞նց էր, ուսանո՞ղ, հա՛ ... «Ո՛վ քաղաքացիներ ազատ Հռոմի...»։

Մարկոսն անհանգստացավ, շարժվեց ու ասաց ամաչելով.

- Չէ՛, Գասպար ջան, որ տուն ունեցա, իմ, է՛, իմ տունը, ես էլ եմ մի կողմի վրա գնալու։

- Գնա՛,-հանկարծ մեղմացած ասաց Գասպարը,- դու էլ գնա։ Բոլորդ էլ... Իսկ ես կմնամ։ Մեկը պիտի մնա։ Մեկը միշտ պիտի մնա։ - նա լրեց, սեղմեց շուրթերն ու ասաց դարնացած. «Դպրոցի ճամփան դժվար է էրկար, շատերի համար»։ - Նորից լրեց ու մեկ էլ դարձավ Մանուկին.- ո՞նց չեմ մոռացել, չէ՞ , ուսանող։ Քսանչորս տարի է անցել, է՛ մի կյանք։ Հասկացա՞ր...»

#

... Ահա և իմ գործարանը։ Ո՞նց անցավ մի տարին։ Ինչքան բան է փոխվել, իսկ գործարանը չի փոխվել։ Թերևս միայն պատվո տախտակի զարմացած նկարները։ Ասենք, չէ՞ , դիմացի շենքը չկար։ Սրանք էլ չկային, մտածեցի ես՝ նայելով այս ու այն կողմ սլացող էլեկտրասայլակներին։ Մեկի վրա սպիտակ պարկեր կային։ Զահել մի տղա այս ու այն կողմ էր տանում լծակը, և սայլակը կտրուկ փոխում էր ուղին, սլանում։ Սիրտս հանկարծ կծկվեց։ Պատկերացրի Գասպարին այսպիսի մի փոքրիկ սայլակի վրա բարձրահասակ ու մոայ։ Չեր սազում։ Այսինքն եթե գործարանը լցրել են էլեկտրասայլակներով, երեկի վերացրել են բեռնակիրների հերթափոխը։ Բա ի՞նչ կանեն Գասպարը, Մարկոսը, աշխատավարձն ախր կիշնի։ Գուցե այլս չեն էլ աշխատում։ Չէ՛, Մանուկն ասաց, որ հանդիպել է։

Իմ կողքով բանվորներ ու բանվորուիհներ էին անցնում, բայց նրանցից ոչ մեկի դեմքը ծանոթ չէր։ Չհամբերեցի այլս, կանգնեցրի մեկին։

- Գասպարը որտե՞ղ կլինի։

- Ի՞նչ Գասպար,-հարցրեց կինը՝ զլխաշորն ուղղելով։

- Բեռնակիրների բրիգադիրը,-ասացի ես զարմանալի հուզված և սպասումով։

- Հա՛, մե՞ր Գասպարը,-ծիծառեց կինը, -մրգի բաժնում է։

- Մարկոսն էլ-հարցրեցի արդեն նրա թիկուրին։

Կինը ետ նայեց ու ձեռքով արեց միայն։ Ուրեմն այստեղ են։ Լավ է։ Ես քայլեցի բանջարեղենի բաժնի մոտով, ձեռքս թափահարելով բարեւցի ապակիներ զցող վարպետին, անցա տակառագործների տեղամասը, մի էլեկտրասայլակի վրայից բացականչություն լսելով, շրջվեցի ու թեև չձանաչեցի վարորդին, բայց նրան էլ բարեւցի և մոտեցա շաքարավազի պահեստին։ Հենց պահեստի դռան մոտ, մեջքով դեպի ինձ կանգնել և էլեկտրական

տեղափոխիչի կախովի մատների հանգույցն էր քանդում պնդակազմ մի բանվոր: Անմիջապես ճանաչեցի: Այդպիսի մեջք աշխարհում միայն մեկը կարող էր ունենալ, այդ մեջքը ես մի կիլոմետրից էլ կճանաչեի: Մարկոսն էր: Մոտեցա կամացուկ ու հենց այդպես էլ մեջքից ամուր գրկեցի նրան՝ թաքցնելով գլուխ:

- Վա՛յ, փնչաց Մարկոսը,-էս ո՞վ ա, տո՛: Վա՛յ, էս մերոնցից չի, էս ի՞նչ սպիտակ ձեռքեր են: Ո՞վ ես, է ...
- Ես եմ,-ասացի, բաց թողնելով նրան, հանելով լայնեզր գլխարկս ու խոնարհվելով:
- Ուսանո՞ղ,-գոռաց Մարկոսն ու ինձ գրկեց արջավարի: Գրկեց ու արագ ես քաշվեց: - Ա՛յ մարդ, շորերդ կկեղտոտեմ: Բայց ի՞նչ անեմ, է ...
- Ոչինչ,-ասացի ես ինքս գրկելով նրան: - Ո՞նց ես, ո՞նց, Մարկոս, ո՞նց ես, ախպեր...
- Լավ եմ, լավ,-գոռզոռում էր Մարկոսը,-էսա, հա՛, քիչ ա մնացել: Տուն եմ առնելու, ի՞մ տունը...
- Էն ո՞վ ա, է՛,-պահեստի միջից լսվեց Գասպարի ձայնը:

Մարկոսը որպես պատասխան գրոգորաց, ու դրան մեջ հայտնվեց Գասպարը՝ ինչպես միշտ քարձրահասակ ու խստադեմ, ուսին շաքարավազի պարկը: Նա էլ համարյա չեր փոխվել միայն թե մազերն էին մի քիչ... Ասենք գուցե շաքարավազ էր թափվել նրա թուխ, գրուզ մազերի վրա:

- Պա՛հ,-ասաց Գասպարը,-պա՛հ: - Նա մոռացավ իջեցնել պարկը, հենց այդպես էլ թերվեց, գրկեց աջ ձեռքով, թիժիացրեց մեջքիս, հետո պարկը թերևորեն սայլակի մեջ նետեց, ես կանգնեց ու ծլթացրեց օրորելով գլուխը,- պա՛հ, ա յ քեզ ուսանող...
- Դե դրւք էլ ի՞նչ եք՝ ուսանող հա՛ ուսանող: Էլ ուսանող չկա:
- Բա ի՞նչ ես,-աչքերով ծիծաղեց Գասպարը:
- Ժուռնալիստ եմ: Ֆելիետոններ եմ գրում: Չե՞ք կարդացել:
- Ֆելիետոնն ի՞նչ է,-հարցրեց Մարկոսը:
- Զիբիլ է,- ասացի ես,-չոռ ու զահրումար է: Երանի ձեզ, որ չեք կարդում: Ես ձեր անզրագետ ցավը տանեմ:
- Ի՞նչ պատեհեց քեզ, ա՛յ տղա,-հարցրեց Գասպարը:

Զգիտեի, թե ինչ է պատահել, բայց երջանիկ էի, Երևի վաղուց այսքան ուրախ չէի եղել: Հոգիս թեթև, թեթև էր, ուզում էի անընդհատ ծիծաղել: Նրանց կոշտ ու կոպիտ խոսքերն ու բացականչությունները երգ էին ինձ համար: Խոսեցնում ու լսում էի: Ախր նրանք լավ են խոտում, ախր նրանք պարզ մարդիկ են: Երբ մի բան ասում են, հենց այդպես էլ ընդունիր, ել մի՛ մտածիր, թե ինչ են ուզում ասել, ել մի՛ մտահոգվիր, թե ինչու ասացին: Ու դու էլ նույնը:

Խոսիր, ոչի՞նչ, որ նախադասությունը ճիշտ չես կազմել, ոչի՞նչ, որ սխալվեցիր, նրանք կհասկանան, որովհետև հավատում են քեզ: Ահա՝ ամբողջ գաղտնիքը: Նրանք հավատում են:

- Ազա՞տն ուր է,-հարցրի ես:

Մարկոսը քմծիծաղ տվեց ու վերսից ներքև նայեց Գասպարին:

- Բա ես ասացի, չէ՞,-զարմացավ Գասպարը,-ձեզ հետ զնաց: Ի՞նչ տեխնիկում էր, հա՞ կոշկակարական ընդունվեց:

- Հիմա էլ կաշի կթոցնի:

- Բան չկա,- ասաց Մարկոսը,-կաշին չի պայթում:

- Դե, մի՛ կանգնեք, գործ արեք, ես կգամ ձեր կողքով, կիսուենք:

Սայլակն արդեն բեռնված էր և նրանք հրելով տարան այն երկարե նեղ գծերի վրայով:

- Եղ ձեռիդ թուղթն ի՞նչ է,-հարցրեց Մարկոսը, ակնարկելով խմբագրության կարմիր դրոշմով ծոցատերու:

Պատասխանեցի:

- Ուրեմն գործով ես եկե՞լ:

- Հա՛,-ասացի ես,-հաշվապահությունում մի փոքր գործ կա ստուգելու:

- Ստուգի, ստուգի,-ուրախացավ Մարկոսը,-ո՞վ զիտի, մեկ էլ տեսար աշխատավարձներս նորից բարձրացան-:

- Բա Մանո՞ւկն ինչ է անում, Մանո՞ւկը,-հարցրեց Գասպարը,-հիշո՞ւմ ես. «Ով քաղաքացիներ ազատ Հռոմի »: Շատ լավ տղա էր:

- Քննիչ է,-ասացի ես,-նա շատ առաջ կգնա: Բայց դուք հանդիպել եք, չէ՞ Գասպար:

- Չէ,-ասաց Գասպարը,-իսկի չեմ տեսել:

Ուրեմն աշխատանքից հեռացնելու օրը նա դիտմամբ էր խոսում, որ ցրի ուշադրությունս: Ա իս, Մանուկ, Մանուկ...

- Ինձ ասաց, թե հանդիպել է քեզ ու դու էլ ասել ես՝ Արտակին վերցրու, եկեք մեր բրիգադը: Լավ գործ կա:

Գասպարը ծիծաղեց, իսկ Մարկոսն ասաց.

- Վայ, վայ, վայ, շա՞տ օյինքազ տղա էր:

Սայլակը կանգ առավ: Երկաթե գծերն այդտեղից մրգի բաժանմունք էին գնում, այնինչ հարկավոր էր պարկերը աջ տանել՝ դեպի շաքարավազի եփման տեղամասը: Գոլֆստրիմի վրա թրջված մեկնվել էին երկար տախտակներն ու գոլորշի էին շնչում: Սիրտս տրոփեց մի տեսակ տագնապով ու հաձեկի:

- Հիշո՞ւմ եք, որ ինձ քննում էիք,-հարցրեցի ես: -Մարկոսն ու Ազատը ասում էին «մեկ-երկու, ա ո», ու պարկը գցում էին վզիս:

Երևի իմ ձայնի մեջ հարցից բացի, ելի ինչ-որ բան կար, որովհետև Մարկոսը ծիծառեց, իսկ Գասպարը լուրջ ասաց.

-Կարոտե՛լ ես:

Նա չհարցրեց կարոտել եմ, թե ոչ, նա վստահ ասաց. «կարոտե՛լ ես», դրա համար էլ առանց այս ու այն կողմ ընկնելու խնդրեցի թույլ տալ, որ մի քանի պարկ տեղափոխեմ:

- Այ մարդ դու ին զի՞՞ ծ չես,-ծիծառեց Մարկոսը:

- Բա ի՞նչ եմ,-ասացի ես:

Արագորեն պիշակս ու զիխարկս հանելով, կախեցի սայլակի անկյունից, եկա կանգնեցի Մարկոսի կողքին՝ մեջքով դեպի պարկերը: Համոզվելով, որ չեմ կատակում, Մարկոսն իր զիսի վրայից հանեց դատարկ պարկն ու տվեց ինձ: Ես պարկը անկյունով հազցրի զիսիս, ինչպես հին-հին օրերին, և ասացի հուզմունքից դողացող ձայնով.

- Դե՛:

Գասպարն ու Մարկոսը ճոճեցին պարկը:

- Հաշվեք,-խնդրեցի ես:

- Մեկ, երկու: Ա՛ո:

Մեջքս տաքացավ: Ես երերացի մի փոքր, դեռևս ուժերիս անվստահ, հետո գնացի, քայլեցի երկար տախտակների վրայով, շենք մտա, կտրուկ թեքվեցի, զգուշորեն անցա լարձուն սալահատակի վրայով, բարձրացա երկաթե սանդուղքով, մեկ, երկու, երեք չորս, կատարեցի ևս մի քայլ ու պարկը նետեցի հատակին, կաթսայի մոտ: Վազելով ու մի քիչ հևալով ետ եկա:

- Դե՛:

Ու քայլում ու քայլում էի շարունակ, զգալով, թե ինչպես է զայխ հոգնությունը և ինչպես է ուսերիս հետզհետե ծանրանում շաքարավազի պարկը: Եվ այնպես թեթև էի զգում այդ ծանրության տակ: Ու քայլում ու քայլում էի շարունակ՝ հազար ու մի բան մտածելով, և մտածելով, որ բեռք դեռևս ծանրություն չէ, որովհետև շատ ավելի ծանր բաներ կան այս տարօրինակ աշխարհում: Ու մտածում էի, որ երևի ճիշտ էր ռեստորանում Մանուկը, երբ ասում էր, թե երբեք էլ չես իմանա. որտե՞՞ դ ես ավելի երջանիկ: Ավելի շուտ՝ թեզ թվում է, թե երջանիկ ես եղել այնտեղ, որտեղից արդեն անցել ես ու այլևս երբեք չես կարող վերադառնալ:

ԶԵՆ ԹՈՂՆՈՒՄ, ՃԵՆ ԹՈՂՆՈՒՄ...

Աստիճաններից իջա հոգնած ու մոլոր: Նանարը հայտնվեց ինչ-որ տեղից, կողքից, ու բռնեց թևս: Երևի միջանցքում սպասում էր:

- Մի՛ ասա, մի՛ ասա, արդեն գիտեմ, հաղթել ես,-շշնջաց նա:
 - Ինչի՞ց եզրակացրիր,-հոգնած ժպտացի ես:
 - Բոլորը փսխում, նայում եին ինձ ու բարևում եին: Եվ գիտե՞ս, Բարամյանն էլ բարևեց:
- Ես ուզեցի պատասխանել, բայց նույն պահին ոտնաձայն լսեցի աստիճանների վրա և, շրջվելով, տեսա Սարգսյանին:
- Արտա՛կ,-ասաց նա: - Բարև ձեզ,-ասաց Նանարին: - Արտա՛կ, հավատա, պապայիս արև, ես Վեզիրյանին չեմ ձանաշում, ուղղակի պատահականություն էր:
 - Գիտեմ: Չե՞ որ այնտեղ էլ ասացի, գիտե՞մ, ընկեր Սարգսյան:
 - Չե, ես ուզում եմ, որ դու հավատաս:
 - Հավատում եմ, ընկե՞ր Սարգսյան:
 - Շնորհակալություն: Կներեք,-ասաց նա Նանարին:

Ու մենք շարունակեցինք իջնել աստիճաններով:

(Մի քանի րոպէ առաջ կուսշրջկոմի բյուրոյում Սարգսյանը քիչ մնաց լաց լինի: Ես որոշել էի շխոսել այդ մասին, բայց նրանք ստիպեցին: Ես այլ ելք չունեի: Ես նրանց ասացի, որ թերևս չկա ավելի հեշտ բան, քան մարդկանց վարկաբեկելը: Թող Սարգսյանը պատասխանի, թե ինչ գործ ուներ նախանցյալ օրը Վեզիրյանի կողքին: Իսկ եթե նա կառարկի ես կարող եմ ցույց տալ լրտանկարները: Բյուրոյի անդամները բազմանշանակալից իրար նայեցին, իսկ Սարգսյանը գունատվեց ու վեր թռավ տեղից. «Ճիշտ է, նա իմ կողքին էր նստել, բայց ազնիվ խոսք ես նրա հետ ոչ մի բառ չեմ խոսել, խնդրում եմ հավատացեք, ես նրան հազիվ եմ ձանաշում»: Ինչո՞վ կապացուցեք, ասացի, իսկ ես համոզված եմ՝ դուք պարծենում էիք, որ հեռացրել եք ինձ, շնորհակալություն էիք ակնկալում: Այդ ժամանակ Սարգսյանն ինձ դարձավ ու դողացող շրթունքներով ասաց այն խոսքերը, որ քիչ առաջ կրկնեց աստիճանների վրա. «Արտա՛կ, պապայիս արև, ես Վեզիրյանին չեմ ձանաշում»: Չարագուշակ լոռւթյուն էր տիրում, նույնիսկ Բարամյանն էր կծկվել ու խոնարհել գլուխը: Եվ ես ժպտացի ներողամտորեն: Ես հավատում եմ ընկեր Սարգսյանին, ասացի, հավատում եմ, որ դա պատահականություն էր: Ես պարզապես ուզեցի համոզել ձեզ, որ շատ հեշտ է մարդկանց վարկաբեկելը: Ես այս փաստով ամեն ինչ կարող էի ասել ձեզ, ընկե՞ր Սարգսյան, բայց ձեզ հավատում եմ: Ուրեմն ինչո՞ւ դուք ել չեք ուզում հավատալ ինձ, ինչո՞ւ ձեզ մոտ, բյուրոյում չորս ժամ շարունակ ինձ ստիպում էիք արդարանալ և կասկածի տակ չեք դնում ձեր

մեղադրանքները, որ ինքներդ էլ հնարել էիք: Սարգսյանը բարձրացրեց գլուխը ու թշնամանքով ատելությամբ նայեց Բաղամյանին, իսկ շրջառվետի գործկոմի նախագահը, ծեր ու հոգնած մի մարդ, ասաց Բաղամյանին. «Զահել մարդ ես, այ տղա, քեզ մոտ որտեղի՞ց այդքան թույն, ձեռքդ ո՞նց էր բարձրանում անմեղ մարդու վրա»:

- Ուրեմն ասում ես Բաղամյանը բարևեց քեզ, հա՞-, հարցրի Նանարին
- Այո՞-, ասաց Նանարը, -շատ զարմացա: Իսկ հետո մտածեցի՝ ուրեմն հաղթել ես:
- Չէ՞, Նանար, նրանց չես ճանաչում, նրանք բոլորն էլ բարևում են: Այդ նույն Բաղամյանը բյուրոյից առաջ էլ ինձ բարևեց, երբ եկել էր հեռացնելու: Ես մի ընկեր ունեի, նա էլ էր այդպես: Մի օր շատ զայրացած խոսում էր մեկի մասին, զարհուրելի փաստեր էր բերում, թե անձամբ իր դեմ ինչեր է արել: Ես ատելությամբ լցվեցի նրա նկատմամբ, որովհետև հավատում էի ընկերոջս: Ես միշտ բարևում էի այդ մեկին, բայց որոշեցի այլս չբարել: Հետո մենք փողոց դուրս եկանք և զարմանալի պատահականությամբ հանդիպեցինք նրան: Ես ցուցադրաբար շրջեցի գլուխս, իսկ ընկերս մոտեցավ: Ժպտում, խոսում, ծիծաղում էր: Շատ զայրացա: Եվ ի՞նչ, ընկերս ամենայն անկեղծությամբ հայտարարեց, թե ինքը հիմա էլ նրա մասին շատ վատ կարծիքի է և եթե տեղը գա՞ իր վրեժը կլուծի, բայց ինչո՞ւ չպետք է խոսի, բարևի: «Բարևի մեջ ի՞նչ կա», -ասաց նա:

- Ուրեմն չե՞ս հաղթել,-հանկարծ կասկածով հարցրեց Նանարը:

Նրա այդ համառությունը պարզապես ծիծաղելի էր:

- Հին Հունաստանի պատմությունը ո՞նց գիտես,-հարցրեցի ես:
- Ուզում ես ասել, որ դա Պյուրոսի՝ հաղթանակ էր:
- Գերազանց, -ասացի ես, -դա իսկական Պյուրոսի հաղթանակ էր: Ես հաղթեցի, բայց չգիտեմ, թե ինչ մնաց ինձ այդ հաղթանակից հետո, Նանա՞ր, ես շատ բան կորցրեցի, շա տ բան:

(Նրանք ինձ վրա միանգամից հարձակվեցին: Բյուրոն նոր էր սկսվել, երբ տեղից բարձրացավ Բաղամյանը: Նա հույս չէր ունեցել, թե Սարգսյանը կկարողանա անցկացնել բյուրոյի որոշումը, դրա համար էլ ինքն էր եկել: Մոտ կես ժամ խոսեց և, ի դեպ ավելի համոզիչ էր խոսում, քան նախորդ ելույթների ժամանակ: Նրան լսում էին ուշադիր ու համակրանքով, և Մեսրոպը վշտացած օրորում էր գլուխը: Շատ կրքով ու գեղեցիկ էր խոսում Կարոն, երբեմն ես նույնիսկ մոռանում էի, որ նա իմ դեմ է խոսում և վերացած լսում էի նրան: Հետո հիշեցի նրա գեկուցումը նեզք երեխաների մասին ու ժպտացի: Հիմա հայրս այստեղ լիներ, կասեր «հոր տղեն է»: Այնուհետև ելույթ ունեցան Պարթենը, Սարգսյանը, Բենիկը: Նրանք կրկնեցին իրենց նախորդ ելույթները, և տպավորությունն արդեն ստեղծված էր: Ներկաները ստեղ-ստեղ անբարյացակամ հայացքներ էին նետում ինձ վրա և նախատինքով օրորում գլուխները: Եվ հանկարծ ձայն խնդրեց Մեսրոպը: Ես համոզված էի, որ նա ելույթ կունենա ու նորից երախտագիտությամբ լցվեցի նրա նկատմամբ: Բայց շրջկոմի քարտուղարը ձայն չտվեց նրան:

«Ես գիտեմ, թե դուք ինչ պետք է ասեք,-նստեք», -ասաց նա:

«Բայց ես ասելիք ունեմ», բողոքեց Մեսրոպը:

«Գիտեմ, ձեր դիմումն ինձ մոտ է,-նստեք», -մեղմ, բայց վճռական պահանջեց քարտուղարը:

Ես շփոթվեցի, իսկ Բաղամյանը բացահայտ ցնծում էր, չեր կարողանում հանգիստ մնալ տեղում, հաղթական հայացքներ էր նետում Մեսրոպի և ինձ վրա, թեքվում, ինչ-որ բան էր շշնջում մեկ այս, մեկ մյուս հարևանի ականջին, ծիծաղում էր ափի մեջ: Ու ես նորից զգացի, որ ինձ կորցնում եմ: Մի՞ թե այստեղ է կրկնվելու է նույնը: Եթե Մեսրոպին չեն լսում, ինձ բոլորովին չեն լսի: Մի՞ թե այս ամենին վերջ չկա: Ու հանկարծ հիշեցի Մանուկի նամակը: Ուրեմն ուզում են թաքցնել: Չե՛մ թողնի, հերիք է այլս, թող լինի ինչպես իրենք են ուզում: Դե կովենք, եթե կոյիվ է, զոհերը հետո կհաշվենք):

- Տուն գնանք, չէ՞,-հարցրեց Նանարը:

- Ի՞նչ:

- Ասում եմ տուն գնանք:

- Հա, իհարկե,-ասացի ես:

- Բա դու ո՞ւր ես գնում:

- Ե՞ս: Տուն, ո՞ւր... Այսպես չի՞ կարելի գնալ, ինչ է:

- Ինչո՞ւ չէ,-շփոթված , հուզմած ասած Նանարը:

(Ես ձայն խնդրեցի, բայց չկարողացա խոսել: Կարոն քմծիծաղով ինձ էր նայում, և ես խեղիվում էի: Սկսեցի անկապ-անկապ... պատվոզրերի, ջոկատավարների, մետաղի հավաքման կոմպանիայի մասին: Շրջկոմի քարտուղարն ինձ ընդհատեց մի քանի անգամ, խորհուրդ տալով հանգստանալ, բայց ես շարունակում էի խորտակվել: Ինձ արդեն չին լսում, մարդիկ շշուկով խոսում էին իրար հետ, Կարո Բաղամյանը չարախնդորեն ինձ նայելով ինչ-որ բան էր ասում կողքին նատած շրջանի դատախազին և նույնիսկ փոթկացրեց: Դա ինձ խելագարացրեց վերջնականապես: «Լավ, չեմ խոսի,-բռավեցի ես,-ինչ որ ասացի դատարկ բաներ են: Ամբողջ հարցն այն է, որ Կարո Բաղամյանը Վեզիրյանի ընկերն է և վրեժ լուծեց նրա համար»: Ներկաները աղմկեցին ձանձրացած, իսկ Կարոն ծափ տվեց ծիծաղելով և դարձավ շրջանի դատախազին. «Չասացի՞ , չասացի՞ , որ հիմա այդ մասին է խոսելու»: Դատախազը գլխով արեց Եվ հենց նույն վայրկյանին ոտքի կանգնեց շրջկոմի քարտուղարը: Լուցին: Շրջկոմի քարտուղարը սև, տիտոր աշքեր ուներ և մեծ սպի՛ ականջի մոտ, իսկ երբ բարձրացրեց ձեռքը, տեսա, որ սև ձեռնոցի տակ անշարժ են մատները:

«Ընկե՛ր Բաղամյան, դուք իսկապէ՞ս Վեզիրյանի ընկերն եք»:

«Ոչ, ինչ եք ասում, Հարե՛թ Լևոնիչ,-տեղից ցատկեց Կարոն,-դա բացարձակ զրպարտություն է և նպատակ ունի շեղել բյուրոյի ուշադրությունը: Ես նրան որպես ակտիվ գիտեմ, այդքանը»:

«Իսկ ֆելիկետոնի մասին ի՞նչ կարծիք ունեք»:

«Ֆելիքտոնի՞... Փելիքտոնն այստեղ ոչ մի կապ չունի: Ասում են փաստերը չափազանցված են, բայց ընդհանուր առմամբ լավն էր: Ես կարծեմ այդպես էլ ասացի Լևոնյանին»:

«Դուք ինձ ոչինչ էլ չեք ասել: Բայց ո՞նց եք հրաժարվում ձեր ընկերոջից»:

Բադամյանը ներողամտորեն ժպտալով շրջկոմի քարտուղարին նայեց, ասես ցանկանալով հարցնել, թե արժե՞ պատասխանել ինձ: Իսկ ես անմիջապես Մանուկին հիշեցի:

Այնուամենայնիվ նա շատ ավելի լավ է ճանաչում մարդկանց, քան ես: Քիչ էր մնում ներեկ սրան: Հիմա, հիմա ինչ էլ լինի՝ ես կասեմ բնակարանի մասին:

«Ներողություն,-ասաց շրջկոմի քարտուղարը, բայց մի՞ թե ձեզ հայտնի չէ, որ Վեզիրյանի կինը և ձեր կինը շատ մոտ ընկերուիիներ, գրեթե քույրեր են»:

Ահա՝ ահա՝ դիմացիր, ընկե՛ր Բադամյան:

«Ո՞վ է ասում», հարցրեց Կարոն, բայց նա արդեն ակնհայտորեն շփոթված էր:

«Փաստաթուղթը,-հանգիստ ասաց քարտուղարը,- մի՞ թե անծանոթ մարդիկ միմյանց առանձնատուն են նվիրում, ընկե՛ր Բադամյան»:

Ինձ թվաց, թե Բադամյանը կարվածահար կլինի: Նրա դեմքը ճերմակեց: Ներկաները խառնվեցին իրար: Երրորդ քարտուղարը երկրորդի ձեռքից փորձում էր ինչ-որ թուղթ խլել: Երևի տեղեկանքն էր: Մի քանիսը մանրամասն բացատրություն էին պահանջում: Բայց նրանք ինձ չին հետաքրքրում: Ես ոչ ոքի չեմ տեսնում, բացի Կարո Բադամյանից: Ես նայում էի նրա դեմքին ու սպասում, թե ինչ պիտի ասի նա: Զգվելի էր, բայց հանկարծ զգացի, որ այնուամենայնիվ խղճում եմ նրան: Բայց ես ի՞նչ մեղավոր եմ, նա ուզեց այդ:

«Հարե՛ք Լևոնիչ, գուցե մենք այդ մասին առանձին խոսենք,-շուրթերը սեղմած, շշնչաց Կարոն,-որպես քարտուղար ես... համոզված եմ, որ այստեղ խորլ թյուրիմացություն կա»:

Նա դարձյալ խաղում էր: Գիտեր, որ մերկացվել է և գոնե այստեղ կարող էր անկեղծ լինել, նա հնարավորություն ուներ մարդ մնալու, բայց ուրիշ տեսակ էր կառուցված այդ Կարո Բադամյանը: Նա ոչ մի վայրկյան չէր մոռանում, որ քաղկոմի քարտուղար է ինքը և ահա, որպես վահան՝ մեջտեղ բերեց՝ ժամանակ շահելու, ուշքի գալու համար: Բայց հավանաբար արդեն ուշ էր:

«Մենք քաղաքային կոմիտեի իրավասության հարցերը չենք քննում,-հանգիստ ասաց շրջկոմի քարտուղարը,-ես ձեզ հարցնում եմ իբրև կուսակցականի և այն էլ իբրև մեր շրջանի կուսակցականի: Շարունակո՞ւմ եք պնդել, որ ձեր անսկզբունքը վերաբերմունքը Լևոնյանի նկատմամբ կապ չունի Վեզիրյանի հետ, թե՞ հրապարակեմ ձեր և Վեզիրյանի համատեղ գործունեության վերաբերյալ բավականին մանրամասն փաստաթղթերը»:

Բադամյանը չպահասխանեց: Նա ինձ էր նայում ատելությամբ, բայց և անհասկանալի ինչ-որ բան, կարծես զարմանք, թե արժանի հակառակորդի նկատմամբ հարգանքի ինչ-որ արտահայտություն կար նրա աչքերի մեջ: Երևի ամենից շատ հիմա նա միայն մտածում էր, թե ինչպես ենք կարողացել պարզել:

- Լսիր, քեզ բարևում են, ինչո՞ւ չես պատասխանում,-թես ձգեց Նանարը:
- Ո՞վ, ո՞վ է բարևում, Նանար ջան,-հարցրեցի ես:
- ԱՇ նա, երկու անգամ գլուխ տվեց, իսկ դու...
- Հա, մեր հարեան Մայիսն է, ոչինչ, մյուս հանդիպմանը ես չորս անգամ գլուխ կտամ,-ասացի ես:

«Դու ես արել, հա՞,- դառնությամբ հարցրեց Կարոն»:

«ՈՉ,-ասացի,- բայց ես կլ ընկերներ ունեմ»:

«Վերջացրե՞ք,- ձայնը բարձրացրեց շրջկոմի քարտուղարը: -Ամեն ինչ պարզ է: Ովքե՞ր են ուզում ելույթ ունենալ»:

Բոլորն էլ ուզում էին խոսել: Քիչ առաջ նախատինքով ու անբարյացակամորեն ինձ նայող մարդիկ հիմա ժպտում էին քաջալերանքով և Բաղամյանին էին նայում նախատինքով ու անբարյացակամությամբ: Շրջանի դատախազը նույնիսկ աղմուկով նրանից հեռացրեց իր աթոռը: Մյուս կողմին նստած ժողկրթքածնի վարիչը խոնարհել էր գլուխը և մեծ-մեծ քառակուսիներ էր նկարում առջևը դրված թղթի վրա: Գրեթե առանց բացառության, բոլորն էլ առաջարկեցին չեղյալ համարել կոմերիտմիության շրջկոմի որոշումը և բյուրոյին հայտարարել նկատողություն: Եվ ամենազարմանալին այն էր, որ այդ առաջարկը պաշտպանեցին նաև Բենիկն ու Պարթևը: Նրանք հայտարարեցին, որ իրենք ավելի խիստ պատժի են արժանի, որովհետև ակամա զենք են դարձել Կարո Բաղամյանի ձեռքին: Միայն Սարգսյանը չշրջվեց այդքան նողկալիորեն: Նա փորձեց, այնուամենայնիվ մասամբ պաշտպանել որոշումը, խոսեց աշխատանքային կարգապահության մասին, սակայն նրան ոչ ոք չէր լսում: Իսկ երբ նրանց օրինակով ես բավականին երկերեսայնորեն ակնարկեցի լուսանկարի մասին, հարցը փակվեց: Շրջկոմի բյուրոյն որոշեց խիստ նկատողություն հայտարարել Սարգսյանին, նկատողություն՝ բյուրոյի բոլոր անդամներին, իհարկե բացառությամբ Մեսրոպի, և հարց հարուցել կուսակցության քաղաքային կոմիտեի առաջ խստորեն պատմել Կարո Բաղամյանին:

«Լսոնյանի աշխատանքի հարցը մնաց», -հիշեցրեց երկրորդ քարտուղարը:

«Պարզ է, թողնել աշխատանքում», գլխով արեց գործկոմի նախագահը:

«ՈՉ,-ասաց շրջկոմի քարտուղարը, -առավոտյան զանգահարեց ընկեր Սարյանը և խնդրեց Լսոնյանին ազատել իր պարտականություններից խմբագրությունում աշխատանքի անցնելու կապակցությամբ: Այդպես էլ կձևակերպենք»:

Մեսրոպը կողքից ամուր, ամուր կսմբեց թես, իսկ Պարթևը, ասես ոչինչ էլ չէր եղել, ծիծաղեց սրտանց, բարեկամաբար:

«Ընդ տեսա՞ր, էլ ի՞նչ ես ուզում, քո պատճառով մի-մի նկատողություն վաստակեցինք», -ասաց նա՝ առանց կարմրելու, առանց շփոթության:

Ի՞նչ զարմանալի մարդիկ կան աշխարհում, Տեր աստված:

«Բայց, իմացեք, որ այսպես չեմ թողնի, -ընդհանուր աղմուկի մեջ հանկարծ ասաց Բադամյանը, -այս բոլորը խմբագրության ջանքերն են: Ես շատ լավ հասկացա: Մենք դեռ կհանդիպենք որտեղ պետք է:»

Շրջկոմի քարտուղարը միայն թոթվեց ուսերը, իսկ դատախազը՝ մոռանալով շատ բան և ո՞վ գիտե ինչ հիշելով, նետեց ատամների արանքից. «Բայց ի նշ կախելու ապրանք է...»

Բադամյանը անկյունում, ոտքերը գետնին թփթփացնելով, առանց շուրջը նայելու, հազար կրկնակոշիկները, դրեց կեպին, եկավ անցավ իմ կողքով ու հանկարծ...

- Լսիր,-ասացի ես Նանարին, դու զարմացել ես, որ Բադամյանը բարեւել է քեզ, իսկ գիտե՞ս, ինձ ցտեսություն ասաց:

- Երանի մնաս բարով ասեր,-ծիծաղեց Նանարը:

(Երբ բոլորը դուրս եկան, ես մոտեցա շրջկոմի քարտուղարին, սրտանց շնորհակալություն հայտնեցի և խնդրեցի մի հարցում ևս օգնել:

«Է լ ինչ ես ուզում», - ծիծաղեց նա:

«Ասացեք, որ ինձ վերականգնեն սպորտային շքերթում, -խնդրեցի ես, - չէ՞ որ նրանք ինձ այնտեղից ել են հեռացրել»:

«Լավ, լավ, կզանքահարեմ,-ժպտաց շրջկոմի քարտուղարը, իսկ հետո առողջ ձեռքով հանկարծ այնպես, հոր նման խառնեց մազերս ու ասաց մտախոհ,-բայց քո տարիքի համեմատ շատ թշնամիներ ունես արդեն: Ամուր մնա»:)

- Ահա թե ինչ մնաց ինձ հաղթանակից հետո,-ասացի ես Նանարին:

- Ի՞նչ,-հարցրեց նա կանգ առնելով:

Մենք Գետառի կամրջի վրա էինք: Տաք զարուն էր: Գետը խեղճացել, փոքրացել էր ու գնում էր հիմա քարերի տակով՝ հոգնած ու անկամ, ասես գնում էր սոսկ պարտականություն կատարելու, քաղաքի աղբը մաքրելու համար: Սակայն այդպես միայն թվում էր: Այդպես օտարին կարող էր մոլորեցնել Գետառը: Բայց ես հո լավ գիտեմ նրան: Չէ՞ որ մենք միասին ենք մեծացել: Ուրիշները չեն փորել ահռելի ձորը, և ոչ էլ վիրթսարի ժայռաբեկորներ էին ծնվել այս ափերին: Գետառն էր բերել իր հետ խենթ ու խելառ օրերին և մի օր աղմուկով իր հետ տանելու էր: Օտարականն այստեղ կանգ կառնի զարմացած, լսելով փոքրիկ առվակի բարձր վշշողը: Եվ իզուր կնայի չորս կողմը ջրվեժներ որոնելով: Գետառն է, հիմա փոքրիկ ու խեղճ Գետառն է հառաչելով անցնում իր քանդած հունով, փոթորկոտ օրերը հիշելով ու երազելով հեղեղներ:

- Արտա՛կ ջան, Մի՛ եղիր այդպես, հա՞,-ասաց Նանարը: -Միթե՞ ես արդեն ձանձրացրել եմ քեզ: Ինչո՞ւ չես խոսում ինձ հետ, ինչո՞ւ չես պատասխանում: -Չե՞ն թողնում, չեն թողնում,- ասացի ես: -Միթե՞ չես տեսնում, որ չեն թողնում:

ՄԵՆՔ ԴԵռ ԿԻԱՆԴԻՎԵՆՔ

Իրարանցում է մեր տանը: Մայրս, Սեղան, Նանարը հուզված, շտապով ներս ու դուրս են անում, դիպչում են իրար, ծիծաղում ու խոսում են արագ-արագ: Մայրս՝ որ իրեն կորցրել է: Մեկ էլ ներս է մտնում ու կանգնում շվարած, կանգնում ու նայում է դես-դեն, ձեռքը ծնոտին է դնում ու ասում մտազբաղ.

- Էս ինչի՞ եկա:

Նրան ոչ ոք չի պատասխանում, ու մայրս մոլոր կրկին խոհանոց է գնում՝ կորած հիշողությունը փնտրելու:

Սենյակի մեջտեղում անկարգ ու բաց դրված են զանազան ձամպրուկներ՝ փաթեթներով, տոպրակներով ու հագուստներով լի: Բայց ինչպես երևում է, դրանք քիչ են, որովհետև նորից ու նորից են բերում: Սեղան ձեռքի արդուկը տեղավորում է ձամպրուկներից մեկի անկյունում ու հանկարծ բարձրացնում է թղթի մեջ փաթաթած, ականջը պոկած թավշե արջուկը:

- Է՞ ով է դրել,-հարցնում է նա ծիծաղելով:

Բոլորը քրքջում են ու նայում են մորս, իսկ նա ժպտում է խոռված ու շփոթված.

- Ուրեմն ես եմ դրել...,-հարցնում է նա, հաստատ իմանալով, որ ինքը արած կլինի:

Դա պատճառ է դառնում, որ նորից մեկ առ մեկ ստուգվեն փաթեթները, հայրս զայրացած հազում է պատուհանի մոտ:

- Համա գործ անող եք, հա՛ ... Աղջի՛, շուտ արեք, է՛, ուշանում են:

- Ինչի՞ ենք ուշանում, դեռ երեք ժամ կա, հայրիկ:

- Ճանապարհ գնացողը շուտ կգնա,-ասում է հայրս:

Դա նրա սովորությունն է: Եթե գնացքով երեկոյան մեկնելու է, առավոտ շուտ կգնա կսպասի կայարանում: Հայրս շատ է հուզված, դա դժվար չէ կռահել, ծնոտը դողում է մեկ-մեկ ու թեև փայտե կարճ ծխամորճը կախված է շրյունքներից, բայց անհանգիստ տփտփացնում է գրպաններին, չխչխկացնելով շարժում է լուցկին ու բղավում է մորս վրա.

- Աղջի՛, ա՛յ Անուշ, են անտերը որտե՞ղ ա, է՛, նոր ձեռքիս եք:

Հետո «պահ» է անում՝ հայտնազործելով ծխամորճը և թաքուն, ինքն իրեն ծիծաղելով՝ վառում:

Հիշելով, գրպանից արագ հանում ու հորս եմ մեկնում տնային կառավարչությունից վերցրած երաշխավորագիրը:

- Ամեն ամսվա տասնութին կզնաս կապի շենք, հրապարակի վրա, կբարձրանաս հինգերորդ հարկ, ուղիղոյի խմբագրությունն այնտեղ է, ու կտանաս իմ կես ամսվա աշխատավարձը,- ասում եմ ես:

- Բա դու ո՞նց ես ապրելու, ա՞յ բալա,-տիրում է հայրս:

- Մեզ ի՞նչ կա, ա՞յ հայրիկ,-ասում եմ ես, որսալով Նանարի գոհունակ հայացքը,-իսկի չինի, Նանարը տիկնիկ կիսաղացնի փողոցներում, կապրենք:

- Է՛հ,-տնքում է հայրս:

Կողքի սենյակից դուրս է գալիս Բարկենը, կանգնում է շեմքին, հորանջում է՝ բարձրացնելով մկանուտ ձեռքերն ու ասում է իրեն հատուկ կեղծ դժգոհությամբ.

- Է՛հ, չթողեցիք քնեմ, ի՞նչ է պատահել, որ խառնվել եք իրար, չեմ հասկանում: Առավոտվանից չըխկ հա չըխ, չըխկ հա չըխկ: Մե՛դա, մեկ էլ որ ջուր ես լցրել վրաս, ուղիղ հորդ տուն գնա, թե չէ սպանություն կլինի:

Քնելու մեծ վարպետ է Բարկենը, հիմա դեռ ոչինչ, իսկ առաջ առավոտները նրան արթնացնելու գործով զբաղվում էր մեր ողջ ընտանիքը: Հստ որում օգտագործում էին բավականին ճիզվիտական միջոցներ. քաշքառում էին կոպտորեն, ցնցում գլուխը, ջուր լցնում վրան, խտուտ տալիս: Մայրս մի անգամ բարկացած որոշել էր չարթնացնել Բարկենին, որպեսզի տեսնի, յե՛ն որքան կարող է քնել և եղբայրս պատվով դիմացել է քննությանը, քնելով ուղիղ հիսուն վեց ժամ: Սա զուտ ճշմարտություն է, իսկ իր՝ Բարկենի պատմածը, իմ կարծիքով կատակ է: Նա երդվում է, թե պատերազմի ժամանակ Ղրիմում, մի քանի անքուն զիշերներից հետո, դիրքի մեջ հանկարծ քնել է և արթնանալով իմացել, որ երկու օր է, ինչ թե՛ժ մարտեր են մղվում, իսկ բլուրը մի քանի անգամ ձեռքից ձեռք է անցել: «Եթե բեկորը զիսիս չղիպչեր, կի չի արթնանա»-ասաց Բարկենը:

- Քեզ հետ չե՞մ, ի՞նչ է պատահել,-կրկին հարցնում է նա Սեղային:

- Չզիտե՞ս, որ Արտակենք զնում են,-հարձակվում է նրա վրա Սեղան՝ դժվարությամբ փակելով ճամպրուկներից մեկը:

- Գնո՞ւմ են, գնո՞ւմ են... Կարծես թե Սիբիր են զնում,-հեզնում է Բարկենը,-երկու օրը մեկ գործուղում եմ զնում, ինչո՞ւ ինձ համար էլ այդպես իրար չեք խառնվում: Ուրեմն, զնում եք, էլի,- դառնում է նա ինձ:

- Հա՛, Բարկեն ջան:

- Լավ է,-ասում է Բարկենը,-ամուսնական երկարատև ճամփորդություն դեպի արևմի երկիր Շեմս-Էդ-դին, կամ Շամշադին: Սեղա, մենք ամուսնական ճամփորդություն կատարեն ենք:

Սեղան առանց պատասխանելու, հրում է նրա ոտքն ու ինչ-որ բաներ տեղավորում մյուս ճամպրուկում: Բարկենը մի կողմ է քաշվում՝ մորս ճանապարհ տալու համար, ու շարունակում է՝ անկարող դուրս գալու բոնած ոճից...

-... Չե՞նք կատարել: Ուրեմն, դուք անհամեմատ բախտավոր եք: Շամշադին... Էկզոտիկա, լեռների անտառածածկ փեշեր, կովերի բառաչ, գառների մայուն, շների լուսնահաչ, անզուզական ցեխ, առաջավոր ծխախոտագործուհիների հոգնած, բայց երջանիկ դեմքեր, սպառնալից լոգունաց. «Մասնակցե՞լ ես դու բերքահավաքին», հոնի կապտավուն օդի ու ծոպավոր տրեխներ: Հաղորդումը վարեց ուսուցիչի մեր թղթակից Արտակ Լևոնյանը: Ո՞նց էք:

- Լավ էր,-ծիծադեցի ես:
- Եվ ինչո՞ւ ես իմ բախտը կապեցի քրեական տարերի հետ,-հառաջում է Բարեկենը:
- «Նմանն զնմանս գտանե», -ասում է Սեդան:

Բոլորս ծիծադում ենք, իսկ հայրս օրորում է գլուխը.

- Երանի՞ ձեր սրտին:

Իսկ մենք էլի ենք ծիծադում, մենք ջահել ենք, մեզ համար ամեն ինչ հեշտ է, մեզ համար մեկնելը հետանալ չի նշանակում, ինչպես ասում է առածը: Մեզ համար մեկնելը նույնիսկ հետաքրքիր ու հաճելի է, մի քիչ ահավոր է և ավելի հաճելի: Մենք գիտենք, որ ամեն տեղ կարող ենք վրան խիել ու ասել սա մերն է, մեր տունն է: Մենք ջահել ենք ու մեր տունը մեզ հետ ենք տանում: Մենք ջահել ենք ու կարող ենք մեկնել որևէ տեղ... որովհետև դեռ շատ ժամանակ ունենք վերադառնալու կամ որևէ տեղում ընդմիշտ մնալու համար:

Նախորդ գիշեր չքննեցինք: Պառկել ու երազում էինք շշուկով, որպեսզի չարթնացնենք մերոնց, խոսում էինք իրար ականջի, կամացուկ, փսփսալով, սաստելով իրար: Նանարը համարյա Մարկոսի պես էր խոսում:

«Մենք մեր տունը կունենանք, փոքրի՞կ, սիրո՞ւն: Դու կզնաս աշխատանքի, իսկ ես կմաքրեմ, կփայլեցնեմ ամեն ինչ: Քո սիրած ձաշերը կեփեմ, ախր ես գիտեմ, թե դու ինչ ես սիրում: Ճետո կհանեմ գոգնոցս, կնստեմ պատուհանի մոտ, քո ձամփին կսպասեմ ու գուլպաներ կզործեմ քեզ համար»:

«Պատուհանի մոտ մի՞նստիր, խանդում եմ», ասացի ես: Նանարը ծիծադեց կամացուկ: Առ աս առ աս: «Դու կզաս տուն, միասին կճաշենք, հետո գիրք կկարդանք, ես էլի՝ կկարդամ քեզ համար: Իսկ երեկոյան...»: «Կընենք», - ասացի ես: «Է՞, չէ, երեկոյան կինո կզնանք, իսկ երբ վերադառնանք, կնստենք ուսուցիչի մոտ ու կլսենք, թե ինչ նյութեր են հաղորդում Շամշադինի շրջանի մեր սեփական թղթակցից: «Եվ կհաշվենք հոնորարները», - ասացի ես: Նանարը նորից ծիծադեց ու ինքն էլ սաստեց ինձ առ աս, առ աս... «Վեյն, -հանկարծ հեռավոր անկյունից հնչեց հորս բարկացած ձայնը, - փրս հա փրս, փրս հա փրս, հերիք չի, քնեք, առավոտ շուտ ձամփա եք գնալու»: Մենք լրեցինք մի պահ ու սկսեցինք ցնցվել անձայն ծիծադից, մահճակալի երկարե գնդիկները գնդիկնացին, ու մեր ծիծադն ավելի սաստկացավ: Նանարն ամաչեց, սկսեց բարկանալ ինձ ու իր վրա, լրեց մի կերպ, իսկ ես չի կարողանում հանդարտվել, ես ծիծադում էի ու ծիծադում էի արդեն բարձրաձայն, անզուսպ, ու ասում էի ծիծադի միջից. «Ոչինչ... հայրիկ ջան... ներիր... վերջին օրն է...»: «Ըլ, շաշ, - ի պատասխան վրդովկեց հայրս, - վերջին օրն է... տես ինչ է ասում, է»:

Ինձ սթափեցնում է Բարկենի ձայնը:

- Իսկ խմբագրիդ տեսա՞ր,-հարցնում է նա:

Ես գլխով եմ անում...

#

...Մոսկվայից, համամիութենական սպորտային շքերթից վերադարձա բարձր տրամադրությամբ և մեծ հույսերով: Հեռվից իրոք որ հեշտ է թվում ամեն ինչ: Համոզված էի, որ անցած ամսվա ընթացքում լուծվել են բոլոր հարցերը՝ Վեգիրյանն ու Բաղամյանը հեռացել են ասպարեզից, իսկ խմբագրությունում իմ վերադարձին են սպասում, որպեսզի աշխատանքի ընդունեն: Գրադարանում վստահ թերթեցի լրագրի անցած համարները, սակայն զարմանալիորեն ոչ մի տեղ և հատկապես «Մեր նյութերի հետքերով» բաժնում որևէ ակնարկ չկար ֆելիկետոնի և նրա հետևանքների մասին: Անհանգստացած զանգահարեցի հանրակացարն՝ Մանուկին, ու մենք հանդիպեցինք: Այն, ինչ պատմեց նա, գրեթե անհավատալի էր:

Ինձ հայտնի իրադարձություններից հետո քաղաքի դատախազը կանչում է Մանուկին, շնորհակալություն հայտնում առանձնատան նվիրատվության պատմությունը բացահայտելու հարցում ցուցաբերած նախաձեռնության համար և խնդրում է պաշտոնապես զբաղվել այդ գործով: Դատախազն առաջարկում է եղած նյութերին միացնել նաև ֆելիկետոնում նշված չարաշահումների փաստերը: Մանուկը բարեխճանորեն սկսում է քննչական գործողություններ կատարել, բայց մի քանի օր անց քաղաքի նույն դատախազը կրկին հրավիրում է նրան և խնդրում նյութերն իրեն հանձնել, պատճառաբանելով, թե վերադաս կազմակերպություններից մեկը ցանկություն է հայտնել ծանոթանալ այդ նյութերին: Եվ էլի մի քանի օր անց պարզվում է, որ քրեական գործի հարուցումը մերժված է աննպատակահարմարության տեսակետից: Վերադաս կազմակերպությունը բավարարվել է Վեգիրյանին ազատելով աշխատանքից և հայտարարելով կուսակցական նկատողություն: Կուսակցական նկատողություն էր արվել նաև Կարո Բաղամյանին:

Մանուկը զայրանում է՝ անարդարացի համարելով քրեական գործի հարուցման մերժումը և այդ մասին գրում է հանրապետության դատախազին: Առայժմ ոչ մի պատասխան: Հետո Մանուկին հայտնի է դառնում, որ աշխատանքից ազատվելու հենց հաջորդ օրը Վեգիրյանը նշանակվել է մի այլ միավորման վարչության պետ:

Այդ ասելիս Մանուկը գրեթե լաց էր լինում վիրավորանքից: Ես թափ էի տալիս ձեռքս, ասում էի՝ նրանց հերն էլ անհծած, այդքանն էլ քիչ չէ, բայց նա չի հանգստանում: «Չեմ թողնի, չի կարելի, ես այս գործը մինչև վերջ կհասցնեմ»: Տիսուր բաժանվեցինք: Իսկ հաջորդ օրը զնացի խմբագրություն: Խմբագիրը տեղում չէր, բայց ասացին, որ հիմա կզա: Ավտոմեքենա էր ուզել: Թերթի օրվա համարն էի կարդում ընդունարանում, երբ հանկարծակի տիրած լրությունից զգացի, որ խմբագիրը ներս է մտել: Իսկույն ոտքի կանգնեցի:

- Ա՛, Լևոնյան, վերադարձե՞լ ես, -ձեռքն ինձ մեկնեց Սարյանը, - նե՞րս մտիր, նե՞րս մտիր, տեսնենք ինչ նորություններ ես բերել մայրաքաղաքից:

Առանձնասենյակում նա ներողություն խնդրեց, սակայն ակնհայտորեն հուզված զանգահարեց մի քանի տեղ, հետո կարծես չկարողանալով պատասխանել ինչ-որ ներքին հարցի, ցնցեց ուսերը, արմունկները սեղանին դրեց ու հարցրեց՝ զլուխը բռունցքներին հենած.

- Դե, պատմիր տեսնենք ինչ կա:

Ես գիտեի, որ դա հետաքրքիր չէ նրան: Խմբագիրը հակում չուներ դեպի սպորտը, իսկ մոսկովյան շքերթը բավականին մանրամասնորեն լուսաբանված էր թերթում: Բայց ես ոչինչ անել չէի կարող ու սկսեցի պատմել: Նա ստեղ-ստեղ գլխով էր անում, սակայն համոզված էի, որ չի լսում ինձ: Մուզ կապույտ աչքերը սեղուն պատին էին ուղղված, և մտքերը հավանաբար շատ հեռու էին շքերթից: Այդպես դժվար էր պատմելը: Լուցի: Խմբագիրը շարժվեց, նրան ակնհայտորեն անհանգստացնում էր լուրջունը, դրա համար էլ հարցրեց շտապով.

- Հետո՞:

- Ընկեր Սարյան,- ասացի ես,-ձեզ ասել են, չէ՞ թե ինչով է ավարտվել ֆելիետոնը:

Այսր ես գիտեի, որ նա ազնիվ մարդ է: Տնքաց կամացուկ, բարկացած, կարմրեց միանգամից, զրպանից հանեց թաշկինակը և ամուր, կոտրելու վտանգի տակ սկսեց սրբել ակնոցի ապակիները:

- Ասել են, հետ ՞... - ասաց նա զրգոված:

- Ինչո՞ւ Վեզիրյանին դատի շտվեցին:

Նա խորը շունչ քաշեց և հարցրեց՝ ուշադիր զննելով ակնոցի ապակիները.

- Իսկ միթե՞ քիչ է, ընկե՞ր Լևոնյան, որ կուսակցական նկատողություն են հայտարարել և հետացրել են աշխատանքից:

- Ազատել են,-ասացի ես,-Եվ անմիջապես էլ նշանակել մեկ ուրիշ վարչության պետ,-ավելացրի հեզնանքով:

- Իսկ ի՞նչ է, քո կարծիքով պետք է դե՞ն նետեին: Վերջիվերօն նա էլ մարդ է: Եվ, այո, կուսակցականի համար փոքր պատիժ չէ նկատողությունը:

- Բայց նա քրեական խոշոր հանցանքներ է գործել, խարել է պետությանը: Հիշո՞ւմ եք, ընկեր Սարյան, դուք ասում էիք...

- Ասում էի, ասում էի... - Խմբագիրը սրտնեղած բարձրացավ տեղից, սկսեց ծանր-ծանր քայլել սենյակում, բռունցքները սեղմած: - Ասում էի և էի՞ եմ ասում, ընկե՞ր Լևոնյան: Բայց ուրիշներն էլ ուրիշ բան են ասում, ընկեր Լևոնյան: Այո՞ , այո՞ , և այդ ուրիշները դիրքով ու իրավունքներով ինձնից ու քեզնից շատ ավելի բարձր են: Ի՞նչ անես, ի՞նչ կարող ես անել... Եվ հետո, և հետո մենք էլ աստվածներ չենք, ընկե՞ր Լևոնյան, բաներ կան, որ պետք է հաշվի առնել...

Այնինչ, իրոք ինձ թվում էր, թե նա աստված է:

Նա իրեն վատ էր զգում: Ես երբեք նրան այդ վիճակում չեի տեսել: Նա սկզբում ո՛չ իր, ուրիշների խոսքերն էր ասում ու տանջվում էր դրա համար, իր հոգուն հակառակ բաներ էր ասում ու տանջվում էր դրա համար: Եվ հիմա, ազնիվ զայրույթի պահին անկեղծ էր, բայց ավելի էր տանջվում, ո՛վ զիտե, մտածելով, թե իրավունք ունի արդյոք դասախոսը նման բաներ ասելու իր ուսանողին, եթե ոչ շատ առաջ բոլորովին ուրիշ բաներ էր ասել նրան համալսարանական ամբիոնից:

Նա մոլեգնած ու վշտացած շրջում էր առանձնասենյակում, և ես անկեղծորեն ցավում էի, տեսնելով նրա տարապանքը: Աշխարհում երեսի չկա ավելի ծանր ու տխուր բան, քան ուժեղ մարդու խեղճությունը: Նրանց մոտ սովորական մարդիկ հուսալքվում են: Եվ ես ափսոսացի, որ եկա խմբագրություն: Ինչո՞ւ և եկա: Կարծես թե քիչ է տանջվել: Կարծես թե քիչ է, որ կորցրել է իրեն: Կարծես թե քիչ է, որ կյանքում երեսի առաջին անգամ իր հոգու ինչ-որ սրբություններն է ոտնահարել այս մարդը՝ չկարողանալով դիմադրել ով զիտե ինչ հզոր ուժերի: Եվ ահա ես եկել ու հիմարաբար, անզբորեն...

- Գիտե՞՞ս ինչ, Լևոնյան,-կրկին խոսեց խմբագիրը, ու նրա ձայնը արդեն մեղմ էր, գրեթե թախծոտ,-գիտե՞՞ս ինչ, զուցե ես նույնիսկ իրավունք չունեի ասելու քեզ... որոշ տխուր ձշմարտություններ, սակայն, իսկապես, բաներ կան, որ հաշվի չառնել չես կարող:

Նա արդարանում էր, և ես դրանից ավելի վատ զգացի:

- Դե, իհարկե, հասկանում եմ, ընկեր Սարյան,-սրտանց ուզենալով սփոփել նրան, ասացի ես:

- Աշխատանք է: Երբեմն ստիպված ես լինում զիջել մի հարցում, որպեսզի շատ ուրիշ հարցեր կարողանաս լուծել: Այո՞ւ, այո՞ւ, այդպես է: Եվ, ի վերջո, ի՞նչ է պատահել: Ճիշտ է, խարդախություններ են եղել, բայց չէ՞ որ բացահայտվել են ֆելիետոն է գրվել, մերկացվել ու հասարակության դատին է հանձնվել մարդը: Եթե այդպես նայենք, սա էլ քիչ չէ:

- Իհարկե,-զլսիկոր համաձայնեցի ես:

- Եթե նկատել ես, մենք մինչև հիմա ոչ մի տող չենք գրել «Մեր նյութերի հետքերով» բաժնում, որովհետև ի սրտե համաձայն չենք արդյունքներին: Բայց նրանք... Ավելին թերևս հնարավոր չեր անել: Մնում էր առայժմ տեղի տալ:

- Այո, իհարկե,-կամացուկ ասացի ես:

Եվ հանկարծ ցնցվեցի՝ լսելով խմբագրի բացականչությունը.

- Ի՞նչ իհարկե, իհարկե: Այստեղ ոչ մի իհարկե չկա: Դու ասա՞ ո՞՛չ: Որովհետև պետք չէ, որ այսպես լինի: Ես կվշտանամ, եթե դուք այդպիսին լինեք: Դուք ասեք ո՞՛չ: Մենք քիչ բան չենք արել, բայց դուք պետք է ավելին անեք: Մենք դաժան ժամանակներ ենք անցել: Մենք պատերազմ ենք տեսել... Եվ հետո, և հետո մենք բատրակների, խեղճերի զավակներ ենք, և անիծյալ խեղճությունը երեսի հենց մեր արյան մեջ է: Իսկ դուք մե՞ր զավակներն եք, հասկացեք դա: Դուք ավելի՝ լավը պետք է լինեք, ավելի՝ ուժեղ...

Նա դոդագող ձեռքով դրեց ակնոցը, խստորեն նայեց ինձ, գնաց նստեց գրասեղանի մոտ ու ասաց ընդգծված կոպիտ ձայնով.

- Շա՝ տ խոսեցինք: Բայց մի օր պետք է լիներ դա: Վերջացնենք: Ուրիշ ի՞նչ կա...

Բայց ես ոչ մի բան այլս ասել չեմ կարող: Այդ բոլորն ինձ համար շատ-շատ էր: Ես պետք է մտածեի, պիտի հասնեի դրան: Դրա համար էլ լրեցի: Հետո միանգամից հիշեցի երեկվա իմ հանդիպումը ռադիոյի գյուղբաժնի վարիչի հետ: Նա ասաց, որ սեփական թղթակցի տեղ է բացվել Շամշադինում և կարող են ուղարկել ինձ: Այն ժամանակ ես անորոշ պատասխան տվեցի, որովհետև սպասում էի, թե ինչ կասի Սարյանը: Բայց հիմա ոչ մի գնով չեմ ուզի, որ նա ստիպված լինի այդ մասին ել խոսել: Չե՞ , բավական է:

- Ընկե՞ր Սարյան,-ասացի ես,-ձիշտն ասած եկել էի ձեզ հրաժեշտ տալու: Չուզեցի առանց ձեզ տեսնելու մեկնել:

- Ինչո՞ւ, ո՞ւր ես գնում,-զարմացավ նա:

- Շամշադին: Որպես ռադիոյի թղթակցի: Արդեն աշխատանքի մեջ եմ,-ավելացրի ես:

Նա տիրեց, հետո ուրախացավ ու տիրեց, որ ես հասկացել եմ նրա վիճակը, և զայրացավ, որ ինքը այդ վիճակի մեջ է, և ինչպես միշտ, զայրույթի պահերին, շառագունեց դեմքը:

- Չե՞,- ասաց նա հանկարծ, վճռականորեն ձեռքը սեղանին խփելով, չզիտես ում դեմ մոլեզնած ու ծառանալով,- չե՞: Դու ոչ մի տեղ էլ չես գնա: Բավական է: Դու այստեղ պետք է աշխատես: Այս: Ինձ մի փոքր ժամանակ է պետք միայն, մի փոքր: Հետո մենք կխոսենք: Ես նրանց կասեմ, որ...

- Պետք չե, ընկե՞ր Սարյան, շատ եմ խնդրում,-անկեղծորեն ասացի ես,-անհարմար է, արդեն ընդունել են: Հետո ես ինք եմ ուզում գնալ: Մերոնք բոլորը շրջան են գնացել և լավ չի լինի, եթե ես մնամ: Հետո իմ հայրենիքն եմ գնում: Շատ շնորհակալություն ձեզ ամեն-ամեն ինչի համար: Շա՝ տ շնորհակալություն:

Ես այդ բոլորն ասացի մի շնչով ու հիմա կանգնել էի նրա դեմ՝ հրաժեշտի համար ձեռքս մեկնած:

Սարյանը մի պահ լրտ նայում էր ինձ, հետո օրորեց զլուխն ու բարձրացավ տեղից.

- Դե լավ, թող այդպես լինի: Գնա աշխատիր առայժմ: Մենք բոլորս ել ի վերջո այդտեղից ենք սկսել, տղա՝ ս:

#

...- Եվ ի՞նչ ասաց խմբագիրը,-հարցում է Բարկենը:

- Նա հրաշալի մարդ է, Բարկեն,-ասում եմ ես:

- Մայրս ներս է զալիս՝ այս անգամ Նանարի թևը բռնած, ճամպրուկների մոտ է տանում:

- Էս տոպրակի վրա, որ «Ն» կա, կտաս իմ քրոջը՝ Նորինձարին, էս մեկի վրա, որ «Վ» կա՝ Վարսենիկին, խառնես ոչ, դարդդ տանեմ:

- Չի խառնի, չի խառնի, գրագետ է,-ծիծաղում է Սեղան, փակելով վերջին ճամպրուկը:

- Ասում ես, Էլի՛... ու հենց նույն վայրկյանին էլ կողպեքի ձայնի հետ հավանաբար զգալով, որ նախապատրաստություններն ավարտված են և որ հիմա ուր-որ է կմեկնենք, մայրս հանկարծ զրկում է Նանարին, համբուրում ու փղձկում է: -Տղիս քեզ եմ տալիս, հա՛,-ասում է խոռվկան, անվստահ, կերկերուն ձայնով,- լավ կնայես...

- Դե՛, դե՛,-բարկանում է հայրս,-ճամփից առաջ լաց չեն լինի,-ու հազում է, հազում է՝ սրբելով արցունքներն ու ասում է դժգոհ, հազի միջից,-էս հազն ինձ կսպանի:

Ծերացել են ծնողներս: Ի՞նչ անեմ: Ի՞նչ անեմ:

...Ավտոկայարանում Մանուկն ու Նվարդը շրջապատում են մեր մեքենան:

- Լա՛վ եք զալիս,-հեգնում է Մանուկը,-ավտոբուսը հիմա կշարժվի:

Մենք արագորեն իջեցնում ենք ճամպրուկները, շտապ մոտենում ավտոմեքենային: Պատուհաններից, հեռավոր ուղիների լույսն ու մուժն աչքերի մեջ, ցած են նայում ուղևորները, նայում են մեղմ կարեկցանքով ու հպարտությամբ: Նրանք արդեն գործ չունեն ներքևում, իրենց հոգսերի քայլերն անող մարդկանց հետ և ճանապարհին են գրեթե: Ավտոբուսի վարորդը բանալիները ձեռքին կանգնել է դուն մեջ ու համոզում է գրիհող քաղաքացիներին:

- Չեմ կարող, այ հոգի, բոլոր տոմսերը վաճառված են, տեղ ունե՞ս, տե՛ղ, տոմս ունե՞ս, արի աչքիս վրա: Չե՛մ կարող...

Նանարն ու Նվարդը գրկել են իրար, ու ես ասում եմ Մանուկին.

- Դե՛, լա՛վ մնացեք, ամուսնական ճամփորդության համար հիմա Շամշադին են խորհուրդ տալիս: Սպասում ենք: Մանուկը ծիծաղում է.

- Չե, առայժմ գլուխս խառն է: Երեկ կանչեցին, դատավոր են ուզում ընտրել: Բոլորն այն գործի համար է,-աչքով է անում Մանուկը: -Միայն թե հանգիստ թողնեմ իրենց: Բայց, չհավատա ս... Մինչև մինիստր չդարձնեն, ձեռք չեմ քաշելու: Իսկ դու գնա, ախաղե՞րս, գնա, որ զաս: Սասունցի Դավիթն էլ կարծեմ որոշ նպատակներով նույնիսկ Դիարբեքիր էր հասնում:

- Մենք զրկում ենք իրար, հրում ու նորից զրկում ենք: Դժվար, շատ դժվար է լինելու ինձ առանց նրանց:

- Նանա՛ր, գնացինք, Նանա՛ր:

Ավտոբուսի մոտ խոնվածներից ներողություն ու ճանապարհ խնդրելով, դուն ենք մոտենում, և բանալիները ձեռքին մարդը հարցնում է մեզ, ինչպես բոլորին էր հարցնում.

- Դուք տեղ ունե՞ք:Տեղ:

Աշխարհի Ամենադժվար Երթը

Ուշադրությո՞ն, ուշադրությո՞ն, տաս րոպէ անց, հանրապետական մարզադաշտից մարաթոնյան վազք է սկսվելու: Մասնակիցները պատվո շրջան կկատարեն, ապա կշարունակեն մրցությունը քաղաքամերձ խճուղում:

Ֆուտբոլի շատ կարևոր խաղ էր սպասվում: Մարզադաշտը լեիֆ-լեցուն էր և ֆուտբոլիստների աղմուկի մեջ հաղորդավարի խոպոտ ձայնը, ալեկոծ ծովին հանձնված մակույկի նման, մերք հայտնվում էր, մերք կորչում: Ֆուտբոլի շատ կարևոր խաղ էր սպասվում, դրա համար էլ քչերն էին ուշադրություն դարձնում այն կիսամերկ մարդկանց, որ հուզված ետ ու առաջ էին քայլում վազքուղու վրա: Այսինչ նրանք արժանի էին ավելի մեծ ուշադրության: Նրանք վազելու էին քառասուներկու կիլոմետր և էլի մի քանի հարյուր մետր, որովհետև ժամանակին այդքան էր վազել աշխարհի նրանց հույն նախահայրերից մեկը: Մարաթոնցիները հոյակապ էին իրենց սպորտային համազգեստների մեջ: Զյունաքույր շապիկներն ընդգծում էին նրանց թևերի թուխ մկանունքը ու հպարտ պարանոցները: Նրանց ոտքերը դողում էին հուզմունքից ցատկի պատրաստվող նժույգների սրունքների նման: Նրանք ուժի և գեղեցկության խորհուրդ ունեին իրենց մեջ և հին աստվածներ էին հիշեցնում:

Նվազախումբը խրոխտ ու մարտական քայլերգ հնչեցրեց, և հին աստվածները խաղաղ ու համերաշխ առաջ շարժվեցին վազքուղու վրայով: Նրանք վազում էին հանգիստ ու թեթև, գլուխները բարձր բռնած: Նրանք դեպի առաջ էին նայում և ոչ մի գործ չունեին իրենց շուրջը աղմկող մարդկային քազմության հետ: Նրանք նպատակներ ունեին, և նրանցից յուրաքանչյուրը վստահ էր, որ հասնելու է իր նպատակին: Թե չէ ինչպէս կարելի է սկսել քառասուներկու կիլոմետր և էլի մի քանի հարյուր մետր մի ճանապարհը: Իսկ երբ սպիտակ հազար մարաթոնցիների խումբը շրջան կատարելուց հետո անհետացավ ելքի կամարի մեջ, ինձ հանկարծ թվաց, թե նրանք ձերմակ աղավինիներ էին, և ես նրանց թոցրի Տիգրան աղբարենց ցախատան տափակ կտուրից:

...Աղավնիները թռչում էին, բարձրանում, բարձրանում, ձերմակ գծեր էին քաշում երկնքի կապույտին ու խաղում, փայլվում էին արևի տակ իրենց ձյունոտ թևերով: Իսկ ես մեջքի վրա պարկում էի Տիգրան աղբարենց ցախանցի տափակ, կանաչած կտուրին, կիսախուփ աչքերով հետևում էի նրանց գեղեցիկ գոյությանը և իմ բախտն ու երազները թոցնում աղավնիների հետ: Եթե երկրորդ պտույտի ժամանակ առաջին աղավնին ետ ընկավ,-ասում էի ես,-ապա վազը ստուգողականից «զերազանց» եմ ստանալու: Եթե փամփուլավորը անընդմեջ հինգ անգամ գլուխկոնծի տվեց, նամակ է գալու Մելիքից: Եթե հիմա, հենց այս պտույտի երամը շրջվեց, ու վերևի աղավնին առաջնորդ դարձավ, հայրիկս հեծանիվ է առնելու ինձ համար: Եթե հաջորդ երեք շրջանի ընթացքում աղավնիներից մեկն ու մեկը լրի երամը, ուրեմն ես այս տարի կմեռնեմ: Ու պտտվում, պտտվում էին երկնքում իմ անհետեթ, մանկական խոհերն ու երազները՝ մերք խուսներամ, հուսահատ ու մերք պայծառ: Եվ արագ, տագնապով բարախում էր սիրտս՝ երկինք թռած ամեն մի աղավնու համար:

Ու հանկարծ զգացի, որ ֆուտբոլի այդ շատ կարևոր խաղը ինձ բոլորովին չի հուզում: Բազմությունը ալեկոծվում, խենթանում էր մի մի քանի մարդկանց ոտքերի տակ ընկած

կաշվե կարմիր գնդակի համար: Բայց ես նրանց հետ չի: Ես մյուսների հետ էի: Իսկ նրանք քիչ առաջ, սպիտակ զգեստներ հազած, հանդիսավոր ու թեթև վազքով անհետացան ելքի կամարի մեջ՝ Տիգրան աղբարենց ցախատան տափակ ու հողոտ կտուրից թռած ձերմակ աղավնիների նման: Ու տարան իրենց հետ իմ երազներն ու բախտը: Ես իմ մեծ գրազը, իմ հարստությունը միանգամից, ամրողությամբ, առանց որևէ մնացորդի, նրանց վրա դրեցի: Ես այլս ոչինչ չունեմ:

Ու թեև չգիտեմ՝ կշահեմ, թե՝ ոչ, բայց գիտեմ, որ արյունքի համար երբեք չեմ տրտնջալու: Չե՛մ տրտնջա, ինչ ել որ լինի: Որովհետև իմ ողջ ունեցվածքը բոլորի վրա եմ դրել և ամեն մեկի վրա՝ առանձին-առանձին: Ես նրանցից յուրաքանչյուրի հետ եմ լինելու: Յուրաքանչյուրի մեջ: Ես գիտեմ, ինչ բան է մարաթոնը: Դա աշխարհի ամենածանր երթն է, բայց բոլորն էլ ակամա մասնակցում են այդ երթին: Ու թեև բոլորն էլ սկսում են հանդիսավոր, թեթև վազքով, սպիտակ շորերով, հավատացած իրենց հաղթանակին, բայց հաղթում են քչերը: Իսկ հաճախ ոչ ոք էլ չի հաղթում: Այսօր կիաղթի՝ նրանցից որևէ մեկը, իմ երազներից որևէ մեկը կանցնի՝ վերջին պատվո շրջանը: Չգիտեմ: Բայց ես նրանց հետ եմ: Նրանք՝ ես եմ: Ե՛վ վիրավորված, մրցությունից վաղ դրւու եկածը, ե՛վ հուսահատ, վերջին քայլերն անողը, նա՝, որ ընկալ ավարտի մոտ, և նա՝, որ դեռ շարունակում է վազել: Վազում է թեթև արդեն ո՛չ սպիտակ շորերով, ո՛չ նախկին շուրջով ու թեթև, բայց վազում է...

ՎԵՐՋ